

Հ(1)

# ՎԱՐՔ

ՄԻՒԹՈՐՈՅՑ ԱԲԲՈՅՑ

ՍԵՐԱՍՏՈՑԿՈՑ

ԳՐԱՑ

Հ. ՅՈՎԱՆՆԻ Պ. ԹՈՐՈՅԱՆ

ՅՈՒԽԱՏԵՆ ՄԻՒԹՈՐՈՅՑ



ՎԵՆԵՏԻԿ

Ի. ՎԱՆԴԱ. Գ. Ա. ԶՈՐՈՅ

1901

694



ՎԱՐԴ


ՄԻՒԹԱՐԱՅ ԱԲԲԱՅԻ

---

ՅԱՇԱՏԱԿ ՅՈՒՆԻՎԵՐ  
ԵՐԿԱՎՐԻՒՐԱՄԵԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
ՄԻԹՈՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

---





QDobispo U. Quaglio - VENEZIA S. LAZZARO

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

—♦♦♦—

Հասարակ մահկանացուաց գերեզմանին շուրջը կը նուկին լուռ թիւն եւ մոռացութիւն . մեծ մարդիկ, ընդհակառակն , իրենց դամբանաց միջէն ալ դեռ կ'ապրին . Այդ մեծերէն է եւ Միսիթար . Հարիւր չխուն տարիններէ աւելի կ'ընէ՝ որ կը հանգչի նա իրեն կառուցած վանքին մէջ . եւ այն օրէն որ շիրիմ իշաւ, սկսաւ իրեն համար լինաց նոր շքան մը՝ մեծ, փառաւոր եւ ընդարձակ . Այնչափ կ'ապրի մարդ, որչափ կը տեւէ անոր գործը : Միսիթարայ հիմնած վանշը կը տեւէ, կը տեւեն անոր գրչերը, կը տեւէ անոր վարուց սրբութիւնը . Զանազան նշանաւոր գրիչը անմահացուցին անոր վարչը եւ գործերը, այլ եւ այլ լեզուներով հրատարակուեցան անոր նկարագիրը եւ դրուատիք, եւ ուր որ գնաց նայ գաղութ մը՝ տարաւ իրեն նետ նաև Միսիթարայ անունը . Ամենցն ալ, օտարք եւ ընիկը, կը հրանան անոր գործոնէութեան վրայ . անոր գիտութեան համբաւը մնաց անաղարտ, անոր վարուց սրբութեան ոչ ոչ յանդգնեցարին դնել . մինչդեռ անոր կրօնակրն համոզումներու մտան, եղան ոմանչ՝ որոնչ այլ ընդ այլոյ խօսեցան, այնպիսիշ՝ որոնչ չէին նանջնար զինշը : Այսպէս Միսիթար, իրեն գործերով, եղած է այն աշխարհանամութ անձերէն մին, որոնց վարուց եւ գործոց մութ կորմ մը մնացած չէ, որուն վրայ նարկ ըլսաց նոր լոյս մը ափակը :

— Ապա ինչո՞ւ այս նոր գրութիւնը, պիտի նարցնեն շատերը :

Քանի մը խօսքով բացառիւմ հու այն պատճառները, որոնցին լ պատշաճ դասուեցաւ ներկայ գրութեանս իրատարակութիւնը։ Իրաւ է, որ զանազան առիթներով, ազգացին և եւրոպացի թերթեր, պատմական կամ մատենագրական դասագրեանց, բառարանց, և նոյն իսկ առանձին գրքեր նկարագրած են համառօտիւ կամ ընդարձակօրէն Երանաշնորհ Հիմնադրիա Հարքը, գործոնէութիւնը և գրական կեանքը. բաց այդ գրութիւններէն շատերը, զանազան պատճառներով, աւելի կամ նուազ անմատչելի եղած են մեր ներկայ սերունդին։ Երկրորդ, յիշեալ գրողը՝ բաց ի մի ջանիփէն և ի մատնաւոր Գեր. Ազնոնցէն, որ Միսիթար Աքքայի յաշորիներէն մին եղած է, — օտարք ըլլալով, չն ըմբռնաճ Հիմնադրիա բռն նողին, որ կը փայլի խոկապէս իրեն առանձնական թըղթոց մէջ. պառ պակաս մը կը մնար լրացնելու։ Երրորդ, որ գլխաւորն է, անոր կրօնական համոզմանց մասին, խնչպէս կամիսեցի բաել, ընդհանրապէս անհնիշդ կարծիք մը կազմուած է, մանաւանդ գրագիտաց մէջ և անոնց ձեռքով։ որով շատ պայքարներու առիթ տրուած. հետեւաբար նարկ էր ուղղել այդ սխալ կարծիքը։

Այս բոլորն ի նկատի առաջ, եւ տարւոյս մէջ կատարուելիք՝ Միաբանութեանս հիմնարկութեան Երկինարիւրամեայ Յոքեմինի հանդէսը՝ յարմարագոյն առիթն համարելով, ի լոյս կ'ընժայուի ներկայ գրութիւնս, որուն մէջ՝ խճմէտ աւելի՝ պիտի խօսի ինչը Միսիթար, պիտի խօսին զինքը մօտէն հանցցողը և գնահատողը, պիտի խօսին վկացգիքը, նամակը, և այն։

Ներկայ աշխատութեանս համար, բաց ի յիշեալ գըրքէն Գեր. Ազնոնցի, օգտուեր եմ ձեռագիր պատմութենէ վարուց Միսիթարայ Աքքայի, — զոր գրած է Հ. Մատթէոս Վ. Եւդոկիացի, որ իրեն ձեռատուն աշակերտն էր և առնենադպիքը, — եւ Միաբանութեանս յիմնամեայ ժամանակագրութենէն, նոյնապէս անտիպ և գրութիւն յիշեալ Հ. Մատթէոս վարդապետի։ Ազնոնցի զատ, օգտուեր եմ դարձեալ Միսիթարայ Աքքանօր խրառներէն, զորոնց գրի աւելը են աշակերտը, իրեն նամակներէն, և այլոց առ ին ն ուղղած թղթերէն։

Ամբողջ գործու, որ շատ ընդարձակ չէ, եւ պարզ ո-  
հով գրուած ըստ կարելոյն, եթեր մասերէ կը բառլա-  
նայ: Առաջնոյն մէջ՝ նկարագրուած է Միփթարաց ո-  
ռանմասկան կեանքը, սկսեալ իրեն ծննդենէն մինչեւ  
Միաբանութեանս հաստատութիւնը (1676–1701): Եր-  
կրորդին մէջ՝ իրեն նրապարակական կամ գործունեայ  
կեանքը, Միաբանութեանս նիմնարկութենէն մինչեւ Հիմ-  
նադրին մահը (1701–1749): Երրորդին մէջ պիտի խօ-  
սիմ համառօտիր անոր գրական կինոց կամ գործնեու-  
թեան վրայ:

Գրքին վերջն ալ պիտի դրուի Յաւերուած մը, ուր պիտի  
գտնուին կարեւոր նամակը, վկայագիրը, եւ այլն:



Միհրան Արքայ և իրեն յաշորդք . . . . . յէ 8-

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ աղգին մտաւորական վերածնութեան արշալոյսը կը սկսի ԺԲ. դարուն։ Այդ դարուն՝ գտան իրենց լուծումն այնպիսի կնճռուս խնդիրներ, տեղի ունեցան այնպիսի կրոնական և քաղաքական գէպքեր, կատարուեցան այնպիսի հիմնական փոփօխութիւնք կամ յեղաշրջութիւնք զաղափարներու մեր աղգին մէջ, որ վերջապէս բացաւ իրեն դռները եւրոպական քաղաքակրթութեան դիմաց, և այն աղգեցութեան ներքեւ տրուցաւ մեծագոյն մղումը մեր մտաւորական զարգացման։

Ճիշդ երկու հարիւր տարի առաջ (1701 սեպտ. 8ին), արևելքի մայրաքաղաքին մէջ մեծ գործի մը հիմք կը դըրսէր։ Դեռ կը հանգչէր մթութեան մէջ այն միշտ երերուն քաղաքը, երբ թերայի քաշուած թաղերէն միոյն մէջ, անշուք տան մ'անկիւնը, մի քանի հրազներու ազօտ լուսով փայրիլող Աստուածամօր պատկերի մ'առջև, քանի և հինգ տարեկան Վարդապետ մը, հսկայ գաղափարի մը տէր, կը պարզէր շուրջը խմբած տասնեակ մ'աշակերտաց իրեն գործին ծրագիրը։ Հան կենդանի գոյներով կը նկարագրէ հայ աղգին խղճալի կացութիւնը, որ զրեթէ հոգեվարք, կը մաքառէր մահուան դէմ յուսահատ ձիգերով։ Խնկն իրեն մէջ ձրձլառուած, անհամար տառապանաց և ցաւերու ներքեւ ընկնուած, անտէրունչ, ցրուրուած երկրիս շորս կողմը, օտար մը նոյն իսկ իւր բնիկ հողին վրայ, մոռացուած քաղաքականացեալ աշխարհէն, կոխոսուած դարաւոր թշնամիներէն, ինքնիրեն կանդնելու անկարող, կը սպասէր վրկող ձեռքի մը։ Ահա աղգերուս

միհակը մէշ-մէն դարսոց անցքին ժամանուկ։ Այդ՝ ազգը կանգնող՝ կենդանացնող ձեռքը պիտի ըլլար Միսիթար։ Ոճէր նու կատարեալ զիտակցութիւնն ազետին մեծութեան, և չէր վհատեր։ Կը թուէր կրել նու ձեռքին մէջ աղքին աղագայն, այնչափ վատահ էր իւր զործին վրայ։ Խնքը, թափանցող միավ մը, ճանչցեր էր յատակորէն թէ այն բոլոր շարիր յառաջ կու գային կրօնից թիւր ըմբռնումէ, տղիտութենէ, և անմիտաբանութենէ։ ուստի իրեն կանգնեցիր չէնքին հիմունք պիտի ըլլային կրոնիր, զիտութիւն և միութիւն։ Հարկ էր ծաւալել կրօնքը՝ իրեն բարձրութեան և որրութեան մէջ, և վարատել անօր շուրջը կուտակուած նախապաշտութենքը, որով պիտի ըլլար այն՝ հայութիւնը քրիստոնեայ արեւմուտքին հետ միացնող կաողը։ Կրօնից պիտի ընկերանար կրթութիւնը, որ պիտի բարձրացնէր սրտերը զէպ ի այն ամէն բան, որ բարի, զեղեցիկ և ազնուական է, և անտեղիտառի կորով մը պիտի զնէր մեղիութեամբ թուրացած երակներուն մէջ։ Այդ լոյսերուն պիտի միանար զիտութեան լոյսը, որ պիտի ցրուէր մոփերը կաշկանդող խաւարը, և պիտի բանար անօնց զիմաց նորանոր հորիզոններ, ուր պիտի տեսնէին մարդկութիւնը և կեանքը՝ երջանկութեամբ պատարաւն, ուսումները և արուեստները՝ ձագկած զիհակին մէջ, շատ տարբեր իրենց շաւրջը տեսածէն։ և այդ՝ պիտի խրախուսէր զիրենք յառաջադիմութեան մրցանքով մը, որով պիտի ըլլային հին արևելքին ամենէն աւելի զարգացեալ և քաղաքակիրթ աղզը։ Հայութիւնն, յետ անզամ մի ճանչնալու այսպէս իրեն կացութիւնը, պէսափ պիտի զզար ինքզինքը ժողվելու, և աշխարհիս ամէն կորմ տարտղնած զաւակները կազերու մի և նոյն մայր երկրին սիրով, մի և նոյն պատմական աւանդութիւններով, մի և նոյն նպատակին ժառայելու յամառ կամքով։ — Արեւ շոշ մը ներս մուռ պատուհանէն։ ճրագները մարեցան, արթնցող քաղաքին ազմուէն և իրարանցումը սիւափեցոց զՄիսիթար և իրեն աշակերտները՝ իրենց հօգեզմայլ յափշտակութենէն։ — Այդ էր ծրագիրը Միսիթարայ զօրծին, որուն ինքը ոկիզը պիտի տար, և աշակերտ յառաջ պիտի տանէին մի և նոյն ուզդութեամբ և հոգւով։ Հիմը գրուած էր արդէն այն միարանութեան,

որուն գաղափարն ունեցեր էր Մխիթար՝ պատահի հասակէն։ Առաջին քայլէն ունեցաւ խոր համոզումը յաջողութեան դործին, զիտնալով որ իրենը չէր միայն, այլ աներեայթ ձեռք մը կը մղէր զինքն առ այն, և պիտի առար իրեն կարեար ուժը, վասահ միանգամայն՝ թէ ամուր և անձնանուէր կամքի մը հանգէպ, զոր կը զգար իրեն մէջ, աեղի պիտի տային ամէն գժուարութիւնք։ Մարդիկ և բախտն, որոնք յաճախ կը նպաստեն յաջողութեան մեծամեծ զործոց, ուրիշ մասն չունեցան այս գործին մէջ, բաց ի խոշնդակներ հանելէ, որոնց յաղթելովն է որ յայտնի եղաւ Աստուծոյ մատն և Մխիթարոյ հոգւոյն մեծութիւնը։

Նախ քան սկսիլը նախահօրու վարուց պատմութիւնը, կարեար կը համարիմ անցողակի ներկայացնել հոս, մի քանի էջերու մէջ, մեր աղղին պատմութեան քանի մը կէտերը՝ այն երկու իրար յաջորդող զարուց անցըին կամ շրջանին ժամանակ, յորում ծնաւ, ապրեցաւ և զործեց Մխիթար։ Դա՛ շրջանակն է՝ որ զարու պիտի ցատկեցնէ մէջը զիտեզուած պատկերը։ Անկարելի է ըմբռնել զործի մը մեծութիւնը, եթէ չի նկատուի նախ այն միջավայրը՝ որուն մէջ զործուեցաւ, և այն գժուարութիւնք՝ որոնց գէմ հարկ եւ զաւ կռաւիլ։

Պիտի սկսիմ նախ մեր աղղին վանքերէն՝ թէ ի՞նչ զիտակի մէջ կը զանուէին միւ զարու կիսէն մինչեւ միւ զարուն սկիզբները, բաղդատելով զանոնք հին վանքերուն հետ այդու պիտի ցուցուի ընդհանուր եկեղեցականներուն հոգին և անոնց կացութիւնը։ Յետոյ թէ ի՞նչ պայմաններու մէջ կը զանուէր հայ աղզն, կրօնական, ուսումնական և տնտեսական տեսակէտներով, այդ մի և նոյն շրջանին մէջ։

\* \*

Մեր մէջ ընդհանրապէս, սակաւ բացառութեամբ, կրօնից թերուն ներքեւ ծաղկեցաւ զիտութիւնը։ Վանորաք եղան նշանաւոր վարժարանք ուսմանց։ Քրիստոնէութենէն սակաւ ժամանակ յետոյ մուտ դասւ հայերուս մէջ վանականութիւնը, և մեր զիտաւոր պարծանքներէն մին եղաւ, իրեն բարզաւած վիճակով, ինչպէս կը կարդանք աղղային

Հին պատմիչներուն մէջ, Արդէն, Դ և Ե գարերուն, հազար կիւ հաստատուած, կը զանենք զայն զարգացած, բարեկարգ և կանոնաւոր վիճակի մէջ, որպիսի զժուար ըլլայ թերեւ զանել նոյն ժամանակի ուրիշ քրիստոնեայ աղզաց մօս<sup>1</sup>. այնողու որ Փաւստոս կը ներկայացնէ մեզ բոլոր հայ ազգը, մեծին Կերսիօնի ժամանակ, իրը վանականաց միարանութիւն մը<sup>2</sup>: Զիայ համաշխարհի զէաքը մը մեր քաղաքական և զրական պատմութեան մէջ, ուր շհանդիպինք վանքերու, որոնք մեծ սուրբեր, զիտնականներ և մեծագործ անձինք տուած ըլլան ազգերնուու: Վանքերէն ունեցանք զրեթէ բոլոր նշանաւոր կաթողիկոսները, վանքերէն ունեցանք լուսամիտ անձինք, խորհրդատուններ թագաւորաց, տօմարագէտներ<sup>3</sup>, պատմիչներ, իմաստասէրներ. վանքերէն երան երգիչներ և բանաստեղծներ, Կարեկացիներ և Արկաւագներ: Հայ ազգն՝ կրօնասէր բնաւորութեան հետ միացուցեր էր նաև վանասիրութիւնը<sup>4</sup>, իւր աշխարհին ամենէն աւելի հրաշագիտակ և զեղեցիկ զիրքերը վանքերու յատկացուցեր էր: Երանց ծայրերը, ձորերու խորը, անտառներու և ծովակներու մէջ, ազրերաց կամ առաւակներու մօտ կը հանդիպինք վանքերու, ուր ամայի լուսութեան մէջ՝ բնութեան անուշ կամ ահարկու ձայներուն հետ՝ զարմանալի ներդաշնակութիւն մը կը կազմեն սրտերու խոր հառաջները: Եւ ինչպիսի վանքեր՝ պարզոպատ և աշտարակներով ամրացած, անտափիկ զիրքերով, որոնք յաճախ, թշնամույն հրասակներուն առջև, ապատանարաններ եղան անզէն ամրոխին: Հոն, աղքատք և հարուստք, իշխանք և թագաւորք, կը մրցէին ընծայարերը ըլլալու այն որբագլյարերուն, որոնց գոները բաց էին, զիշեր և զորեկ, պանդրիստին և ուղեորին, հիւանդին և տա-

1.  $\mathbf{R} = \mathbf{I} - \frac{1}{2} \mathbf{n} \otimes \mathbf{n}$ ,  $\hat{\mathbf{R}}_{\text{max}}$  19:

2. Ф. Рицкель. 1852. №. 75.

5. Յանի 551. Ամենու վարդապետ. Գրակալ վանքին առաջնորդ. Տես առաջարկեա՞մ է՞ ՀՀ, որ Պահանջ մազգին մէջ կազմեց այսոց առաջը. Մասիս Եշինուու կաթողիկոսաթեան մասնակի. (Յանի. Արքական. Պատմութեան Տ-բառ, էջ 8):

4. *Любопытные сведения о героях и событиях в истории русской литературы*. — СПб., 1880. — Т. I. — 413—4.

սապելոյն, ուր ամէն թշուառ իրեն ցաւոց դարմանը կը գտնէր<sup>4</sup>:

Այդ վանքերուն մէջ ամէն բանէ առաջ կը փայլէին կրօնք և առաքինութիւն: Աշխարհի մոլար կարծիք և զեղծմունք հոն իրենց դիմաց անտեղիտալի պատուար մը կը գտնէին, որով երբէք կամ շատ քիչ անզամ կրցան մուտ գտնել այն նուիրական տեղեաց մէջ, ուր անչէջ ճրագներու նման կ'ասպրէին մաքուր հոգիներն, ուր մշտամունչ աղօթք, ձգնութիւնք և մեսելութիւնք անընդհատ կը յաջարդէին իրարու: Այն անդերէն մերժուած էին ի ոպան փափկութիւն, դիւրակեցութիւն, և ամենէն աւելի անմեղ զրոսանք, բնութեան պահանջած պէտքն իսկ քնոյ կամ զգեստուց ամենախիստ չափով լեցնելով<sup>5</sup>: Բաւական է այն վանական միարանութեանց զանազան անունները լըսել, որոնց մէջ կը փայլի անոնց բոլոր նկարագիրը: Թամանաւոք<sup>6</sup>, Մաքինոցը, Խոտալարակը, Մշտապաշտօնը, Խարագիազեստը, Երկարապատը, և այլն: Զարմանալի բարեկարգութիւն մը կը աիրէր հոն, խիստ կանոնազանթիւն մը: աղօթք, ձեռագործք, ընթերցմունք և ուրիշ ո և է զբա-

1. Հայոց վանքերուն թիւը հազարներու կը համէք: Ժայյն ժեմն ներսէ երկու հազար քառասուն վանք կամ եւթ-ութ-ութ շինել առեւեր է: Ինչպէս կը պատմէ Մեսորաք երէց (Ասփերը - Զ. Էջ 39): իսկ Արքա-առաջէն Լաստիվերացի կըսէ: «Նու անապատաշուն վայրքն լինու և խաղալ էին կրօնաւորագոյն դաստիք, մինչ զի զգեզակ և զագարակ առ բարի նախանձ քանիեալ առելին քնակութիւն կրօնաւորաց»: (Պ. Էջ 39):

2. Գր. Մազիստրու ու Անեսնեկիցին զրուծ թղթին մէջ՝ ունուց չըդ-նեսթիւնները կը յիշէ: «Ամանք ի ձէն? ի մորթոց փայտից զգեստաւու, սիսալ, և ի կերպակուրա մարդկայինս ոչ չպեցելոց, այլ խոսովք վայրենի շատացնելը, և ոմանց մաշկեար միայն, և սոսոնց պարկպատի և ըգ-վեսու: Զատոզ ունարացնյու և զառանամաննեաց ոչոյ զմելակութիւն ձեւ-բայցնյ հիւսիսային յինքն կրեալ, և գենանայտի ասրաւենալ, և սովոր և ծարաւու համբերեալ»: (Խօնիք - Սուրբ Հոգ Հ-2, 348-9):

3. Գեղեցիկ կը նկարագրէ Անեփան: Օրոգեւ (Պ. 19): Թահանու-կոչուած վանականաց չոնութիւնը: «Մշտապաշտօնը, նեսացեալը յամենայն փափուկ կերպակոց, միայն ասուած հացին և լոկ ջրով վնարէին շպէտու իւրեաց: Լոիկը, հեղաշարժը, որք իրբեք զկանթեկուան անչէլու կանինեալը (ինէին յաղոխն զցուշ և ցցերեկ... և բայց ի ոպասուուացն ընդ զրուծ վանիցն ոչ ոք եւանէր արտաքս:

զումն ունեին իրենց յատուկ սահմանուած ժամերը։ Կային նաև յատուկ օրագրութիւնք կամ ժամանակագրութիւնք, ուր կը նշանակուէին երեւլի դէպքերը, որուն օրինակ մը կրնայ համարուիլ Յովհաննու Մամիկոնենոյ զիրքը, — և ի մասնաւորի Ա զլուխը, — ինչպէս կը կարդանք Յիշատակարանին մէջ։ «Արդ որք զկնի դացա այլք նստին վանականք, զոր ինչ զործի յաւուրո նոցա ի տանս այսմիկ՝ զիցէ ի նոյն մատեան։ զի այսպէս զառք օրինադրեալ յառաջնոցն<sup>1</sup>»։ Եոյն ժամանակի վանքերուն մէջ ոչ նուազ կը փայլէր զիտութիւնը, որոնց միակ զարդերն էին բազմաթիւ ձեռագիր մատեանք, արդիւնք երկար սպնութեանց վանականներուն։ Վանորայք՝ տեսակ մը համարաւաններ էին այն ժամանակներուն, մանաւանդ իմաստասիրական և սրբազան զիտութեանց, ուր Հարիւրաւոր երիտասարդ արեգայք և պատանիք, մնուանի փարդապետաց առաջնորդութեան ներքեւ, կ'ուսանէին իրենց աստիճանին պատշաճ և կարեօր զիտութիւնները<sup>2</sup>։ Այդ գերաշխարհիկ, ներանձնացեալ և ուսումնասէր հոգիներն էին, որ կը գերադասէին վանորէից լոիկ հանգարտութիւնը քան քաղաքաց ժխորը, և որոնք՝ առանձնութեան մէջ՝ նիւթական աշխարհէն վեր բարձրացած, երկնաւոր զմայլմանց և յափշտակութեանց մէջ կ'ընկղմէին։

Այդ հոգիներէն մին էր Միսիթար, որ այցելեց ամենէն աւելի նշանաւոր վանքերը, որոնք կ'առողէին դեռ իրեն ժամանակ, և ուր զժրախտաբար հետէն մեացած միայն պատերը դառւ։ Ֆէ՛ զարուն վերջին քառորդին, և անկէ ալ առաջ, այն հազարաւոր վանքերէն շատերուն աւերակները միայն կային, շատերն ալ ամսոյի թաղուած, շատ

1. Յովհ. Մամիկոն. Պատմութեան Տ-ընթաց. 60։

2. Ամենէն աւելի նշանաւորքն էին. Սիւնեաց վարդապետարանը, ուր Ժ գրուն 500 կրօնաւորք կային. Հազբանու վանքը. ուր նոյնպէս զրեթէ 500ի կը հասնէր միարաններու թիւը Ժ գրուն, և որուն մատենոցարանն էր շահուած է ամենափարթամ զանարան։ Նոյնպէս Երբակայ Հոսոմասի վանքն ունէր հարուստ մատենոցարան մը. Գլամոր կամ Գալոյ ձար, որուն համար կ'ըսէ Վարդան աշխարհապէիր, «ուր աթոնէ և վարժարան ուսուր վարդապետաց մերոց»։ Անոնց վանքը, որուն համար կը վկայէ Ասողիկ (Գ. 3.), «միակոնք ի տակ Աստուծոյ և զեալ, առանձագ զբազմութիւն գրոց որբոց» և այլն։

քիշերն ու բնակուած մի քանի արեղաներէ, որոնք աւելի պահապաններ էին այն հնութեանց՝ քան վանականք։ Երբ զեռ աղայ էր Մխիթար, Աերաստիոյ Ա. Նշան վանքին տժգոյն, վախ, երկայնամօրուս արեղաները տեսնելով, ուրանց մասին չառ քիշերը զեռ աւանդական յարգանք մը կը զզային, կրօնաւորելու բուռն վափաք մ'ունեցաւ։ Վանկան պարզութեամբ մը յայտնեց իրեն այդ վափաքը, և փոխարէն խիստ յանդիմանութիւնն մը լսեց, որովհետեւ այն ժամանակները ընդհանրապէս վանականի մասին՝ գասարկապորտ և ախտաւոր մարդու գաղափարն ունէին։ Պատանեկութեան հասակին՝ ուզեց իրագործել այդ վափաքը, որ յետ երկար թափառութերու վանքէ վանք, ոչ մէկ աեղ չի գանելով իրեն հոգեորի և ուսման ծարաւը յազեցնող անձ մը կամ առարկայ մը, յարևմուսս ուզզեց իրեն քայլերը։

Վանքերը հեռուէն միայն հրապուրիչ բան մ'ունէին. բաւական էր անօնց սեմը կոխել անցնիլ, կատարեալ յուսախարութիւնն մը կ'ունենար մարդ։ Հոն թափանցեր էր աշխարհի հոգին. խաղաղութեան և խոնարհութեան որրավայրք՝ յաճախ փառամոլ և զիմանէր արեղայից կոխեներով կը վրդովիին, և աւելորդ էր այնուչեաև սուրբերու և զիտնականներու սպասել անօնցմէ։ Հազուագէոյ երեսյթ մը շեր տեսնել, այն սրբազն զգեստուց ներքեւ, փառամէրներ, ործաթասէրներ, ախտաւորներ, տգէաններ, որոնք աշխարհիկ մարդոց ծազրածութեան առարկայ դարձած, զգուելի կ'ընէին վանական կոշումը։ Այդպիսիք էին Չալտի վարդապետները, Շառուկ արեղաները, որոնց պիտի հանդիպինք Մխիթարայ վարուց պատմութեան մէջ։ Կային տակաւին մի քանի վանքերու մէջ արտաքին ձգնութիւնք, ծնրագիր աղօթակացութիւնք, պահեցողութիւնք, խարազնազեստութիւնք, և այլն. բայց այդ բոլորը սոսկ արտաքին երեսյթք էին, իսկ բաւն հոգին վանականութեան մարդեր էր բոլորովին, և հազիւ կը լսուէին հոն խոնարհութեան, անձնուրացութեան, սիրոյ անունները։ Ժողովրդեան յարգանքն և համարումն երթալով նուազեր էր, նուազեր էին ուխտագնացութիւնք վանքերու և նուիրատուութիւնք, քանի որ դազրեր էին անոնք որբավայրեր

րլլալէ, և ուր չեին դաներ այլ ևս թշուառներն իրենց ցաւոց դարմանը՝ Բարեպաշտից տուած ձոխ կալուածներն և գանձերը՝ հալեր, սպառեր էին ընչափաղց, զրօսասէր և դիւրակեաց կրօնաւորաց ձեռքը. որոնք վանքերուն հասարակաց եկամտւաները բաժնած իրենց մէջ, ինչպէս կ'ըսէ ականատես և ժամանակակից պատմիչ մը, կը գործածէին զանոնք իրենց և ազգականաց պիտոյից և զուարձութեանց համար<sup>1</sup>: Խւրաքանչիւր արեղայ ունէր առանձին այզի և բուրաստան, փեթակ և տուն, մառան, համբարանցներ<sup>2</sup>, և այլն. մէկզի զրած փիլոն և վեղար, աշխարհականաց նման կը հազնէին ազնիւ նիւթերէ շինուած զգեստներ, լաշխուր, և այլն, գեղեցիկ զլխարկներ՝ զլուխնին, և վրանին բալափառ առած, կ'ուզէին պննասիրութեամբ մրցիլ իշխանաց հետ. ոչ պահք և ոչ ծոմ ունէին, բոլոր տարին ուտիք էր իրենց համար, որոնց սեղանները կը զարդարէին ամէն օր զինի, միս և զանազան համեզ խորտիկներ: Այդպիսիք ի հարկէ ոչ կ'ազօթէին, ոչ կը ժամերգէին և ոչ կը պատարագէին. Ա Բնաւին թաղեալ զժամ և զպատարագ, կ'ըսէ տխուր շշշտով մը յիշեալ պատմիչն, ոչ կանխէին ի ժամ ազօթից յեկեղեցի, և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի զեղորայս, և բնաւին բարձեալ ի նոցունց շնորհ քահանայութեան<sup>3</sup>): Բայց ամէն բանէ աւելի կը պակսէին վանքերուն մէջ զիտութիւն և բարեկարգութիւն, որոնք իրարու հետ կը զուզընթանան միշտ: Ա անական միարանութիւնը կ'ըսուէին, առանց միու-


1. «Զմուռան հասորակաց վանիցն մասուն արարեալ յինքեան բաժանէին. և զայն ամենայն ինքեանց և ազդայոց և իրեանց հանձեաց արաց ժամէին ի պէտո կարեաց»: (Առաքել Գավրիժեցի. Եշմատին. 1884. Էջ 220):

2. Շնորհային եմ կը մեզազրէ իրեն ժամանակի վանականները, թէ սրազումը ի ժամանակին կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին... ազքառար ի գոյից և կարար հարկաւորացն, յորդամ զձե կրօնաւորութեան ընկայան, տեսրը եղեն ի վանորայս բազում ժամանակութեան և փարթամացան առացուածովք. (Պատճենական բառը. Վեհակի. 1875. Էջ 73):

3. Առաքել Գավրիժեցի. յէջն 220-221. ուր աեզնիտեղը կը նկարուզրէ իրեն ժամանակի վանականց, զիւղական քահանայից, և նոյն իւզ հայիսկոպոսոց և կաթողիկոսներուն անկարգութիւնները:

թեան և սիրոյ. կանոնք, փոխանակ իշխելու, ոտնակոխ  
եղած։ Զկային հոն ոչ հոգեոր խրառներ, ոչ կրթութիւնք,  
ոչ հայեցողական կեանք կամ խոկմունք, որոնք հոգին կը  
վառեն, կը սնուցանեն բարեպաշտութիւնը, — ոչ ուսում-  
նական պարագմանք, ոչ արտաքին կամ օրբազան զիտու-  
թիւնք, որոնք մաքին հետ սիրան ալ կը կրթեն և կը զար-  
գացնեն։ Զկային հոն հոգեոր դաստիարակներ, որոնք կա-  
ռավարէին անսոնց խղճերը, կրթէին անսոնց զգացումները,  
ուզգէին բնաւորութեանց թերութիւնները։ Զկար ներ-  
քին կապ մը, որ միացնէր իւրաքանչիւր անդամները իւրա-  
րառու հետ, և բոլորը՝ զիխոյն հետ։ կ'ապրէին մի և նոյն  
յարկին ներքեւ, իրրու օտարք իւրարմէ, առանց հասարա-  
կաց նպատակ մը ունենալով՝ որուն զիմէին ամէնքն ալ  
միասիրան և միակամ։ Չունէին ուխտերու պարտաւորիչ  
կապը, որ սանձ մ՛ըլլար անսոնց վայրայած թափառութե-  
րուն, որով անընդհատ երթեւել մ՛էր վանքերուն մէջ, ո-  
րոնք տեսակ մը իշխաններ էին։ Շատերը, հոգեկան միսի-  
թարութենէ զուրկ, մաքերնին դատարկ, երեակայութիւննին  
տանջուած միայնութեան երազներով, — մելամազնու ո-  
գիներ, — բաց զանելով զիմացնին վանքին գռները,  
զուրու կը նետուէին օր մը քաղաքաց յորձանուտ ժխորին  
մէջ, ուր արեղայութեան ձեւը միայն պահելով, աշխարհի  
հոսանքին կու տային իրենք զիրենք<sup>1</sup>։ Խոկ անոնք որ կ'ըզ-  
գային ձմարիտ կոչումը վանականութեան, չունենալով  
առաջնորդ մը՝ որ ուզգէր իրենց քայլերը որբութեան ձա-  
նապարհին մէջ, անկարողը յաղթելու հանգիպած դժուա-  
րութեանց, աշխարհ կը դառնային վհատելով կամ ծամա-  
ծուռ ընթացք մը կը բանէին։ Գրքերը թողուած դարան-  
ներուն խորշերը, ուր փոշին և ցեցը դարէ դար կը կրծէին

1. Շնորհալին կը յորուրէր իրեն ժամանակի վանականները « Փոփո-  
խիլ ի փոփոխական բարուց, վանաց ի վան ցըկելով զի վան դոյզն  
պատճառի թոշուլ զառաջնորդն իւր և զիենակից եղբարուն, անհամա-  
տութեան բարուց է նշանակ . . . Զի յորժամ յանպատճառն . . . տեսա-  
նիցն զոք եղաւ առաջնորդն, կամ վարչապետն, կամ ոք ի ձերպար-  
նիցն, և յանչիմանուղ բանիւ առաջնորդ, վաղվագակի զիշերազնոց ե-  
ղաւ փախէլ » (Պատճառ-1-1-2. էջ 89)։



զանոնք<sup>1</sup>, երբեմն ալ՝ որ չարագոյն է՝ ծովասոյզ եղած<sup>2</sup>, շատերուն միակ պարագութիւն էր մշակութիւն դաշտերու<sup>3</sup>, առուետուր կամ արուեստ մը, յանախ նոյն իսկ առաջնորդաց խօսքերէն կամ օրինակներէն յորդորուած<sup>4</sup>: Ի հարկէ, առանց զրգերու և վարժարաններու, կը մեռնի զիտութիւնը: Այն ժամանակները, դեռ լոյս չի տեսած կանոնաւոր քերականութիւնք և բառարանք, որոնք լեզուի մ'աղաւազութեանց առջևը կ'առնուն, ամէն մարդ իրեն խօսելու և զրելու յատուկ ոճն ունէր, առանց զիրար հասկնալու. ամէն որ ինքն իրեն ուսուցիչն էր: Միայն եկեղեցական աստիճանի թեկնածուք ուսմանց կը պարապէին, և այդ զիտելեաց ցանկը շատ քիչ բան կ'ամփոփէր մէջը, կարգալ ու զրել: Իսկ եթէ անոնց վրայ երգեցողութիւն կամ մանր ուսմունք ալ աւելնար, այնպիսին կը կոչուէր փիլիսոփայ, քերող, զիտեական, վարդապետ, և այլն. այսչափ դիւրագին էին այն

1. Առաքէլ պատմիչ կ'ըսէ իւր ժամանակի արեգայից համար, թէ չոչ բնու ընթեռնուին զիրս, ոյլ էին ֆակեալ և լուսաւ ժամանակը. վասն զի էր խափանեալ ընթերցութիւն սուրբ Գրոց, որը էին արհանգուէնեալ յաշն նոցա, նողով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեց: (Պատմութիւն. Էջ 221):

2. Խրուտամք կը մեղագրուի Ականայ վանքին առաջնորդը. Յահնանես Բ վարդապետ, որ ժող նկան առեւ է բոլոր հին ձեռագիրները, որպէս զի Այսէնն կաթողիկոս (յամ. 1777—1780). որ այցելութեան պիտի երթար վանքին, չի տեսնէ անոնց անկարդ և խանգար զիւտակը (Այսէնն. 87—88):

3. Շնորհալին՝ վանեկաններուն կ'ուզողէ հանեալ խօսքերը. «Զարուցացուցանեմք զշամարտապաւեցց երամու, յաղագո նոր հղելոյ առփորութեանդ ի վաներոյս ի մերում ժամանակին, այգեղործ իւրաքանչիւր որ լինելով ի կրօնուորաց, որովէս ի դիւցու» (Ըստ Հանրապետութիւն. Էջ 71—72): Ուրիշ անդ մ'ալ. «Արժան է, տան, այսպիսի օրինական վաստակել եղածըր, և բրել ձեռամք և վայսաւոր և բանիւր. Բողդից առել զարտուատելոյն հնարա, մի քան զմի առաւելեալ ի հանձար» (անդ. 74—75):

4. Հազիւ զար մ'առաջ, յամ. 1780—1799, երբ զիտութիւնը սկսեր էին զարգանաց մեր մէջ, «Առեկան կաթողիկոսը կը յորդորէր Լէմբանթիւն միաբանները, ինչու կը պատմէ Մահր Մահրհանց, որ թուզուն զրբերն և ուսումը, և մշակեն այզիները և նախիրներն արածեն, ըսկով. «Մեծ է ուսուն այս, ինձ մարդիկ հարկաւորը են ի կառավարել, իմ միաբանը եթէ զԱռ-բէ Ե-Տէր և զՀ-յը Ք-ին-ն զիտեան, ինձ բաւոկան է. ևս փելիստիք միաբան ուզում չեմ» (Պատմ. ի-բ-պ-ի-ն-ի. 1765—1831. Էջ 12. Մուկուտ. 1879):

ժամանակ մեծ տիտղոսները։ Շատ վարդապետներ և եւ պիտիոպոսներ հազիւ աւետարան մը կարդալ զիտէին և Աստուածաշնչի մի քանի պատմութիւններ՝ քարոզի համար։ այս էր իրենց զրական բոլոր պաշարը։ Բնաւ արժանիք չէին փնտուուեր այնպիսի բարձր աստիճաններու համար, հակառակ կանոնաց Եկեղեցւոյ, որոնք էր պատուիրէին, և Վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակըրթեացը հին և նոր Կտակարանաց և կանոնական հրամանաց…… Եւ զայնոսիկ որ հանդերձեալ իցեն կոչիլ յատին հրամանի (վարդապետութիւն), զհամար ուսման զըրացն արժան է պահանջել<sup>1</sup> ։ և այլն։ Անգամ մ'որ վարդապետի անուն էր ստանային, էր հաւաքէին իրենց չուրջը աշակերտներ, մերթ նոյն իսկ իրարու ձեռքէ որուլով կամ յափառակելով, որուն համար սպառնալիք և բանական միջոցը ևս ի գործ էր զրուէին։ Թուի թէ մեր վարդապետաց այս շնորհալի սովորութիւնը հին ժամանակներէն մնացեր է, որուն համար Միւ։ Գոշ առանձին կանոն մը էր զնէ իւր կանոնագրքին մէջ, թէ և Վարդապետք զաշակերտ միմեանց առանց զրոյ և կամաց ինքեանց մի առցեն, ապա թէ քամոհելով առցէ, զատաստան լիցի<sup>2</sup> ։ և այլն։

Յամձներս էր հաստատէ հետեւալ միջադէպը, զոր կ'աւանդէ մեզ Առաքել պատմիչ, օրով յայտնի կ'ըլլայ նոյն զարու մեր Եկեղեցականաց զիտութեան աստիճանը։ Յամս 1630—1633, Մագուս Գ կաթողիկոսի ժամանակ, Կեսարացի Խաչատոր վարդապետին հետ մի քանի զիտնական<sup>3</sup> համարուած արեղայք նուիրակութեան էր զրկուին Եկատանի իրվով կամ Լէռզովիս քաղաքը։ Հոն, և յիլով քաղաքի, յաղգէն ֆռանկաց պատրիկը (այս է՛ քահանայք կամ կրօնաւորք) ումանք եկին առ աշակերտան Մագոսիսի<sup>4</sup>

1. Դաստիարակութեալ Միւ Գոշի, Մամ Ա. զւ. Գ. 88, 91։

2. Անզ. Էջ 90։

3. Ասուց համար կ'ըսէ Առաքել, թէ «Առան զի ու ընդդիմակաց ախոյեանի պատմականոյք էին, վասն որոյ ի միաւ իւրիսոց կարծէին զիերեանու զիտնական» և կարողու ուման զոյ» (Պատ. Էջ 307)։

4. Առ նոյն ժամանակի կաթողիկոսն է, որ բաւուան լուսամիտ անձէր, և նշանաւոր Յավհանեավանից ժաղկեցնողն եղաւ։

վասն հականառութեան, և հարցին նոքա ցմերան, նախ ի քերական արհեստէն, և ասացին՝ վարել բառս անո՞ւն է թէ բայ. և մերքն անհմուտ զոլով, զայլ և այլ պատասխանիս առնէին։ Յայնժամ նոքա քամահելով և ծիծաղելով այսն արարեալ են զմերովքն. և ի բազում աւուրս վասն հականառութեան այսպէս են արարեալ։ Յայնժամ մերքն ի սիրտ և յոզի խոցեալք են. և իմացեալ թէ զայն՝ զոր զիտեն, ոչ է զիտութիւն, այլ պարա է նոցա զարտաքին զիրքն կարդալ, և անդէն ի մտի եգեալ են հաստատութեամբ, թէ գնամք յԵղմիածին առ Մելիսէթ<sup>1</sup> վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին զիրքն կարդամք ի նմանէ<sup>2</sup> ։

Առաքել պատմիչ իրեն ժամանակի վանականաց և ընդհանուր եկեղեցականաց ողորմելի վիճակը նկարագրելէն վերջ, ասոցին ամեննեցուն առիթ ոչ այլ ինչ, կ'ըսէ, եթէ ոչ հեռացումն ի սուրբ Գրոց և յերկիւզէն Աստուծոյ<sup>3</sup>։ Այդ էր զրեթէ բոլոր ժամանակակից անձանց գանգաւաը նոյն դարուն անկարգութեանց դէմ. չկային վանկերուն մէջ հաստատուն կանոններ, որոնք բարեկարգութիւնը կանգուն բռնէին. չկային յատուկ հոգեւոր վարժացներ կամ կղերանոցներ, ուր կրթուէին, ուղղուէին, ուսանէին պատանիք՝ նախ քան եկեղեցական աստիճաններն ընդունելը։ Այդ պական ըմբռնեց Միսիթար և ուզեց զարմանել։ Ես, Պոլոյ մէջ Միաբանութեան հիմը դրած ժամանակ,

1. Առ. իրք իմաստափրական զիտութեանց պարապուզ և հմայա քերականութեան, շատ կը զուգուի իրեն ժամանակակիցներէն։ Այս ժամանակները կը ծաղկէր նաև Սոհվանոս լեհացի, հմայա լոտին լեզուի, որ շատ կարեռ թարգմանութիւններ ըրեր է, ինչպէս Յովիսոսոս Յանէ հրեշտակ ու ուժուածուածուածին մէջ, և այլն. (Առաքել 514-5)։

2. Այդ միջաշխին շնորհի ունեցանց Միսիոն Զուզայեցին, յիշեալ արեգաներէն մին, որ զառնալով յլշիմածին, քերականութեան և իմաստափրութեան դասեր առա Մելիսէթ վարդապետէն. և յետոյ շարագրեց Քերէնառանին մը, բաւական ընտիր՝ Համեմատութեամբ իւր դարսն, Տը-Շենառանին մը, զոր շատ կը զովէ Առաքել. և որրագրեց Պուկոյ իմաստափրի զրոց հայերէն թարգմանութիւնը (Առաքել. յէլո 233-510-515)։

3. Առաքել. էլ 251։

աւնէր մարդին մէջ այն ծրագիրը, որով պիտի հասնէր դիտած վախճանին. բայց քաղաքին խառնաշփոթ վիճակը, ուր ամէն կողմէ կը սպասնար փոթորիկը, և ամէն բռպէ վտանգի մէջ էր իրեն և Միաբանութեան կեանքը, չներեց իրագործել զայն։ Այն բռւն հալածանաց կրակներու միջէն, իրրու նոր Ենէաս մը, փախուց՝ ազատեց իրեն նորահաստատ Միաբանութեան առաջին նշխարները, և տարաւ զետեղեց հին Պեղպոնեսի մէկ ծայրը, Մեթոնի մէջ. ուր, աւելի նպաստաւոր հանգամանաց մէջ, սկսաւ զործադրութիւնը այդ ծրագրին։ Դրաւ կարգեր և կանոններ, քաղելով հին ճկնաւորաց վարքերէն և խրատներէն, որոնք խղճերը պարտաւորող բարոյական ուժ մ'ունէին, և որուն առջև կը ճկէին ամենէն աւելի յամաս մտքերը։ Գեղցիկ ներդաշնակութեամբ մը խառնեց միացուց աղօթքը՝ ուսման, հոգեորը՝ արտաքին գործերու, լսութիւնը՝ օգտակար զրուցատրութեան, ներանձնական կեանքն՝ առաքելութեան. այսու արդասաւոր և զործոնեայ ըրաւ կրօնաւորական կեանքը, որ՝ իրաց և ժամերու միօրինակութեամբ՝ մեծազոյն տանջանքը կը համարուի աշխարհասիրին, և եղաւ մեծագոյն մխիթարանքը՝ կրօնաւորին։ Միհթար նոր ուղղութիւն մը զծեց վանական հաստատութեան, որ թերեւ շատ յարմար չէր արեւելցի բնաւորութեանց, բայց փրկութեան միակ միջոցն էր այն։ Նա իրեններուն սրտին խորը քանդակեց սէր և միութիւն, ներքին առնչութիւն մը առաջնորդին և հպատակին մէջ, և մանաւանդ՝ անձնուրացութեան հոգին, անձին նուիրումը, անհատին ոչընչացումը այն գերբնական սիրոյ վառարանին մէջ, ուր հալելով, ի մի ձուլուելով, դուրս պիտի ելնէր ամուր, վիթխարի զանգուած մը կամաց, կարծիքներու, զզացմանց, որ ունենար մի և նոյն գոյնը, մի և նոյն ուղղութիւնը, ձկտէր մէկ նպատակի, և այնպիսի ուժ մ'ունենար իրեն մէջ, որ հրաշքներ զործէր, փշտէր ամէն խոչ և խութ, և միար անտեղիտալի ո՛ և է արտաքին ուժոյ կամ բռնութեան առջեւ. Բայց հարկ էր ուրիշ կապ մ'ալ, ուրիշ ուժ մ'ալ, որով բոլորովին ազատ մեար քայրայուելու վտանգներէ. հարկ էր որ այդ մարմինն ունենար իրեն զլուխը, միացած ըպար զօրաւոր կեղրօնի մը, ուսկից պիտի ծձէր իրեն

կեանքը, իրեն հոգին, և որ միակ ապաւէնը պիտի ըլլար իրեն գոյութեան սպառնացող ո՞ւ և է փոթորիկներուն դէմ։ Այդ զօրաւոր կեզրոնը, որ տուաւ իրեն զօրծին տեսութիւն և փայլ, զտաւ նա Հռովմէակուն եկեղեցւոյ մէջ, ու բուն բոլոր վարդապետութեանց խորապէս համոզուած էր։



Ներկայ վիճակէն՝ զոր ունի մեր ազգն դարուս մէջ, — երբ կը պարծին մարդիկ քաղաքականութեան ծայրը հասած ըլլալ, և քրիստոնեայ Եւրոպան զերիշխան դիրք մառած արևելքի մէջ, — կրնայ զուշակուիլ՝ թէ ինչ եւ զած է անոր վիճակն, ասկէ երկու հարիւր և աւելի տարիներ առաջ, երբ նա հազիւ լսեր էր Եւրոպայի անունը, և Օսմանեան պետութեան ուժոյն առջև տեղի կու տային Վէնետիկյ նաւատորմիզը, Աւստրիոյ բանակները, և բռվանդակ Պալքանեան թերակղզին՝ անոր մէկ մէկ հարկատու նահանջներ էին. երբ Պարսկաստան կ'ամփոփուէր հետզհետէ, անոր ձեռքը թողով իրեն զաւառները, և Ռուսաստան — միակ զրացի զօրաւոր պետութիւնը — սիրաշէր ըներ կոխել անոր սահմանները։ Յարեւելս ամէն բան անխնամ թողուած, սկսեալ երկրագործութենէն մինչեւ արուեստները և ճարտարութիւնները, որոնք հարստութեան աղբիւներ են, զուրկ առեւրական միջոցներէ, անընդհատ աւարառութեանց ենթակայ, ամէն վայրկեան վտանգի ենթարկուած կեանկերնին և ստացուածնին, բնչակէս կարող էր ժողովուրդ մը իրեն վիճակը բարուքելու և զարգանալու զաղափարն ունենալ։ Հարիւրաւոր տարիներով ստրկութեան շղթաներուն վարժած, անդգայ իրեն վրայ ծանրացող լժոյն՝ զոր խանձարուրքէն կը սկսէր կրել, համակամած զինքը լրջապատզ թշուառութեան, կորուսած այն բոլոր վեհ և ազնուական դգացումները՝ որոնք ազատ օդոյ մէջ կը չնչուին, շուներ ներքին մզումը՝ կենաց զիւրիչ և անուշիչ միջոցները ձեռք բերելու, իրը թէ իրեն չի պատկանէր այդ իրաւունքը։ Զունէր միութեան և համերաշխութեան հոգին, այլ լոկ անհատուկանը ծանրացած՝ տիրացած անոր վրայ, ամէն ոք իւր ընտանիքը՝ իւր անձը կը հոգար,

այդ շրջանակէն գուրս ուրիշ իրեն մերձագոյն անձ չի ճանշնալով . ապրելու պէտքը միայն կը զգային , և ինչ որ անմիջարար կապուած էր աղոր հետ՝ այն միայն կը զբաւէր անոնց ուշը : Յանձնած իրենք զիրենք բախտին ձեռքը , կը տարուրերուէին կենաց և դիպաց յաջող կամ ձախող հոսանքներէն : Եւ այսպէս , մինչդեռ ոմանք չնորհիւ այդ տարուրերմանց , որոնք յաճախ թշուառութեանց արդասիք էին , օտար աստղերու ներքեւ կ'ինկնային , ուր յաջորութիւնը կու գար կը գտնէր զիրենք . այք , բնիկ հողին կպած , անցելոյն անուշ յուշերով կամ ապագային յուսալից երազներով միայն կ'որորուէին : Այդ բոլոր ցաւերուն և նեղութեանց վրայ կ'աւելնար ազբատութիւնը , որուն ներքեւ կը հեծէր ժողովուրդը : Անկարող տէրութեան հարկերը հատուցանելու , և նոյն իսկ օրագահիկը ճարելու , պարտփերը կը գիզուէին վրանին , և ստիպուած ըլլարով՝ պարտքը պարսփով հատուցանելու , գրաւ կը դնէին իրենց կալուածները , հայրենական տունը , ընտանիքը , նոյն իսկ կեանքը , մինչև որ պանդխոտութեան զաղափարը ծնանելով որ մը մոփերնուն մէջ , ամէն բան թողած՝ մայրաքաղաքը կը վագէին : Հոն դիմացնին նոր պայքար մը կը բացուէր կենաց , ուր իրենց նման հազարներ , սովլալուկ , ապրելու համար ժողովուած , իրարու ձեռքէ կը խլէին ապրուստի միշոցները : Բայց ամէն բանէ աւելի անզործութիւնն էր , մեղկ և թոյլ կեանքը , որ կը սպառէր , կ'աղքատցնէր մեր ժողովուրդը : Ինչպէս նիւթականին , այսպէս և մտաւորականին մէջ անբախտ , զուրկ այն մեծ զաղափարներէն՝ որոնք կօրով մը , յանդգնութիւն մը կ'ազգեն մարդու՝ չի կասելու գժուարութեանց հանդէս և մեծամեծ ձեռնարկներ զլուխ հանելու , կը սպառէր նա որ Նախախնամութիւնը կամ բարեյաջող զէպք մը , առանց իրեն աշխատանաց , սկեղդար մը բանար դիմացը զիտութեանց , արուեստից , քաղաքականութեան և երջանկութեան :

Մինչդեռ Հայք , բնաշխարհին վրայ և մայրաքաղաքին շրջակաքը , այս պայմաններու մէջ էին , անդին , Արցախու և շրջակայից մէջ , պարսիկ կառավարութեան հպատակ ազդայինք , ՓԲ գարուն սկիզբները , տեսակ մը խլրտում սկսեր էին . Պարսիկ տէրութիւնը , իրեն մէջ յաճախ տեղի ու-

նեցած ներքին կոխւներով և ապատամբութեամբք տկարացած, չէր կարող հսկել իրեն հեռաւոր սահմաններուն զըրայ: Մէկ կողմէն՝ կովկասու լեռնարնակ ցեղերը, միւս կողմէն՝ Օսմանցիք և Ռուսիք, ստէպ յարձակումներով և ասպատակներով կը գրաւէին անոր գաւառները: Այս խաղմարար շարժումներուն ժամանակ, Վարարաղի հայ մէւլիքները, — պարսիկ տէրութեան աւատական իշխաններ, — անտառներու և անմատչելի լեռներու մէջ ապատանած, կը մտածեն թօթվել բոլորովին պարսիկ լուծը և անկախ իշխանութիւն մը հաստատել: Անոնք շատ կանուխէն ունեցեր էին այդ գաղափարը, բայց հանգամանկք չէին ներած իրականացնել զայն: Այդ գործին մտանակացող միայն աշխարհականք չէին, այլ նաև մի քանի սրբութեականներ, ինչպէս Գանձասարի Եսայի կաթողիկոսը, որ բուն հոգին էր անոր, և Մինաս վարդապետ մը, ընկեր Խորայէլ Որիի: սա հնդկաստանցի հայերէն էր, որ գործին զլուխ անցած շի խնայեց ո՛ և է ճիզն և հնարք անոր յաջողութեան համար<sup>1</sup>: Եւ սակայն ձախող ելք մ'ունեցաւ, որուն պատճառ կը համարուին, մէկ կողմէն՝ շափազանց յարումն ազգային եկեղեցւոյ, և միւս կողմէն՝ եկեղեցական անձանց փառասիրական և շահադիտական ձկտումներն:

Եւ այսպէս, մինչդեռ ազգն վերջին ճգնաժամի մէջ էր, անհրաժեշտ պէտք մը զգալով մտաւոր, բարոյական և նիւթական վերանորոգութեան մը, յանկարծ կրօնական վիճաբանութիւնք կը ծագին, որոնք կը զրագեցնեն մըտքերը, ոչ միայն եկեղեցականաց՝ այլ և աշխարհականաց, որոնք բուռն թափով կը նետուէին այնպիսի խնդրոց մէջ, որոնց էութիւնն անգամ չէին ըմբռներ: Ճիշդ ինչպէս Յոյնք, յամին 1453, երբ Օսմանցւոց բանակները հասեր էին կ. Պոլսոյ պարիսպներուն տակ, ներսը զիրար կը բզրքատէին կրօնական հակաճառութեամբք: Մեր ազգին ըգդացմանց մէջ ամենէն սաստիկն է կրօնականը. ոչ մէկ ժողովարդ թերեւս մեզի չափ մարտիրուններ ունեցած է: Այդ զգացումն, ևս աւելի արծարծուած նախապաշարմանց

չնշով, յառաջ կը բերէր մահացու, կոյր ատելութիւն մը՝  
մի և նոյն ազգին, մի և նոյն ընտանեաց զաւակներուն  
մէջ. որով, ոտնակոխ եղած ամենէն աւելի նույիքական ի-  
րաւունք, զարհուրելի ոճիբներ կը զործուէին. Եւ օրէ օր  
երթալով կը ժաւարէր հրդեհը, քանի որ փոխանակ մարե-  
լու՝ նորանոր խանձեր կը դիզուէին վրան:

Այս բոլոր խնդիրներու, շփոթութեանց և կոխներու կեդրոնն էր Պոլիս, և անոնց զլուխ և զրգուղք էին եկեղեցականք, որոնք իրարու ձեռքէ կը յափշտակէին մայրաքաղաքին և Երուսաղեմայ պատրիարքութիւնքը և Սբոյ կաթողիկոսութիւնը։ Յաւալի ժամանակներ էին անոնք, երբ ազգին հոգեւոր և քաղաքական կառավարութեան գեկին այնպիսեաց ձեռքն ինկեր էր, որոնք խուզ և կոյր անոր պէտքերուն, անզգայ անոր ցաւերուն, օգուտ քաղելով հասարակաց աղետէն՝ իրենց փառասիրութիւնը գոհացնելու միայն հետամուտ էին։ Այն ամէն վարդապետ, որ քիչ մը յաջողակ էր խօսքով կամ զործով, իրեն առանձին կուսակիցներն ունէր<sup>1</sup>, որոնք շատ ուշ կը հասկնային իրենց սխալը, երբ բոլոր դրամին վարդապետին քսակը կ'երթար, և անկէ՛ պաշտօնէից արկղները։ այս կերպով, ամէն տարի 20-30 քսակ ոսկի պակսելով աղքատ ժողովրդէն, երթալով կը ծանրանար շքաւորութիւնը ազգին վրայ։ Վերջապէս օր մը կը տեսնէին իրենց վարդապետը բարձրացած պատրիարքական աթոռին վրայ, ուր կը մնար առ առաւելն մէկ տարի, երբեմն ալ հազիւ ամիս մը կամ երկուք, իրմէն աւելի ճարտարէ կամ բռնագունէ մը աթոռանկ ըլլալով։ Երբեմն այդպիսիք կը յաջողէին դարձեալ բարձրանալ նոյն աթոռին վրայ, կրկին անգամ վար զլորելու համար աւելի անարգօրէն։ Այնուհետև կը սկսէին տառապանաց օրերը, պաշտօնանկ եղած պատրիարքին կուսակիցք՝ անոր բոլոր աղետից և վտանգներուն մասնակից կ'ըլլային։

Այս տարիներուն մէջ, Պոլսոյ պատրիարքական աթոռին

1 - Բարոր մատգիւրդը Պոլսոյ այլէնայ կուռակցով թեմանց կը քամունէր, և այն անհամբ կը կոչունէր իւրաքանչիւրն, ով որ իրեն պատրիարք կը ճանձար. այսպիսիք էին, թիվվածն. Զ-հ-ի-վ-ածն. Ա-շ-ե-ր-է-շ-ն. Ե-շ-ի-շ-ն. Մ-բ-ր-է-ր-ն. և այլն.

վրայ շի բարձրացաւ մէկը՝ տուանց առաջարելու իւր նախորդը, ինչպէս ինքն ալ, իւր կարգին, կործանելու յաջորդէն։ Անընդհատ ելեէջ մ'ամօթալի, համարձակ կամ զաղուազողի դաւաղրութեամբ իրարու պատուոյն և բախտին՝ նախանձարեկ հոգիներու. և մեծ բան էր, եթէ այդու մերջանար գործը թշուառները, պարագերու տակ ձընշուած, շատ անզամ իրենց կաւակիցներէն ևս թողուած, անարդ քսութեանց զոհ երթալով, թիսավարութեան մէջ և զնդաններուն խորը կը մաշէին կեանփերնին, աղեոր հասկնուն՝ դաստարանէ զատարան քաշկուտուելով, և երբեմ ալ, մտհուան հարուածէն ապրեցնելու համար իրենց զառամեալ կենաց մի քանի տարիները, կուրանային հաւատքնին ի գայթակղութիւն ժաղսվրդեան։ Երբեմ ալ տգէտ՝ զսեհիկ մարդիկ, հասարակ արուեստաւորք, ընչեղք և ամիրայք, յանկործ բախտին քմահաճոյքով մը, դրամի ուժով կամ աղղեցիկ բարեկամաց ձեռքով, աշխարհիկ վիճակէն պատրիարքական աթոսին վրայ կը բարձրանային, ազգի մը զլուխ ըլլալու, այնպիսի կնճառա ժամանակներու մէջ, երբ ամենէն աւելի հարտարք և փառասէրք վարանքով մը կը ստանձնէին այն ժանր բեռը։ Այդ շփոթից օրերուն մէջ ոկոսն Հայք, ըստ զանազան զաւանութեան, այլ և այլ անուններ տալ իրարու, կարողիկ, ֆանկ, հայ, հերքուասող, և այլն, որ նորանոր խռովութեանց առիթ տուաւ։

Մեր վերը յիշած պատմիչն Առաքել, որ կ'առզէր մի զարու երկրորդ կիսուն և զրի կ'առնուր հաւատարմօրէն իրեն ժամանակի անցըերը, հետևեալ տողերուն մէջ զեղեցիկ կերպով կը համառօտէ Պոլոսյ մէջ պատահած շփոթութիւնքը. «Որք ընիկ տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլէտ, բարձրամիտ, բարձրայօն պանծանօք հարըստահարեալ՝ թես ածէին ի վերայ եկամուտ ժաղսվրդոցն, և իրեւ զգսեհիկ ի շմարդի ունէին զնոսաւ։ Եւ զամենայն իշխանական իրակութիւնս, զգործս և զրանս ի ձեռս իւրեանց զրաւեալ ունէին և զործէին, և զեկամուտոն (այսինքն՝ գաւառացիմերը) ի բաց քեցեալ անհազորդս պահէին։ Վասն որոյ և նոքա հոգւով չափ վշտանային ընդ քամահանս իւրեանց, և հանողագ խոցոտիչ և

ատելութեան բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմնանս մաքառէին, և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցա անհաշտ և արեամբ չափ ատելութեամբ....

«Ապա յայնմ հետէ ձեռն ի դործ էարկ (Փիլիպպոս կաթողիկոսն<sup>1</sup>) վճարել զպարսու եկեղեցեացն, վասն զի քառասուն հազար դուռուշ պարագ կայր ի վերայ եկեղեցեացն Հայոց որ ի կոստանդնուպոլիս։ Եւ պատճառ պարտուց էին, նախ՝ սոսկ միայն կոչմամբ ևեթ պատրիարք անուանեալ առաջնորդքն, որ նատին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մուանեն՝ յանձանց և ի սուտակասպասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ Եւ երկրորդ, խազմասէրքն և խռովարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան և վասն նախանձու և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, զումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արրանեակք, և զօրավիր լինէին նոցա, և ապա գընացեալ... տային կաշառու յոլովս նոցա, և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարքութեան և առաջնորդութեան։ Եւ այլ ևս բազմապատիկ կաշառու ի դրունս իշխանացն ցրուէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ բարգեցաւ և դիզացաւ պարտքն, և եհաս մինչև ի քառասուն հազար դուռուշն։ Եւ յայսմ պատճառէ լցաւ խռովութեամբ մեծաւ քաղաքն կոստանդնուպոլիս, և իրքն զիսովեալ ծով անդնդապտոյս յատական, լեռնանման կոհակաւ, շարժմամբ, շաշմամբ, շառաշմամբ և բարձրաձայն գոչմամբ....։ Եւ համբաւ խռովութեանս այսմիկ ծաւալեալ տարածեցաւ յամենայն քաղաքս և ի զիւղս, ընդ արևելս և ընդ արեւմուտս, և ամենայն ոք զայն ի բերան առեալ խօսէր։ Եւ ի պատճառու այսմիկ բազում անզամ արք երկելիք և անուանիք, երիցունք և երէցփոխանք, և այլք ի կոստանդնուպոլսէ ելեալք երկարաձիգ ճանապարհաւ եկին ի սուրբ աթոռն Էջմիածին առ կաթուղիկոսն, առ ի հնարել ինչ

1. Ար Պոլիս գնացեր էր 1652 տարւոյն, յատկապէս ժողովրդեան մէջ խազաղութիւն հաստատելու և եկեղեցեաց պարագերը հասուցանելու համար։

վասն բառնալոյ խռովութեանցն և վճարելոյ պարտուցն։ Եւ կաթուղիկոսն յամենայն զօրութենէ ջան եղեալ Հնարերէր, երբեմն թղթով և երբեմն մարդ ուղարկելով, և այլ կերպիւ հնարս հնարելով, և ոչ եղեւ խաղաղութիւն խռովութեանց ժողովրդեանն։ Եւ յայսմ պատճառէ՝ ժողովը դականաց քաղաքին բազմաց եղեւ վիշտ և վտանգ և միաս, զի ոմանք եղեն տնանկը և ազքատք, զրկեալք յընչից և յապրանաց, ի տանց և ի հայրենեաց, և ոմանք ի բանս և ի կալանս մեռան. և ոմանք վտարական լեալ՝ ի հեռաւոր քաղաքո նեղեհութեամբ շրջէին, հեռացեալք յընդանեաց և ի ծանօթից, և այնպէս զաւորս կենաց վճարէին<sup>1</sup>։

Առաքելի նկարագրին պակասը կը լրացնէ, աւելի ստորին լեզուով և ոճով մը, Երեմիա Զէլէպի Քէօմիւրձեան, որ կ'ապրէր մինչև 1695 տարին, և շատ մօտէն ականատես եղած էր այն անկարգութեանց։ Աա, Մարտիրոս պատրիարքին նօտարը և բաւական հեղինակաւոր անձ մը, իրեն դիրքով և զիտութեամբ, կ'աշխատէր խաղաղել կրօնական մոլեաւնդութեամբ զիրար րզրքատզ կուսակցաւթիւնները։ Ոչ միայն չի բեցին անոր ձայնին, այլ և շատք կը հակառակէին անոր հաշտարարի զեր կատարելուն, երեսն ի վեր զոշելով, թէ “Ո” կացոյց զեեղ իշխան և զատաւոր ի վերայ մեր „, որուն դէմ կը բողոքէ այրած սրտով և խօսքը կ'ուզզէ նոյն ժամանակի կաթողիկոսին<sup>2</sup>. և Թագաւորք արգարք կարեն զատել զկաթողիկոսունս խռոտորեալ յուղիդն շաւզաց, ըստ այնմ, “զամբարիշտ հարս որդիք անզունեն”, և ինձ շատք զատել իր զժողովուրդս խռոտորեալս և անխրասս Դատաւորքը Աեհաց կարեն զատել զարբեողիսկոսունս իւրեանց, ինձ ոչ ճահ համարիցիք մասնիկ իշխանութեան՝ զատել զժողովուրդս անմիտս և ասմիկս ։ ԶԶաքարիա Վալֆա կաթողիկոս ոմին ուամիկ՝ կացուցանէր Յակոբ կաթողիկոս՝ զատաւոր ուղղից քննից ոչ միայն ի վերայ երիցանց քաղաքիս, այլ և ի վերայ վար-

1. Առաքել. էջ 257 - 259.

2. Ար էր՝ Եղիսաբետ Այնթաղցի, նախ Հակաթոս Երանազեմոյ մէջ, յետոյ որինաւոր ընտրութեամբ հաւատառուած կաթողիկոս (1682 թ.)

գաղետաց և ի վերայ եպիսկոպոսաց . ես որ ոչ խնդրեցի երբէք ի ձէնջ , շմարթիցիմ աւել յատենի առ տառապեալ ազգս , թէ ահա սա լոյս և սա խաւար . սա դան և նա քաղցր , ըստ ժամանակին խանգարման խռովոթեան . . . Յաւուրս անեպիսկոպոսութեան քաղաքին ի զայթակղութենէ Պատրի եպիսկոպոսի եղին օրինաց տեարք և հրամայողք աշխարհականք , կապել և արձակել զերիցուն , անարգել զերիցուն չուն կոչմամբ , և առաւել հարստահարել զվարդապետս դասասացս և քարոզիչս՝ ոչ մուծանել յեկեղեցիս , հալածելով և մատնելով զեկեալսն ի քաղաքս . և ոչ ընդունելով զնեազլուի ոմն ի սրբոյ աթոռոյդ բերել զսրբալոյս մեսոնն , ըստ որում կամաց հանեցաւ հանձարեղն և հեղն յամենայնի լուսուորեցեալ հոգի Փիլիպպոս կաթողիկոսն աշխարհականաւ միով Յավանէս անուանիր առաքել նուիրակս միւռոնիւ . սրբով ի քաղաքս . . . Ոմն Օթոսի եքմէքօնի զրել ետ զինքն՝ Արքիս Բահիազ և կալու գաղարիարքութիւն , և տակաւին թերատ և թւուատ ասէր “ Ար ար բեմ բեմ ” , տէրտաէր եղաւ ելաւ ի բեմ , թէ զձեղ ի մեղաց սրբեմ . մինչեւ սկսան թօրօս և Արօս , խաշատուր և Տիրատուր , Մեծատուր և Առվատուր երիցունք առնուլ զգործ և զանան պատրիարքութեան : Եւ արդ յայսմ ամի , որ է Թօլիֆ (1690) , դարձեալ զզուեալ և զարշեալ ի նոցունց անիրաւութեանց՝ աշխարհականք առին զիշխանութիւն . եկեղեցիքն ի մէջ խանգարման վլրդովեալ , տաւել եպիսկոպոսութիւնն որ հակիրճ զրեցաւ . իսկ սուրբ Յըրուսաղմէի վիճակիս Հայոց , զոր բազում երկամբք և աշխատանօք պայծառացուցեալ նորոգեալ զարդարէր հոգեառ տէրդ , Քէֆէցին Արքուիրոս ոչ կարաց մտանել և ոչ զայլ ոք եթող մտանել և ինքն մեաց յԵղիպտաս , և գողք անյազք և տմարդիք առտ ի կորմանէ մի ապաեն և անդ ի կողմանէ մի յափշտակեն . . . Եկեսցուք ի խնդիր մեր , զոր ի զոււխ զրոյս այսորիկ ծանուցաք՝ թէ ոչ զայ ի ժամանակիս իշխան մարդարէ . այլ հոգեառ տէրդ ի հեռի և ոչ ոք ժանուցանէ ըստ Աստվածոյ՝ զեղեալ անեարգութիւնս որ վերասացու վասն եկեղեցոյ և վասն եպիսկոպոսութեան և վասն սուրբ Յըրուսաղմէի վիճակին մերոյ . Ապա զայս ուր զիցուք , աստանօր եկեալ

հասեալ չեռ և նախանձ և վրդովմունք ի մէջ Հայոց, յուրց պատճառէ և զայթակզութիւն բազմաց, կարուղիկ և ձերձուածող, ֆակնկ և հայ աղճատանօք... և կատարածն ով գիտէ թէ ուր նկատելոց է և դադարելոց, որոյ եղեւ առիթ Արդիս ոմն թօխաթցի. մեք զմեր ցաւն ունէաք և արդ զակիզբն երկանցն կառկածեալ շուարեալ մնացաք, մէկն օրհնեց, մէկն անիծեց, մէկ այլ եկաւ հաւատէն Հանեց<sup>1</sup>....

Մայրաքազաքին մէջ պատահած յուզմունք կը զգացուէին նաև զաւաներուն մէջ, որով զրեթէ բոլոր ազգն շփոթից մէջ կը ծփաք: Այսպիսի պարագայից մէջ լեզուն և զրականութիւնն, որոնք երկու դարերէ ի վեր աղաւաղ և անկման վիճակի մէջ էին, չէին կրնար կենդանանալ. և գիտութիւնն՝ որ Հանդարտութեան մէջ միայն կը բռունի և կ'ուռանանայ՝ չէր կրնար ծագեած դիրք մ'ունենալ, Ուր թողունք որ այն ժամանակ զպրոցները գոյութիւն չունեին, չկային ուսուցիչներ, դասագրեանք կը պակսէին, բառարանք և քերականութիւնք դեռ լոյս տեսած չէին: Տպազրութեան արուեստը, — գիտութիւնը զարգացնող ուժերէն մին, — դեռ մանուկ հասակի մէջ էր և շատ յամրաքայլ կը յառաջէր. իսկ այն սակաւաթիւ հրատարակութիւնք՝ զուտ հազեւոր զրեանք էին և անկատարք, շատերուն ևս անմատչելիք իրենց զնով, որով մեծ օգուտ մը չէին կրնար ընել մեր աղքատ դասակարգին: Մանաւանդ որ ազգին զլախաւորք և եկեղեցականք, որոնք համեմատարար աւելի պէտք և միջոցներ ունեին, բնաւ զիտութեան փոյթ չէին տաներ, ևս աւելի միջին և ստորին դասակարգն և արուեստաւորք, պաշարուած հազարումէկ հոգերով, անփոյթք կ'ըլլային ուսման և կրթութեան: Գարձեալ, ինչպէս պիտի ուսանէին անոնք, որ այնչափ օտար և հեռու էին Եւրոպայէն, կրօնքով, լեզուով և բարուք: Այդ բոլոր արդեները վերցնելու և աղդին մուաւոր և բարոյական վերածնութեան նպաստելու համար, հարկ էր՝ որ եւրոպացի զիտնականներ, հրապուրուած մի որ և է

1. Երեմիա չէլեզի Քէմիւրէեան: Տ-Շ-Հ-Յ-Վ-Ն դաշտանին: Ճեռագիր (յէլու նկան, նկան, նկան, նկան):

ձղից բանէ, թողուին իրենց լոյս աշխարհը և երթային հաստատուէին հայ Հօրիզոններու մթութեանց մէջ, սփռելու հան եւրոպական զիտութիւնը, կրթութիւնը, արուեստները, որով պիտի ըլլային մեր ազգին խմացական դարդացման հիմնադիրներն ։ Բայց այդ յեղաւ, և կարելի ալ չէր այդ պատուը պահուած էր մեծ հայու մը։ Խաւազոյն և զիւրագոյն միջոցն էր այդ վախճանին հասնելու, թողուէ արեւելքի ազիտութեամբ և անկորդութեամբ խռացած մինորորտը, զալ Եւրոպայի մէջ հաստատել ընկերութիւն մը, բարեկարգ և կանոնաւոր, ուր ժողվուած խմբովին հայ պատանիներ, իւրացներով Եւրոպացոց լեզուն, ուսումները, գրականութիւնն և զեղեցկին հաշակը, տանէին ծաւալէին զանոնք հայրենի աշխարհին մէջ։ — զայդ իրականացուց Միսիթար, որ եղաւ մեծ ազոյն դէմքն հայ ազգին։



Ժմ. դարուն պատահած ազգային եկեղեցական պատմութեան վերաբերող նշանաւոր զէպքերէն մին է՝ այն կրոնական շարժումը, — ոկուած արդէն ֆէ դարու կիսուն և վերջնապէս կազմակերպուած անցած դարուն սկիզբները (1830ին), — որով Հայերուն փոքրիկ մտս մը, յարած արդէն դարերէ ի վեր Հռովմէտկան եկեղեցւոյ դաւանութեան, անոր գերիշխանութեան և հոգանաւորութեան ներքեւ ապաստան գտաւ իրեն ազգայնոց յարուցած հալածաներէն։ Այդ հայերը, ֆրանկ կամ կարոյիկ անուամբ ճանչցուած, ի սկզբան շատ սակաւաթիւ, երթալով բազմացան Պոլսոյ և չըջակայից մէջ, մանուանդ երբ Կիրակոս Երևանցի և թաշտուոր Աերաստացի պատրիարքները։ 1641 – 1643 տարիներուն մէջ, յարում մը ցուցնելով Հռովմէական եկեղեցւոյ, թոյլ տուին որ Թէադինեան հայագէտ լատին կրօնաւորը Կղեմէս Կալանոս<sup>1</sup>, — որ

1. Առեփանոս Առաքեաւ, իւր Ժամանակակից առաջարկին մէջ, կըսէ Կալանոսի համար, թէ Շամ մինչ էր ի Հայո՛ զզիկաս և զնե հայոց արեգացի կըէր, յաւուրո պահոց զնուկն ոչ ուսէր, զզինի ոչ նուշակէր, թէզէս վախտ էր մարմազ, զզիշերոյից ժաման, զազմուս և զայլն ի միասին կատարէր, և այլն Առաջ, Տէլէկէտ Հայոց Ակենտիկ, 1896. էջ 142։

արդէն Պալաթիոյ մէջ ռւսուցիչ էր հայ տղայոց, — հայ վարդապետի զգեստ հագած, նոյն իսկ Գումը Գալիուի Պատրիարքարանին մէջ՝ լեզուաց, զիսութեանց և կրօնից ռւսումները դասախոսէ<sup>1</sup>: Գրեթէ նոյն ժամանակները Փիւ ինքուս Աղբակեցի կաթողիկոսն ալ, — որուն Ուրբանոս Ռ նուիրակ մը զրկեր էր Պօղոս Պիրոմալի անուամբ, «ի կարգէն Դոմինիկոսի վարդապետ ոմն՝ այր իմաստուն և երեկի յազգէն Ֆրանկաց»<sup>2</sup>, ինչպէս կը ըսէ Դավիթից եցին, «և բազում ուր և բարեկամութիւն արար ընդ Պօղոսին այնր<sup>3</sup>», — Պոլիս գտնուելով կարեսոր զործով մը, 1652 թուականին, Լէսպոլոյ Նիկողայոս Թորոսուն և պարագան մէջ<sup>4</sup>: պատմայ Քահանայապետին անունը պատարագի մէջ<sup>5</sup>: զիւմ մը՝ որ դժուար պիտի ըլլար ընդունել ներկայիս մէջ: Գարձեալ Ազուանից Ազարիա կաթողիկոսն, Հաւանօրէն Հայոցի, իրեն թեմին քանի մը եպիսկոպոսաց Համաձայնութեամբ, դաւանութեան և Հապատակութեան թուղթ զրեց առ Խնոմվենտիս ԺԱ<sup>6</sup> (1687—8ին): Անկէ տարի մ'առաջ, Լէզոկիացի Մինաս եպիսկոպոս մը, Զիլիփտար Օղու կոչուած, 1686ին Քահանայապետին նուիրակին առն, ինչպէս նաև Մովսէս վարդապետ Երևանցի, 1689ին, և Միսիթար եպիսկոպոս Մակոցի, Լարշակ Միս կոչուած, 1693ին, Յովեանեան արքեպիսկոպոսին առնէ Լէսպոլոյ մէջ՝ կաթողիկէ Հաւատոյ դաւանութիւն տուին<sup>7</sup>: Բայց կարելի է առոնք առանձնական գէպքեր նկատել, մինչ արևելքի մէջ դեռ շատ նուազ էր կաթողիկէ Հայոց թիւր, որոնք՝ իրենց կրօնական Համագումները ծածկելու Հարկի մէջ, խառնուած էին ազգին մեծամասնութեան հետ, մի և նոյն հոգեւոր և քաղաքական զլխոյն Հապատակ, նոյն եկեղեցիները յաճախելով, և աէրութենէն չճանչցուած իրրու զատ կրօնական Հասարակութիւն մը: Այս Հանգամանաց

1. Զամշ. Պատմութեան Հայ. Գ. էջ 622—625:

2. Առորհել. էջ 295:

3. Անգ. էջ 298:

4. Կահանա. էջ 127:

5. Անգ. էջ 127—128:

մէջ էր Պոլսոյ կաթողիկէ Հայոց վիճակը, երբ հոն կը հասնի առաջին անգամ (1697ին) Մխիթար վարդապետ, և Պալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կը քարոզէ հրատարակու իրեն կրօնական համոզութերը, բայց կ'ենթադրուի այնպիսի խոչեմութեամբ, որ չի դրաւեր իր վրայ ուշագրութիւնը նոյն ժամանակի Եփրեմ Պափանցի պատրիարքին, որ յետոյ<sup>1</sup> (1701-2ին) սաստիկ խոսութիւն գործածեց Հայ կաթողիկէ վարդապետներուն դէմ։ Եփրեմ Պափանցին վերջ (1698-1701 տարիներուն), Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ նստեցան այնպիսի անձինք, որոնք բարեւիրա ներողամտութեամբ վարուելով կաթողիկէ Հայոց հետ, — ինչպէս եղան Մելքիոր կամ Մելքիոնեկ Սուպհի և Մխիթար Կորդուացի, — լիովի ազատութիւն տուին քարոզելու անոնց վարդապետներուն։ և Կարնեցի Առաքէլեան թաշատուր վարդապետը կը քարոզէր նոյն իսկ Գումը Գափուի մայր եկեղեցւոյն մէջ։ Շնորհիւ ասոնց և ուրիշ ուսեալ և անձնանուէր քարոզիչներու, որոնք Հռովմայ Արքանեան վարժարանին մէջ կրթուած, առաքելութեան կ'երթային արևելք և մասնաւորապէս Պոլսոյ մէջ, զարգացան ըստ ամենայնի կաթողիկէ Հայք, և իրենք զիրենք բաւական զօրաւոր զգալով, առանձին մարմին մը կազմելու չափ, հետամուտ եղան զատուիլ աղջին ամբողջութենէն և ունենալ իրենց յատուկ եկեղեցիներ, յատուկ զլուխ մը և առաջնորդներ։ Այս իրաւունքը ձեռք բերելու համար շատ նեղութիւն և տանջանք կրեցին, շատ ալ արիւն թափեցին։ Այդ նահատակներէն՝ եթէ ոչ առաջինը, զոնէ ամենէն հանդիսաւորն եղաւ տէր Կոմիտաս քահանայ Քէօմիւճեան, վերոյիշեալ Երեմիա Զէլէպիի եղբայրը։

Անկարելի է ժխտել, թէ այդ կրօնական շարժման նըսպասուելուն և կաթողիկէ Հայ հասարակութիւնը զարգացնելուն մէջ ոչ փափր մաս մ'ունեցան նաև երկու Հայ Միաբանութիւնը, որ հաստատեցան զրեթէ նոյն ժամանակներուն մէջ, մին Ոերաստացի Մխիթար վարդապետի ձեռքով, նախ ի և Պոլիս (1701ին), յետոյ ի Մեղոն

1. Երեկորդ անգամ պատրիարք ըլլաւուն։

(1703ին), և վերջապէս ի Վենետիկ (1717ին). իսկ միւսը՝ Բերիացի Յակովը Յովոնիքեան վարդապետի ձեռքով, Լի-  
բանանու լեռանց վրայ, Անտոնեան միարանութիւն կո-  
չուած (1705ին): Վերջինս մինչդեռ զուտ կրօնական շրր-  
ջանակի մէջ ամփոփուած գործեց, առաջինն աւելի ընդար-  
ձակ ժրագիր մ'ունենալով կատարելիք, որ իրեն Հիմնա-  
դրէն ո կրօնը, Գիտուրիւն և կրրուրիւն » նշանաբանը ժա-  
ռանգած էր, զանազան կնճռուտ խնդիրներու միջամուխ ըլ-  
լալու հարկին մէջ զտնուեցաւ:

Արդէն 1710էն կը սկսին Մխիթարեանք իրենց առաքե-  
լական գործը կանոնաւոր ընթացքով, Պողիս և անոր շրր-  
ջակայքը, Փոքր Ասիոյ և հայ բնաշխարհին վրայ, մէկ ձեռ-  
քով բանած կրօնից լոյսը և միւսով՝ գիտութեան ջահը, Ա-  
ւետարանին և Քրիստոսի Նմանուրեան զրքին հետ առ-  
նելով ազգին՝ բառարաններ, քերականութիւններ և ուրիշ  
ուսումնական զբքեր, բախելով ամէն տեսակ գժուարու-  
թեանց, կրելով նեղութիւններ և հալածանք, մաքանելով  
թիւր ըմբռնումներու և կանխակալոյ կարծեաց գէմ, մին-  
չեւ որ կրցան ժողովրդեան սրտին մէջ դնել կրօնասիրու-  
թեան, ուսումնասիրութեան և կրթութեան սերմանքը:  
Այս բոլոր կէտերը համառօտիւ պիտի չօշափեմ զրու-  
թեանս մէջ, անձուկ կազ ունենալով Մխիթարայ գործո-  
նէութեան և անոր վարուց պատմութեան հետ:

# ՎԱՐՔ

## ՄԻՒԹՈՐԱՅ ԱԲԲՈՅԵ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ԱԿԱՆ ԿԵԼԱՆՔՆ, ՍԿԱՆԱԼ, ԾԱՆԴԵՆԵՐՆ ՄԻՒՅԵՒ  
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԻ.

(1676—1701) .

### ԳԼՈՒԽ Ա.

Սերաստիա և Տիմ կարիրա քաղաքը. — Եմումզ Մխիթարայ. — Մամկութիւն և Յախճական դաստիարակութիւն. — Երկու ճգնաւոր եղբարք. — Հոգետես կուսամք, Մամասէ և Մարիամ. — Գուշակութիւնը Մխիթարայ ապագայի մասին. — Ճգնութիւնը, Շիամդութիւնը և մաս Երկու կուսամաց:

**Ա**նեւ ծովէն 4400 սաք<sup>1</sup> բարձր, Ալիս<sup>2</sup> գետէն կէս ժամ հեռու, Հիւսիսային կողմը, իր մէկուկէս ժամ լայնութեամբ և հինգ ժամ երկայնութեամբ ընդարձակ դաշտավայրի մը վրայ, — Հիւսիսէն՝ Աէրէգում, Հարաւէն՝ Գարտաշալար (Երկուորեակ), և արևելքէն՝ Առակերի և Առհրապելի լեռներով շրջապատեալ<sup>3</sup>, — կանգնած է Սերաստիա

1. Որ կ'ընէ զրեմէ (200 մետր):

2. Բառ թաւրք. Գչուշ լըշ-է կոչուած:

3. Սորոսոն կըսէ իւր Ալե-բէ-նէ-նէ-նէ-նէ (ԺԲ, Էջ 356). «Լակոնիան» կայ Կարիրա (որ յետոյ Սերաստիա կոչեցաւ) ի վերայ լանդաց Պարիսուրէս լերին:


քաղաքը, Քրիստոսէ իրը 150 տարի առաջ չինուած, ինչպէս կ'աւանդուի<sup>1</sup>, որ նախ Իրարիա<sup>2</sup> անուամբ՝ Պանտոսի թագաւորութեան նշանաւոր քաղաքներէն մին էր։ Միհրդատ է կամ Մեծն, Եւպատոր կոշուած (123-63 ն. ք. Ք.), պարսպապատ ամբացուց և զարգարեց զայն, ուր՝ իրեն արքունեաց Հետ՝ զետեղեց նուև զանձերուն մեծ մաս մը<sup>3</sup>։ Լուկուլոս, յաղթելով Միհրդատայ այս քաղաքիս մօսերը, տիրեց անոր և զանձերը կողոպտեց<sup>4</sup>։ Պամիկոս նորոգեց զայն, չէնցուց, զարդարեց, և անունը փօխելով՝ Դիուցողիս դրաւ. իսկ Պիւթոզորիս, Պանտոսի թագուհին, աւելի ևս զեղեցկացնելով և հօն հաստատելով զարձեալ ար-

1. Աերաստիոյ ընակչոց մէջ աւանդութիւն մը կայ, իրը թէ՝ քաղաքին չինութենէն առաջ անուանուիս բուր մը կը զանձեր նոն, ուրուն վրայ զարտառած խումք մը առաջակը, կը կողոպտէն Բիւզանդիանէն դէպ ի Բարեկոն զետեղ կարուանները և վաճառականները, որոնք սովորուած էին այն տեղէն անցնել, ուրիշ հանագարէ շանձենալով։ Ամէն կողմէ Հոսովմ հասնող բուզուներուն վրայ, ժերակոյտն հասմայից կեսարիս նասող Աերաստու անուն զօրապետին՝ որ երթոյ կործանէ այն աւազակաց որից՝ նա, քանի մը չէպէն առած, կ'երթոյ հիմայատով կ'ընէ և հոգին ներցն կը ժամէկէ կ'անհետացնէ աւերակներն անզամ. և մասը քաղաք մը չինելով, զաղթականներ կը բերէ կը բանկեցնէ, և քաղաքը Աւբ-ս-ս-ս- կը կոչէ իւր անուամբ, իրը Քրիստոսէ 150 տարի առաջ՝ Ներկայ ընակիչք, ինչուն կը պատմէն, հոգի ունոց ունենալով, մէկ մետր խորութեամբ կը փորեն այն տեղը, որ մինչև հիմակ կը կոշտի Բւշ-է Շառ, և կը զանձն կործանուած տուներ, չէնքեր, փունքը, թռնիբներ, և այլն։ Ուշափ ոլ սուսպ ըլլոյ վերջին մասը, սակայն Աերաստու զօրապետին անունով՝ քաղաքին Աերաստիո կոչուիլը պատմական հիմ մը չունի, քանի որ ժամանակակից Սարարու աշխարհազէրը (Ճն. յԱմասիս, 60 տարի և. ք. Քրիստոս) կը պատմէ, թէ Պիւթոզորիս թագուհին եղաւ, որ քաղաքին անունը Աերաստիո դրաւ։


2. «Նուիկին Աերաստիոն, որ կուրիս կը կոշտէր ի հնումն, — կը զրէ ինձ առանձին թշթուով Աերաստիոյ կաթողիկէ Հոյոց ոյցծուն Առաջնորդը, Գեր. Հաճան արքեպիսկոպոս, — կը կործուի ոչ հիմակուանուը, այլ չորս ժամ վերագոյն Ալիս զետերն մատ՝ զեղեցիկ հովտի մը մէջ կառուցուած կովրան հոյարեակ զիւղը, ուր կայ աւերակ բերէ ի բւրմի Ուշկունամ կոշտւած։ Ազա մեծն Միհրդատ ևս փոխութեր է՝ իրը ապանք տեղ մը սրբութեանց և զանձուց զանզանութեան համար, ուրուն համար և Դիուցողիս կոշտւած։»

3. Սարարուն, Աւբ-ս-ս-ս- ԺԲ. էջ 556։

4. Պիւթոզորիս, Զ-ս-ս-ս-ս-ս- Գ. էջ 547։



Անդամական



քունիքը, ինչպէս կ'աւանդէ Ստրաբոն, Աերաստիա<sup>1</sup> կոչեց զայն ի պատիւ Աւգոստոս կայսեր, և այնուհետեւ այդ անուամբ ձանչցուեցաւ նա պատմութեան մէջ<sup>2</sup>: Այն ժամանակէն մինչեւ այսօր կ'ապրի նա, կեանք մը ցաւերու և թշուառութեան, յետ քանի մ'անգամ աւերակաց և մոխիրներու ներքեւ մեռնելու և ծնանելու դարձեալ, և հազարներով սրոյն բիրանը տալու իրեն զաւակները: Դեռ մինչև այսօր կ'ապրի և կը պարծի սրբազան և հայրենի անթիւ յիշատակներով, սրոնք իրեն անուան շուրջը լուսապատկ մը կը կազմեն: 'Կա ընծայեց եկեղեցւոյ' մեծամեծ սուրբեր, նահատակներ, հայրապետներ<sup>3</sup>. ունեցաւ թագաւորներ<sup>4</sup>, զիտնականներ, արուեստագէտներ: Բայց Հայերու սիրելի և մեծազոյն պարծանքն եղաւ Միփթար, սրուն անուամբ անմահացաւ և Աերաստիա, բոլոր աշխարհ Աերաստացի անուամբ ձանչնալով զինքը: Այդ բարձրութեանց վրայ, այդ ողբերու և աւերակներու քաղաքին մէջ ծնաւ Միփթար, յամին 1676 փետրուարի 7ին: Այն սրէն մեր սրահրու ուխտատեղին դարձաւ Աերաստիա: Անոր ծնողական տունը կը գտնուէր Հոդիար<sup>5</sup> թաղին կամ ա-

1. Աստիա. Ա-ստ- (Augusta, Տեբատի): Ստրաբոն, Աշ-է-հ-է- Ժ-Բ- Էջ 557:


2. Քաղաքին արգի բնուկաց թիւը կը համարուի 52,000, չորս 15,000 հայ էջիանեականը և բաղրականը, 160 հայ կաթողիկէք, 600 յայնը, և Թաղամածը՝ մանէէատկանը են: Այդու արուեստներն եւ զանականներն եւ առանձիւր բաւական զարդացած են իւրաքանչիւր զաւակներնեւն պատկանոց հայոց մէջ: Երկու սրբանոցք կան, մին' էջմիածնականոց, 180 սրբերով, միւսը՝ բաղրականոց, 250 սրբերով:

3. Աերաստիոյ նշանաւոր սուրբերն եղան, Ս+ Վլաս և Ս- Աթոն զինէս եպիսկոպոսներ, առաջոյն շերեզմանը կը ցուցուի մինչեւ հիմակ, ուր ուխտի կ'երթան փողացաւէ պատմելու համար, որուն համար Պետր Ալլի-Շ կը կոչեն թուրքերն: Անոր քաջ նշանաւոկներն եղան՝ Քառասուն մանկունք, որոնց գերեզմաննը կայ մինչեւ հիմակ, և Շւառապիստներ, որոց Նշանարը՝ Հոռվից փոխարժուեցան յանոյ, և կը պահպին ի Ս- Ապողինար՝ աւագ սեղանին ները:

4. Յետ Պահանի թագաւորներուն, Աերաստիոյ մէջ յաշորէ արագ կապեցին երեք Ալֆրանիք, Աններերիք, Վասպուրականի թագաւորը, որդին՝ Դաւիթ, և առոր որդին՝ Առավիք, որ եղաւ գերշինը, յամին 1080:

5. Հոռվ- Փոքրիկ արտաքրան մէ Հայոց, որ առաջ քաղաքէն զաւակներն եր, բայց հիմակ կից է անոր՝ նորանոր շինութեանց պատմանով:

բուարձանին մէջ, քաղաքին շրջապատէն դուրս<sup>1</sup>: Հօր անունն էր Պետրոս<sup>2</sup>, իսկ մօրը՝ Շահրիստան: Միջակ կարգութեամբ ընտանիք մ'էր, բարեկաշտ, ինչպէս կ'երեւի իրենց զաւակաց տուած կրթութենէն<sup>3</sup>. Նահապետական տան մը, ուր միասին կ'ապրէին երեք եղբարք, երեն ալ արտեստով վաճառականք: Մկրտութեան ժամանակ Մանուկ կոչուեցաւ տղայն, մեծ հօրն անուամբ: իսկ յետոյ, երբ կրօնաւոր և սարկաւագ եղաւ, Միսիրար կո-



Հոգդար թաղ և Տում Մխիթար Աբրահամ:

չուեցաւ. այս անուամբ պիտի յիշեմ ես միշտ զինքը պատմութեանս մէջ: Իրեն կենապիրը կը նկարազրէ մեզ զինքը, չնորհալի դիմօք, բարեկազմ մարմնով, աչեղ, որում և կայտառ մանուկ մը, որուն շարժմանց կամ խօ-

1. Մինչեւ Հիւմուկ կը ցուցուի աւանդութեամբ այն տունը, ուր ժնած է Մխիթար: Հողութէ պատկերին մէջ տեսնուած խաչաձևն տունն է: Այս տեսնութիւնը կը հաստատէ Ակրասուից կաթողիկէ: Հայոց ներկոյ Առաքելորդ՝ Աքնի: Համեստ արքականակառուր, բաժ ըլլուրի արքանուած ծերունիներէ: և նոյն իսկ Հոգդարցիներէ:

2. Հայրեն արտեստի փերեկակ կամ քաղաքէ քաղաք ապրանք տանող վահառական էր, ինչպէս կը հետեւածեմ Մխիթար Աբրահամը առ իրեն Հոփոփոխէ քոյրը գրած մէկ նամակին հասցէն: «Հասցէ զիրս ի ձեռն Զերչի Մանուկինց մահանիք Պետրոսի գուստը Հոփոփոխէին»: և այլն. (1745 յուլիոս 15):

3. Մխիթար Աքրամ, իրմէ երեք արք մեծ՝ Հովհաննես անունով քոյրը, զոր յիշեցինը, ուրիշ նամակին մը մէջ Եշտածին կը կոչէ: «Ես յորմէ հետէ ելեալ եմ յերկրէն մերմէ և համեալ եմ առաջ, չե ես առի զոյր

սից մէջ երբէք տղայական թեթևութիւն կամ ո և է հասարակ բան մը չէր երեւր։ Զգայուն սիրո մը՝ միացած տոկուն կամքի մը հետ, ազնուական բնաւորութիւն մը՝ խառնուած այնպիսի հրատապ եռանգեան մը, որ տմենուն ուշը իրեն կը զրաւէր։ Խաղերու սիրող չէր, անէն գուրս հազիւ երբէք կ'երեւէր։ Հայրն՝ վաճառականական զործերով զրազած՝ յաճախ բացակայ էր տնէն, ուստի խնամումու մայրը, որ աղօւն առաջին տարիներուն միակ դաստիարակն եղաւ, երբէք աչքէն չէր հեռացներ զինքը, խրատելով և ուղղելով ամէն առթի մէջ, զզուշացնելով ո և է վեսասկար ընկերութենէ, և կրօնական զզացմանց հետ՝ սրտին մէջ գնելով զորով մը, փափկութիւն մը, որոնք կը փայլին Մխիթարոյ ամէն զործոց մէջ։ Այս կերպով անարատ մեաց անոր ծաղիկ հասակն ո և է ապականիչ հովերէ։

Հնգամեայ՝ քահանայի մը յանձնուեցաւ որ կարդալ և զրել սորվեցնէ. աղօւն կարգէ գուրս յաջողութիւնն, որով քիչ ժամանակի մէջ սորվեցաւ անսայթաք կարդալ և զրել, և մանաւանդ անոր սրամիս հարցումները, որոնց չէր կարող պատասխանել վարժապետը, աղչեցուցին զինքը։ Մխիթար, հայ զրականութեան ապազայ վերանորոգիչն, իրեն հարտար մոտին առաջին ցոյցը տուաւ՝ զանտզան նիւթերու խառնուրդէն ուեակ շինելուն մէջ, որով զրի կ'առնուր տնշուշտ իրեն զաները կամ մանկական թոթովանքը։ Ոչ ծնողին՝ ոչ վարժապետն երբէք պէտք չը զզացին յորդորելու, որ հանդարս կենայ, սորվի, ժամանակը զատարկ շանցունէ։ Հասակէն վեր լրջութիւն մ'ունէր, անկաւախոսէր, կարծես այն տարիքէն մաքին մէջ մեծ զաղափար մը որոնալու հետ էր. իւր ամէն զործին մէջ խոհական, հան-

ին, թէ զբնուանեց մերոց և թէ զնամորոկ ու զզափառացն՝ որք անզ են, թէ յորո՞ւմ կացութեան են, և թէ ո՞ արդեար մեսալ իցէ յըհառնեցաց մերոց, մակաւակը զնէր բներ իւմէ։ (Առ Յովհաննէա քահանայ. 1756 յունիար 14)։ Ունէր նուկ հզբոյը մը, զոր կը յիշառակէ ինցն առ Հ. Թագմաս զրած նամակին մէջ, 1757 սորիլ 2ին։ Վեզ մի անգամ զրեցի, թէ այդը (Կ. Պոլիս) ի Ակրասուացւոց հորցաւ ահղեկացիս, թէ արդեար քոյրե իւմ իցէ տակարին կենդանի. նըմանողէն և որպին... նմանուպէն և զնէր բներ զիստի»։ և այլն։

գարս և վճռական բան մ'ունէր, այնպէս որ մեծերուն վրայ իսկ պատկառանք մը կ'ազդէր, և ամէն տեսաղք կը վկայէին՝ թէ Աստուած մեծ բանի մը կը պատրաստէր զինքը։ Իրենց տանը կից էր եկեղեցին<sup>1</sup>, որ ամէն անդամ կ'ընկերանար ծնողաց այն փոքրիկ հասակին մէջ, խառնելու անմեղ սրտին մրմունչները շարականաց և սազմուաց երգերուն հետ, զորոնք միտքը պահելով, յետոյ կը կրկնէր տան մէջ փափռէկ, ոլորուն ձայնով մը, և կը զորովէր լուսղները։

Դեռ չի հանչցած թէ ինչ է աշխարհ կամ կեանք, գեռ չի տեսած անոնց փուշն ու ծաղիկը, կրօնաւոր ըլլալու փափաքն ունեցաւ, և այնչափ սաստիկ էր այն՝ որ չի կրցաւ սրտին մէջ ծածուկ պահել։ Ծնողքն առաջին լոեւուն՝ պարզապէս ծիծաղեցան վրան, այնչափ տարօրինակ երեցաւ իրենց այդ մտածութիւնը։ Բայց երբ տեսան որ Միսիթար իրօք յարած էր այդ գաղափարին, յանդիմանեցին զինքն և չանացին միտքը փոխել տալ։ Եա վշտացած սաստիկ՝ ծնողաց, և մանաւանդ հօրեղբարց ցուցած զիմազրութենէն, աւելի ևս հասաւատուեցաւ իւր մտքին վրայ և սկսաւ նգնութեամբք անոր պատրաստել ինք զինքը։ Ինչ որ լսէր կամ կարդար սրբոց վրայ, նմանիլ կ'ուղէր և փորձել։ Ա. Յովհաննու Միրամի և ուրիշ նգնաւորաց վարքը կարդալով, անոնց նմաննելու կրակը վառեցաւ սրաին մէջ։ Աւրաստիա շրջակայքը քարայրներ կը գտնաւին։ Միսիթար յարմար դժուաւ զանոնք՝ առաջին փորձն ընելու նգնաւորական կենաց։ Օր մը ծնողք տան մէջ չէին տեսներ իրենց փոքրիկ Միսիթարը, նա սովոր չէր երեւք անհրաման տնէն գուրս ելնելու, կամ փաղոցները չափչիելու իրեն հասակցաց նման։ ամէն կողմ մարդ զրկեցին փնտուելու, բայց ի զուր։ Ակաս օրն երեկոյանալ, և Միսիթար գեռ չէր երեւը. ծնողքն այլայլեցան սաստիկ։ Գիշեր էր՝ երբ տուն հասաւ նա, իրեն ուրիշ մէկ հասակակից ընկերով, յոգնած, անօթի, արիւնլուաց սուներով։ Խնդ տղաք, նգնաւոր ըլլալու մտածութեամբ զնացեր էին քաղաքէն

1. Հողդարի արուարձանին մէջ, Միսիթար Արքանօր տանը մօտ, ժամանակաւ կար եկեղեցի մը յանուն Ա. Գեորգայ, որ հիմակ աւերակ է։ անուարակոյս այդ է յիշուած եկեղեցին։

դուրս քարայրի մը մէջ և մինչեւ երեկոյ ծնրագիր աղօթեր էին, անօթի՝ ծարաւ, սպասելով որ հրեշտակ մը զայ և կերակրէ զիրենք: Հրեշտակը չերեցաւ, և իրենք ստիպուեցան տուն դառնալ: Դեռ ինը տարեկան չկար այն ժամանակ, երբ այս առաջին փորձն ըրաւ ճգնութեան, զոր յետոյ շարունակեց խոհական կերպով մինչեւ ի մահ, վարժեցնելով ինքզինքը սիրով և արիութեամբ տանելու ամէն նեղութիւն և զրկումն: Քաղաքին ամէն կողմը տարածուեցաւ փոքրիկ Մխիթարայ ճգնաւորութեան լուրը, ամէն մարդ անոր շնորհալի կերպերուն վրայ կը խօսէր, և ծնողք իրենց զաւակաց օրինակ կու տային զինքը: Լուց նաև Ա. Նշանի վանքին առաջնորդ Անանիա եպիսկոպոսն և զինքը քովը կանչելով, հազիւ իննամեայ հասակի մէջ, փոքր աստիճանները տուաւ անոր, այն ժամանակաց սովորութեան համեմատ, անտարակոյս նաև կիսասարկաւագութեան աստիճանը, և այնուշետե դպիր<sup>1</sup> կոշուեցաւ նա:

Դեռ տասը տարեկան շեղած Մխիթար, արդէն աւարտեր էր դպրոցական շրջանը, Սաղմոսն և Նարեկը կարդացած էր. վարժապետին պաշարը սպառեր էր. սակայն տղուն հարցասէր և մշտածարաւ միաքը չէր գտած իրեն բաւական յագուրդ: Ծնողքն, ուրիշ բանի կարող չըլլալով, աւելի բարձրագոյն դպրոց չգտնուելուն համար, զրկեցին զինքն երկու սրբառուն կուսանաց մօտ, որոնց բնակութիւնն իրենց տան դիմաց էր: Գիտէին թէ հօն պիտի չի զարդանար ուսմանց և զիտութեանց մէջ, բայց կը յուսային որ գոնէ աստուածպաշտութեան մէջ առաջ պիտի երթար. և յիրաւի Մխիթար հակայաքայլ յառաջադիմեց հօն հոգևորին մէջ: Նոյն կուսանաց տունը կու գար ամէն որ բարեպաշտ քահանայ մը, Տէր Յարութիւն, որ անոնց

1. Դուք կամ ո՞՛չունի՞ն, մեր եկեղեցական նուիրապետութեան մէջ, մերից յառակառէն կը նշանակէ «Ընթերցողութեան» ասաբենեը, երբեմն ալ շնորհարձակ մարտով կը նշանակէ՝ արեկելեան եկեղեցւոյ մէջ փոքր համարուած աստիճանները, ինչպէս կ'ըսէ Մխիթար Ալյոհիվանեցին. «Դոգիր» որ է կեսուարկաւոդ, պրակտրուաց և սովորուաց: Հայոց ինչպէս և Յունաց մէջ՝ կիսասարկաւագութիւնը միշտ փոքր աստիճաններու կարգն եղած է, առանց մշանչնեաւոր ողջախռութեան պարագանեանթիւն զնելու. այն պատճառաւ փոքր հասակի մէջ ալ կու տային դայլ:

իսուսովանահայրն էր, հօգևոր կը թութիւններ կ'ընէր և  
Ո. Գիրքը կարդալով կը մեկնէր։ Մխիթար որ կը տես-  
նէր և կը լսէր այն բաները, իրեն փութաջանութեամբ  
կ'օգտուէր անոնցմէ, և միանդամոյն շարականաց և հո-  
գեոր երգերու եղանակները կը սորվէր նոյն քահանայէն։  
Իրաւ է թէ նա հօգեոր կենաց սերմանկն ընդունեցաւ  
իրեն բարեպաշտ մօրէն, այլ անոնք չանեցան և չի պըտ-  
տարերեցին, բայց եթէ երկու ճգնաւոր եղբարց և կու-  
սանաց խօսքերով և օրինակներով. և որովհետեւ կարելի  
չէ ըմբռնել Մխիթարայ մեծութիւնը, և մանաւանդ անոր  
զործոյն յաջողութիւնն և տեսողութիւնը, առանց եկեղեցա-  
կան ասպարիզին՝ զոր ընդզրկեց նա, և որուն ընտրու-  
թեան մեծապէս նպաստեցին յիշեալ կուսանք իրենց յոր-  
դորներով, կ'արժէ որ ծանօթացնենք հոս համաօտիւ ա-  
նոնց վարքը և զործերը, հետևելով քայլ առ քայլ Մխի-  
թարայ կենաւագրին, չունենալով ուրիշ ազրիւր անոնց մա-  
սին։

Հողդար թաղին կամ արտարձանին մէջ կը բնակէին  
երկու կուսանք կամ քոյրեր, մեծը՝ Մանասէ կը կո-  
չուէր, փաքրը՝ Մարիամ<sup>1</sup>. ասոնց հայրը մեռեր էր, իսկ  
երկու եղբարք՝ լիմ անապատին մէջ կը ձգնէին։ Երկու քոյ-  
րերն իրենց տան մէջ կ'ապրէին առանձնացած՝ այրի մօրեր-  
նուն հետ, ուր ազօթքով, ճգնութեամբք և ձեռագործ աշ-  
խատութեամբ կ'անցունէին որերնին, փափաքելով նմանիլ  
իրենց եղբարց կուսակցոն վիճակին։ Եոյն ժամանակները,  
1680-2 տարիներուն մէջ, երկու ճգնաւոր եղբարք եկան  
ի Աերաստիա, Յովհաննէս և Ալեքսիանոս անուամբ<sup>2</sup>, ո-

1. Վերոյիշեալ Արէի. Համեմատ արքեպիսկոպոս կը գրէ. թէ «Տեղա-  
կան առանձութեամբ մինուկ գիտենց որ երկու կուսանք, որոնք Մխի-  
թարայ Արքայի պատմութեան մէջ կը յիշուին, բրդնիքի Արէհանց  
ընաւոնիքն էին, ճ-ք-ի-տ-ի- ի-ս-ս-ա-ն- կոչուած, Մարգարիտ և Թէհրիզիա»  
Արէհանց գերգուստանը Տիգրիկոյ Բազրուսուն զիւզէն զաղթած է ի  
Բրդնիք։ Անուանց առքիրութիւնն ոյսպէս կընայ մեկնուի, ըստ իս,  
որ իրենց մկրտութեան անուանքն էին Մանասէ և Մարիամ, իսկ երբ  
կուսանթեամբ իրենք զիրենք Աստվածոյ նուիրեցին, կոչուեցան Մար-  
գարիտ և Թէհրիզիա։

2. Ասոնց մենդագոյքն էր Շատին-Գարունիար քաղաքը Փաքր Ա-  
սիս, ընդ մէջ Եղանգիոյ և Կիւմիշիանէին, որ հին ժամանակ Նիւդ-  
ին կը կոչուէր։

բոնք իրենց անուանակից սուրբերուն նմանելով, զարմացուցեր էին Լիմ անսպատի արեղաներն իրենց խփառ հըգնութեամբք Ասոնք, երկար տարիներ անսպատին և քարանձաւներու լուսութեան մէջ առյօնելէն վերջ, կը ստիպուէին յանկարծ թողուլ իրենց սիրելի միայնութիւնը և աշխարհի աղմկալից կենաց մէջ մանել, զիչանելով թախանձանաց իրենց ձերունի մօր, որ մինակ մնացեր էր աշխարհի վրայ, յետին չքաւորութեան մէջ։ Չուզելով իրենց բնիկ քաղաքը դառնալ, Աերաստիա եկան, ուր առանձին տուն մը վարձելով, իրենց ձեռագործ արուեստով կը պարապէին, — կտաւագործք ըլլալով Լիմ անսպատ երթալէն առաջ, — և այնպէս կը հոգային ասօրեայ պէտքերնին։ Անսպատի փոխեցին իրենց բնակած տունը, շարունակելով մի և նոյն ճգնութիւնները, աղօթք և ծոմապահութիւնք։ Ի սկզբան լուսութիւն մը պատեց անոնց շուրջը, ոչ ոք զիտէր թէ ո՛վ էին և ինչու եկած քայլ լոյսը չի ծածկուիր. հակառակ անոնց բոյրո ջանից՝ ամէն կողմ ծաւալեցաւ երկու ճգնաւոր եղբարց սրբութեան համբաւը։ Այնուհետեւ ուխտատեղի մը զարձաւ անոնց տունը, ուր ամէն օր կը խռնէր բազմութիւն մը ցաւագարներու, թըշուառներու, և մանաւանդ բարեպաշտներու, որոնք հոգւոյ կամ մարմայ ցաւերուն զարման գտնելով ետ կը դառնային։ Անոնց օրինակներէն և խօսքերէն ամենէն աւելի շահողքն եղան երկու քոյրերը, Մանասէ և Մարիամ, որոնք լսելով թէ այն երկու ճգնաւորք Լիմ անսպատէն եկած են, զնացին անոնց տունը՝ տեղեկութիւն առնելու իրենց եղբարց մասին։ Այն առթիւ ճգնաւորք խօսեցան կրօնաւորական կենաց գերազանցութեան, անոր հոգեար միիթարութեանց, աշխարհի ունայնութեանց վրայ, և այլն։ Այն խօսքերն անարդիւն չի մնացին. երկնաւոր կրակ մը վառեցին երկու քերց սրտին մէջ, որոնք զգուանք մը ըզգալով աշխարհի բաներէն, և հարթուած տեսնելով առջևնին ամէն զժուարութիւն, կ'ուզէին օր մ'առաջ իրենք զիրենք Աստուծոյ նուիրել կուսութեամբ։ Երէց քոյրն Մանասէ, նշանաւած ըլլալով, մեծազոյն զժուարութիւններ ուներ զիմացը, և կը դեգեէր տակաւին իւր որոշման վրայ։ Վերջապէս բացաւ սիրտը ճգնաւոր եղբարց, որոնք

սրինակներուց և ոռւրր Գրոց խօսքերով ջանացին պարզել անոր տարակոյսները . բայց ի զուր . հրաշքի մը պէտք կար : Ճգնաւոր եղբարցմէ երէցը՝ վասուած լապտեր մ'ու զեց . և նոյն պահուն՝ երր կը յորդորէր զՄանասէ Աստուծոյ վրայ զնել յոյսը և յառաջնել արիութեամբ սրբութեան ճանապարհին մէջ , մատը բոցին վրայ բռնած էր կէս ժամի շափ , ասանց մրատելու մատը կամ ցաւ մը զգալու : Ավչեցան տեսողք , և Մանասէի տարակոյսներն խկայն փարատեցան : Այդ եղած հրաշքին լուրն աւելի ևս անեցուց երթեւելը . ժողովրդեան խանդավառութեան շափ չկար , որուն աչքին հրեշտակէ աւելի բան մը կ'երեային ճգնաւորներն : Խուռան բազմութիւն մը կը լեցուէր միշտ եկեղեցւոյ գումբին մէջ , զիրենք տեսնելու և օրհնութիւննին ընդունելու , երր կ'երթային ժամերգութեան ներկայ ըլլաւու : Ժողովրդեան այդ անկեղծ սէրն և յարգանքը՝ քաղաքին առաջնորդը զայրացուց և նախանձը շարժեց : Այն ժամանակ Աերաստիոյ առաջնորդն էր՝ Մեքիսէթ կամ Մելքիսեդեկի Գ , նշանաւոր իրեն պերձախօսութեամբ , զոր կը զովէ նաև Մխիթարայ կենսազիրը , թէ « Ի նմին ժամանակի առաջնորդ քաղաքին Աերաստիոյ էր՝ զերահամբաւ ճոռամմարան եպիսկոպոս ուն , Մեքիսէթ անուն<sup>1</sup> » : Եա՛ այդ ճգնաւոր եղբարց մէջ՝ կեղծաւորներ և խարեւրաներ միայն տեսնելով , ուզեց վար տապակել զանոնք այն պատուանդանէն ուր բարձրացուցեր էր ժողովրդեան համարումը և սէրը . բայց այնպիսի յանդուզն քայլ մ'առաւ , որ անոնք աւելի բարձրացան , և ինքը կորսնցուց ժողովրդեան առջև իրեն վարիր : Որ մը , երեկոյեան ժամերգութենէն վերջ նստելով բերմին վրայ՝ իրեն մօտ կանչեց երկու եղբարքը և հրամայեց որ ծունդ զնեն առջնը . յեսոյ , մի քանի հին ճգնաւորաց թիւր զնացքը յիշեցնելով , իրրե խարերայ և կեղծաւոր յանդիմանեց զիրենք կծու խօսքերով , և անսրգանօր մերժեց առջնէն : Ճգնաւորք խոնարհութեամբ համբուրեցին առաջնորդին քզանցը

1. Հ. Մատթ . Եղանկ . Վշտ+ Մէկն-ը-ը . Աբբ-ը-ը . գ . թ . 2 : Կը համաձայնի մեր կենսազրին նաև Ա . Եղանի վանքին կհար-ը-ը , թէ « Աերաստիոյ երրորդ Մեքիսիսդեկի արքազիսկոպոսն , ոյք հանձարեղ , ... աշակերտ էր սերտուացի Եղանէս կաթողիկոսին Աբոսյ :


և տեղերնին դնացին։ Երբէք դանգաստ մը չի լոռեցաւ անոնց բերնէն, երբեք չի պակսեցուցին իրենց սէրն և յարգանքը գէպ ի առաջնորդն։ Փողովուրդը հազիւ զատեց զայրոյթը, տեղույն սրբութենէն ակնածելով։ բայց այն օրէն վերջ աւելցնելով իրենց սիրոյ և յարգանաց ցոյցերը առ ձգնաւորս, — որոնց ձշմարիտ առաքինութեան փորձաքար մ'եղաւ այն գէպին, — ուժդին բողոք մը բարձրացուցին առաջնորդին անարժան վարժման գէմ։ Խոկ երկու եղբարք, անընդհատ պահօք և խիստ ձգնութեամբ ճնշելով իրենց մարմինը, յետ տեսնելու ամէն կարեւոր պատրաստութիւն և ընդունելու սուրբ խորհուրդները, երջանիկ և նախանձելի մահուամբ կնփեցին կեանփերնին, 1685 տարւոյն, իրարմէ քանի մ'ամիս տարբերութեամբ։ բազմախուսն ժողովրդեան արտասառք՝ անոնց անկեղծ դամբանականն եղաւ։ Այս նոր կամաւոր աղքատը, Յովհաննէս և Ալեքսիանոս, ուրիշ բան չի թողուցին իրենց ծանօթից՝ բայց առաքինութեան օրինակներ, և ամէն օր հրեշտակային ողջանաւութիւնն ըսելու գեղեցիկ սովորութիւնը, զոր իրենք մտուցեր են առաջին անդամ Աբրաստիոյ մէջ, ինչպէս կը հաստատէ Ալիխթար Արքահօր կենսագիրը՝ Համաթէսո վ. Եւղոկիացի<sup>1</sup>, և անկէ տարածուեր է յետոյ ուրիշ բազաքներու մէջ։

Անոնց պակասն ամենէն աւելի զգացին երկու քոյրերն, որոնք վայրկեան մ' խոկ չգեղեցցան երթալու անոնց հետոց վրայէն, գիտնալով թէ այն էր երկինք երթալու ապահովագոյն ճանապարհը։ Կրտսերը, Մարիամ, շունենալով ո՛ և է կապ կամ արգելք, խոկոյն հանելով վրայէն աշխարհիկ տարազը, և մազեղէն զգեստ մը հազաւ և փակեց զինքը սենեկին առանձնութեան մէջ։ Խոկ երէցը, ինչպէս ըսինք, նշանաւած ըլլալով՝ գժուարութիւններ ունէր զիմացը, և կը վախէր անխօչեմ եռանդեան մը թափով քայլ մ'ընելէն, որ կրնար վեսանել զօրծին։ Ամկայն անոր անզրդուելի կամաց և արիութեան առջև տեղի տուին փեսայացուին ձեռք առած ամէն հնարք, որ մինչև խոկ քազական ատեան զիմեր էր՝ անոր միտքը փոխել տալու

Համար։ Այս յաջողութեան վրայ՝ մայրերնին ալ իրենց ուրինակին հետևելով, տռւներնին կուսաստան մը դարձուցին, և հրաժարելով աշխարհի ամէն գուարձութիւններէն և վայելքներէն, իրենք զիրենք ազօթից, հոգեւոր ընթերցմանց, լուսթեան, ձգնութեան, պահոց և հոկմանց տուին։ Անոնց գուռը փակուած էր մշտապէս ամենուն առջև։ Կը բացուէր միայն երկու հոգւոյ։ մին՝ մեր վերը յիշած տէր Յարութիւն քահանայն էր, տան խոստովանահայրը, և միւսը՝ փաքրիկ աշխայժ տղայ մը, որ իրեն հետ կետնք և զուարթութիւն կը տանէր հոն, ուր ամէն ինչ լուսթիւն և մեռելութիւն կը քարոզէր։ դա՛ Միհիթարն էր, որ կու զար աւետարան կամ ուրիշ հոգեւոր զրքեր կարգալու, այնպիսի վարժութեամբ և ազդու շեշտով մը, որ կրնար շատ վարդապետներու օրինակ մը ըլլալ։


Հոգեւուն կուսանք, — այս անոնց կու տար անոնց ժողովուրդը, — այն օրէն որ կուսութեամբ Աստուծոյ ընծայեցին իրենք զիրենք, երրէք տան սեմէն գուրս չի զրին ստրերնին, բայց միայն եկեղեցի երթալու համար, ուր ամէն կիւրակէ և տան օրերան կ'ընդունէին սուրբ խորհուրդները։ Բայց չի կրցան երկար ժամանակ վայելիլ այն առանձնութիւնը, ժողովրդեան բարեպաշտ մասը, իրեն խանդավառութեան բոպէին, փշեց գաները, ներս խուժեց՝ հանգիսատես ըլլալու անոնց առաքինութեան և ձգնութեանց, օրոնցմով շատերուն սրտերը վառեցին իրենց օրինակին հետևելու։ Կ'երեկ թէ ունէին անոնք երկնաւոր տեսիլներու կամ յայտնութեանց պարզեց, ինչպէս կը վկայեն ժամանակակից և ականատես զրիչք, և կը հաստատեն ժողովրդէն անոնց արուած հոգեւուն մակդիրը և հետևեալ տեսիլները, զորոնք մէջ կը բերենք՝ Միհիթարոյ վարուց պատմութեան հետ կապ ունենալնուն համար։

Կ'աւանդուի թէ զիշեր մը, երր կուսանք կ'ազօթէին ըստ իրենց սովորաթեան, թմրութիւն մը պատելով զիրենք՝ տեսիլ մ՛ունեցան։ Լուսազգեստ մարդ մը երենալով իրենց՝ կ'ըսէ։ և Այսօր Հառվմայ մէջ առ Աստուծած փոխեցաւ մեծ սուրբ մը, ով որ ազօթէ այսօր՝ մեծ շնորհքներ կ'ընդունի ։ Աքթընեալով պատճեր են իրարու տեսածնին, որ ըստ ամենայնի նոյն էր։ բայց շգիտնալով թէ Հոռվմ



Տեսիլ երկու կռւսամաց .

յէջ 48-



ինչ քաղաք է և ուր կը գտնուի, — որովհետեւ այն կողմբը Պետրոս-Պողոս անունը կու տային նոյն քաղաքին, — վաճառականք՝ լսելով տեսլեան պատմութիւնը, պարզեցին անոնց տարակոյսը։ Քանի և ինը տարի վերջ, երբ Մխիթար Արքայ Խոտալիս անցաւ և ստիպուեցաւ Հայով զնալ կարեօր դորձի մը համար, 1748 տարւոյն սկիզբը, յիշելով կուսանաց այդ տեսիլը, որ մանկութեան հասակին մէջ խոր տպաւորութիւն մ'ըրեր էր մաքին վրայ, քննեց և ստուգեց՝ որ ձիչդ այն տարին (1689ին) նոյն օրերուն վախճաներ էր Խննովկենտիս Փել քահանայապետը, որուն սուրբ վարուց և երջանիկ մահուան՝ շատերը կային դեռ ականասենք։

Ուրիշ անգամ մը դարձեալ, երկու կուսանք տեսան զառիվեր ճանապարհ մը, որ ընդարձակ և չքեզ դահլճի մ'առջև կը հանէր. ճանապարհը բոլորովին անցնալի էր, սասնապատ և ձիւնալիք։ Մանուկ մը, ձեռքը մուրճ մ'առած, սառերը կը կոտրէր, և թիով մէկդի կ'ընէր սառը և ձիւնը. մօմեցան տեսնելու թէ ով էր այն փոքրիկ տղայն. առան որ Մխիթարն էր.

— Ի՞նչ կ'ընես, հարցուցին իրեն.

— Արքայութեան ճանապարհը կը մաքրեմ, պատասխանեց, որ ամէն մարդ դիւրաւ կարենայ երթալ.

Արթըննալով կուսանք՝ ուրախացան որ Աստուծ մեծ գործ մը պիտի կատարէր մեր ազգին՝ Մխիթարայ ձեռքով։ Երբ մեծ քոյրը պիտի սկսէր պատմել տեսիլը, կըրտսերը խօսքը կարելով՝ ըստու. Մեր Մանուկին — այն ժամանակ գեռ այդպէս կը կօշուէր — վրայ է խօսքդ, և պատմեց իրեն երեցած տեսիլը, որ յար և նման էր մեծ քրոջ տեսածին։ Երբորդ անգամ մ'ալ տեսան նոյնպէս, որ փառաւոր պարատի մ'առջև կեցած Մխիթար՝ կը խօսէր լուսազգեստ մարդոց հետ, որոնք զորովալիք զգուանոք ընդունելով զինքը, անոյշ իւզերու անօթներ կու տային իրեն։ Աստուծոյ ազգեցութեամբ հասկցան կուսանք, թէ այդ պարատն՝ Եկեղեցին էր, իսկ լուսազգեստ մարդիկ՝ Ս. Հարք և Վարդապետք, որոնք իրենց հոգին և իմաստները կու տային Մխիթարայ, կրօնքն և զիտութիւնը ծաւալելու համար ազգին մէջ։ Կուսանք սաստիկ գաղտնա-

պահ եղան առ Միսիթար այս երկու տեսիլներու մասին . այսափ միայն յայտնելով իրեն՝ որ վարդապետ պիտի ըլլար , և կ'արգելուին շափազանց ձգնութիւններ ընել , առաջութիւնը չի վետանելու համար , այնպիսի մեծ զործերու սահմանուած ըլլալով Ասուածմէ : Բայց անոնք յայտնեցին իրենց տեսիլները բարեպաշտ անձանց , որոնք յետոյ տեսնելով թէ յիրաւի սառազուեցան Միսիթարայ մասին եղած գուշակութիւնք , պատմեցին անոր առաջին աշակերտներուն :

Երկու սրբառուն կուտանք , չնայելով իրենց տկար բնութեան , զրեթէ ինը տարի շարունակ ձնչելով իրենք զիրենք ձգնութեամբք , և արքասիրտ զուարթութեամբ համբերելով ամէն տեսակ հիւանդութեանց և վշտաց , բոլոր տեսողաց զութը և հիացումը կը շարժէին , և այնու դիրին և սիրելի գործեցին ամենուն առաքինութեան ճանապարհը : Կրտսերը , ինչպէս կանխած էր քան երէց քոյրը կրօնաւորական կենաց մէջ , այսպէս ալ կանխեց իրեն ձգնութեանց վարձն ընդունելու , 1692 տարւոյն կնքելով սրբութեամբ իրեն մշտամեռ կեանքը : Մեծահանդէս յուղարկաւորութեամբ և խռովն բազմութեամբ եկեղեցական և աշխարհիկ գասուն , թագեցին մարմինը՝ իրենց հոգեոր գաստիարակաց՝ Յովհաննու և Ալեքսիանսոսի շիրիմներուն մօտ . և ինչպէս վկայեր են շատ ականատեսանձինք , պայծառ լոյս մը փայլեցաւ անոր դերեզմանին վրայ հետևեալ զիշերը : Այն ժամանակ Միսիթար բացակայ էր Սեբաստիայէն , Էջմիածին գնալով Միքայէլ եպիսկոպոսին հետ , ինչպէս պիտի պատմենք յաջորդ զիւոյն մէջ : Մէկ տարի վերջ նոյնպէս սրբութեամբ աւանդեց հոգին երէց քոյրը Մանասէ , յետ բազմաշարչար նահատակութեան , և թաղուեցաւ կրտսեր քրոջ մօտ , նոյնպիսի չքեղ հանդիսով և անթիւ բազմութեամբ ջերմեռանդն յուղարկաւորաց : Վերջնոյս մահուան և թաղման ներկայ գտնուեցաւ նաև Միսիթար :

Թերեւս պիտի դժոնուին ընթերցողացս մէջ ումանք , որոնց մաքին տարօրինակ պիտի երեխ և արդիւնք ծայրայեղ կրօնամոլութեան , ինչ որ պատմեցինք ձգնաւոր եղբարց կամ կուսանաց նկատմամբ , և ինչ որ պիտի պատ-

մենք զեռ Միսիթարայ մասին, որոնք մտածիննին առանձիւ լով, պահագը և ճղնութեամբք կեղեքելով, շարաչար հիւանդաթեանց ենթարկեցին իրենք զիրենք, որով թերեւ կեռնքերնին ալ կարձեցնելու պատճառ եղան. և այդպիսիք պիտի մեղադրեն անշուշտ կրօնքը կամ Եկեղեցին, համարելով թէ անոնք կը պատուիրեն կամ կը պահանջեն մեղմէ այսպիսի շափագանց և խիստ ճղնութիւններ. Բայց կ'անիրաւին և կը սխալին այդպէս կարծողք. կրօնք կամ Եկեղեցին երբէք այդպիսի պարուք կամ պահանջ մը չեն դըներ ոչ միոյն վրայ. Ազատ է ամէն մարդ, երբ մեծ և բարձր զաղափարով մը յափշտակուած, իրեն խանգալուա եւանդեան մէջ, կը թողու սովորական արահետը, կ'ընարե իրեն փշոտն ու առապարը, բարձրաթոփէ կը սուրայ դէպ ի վեր, որով կը կարծէ միայն համնիլ իրեն նոպատակին. Այդպիսին հիացման միայն արժանի է : Վան զամէն բան աւելի կրօնքն է՝ որ խոր սպաւորութիւն մը կ'ընէ մարդուս սրտին վրայ, կորով մը կը զնէ երակաց մէջ, թեւք կու տայ խոյանալու գէպ ի բարձր հորիզոններ, և անոր ազդեցութեան ներքեւ առաթօւր կոխած կեանքը, աշխարհի ոչընչութիւնները, կը ձկոտի յաւերժանալ աշխարհի մը մէջ, որուն մուտքը կը բացուի ներկայիս քայլայումավ. այնուհետեւ անոր աշքին ոչինչ կ'երկեին ձաղկանք ու տանջանք, հիւանդառթիւն և մահ. Ի՞նչ զարմանք, երբ աշխարհի մէջ անգամ կը գտնուին մարդիկ, որոնք իրենց փայփայած զաղափարներէն մղուած, իրաւունք մը կամ հայրենիքը պաշտպանելու համար, բուռն թափով կը նետուին փունգներու մէջ, կը կորանցնեն ազատութիւննին և կեանքերնին՝ սուրերու կամ զղթայից մէջ, չարաչար տանջանաց և տառապանաց կը մատնեն իրենք զիրենք. Աշխարհ իրաւամբ զիւցագանց կարգը կը դասէ այդպիսինները, իսկ կրօնք՝ նահատակ անունը կու տայ իրեններուն. Պիտի մեղադրուիմ զարձեալ շատերէն իրը միամիտ, երբ տեսնեն որ — քննադատութեան լոյսերու զարուն մէջ — առանց կասկած մը կամ տարակոյս մը յայտնելու, առանց քննութեան ենթարկելու, մէջ կը բերեմ տեսիլներու և յայտնութեանց պատմութիւններ. Պէտք են զիտանալ այդպիսիք, թէ անոնք մեզ համար նուիրական աւանդ-

ներ են՝ դորոնք կը յարգենք, և իրաւունք ունին ապրելու մեր մէջ, քանի որ բանաւոր պատճառ մը չկայ զանոնք շընդունելու. ուր թօղունք որ ժողովրդական աւանդութիւնք ես կը հաստատեն զանոնք. և միւս կողմանէ պահանջ մը շունինք ուրիշներէն՝ անպատճառ հաւատալու անոնց, այդպիսի իրաց մէջ վճիռ տալը եկեղեցական բարձրագոյն իշխանութեան միայն պատկանելով: Բայց այս ալ ուելցնենք, թէ յախուռն կերպով, առանց զրական փաստերու հերքելով և է իր կամ գէպք, որ զերբնական բան մ'ունի մէջը, և ընծայել զանոնք իրը արզասիք՝ անիր և անէակ պատճառի մը, որպիսի է բախտն կամ ճակատագիր, զոր հեթանոսք անզամ կոյր կը պատկերէին, — Ժխտել տիեզերաց վարչութեան մէջ այն զերագոյն կարգազրիչ պատճառը, զոր Կախախնամութիւն կը կոչենք, և զոր հեթանոս իմաստառէրք անզամ, Պղատոն, Արիստոտէլ, Կիկերոն, Սենեկա, և այլք կ'ընդունէին, — ոչ միայն բանաւոր պիտի շըլլար, այլ և անորակելի յանդգնութիւն մը:

### ԳԼՈՒԽ Բ.

ճգմութիւնը, կրօմաւորութիւն և սարկաւագութիւն Մխիթարայ. — Ս. Նշանի վամքիմ մէջ ածցուցած կեամքն. — Կ'աշակերտի Միքայէլ հպիսկոպոսիմ. — Դէպ ի Կարին ուղևորութեամ մէջ կրած վշտերն. — Հոմ Յիսուսիմ կրօմաւորէ մը տեղեկութիւն կ'առաջ արևմտեամ քրիստոնէից մասիմ. — Էջմիածին կ'ուղևորի հպիսկոպոսիմ Ռիտ.


**Մ**խիթար, այն ամէն հոգեշահ խօսքերը՝ զորս լսեր էր, և որրութեան օրինակները՝ զորս տեսեր էր երկու ճգնաւոր եղբարց և հոգետես կուսանաց վրայ, կը ջանար ճշդիւ պատկերել իւր անձին վրայ, շուզելով ոչ մէկէն վար մնալ առաքինութեան ճանապարհին մէջ, Զարկ է ըսել, թէ անոր նախնական դաստիարակութեան մէջ գերակշիռ դեր մ'ունեցաւ կրօնական տարրը, որ եթէ մասամբ պարագայից արդինք էր, բայց զլխաւորապէս Մխիթարայ բընաւորութիւնն էր՝ որ սաստիկ միտում մը կը ցուցնէր առ այն. Անոր սրտին առաջին բարախումն եղաւ կրօնաւորական կենաց համար, որուն առաջին պահանջն ըլլալով վարուց սրբութիւն, բոլոր ջանիւք անոր կը ձետէր. Այն փափուկ հասակէն սկսաւ մահացնել բնութեան ախորժակները, զոհել հանգիստը և դիւրութիւնները՝ որոնք կրնար վայելել ընտանեաց զիրկը. Պահոց և ճգնութեանց մէջ շգիտեմ ինչպիսի հաճուք մը կը զգար, ինչպիսի կամաց տոկունութիւն մը, և մինչ աղաք, այն տարիքին, ընդհանրապէս քիչ մը որկրամոլ կ'ըլլան, նա որոշեց միս և զինի շգնել բնաւ բերանը, ինչպէս նաև հրաժարիլ համեղ կերակուրներէ պտուղներէ, և այլն. և իրաք ալ կատարեց. Նա այդ բաներու մէջ միայն չէր զիտեր շափ պահել. և եթէ ինքն իրեն մեար կամ որտին եռանդեան թողուէր.

կրնար չափազանցութեանց երթալ և առօղջութիւնը խանգարել : Բարերախտաբար ունեցաւ լուսաւոր առաջնորդներ, և մանաւանդ բարեպաշտ մայրը, որ չափաւորելով տղուն եռանդը, սորվեցուց խոչեմ և զգուշաւոր ըլլալ ճգնութեանց մէջ : Անդամ մը կարդալով՝ թէ չին ճգնութեանց մին ամբողջ մեծ պահոց ժամանակ բնաւ ջուր չեր խմած, ինքն ալ փորձեց և յաջողեցաւ : Ծնողքէն ծածուկ՝ կարծր այժեայ զգեստներ հազար մերկ մարմարյն վրայ, և յաճախ երկու՝ երեք օր առանց ուտելու և խմելու կ'անցունէր : Օրուան մեծագոյն մասն աղօթից կը պարապէր, զրբերու ծարաւ մը կը զզար՝ և միջոց չունէր զայն յազգեցնելու, այդ էր որ կը տանջէր զինքը : Երբ տասնըշորս տարեկան եղաւ, ամէն կերպ և հնարք գործածեց ծնողքը համազելու, որ թոյլ տան իրեն՝ վանք մտնել և կրօնաւորական պետ առնուլ : Ծնողքն և մանաւանդ հօրեղբարքը թոյլ շի տուին, տարիին փարրկութիւնը պատճառ բերելով, ուստի տարի մ'ալ մնաց տունը, դեռ աւելի փորձ ըլլալու և կոշումը լաւ ճանչնալու համար : Այն մէկ տարին՝ որ տան մէջ անցուց, ստիպեցին զինքը ծնողքն որ գերձակութեան արուեստը սորվի, որ եթէ յանկարծ շի յաջողի կրօնաւորական կոչումը, ձեռքը գործ մ'ունենայ<sup>1</sup> : Նու հնագանդեցաւ, թէ և ապահով էր՝ որ եթէ մէկ մը կրօնաւորական պետն առնուր, մինչեւ զերեզման պիտի շի հանէր վրայէն :

Աերասախայէն իրը տասը վայրկեան հեռու, հիւսիսային կողմը, կը գտնուի Ա. Ելանի վանքը, շինուած մեր արծրունի Աենեքերիմ թաղաւորէն 1024ին ժամանակները, հնութեամբ և յիշատակներով հաշակաւոր, Աերէ զումի յեռնոտն կազմով բարձրաւանդակին վրայ կանգնած, որ իրեն մեծ ու փոքր զմրէ թներով տեսողաց աշքն կը ձգէ : Հաղախով ծեփուած բարաշէն պարիսով մը կը յրջապատէ վանքը, որուն առջև կը տարածուի պողաստու ծառոց ընդ-

1. Միութար Արքահայրը . Միութանութեանս ամենէն աւելի չքաւոր սուպիներուն մէջ, ստիպուելով Հոռոմ երթու, իրեն պատասխան ըդգիւտները ինքն կը կորեր, ինչողևս կը կորդունը իրեն նախակցոց մէջ (Առ Հ. Եղիս գ. 1718 սեպտ. 10):

արձակ պարտէղը<sup>1</sup>, խոկ կանակի կողմը՝ ձեռակերտ անտառ մը ուսենեաց և կազամախի, որուն մօտ կը գտնուի Անապատ վանքը՝ նորոգուած վերջերս, և հայարնակ Գավորս զիւղը: Վանքին արևելեան կողմը կը գտնուին յատակ ջրբերու ինքնարուխ աղբիւրներ, որոնց մէջ նշանաւոր են երկուքն իրենց յատակութեամբ և ջրոյ յորդութեամբ, լուսաղիւրը կոչուած, և առուներ՝ ընդարձակ արտօրէներով իրը կէս ժամ երկայնութեամբ, մինչև Յրդնիքի սահմանը: Վանքն երեք եկեղեցի ունի, որոնցմէ մեծագոյնը կը կոչուի Ա. Նշան, խաչաձև, Վարագայ Ա. Նշան եկեղեցւոյն հարտարապետութեամբ, բայց քան զայն աւելի փոքր: Երկ-



Ա. Նշանի վամբ ի Սեբաստիա.

բորդ եկեղեցին կը կոչուի Ա. Կարապետ, որորցի ձեռք չինուած, գմբեթաւոր: Խոկ երրորդը՝ նոյնպէս գմբեթաւոր, փափրիկ եկեղեցի մէկ խաչաձև, Ա. Առուածածնի նուիրուած: Որուն մէջ թագուած է վանքի արևելաներէն՝ թէողորոս նահատակը, Քրիստոսի 1150 թուականին, հետեւալ ասպանագրավ, և Այս է տապան հանգստեան սըրբոյն Գոհարինեայ որդւոյն՝ թէողորոսի նահատակին»: և այլն: Պետրոս Գետագարձ կաթողիկոսն ալ, որ իրեն աք-

1. Այս պարտիզին անմիջապէս առջեն է Հայության արտօրձանիր, որով Միաբնակու ձեռդակուն առներ շատ ճառ կը դանուէր Ա. Նշան վանքին:

սորական կենաց վերջին հինգ տարիները Ա. Նշանի վանքին մէջ անցուց, նախ զերեզմանատան մէջ թաղուած և յետոյ, ինչպէս կ'աւանդուի, Ա. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ փոխազրուած է մարմինը։ Վանքին մէջ կը զըտնուին ամէն կարեւոր պիտոյից յատկացուած չէնք և սենեակը։ Առաջնորդարանը և միաբաներուն սենեակները զատուած են միւս չէնքերէն։ Ա. Նշանի վանահայր եպիսկոպոսունք՝ միանգամայն Աերաստիա քաղաքին առաջնորդք են։ Վանքին մէջ կեցած կը վայելէ մարդ քաղաքին տեսարանը, կը վայելէ շրջակայիրին կէս վայրենի գեղեցիկութիւնը. ընդարձակ չորիզոն մը, նրարրի դաշտ մը՝ մեզմելեկչներով, հոգիտներ, բլուրներ, լեռներ, մոքի հետիսող տեսարան մը, որուն առջև կը մոռցուին կենաց ցաւերն, և բարձրութեանց հետ կը վերանայ առ Աստուած, — իմաստութեան և սիրոյ աղքիւրը, — սիրո մը՝ որ անոր ծարաւով տանջուած է։

Աստուածոյ այդ ծարաւող հոգին՝ Մխիթարն էր, աշքերը դարձուցած միշտ դէպ ի Ա. Նշան, որուն օրբազան լուսթիւնը, որուն երկնարերձ զմբէթները սաստիկ հրապոյր մոռնեցեր էին անոր վրայ մանկութենէն սկսեալ, և ուր կը յաւսար զանել այն՝ զոր անդուլ երազած էր, — օրրրութեան և գիտութեան լայն ասպարէզ մը։ Հազիւ լրացած ժամազրեալ տարին, խնզրեց մօրէն՝ որ թոյլ տայ իրեն վանք երթալ, ուր վազուց իսկ գնացած պիտի ըլլար, եթէ ծնողաց սէրն և յարզանքը չի զապէր իրեն թոխը։ Բարեպաշտ մայրն, թէ և յօժարեալ էր այնպիսի օրդեկի մը փափաքը կատարելու, բայց որովհետեւ հայրն և հօրեղբարը վաճառականական գործերով ուրիշ տեղ զնացած էին, կ'ուզէր յետաձգել մինչև անոնց դարձը։ Մխիթար ալ, վախերով թէ զուցէ անոնք արգելք ըլլան իրեն դիտաւորութեան, կ'ուզէր օգուտ քաղել անոնց բացակայութենէն. ուստի սաստկացուց թախանձանքը, արտասուք ալ խառնելով հետք, և նոյն իսկ տղայոց սովորական սպառնալիքը, ծածուկ փախչելու տնէն և օտար աշխարհ երթալու, եթէ այս անզամ ալ դէմ կենար փափաքին։ Աերջին հնարքս յաղթեց մօրը դիմազրութեան, որ վերջապէս հաւանեցաւ որդւոյն փափաքին։ Մխիթար վազեց

ուրախութեամբ պատմելու երկու կուսանաց, որոնք դեռ  
ողջ էին, և փութացուցին զինքը օր մ'առաջ վանք երթալ,  
լսած ըլլարով թէ առաջիկայ կիւրտիկէն ձեռնադրութիւն  
պիտի ըլլար. որով կրնար ինքն ալ սարկաւագ ձեռնա-  
դրուիլ, և այնուհետև այլ ևս աշխարհական վիճակ մտնե-  
լու վտանգէն ազատիլ. Շուտով կանչեցին կուսանք պա-  
տանւոյն մայրը և իրենց խոստավանահայրը քահանան, և  
յանձնեցին անոնց՝ օր տանին ներկայացնեն եպիսկոպո-  
սին, օր իրեն կրօնաւորաց մէջ ընդունի զինքը և սարկա-  
ւագ ձեռնադրէ: Փահանայն, պատանւոյն փոքր տարիքին  
նայելով, օր զեռ հազիւ տասնընդինգ տարեկան էր, կը  
զժուարէր կատարել կուսանաց յանձնարարութիւնը, մտա-  
ծելով թէ այն հասակին ինչպէս պիտի յանձն տանուր  
մշտնջենաւոր ողջախոհութեան պարտականութիւնը: Բայց  
երբ կուսանք երաշխաւոր եղան, — որոնք տեղեակ էին  
պատանւոյն հրեշտակային վարուց, և զիտէին թէ Առ-  
տուած ինչ մեծ բանի կը պատրաստէր զինքը, — քահա-  
նան այլ ևս չվարանեցաւ տանելու զՄիմիթար Ա. Նշանի  
վանքը: Այն ժամանակ (1691 տարւոյն) վանքի առաջ-  
նորդն էր Անանիս եպիսկոպոսն, օր վեց տարի առաջ,  
1685ին, տուեր էր անոր փաքր սատիճանները: Առ, թէ և  
մեծագործ և նշանաւոր մէկը չէր, բայց բարի և հան-  
գարտ անձ մ'էր, և այր խոնարհագնաց և տուաքինի վա-  
րուքն, ինչպէս կը լսէ նոյն վանքին պատմութեանց հա-  
ւագողն<sup>1</sup>, օր տեսնելով պատանւոյն շնորհալի և կայտառ  
գէմքը, որուն վրայ կը փայլէին հոգւոյն գեղեցկութիւնն և  
հանձնարը, չսպասեց մօր և քահանային թափանձանաց,  
իսկոյն ընդունեցաւ զինքը, տուաւ կրօնաւորական սքեմ.  
և առաջիկայ կիւրտիկէն սարկաւագ ձեռնադրեց: Այն օր  
անունը փախուելով, Միմիթար կոչուեցաւ:

Այդ օրէն կը սկսի երկել Միմիթար՝ կրօնից ապագայ  
առաքեալն, կը սկսի անոր արկածալից, գործօն և զրական  
կեանքն, որուն մէջ փայլեցաւ մեծ հոգին՝ իրեն առաքի-  
նութեամբք, ազնուական սիրտն՝ իրեն զորովալիր զգա-

1. Յագիստիկ եպիսկոպոս, Առաջ-Ա. Ա. Ելա Հայոց Ալբերտուս: Խը-  
թԱ. թիւ. 12:

ցումերով, բարձր միագը՝ իրեն գեղեցիկ արտադրութեամբք։ Մինչև ցարդ նկատեցինք զինքն ընտանեկան կենաց անձուկ շրջանին մէջ, ուր շունէր բաւական առպարէզ ազատորէն խոյանալու գէսդ ի այն բարձրութիւնքը, որոնց վրայ պիտի գտնէր իրեն փափաքներուն յազուրզը, վանքին մէջ զտառ այդ առագարէզը, կ'աղօթէր՝ որչափ կ'ուզէր, կ'ընթեռնուր՝ որչափ կը ներէր ժամանակն, կը ձգնէր՝ որչափ կը տանէր մարմինը։ Երջանիկ օրեր էին Միսիթարայ համար, երբ զիշերները ցորեկ կ'ընէր, փակուած սենեկին մէջ օրն ի բուն. Ա. Գիրքը դիմացը, կ'ընթեռնուր անյագօրէն, ժամերով անոր իմաստներն որոճալով և զանոնք մարքին մէջ շտեմարանելով։ Գրեթէ մէկ ամսուան մէջ ծայրէ ծայր կարդաց ձեռագիր Արտածաշունչը. այնուհետև կարդն եկաւ Ա. Հարց և Վարդապետաց զրքերուն, Ճառընտիրներուն, Յայսմաւուրներուն. զիրք չի թողուց վանքին խորչերան մէջ, զամկնն ալ լուփեց, սպասեց, ծծեց անոնց հիւթը, զգեցաւ անոնց հոգին, ամփոփեց յիշողութեան մէջ կամ թղթերու վրայ զեղեցիկ իմաստները կամ վկայաւթիւնները, որոնք յետոյ իրեն զօրաւոր զննվեր պիտի ըլլային քարոզներու կամ վիճարանութեանց մէջ, կուսելու ժազովրդեան ախտերուն զէմ, հերքելու թիւր կարծիքները, լուսուորելու մաքերը։ Վանքին մէջ յատակ ժամեր չի կային հոգեսրի կամ ուսման, իւրաքանչիւր արեղայի ձեռքը թողուած էր այն Բայց Միսիթար ունէր իրեն որոշ ժամացուցակը, որուն մէջ առաջին տեղը կը բանէր հոգեսրն. ունէր նաև զրելու ժամերը, որոնց մէջ քարոզներ կը զրէր, որբազան առզեր և ստանաւորներ կը շինէր։ Երբեմն սենեկին մէջ քարոզ առլու վարժութիւն կ'ընէր, զրածները բերանացի արտասանելով, զորոնք սենեկին դռնէն լսելով վանքին արեղայի, կը զարմանային անոր հանձարին և խմաստից վրայ։ Նա չէր հետեւ միւս արեղայից սովորութեան, որոնք սենեկէ սենեակ շրջագայելով կ'անցունէին օրերնին. Միսիթարայ դուռը միշտ զոց էր, թէ իրեն և թէ ուրիշներուն համար։ Միայն եկեղեցին կը տեսնէին զինքը, ուր կ'աղօթէր այն քան պարկիչու և ամփոփ, որ տեսողաց եռանդը կը շարժէր։ Հազիւ երբէք վանքէն դուրս կ'ելլէր, երբ կարեւոր

զործ մը ստիոկէր զինքը քաղաք երթալ։ Այս էր իրեն անցուցած կեանքը վանքին մէջ ամբողջ տարի մը։ Բայց Մխիթար սկսու կամաց կամաց շզդալ ստաջին որերուն քաղցրութիւնը, զեռ բան մը կը պակսէր իրեն, հոն ալ չի դառ այն հոգեսէր և զիտնական անձինքը՝ որոնց պէտք կը դդար, չի կային կրթիչ և հմտական զրգիր՝ որոնք լուսաւոր հօրիզոններ բանային զիմացը։ Հարկ էր թողուլ Ա. Նշանի վանքն ալ և ուրիշ կողմ ուղղել քայլերը։

Երբ այս տագնապներու մէջ կը ծփար Մխիթարաց սիրան, լսեց թէ Պազար անունով զիտնական վարդապետ մ'եկեր էր ի Աերաստիա. խելոյն վազեց անոր մօտ աշակերտելու։ Վարդապետը փորձելով պատանւոյն զրավարժութիւնը, աեսնելով արթուն և շնորհալի կերպը, հաւանեցու խնդրոյն։ Բայց որովհետեւ Պարիս պիտի երթար կարեար զործով, և ի զարձին Կարնեն պիտի անցնէր իրեն վանքը երթալու, Մխիթարայ ձեռքը զիր մը տուաւ որ Կարին երթայ՝ իրեն ծանօթ բարեկառչտ մարդու մը տուն կենաց և սպաէ։ Պատանին, ուրախացած այս անկարծելի յունացութեան վրայ, շուտով ձանապարհի պատրաստութիւն տեսաւ, տուաւ պաշար և զզեսուեղէն, որոնց չետ նաև ազնիւ շապիկ մը սարկաւազի, որուն կուրծքն և թիկունքն սուկեհուու զիստակէ էր, ուրար մը՝ նոյնողէս սոկիուի բանաւած, արծոթապատ սազաւարու մը սարկաւազի, — զորոնք մայրը շինել տուեր էր, — և երաւ ձանապարհ։ Նախ Եւղուկիս զնաց, ուր երկու ամիս սպասելով՝ Կարին զնացաղ կարւան չի դառւ. նոյն ժամանակ հոն կը զտնուէր հօրեղբայրն, որ երբ Աերաստիա պիտի դառնար, չուզելով զինքը հօն մինակ թողուլ, տուն գարձուց զՄխիթար. և այսպէս անյաջող անցաւ տաաջին փորձն։

Նոյն արւոյն մէջ (1691ին) Աերաստիա հասաւ Միքայէլ անունով եպիսկոպոս մը, բնիկ սարսկահայ, Էջմիածնէն նուիրակ զրկուած այն կողմերը։ Աս քան զտաաջինն աւելի հաշակուած էր ժաղովրդեան մէջ իրեն զիտութեամբ և ճզնութեամբք։ Մխիթար երկրորդ փորձաւաւ, վազեց եպիսկոպոսին մօտ, յայտնեց վափաքը, որ սիրով ընդունեցաւ, պատանւոյն վայելուշ կերպարանքէն և արթուն աչքերէն գուշակելով անոր ազնիւ ըը-

նաւորութիւնը և հանձարեղ միտքը . խոստացաւ Եջմիածին  
տանիլ, որ Հօգևոր վարուց և ամէն տեսակ զիսութեանց  
վարժարան է, կ'ըսէր : Երկու ամիս մեալով ի Սեբաստիա,  
ամէն պարագայի մէջ հոգ և զորով ցըցուց իրեն նոր ա-  
շակերտին, մերթ ընդ մերթ Կաթողիկեայ թղթոց կտորներ  
ժեկնելով. մի և նոյն գութը և խնամքը չարունակեց Եւ-  
դոկիոյ մէջ, այնպէս որ Միսիթար գոհ էր իւր վարդապե-  
տէն և ապագայի մասին փարատեր էր մոքէն ո՛ւ և է կա-  
կած : Գեղակամքեր ամսոյն (1691ին), երբ ձիւնը ժամկեր  
էր զաշտերը և լեռները, և սարսառն՝ ցուրտ հով մը կը  
փշէր ձորերուն մէջ, կարաւանը ճանապարհ ինկաւ զէպ ի  
Կարին : Եպիսկոպոսն և Միսիթար միացան կարաւանին,  
որ ստիպուած էր շատ զիշերներ զագար առնուլ գուրսը  
րաց օդին . Միսիթար, գեռ հազիւ 16-17 տարեկան, ա-  
ռաջին անգամ այնպիսի ուղևորութիւն ընելով, սաստիկ  
տանջուեցաւ, մանաւանդ ցրտէն, որմէ պատսպարուելու  
համար բաւական զգեստ և ժամկոյթ առած չէր հետը .  
մէկ սառուեցյ վերաբեր միայն անէր, որուն կէսը ձեան  
վրայ կը տարածէր քնանալու ժամանակ, և միւս կէսը  
վրան կ'առնուր : Եպիսկոպոսը փախուած էր բոլորովին,  
խիստ և անողոք կերպ մ'առած զէպ ի Միսիթար . ոչ  
փոյթն էր, ոչ կը հարցնէր և ոչ ալ քուրձի կտոր մը կու  
տար . պատսպանին՝ բնաւ զանգատ մը շի հանեց բերնէն, և  
Ակառուծավ Միսիթարայ առաղջութիւնը շի վեստուեցաւ :  
Երկու լուսթիւնք, միոյն՝ համբերատար, և միւսոյն՝ ան-  
կարենկիր, իրարու հակապատկերներ էին : Միսիթար իրեն  
յասակ ձի շոնենալով, հետիւոսն կը քալէր այն զառի-  
վեր լերանց կողերուն վրայ, ուր սիսալ քայլ մը կարող էր  
զինքն անդունդներու մէջ զլորել : Կ'ամչնայ մարդ զրելու,  
և սակայն ճշմարիտ է, թէ եպիսկոպոսին հոգածութիւնը  
կը վայելէր աւելի զրաստն քան պատանին : Որ մը, երե-  
կոյշան դէմ, սաստիկ կը ձիւնէր բքախառն . ամայի, ան-  
մարդի տեղ մը հասան, ուր սարսափ կ'աղդէր չորս կողմի  
լուսթիւնը . ճանապարհին մէկ կողմը՝ կը բարձրանար բը-  
լուր մը, և միւս կողմը՝ ձոր մը կար, խոր, զահավէժ .  
կարաւանն առաջ կ'երթար, զիւղ մը պիտի հասնէր նախ  
քան զիշերուան զալլ : Միսիթար, որն ի բուն քալած հե-

տիուն, շարաչար յոզնած էր, հաղիւ կ'առնուր քայլերը, և վերջապէս ուժասովառ գետին ինկաւ։ Աշ ոք կար հոն, Աստուծոյ յանձնեց ինքզինքը։ Քանի մը վայրկենէն տեսաւ որ մարդիկ կու գային իրեն կողմը շտապով։ Երկու այլազդի ջորեպանք էին, որոնք պատանւոյն վրայ դթալով, հեծուցին ջորւոյն վրայ և հասուցին զինքը կարաւանին։ Ասոնք եպիսկոպոսին տուած առաջին դասերն եղան, և Մխիթարայ՝ առաջին աստիճանքն իրեն Գողզոթային։ Կարին հասնելով, քանի մ'օր մնացին հոն։

Այս ժամանակ սկսեր էր արդէն քաղաքին մէջ հալածումը կաթողիկէ Հայոց գէմ, առաջնորդին նախաձեռնութեամբ, որուն վրայ պիտի խօսինք յաջորդ զլխոյն մէջ։ Մխիթար բոլորովին հեռու կեցաւ այն ամէն կրօնական խնդիրներէն, որոնք այնքան ազմուկ և յուզումն կը պատճառէին ազգին մէջ, գեռ լիուլի տեղեկութիւն չունենալով անոնց նկատմամբ, և իրեն ուշը զբաւուած ըլլալով մի միայն հոգեւոր և մտաւոր զարգացման մտածութեամբ։ Կա կոիւներէ կը խորչէր, մանաւանդ կրօնական կոիւներէ, որոնք միշտ վեսասակարք եղած են և երրէր օգուտ մ'ունեցած չեն։ Որ մը տեսաւ որ եկեղեցւոյ զրան մօտ այլեայլ զրքեր կը վաճառուէին։ անոնց մէջ հոգեւոր զրքոյկ մը կար, «Թոկումն քրիստոնէական»։ Հասիներենէ թարգմանուած։ Մխիթար տեսածին պէս՝ զընեց և սկսաւ կարդալ անյագօրէն։ Այն ընթերցումը մոռցնել տուաւ իրեն հանապարհին կրած նեղութիւնները, և ուրիշ նմաններ կրելու փափաքը վառեց սրտին մէջ։ Բայց այդ միակ մխիթարութենէն ևս զրկուեցաւ։ Եպիսկոպոսն տեսնելով այն զիրքը, խլեց պատանւոյն ձեռքէն և իրեն միւս զրեանց հետ պահելով արկեզ մէջ փականաց ներքեւ, — Վարդապետաց միայն կը յարմարին, ըստւ, այսպիսի զրքեր, ոու զնա սալմոնները կարդա, — և Մխիթար կիսէն աւելի բերան զիտէր սազմոսները։ Աշակերտին շափազանց յառաջադիմութիւնը՝ կրնար շուք ձգել վարդապետին վրայ, կամ այնչափ սորվէր՝ որ իրեն պէտք չունենար։ մինչդեռ նա կ'ուզէր տասներկու տարի աշակերտել իրեն և յետոյ վարդապետ ձեռնադրել, ինչպէս պատանւոյն երեսն ի վեր կ'ըսէր։

Միսիթար, որուն քալուածքին, վարմանքին, խօսակցութեան և ձայնին մէջ կը փայլէր չնորհք մը և համեստութիւն մը, ուր որ երթար, որու որ մատենար, անոնց ուրը և հիացումն իրեն կը քաշէր։ Թուի թէ անսովոր բան մ'էր այն ժամանակ արեզայի մը ամէն որ եկեղեցի երթալն և քաղաքին փողոցաց մէջ շերեփին։ Միսիթար, որ սենեկէն դուրս չէր ելլեր և միայն եկեղեցւոյ մէջ կը անենուէր, զարմացուց բոլոր ժաղովուրդը։ Անգամ՝ մը սարկաւագութիւն ըրաւ և աւետարան կարդաց. ձայնը՝ զօրաւոր և խաղան, և երգելու մեծ յարմարութիւն ունենալով, ժաղովուրդն այնչափ զզացուեցաւ անոր աւետարանէն, որ «Ո՞վ է այդ սարկաւագը, ինչ քաղաքէ է»։ Կը հարցնէին իրարու, և չափէ դուրս պատռեցին զինքը՝ որչափ ժամանակ որ կարին մնաց։

Այն ժամանակ Հայերուն մէջ խառնաշփոթ զաղախար մը կը տիրէր արեմուաքի մասին. ազգութիւն և կրօնք շփոթելով իրարու հետ, ֆուանկ անունով կը ճանչնային կը բարապայի բոլոր ժողովուրդները։ Ո՞վ որ Հայուն հաւաքը շէր դաւաներ՝ ֆուանկ էր, և այդ անունէն տարօրինակ խորշում մ'ունէին, որ միշտ ազետալի եղած է ազգերնուուամէն մասամբ։ Ի հարկէ այդ տղիսութեան մէջ էր նաև Միսիթար սարկաւագ։ Գեռ կարնէն ելած շէին, երբ որ մը հայ քահանայի զգեստավ կրօնաւոր մը այցելութեան եկաւ Միքայէլ եպիսկոպոսին, որ տանը շի գտնուելով, կրօնաւորն հարցուց Միսիթարայ՝ թէ ուր զնացեր էր և երբ կրնար զինքը զտնել։ Անոր հնչումէն և շեշտէն հասկցաւ Միսիթար՝ թէ սարազգի քահանայ մ'էր իրեն խօսուկիցը. յարգանքով ներս ընդունեցաւ զինքը, և խնդրելով որ սակաւ մի սպասէ, վասն զի եպիսկոպոսն շուտով պիտի վերապառնար, հարցուց՝ թէ ով էր ինքը, ինչ ազգէ և ուսկից։ Քահանայն, որ յիսուսեան կրօնաւոր մ'էր, պատասխանեց.

— Ես ֆուանկ քահանայ եմ,

— Ի՞նչ ազգ է ֆուանկն, հարցուց Միսիթար, ի՞նչպէս է իրենց քրիստոնէութիւնն, ունին աւետարան և միւս ուուրը Պրքերը, և այլն։

— Այսի, պատասխանեց կրօնաւորը, ձեզի պէս մենք

ալ կը հաւատանք Քրիստոսի, կ'ընդունինք աւետարան և  
Ա. Գիրքը:

Այդ խօսքերը և ուրիշ անդեկութիւնք Եւրոպայի մա-  
սին՝ Մխիթարաց մաքին մէջ նոր լոյս մը ձագեցին. թառ  
սիրաը դէպ ի արևմտաք, ուր Քրիստոսի կրօնքն աւելի  
ազատորէն կը պաշտուէր. կարօտ մը զգաց այն աշխար-  
հին, ուր կարգ և օրէնք կը տիրէին, ուր զիտութիւնք և  
արուեստք կը ծագէին, ուր մարդիկ աւելի երջանիկ կ'ագ-  
րէին: Բայց բնչպէս կտրել այնչափ լեռներ և ծովեր, բնշ-  
պէս յաղթել այնչափ արգելներու:... Այս խորհրդածու-  
թեանց մէջ ընկդմեր էր Մխիթար, երբ հասաւ Միքայէլ  
եպիսկոպոսն: Քանի մ'օրէն թողուցին կարին քաղաքը, և  
ուղևորեցան դէպ ի Խճմիածին, նոյն նեղութիւնները և  
վշտերը կը ելուզ ճանապարհին մէջ՝ ինչ որ առաջ:

## ԳԼՈՒԽ Գ.

Միհթար կը հասմի էջմիածիս — Այս ժամանակի կաթողիկոս Նահապետ. — Սաստիկ աչքի տա մը կ'ունեմայ. — Կ'ելմէ էջմիածնէն և Խորվիրապի վամբը կ'երթայ. — Սնամայ կղզին և վամբը. — Հոմ կ'երկի իրեմ Ս. Աստուածածիմ. — Կը թողու Ընամ և Բասհնոյ վամբը կ'երթայ, ուր եկեղեցւոյ լուսարար և աղայոց զատիքարակ կ'ըլլայ. — Կարմոյ Աւետիք եպիսկոպոսին յարուցած կրօմական շփոթութիւնը. — Միհթար կը սկսի քարոզել իրեմ մշշարիս համոզումներ և պաշտպանել զամոմք. — Կը դառնայ ճայրեմիք:

**Պ**արհան մօտ, հաւանօրէն փետրուար ամսայն մէջ՝ 1692 տարւոյն, Էջմիածին հասան, ուր մեծ պատուով ընդունուեցաւ Միքայէլ եպիսկոպոսն։ Դեռ հազիւ 60 տարի կ'ընէր՝ որ Էջմիածնի վանքը բարեկարգ վիճակ մ'առերէր. անկէ առաջ՝ տարիներով երեսի վրայ թողուած, անրնակ, աւերակաց կոյտ մ'էր, ինչպէս կը նկարագրէ մեզ Առաքէլ պատմիչ<sup>1</sup>, որուն պատճառը կու տայ, « վասն զի կաթողիկոսունքն՝<sup>2</sup> անդ յԷջմիածին ոչ բնակէին, այլ յԵրեան քաղաք... և կամ ի շրջագայութիւնս աշխարհաց<sup>3</sup> ». իսկ այն սակաւաթիւ արեղայք կամ վարդապետ, որոնք հոն կը բնակէին, մշակութեան պարագելով՝ տարւոյն մեծագոյն մասը զիւզորէից մէջ կ'անցունէին։ Էջմիածնի զիմաւոր բարեկարգողն եղաւ Մովսէս Գ. կաթողիկոսն<sup>4</sup>.

1. Առաքէլ. ԽՌ. 252—3:

2. Դառնիթ լէն սկսեալ մինչև Մովսէս Գ. (1586—1629):

3. Առաքէլ. ԽՌ. 254.

4. Առ լուսամիտ մեծ մ'էր, հեռու մոլիկանդութեան, որ Խրիստի կամ Էլուզուայ եպիսկոպոսին՝ նիկողոսյան թորոսեանի խնդրոյն մէջ՝ շատ խոհական ընթացք մը բանեց, ոյնպէս որ մեղադրուեցաւ իսկ ի-

Յաջորդք ևս շարունակեցին նոյն բարեկարգութիւնքը, ո-  
րոնց հետեւող մ'եղաւ այն ժամանակի կաթողիկոսն ալ,  
Նահապետ եղեսացի, ձեռաստեն աշակերտ Եղիազար կա-  
թողիկոսին, որուն յաջորդեց 1691 տարւոյն։ Սա, իւր  
նախորդաց նման, շատ շինութիւններ ըրաւ Եղիածնի և  
ուրիշ վանքերու մէջ։ ասկայն չի կրցաւ առջևն առնուլ  
այնչափ անկարգութեանց, որոնք տիրեր էին վանքերուն  
մէջ։ «Կարգ և կանոն առաջին կաթողիկոսացն քայլրայե-  
ցաւ ի սուրբ աթոռոցն և յամենայն վանորէից՝ վասն  
թոյլ տալոյ նոցա, — կ'ողբայ ժամանակակից և ականատես  
պատմիչը Զաքարիասարկաւագ, — զի ամենայն առաջնորդք  
ըստ կամաց իւրեանց առնելին, և կաթողիկոսացն ոչ ինչ  
լինէր փոյթ. զի ինքեանք, զոր ինչ յիւրեանց աշխարհին  
վարեալ էին, զնոյն և աստ առնելին<sup>1</sup>։» Նոյն պատմիչն  
ուրիշ տեղ մը որոշակի իրեն ժամանակի կաթողիկոսին վրայ  
զարձնելով խօսքը, որ էր վերոյիշեալ Նահապետ եղեսա-  
ցին, յետ զովեստիւք յիշելու, թէ «Կաթողիկոսն Նահապետ  
կայր յիւրում զործու ի սուրբ Եղիածնին, և յաւելոյր շի-  
նուաթիւնս ի սուրբ աթոռոն Եղիածնին և յամենայն վանո-  
րացք»։ կը յաւելու, մեղագրելով անոր խիստ բնաւորու-  
թիւնը, «բայց կարի սաստիկ էր ի վերայ յանցաւորաց,  
և եթէ ոք պակասութիւն ինչ զործէր, կալեալ հրապարա-  
կաւ կախէր և գանալից առնէր, և տուզանէր մարմաւոր  
իշխանութեամբ. հարէր զմօրուն և զանգուր, և արկա-  
նէր ի բանտ և շղթայէր։ Եւ այսպէս ահարկութեամբ  
կայր ի վերայ ամենայն եկեղեցականաց և քահանայից<sup>2</sup>։»

Իմենիւն։ Այդ իներոյն պատմուած յատուկ թուղթեր զբաց ։ իսկուրէ և  
մաղմողական բանիւ ոռ թագուաորն Եհաց (Ալիկիսմոնդ) և ոռ նորին  
իշխանս, և ոռ արքեպիսկոպոսն քաղաքին նուօպայ՝ որ յազդէն վուս-  
կաց. Նու և ոռ Փափի (Ալեքսանդր)։ (Առաքէւ. ԽԸ. 295)։ Իսկ  
Ստեփանոս Անշըքեանի Ժամանակաշրջան Հայք մէջ կը կորցածը  
(1629 տարւոյն). թէ «Լէօպուտեցիք զիսեն ոռ Մովսէս կաթողիկոսն,  
յորդէ և ոչ զմի զատնեն ոգութիւն. զի կաթողիկոսն զոլով ուշա-  
փառ՝ հոճոյ էր նմա զոր արարք արքեպիսկոպոսն» (Ա-ՀՆՀ. Տ-Ե-  
ՇԵ. Հ-Ե. Վենետիկ, 1896. Էջ (58)).

1. Զաքարիասարկաւագ. Պ-Վ-Ն-Բ-Հ-Ն. Հու. Բ. Էջ 107. Եղիածնին.  
1870.

2. Անդ. Էջ 156.

Այս ժամանակս էր որ Միսիթար Խջմիածին հասաւ, ուր գտաւ աւելի կարգապահութիւն քան ուրիշ տեղեր, չնորհիւ խիստ և պահանջող բնաւորութեան կաթողիկոսին, սակայն չի գտաւ իրեն փնտուած հոգեոր կեանքը և ուսումը : Կատարեալ յաւախարութիւն մ'ունեցաւ, երբ տեսաւ թէ հոն աւելի սպասաւոր մ'էր վարդապետին քամ՝ քան աշակերտ մը. չկային հասարակաց գասախօսութիւնք, ուր երթար գտաւ առնուր. փակուած էին առջեր զրադարանք, և նոյն իսկ զուրս կը հանուէր եպիսկոպոսին սենեկէն, երբ նա ուրիշ արեղայի մը Ա. Պօղոսի մի քանի թղթոց մեկնութիւնները կ'ընէր : Եպիսկոպոսին սենեկապանն էր, պատրաստ անոր ամէն ակնարկներուն, և ո՛ և է ակամայ պակասութիւն մ'անգամ կը պատժուէր գաւազանի սաստիկ հարաւածով մը, որուն ցաւն օրերով կը տեէր : Այս տասապանաց վրայ աւելցաւ նաև սաստիկ աշացաւ մը, երկար աքնութեանց պատճառաւ : Այն ժամանակ Խջմիածին սովորութիւն կար, որ կէս զիշերին կ'ելնէին վարդապետը և արեղայի, և յետ ութ կանոն սաղմոններն ըսելու, զիշերային և առաւտեան ժամերգութիւնները կ'ընէին : Միքայէլ եպիսկոպոսն երեկոյնները շատ ուշ կ'երթար քնանալու, որով սախզուած էր Միսիթար ժամերով արթուն մնալ զիմացը . և երբ հազիւ երկու՝ երեք ժամ կը քնանար, կը հնչէր կէս զիշերին զանգակը, կ'ելնէր ինքն ալ ուրիշներուն հետ եկեղեցի երթալու : Յետ ժամերգութիւնն աւարտելուն, վարդապետը և արեղայի քնանալու կ'երթային գարձեալ . իսկ Միսիթար, եպիսկոպոսին ժամայութիւններն ընելու և հրամաններուն պատրաստ ըլլալու համար, արթուն կը մնար մինչև առաւտու : Այս տաժանելի կեանքը տկարացուց զՄիսիթար : Եկեղեցի երթալ, աղօթել, ժառայել, և այլն, ասոնք ժանր չէին Միսիթարայ նման եռանդուն և խոնարհ անձի մը. բայց զետ հազիւ եօթնետասնամեայ, առոյդ հասակի մէջ, ի բնէ արիւնային խառնուածով, պէտք կը զգար քնոյ, որուն նուազութեան պատճառաւ՝ յորդ արիւն իջնելով աշքերուն մէջ, սասափկ ցաւ մը կը տանջէր զինքը և կ'արգելուր կարդալ : Երբեմն ալ, երբ միւս արեղայիք այզի կ'երթային, Միսիթարն ևս հետերնին տանելով, հովերուն դէմ և արե-

ևուն ներքեւ կ'աշխատցնէին զինքը. որով ոչ միայն կը սպասկանար աշքին ցաւն, այլ կուրանալու վտանդ ևս կը սպասնար։ Եպիսկոպոսն այս ամէն բան զիտէր և անհոգ կը կենար. իսկ պատանին լոիկ մեջիկ կը համբերէր, առանց երրէք տրտունջ մը հանելու բերնէն։ Ասոնք բոլոր վին անօդուտ չեղան Մխիթարայ. նա այդ ձանապարհներով փորձ եղաւ կենաց պատահարներուն. դժուարութիւնք ամբացուցին անոր կամաց տոկունութիւնը. զգաց, չոշափեց՝ ազգին ցաւերուն գարման մ'ընելու անհրաժեշտութիւնը, զոր կարող չէին ընել վանքերը. սորվեցաւ ճշմարիտ վարդապետին պաշտօնը և պարաքը՝ թէ խառութեամբ պիտի չի վարուի և պիտի չի ծառայեցնէ աշակերտը, այլ հայրաբար խնամէ՝ ջամբելով առաքինութեան և զիտութեան կաթը։

Բայց անոր սրտին մեծադոյն կոկիծն եղաւ, հոն իրեն հոգին տանջող ծարաւը զովացնելու իր մը չգտնելն, ցաւերուն արգահատող մը չունենալն, անկեղծ բարեկամէ զուրկ ըլլալն, և որ մեծադոյնն է, խղճին վստահելի ուղղիչ մը չունենալն, որով սարսափելի միայնութեան մը մէջ կը զգար ինք զինքը, ուր պիտի հիւծէր և պիտի մեռնէր վերջապէս իրեն հոգեկան կեանկըն։ Այս էր որ կը մղէր զինքը թողուլ օր մ'առաջ Խջմիածին, և փութալ Սեւանայ անապատը, զրեթէ երեք օրուան ձանապարհ հեռու Խջմիածնէն, յուսալով զոնէ զանել հոն հոգւոյն որնունդ և միսիթարութիւն, հոշակուած ըլլալով նոյն վանքին կրօնաւորաց ճղնութեան համբաւն, թողլով ասժամն ուսման և զիտութեան հոգը։


Այն օրերը Խջմիածին ուխտի եկած էր իրեն ծանօթ Սերսոստացի Ստեփանոս անունով մէկը, որ յետոյ մտադիր էր Խորվիրապի վանքը երթալ, անկէց ի Սեան և ուրիշ շրջակայ վանքերը։ Մխիթարայ զործին յաջողութեան համար քան զայս աւելի յարմար տոիթ չէր կրնար ըլլալ. խօսեցաւ հայրենակցին հետ, յայտնեց իրեն վափաքը, ժամադրեցին միասին երթալ։ Բայց ինչպէս աղատի վարդապետին ձեռքէն, որուն եթէ հարցնէր՝ պիտի չի հաւանէր թողուլ զինքը. իսկ եթէ զազառւկ փախչէր, կրնար իմանալ և ետևէն խնդրակներ զրկելով՝ բռնել զին-

քը, որով իրեն բալօր զիտաւորութիւնք ի դերեւ պիտի ել-նէին։ Միսիթարայ՝ ամէն զժուարութեանց բանալին ա-զօթքն էր. անոր մէջ կը գտնելր խորհուրդ, ուժ և լոյս։ Յանկարծ լոյս մը ծագեց մաքին մէջ։ Այն ժամանակ էջ-միաժնի մատակարարն էր Թէսպորս եպիսկոպոս մը, բարի և գաղանապահ անձ մը, անոր յայտնեց՝ Սևանայ անա-պատն երթալու և ճգնաւոր ըլլալու մտածութիւնը, և հաս-կըցուց վտանգը՝ որ կրնար հասնիլ Միքայէլ եպիսկոպոսին ձեռքէն, եթէ իմանար իրեն զիտաւորութիւնը։ Կա զո-վեց պատանւոյն փափաքը, սիրու տուաւ, յարմար միջոց-ները և ժամանակը սորվեցուց, և խոստացաւ հարկ եղած ոգնութիւնն ընել։ Երեկոյէն պատրաստեց ամէն բան. և կէս զիշերին, երբ բոլոր արեղայք և վարդապետք — ո-րոնց հետ նաև Միքայէլ եպիսկոպոսն — եկեղեցի կը զըտ-նուէին, առանց տեսնուելու ելաւ վանքէն, և մօտիկ զիւ-զին մէջ գտնելով իրեն ծանօթ Ստեփանոս ուխտաւորը, որ կը սպասէր իրեն, միասին ուղղուեցան զէպ ի Խորվիրա-պի վանքը։ Առաւօտուն՝ տեսնելով Միքայէլ եպիսկոպոսն որ չերեկիր փոքրաւորը, շատ փնտուեց զինքը, և վերջապէս իմանալով եղածը, փութով ձիւաւոր ինդրակներ զրկեց ե-տեէն՝ բանելու և ետ դարձնելու։ Բայց Աստուած, որ կը հակէր Միսիթարայ քայլերուն վրայ, անոնց միաքը և աշ-քը փակեց, շիմացան բնչ ճանապարհով և ուր զնալին, և յուսահատած ետ դարձան։ Միսիթար երկու ամիս միայն կեցաւ էջմիածին։

Երկու ուղեւորք երթալով հետիւսն, զրեթէ մէկուկէս օրուան մէջ հասան Արտաշատու դղեակը, ուր մինչև այս-օր կը տեսնուի ընդարձակ դաշտի մէջ, փոքրիկ քա-րարըի մը վրայ կանգնած, Ո. Լուսաւորչի խորվիրապ վանքը, որ կը նայի երկու Մասիսներուն, — հայութեան անանց կոթողներուն, — և կատաղի Երասխին՝ որ հս ան-ձած իւր ողբերգակ ալիքներուն վագքը, շուզեր շուտով թողու այդ յիշատակաց վայրերը։ Պարապապատ վանքին տեսքը հեռուէն դղեկի մը գաղափարը կու տայ, Փոքրիկ քարաշէն եկեղեցւոյն կամ մատրան սեղանին ճիշդ ներքե կը գտնուի Վիրապը, զմբեթաւոր ծածքով, նեղ և փոքր գուր մը, ուր իջնելու համար կայ սանդղիկ մը։ Մեր երկու

देवदार वनम्





ուղևորք կատարելով Հռն ուխտերնին, ուղղուեցան նոյն պէս հետիոտն դէպ ի Աւանայ անապատը:

Կանաչ լեռներով և ծիւնապատ սարերով շրջապատուած, ծովէն գրեթէ 1500 մետր բարձրութեան վրայ, դիւթական երևոյթ մը կը կարծես տեսնել, երբ յանկարծ դիմացդ կ'ելնէ ծիծաղկոտ և մութ կապտագոյն լիճ մը, մօտ 75 մզոն շրջապատով, որուն միջէն դուրս կը ցցուի հրաբըլիսային նիւթերէ կազմուած բյրաձե կոյտ մը, ուր կ'երեխն ուե քարերէ շինուած վանք մը և գմբեթաւոր եկեղեցիք: Դա՝ Աւանայ լիճն է իրեն համանուն կղզիով: Այդ բարձրութեանց վրայ կը բնակին մարդիկ, որոնք երկներց համար միայն կ'ապրին, բնութեան ահեղ տեսարաններով յափշտակուած, ուր անսնց՝ Արարչին ուղղուած օրհներգն է միայն որ կը լուսի խոր լուսթեան մէջ, խառնուած ալիքներուն խուլ մոնչիւնին հետ: Հռն ծովը, իրեն յարատե փոփոխութեամբք, աշխարհի յեղյեղուկ տեսիլը կ'ընծայէ՝ զինքը զիտող արեղայից, և կը բարձրացնէ անոնց մաքերը դէպ ի այն կեռանքը՝ որ երբէք շի փոխուիր: Այդ վանքի շինութիւնն եղած է Թ դարուն վերջին քառորդին, 874 տարւոյն, Մաշտոց վարդապետի ձեռքով: Առ, մենասէր անձ մը, զզուած աշխարհէ և կենաց աղմաւկներէն, իւր որտին միակ յարմար տեղ զտաւ այդ բարձր, անմատչելի և ամայի կղզին: Բայց անոր որութեան և զիտութեան համբաւն առաւ ձգեց ետեէն, ոչ միայն բազմութիւն մը միանձնասէր մարդոց, այլ և իշխանագուն անձանց, որոնց թախանձանաց զիջանելով, — զոր և տեսիլ մը կը հաստատէր, — շինեց Աստքելոց և Ա Աստուածածնի եկեղեցիները, և անսնց շորս բոլորը՝ խրցիկներ արեղայից համար: Այս է Աւանայ վանքին կամ անապատին սկզբնաւորութեան պատմութիւնը: Այդ վանքին արեղայից հոչակուած էին իրենց ծոմապահութեամբք, աղօթքներով և ուրիշ ձգնութեամբք, զորս աչօք խակ տեսաւ Միսիթար, և ինքն ալ խառնուեցաւ անոնց մէջ, իրեն եռանդուն աղօթքով և խիստ մահացուցմամբք զարմացնելով այնչափ տարիներու ձգնաւորները: Բայց զիտէր թէ արոնք՝ սրբութեան սանդուխք են միայն, որոնցմէ շատերը կը վերելակեն՝ առանց հասնելու երբէք զագաթը:

Սիրեց նա վանքին դիրքը, միայնութիւնը, ուր ներանձնասէր հոգի մը ոչ միայն կը լսէ Աստուծոյ ձայնը, այլ և կը զգայ անոր ներկայութիւնը. միայնութիւն մը՝ զոր կարող էր ինքն արգասաւոր ընել հոգեւոր և զրաւոր աշխատութեամբք, եթէ չպակսէին միջոցք։ Կապուեցաւ սիրտը վանքի առաջնորդին, որ Միսիթար կը կոչուէր, և վանականաց հետ, որոնք համենալով Միսիթար սարկաւագին առաքինի հոգւոյ և զերազանց մօքի տէր ըլլալը, ամէն ուր և մեծարանք կը ցուցնէին իրեն, և կը յորդորէին զինքքը՝ որ վանքին մէջ մնայ, շուզելով կորանցնել առաքինութեան այնպիսի կենդանի օրինակ մը։ Ու ակայն կրօնաւորական կենաց մասին՝ հոս ալ յուսախար եղաւ։ Դատարկ մը կը զգար հոգւոյն մէջ, զոր մինչեւ այն օր ոչ մէկ բան չէր կրցած լիցնել։ Գիշերուան մէջ խարխափող մ'էր, որուն աւճեւն կը փախչէին իրեն փնտռածները։ Խոր թախծութեան մէջ ընկղմած, ցաւերու բնուին տակ ձնչուած, հեղձամղձուկ, մոռա զիշեր մը եկեղեցին։ Խորանին վրայ պատկեր մը կար Տիրամօր<sup>1</sup>, որուն վրայ կը զարնէր առ-


1. Աւանոյ այս Հյաշագործ Տիրամօր պատկերն այժմ կը գտնուի Եղմածնի թանգարանի։ Մեսրոպի արքեպիսկոպոս Ամբատեանց և Ամեկար եպիսկոպոս Յարիսուուարեանց լուսանկարել տալով ույն պատկերը, որուն առջև կ'աղօթէր Մեսիթար սարկաւագ՝ Աւան գանձուած ժամանակ, զրկեցին մեզ ամենայն ազնուածնեամբ։ Որոնց կը յայտնենք հրապարակա։ Ձեր անեկոց շնորհակալութիւնը։ Մեսրոպի արքեպիսկոպոս դրկած է նաև նոյն պատկերին մասքամասն նկարագիրը առ Գիր։ Հ. Աւանոյ գ. Ալիքան։ Պոր բառացի կը դնենք Հու.

«Նախ» Տիրամօր զիմիմ ծագած մոռիլ կատաւոգյն միակոտր քոյլ՝ ունի տեղ տեղ երկար սև զծեր, որ պէտք է մամորել շալի դեղիմ ծալու ածքը։ Շախի սաստառը ծիրամնեցյն երկի՝ եղերը զծերով։ Պատմուանն վարդագոյն բաց կարմիր՝ ծալքերը կարմիրագոյն զծերով։ Դէմքը մարմնուոցյն սպիտակախառն և վերին սաստիմանի պարկշապագոյն երկի՝ վայել երկմից թագումի Տիրամօր։ Գլխի բակ տուած շրջանակը՝ զեղմախառն սպիտակ։ Աշակորմնամ կուրծքի մօտ մի վորը տեղ այրուած է, ի նարկ կ'առած մնմերից։

Երկրորդ՝ Յիսուս մամուկմ՝ որ 7—8 տարեկամի մասակով երեխ՝ խաչափայտն ի գիրկմ, ունի լայնաթե սպիտակագոյն

Bordello

Blauß grph.





կայծ լապտերի մը գոզդո՞ւն բայսը : Այդ պատկերին առջև գետին ինկաւ Մխիթար, ուիկ, արտասուաթոր աշքով, մերթ ընդ մերթ խոր հառաչ մ'արձակելով, որ կամարներուն բախելով՝ կը փշրէր բիւրեղի նման, և հաղարումէկ արձագանգներով կը ժածանէր օդին մէջ : Բայց որոին ձայնն ելաւ ամովերէն վեր՝ Աչքը յանկարծ վեր գարձուց, մնաց այնպէս երկար՝ աներեւոյթ տեսլեան մը յառած, որուն հետ կը խօսէր, և դէմքին վրայ կը փայլէր մերթ ժողով մը, մերթ զգացում մը՝ որ չի բացարուիր : Ասուածամամյրը, զար մանկութենէն իրրե մայր մը սիրեր էր, երեւնալով իրեն՝ փառաւորեալ կերպարանաց մէջ, ծաղկենկար զգեստուք, երկու կռւսանաց ընկերակցութեամբ, կը հարցնէր թէ ի՞նչ կը խնդրէ : Մխիթար հիացած, յափշտակած, կը մոռնայ ինդրեմքը, չզիտեր ի՞նչ պատասխանել, և վարանած կ'ըսէ . «Այն կ'ուզեմ, Տիրուհի, ի՞նչ որ Դու կ'ուզես» . — «Եղիցի» , կը պատասխանէ Տիրամայրը, և տեսիլը կը վերանայ : Արթընցաւ պատանին բոլորովին

բանկոթ<sup>8</sup> մամուշակագյմ գծերով : Հէմֆը՝ բաց կարմրախառն մարմարոյն : Զեռքին զրկած խոշափայան է ըմկուզի փայտի գոյն՝ խր խառայմերովին : Գլխի բակ տուած շրջանակը զեղնաւոյն՝ հազին նշանակին՝ կապոյտ գծով որոշուած : Զախ ոսի ծնկամ վրայ նանդերօք սյրուած . ի հարկէ ուխտաւորաց վառած մոմերից :

Երրորդ՝ Ցիտուի ոտների ներքու փոռւած եմ 30 արծաթիք և նորա մօտ չարչարանաց գործիքներթ, զոր օր . մուրճ, ազգամ, եղեգմափումչ, խարազամ, գնդարդմ սուրր, սպութզմ բացախի, և այլմ : Աչ կողմից երևիմ մի ծեռքի մատներ սևագյմ՝ դէպ ի չարչարանաց գործիքները մեկմած . խակ օսի կողմոց երկու փոքր քառակուալի տուի ամորոշ (մարտի քունայ) : Պատկերների շրջապատը և վերին մասմ՝ է կապուագյմ կամ երկմագյմ . խակ մերքիմ մասմ՝ Քըլիստով ծմիներից սկսած՝ է մուլտ սպիտակ գոյն » :

Այդ պատկերը 500 տարուան Յութիւն ունի, ըստ վկայութեան Վարչապատ քնակոզ պատկերանուն Առոքէլ Սուպինեանցի : ի՞նչո՞ւ էր որէ Մհարովը արքեզիւերուուն Ամբուանցի : Մեր փորազրէլ տուած Տիրամայն պատկերն էր ներկայացնեն իրեն նորինուկուն վիճուկը, ի՞նչո՞ւ տեսած է Մխիթար Աքրանոյրն :

կերպարանափախ եղած, զօրացած, դուարթացած, յուսաւլից: Չունեցաւ այնուհետև այլ ևս տիբրութեան ամպեր. միշտ պայծառ և հանգարտ էր հոգին, ամենէն աւելի ծանր և վհատեցուցիչ պարագայից մէջ. նա նշմարեց այդ Եղիցիին մէջ — որուն հաւատաց բոլոր հոգւով — իւր ապադայ զործին յազթանակը. մենք ևս նոյն հաւատքն ունինք այդ Եղիցիին վրայ, յարում կը գտնենք ապաստան և քաջալեր՝ մեր գէմ յարձակող փոթորիկներուն մէջ: Միսիթար այնուհետև նոյն չի մնաց, և այն օրէն վերջն է՝ որ ունեցաւ մեծագոյն զժուարութիւնները և առաջնապարզ ճըգնամամերը: Խ՞ոչ էր ուրեմն որ այդ մեծ այլափոխութիւնը բերաւ վրան. բնչակէս բացատրել զայդ: — Այն ժամէն հասկըցաւ նա որ մինակ չէր այդ զործին մէջ. տեսաւ զիմացը զժուած ուզի մը, լուսաւոր, որուն ծայրը պիտի հասնէր յետ երկար և տաժանելի վշտակրութեանց, յետ շատ մը փոթորիկներ անցնելու զլիսուն վրայէն: Այդ դէպքերուն մէջ լոկ բնական դիպուած մը, մարդկային ուժ մը կամ խելք մը, կամ բախտի ու է յաջող պատահար մը տեսնել, զործին խկութիւնը շըմբանել ըսնել է: Միով բանիւ, այդ տեսիլը Միսիթարայ կենաց որոշիչ կէտն եղաւ: Մինչւ այն ժամանակ այցելած տեղեաց մէջ միայն Աւանն եղաւ, որ միշտ անուշ տպաւորութիւն մը թողուց անոր մորին մէջ:

Հազիւ շարաթ մը կամ քիչ մ'ալ աւելի մնալով Աւանայ վանփին մէջ, որուեց զայն ալ թողու և դառնակ Աերաստիա, ուր նոր ուզգութիւն մը պիտի տար զործերուն: Կոյն տարսոյ (1692ի) ասրիլ ամսոյն վերջերը կամ մայրսին սկիզբները, իրեն ուզեկից Ատեփանոսին հետ Երևան քաղաքը զնացին, ուր քանի մ'օր տպասելով, կարին զնացող կարաւանին հետ միացան: Եղանակը մեղմացած, զարունը ծաղկազգեստ պճնած էր հանապարհները. առանց նեղութիւն մը կրելու այս անգամ, մերթ հետիւն և մերթ զրաստով, հասան Բասենոյ Աստածածամօր վանքը<sup>1</sup>, կար-

1. Այս վանքին համար կ'աւանդուի, թէ շինուած ըլլայ Գրիգոր Մազիստրոսէ, որ թագուած է հեղեղեցոյ հախուկոզմեան դրան առջե, քարաշէն տապանի ներքի: Կը պատմուի նոյնուկու, թէ ժամանակ ժամանակ այս վանքին մէջ տպաստաներ են նուն կաթողիկոսունք, փախչելով





Կոմամութիւն Պատկերի Ցիրամօք Սևամայ.

յէջ 72-


նէն միօրեայ ճանապարհ հեռու, Հասան — Գալէի իրի-  
բանի կոչուած լերան արևելեան ստորոտը, զուարձալի  
րլոյ մը վրայ շինուած, որուն դիմացը կը տարածուի  
դալարագեղ դաշտավայր մը, ուր գարձեալ Երասին է որ  
կը կենդանացնէ զայն իրեն մանուածաւալ պայցաներով:  
Երկու ուղևորք գիշերը վանքին մէջ անցուցին: Առաջին  
այցելած տեղերնին եղաւ եկեղեցին, Ա. Աստուածածնի  
նուիրուած, թէ և փոքր, բայց զեղեցիկ և գմբեթայարկ:  
Ժամատան մէջ, ճիշդ զրան դիմաց, Աստուածամօր պատ-  
կեր մը տեսաւ Մխիթար, որ շատ կը նմանէր իրեն երեւ-  
ցած Տիրամօր կերպարանքին. ուրախացած՝ ծունդ զրաւ և  
ազօթեց եռանդագին: Յետոյ զնաց վանքի առաջնորդին՝  
Մելքիսեթ եպիսկոպոսին աջը համրուցելու և յարգանք-  
ներն ընելու, որ տեսնելով պատանոյն համեստ և շնոր-  
հալի վարմունքը, և լսելով անոր հանձարեղ խօսքերը,  
սիրոը կապուեցաւ և յորդորեց որ վանքին մէջ կենայ և  
թեմին տղայոց ուսուցիչ ըլլայ: Մխիթար ևս տեսնելով ե-  
պիսկոպոսին բարեմտութիւնը, և միանդամայն Աստուածա-  
մօր պատկերին սիրոյն համար, յանձն առաւ անոր առա-  
ջարկը: Երկրորդ օրը, ուղեկցին հետ քանի մ'օրուան հա-  
մար քաղաք զնաց զործերը կարգադրելու, ուր ծնողաց ի-  
րեն զրկած զգեստները զտաւ, որոնցմէ պէտք եղածն  
առնըլով, մնացածը վաճառեց և անոնց զրամով իրեն կա-  
րեսոր զրքեր զնեց: Իսկ ուղեկցը Ստեփանոս մեկնեցաւ  
գէպ ի Սերաստիա, որուն նամակ մը յանձնեց ծնողաց  
տանելու համար:


Մխիթար հազիւ թէ ոսքը զրաւ քաղաքին մէջ, տարա-  
ծուեցաւ համբաւն. զեռ ամենուն բերանն էր անոր անունը,  
և կը յիշէին այն աւետարանը՝ որ յուղեր էր բոլոր քա-  
ղաքացւոց սրտերը: Կոյն ժամանակ քաղաքին առաջնորդն  
էր Աւետիք եպիսկոպոս, որ լսած ըլլալով Մխիթարայ  
համբաւը, ամէն հնարք ի զործ զրաւ զինքն որսալու-  
րայց պատանին, որ շատ խստութեր լսեր և միշտ խա-  
րուեր էր, և այնպիսի վարդապետաց փորձը բաւական ա-

թշնամիներէն, որ երկու անդամ կոտարուեր է նաև մեռնի որհնո-  
թիւն:

ուեր էր, բնաւ անեղիք չի տռաւ անոր խոսքերան. առև կայն խոհեմութիւնն համարեցաւ առ ժամն, անոր դայրոյթը չի զրգաելու համար, երկդիմի պատասխանով մը ազատի ձեռքէն: Եռւառվ թողուց քաղաքը և Բատենայ վանքը ապաստանեցաւ, և այլ ես չի դարձաւ կարին: Վանքին առաջնորդն ամենայն վատահութիւնն ցըցուց վրան, իրեն յանձնելով եկեղեցւոյ լուսարարի՝ պաշտօնը և տղայոց դասախրակութիւնը, — երբ նա գեռահասակ պատանի մ'էր, — զորս եռանդեամբ և խնամքով կը կատարէր. աւելցած ժամանակն ալ ազօթից և հոգեօր զրոց ընթերցման կը նուիրէր: Տեսնելով Աւետիք եղիսկոսպոսն թէ Մխիթար չէր երեր, մարդ զրկեց վանքը՝ որ խոստումներով կամ սպանալեաք համոզեն զինքը և կարին քերեն. բայց անյաջող ամէն հնարք, կը մտածէր բռնութեամբ հանել վանքէն և քաղաք տանիի: Ատկայն չի համարձակեցաւ, վանքին առաջնորդը քան զինքն աւելի զօրաւոր ըլլալով, որ կորդուացի էր և շատ կորդուացիներ կը պահէր վանքին մէջ իրեն օգնական. ուստի յուսահատեցաւ, և Մխիթար ազատեցաւ Աւետիքի ձեռքէն, որ ոչ միայն բռան և խիստ մարդ մ'էր, այլ նաև տղէտ կրօնական խնդիրներու և մզկւանդն, որ ապրիներ առաջ, ի Քրիստոս երկու ընութիւն գտաւնողները, և Քաղկեդոնի ժողովն և Անոն Արահանայապետն ընդունողները կը հալածէր շարաշար՝ իրեւ հերետիկոս, կամ տէրութեան ձեռքը կը մտանէր՝ իրեւ խռովիչ և ապստամբ: Տակաւին փոթորիկն անցած չէր, շատերուն հոգիներն յուզուած էին, և փաքրիկ կայծ մը կարող էր նորէն արծարծել հրդեհը: Այդ կրօնական կրիւներուն մէջ կը մտնէր նաև սամիկ ժողովարդը, զըրգուած իրենց առաջնորդներէն, որոնք անձնական շահերէ և վրէժինդրութեան զգացումներէ մզուած՝ քան թէ կրօնական հոգին, անձնեղներու իրաւունքն և արդարութիւնը սունակոխ կը ընէին: Մխիթար, չուզելով խառնել ինքինքը այդ կախներուն մէջ, վանք քաշուած էր, ուր հանգարտ

1. Մէկուն լուսարարի պաշտօն յանձնել՝ կը նշանակէր ամենամեծ վաստակթիւն ունենալ, որովհետեւ լուսարարին ձեռքն էր եկեղեցւոյ բար արժարժեղէն և ուկեղէն սպաներու պանզանութիւնը:





Նուիրակամ պատկեր Տիրամօր .

յէջ 80.

զլիսով կը խօրհրդածէր եղածներուն վրայ, և չէր կրնար զարմանքը բռնել, մասածելով թէ ինչպէս կը հալածէին ի Քիրիոսոս երկու բնութիւն գտաւանողները, քանի որ իրենք ևս կը գտաւանէին զՔիրիոսոս՝ ձշմարիս Աստուած և ձշմարիս մարդ. բան մը՝ որ յիրաւի միշտ զարմանալի եղած է, և որ ուրիշ կերպով չփ բացարաւիր, բայց թիւրիմացութեան կամ տղիտութեան ընծայելով անոր չարտափիթը, ուրիշ մեծագոյն բան մը չըսելու համար: Միիթար համազուած էր բոլոր սրաով և մաքով այդ վարդապետութեան, դոր Հոռոմայ աստուածու բանութեան համալարաններուն կամ Ա. Թուլմայի Ակունացույց զրբերուն մէջ ուսած չէր, այլ մեր բնիկ վանքերուն մէջ, անոնց խօրչերը մոռաւած ձեռագիրներէն, և մեր հարց սկզբնազիր կամ թարգմանած զրբերէն. և այդ համազումը կեանքին հետ չէր փախեր, ինչպէս ցոյց տուած շատ առիթներու մէջ: Կ'ափչէր նա Աւետիքի և անոր համախոնից վրայ, թէ ինչպէս իրենք զիրենք հետեւող և որդի կը կոչէին այն ուռը Հարց, որոնց վարդապետութեանց դէմ կը մաքառէին յայտնապէս: Այս բանը զրբդիմ մ'եղաւ իրեն, զեռ աւելի պրալուելու նոյն խնդիրները, որոնց մասին ազգիս մէջ ստէպ վէճք և հակառակութիւնք կը ծագէին, և հետամուռ էր զանելու այն զրբերը՝ որոնք որոշակի անոնց վրայ կը հառեն: Հայերուն՝ միւս քրիստոնեաններէն կրօնական տարածայնութեան պատմութիւնը կապուած է Քաղկեդոնի ժողովոյն հետ, որու մասին անձիչը և կանխակալոյ կարծիքներ ունեցեր է աղջին զիտնական մասն, և իրեն զրբերով կոյր ատելութիւն մը սնուցեր է ժողովրդեան սրաբին մէջ անոր անուան զէմ: Միիթար ալ կէս մը ի լրայ և կէս մ'ալ զրբերէն զիտէր նոյն ժողովոյն պատմութիւնը, անձիչը և խեղաթիւրուած կերպարանաց մէջ: Որ մը ըսաւ իրեն՝ արեղաններէն մին, թէ լոեր էր ժամանակաւ վարդապետէ մը, որ նոյն վանքին եկեղեցւոյն մեծ Շառընտիրինը: Աւրախացած՝ իսկոյն եկեղեցի վազեց, զտաւ ձառընտիրը, ստուար հատոր մը, մանրազիր, անցուցակ, չուարեցաւ թէ ինչպէս պիտի զանէր յիշեալ ձառը: Երկար չտեեց այդ վարանումը, ինկաւ

Տիրամօր պատկերին առջև, որ հոն մօտ կը գտնուէր, և համառօտ աղօթք մ'ըրաւ. յետոյ բանալով ձառընտիրը, առաջին հանդիսած իջն վրայ տեսաւ զրուած. ո Պատմութիւն ժաղովայն Քաղկեդոնի որ գումարեցաւ հրամանաւ Լեռնի Հռովմայ հայրապետին ընդգէմ Եւտիքեայ և Դէռուկորսի ո, և այյն Կարգաց զայն ուշի ուշով, և պարզուեցաւ իրեն համար այդ մութ կէտը. հանդարս մորով կշռեց, թէ ո՛ր կողման վարդապետութիւնն էր ողջամիտ. հաւաքեց կարեոր տեղեկութիւնները և վկայութիւնները: 'Եա' իւր անձին համար խոր համոզում մը կազմած, ուրիշներն այ համազերու և հակառակորդաց կարծիքները հերքելու փաստերով զինուած, ոկաս այնուհետեւ ամէն տեղ և ամէն առթի մէջ համարձակ քարոզել ճշմարտութիւնը: Պուշացաւ առիթը. Բասինոյ վանքին առաջնորդն հրաման ստացաւ կտթողիկոսէն՝ այցելութեան ելնելու իւր թեմին Աւոմիք<sup>1</sup> և Նարիմ<sup>2</sup> զաւաններուն, 1693 տարւոյն սկիզբները, հաւանորէն փետրուարի կամ մարտ ամսոյն մէջ: Առաջնորդը, բարեսիրտ անձ մը, բայց զուրկ եկեղեցական զիտութենէ և անկարոզ քարոզելու, Տովրիթայ պատմութիւնէն գատ ուրիշ բան չունենալով խօսելու, իրեն օգնական առաւ Մխիթար սարկաւազը, գնահատելով պատանոյն մեծ ձիքերը, որուն կը յանձնէր կարդալ Յայսմաւուրը, աւետարանը և անոր մեկնութիւնը, ինչպէս նաև քարոզներ և ներբողեաններ խօսիլ իւրաքանչիւր տօններուն: Կը խրոնէր ժողովուրդը, երր կը լոէին թէ Մխիթար սարկաւազն քարոզ պիտի խօսէր կամ աւետարանը պիտի մեկնէր: Եատերը, վազուց արդէն եկեղեցւոյ ճանապարհը մոռցած, կը վազէին անոր քարոզներուն, որոնք օծութիւն մ'ունէին, և միւս վարդապետաց քարոզներուն չէին նաւներ: Մխիթարայ անունն երթալով կը սարածուէր, կը մեծնար, անոր չուրջը կը սառւարձար հիացողաց և նախանձուաց թիւր, մինչ առաջնորդն կ'ուրախանար անոր


1. Ալյովէս կը գրուի Աւրեան պատմուշի մօտ, բայց հիմակ Ունէ Կըսուի այդ գտառը, որ կը գտնուի ընդ մէջ կարենյ և Ալյովէսի (Ալյովան. Գուշանիւն, էջ 95):

2. Այդ անունն այլայլութիւն մը կը համարուի չին Կամբրանան առանձ, զոր կը յիշառաւէ նայեալու Վարդան պատմիչ (անդ. էջ 95):

յաջողութեանց վրայ : Շատերն անոր քարոզները լսելով՝ կը փափաքէին զինքն իրենց գարդապետ կամ եպիսկոպոս ունենալ . միայն Մխիթար էր՝ որ զինքն անարժան կը գտնէր այն պատիւներուն, և դեռ կարօտ՝ առաջնորդի և խրատներու, որուն համար կ'ուզէր Բասենոյ վանքն ալ թողուլ և իրեն հայրենիքը վերադառնալ, մանաւանդ որ լսեր էր երկու կուսաններէն միոյն վախճանիլը, և կ'ուզէր զանէ միւս քոյրը տեսնել դեռ չի մեռած : Երբ դեռ վանքին մէջ էր, Բասենոյ մօտիկ զիւզերուն մէջ ժանախա հիւանդութիւնը ճարակեցաւ, որմէ շատերը մեռան, անոնց մէջ նաև նշանաւոր հարուստի մ'որդին, տարեկից Մխիթարայ : Այն ժամանակի սովորութեան համեմատ, մեռնող պատանւոյն զգեստները և ինչ որ ունէր՝ վանքի առաջնորդին տարին . նա ալ բարեմտարար Մխիթարայ առւաւ, որ զգեստի պէտք ունենալով, սկսաւ զործածել զանանք առանց կաոկած մ'անզամ անցնելու մտքէն : Վասնդն անխուսափելի կ'երեկը, մանաւանդ Մխիթարայ նման պատանւոյ մը համար, որ ի ընէ արիստիրոտ ըլլալով՝ կարեսր զգուշութիւններն ի զործ չէր գներ . և սակայն ոչ միայն չհիւանդացաւ, այլ առաջինէն աւելի առողջ և կայտա էր : Կոյնապէս դեռ Բասենոյ վանքին մէջ զտնուած ժամանակ, անոր պարկեշտութեան առաքինութիւնը փորձուեցաւ երկու անհամեստ կանանց ձեռքով . բայց Աստուծով զօրացած առաքինի պատանին . յաղթական զուրս ելաւ այդ վասնգաւոր պատերազմէն : Մխիթարայ կենապղիրը հետեւեալ կերպով կը պատմէ այդ փորձութիւնը . և ի զեղջ միում զաւոտին այնորիկ (Բասենոյ) էր կի՞ն մի այրի, որոյ էր զաւոտ միամօր : Եւ կնոջն տեսեալ զաւո զութիւն, զուշիմութիւն և զվայելազեզութիւն Մխիթարայ, էարկ զաշս իւր ի վերայ նորա . և կամէր հաւանեցանել զնա առնուլ զգուստը իւր ի կնութիւն : Եւ զի առ երեսս ոչ համարձակէր կի՞նն ինքնին յայտնել նմա զայս կամս իւր, առաքեաց զոմանս յիւրաց անտի խօսել ընդ նմաւ իրրել լուաւ զբանս զայս որբասէր պատանին, զայրացաւ և այնշափ խստագոյնս կշտամբեաց զնոսա, մինչ զի յամօթ եղեալ՝ ոչ ևս յաւելին կրկնել զրանս իւրեանց : Առյնապէս և յայրմէ կնոջէ միոյ վատթար բանիւք

փորձեցաւ նա . և շնորհօքն Քրիստոսի յազթեալ նմա՝ ան-  
վտանգ մեաց<sup>1</sup> » : Այս և ուրիշ նման փորձութեանց գէմ,  
որոնք մերթ ընդ մերթ յարձակելով վրան կը նեղէին  
զինքը , չունէր ուրիշ զէնք՝ բայց միայն աղօթքը . չկար  
վանքին մէջ հոգեռոր առաջնորդ մը , փորձ և զիտնական ,  
որուն վասահէր բանալ սիրտը : Վերջապէս ճարահատած  
պատանին՝ վարդապետի մը զիմեց , որ չի կրնալով զա-  
նազանել կամաւորն ակամայէն , աւելի ևս չփոթեց անոր  
արդէն ալէկոծ խիզը , ըսելով թէ մաքով գործուած մեղ-  
քերն չարագոյն են քան զործով եղածները . այս կերպով  
Միսիթար կորանցուց բոլորովին սրտի խաղաղութիւնը : Եա ,  
որ ապագային մէջ խղճերու ուզդիչ մը պիտի ըլլար . հարկ  
էր որ փորձ ըլլար սրտի բոլոր վէրքերուն և տառապանաց ,  
անցնէր հոգեկան ամէն վիճակներէ : Եիթական և բա-  
րոյական վիշաք կամ փորձութիւնք , բաւական է որ մարդ  
չընկնաւի անսոնցմէ , միշտ օգտակարք են հոգւոյն , կը ոըր-  
բեն , կ'ամբացնեն . ինչպէս փոթորկալից հովերն օդը կը  
մաքրեն : Միսիթարայ զգայուն սրտին ոչ նուազ տանձանք  
մ'էր նաև տեսնել , թէ իրեն այնչափ աշխատութիւնք ա-  
շակերտաց վրայ , որոնց դաստիարակ և ուսուցիչ դրուեր  
էր , անպատուղ կը մեային . յետ տարիէ մ'աւելի ամենայն  
խնամքով վարելու նոյն պաշտօնը , տղաքը զգալի յառաջա-  
դիմութիւն մը չըրին՝ ոչ ուսմանց և ոչ առաքինութեան  
մէջ : Հիմը կը պակաէր անոնց , ընտանեկան կրթութենէ  
զուրկ էին , և Միսիթար դեռ չունէր այն փորձը , զոր ժա-  
մանակով պիտի ստանար :

Այս բոլորը նկատելով , որոշեց հայրենիք դառնալ , ուր  
թերեւս Աստուած ուրիշ ճանապարհ մը ցուցնէր իրեն :  
Մեծ ցաւ պատճառեց վանքի առաջնորդին և միաբաննե-  
րուն Միսիթարայ բաժանումը , որոնց համար անդին օգուտ-  
ներ ունէր անոր ներկայութիւնը , և միաքը փոխել տալու  
համար ամէն հնարք ի գործ զրին . բայց ի զուր : Թողուց  
նա Բասենոյ վանքը , Կարին գնաց անձայն և լոիկ , ուր  
Անբաստիա զնացող կարաւանին սպասելով , քանի մ'օր  
իրեն ծանօթ Պօղոս անունով բարեպաշտ և հարուստ մար-



860  
860

75-



դու մը տունը բնակեցաւ։ Աս, ժամանակաւ ուխտի գնացած Հռովմ քաղաքը, զեռ կը յիշէր հիացմամբ հօն տեսած բարեպաշտութիւնը, կրօնից ազատութիւնը, իմաստուն և առաքինի Շարդապետները, եկեղեցական գեղեցիկ հանդէսները, մեծ և փառահեղ եկեղեցիները, վանքերը, զրատունները, և այլն։ Առոնք պատմելով արծարծեց Միսիթարայ հոգին, որ վճռեց հաստատապէս՝ յարմար առթին՝ արևմուտք անցնիլ։ Այն քանի մ'օրը՝ որ հօն մնաց, զիշէր ցորեկ ընթերցմամբ կ'անցունէր, թղթատելով տան մէջ զտնուած բոլոր օդակար և հոգեոր զրքերը, որոնց մէջ կար նաև կդ. Կալանոսի եռահատոր գործը՝ Յաղագս միաբանութեան Հայոց ընդ Հռովմէական եկեղեցոյ, և անոնցմէ քաղեց իրեն կարեւոր վկայութիւնները։ Շարաթ մը յիշոյ, մայիսին վերջերը 1693 տարւոյն, կարաւանը ճանապարհ կ'ելնէր դէպ ի Սեբաստիա. անոր մէջ էր նաև Միսիթար:

## ԳԼՈՒԽ Դ.

Միթմար, Սեբաստիա Յասմելով, Ա. Նշանի վամքը կ'նրմայ. — Ամոր ուսումնասիրութեամ ոմք. — չոմ յանօպատրաստից քարոզ մը կը խօսի միարամմեկում առջև. — Վարդապետք կը փարձիմ դարձեալ իրենց աշակերտութեամ որուալ զիմքը և չեմ յաշողիր. — Աչքիրը, կուրամալու վտամգի մէջ, կը ճիւամդամամ և կը ցաւիմ. — Կ'սզատի աշացաւէմ — Ցովմամ վարդապետի Յետ կ'ուզնորի դէպ ի թերիա:

**Ս**իթմար հասու ի Անրաստիա 1693 տարւոյ յունիս ամսոյն: Անրացատրելի է ծնողաց զգացած ուրախութիւնն, երբ տեսան իրենց գաւակը: Եա, ճշմարիտ վանական մը, կը դերադասէր վանքը՝ քան ծնողաց տունը, հոգւոյն և մտքին լոկ ճարակ վնասուելով, որը հոն միայն կը զտնէր, ուր զԱսուուած աւելի մօտ կը զգար իրեն: Թողուց շուտով ծնողքը, և Ա. Եւանի խցիկներէն միոյն մէջ վակուելով դարձեալ, դուրս հանեց խորչերէն Առառածածաշունչը և ուուրը Հարց զրգերը, որոնք կը զտնուէին հոն բաւական թուով: Ի՞նչպէս երազ կը սահէին ժամերը Մխիթարայ համար, աղօթից կամ ընթերցման զրազած ամբողջ որը, բաց ի կէս ժամէն՝ յետ ճաշուն, յորում սակաւ մի հանգիստ կու տար յոդնած մոքին: Ո՛թշափ ուսանելու բաներ կան Մխիթարայ վարուց մէջ: Անոր անխոնչ ընթերցանութիւնն և ուսումնասիրելու ոճը, որոնց վրայ չեմ ուզեր բոլորովին լուութեամբ անցնիլ, կընան օրինակ մ՛ըլլալ իրեն հասակակից սրատանեաց: Երբ զիրք մը սկսէր կարդալ, ձեռքէ չէր թողուր, մինչեւ որ չաւարտէր ամբողջ և հասու ըլլար անոր բոլոր իմաստներուն. ոհով մը և կարգով մը կը կարդար, ոչ նման իրեն շատ հասակակիցներուն, որոնք զրգերու ստէպ փոփոխութեամբ

կուզեն անցունել իրենց ձանձրոյթը։ Երբ իրթին բառի կամ խմաստի մը հանդիպէր, առանց քննելու չէր անցներ և ոչ ալ երկար ժամանակ կը կենար վրան, այլ առանձին տեսրի մէջ կը նշանակէր, որ յետոյ նոյն գրքին լուսաւոր տեղեաց հետ բաղդատելով հասկնար կամ զիտնական անձանց հարցնելով տեղեկանար։ Անոր ընթերցասիրութեան շափ չկար. ոչ միայն սենեկին մէջ, այլ նաև դուրսը, պարտիզին մէջ, ճանապարհորդելու ժամանակ հետիւն կամ գրասափ վրայ, միշտ ձեռքը զիրք մ'ունէր։ Ոչ մէկ առարկայ կամ զրազումն կարող չէր ցրումն պատճառել անոր կամ ետ կեցնել զինքն ընթերցումն։ Եղան օրեր որ առանց ուտելու անցուց, զրքերու մէջ ընկդմած բոլորովին։ Գեղեցիկ և յարմար օրինակները կամ վկայութիւնները միաքը կը պահէր, մեծ յիշողութեան տէր ըլլալով, կամ առանձին թղթիկներու վրայ կը նշանակէր, որով երբ հարկ ըլլար քարոզ տալ կամ հոգեւոր բանի մը վրայ խօսել, միշտ պատրաստ ունէր կարեւոր նիւթերը։ Յիշողութեան հետ՝ սուր անդրադարձութիւն մ'ալ ունէր, արթուն և ըմբանոլ միաք մը, որ ոչ միայն իրեն զրութեանց՝ այլ և զործերուն մէջ կ'երևի։

Այն ժամանակները Ա. Նշանի վանքն ուխտի եկած էր Գրիգոր անունով վարդապետ մը. սա անգամ մը ձաշէն վերջը եկեղեցի երթալով ազօթելու համար, ուր կը զըտնուէին նաև վանքին միաբանք և Մխիթար սարկաւագ, տեսաւ բեմին վրայ վարդապետական գեղեցիկ զաւազան մը, հրամայեց Մխիթարայ՝ որ իրեն բերէ զայն տեսնելու։ Բերաւ նա, և երբ վարդապետն իրեն զարձուց որ տանի, կատակով ըստւ. «Առ քեզ զաւազան իշխանութեան քարոզելոյ զրանն կենաց », և այլն։ Մխիթար, իրրե սաւոյդ առած այն խօսքը, վարդապետին և բոլոր միաբանից առ չե քարոզ մը խօսեցաւ, պարագային յարմար, որ կէս ժամէն աւելի տեսց։ Հիացան ունկնդիրք և միարերան վճռեցին, թէ Մխիթար արժանի էր զաւազանին. բայց նա իրմէ շատ բարձր տեսնելով այն պատիւը, ետ դարձուց զաւազանը։ Այնուհետեւ վանքին աստուածաբանը դարձաւ Մխիթար, ով որ տարակոյս մ'ունէր՝ իրեն կը զիմէր։ Նոյն օրերը Ա. Նշանի վանքը կը զանուէր ուրիշ զար-

գապետ մ'ալ, Յովսէփ անունով, Հաչակուած իրը տեղեակ իմաստասիրական զիտութեանց։ Սա, միացած վերոյիշեալ Դրիգոր վարդապետին հետ, կը զինէր յաճախ Մխիթարայ հետ այլեայլ կրօնական և աստուածաբանական խնդրոց նկատմամբ։ և ուշիմ պատանին, որ գեռ աշակերտ մ'էր, կը յաղթահարէր և կը զարմացնէր զանոնք իրեն պատասխաններով և զօրաւոր պատճառաբանութեամբ։ Յովսէփ վարդապետ, երբ կը սպառէին փաստերը, մէջ կը բերէր ածանց բառերու աղիւասկ մը, զոր բերան ուսեր էր թութակի նման, և Պորփիրի իմաստասիրական ժառը, սեռերու, տեսակներու, տարրերութեանց, և այլն. և այսպէս՝ պատ ի պատ խնդիրներով կամ խթին բառեր մէջ բերելով կ'ուզէր քողարկել տղիտութիւնը. և չէր դադրեր իրեն որսալէն զպատանին, խոստանալով այն բոլոր զիտութիւնները և աւելին ևս սորվեցնել՝ եթէ իրեն աշակերտէր։ Ասոնց վրայ աւելցաւ երրորդ մ'ալ, Զօլախ վարդապետ, ազէտ մարդ մը, զուրկ ազնուական զզացումներէ և կը թութենէ, միայն կարգէ զուրս ճգնութեամբ, պահօք և ոտնկացութեամբ՝ ճգնաւորի համբաւ ստացած, որ այն ժամանակները Ա. Նշանի վանքն եկաւ։ Երբ Մխիթար Էջմիածին կը գտնուէր, սա ալ այն տեղ էր, որ տեսնելով պատանոյն աչքը արիւնալից, ստանան ապտակ զարկեր է երեսիդ, կ'ըսէր, և անոր համար աչքդ հիւանդացեր է, և կը խոստանար բժշկել, եթէ իրեն աշակերտ ըլլար։ Հիմակ որ Ա. Նշանի վանքն եկաւ և Մխիթարայ համբաւն աւելի մեծ ցած գտաւ, դարձեալ փորձեց որսալ զինքը. բայց ի դուր։ Ասոնցմէ առաջ, երբ գեռ Բասենոյ վանքն էր, ուրիշ անդամ յիշուած Պազար եպիսկոպոսն, որուն Մխիթար չի կրցաւ աշակերտիլ, կարնէն անցնելով և լսելով թէնա Բասենոյ վանքը կը գտնուէր, ուզեց դարձեալ մեծամեծ խոստումներով և նոյն իսկ անձամբ վանք երթալով իրեն աշակերտել զինքը։ Պատանին քայլ մ'իսկ տեղի շտուաւ եպիսկոպոսին խոստումներուն և թախանձանաց առջեւ։ Կտրուկ և վճռական եղաւ իրեն ոչը, որուն վրայ յուստահատ ետ դարձաւ եպիսկոպոսն։ Այդ ոչն եղաւ՝ որ ազատեց Մխիթարայ կեանքը մեծ փորձանքէ մը, որ կրնար հանդիպիլ. որովհետև Պազար եպիսկոպոսն Էջմիածին եր-

թալու ժամանակ՝ Պարսից դեսպանին խմբին հետ էր, որ Պոլսէն ի Շուստէր (Հին Շօլ քաղաքը) կ'երթար, սահմանագլուխին մօտ, պարսիկ և սամանցի զինուորաց մէջ ընդհարում մը պատահելով, կռուին մէջ եպիսկոպոսն առ վիրաւորուեցաւ, և կիսամեռ, արիւնուայ, հազիւ Եշմիածին տարուեցաւ, իսկ անոր ուղեկիցներէն շատերը սովանուեցան։ Ո՞ զիսէ ինչ պիտի հանդիպէր նաև Մխիթարայ զլխուն, եթէ անոր ուղեկիցներուն մէջ գտնուէր։

Աերտատիւ հաօնելէն հազիւ չորս ամիս անցած, հոկտեմբեր ամսոյն (1693ին), յորդ արիւն իշնելով աշքերուն մէջ, բոլորովին կուրանալու վտանգի մէջ ինկաւ, անտանելի ցաւերով, այնպէս որ ստիպուած էր միշտ զոց պահէլ զանոնք։ Վանքին մէջ իրեն ցաւերուն դարման մը շիզունելով, ձնողաց տունը զնաց, Բայց ի՞նչ կրնային ընել ձնողք. քաղաքին մէջ չկային աշարոյժներ, ուստի այն կ'ընէին ինչ որ կ'ազգէր իրենց ձնողական զութը կամ կը լսէին ժանօթներէն. և այսպէս, յաճախ իրարու հակառակ և վնասակար զեղեր ընելով, ցաւերն աւելի կը սաստկանային, և արիւնն փոխանակ նուազելու՝ աւելի յորդութեամբ կ'ինէր աշքին մէջ։ Ոմանք խորհուրդ կու տային այն ցուրտ եղանակին, նոյեմբեր և գեկտեմբեր ամիսներուն, պազ ջրերով բաղանիք ընել. այլք՝ զլխէն արիւն առնուլ, և ուրիշ նման զեղեր։ Մխիթար հանուլի համակամութեամբ մը կ'ընէր այդ բոլորը, առանց արտընջելու բնաւ կամ ճիկ մը հանելու՝ համբերելով այն զառն ցաւերուն, որոնք երթալով այնչափ սաստկացան, որ կը կարծէր թէ սուր սլաքներ կը միւնին աշքին մէջ, և որ աւելի սարսափելին էր՝ կուրութեան վասնդ կը սովառնար իրեն։ Անզամմ մը, երկայն զիշեր մ'անցուց, անքուն, ցաւերով տանջուած, ազօթքով և հոգեկոր երգերով միայն սակաւ մի մեղմելով զանոնք, և անձկազին սովասելով առաւօտուն։ Բայց առաւօտը շի հասաւ իրեն, զիշերը շէր չեռանար իրմէ. աշքն բոլորովին խաւարած էր։ Աչ աշքին մէջ սև ջուր մ'իջնելով յորդութեամբ, բոլոր բիրը ծածկեր էր. իսկ ձախ աշքին մէջ՝ սոսնաձև բիծ մը զոյանալով լուսոյն վրայ, կը խափանէր տեսութիւնը։ Անբացատրելի է ձնողաց և ժանօթից զգացած ցաւը, երբ կը տեսնէին

ծաղիկ հասակին մէջ զրեթէ բոլորովին կուրացած այն ազնիւ պատանին, որ այնքան պայծառ և խոստմալից առաւօտ մ'ունեցեր էր: Իսկ ինքը Մխիթար, Աստուծոյ վրայ դրած յոյսը, ցաւերուն մէջ արիասիրտ և հանգարտ, այնչափ միայն լոյս կը խնդրէր՝ որ կարենար առանց ուրիշին կարօտելու, գաւազանով կամ առանց գաւազանի, քալել և եկեղեցի երթալ: Բոլոր նոյն ձմեռն անընդհատ զիշերներու շարք մ'եղաւ իրեն, առն մէջ փակուած, միայն աղօթքով և հոգեոր մտածութեամբք մխիթարելով ինքզինքը, ցաւերն երգերով մեղմացնելով, և մերթ Շնորհաւոյ Յիսուս որդին արտասանելով, զոր կիսէն աւելի բերան գիտէր, կը կոտրէր ժամանակին միօրինակութիւնը: Որչափ կը շինուէին և կը զարմանային այցելուք, երբ զինքը համակամեալ և զրեթէ զոհ կը տեսնէին իրեն վիճակէն, որուն աղամանգեայ սրտէն բան մ'առած ետ կը գառնային: Այն ախուր՝ ցաւալից օրերուն, իրեն մխիթարութիւններէն մին էր յիշել Աստուածամայրը, որուն սիրով կը զորովէր: Այդ ցաւազին, լուսոյ կարօտող հոգւոյն թախծութեամբ համակուած շեշտը կը զզանք մինչև հիմակ այն ստանաւոր երգերուն մէջ, զորս յօրինեց այդ շրջանին, և որոնց վրայ վերջը պիտի խօսիմ առանձին: Խնչողէս կը զուարթանար, երբ քիչ մը տաք հով շնչելուն՝ գուրս կը հանէին զինքը՝ և մաքուր ող կը ծծէր, կամ ծանօթ և հոգեսէր անձանց ստունը կը տանէին, ուր հոգեոր զրոյցներով կը մխիթարուէր: Այս եղաւ անոր կեանքը ձմեռուան վեց ամիսներուն մէջ: Հասաւ վերջապէս զարունը, բերելով ամենուն կեանք և զուարթութիւն, և Մխիթարայ աշքերուն՝ լոյս: Քաջ աշարոյժ մ'եկաւ Աերաստիա այն ժամանակները, որ աշքի արիւնը մաքրելու զօրաւոր դեղ մ'ունէր, որուն զործածութեան կերպը զաղտնիք մ'էր, իրեն վերապահած: Աշարոյժը, հիւանդու մարդ մը, տունէ տուն շրջելու անկարող, հարկ երիրեն երթալ՝ ո՛վ որ կուզէր բժշկուիլ: Մխիթար յանձն առաւ բժշկին տունը երթալ, ուր քառասուն օր շարունակարար այն դեղը գնելով աշքերուն, վերջապէս մաքրուեցան անոնք, արեան յօրդութիւնը դադրեցաւ և ցաւերը մեղմացան: Թէպէտ բոլորովին շանհետացան ուն ջուրն և ու-

պնաձեւ բիծն, բայց այնչափ կը տեսնէր՝ որ քալելու համար այլ ևս կարուտ չէր մարդու և գաւաղանի։ Ի՞նչ ուրախութիւն Միիթարայ և ծնողաց. ինչպիսի զորովոյ և շնորհակալութեան աղջմքներ մասուցին Աստուծոյ և Ո. Կուսինի։ Նա իւր կեանքն արդէն Աստուծոյ նուիրած, կրկին նուիրեց զայն եռանդագին. վանք վազեց գարձեալ, ընդգրկեց իրեն սիրած առանձնութիւնը, զրգերը և խոկումները։ Սակաւ ժամանակէն բոլորովին առողջացաւ ձախաշքն, և կրնար անով համարձակ տեսնել և կարդալ. բայց աջն դեռ յատակ չէր տեսներ, ոև ջուրը կ'արգելուր զայն, և կատարեալ կերպով բուժելու համար՝ խորհուրդ տուին խարան բանալ արտեանաց վրայ, որ ոչ միայն օդուտ չըրաւ, այլ և ջղերուն գալարումն պատճառեց, որով արտեանունքն ոէպ ի վեր պրկեցան և կերպարանքը կարգէ դուրս տգեղացաւ. յետոյ խարանն առողջանալով, աշքն ալ բժշկուեցաւ բոլորովին և զիմաց ագեղութիւնը փարատեցաւ։ Այնուհետև ագատ ամէն հոգերէ, համարձակ կը քարօղէր վանքին և քաղաքին մէջ ճշմարտութիւնը և ուղիղ հաւատքը, և ոչ մէկ վարդապետ կամ արեղայ սիրտ չէր ըներ իրեն հետ վիճարանել կրօնական խնդրոց նկատմամբ, տեսած ըլլալով թէ ինչպէս զօրաւոր փաստերով ըմբերաներ էր իրենցմէ աւելի զիտունները։ Կային շատերը, մանաւանդ բարեպաշտ աշխարհիկ մարդոցմէ. որոնք վախնալով ծածուկ կը պահէին իրենց կրօնական համոզումները. Միիթար անոնց պաշտպանն էր։

Այս անզամ քիչ ժամանակ մեաց Ա. Նշանի վանքին մէջ. որովհետև կեսարացի փառասէր վարդապետ մը, Աահակ<sup>1</sup> անունով, ժողովարութեան համար եկած Աերաստիա, համոզիչ լեզուով մը քաղաքացւոց սիրտը շահելով, բռնութեամբ մերժեց նախկին առաջնորդը, Անանիա եպիսկոպոսը, որ խօնարհ և բարեսիրտ անձ մ'էր, և ինքն անոր տեղ անցաւ, հակառակ կտմաց Ա. Նշանի միարան-

1. Այս շատ կոնցակի Ա. Նշանի վանքին, մինչ մեր ժամանեակազիքն իշրջել կը կոչէ զվարդապետը։ Ժամանեակին նկատմամբ ալ տարբերութիւն մը կայ. Լանտակը կը զնէ այդ շնորհը եղած (1692ին վերջին)։ իսկ մեր ժամանակագիրը կը զնէ 1694ին սկիզբները (Հ. Մատթեոսի. Վշտ. Միիթարաց. թ. - թ. 1)։

ներուն։ Այսու շփոթութիւն մը տիրեց վանքին մէջ, ամէն բան վերիվայր եղաւ և ո՛յլ ևս աղօթից և ուսման պարապելու ժամանակ չմնաց։ Զայս տեսնելով Մխիթար, վճռեց վերջնապէս գործազրել արևմուտք անցնելու մտածութիւնը։ Տարիքն առաջ զնացեր էր, զրեթէ իննեւտանամեայ, ամենայն արգելք և զժուարութիւնք հարթուեր էին, նկարուեցաւ գարձեալ մոռփին մէջ Հռովմ քաղաքը, որ զիշեր՝ ցորեկ միակ առարկան էր իրեն երազներուն։ Երր այս մտածութեան մէջ էր, Ա. Նշանի վանքն եկաւ իրրե հիւր՝ Յովնան անունով եւզոկիացի նորընծայ վարդապետ մը, քսան ևլից տարեկան, բարեմիս և հեզահամբոյր բնաւորութեամբ, աշակերտած կայժակ կոչուած Գալուստ<sup>1</sup> եպիսկոպոսին։ Գիշեր մը վանքին մէջ բնակեցաւ, ուր կը զըսնուէր նաև Մխիթար։ Երկուքին օրտերը կապուեցան միասին, առանց զիրար ճանչնալու նախնարար։ Մխիթարայ քանի մը խօսքը բաւական եղան վարդապետին հասկնալու համար, թէ ինչ ուշիմ միտք, ազնուական սիրտ և մաքուր վարք ունէր նա, և կրնար իրեն ընկեր և օգնական ըլլալ։ յորդորեց զինքն որ միասին Երուսաղէմ երթան, իրենց ուսումը և եկեղեցական ասպարէզը կատարելազործելու համար։ Մխիթար չմերժեց անոր առաջարկը, — առանց ամենեւին հեռանալու Հռովմ երթալու մտքէն, — և յանձն առաւ ուզեկցիլ գոնէ մինչև ի Յերիա, յուսալով ճանապարհին մէջ համոզել զվարդապետը, և փոխանակ Երուսաղեմի՝ Հռովմ ուզզել իրենց ընթացքը, ուր միաբան ուսանելով եկեղեցական զիտութիւնները, որոնց ժարաւը կը զգային երկուքն ալ, դառնան հայրենիք՝ ազգը լուսաւորելու։

Մարտին սկիզբները, 1695 տարւոյն, Աերաստիայէն Բերիա զնացող կարաւանը ճանապարհ ելաւ, ուղեւորաց թուոյն մէջ կային նաև մեր ժանոթ վարդապետն և Մխիթար սարկաւազը, որոնք կը խօսէին և կը վիճէին նոյն ժամանակներու մէջ ազգը յուզող կրոնական խնդիրներուն

1. Առ. 1689 - 1701 տարիներուն մէջ, Մինաս Ամենցոյն հետ Երուսաղեմոյ պատրիարքութիւն ըրու քիչ ժամանեալ. և յետոյ, 1703ին, Պուտոյ պատրիարք եղաւ առաջ։

վրայ : Խօսողն էր Միսիթար, և վարդապետը մտիկ կ'ընէր : Զիւնապատ սարեր, սաստկալիք զետեր, ձորեր և դաշտեր, որոնց մոտէն կամ միջէն կ'անցնէին, չի կրցան այն երկուքին ուշադրութիւնը զրաւել և խօսքին թելը կտրել : Պարզ և լուսաւոր խօսքերով կը բացատրէր նա՝ Հայոց մէջ ֆունիկ կոչուած կամ կարողիկ մասին դաւանութեան ուզիգ և ճշմարիտ լինելը, զոր և կը հաստատէր Աւետարանին և սուրբ Հարց և մեր հին վարդապետաց վկայութեամբք, զուրս հանելով գանոնք յիշողութեան էներէն : Յովնան վարդապետի նման ուսեալ և լուսամիտ անձ մը, որ կուրօրէն կապուած չէր իրեն համոզումներուն, տեղի տուաւ Միսիթարայ զօրաւոր պատճառաբանութեանց առջեւ, և յօժարութեամբ ընդզրկեց անոր վարդապետածները : Հյիշեց այնուհետև Երուսալէմ երթալու միաքը, և Հռովմէ երթալու ծրագիրը շինեցին միարան : Ճանապարհի կիսուն, դեռ շհասած Մալաթիա քաղաքը, հանդիպեցան մեծ և սրբնթաց զետի մը, նախկին Մելասը՝ որ այժմ Գարասու կը կոչուի, և գարնան եղանակին սովորականէն աւելի յորդացած կը վագէր ուժգնօրէն . կամուրջ չի գտնուելով, հարկ էր զրաստով կամ լողալով անցնիլ, մեծ նեղութեամբ և նոյն իսկ կենաց փունդով : Հոս ևս փայլեցաւ Միսիթարայ անձնանուիրութիւնը, զոր ամէն առթի մէջ ցուցեր էր : Իրեն զօրաւոր զրաստը Յովնան վարդապետին տուաւ, որով նա յաջողութեամբ անցաւ զետին միւս կողմը . իսկ ինքն անոր տկար զրաստն առաւ, որ զետին սաստիկ հոսանքին շդիմանալով, դեռ մէջտեղ շհասած, վարդորեց զՄիսիթար, որ լողալով կրցաւ ետ դառնալ և ցամաք ելլալ : Ճանապարհորդներէն մին, զօրաւոր ձիու վրայ նստած, անվտանգ զետին միւս ափը անցուց զինքը, որ թէ և կեանքն ազատեց, բայց կեանքն ոչ նուազ թանկագին բան մը կորսնցաց, իրեն զրուածներուն ծրարը, արդիւնք այնքան տարիներու և երկար տքնութեանց : Երեք ժամ զրեթէ, մինչև Մալաթիա քաղաքը, ստիպուեցաւ այն թաց զգեսաները վրան կրել, զանոնք փոխելու դիւրութիւն չունենալով : Մալաթիայէն շարունակեցին ճանապարհնին զրեթէ առանց կենալու, և հասան ի Բերիա մարտին վերջերը :


## ԳԼՈՒԽ Ե.

Միմիթար թերիա կը ճասնի, ուր յիսուսնամ չ. Անտոն կրօնաւորին մետ կը ծաթօթանայ. — Նա խորհուրդ կու տայ Միմիթարայ՝ չերթալ արևմուտք. — Վկայազիրմեր կ'առան ամորժէ և Աղեքսամղրիադ (Խորէմտէրում) կ'հրթայ՝ նաւելու դէպ ի չոռվմ. — Նոյն նաւում մէջ կը մոտէ Սրբայ կաթողիկոսն ալ իսուսիա հրթալու ճամանք. — Նաւը կը ճանդիպի կփառոս կզգիմ. — Ճոն կը միւանդանայ Միմիթար. — Նաւ կը մոտէ Խոստիա հրթալու, բայց կը ստիպուի ճաւէմ կիսպրոս զառնալ. — Կզգույն մէջ կրած սաստիկ միւանդութիւնն և վշտերը:

**Բ**երիա քաղաքը կը գտնուի ընդ մէջ Անտիռքայ և Եփրատ գետին, ճիշդ կէս ճանապարհին վրայ: Հին ժամանակները Յոյնք Քաղիքուն կամ Քայիշրու (Խձսչօչ) կը կոչէին, որ միջակ կարեւորութիւն մ'ունէր. բայց Այսրացւոց և Օսմանցւոց տիրապետութենէն վերջ, Հայէս առնուան ներքեւ, ինչպէս մինչեւ ցարդ կը կոչուի, հիւսիսային Սիւրբոյ կամ Ասորոց ամենաճնխ և ճարտարուեստ քաղաքը դարձաւ: Կեղրոն մ'էր արեւելքի և արեւմուտքի տոեարտկան առնչութեանց և ճանապարհորդութեանց, և նոյն իսկ քաղաքական տեսակետով մեծ կարեւորութիւն ունէր: Բազմաթիւ Եւրոպացիք կը բնակէին հոն, և այն պատճառաւ շատ լատին կրօնաւորք և քահանայք կը զըտնուէին, որոնք կրօնից հետ՝ Եւրոպական քաղաքակրթութիւնն ալ կը տարածէին այն կողմերը:

Միմիթար և Յովեան վարզապետ Բերիա հասնելով, Հայոց եկեղեցւոյն խուցերուն մէջ իջևանեցան: Յաձախ լատին կրօնաւորաց այցելութեան կ'երթային, մանաւանդ Յիսուսեանց, որոնք շատ ազգեցիկ դիրք մ'ունէին քաղաքին մէջ, չնորհիւ հովանաւորութեան դաղղիական պետութեան: Ասոնց մէջ նշանաւոր էր առաքինութեամբ և առ-

• 471mz — mblu





տուածարանական հմտութեամբ Հ. Անտոն Բայողիկ, որ շատ տարի քարոզութիւն ընելով Հնդկաստանի մէջ, փորձ էր արեւելեաց բնաւորութեան և տեղեակ տաճկերէն լեզուի: Երկուքն ալ, թէ Յովիան վարդսապես և թէ Միսիթար սարկաւագ, մտերմանապավ յիշեալ յիսուսեան կրօնաւորին, խոստովանեցան և կաթողիկէ հաւատոյ դաւանութիւն տուին անոր առջեւ:

Իւր արտաքին գործունէութիւնը՝ արդելք չեղաւ Միսիթարայ՝ իր ամբողջ էութեամբ կեղրոնանապու ներքին և հոգեոր մտածութեանց մէջ, կոյք՝ աշխարհի, խուլ՝ իր խոստումներուն: Իր գաղտնի մահացուցմանց թիւն և տափանքնը հետզհետէ այնքան կ'աճէր, որ անոնցմէ ամանք՝ մեծագոյն սուրբերու վարուց մէջ ալ հաղուադէս են և մարդկային բնութեան վրայ սարսափ կ'աղդեն, ինչպէս, օրինակ իմն, այն՝ զոր Հ. Վատթէս Յւղոկիացի կը պատմէ իր ժամանակազրութեան մէջ:

Միսիթար՝ մազէ խայթոցաւոր շապիկ մը կը հագուէր. բայց նա դժգոհ էր. խայթոցները բայտ բաւականի բազմաթիւ չէին, և շապիկն նիւթը՝ իր ուզածին չսոփ պինդ չէր: Ուստի Շներիոյ մէջ եղած ժամանակ, զիմեց բարեկամի մը, և յետ գաղտնականութեան խոստումն առնելու իրմէ, շինել տուաւ մաշկեղէն նոր զգեստ մը՝ զոր մերկ մարմինոյն վրայ պիտի կրէր. թիկունքին կոզմէ շարուած էին քայլէ քոյլ՝ երկաթէ սուր սուր խայթոցներ, որ մեծ խաչ մը կը ձեւացնէին. նոյնպէս կուրծքին վրայ կային երկու խաչեր՝ նոյն տեսակ խայթոցներով շինուած:

Յիրաւեր սուրբեր կան՝ որ եթէ՝ ՚իփոկեափանոսի և ՚Ներոնի ժամանակ ըլլային՝ զանոնք ազաւ պիտի ընէին ո և է մտածութենէ, իբենք իբենց համար հնարած ըլլալով արգէն՝ ամենէն նոր և անզութ տանջանկները:

Միսիթար Հ. Բովողիէի յայտնեց իր միտքը: ՚Ես, ճշմարիտ փորձառու մ'արեւելեան բնաւորութեանց և ողջմութենէ միայն զրգուած, չի հաւանեցաւ Միսիթարայ այդ մտածութեան, և ունէն կերպով ջանաց մոքէն զուրս հանել, իբրև բոլորովին անօգուտ հայ ազգին, ունեցած զիտութիւնը բաւական համարելով՝ անոր մտաւոր պէտքը լցնելու համար: Մինչդեռ եթէ անզում մ'ուսք

կոխէր արևմտաք, պիտի խառնուէր առար առարերաց չետ, պիտի փոխուէր լեզուն, ընսաւրաթիւնը, պիտի հետանար ազգէն հոգւոյ և պատոյ. և ի՞նչ օգուտ այնուշեան իրեն զիտութիւնը։ Այս և նման խօսքեր էին, զորս առէոյ կը կրկներ և Անոն առ Միսիթար։ Բացց սա, դիւթուած Հասվմայ անունէն, բուռն թափոյ մրտած զէոյ ի այն բարձր զազափարականը՝ որ մաքին միակ երազն էր եղած, — ճոխանալ արևմտեայց դիտութեամբք և դառնալ հայրենիք և բաւաւորել ազգը, — ուշ չէր զներ անոր խօսքերուն։ Վկայազիր մը միայն կ'ուզէր Հասվմ երթալու, և ուրիշ ոչինչ, այնուշեան իրականացած կը տեսնէր բար իրեն մտածութիւնները։ Քիսուսենը լոեց, երբ տեսու որ Միսիթար չէր ուզեր հասկնալ զինքը. 1695 տարւոյն մայիսի ՅՈՒՆ տուու անոր երկու վկայազիր լսուններէն լեզուով, մին փոկ և կնքուած, իրենց միարանութեան զիտոյն ուզգուած, յորում Միսիթարայ հանձարին և հոգւոյն կաստրելութեանց նկատմաք՝ հիացման բաներով կը բացատրէր ինքզինքը. իսկ միւսը՝ բաց յանձնուարազիր մը, որուն մէջ կը խնդրէ ամենէն ձեռնաւ ըլլալ և ամէն զիւրութիւն ընծացել անոր. վերջինս ստորազրեցին նուև նոյն քարտաքին մէջ զտնուազ բատին կրօնաւորաց մէծաւորք<sup>1</sup>։ Էւարծց Միսիթար թէ բացուեցան վերջապէս զիմացը յաջորդութեան զոներն, և որ մ'առաջ կը փութար ճանապարհ ելնել, առանց բնաւ զուշակիլութէ որչափ նկղութիւններ պիտի կրէր զեռ, և պիտի չի հասնէր իրեն փափաքին։ Յու մաքէն չէր անցներ, թէ այն ուսաւոր առաջնորդը հոգեոր կենաց և աւմանց, որուն հետամուտ էր, ինքը պիտի ըլլար, զոր Առաւուած կը պատարաէր իսյ ազգին։ Յետ երեք ամիս Ծերիա կենալու, Միսիթար սարկուազ և Յովեան փարզապես զնացին Աշղեքսանդրիոդ<sup>2</sup> քաղաքը, որ Յերիօյ նաւաշանզիստն է, ուր զազգիսցի պատրաստ նու մը զոնելով, ճանապարհ

1. Այն վկայազրից լուսին բնազիրը կը զանուի պրրիս Յաւելուածք ժԵզ։

2. Առանձ ճավածոցին վայց չինուած, Ալիլիկիոյ առհմանակից. որ ընդհանրապէս լորենուերուն կը կոչուի։

պիտի եղնէին դէս ի Կիպրոս, երբ յանկարծ հասաւ Արտօյ կաթողիկոսն՝ Գրիգոր Պիծակ կոչուած, որ Հռովմ կ'երթար եղիսկոպոսի մ'ընկերակցութեամբ. իրենք ալ նոյն նաւուն մէջ մտան: Ասոնց հետ հարկ եղաւ ամենայն խոհեմութեամբ և զգուշութեամբ վարուիլ ճանապարհին մէջ:

Նոյն ժամանակները, 1695 տարւոյն, զեռ կը տեէր Գաղղիացոց և Անդղիացոց մէջ այն թշնամութիւնը, որ ծագեր էր Ստուարտեանց ցեղին վերջին թագաւոր Յակոբը Բի առթիւ, որ իրեն կաթողիկէ դաւանութեան պատճառաւ գահակալութեան իրաւունքին զրկուած, Լուդովիկոս ԺԴի պաշտպանութիւնը խնդրեր էր ընդդէմ Գուլիելմոս Գի, որ իւր քեսորդին էր, և բռնակալեր՝ տիրեր էր Անդղիոյ թագին: Այս պատճառաւ անդղիացի նաւարտակը, որոնք կը չըջէին Միջերկրականին մէջ, Գաղղիացոց նաւերուն վրայ յարձակելով զերի կը բռնէին զանոնիր: Գաղղիացի նաւապեան՝ անդղիացի նաւերէն վախնալով, Կիպրոսի առջև խարիսխ ձգեց, ուր մի քանի որ կանգ տախին, ուզեօրիք դուրս ելան նաւէն՝ Տուզլա կոչուած ծովեղերեայ աւանը: Արտօյ կաթողիկոսն ուզելով արեելեան շքով Հռովմ մտնել, իրեն որսաց զՅովան վարդապետ՝ խոստանալով եղիսկոպոս ձեռնազրել զինքը. աշխատեցաւ իրեն ձգել նաև զՄիթիթար սարկաւագ, նայնպիսի փայլուն խոստումներով. բայց նա հետի ո՛ և է փառասիրական ձկոտումներէ, մերժեց կաթողիկոսին առաջարկը, մինչդեռ վարդապետն յանձնառու եղաւ միամտարար, հակառակ Միթիթարայ բարի թելազրութեանց: Սաղամիւս<sup>1</sup> քաղաքէն զրեթէ միօրեայ ճանապարհ հեռու, հայազգի հզնաւարց վանք մը կը զտնուի, Ա. Մակար կոչուած. անոր եկեղեցոյն մէջ կատարուեցաւ ձեռնազրութեան հանդէսը, որուն ներկայ էր նաև Միթիթար սարկաւագ: Կզզւոյն ոզն անրարեխառն և չտիազանց տաք րԱպալով, ևս աւելի յուղիս ամսոյն մէջ, ջուրն ալ ոչ այնչափ տառողջարար, — մանաւանդ եթէ զուտ խմուի՝ առանց զինւոյ, — սաստիկ տկարա-

1. Կիպրոսի արքեպիսկոպոսի տիտղոս վրայ չինուած, Աթենյէսոսի գետարերանին մտաւ, որ երկրաշարժէ մը կործանելով՝ նորէն չինց զայն կատարելիսնու, որուն անուամբ կը կոչուի նաև Առաւանդիս:


բացաւ Ախիթար և չերմ ունեցաւ, որ ամէն որ ժամը երեքին կը բռնէր մինչև երեկոյ: Այդ հիւանդութեան մէջ կար, բնական պատճառներէն զատ, երկնից ծածուկ կարգաղբութիւն մը, որ կասեցաւ Ախիթարայ ընթացքը, ուսմանեալ ժամն տակաւին հնչած շրպալով: Դարուս ամէն դիւրութիւններով հանդերձ, հազիւ թէ հրապուրիչ բան մ'ունին մեզ համար այն ուղեսորութիւնք, ինչ որ ըրաւ նա առանց երրեք յազնելու, նոյն խոկ երկու և աւելի անդամներ կոխելով երթալով մի և նոյն հետոց վրայէն: Կա զաղափարի մարդն է, որ չի լքանիր դժուարութեանց առջեւ: ձախողութիւնք կ'ոգերեն զինքը, ցաւոց և արկածից տարափին ներքեւ կը զիմազրաւէ խիզախօրէն:

Երբ նաւուն մեկնելու օրը հասաւ, բոլոր ուղեսորք նաւ մտան բաց ի Ախիթարէն, զոր նաւապետն ընդունեցաւ, անոր հիւանդագին վիճակը տեսնելով և վախնալով որ յանկարծ ձանապարհին մէջ կը մեռնի: Ասկայն վերջին բոսկէն, Յովիան եպիսկոպոսին և Ախիթարայ սրբամմիկ հրաժեշտի ողջայնները և արտօսրալից աշքերը տեսնելով, յուղուեցաւ և վերջապէս ընդունեցաւ զԱխիթար նաւուն մէջ: Պարզեցին առագաստները, և յաջողակ հով մը կը սահեցնէր նաւը ալեաց վրայէն, երբ յանկարծ սորբ-ջացաւ Ախիթար և կ'ուղէր ետ դառնալ: Կը զգար թէ այն հիւանդութեամբ սաստիկ պիտի տանջուէր նաւուն մէջ, մանաւանդ այնպիսի անյարմար ուղեկիցներով, որուն փորձն առեր էր արդէն: կը մտածէր՝ թէ այն ամառնային այրող եղանակին և չերմին միջոց, ժարաւէն տանջուած, ուսկից զով և յատակ ջուր պիտի գտնէր ծովուն վրայ, այնպիսի երկար ձանապարհորդութեան ժամանակ: Երբ այս մտածումներով վարանած՝ հնարք մը կը փնտուէր, յանկարծ կռիւ մը ծագեցաւ կաթողիկոսին և իրեն ուղեկից եղիսկոսպոսին մէջ, թեթև պատճառի մը համար, ի մեծ զայթակղութիւն բոլոր ձանապարհորդաց: Մէկ բոսկէի մէջ, Հոռվմ երթալու ծրագիրն աւրուեցաւ Ախիթարայ մաքէն, և կ'ընտրէր ետ դառնալ հիւանդագին և մեալ այն անծանօթ և ամայի տեղը, միայնակ, անտէրունչ, քան այնպիսի ընկերներով հեռու և օտար աշխարհներ երթալ: Բայց նաւն հոկայաքայլ կը յառաջէր, ծովու կոհակներն երթալով

կը սաստկանային, և Կիպրոս զրեթէ աչքերնէն անհետանալու վրայ էր. Բնշղէս ետ դառնալ: Բարեբախտաբար նաւուն մէջ կիպրացի վաճառական մը կար, որ քաղաք պիտի դառնար իրեն նաւակով. Միսիթար խնդրեց նաւուղետէն՝ որ անոր հետ Կիպրոս դառնայ: Յովինան եպիսկոպոս և Միսիթար սարկաւագ տուին իրարու հրաժեշտի ողջոյնը արտասուաց և հեկեկանաց մէջ, թերեւ յոյն շունենալով այլ ևս տեսնել զիրար, և բաժնուեցան: Գաղղիացի նաւն պարզած հողմալիր առաջաստները՝ յաջողութեամբ շարունակեց ճանապարհը դէպ յիտալիա. իսկ Միսիթար, յանձնած ինքզինքն իրեն առաջնորդող աջոյն, դարձաւ Կիպրոսի նախկին ծովափիը, անտարակոյս Տուղլաւաներ, — որոյ անունը չյիշէ մեր ժամանակադիրն, — և գնաց իրեն առաջին իջևանը:

Տեղոյն բնակիցք յոյն ըլլալով բոլոր, որոնց լեզուն չէր հասկնար Միսիթար և չուներ իրեն ծանօթ մը, մէկ զիշեր միայն մեաց հոն. երկրորդ օրը ստիպուեցաւ զրաստ մը վարձել և երթալ ի Ատղամիւս, կղզոյն զլիաւոր քաղաքը, ուր կային հայ ընտանիքներ և իրենց առանձին եկեղեցի մունէին, որուն խցիկներէն մին տուին իրեն: Երեք օր մեաց հոն, հիւանդագին, երեսի վրայ թողուած. շի գտնուեցաւ մէկն օր այցելէր կամ հոգար, կամ զաւաթ մը ջուր տար իրեն: Անցուշտ պիտի մեռներ հոն, ատարութեան մէջ, եթէ շի գտնուեին մի քանի աղգոյինք, որոնք իրենց վրայէն բռա մը վերցնելու համար՝ քան թէ ի զթոյ շարժեացք, հայ ճգնաւորաց վերոյիշեալ Ա. Մակար կոչուած վանքը տարին ձգեցին, ըսելով՝ թուղ կրոնաւորները հոգան աղգային կրօնաւոր սարկաւագ մը: Այն ժամանակ վանքի տառաջնորդն էր Զօլախ վարդապետն, զոր առաջ յիշատակեցինք. բարեբախտաբար ոյն օրը հոն շի գտնուեցաւ: Արդէն Միսիթար և արեգաներն իրարու բոլորովին անժանօթք չէին. Յովինան եպիսկոպոսի ձեռնաւղութիւնը նոյն վանքին մէջ կատարուած էր, որուն ներկայ ըլլալով նաև Միսիթար սարկաւագ, իրեն և արեգաներուն մէջ անհանոյ դիպուածներ հանդիպած էին: Առիթը պատահէլուն՝ նա համարձակ կը քարոզէր իրեն կրօնական համոզումները. այն օրէն օր առիթ ունեցաւ մի-

ձերու արեղաներուն հետ կրօնական խնդիրներու մասին, առելութեամբ լեցուեցան անոնք Միսիթարայ դէմ, ուստի հիւրամեծար ընդունելութիւն մը մոքէն անդամ չեր անցըներ։ Առ յիրաւի արեղաներէն ոչ մին ուշադրութիւն չի դարձուց հիւանդին, երբ իմացան թէ Միսիթար սարկա-



Առաջին կ ժցովի ռուսիկ Ա.

առգն էր. իսոնաւ, խարխուլ խցիկ մը տռւին քնակութեան, ուր հովին և անձրև կը մոռնէին անարդել, ուր կապերտի կտոր մ'անդամ չկար, և ոչ քրծիկ մը՝ որ վրան առնուր հիւանդը։ Խեղմ Միսիթար, առուի վերարկու մը միայն ունէր, որուն կէսը գետին կը տարածէր իրը անկօղին, և կէսն


ալ զրան կ'առնեուր իբր ծածկոց : Քաղելու անկարող, հսկա  
ալ շռւնքաւ այցելու մը, հարցնող մը՝ թէ ինչպէս էր,  
քիչ մը ջուր կամ կտոր մը հաց ըերող . և ստիպուած ծա-  
րաւէն և անօթութենէն, ակար և զազդոջուն քայլերով,  
անձամբ խռանոց կ'երթար իրեն պէտք եղածն ուզելու :  
Եցառաներն ալ, աւելի փափուկ սիրու մը շռւնենալով քան  
արեղաներն, կը յանդիմանէին զինքը՝ թէ ինչո՞ւ հասա-  
րակաց սեղանի չէր գտնուեր և զիրենք անհանդիստ կ'ը-  
նէր . և յետ դառն և կծու խօսերու, կտոր մը զարե-  
խառն հաց և ազի ձիթապառող կու տային, զոր զուու-  
թեամբ ընդունելով խցիկը կը դառնար : Այդ էր իրեն կե-  
րակուրն այն երեք ամիսներուն՝ որ գանգին մէջ մնաց :

Լաւ ըմբռնելու համար Միթարայ կրած վշտերը վանքին մէջ, կարեսոր է զիտոնալ նոյն տեղւոյ ինչ ինչ հանգամանվները։ Այն խցիկը, զոր տուին իրեն, վանքին սենեկաց տանիքին վրայ շինուած էր, որուն մէկ կողմը զախվայր ձանապարհ մը կար, ուսկից պէտք էր ինեւ՝ երրհարկ ըլլար պարտէղ երթալ։ Վանքէն երեք քարընկէց հեռու կը գտնուէր պարտէղը, որուն մէջ կար ընդարձակ քարանձաւ մը, ուսկից կը բզինէր առատ չուր, որ կ'երթար մեծ աւազանին մէջ կը թափուէր, քարայրէն տասը կանգուն հեռու, և անկէ կը ծաւալէր պարտիզին մէջ և ուրիշ տեղեր։ Հոն շուրջը կը սովոր օձերու ահազին բազմութիւն մը, որ սովորական է կիսորոս կղզւոյն։

Եղիկելին օրն ի բուն կը տառապէր ցաւերով, օտարու-

1. Այս ժամանակագրութեան էկզիրով կը նկատագրէ այս վանդին  
և զետերաց կհանեցը։ Հայոց տարին չոր պահով կ'անցնեէն, որը  
մէկ անգամ միացյա կ'առաջին։ կ'արակարնին էր՝ խաչած բակույց, կամ  
ոսպն, կամ սիսան, քանի այս զին և ձիթագուշակ։ Հայերնին զուս ցո-  
րենէ չէր, այլ զարգացած։ ըստ հանգապէն միացյ չոր կը խմէին։ Առա-  
սանեցը կանուխ կ'եղենէն, առանց զարգացած թիւնեցը կ'ունէն։ Խոյց այս ա-  
մէն ազնութեանց հետ շահելին ներքին հոգեռոր կ'անուքը և կ'անուքի  
հարկաւոր տառիքնեւթիւնները։ կը պակսէին նոյնպէս կ'անցազագործ-  
թեած պատշաճ կանոններուն զէմ։ յետ բարոր որը լինում և ձեռքով  
կուռելու բրարու հետ, երեկոյան հանգանակու մասնաւ իւրաքանչիւր  
որ եղած խցին առջե երթաւով, թաղամիւն կը խնդրէին բրարէ, և  
երկրորդ որը դարձեալ նոյն բանեցը կ'ունէին։ (1.-2. Անդ-բա, թի.  
15):

թեան և միայնութեան վշտերով մաշուած, մութ և խոնաւ խցիկին մէջ, որով հիւանդութիւնն երթալով կը սաստկանար և ջերմը դէպ ի մահ կը տանէր զինքը։ Առմէն օր, ժամը երեքէն մինչև երեկոյ, օրհասական տագնապներու և քրտանց մէջ կը տանջուէր, անող, անօդնական։ և երբեմն, այն վիճակին մէջ, զըեթէ ուշաթափ և զգայազիրկ, խցիկէն վար իջնելով պարտէզ կ'երթար, և



Աւազամ Միւլթարայ լոգամաց։

ջերմութեան շղիմանալով՝ աւազանին մէջ կը ձգէր ինք զինքը սակաւիկ մի զօվանալու համար։ Ճամեր կ'անցնէին, և ահա ցուրտ սարսուռ մը յաջորդելով ջերմին, կը սթափէր և խոկոյն դուրս կ'ելնէր աւազանէն։ և փաթաթուած իրեն ասուի վերարկուին մէջ, ուժասպա, զետին կ'ինկնար և ժամերով կը քնանար աւազանին մօտ, կիզիչ արեւուն ներքեւ և շուրջը սողացող ոձերուն մէջ։ Երբեմն արեւուն

սաստիկ տառը կը մղէր զինքը քարայրին ներոը, ուր սաները ջրոյն մէջ ընկղմած, կ'ընկողմանէր թաց քարերուն վրայ մինչև երեկոյ. Երբ զիշերուան ստուերք կը թանձրանային չորս բոլորը և չերմը կը նուազէր, ոսք կ'ելնէր վանք երթարու. բայց ոսքի վրայ կենալու անկարող, մազզցելով կ'երթար յափախթերս այն դարուվեր քարու ճանապարհէն. տասներկու անգամ կանդ կ'առնուր ճանապարհին վրայ, և տասներկու առաքելոց անունները տալով, շատ տառապանկով հազիւ կը հասնէր խղիկը, ուր կը սպասէին իրեն ուրիշ տանջանքներ - ծարաւն, քաղցն, լքման և միայնութեան սարսափն: Եւ այս դէպքը մի անգամ միայն չպատահեցաւ, որ վրիակէր վանականաց աշքէն, այլ տասն անգամէն աւելի, և սակայն չի դանուեցաւ մէկը՝ որուն զութը շարժէր, գեղ կամ դարման մ'ընէր անոր ցաւերուն, կամ զոնէ զգուշացնէր զինքը, որ միշտ մեռնելու վտանգներով պաշարուած, կրնար կամ աւագանին մէջ խեղզուիլ, մարդաշափ խորութիւն ունենալով, կամ օձերէն թունաւորուիլ: Բայց կար մէկն որ կը պաշտպանէր զինքը, և այն տառապանաց և ցաւերուն ներքին կ'ամրացնէր անոր հոգին: Հարկ էր կարել այդ փշալից ճանապարհը, յետոյ այն բարձրութեանց հասնելու համար:

Արեղայք ոչ միայն իրենց զութն և խնամքը կը զանային առ թշուառ պանդուխտն, այլ և կծու խօսքերով կը վիրաւորէին անոր արդէն ցաւած սիրուը, կանչելով երեսն ի վեր, թէ ինչո՞ւ իրենց հետ եկեղեցի չէր երթար ազօթից և ժամերգութեանց ժամանակ, և նման խօսքեր, տանց բնաւ նկատողութեան առնըլու հիւանդին վիճակը: Եսյու որերը հայ ուխտաւորք եկան Ա. Մակարայ վանքը. անոնց հետ կար նաև եղիսկոպոս մը, շատ բարեսիրա անձ մը, որ արդահատելով Միսիթարայ մահամերձ վիճակին վրայ, ձեռքէն եկած բարիքը կ'ընէր անոր, կը դարմանէր, կը միսիթարէր, որով սակաւ մի հոգի առաւ Միսիթար: Վարդապափ տօնին օրը փափաքեցաւ խաւիծ ուտել. եղիսկոպոսն անձամբ խհանոց զնաց, պատրաստեց զայն և հիւանդին բերաւ. բոլոր կենաց մէջ այնչափ ախորժով կերակուր կերած չէր: Եիւթականէն աւելի բարոյապէս

զօրացաւ, սիրտ առաւ, սփոփիչ խօսք մը, գորովոյ ակնարկ մը յանախ գեղերէն առելի կ'արժեն: Այնուհետև Մխիթարայ բարի հրեշտակն եղաւ այդ եպիսկոպոսն, որմէ ինզրեց որ զինքը քաղաք տանել տայ, ուր եթէ հիւանդութիւնն ալ չկարենար դարձանել, զոնէ հոգեկան ցաւերը պիտի թեթևային՝ արեղաներէն հեռանալով: Խնդիրքը կատարուեցաւ, քաղաք տարին և եկեղեցւոյ սենեակներէն միոյն մէջ գրին, ուր դարձեալ նոյն ցուրտ ընդունելութիւնը գտաւ ազգայիններէն. մեաց երեսի վրայ, անխնամ: Կիոպոսի այրող արևուն ներքե՛ քարացեր էր այդ հայերուն սիրտը, որոնցմէ յաւահատած՝ լատին կրօնաւորաց զիմեց, որ գեղ մը տան իրեն հիւանդութեան: Անոնցմէ ալ օգուտ մը չտեսաւ, որոնք չափազանց երկշոտ մարդիկ էին, և տեսնելով զինքն այնպէս հիւծած, սպառած, որ փափրիկ անզգուշութիւն մը կրնար գերեզման տանել, շհամարձակեցան գեղ տալ, որ եթէ յանկարծ մեռնէր, իրենք շրջային պատասխանատու անոր մահուան: Վերջապէս գտնուեցաւ ազգայնոց մէջ զթասիրտ մէկը, որ դալուկի և ջերմի գեղ տուաւ, բայց այնպիսի զօրաւոր գեղ մը, որ սաստիկ ազդեցութիւն ընելով մահուան դուռը հասուց զինքը: Ատիպուեցաւ Մխիթար, սակաւ մի զօրանալու համար, թողուլ առ ժամն և շափաւորել խիստ ճգնութիւնները և մահացուցումները, ինչպէս երբեմն խրատեր էին զինքը իրեն հոգեսոր դաստիարակները, և սկսաւ միս ուտել այնուհետև, մինչեւ որ կատարելապէս տուղջացաւ:

Երբ գեռ բոլորովին ապաքինած չէր Մխիթար, և մեծ մտատանջութեան մէջ էր իրեն ապագային նկատմամբ, հասաւ Եփեսոսի ժողովին տօնը, և լսեց որ եկեղեցւոյ մէջ կ'երգէին «Ով հրաշալի նախահարք» շարականը, և կրօնից եռանդն արծարծեցաւ սրտին մէջ. լսեց նաև նոյն շարականին երեք կարկատուն տուները, յորս կը նզովուէր Ա. Լեռն և Քաղկեդոնի ժողովը. հառաջ մ'արձակեց անոնց կուրութեան վրայ, որոնք չէին ուղեր աշքերնին բանալ ճշմարտութիւնը տեսնելու համար: Հազիւ վերջացաւ ժամերգութիւնն, շատերը — որոնք Մխիթարայ սենեկին սեմը կոխած չէին՝ անոր հիւանդութեան ամենէն աւելի տագնապալից ժամերուն մէջ — զիտնալով թէ նա

կը սարբերէր իրենցմէ կրօնական դաւանութեամբ, խուժեցին անոր խուցը և սկսան ստիպել որ այն երեք տուներն երգէ և նզովի՝ զլեսոն քահանայապետը և Քաղկեդոնի ժողովը։ Միսիթար, որ հազիւ խօսելու կարողութիւն ունէր, տեսնելով թէ անոնք կը յամառին և սպառնալեօք անզամ կ'ուզեն իրենց կամքը կատարել տալ, վառուած սիրաը կրօնից նախանձով, յանդիմանեց արդար զայրութով մ'անոնց տղիսութիւնը և շարութիւնը։ Շանթահարող բան մը կար անոր խօսքերուն մէջ, այնպէս որ պապանձած հեռացան և այլ ես չի համարձակեցան մօտենալ։ Այդ եղաւ հրաժեշտի ողջոյնը Միսիթարոյ և ազգայիններուն՝ Կիորոսի մէջ։

---

## ԳԼՈՒԽ Զ.

Միմիթար կը թողու սիպրոս կղզին և կը Յաւէ դէալ ի Սելեկիա . — Թիրիա և Այթթապ երթալով՝ կուղկորի զէպ ի Սերաստիա . — ճամապարհին մէջ կրած նեղոթիւնք . — Սերաստիա կը նասնի , և բոլորովին առողջամալով՝ Ս. Նշանի վանքը կ'առամձմամայ , ուր գրութիւնց կը պարապի . — Քանամայ կը ծեռազրուի . — Միարամութիւն մը ճաստատելու գաղափարը կ'ունինայ . իրեն առաջին աշակերտաները . — Պոլիս կ'նրթայ՝ կարմեցի Խաչատուր վարդապետին աշակերտիւնը խնդրելու , բայց չի յաջողիր . — Կը քարոզէ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ . — Կը ստիպուի թողու Պոլիս և վերազանալ գաւառերը :

**Բ**արեբեր և այդեւէտ Ախալքոսը , ճոխ ազգային յիշատակարաններով , Միմիթարայ աքսորավայրն եղաւ , ու զոյներով նկարուած միշտ յիշողութեան մէջ : Գեռ հիւանդ և անկարող քալելու , որոշեց օր մ'առաջ թողուլ զայն , դառնալ հայրենիք , ընտանեաց զիրկը , ուր կը յուսար զանել կատարեալ առողջութիւն : Սակայն զիմացը կը ցցուէին ժայռերու նման երկու մեծ զժուարութիւնիք . Նախ , Ենչպէս դուրս ենել Ախալքոսէն , առանց երկրին հարկը վճարելու , որուն կարեւոր գրամը կը պակսէր իրեն . երկրորդ , ով պիտի երաշխաւոր ըլլար իրեն , երկրին օրինաց համեմատ , վկայելու համար թէ ինքն աքսորուած կամ փախըտական մը չէր : Կը դանուէր նա օտարներու կամ թշնամեաց մէջ , և այդ երկուքներէն ալ յոյս շունէր ու և է օդնութեան : Արտաքին ցաւերն կամ հիւանդութիւնք այնշափ չէին տանջեր զինքը և մաշեցներ , ինչպէս ներքին հոգերն և տագնապք , որոնք միշտ հետը կը քալէին ստուերին նման : Անոր կերպարանքն զրաւիչ կամ յուղիչ բան մ'ունէր , այնովէս որ օտարներն անդամ ի դութ կը շարժէր . միայն

Կիսրոսի ազգայինք և արեղաներն եղան՝ որոնք ատելութենէ զատ ուրիշ զգացում մը չունեցան դէպ ի Միսիթար։ Հազիւ փոքր մի կազդուրուած հիւանդութենէն, սենեկին ճնշող օդէն նեզուած, դուրս ելաւ որ մը հրապարակին մէջ շրջելու ցալավ, վտիտ, տեղոյն, դէմքը տիրութեամբ համակուած։ Այլազգի հարկահանին ծառաներն, տեսնելով զինքը այն խեղճ վիճակին մէջ, բռնեցին և իրենց տիրոջ առջև տարին, որուն գութը շարժելով՝ հարցուց թէ ինչո՞ւ այնպէս նիշար, գունատ, տիսուր և մըտածկոս էր։ Պատմեց Միսիթար տեղնիտեղը զլիսէն անցածները, մանաւանդ իրեն յետին չքաւորութիւնը, որով անկարող էր երկրին հարկը վճարելու։ Այլազգւոյն սիրուգորովեցաւ, հրամայեց կարեւոր դարմանը և խնամքն ընել անոր, և կանչելով Հայոց զլխաւորը՝ հարկը վճարել տուաւ, և վճարման զիբը Միսիթարայ ձեռքը տալով՝ խաղաղութեամբ արձակեց զինքը։ Առաջին գմուարութիւնն հարթուած, կը մեար երկրորդը։ Շուտով աղերսազիր մը պատրաստել տուաւ, կզզիէն դուրս ելնելու հրաման խընդրելու համար, զոր ինքն անձամբ տարսւ տեղույն իշխանին։ Այն տեղ ծանոյց իրեն սերաստացի ըլլալը հայրենեաք, հանապարհորդութեան նպատակիը և դիսպուածները, այլ և այլ փորձեր եղան անոր խօսքերուն ստուգութիւնն իմանալու համար, և ըստ ամենայնի ճշմարտախօս հանդիսացաւ Միսիթար։ Սակայն օրէնքն չէր ներեր առանց երաշխաւոր մ'ունենալու դուրս ելնել կզզիէն։ Յոյն վաճառական մը, որ զինքն առաջին անգամ կը տեսնէր հոն, երաշխաւոր եղաւ, իսկոյն ձեռքը տրուեցաւ հրամանազիրն, որով ուզած ժամանակ կրնար ելնել կզզիէն։ Յանկարծ յաջողութեանց հով մ'է որ կը չնչէ Միսիթարայ համար։ ամէն բան պատրաստ կը գտնէ, ամէն գմուարութիւն հարթուած։ Տուզա կ'երթայ, ուր նաւ մը կը սպասէր Ակեւկիս<sup>1</sup> երթալու, Միսիթար մէջը կը մտնէ. ձովը հան-

1. Ասորուց կամ Աիսրից ծովեզերեայ քաղաք մ'է, Որուտեսի զետարեաւունին հիւսիսային կողմէ, Աելեկոս Նիկատորէն շինուած, որուն նուռահանդիսաւը, արտեստական կերպով փորուած, Անոինը քաղաքին վաճառաշահութեան զուոն էր։ Հիմուկ փոքրիկ ուսոն մ'է, կէս տէրուկ, Աւ-Աւունէն կոչուած։

դարս է, հիւանդութիւնն օրէ օր կը նուազի, ամէն կողմ  
բարեկամ՝ գէմքեր կը կարծէ տեսնել: Յաջողութեան հային  
կը տեէ մինչև ի Անկարիա, անկէ անդին կը դազրի. դա-  
լուկ հիւանդութիւնը գեռ բոլորովին թողուցած չէ զինքը,  
չերմը գարձեալ կը բանէ, բայց այս անդամ օր ընդ մէջ:  
Անկարիայէն Անտիոք կ'երթայ, և անկէ Բերիա. իրեն հետ  
կը ճանապարհորդէ Ա. Մակարայ վանքին արեղաներէն  
մին, որուն հետ ստիպուած է զիւղէ զիւղ երթալ՝ զիշեր-  
ները անցնելու, և զանէ զուռ կը պաշտի՝ բնակարան և  
կերակուր գտնելու համար: Զգեստները պատառուուն՝  
կը թափթիին վրայէն, կոշիկներուն մէկը բոլորովին մա-  
շած՝ կը ստիպուի երկուքն ալ նետել, և այն երկայն և  
քարուտ ճանապարհը բռկուտն կը կարէ մինչև ի Բերիա:  
Այդ բոլոր տառապանաց վրայ կերցաւ կոշուած հիւանդու-  
թիւնն ալ աւելցաւ, որով կերածը զուրս կու տար՝ անհալ  
և անմարս, առանց սնունդ առնըլու: Գրեթէ կիսամեռ  
հասաւ Բերիա, ուր նախկին ծանօթներուն և բարեկամ-  
ներուն երթալով, զեղերով և խնամու հոգերով շուռառ  
առողջացուցին զինքը հիւանդութիւններէն: Հոն, փնտաեց  
յիսուսնան ։ Անտոն կրօնաւորը, որ զրեթէ հայր մ'ե-  
զեր էր իրեն գուրզուրանքով և բարի խրատներով. շի  
գտաւ զանիկայ, բայց գտաւ անոր նմանները, մի և նոյն  
կարդէն կրօնաւորներ, որոնցմէ նոյն հոգեշահ խրատները  
լսեց, նոյն բարի խորհուրդը՝ մէկդի թողուլ արեմուտք  
երթալու մտածութիւնը, և աղզին մէջ մեալով օգտակար  
ըմալ: Վերջապէս հասկցաւ Միսիթար, թէպէտ ուշ, թէ  
Աստուծոյ ձայնն էր՝ որ կը հնչէր այնշափ բարի որտերէ:  
Այս անդամ շատ չկեցաւ Բերիա, հազիւ քանի մ'օր, ու-  
րովհետեւ « հայկական խիստ ձմեռն » , ինչպէս կը կոչէ  
անոր փորձառուն՝ Ասկերերան, վրայ կը հասնէր: Այն-  
թապ գնաց, ուր գտաւ կարաւան մը՝ որ Աերաստիա պիտի  
երթար. բայց բնշպէս պիտի ընէր հետիւտն այնշափ ճանա-  
պարհ, զրաստ մը վարձելու շափ անդամ զրամ շունենա-  
լով. խորհուրդ՝ շատերը կու տային, բայց զրամ կամ ոդ-  
նութիւն՝ ոչ ոք: Գրաստապաններն ալ կը խարէին զինքը,  
նախ իրեն հետ դաշնագրելով, և յետոյ զրաստներն ա-  
նոնց վարձելով, որոնք աւելի զրամ կու տային. որով

յանախ կարաւանէն եւս կը մնար և օրերով հետիւսն կ'երթար։ Այսպէս պատահեցաւ Այնթապի մէջ, ուր ըգղեռաները լուսանալու տուած, կարաւանին հասնելու համար, — որ արդէն ձանապարհ ելեր էր, — ստիպուեցաւ թաց զգեստներն առնուլ և անձամբ տանիլ հինգ՝ վեց ժամուսն ձանապարհ, զրաստ շունենալով։ Այն ժանր բեռին տակ ձնչուոծ, իրեն կարողութենէն վեր ձիգ մը կ'ընէր, չեւ ի հեւ վազելով՝ կարաւանը չի փախցնելու վախէն, որ մատիկ զիւղի մը մէջ կը սպասէր։ Բայց անկարելի եղաւ ձանապարհը շարունակել, ինկաւ ուժապատ, յուսակտուր, մինչեւ որ այլազգի փայտահար մը մօտէն անցնելով, ըրաւ այն ինչ որ զլացան ընել աղզայինք. զթալու իրեն զըրաստին վրայ զրած՝ հասուց զինքը կարաւանին։ Յետ շատ թախանձանաց, կարաւանին մէջ զտնուած իրեն մէկ ծանօթ ուղեկիցն հազիւ յանձն առաւ անոր բեռները զըրաստին վրայ զնել. խակ ինքը, զրեթէ տասներեք օրուան ձանապարհ, ստիպուեցաւ ոտքով երթալ և գիշերները բացսթեայ կը պառկէր։ Զերմը նորէն սկսու նեղել զինքը, բայց նա այնուշեան հոգ չէր ըներ, որովհետև հայրենեաց սահմանները զրեթէ ոտք կոխած էր, և երկու օրուան ձանապարհ մը միայն կը բաժնէր զինքն իւր սիրելիներէն։ Աերաստիոյ մօտակայ զիւղի մը մէջ ձի մը փարձելով, այնպէս մօտաւ իրեն ձննդավայրը, ձմեռուան սկիզբը, 1695 տարւոյն՝ նոյեմբերի կիսուն։

Այն օրը որ Միսիթար կը մանէր ի Աերաստիա, մօր ականջը զուժ մը կը հասնէր, թէ որդին Կիոլրոսի մէջ հւանդացած, անխնամ և անտէրունչ, մեռած էր։ Միսիթարայ քեռայրը փաղոցին մէջ տեսնելով զինքը, ուրախութենէն տուն փաղեց աւետելու մօրը, թէ ինչո՞ւ կու լսու, որդիդ ոզչ է և ահա տուն կու զայ. մայրը չի հաւատաց, և վշտացաւ անոր խօսքերուն վրայ, կարծելով թէ կատակ կ'ընէր։ Մինչ երկուքը կը վիճէին, Միսիթար տուն մօտաւ և ինքզինքը մօր զիրկը նետեց, որ սաստիկ ուրախութենէն մարեցաւ ինկաւ։ Ընտանեաց սուզն ուրախութեան փոխուեցաւ, իրենց համար Միսիթար մեռեր և յարութիւն առեր էր։ Երկար և տաժանելի ուղեւորութենէն իսոնչ, հազիւ իրեններն ողջունած և զես կարօտը շառած,

Հանգչելու պէտք զգաց : Ծնողաց խնամքն և զօրով, կարեսր գեղքը և դարմանք, ոննդարար կերակուրք և մանաւանդ սրտի անդորրութիւնն՝ այնպիսի ուժ մը տուին հիւանդին, որ քիչ ժամանակէն ոռք ելաւ, բոլորովին առողջացած և կազդուրուած : Շուտով սկսաւ բարախսել սիրտը գանգին կարօտով, ուր կը յաւար խաղաղել այնշափ պատահարներէ յուղուած միտքը, և ձեռք առնուլ դարձեալ ճգնութիւնները, խոյանքը հոգեսորի և ուսմանց մէջ, զորս մասամբ իւիք խափաներ էին հիւանդութիւնք և ուղեռութիւնք : Աւրախութեամբ լեցուեցաւ՝ տեսնելով զինքը դարձեալ Ա. Նշանի վանքին պատերուն մէջ, ուր ճշմարիտ առաքինուոյ և զիտնականի տիպար մը հանդիսացաւ ամենուն, և որուն վարբը՝ զրգիռ մ'եղաւ բարիներուն, և յանդիմանութիւն մը՝ շարերուն : Առվորարար Միսիթարայ ներկայութիւնը վանականներուն մէջ ընդհանուր ցնծում մը կը պատճառէր, ինչպէս բաժանումը՝ ցաւ և տիրութիւն, այդ էր պատճառն, որով ամէն հոն երթալուն՝ սիրալիր հիւրընկարութիւն մը կը գտնէր արեզզաներէն : Հոն, աղոթից և ընթերցման ժամերը կ'ընդհատէր երբեմն՝ հոգեսոր տաղեր և երգեր չինելով, անուշ կամ տիրուր յուշերէ ներչնչուած, որոնք յաձախ հառաջներ կամ օրհնութիւններ էին ուղղուած զէսի ի երկինք : Այս ժամանակ էր՝ որ Սոլամնի Առակաց զիրքը սկսաւ ստանաւորի վերածել, ընթերցողաց օգտակար և զուարձալի ընելու նպատակաւ : Եսոյն վանքին մէջ կը գտնուէր նառուկ անունով արեզզայ մը, ձիչդ հակապատկերը Միսիթարայ, առաքինութեան ստուերն անդամ չունէր վրան, դատարկատուն, տպէտ, օտար կրթութենէ և ազնուական զգացումներէ, անձնատուր աշխարհիկ զուարճութեանց : Այսպիսի ընաւորութեամբ անձ մը՝ ի հարկէ չէր կրնար սիրել զՄիսիթար, որուն վարբն և զործերն յանդիմանութիւն մ'էին իրեններուն . նախանձը սրտին մէջ բունած, Միսիթարայ ուսումնական համբաւը և առաքինի ընթացքը նսեմացնելու առիթ մը կը ֆնառէր ամէն բանի մէջ : Անոր ամէն խօսքը՝ հեղնութիւնն՝ մ'էր, ցուրտ կառակ մը, ծաղրածութիւնն մը Միսիթարայ զէմ, որուն սա ուրիշ պատասխան չունէր, բայց ժպիտ մը, անուշ խօսք մը : Օր մը Միսի

թար քաղաք զնուլով կարեար գործի մը համար, Շառուկ անոր սենեակը կը մտնէ, կ'առնու բոլոր զրութիւնները, որոնց հետ նաև Առակաց զրբին կիսէն աւելի ստանաւոր դարձուած մասը, որուն ուրիշ օրինակ չունէր, և բոլորն ալ կրակի մէջ կը նետէ՝ կ'այրէ: Երբ կը դառնայ Մխիթար, սենեակը վեր ի վայր եղած կը տեսնէ և զրութիւնները չի զտներ. կը հարցնէ Շառուկին՝ թէ զիտէր արդեօք ո՛վ առած է: — Այս, կը պատասխանէ լրաբար, ես առի և այրեցի, որպէս զի Հոգին սուրբ փախչի անոնց միջէն: — Իրեն հասուցած վեստէն աւելի՝ սոսկաց Մխիթար ըրած հայհոյութեան վրայ և լոեց, հասկնալով որ ըրածին և ըսածին ծանրութիւնը շըմբանող անձի մը հետ էր զործը. և ամենեւին շիտոփիսեց իրեն վարժունքը անոր հետ:

Այն ձմեռն ամբողջ վանքին մէջ անցուց Մխիթար, որուն պարիսպները չկրցան արգելուլ անոր առաքինութեան և իմաստութեան համբաւը, որ երթալով կը ծաւալէր Սերաստիոյ և շրջակայ զիւղորէից մէջ, հակառակ ջանից Շառուկին և անոր նմաններուն: Վանքին միարանք և քաղաքին երեւելիք, որ երրեք տեսած չէին աւելի արժանազոյնը քահանայական աստիճանին, կ'ուզէին որ մ'առաջ իրենց խորաններուն և բեմերուն վրայ տեսնել զինքն, և օգտուիլ հոգելից խօսերէն և քարոզներէն: Մխիթար զեռ անզատրաստ կը գտնէր զինքն այն աստիճանին, որուն որրութեան և բարձրութեան զիտակ էր, և անոնց ստիպումէն ազատելու ուրիշ միջոց չունէր՝ բայց միայն մէջ բերել իրեն տկարութիւնն՝ իրր արգելը մը այն բանին: Սաստիկ հաղ մը, — արդիւնք Սերաստիոյ կարգէ զուրս ցուրտ կիմային, և կէս մ'ալ իրեն նեղացուցիչ ուղեորութեան և հիւանդութեան հետեանք, — կը տանջէր զինքը շարաչար և բերնէն արիւն կռ զար, և կը կարծէր թէ կեանքն արդէն սպառելու մօտ էր, թոքերուն վեստուելէն համարելով այն հազը և արիւնը, և յայտ չունէր մինչև առաջիկայ գարունը հասնելու: Մխիթարայ պերճախօսութիւնն և տկարութիւնն առ ժամեւ լոեցուցին զանոնք. բայց երբ եկաւ գարունն և տեսան որ նա զօրացած և առօղջացած էր բոլորովին, ամէն կոզմէ բարձրացան ձայները, որոնց շկրցաւ զիմաղբել: Օրերով առաջ նախ քան

ձեռնադրութիւնը, որ կատարուեցաւ 1696ի գարնան<sup>1</sup>, առանձնացաւ սենեկին մէջ, աւելցուց ճգնութիւններն և ազօթքները, և քահանայական աստիճանին բարձրութիւնն իրեն խորհրդածութեանց նիւթ առաւ: Քսան տարեկան էր՝ երր քահանայ ձեռնադրուեցաւ. Հանդէսը շատ չքեղ եղաւ, եկեղեցին խոնած էր բազմութեամբ, ուր ներկայ էին այն ամէնքը՝ որոնք կը հանչային զՄիսիթար կամ իրեն դործերէն, կամ քարոզներէն և կամ համբաւէն. այնուհետեւ արեղայ կոչուեցաւ նա, ըստ ազգային սովորութեան: Տարօրինակ զուգագիտութեամբ մը Ծառուկն ալ մի և նոյն օրը քահանայ ձեռնադրուեցաւ:

Այն ժամանակէն մեծ կերպարանափոխութիւն մը տեղի ունեցաւ Միսիթարայ վրայ. Հանեց մոքէն առժամեւ արևմուտք անցնելու գաղտփարը, հասկնալով թէ այդ հանապարհով չէր որ օգտակար պիտի ըլլար իւր ազգին, որուն ազետալի վիճակն՝ իրեն սրտին մեծագոյն վէրքն եղած էր: Վ'ըմբռանէր նա իրեն բարձր և կարևոր զիրքը՝ զօր գրաւեց քահանայութեամբ, զատուելով ժողովրդեան զանգուածէն, որբազան պարտականութիւն մը ստանձնելով, որուն դըրժած պիտի ըլլար, եթէ վանքի մը ստուերներուն մէջ թաղուած, անգործ, աննշան կեանիք մ'անցունէր, առանց լուսաւոր հետք մը թողլու ետեւէն: Շատ զիշերներ, Ա. Կանի վանքին խցիկին մէջ ամփափուած Միսիթար, խօհերու մէջ ընկղմած, զիտելով պատուհանէն շրջակայ դաշտը կամ լեռները, — տեսարան մը՝ որ աւելի չքեղ և խորհրդաւոր կը դանար զիշերուան այն ժամերուն, — կը պատկերէր վագուսն երևակայութեան մէջ զինքը ըրջա-

1. Միսիթարայ կենազիրը միայն ձեռնադրութեան տարեթիւը կը նշանակէ, ոչ ամիսը և ոչ օրը. բայց հաւաքորէն ձեռնադրութիւնն եղած չէ ոչ Զատկէն տուած և ոչ ուշ քան Պետակոսուէի տօնը: Զենքադրողն եղած է տնօւշտ նոյն ժամանակի տօնանորդը Ա. Կանի վանքին, Առնակե եպիսկոպոս կեսարացի, որ բռնի ձեղելով աթոռէն զԱնանիս, ինքը յաջորդեր էր տեղը, հանութեամբ իրեն հայրենակից՝ Մատթէոս Սարի պատրիարքին, յամի 1692-4, որ յետ իրը ուժ տարի առաջնորդութեան, այն է յամին 1700: Հատ պարաք թողլով և եկեղեցւոյ ազգաւոց մաս մը հետք տուած թողուց քաղաքը և քախաւ, ինչպէս կը կարդանը Ա. Կանի վանքին կը մտի մէջ:

պատող թշուառութիւնը, խաւարը, ցաւերը և սպանացող ընդհանուր աւերածը, և սիրտը կը փղձկէր։ Կը մասձէր ազգին քաղաքական և հոգեոր առաջնորդաց անհոգութիւնը, վանքերու բարոյական քայքայումը, եկեղեցական հոգւոյ նուազումը, կրթութեան և զիտութեան ի սպառ անհետացումը։ կը կշռէր այդ բոլորն իրեն ընդարձակ մաքով, կը զգար իրեն մեծ սրտով, և կը խորհէր բնչպէս դարմանել։ Եւ ահա կը ցցուէին դիմացը հազարումէկ դժուարութիւնք, — խոշընգոտներ՝ ձախող ժամանակի պարագաներէն, արգելներ՝ ժողովը դեան անկազմ կացութենէն, հակառակութիւն՝ տգէտ և նախանձոտ առաջնորդաց կողմէն։ Խնքը, միայնակ, առանց քաջալերի, նեցուկի և ընկերաց, առանց դրամի, զրեանց, անձանօթ ամենէն, բնչպէս պիտի յաջողէր զրուխ հանել այդպիսի մեծ ձեռնարկ մը։ Ահատութեան վարագոյրը կ'իջնէր՝ կը փակէր տեսարանը, և ամէն ինչ կը ցնդէր զիշերուան լուսութեան մէջ։ Շատ զիշերներ կրկնուեցան այս տեսարանք։ և վերջապէս անդամ մ'ալ, երբ դարձեալ մի և նոյն խոչընդակներէն ահարեկած, մի և նոյն վհատեցուցիչ տագնապով մնչուած, կ'ազօթէր եռանդ ազին, յանկարծածագ լոյս մը շողաց մաքին մէջ։ — միարանութիւն մը հաստատելու գաղափարն ունեցաւ։ Այդ պիտի ըլլար միակ, յարմարագոյն և աւելան դարմանն այն բոլոր աղէտներուն։

Մխիթար ի բնէ ոժտուած այդ բանին կարեոր բոլոր ձիրքերով, — կերպերուն և վարման մէջ ձգիչ բան մ'աւնենալով, խօսքերուն մէջ՝ համոզիչ ուժ մը, — վանքին մէջ կեցած՝ բոլոր ժողովուրդն իրեն կը քաշէր. և օրէ օր երթեեկն աճելով, ստիպուեցաւ թօղուլ առանձնացը և քաղաք երթալ։ Շատերը յօրդորաւած իրեն քարոզներէն և խրառներէն, ոչ միայն կը թօղուին իրենց թիւր կարծիքները, այլ և աշխարհիկ կեանքը, և անօր շուրջը խըմքուած՝ կը փափաքէին աշակերտիլ իրեն։ Կա զանոնք միայն կ'ընդունէր, որոնց վրայ կը տեսնէր հաստատամութիւն և կրօնաւորական կոչման հոգի. որպիսիք էին երկու սերաստացի պատանիք Յովհաննէս և Յովուէփ, որոնք առաջին աշակերտներն եղան Մխիթարաց։ Այն օրերը պատահ-

մասմբ ձեռքն անցաւ Թուվմ. Գեմրացւոյ ընծայուած «Յաղագս նմանութեան Քրիստոսի» ուսկեզէն զրքոյկը; որուն ուրիշ օրինակ չունենալով, երկուքի բաժնեց և մէկ մասը Յովհաննէս աշակերտին տուաւ որ կարդայ: Այդ զրքին մէջ դուաւ Մխիթար կրօնաւորութեան ճզրիտ նկարագիրը, հասկցաւ թէ ինչ բանի մէջ հաստատուած է ճշմարիտ առաքինութիւնը, զգաց թէ ո՞րչափ քաղցր է Աստուծոյ ծառայութիւնն, և ո՞րչափ ընդունայն՝ աշխարհի սէրն և սփոփանք, որոնցմէ ազատ էր արդէն սիրոն: Մի և նոյն տպաւորութիւններն ունեցաւ նաև Յովհաննէս պատանին, որ անխոհեմ գտնուելու շափ եռանգուն, հակառակ Մխիթարայ տուած խրատուց, հանեց վրայէն աշխարհիկ սերձ զգեստներն և հազաւ ցնցուտիներ, ինդինքը հոգեւոր կրթութեանց և մահացուցմանց տալով, որով ծնողաց և ազգականաց ուշադրութիւնը զրաւեց. և այս կերպով յոշկամս՝ զրգուեց ատելութեան հոգին իրեն և Մխիթարայ դէմ: Դոյն ժամանակի արեղայք իրենց անկարդ վարուք, ինչպէս ըսինք առաջ, արհամարհ և զգուելի դարձուցեր էին աշխարհականաց աշքին կրօնաւորական վիճակը. այս էր պատճառն՝ որով ծնողք կը հակառակէին իրենց զաւակաց կրօնաւոր ըլլալուն: Իսկ և իսկ բոլոր քաղաքին մէջ տարածուեցաւ լուրը, թէ Մխիթար արեղայն կ'ապատամբեցնէ տղայթը իրենց ծնողաց դէմ, խռովութիւն կը ձգէ ընտանեաց մէջ, «Փռանկ կ'ընէ մեր որդիքը», և այլ նման բացատրութիւններ: «Քաղաքին մէջ իրարանցումը սկսաւ. Մխիթարայ ունկնդրաց թիւը նուազեցաւ զգալի կերպով, անոր առջև փակուեցան տանց գաները, և ծնողք կը զգուշացնէին իրենց որդիքը: Ի սկզբան այդ լուրը մեղմ հօգի նման ծաւալեցաւ, բայց երթալով փոթորկի փոխուեցաւ: Անզամ մը Յովհաննու մայրն և ազգականք Մխիթարայ վրայ յարձակեցան, և սպառնալեաք կը սախուղէին զինքը՝ համոզել պատանին որ կրօնաւոր չըլլայ և աշխարհական վիճակ ընտրէ, արդէն նշանուած ըլլալով. Հազիւ կրցաւ ազատել ինքզինքն անոնց ձեռքէն: Խոհեմութիւն չէր այնուհեան իրեն հան մեալն, հարկ էր փախչիլ, ծածկուիլ առ ժամանակ մի, մինչև որ փոթորիկն հանդարտէր: Մխիթար ընելիքն իմացուց աշակերտին,

թողուց Աերաստիա քաղաքը, և զնաց Եւդոկիոյ կողմերը քարոզելու. ասով պատանւոյն ալ փորձ մը պիտի ըլլար, թէ հաստատո՞ւն էր արգեօք մտքին վրայ: Յովհաննու ծնողըն ուրախութեամբ ընդունեցան Միսիթարայ հեռանաւուն լուն լուրը, և ի զործ դրին ամէն հնարք փոխել տալու պատանւոյն միտքը. բայց ի զուր: Երեկի աշխարհականներ և եկեղեցականներ անոր առջև դրին ամէն տեսակ դրժուարութիւններ, հրապոյրներ, փայլուն խոստումներ, որոնք կրնային փորձ կրօնաւորի մ'անդամ զեղեկելու պատճառ ըլլալ. բայց նա մեաց անտեղիտալի, և կասկածելով ուրիշ նորանոր թակարդներէ, որոշեց փախչիլ Ակնայ զաւառը, ամէն վտանգէ ազատ մեալու համար: Նախ, իրեն Յովհակի ընկերոջ հետ խորհրդակցելով, բարեկամի մը տան մէջ պահուըտեցաւ, խնդրակներուն ձեռքը շինկնալու համար. բայց հոն ալ բոլորովին ազատ շըլլալով վտանգէ, ի զործ դրաւ իրեն նախկին մտածութիւնը: Այս դէպքու աւելի ևս զրգուեց Միսիթարայ հակառակորդները, որոնց մէջ ամենէն աւելի կատաղին էր Ծառուկ արեղան, որոնք ամէն տեսակ զրպարտութեամբ արատաւորեցին անոր անունը. բայց նա հեռու ըլլալով, մինչև իրեն չէր հասներ փոթորիկը: Երբ ոչ մէկ կօգմէ յոյս չկար հանդարտութեան, ծածուկ աջ մը ուրիշ կերպարանք տալով զործին, զգաստացուց զամէնքն ալ: Նոյն ժամանակները Ծառուկ արեղան, ցաւալի հանդամանաց մէջ, յանկարծամահ եղաւ. երբ նա Աերաստիայէն իրը չորս ժամ՝ հեռու դտնուած չերմուկները գնացած էր ընկերներով, խոր աւագանի մը մէջ լոգանալու պահեւն խեղդուեցաւ, ոգնութեան հասնող մը չի գտնուելով: Այս աղետալի դիպուածս տիսուր տպաւորութիւն մ'ըրաւ բոլոր լսողաց վրայ, և Աստուծոյ պատիժ մը կը համարէին, որոնք որ տեղեակ էին անոր վարուց և Միսիթարայ դէմ ունեցած ատելութեան: Երկու ամիս վերջը, երբ սակաւ մի հանդարտած էին ոգիները, Միսիթար գարձաւ ի Աերաստիա: Որչափ փոփոխութիւն սակաւ ժամանակի մէջ. հակառակորդք, բոլորովին լուր էին, Ծառուկն չէր երեկո՝ ոչ քաղաքին և ոչ վանքին մէջ. քանի մ'օրէն ամէն բան խմանալով մանրամասն, իրեն որտին մեծ կոկիծ եղաւ, մանաւանդ

այնպիսի մաշ մը։ Յովհաննէս պատանին ևս չէր երեկը, որուն ծնողըն լսելով Մխիթարայ դարձն ի Աերաստիա, եկեր իրմէ կ'ուզէին իրենց որդին, կարծելով թէ անոր խորհրդով փախեր էր, մինչ ինքն բնուա տեղեկութիւն շռւնէր։ Օր մը բարեկամներէն մին իմացնելով՝ թէ իրեն տան մէջ պահութած էր Յովհաննէս պատանին, զնաց զառւ զինքը, և անորմէ լսեց թէ Յովհաննէս Ակնայ կողմերը փախեր էր. ևս դարձուց զինքը և ծնողաց ձեռքը յանձնեց, օրու զի իրեն վրայ չի կատկածին և զործին արգելք ըրլան։

Այս առաջին գժուարութիւնն որ եղաւ Մխիթարայ զործին առջև, թէ և չկասեցուց զինքն իրեն դիսաւորութենէն, բայց պատճառ եղաւ թողու ծննդափայրը և ուրիշ տեղ երթալու, աւելի նպաստաւոր պայմաններու մէջ, իրականացնելու իրեն մեծ մասաւթիւնը։ Դեռ երեք տարւոյ չափ վանքէ վանք և աշխարհէ աշխարհ պիտի չընեցնէր նու իրեն հետ այդ մեծ զադափարը, մինչեւ որ զնէր անոր առաջին քարը. և այն ևս սակաւ ժամանակի համար, որովհետեւ նորանոր հալածանաց և արկածից ալիքներ պիտի մղէին առանէին զինքն և իրեն հիմնած չենքը զեռ աւելի հեռուն, օտար աստղերու ներքեւ, մինչեւ որ զանէր իրեն վերջին դադարը։ Եւ Մխիթար չի լքու, չընկնուցաւ, իրեն երկաթի կամքն մնաց անփշրելի ու և է հարուածի ներքեւ. զարմանալի տոկունութեան մը հետ, որ մեծ մարդոց առաջին յատկանիշն է, ունէր ձկուն բնուուրութիւն մը, որով գիտէր ինքզինքը յարմարցնել պարագայից։ Գաւառներէն կարելով յայտը, զարձուց աշքը դէպ ի Պոլիս, իշխաղ պետութեան մայրաքաղաքը և միանգամայն հայ ազգին բարդաւաճ և ազգեցիկ մասին կեղրոնը։ Լսեր էր Կարնեցի Խաչատուր վարդապետին համբաւը, որ այն ժամանակ Պոլիս կը գտնուէր. նա, Եւրոպայի մէջ ուսած և զարգացած, աշակերտ Ուրբանեան վարժարանին, կիրթ և լուսաւոր միաք մը, մեծ յուզում կը պատճառէր մայրաքաղաքին ազգայնոց մէջ իրեն համարձակ, կորովի և հմուտ քարոզներով։ Մխիթար որոշեց երթալ զտնել զինքը, յայտնել անոր իրեն զիտաւորութիւնը, և միաբան զործակցութեամբ կատարել այն իրը, զոր Աստաւած ազդեր էր իրեն. այն է, ուսեալ և եռանդուն քարոզիչներ

պատրաստել, հայ ազգը լուսաւորելու համար կրօնքով և զիտութեամբ։ Աս յանդգնութիւն կը համարէր միայնակ ձեռնարկել այնպիսի գործի մը, զոր իրեն կարողութենեն շատ վեր կը դանէր։ Ուստի հեռացնելով իրմէ այն ամէն իր կամ անձն, որոնք կրնային խոչընդակ մ'ըլլալ գործին, և այնուեղ թողլով Յավհաննէս աշակերտը, զոր քաջալերեց իւր եռանդուն շնչովն, որ յետ համոզելու ձնողքը՝ դայ գունէ զինքն ի Պոլիս, տուաւ հրաժեշտի ողջոյնն ընտանեաց, ծանօթից և բարեկամաց, և հանապարհ ելաւ դէպ ի Պոլիս։

Միիթար առաջին անգամ ոտք կը կոխէր սուլդաններուն մայրաքաղաքը, 1697 թուականի ապրիլ ամսոյն։ Վաս- փորի ափանց վրայ դշխոյօրէն բազմած այդ դիւթական քաղաքը, — ժխորի, առեւտուրի և զանազան ցեղերու ազ- գայնութեան և կրօնից պայքարի տեղը, արևմուտքի և արեւելքի քաղաքականութեանց և սովորութից իրարու շըփ- ման վայրը, ուր բիւրաւոր մարդիկ՝ ապրելու, հարաստ- նալու, բարձրանալու և վայելելու տենդէն բռնուած, կե- նաց ահազին եռում մը և գործոնէութիւն մը յառաջ կը բերէին, — ի սկզբան շատ անախորժ տպաւորութիւն ը- րաւ Միիթարայ վրայ, որ մինչև այն ժամանակ զրեթէ վանքերու շրջապատին մէջ փակուած և միայն զաւարի կեանքը տեսած, յանկարծ կը դանէր ինքզինքը մեծա- դորդ ոլորտի մը մէջ։ Տեսաւ հոն անձնական շահերու և իրաւանց բռնու մաքառումը՝ ընդ մէջ ընիկ տեղացւոյն և զաւառացւոյն, զձուձ և գոեհիկ կրքերու իրարու դէմ բախումը, ընտանեկան գժտութիւնները, ազգակցաց՝ մէկ- մէկու դէմ լարած մեքենայութիւնները, նղճիմ ոգիներու դէմ ընդ դէմ միացող քէնը և զիրար տապալելու անարդ հիգերը, — տեսաւ հոն ազգին հարուստները և ամիրա- ները, որոնք հոխութեանց և փառաց ետեէ միայն զակա- տած, հազիւ արհամարհոս նայուածք մը կը ձգէին իրենց- մէ ստորնագունից վրայ, — փառամոլ առաջնորդները, ո- րոնք զգեստէն զատ՝ եկեղեցականութեան ուրիշ ոչինչ չունէին, և իրենց յանձնուած պաշտօնը շահագործել միայն զիտէին ի յագուրդ իրենց անձնասիրութեան։ Այս բոլորը ստատիկ ճնշում մը գործեց Միիթարայ վրայ։ Այն ժա-

մանակները Յոմանեան պետութեան կը գահակալէր Մուս-  
տաֆա Բ (1695 - 1703), որ իրեն թագաւորութեան ա-  
ռաջին տարիներն արիւնոտ պատերազմներու մէջ անցուց  
ընդդէմ Աւատրիացւոց, Հունգարիոյ կողմերը, որոնք գա-  
զրեցան վերջապէս Կարլովիցի նշանաւոր հաշտութեամբ,  
1699 տարւոյն յունուարի 26ին ։ Խոյն միջոցին՝ Պալայ  
Հայոց պատրիարքական աթոռին վրայ կը նստէր, եր-  
կրորդ անգամ բարձրացած, Եփրեմ Պափանցին, որ Միս-  
թարայ Պոլիս հասնելէն ամիս մը վերջը, մայիսին մէջ,  
աթոռանկ ըլլալով աքսորուեցաւ իրեն դաժան բնաւորու-  
թեան պատճառաւ, որուն յաջորդեց Մելքիսէթ Ուուչի ։

Մխիթար՝ առաջին օրէն իրեն բնակավայրը ընտրեց Պալաթիոյ կողմը, ուր Ա. Լուսաւորիչ <sup>4</sup> եկեղեցւոյ խցիկներէն միոյն մէջ իջևանեցաւ։ Հոն մտերմացաւ շուտով եւրոպացի կրօնաւորաց հետ, մանաւանդ գաղղիացի Յիսուս սեանց, որոնք Ղալաթիոյ մէջ վանք մ'ունէին <sup>5</sup>, և ամէն օր անոնց եկեղեցւոյն մէջ կը պատարագէր։ Մխիթար բռնը կենաց մէջ, ուր օր զնաց, ամենէն սերտ բարեկամները օտարներուն մէջ գտաւ. ինչպէս ի Բերիա, այսպէս ալ ի Պոլիս, լաւագոյն խորհուրդները լատին կրօնաւորք տուին իրեն։ Ընդարձակ հայեացքներով ճոխացած միտք մը, որպիսի էր Մխիթար, չգիտէ փակուիլ նեղ սահմաններու մէջ. գարմանալի քաջութեամբ մը ընդունելով ցեղական կանխակալ խորութիւնները, գործելու լայն ասպարէզ մը բացաւ գիմացը։ Խամբրոնացւոյ կաղապարին վրայ ձուլուած, անօր սրախն կրակով վառուած, անօր ըլքեղով մտածող մ'եղաւ Մխիթար, որ ո գոնոտի աւանդութիւնն զիտութեամբ արհամարհեալ, զոէրն նախապատռէր. և է

Դ. Կարլովից (Carlowitz) փոքրիկ առանք մէ Աւրատին քաղաքին մատերը, Պահուութիւ ոչ սփին վրայ շինուած. այս առանքին մէջ դրույցն և հաստատեցուն յիշեալ հաշտութեան պարմանելուն:

2.  $\prod_{k=1}^n \{a_k b_k\} = \prod_{k=1}^n a_k \cdot \prod_{k=1}^n b_k$ .  $\text{LHS} = \prod_{k=1}^n a_k \cdot \prod_{k=1}^n b_k = \text{RHS}$ .  $\square$

5.  $\frac{Q}{2}$  and  $\frac{P}{2}$  have the same  $\lambda$ -value as  $\lambda_{\text{max}}$ , i.e.,  $\lambda_0$ . *H*: 727.

4- Առաջ եկեղեցից ու շինութիւններու է յամին 1536, կուս ունեցած թիւնութիւնից հաջող գումառականից մը ձեռցավ (Խաչքար, Եպիսկոպոս, Հայ. Եպ. 183, կենտրոնիկ, 1805):

3 - Hbq - 57 (84-5)

ինձ հայն, կը կրկներ անոր նման, որպէս զլատինացին, և լատինացին՝ որպէս զնելինացին<sup>1)</sup>: Այսպիսի ընդարձակ մռաքեր որչափ սակաւագիւտ երևոյթներ են մեր պատմութեան մէջ:

Նա՝ իրեն միակ զօրծին մտաղիք, զնաց տեսնելու խաչատուր վարդապետը. լսեց անոր քարոզները, որոնք կ'արդարացնէին ըստ ամենայնի լսուած համբաւը. դա՝ իրեն միակ փնտառծ անձնն էր. Այդ երկու որտերն, որոնք զզացմանց մէջ այնչափ կը նմանէին իրարու, առաջին իսկ տեսութեամբ այնպէս ոերափի կապուեցան միասին, որ այնուհետեւ ոչ մէկ դէսք կամ պարագայ կարող չեղաւ խզելու այդ կապը. մէկ բանի մէջ միայն տարակարձէք գտնուեցան անոնք, ինչպէս պիտի տեսնենք, և այդ երկուքին ալ պատուաբեր եղաւ: Օր մը, յարմար առթիւ, Մխիթար յայտնեց Խաչատուր վարդապետին իրեն զիսաւորութիւնը. « Աբանչելի մտածութիւն մ'է այդ, պատասխանեց վարդապետը, բայց զժուարին և անիրազործելի՝ անհամար գժուարութեանց պատճառաւ, որոնց պիտի բախէր առաջին իսկ քայլէն. և այդ գժուարութեանց մեծագոյնն էր պակասութիւն դրամի, որ անհրաժեշտ պայման մ'էր զործին յաջողութեան»: Մխիթար, որ հեռի էր ո և է փառասիրական ձկտումներէ և միայն ազգին օգուտը կը զիտէր, նոյն իսկ առաջարկեց՝ որ վարդապետն ըլլայ զործին զլուխը և առաջնորդը, իսկ ինքն պարզապէս զործակից մ'իրեն. այլ Խաչատուր վարդապետ, հակառակ Մխիթարայ այնչափ յորդորներուն և թախանձանաց, կըրկնեց հաստատապէս իրեն ոչը, բացէ ի բաց հրաժարելով այնպիսի մեծ և գժուարին ձեռնարկէ մը: Ո՛վ ալ ըլլար՝ նոյնը պիտի խորհրդածէր և պատասխանէր, նկատելով մանաւանդ ժամանակին և ազգին հանդամանքները: Յաւեցաւ Մխիթար այս անյաջողութեան վրայ, տեսնելով որ զարձեալ ամուլ արդիւնքներ միայն ունեցան իրեն այնչափ աշխատութիւնք, բայց չի լքաւ. Իրեն այս առաջին զալուստն ի Պոլիս՝ եթէ ուրիշ օգուտ մ'ալ չունեցաւ, զոնէ ծանօթացաւ ազգին զլիսաւորներուն, և յանզէտո գը-

բաւ հիմք այն գործին, որ մարդկորեն անյաջողութեան երեսյթն ունեցաւ : Եւ մինչ նա այս մտահոգութեանց մէջ ընկզմեր էր, անգին Աերաստիոյ մէջ Յովհաննէս պատահին, յաղթելով ծնողաց դիմադրութեան, ձանապարհ կ'ելնէր դէպ ի Պոլիս՝ զինքը գտնելու . նոյն միջոցին ուրիշ երիտասարդ մ'ալ, Յովհան անուն, Միսիթարայ հոգեշահ խօսքերէն շարժած, թողուց ծնողքը, տունը, աշխարհիս վայեցները, և իրեն աշակերտեցաւ, որ յետոյ քահանայ ձեռնազրուելով՝ Հ . Մանուկէլ կոչուեցաւ :

Մեծ քաղաքաց մէջ ու և է դէպք կամ զրոյցք աւելի երադ կը ծուալին և ահազին արձագանգ կը գտնեն՝ քան այլուր : Դեռ ամիս մը շանցած, ամէն հայու բերանն էր Միսիթարայ անունը, և ամէն կողմ անոր առաքինի վարքն և պերճախօսութիւնն կը հոչակուէր զրուատեաք : Անուվոր երեսյթ մ'էր՝ տեսնել գաւառացի վանական մը, որ առաջին անգամ թողած գտաւաները, այնքան աղմուկ կը հանէր մայրաքաղաքին մէջ, ուր ամէն մարդ հիացմամբ և տեսակ մը գուրգուրանքով կը ըրջապատէր զինքը : Եւ կը հրաւիրուէր մեծամեծներէն՝ տունները և եկեղեցիները, և ամէն աեղ երկիւզած յարգանքով կը լուսէին անոր խօսքերն . և երբ կը քարոզէր, — ընդհանրապէս Պալաթիոյ Ա . Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, — այն խուռն բազմութեան փափր կու գար եկեղեցին, մինչ ուրիշ ժամանակիներ ամայի կ'ըլլար : Վարուց և կրօնական գաղափարաց մեծ յեղաշրջութիւն մ'է որ տեղի կ'ունենար անոր լուսաւոր և վառվառն խօսքերով, որոնք այնպիսի օծութիւն և ուժ մ'ունէին, որ կարելի չէր շյուզուիլ և շհամոզուիլ ի լուր անոնց : Անոր քարոզները լի էին Ա . Գրոց և Ա . Հարց վկայութեամբք, վայելչորէն հիւսուած իրարու չետ, որոնք հեղեղաբար կը հոսէին բերնէն ի հաստատութիւն վարդապետած ձշմարտութեանց : Ժողովրդեան խանգավառութիւնը այրայեղութեան կը հասնէր, երբ բեմին վրայ կը տեսնէին հազիւ քսանամեայ նորընծայ արեղայ մը, վայելուշ հասակով, կայտառ և շնորհալի դիմոք, համեստ շարժուածներով և հասուն ծանրութեամբ մը, որ հազար ունկնդրաց ուշը և սիրտը զրաւած, կը բանար առջևնին երկնից բարձրութիւնները և կրօնից խորութիւն-

ները, կը գողացնէր մեղաւորները, կը շարժէր քարասիրտ հոգիները, կը սփոփէր վշտացեալները, կը փարատէր մըտքերէն մոլորութեան ստուերները, կը միացնէր ուժացեալ սրտերը խաղաղութեան և սիրոյ համբուրիւ, կը զգաստացնէր թռյերը և աշխարհասէրները։ Եւ այս ամէն բանը կ'ընէր՝ միայն Աստուծոյ փառքը և հոգւոց փրկութիւնը դիտելով, ի բնէ խոնարհամիտ, փառքէ փախչող և դրամի տառեցող մ'ըլլալով ինքն, որ ժողովրդէն դաւազանապառող անդամ չէր առնուր, հակառակ այն ժամանակի ընդունուած սովորութեան։ Այս ժամանակները Պոլիս կը հանէր Սիւրիոյ Յիսուսիանց առաքելութեան ընհանուր մեծաւորը, Հ. Յովհաննէս Ակրծոյ, արդէն Բերիա քաղաքէն ծանօթ Միսիթարայ և անոր մտաւոր և հոգեկան ձրից գնահատողներէն մին, որ տեսնելով զինքը՝ քահանայ եղած, անխոնջ քարոզիչ մը ձմարտութեան, և բոլոր անձամբ իրեն ազգին վերածնութեան գործին նուիրուած, շատ ուրախացաւ, և Միսիթարայ խնդրանաց վրայ՝ ուրիշ վկայազիր մ'ալ տուաւ, 1697 տարւոյ յուլիսի 10ին, զովելով անոր ուղղափառ հաւատքը և առաքինի վարքը։

Միսիթար հինգ ամիս միայն մետաց ի Պոլիս, պատիւներու և զովեստից գափնիներու ներքեւ ծանրաբեռնած, բայց իրօք ուրիշ հոգերու ներքեւ ճնշուած։ վասն զի յետ շատ անդամ փորձելու դարձեալ՝ Խաչատուր վարդապետի և ուրիշներու աջակցութիւնը խնդրել ի նպաստ իրեն ձեռնարկին, տեսնելով որ իրրե և ձայն բարբառոյ յանապատի և մեացին իրեն խօսքերն, որոշեց ետ դառնալ նորէն, երթալ Կարնոյ մօտ գտնուած Օլթի գաւառը, որուն ըընակիչք մեծաւ մասամբ հայազգիք էին, և հոն օգնութեամբ իրեն ծանօթ քահանայի մը, որ առաքինի և ուղղամիտ անձ մ'էր, աշակերտներ ժողվելով և քարոզութեան կարեւոր բաներն ուսուցանելով, հիմնարկել իրեն մտարերած զործը։ Աակայն գրամի պակասութիւնն այս անդամ ալ ծանրացաւ վրան։ նա, որ բարեպաշտից ողորմութեամբ կ'ապրէր այն հինգ ամիսը որ Պոլիս մեաց, և իրեն շափաւոր կերակրոյն յաւելուածով աղքատները կը կերակրէր, այժմ իրեն և երկու աշակերտաց հանապարհի ծախուց համար դահեկան մ'անդամ չունէր։ Նա սովոր

էր ընդհանրապէս երեկոյները հացագործներէն միոյն կամ միւսոյն տունը երթալ, ուր կը հաւաքուէին բոլոր արուեստակիցք, և անոնց հոգեոր խրատներ կը խօսէր: Պողոէն մեկնելէն քանի մ'օր առաջ, զիշեր մը նոյնպէս անոնց տունը գնաց, ուր յետ հոգեոր զրուցատրութեան, իմացուց թէ պիտի թողուր զիրենք և զաւառները դառնար. անոնք այնչափ յուզուեցան անոր խօսքերէն, որ չկարենալով ուրիշ կերպ բացատրել իրենց կակիծը և երախտագիտական զգացումները, զրամի չափաւոր գումար մը զրին ձեռքը, զիտնալով թէ նա աղքատօրէն կ'ապրէր և կրնար զրամի պէտք ունենալ այնպիսի երկար ճանապարհորդութեան մը համար: Միսիթար այն զրամով ոչ միայն իրեն և աշակերտաց ճանապարհի ծախքը և կարևոր պէտքերը հոգաց, այլ և Աստուածաշունչ մը, որինակ մը թողմ. Գեմբացւոյ զրբին և ուրիշ հոգեոր զրբոյներ և պատկերներ զնեց՝ հետը տանելու համար ի միսիթարութիւն իրեն և բարեպաշտներու սրտին: Լալազին տուաւ հրաժեշտի ողջոյնը ծանօթներուն և բարեկամներուն, յանձնեց ինքզինքը Աստուծոյ և Տիրամօր խնամոց, և նաւ մտնելով՝ մեկնեցաւ դէպ ի Տրապիզոն երկու աշակերտներով, 1697 տարւոյ սեպտեմբերին վերջերը: Այս անգամ իրեն ուզեռութեան ծրագիրն էր ուղղակի Կարին գնալ, Տրապիզոնէն անցնելով, առանց հանդիպելու ի Աերաստիա:

## ԳԼՈՒԽ Է.

Կր մեկմի գէսի ի Տրապիզոն, Օլթի գաւառն երթալու և Յոն Հայութատիւնութիւնը. — Աէկոնծութիամ համդիպելով ցամաք կ'ելմէ ի Սամսոն. — Կը քարոզէ Մարտուամ և Ամասիա քաղաքթերում մէջ. — Հասմիկով ի Կարիս, կը թողու Օլթի երթալու խորձուրդը, և Կարմիր գամբը կ'երթայ. — Նոյն գամբի առաջնորդ Մարգար հափսկոպուէն կ'ըմղունի գարզապիտակոն գաւազամ. — Կը յայտնէ վաճանօր իրեն միտքը և տմոր աշակցութիւնը կը խնդրէ. բայց մի յաջողիր. — Կարմոյ մէջ քարոզելով կաթողիկէ հաւատքը, քաղաքին առաջնորդն կը թշմամայ իրեն դէմ. — Կը թողու վերջնապէս գաւառները և երկրորդ անգամ կը դառնայ ի Պոլիս:

**Յ**ետ խաղաղ օդով մեկնելու Պոլսոյ նաւակայքէն, և յաջողութեամբ կտրելու Վոսփորի նեղուցը, երբ հազիւ թէ Աև ծովուն մէջ մտան, փոթորկի մը պատրաստութիւն սկսաւ. Հովը սաստկացաւ, ծովը կ'երերար ուժ գնորէն, այնպէս որ հովերու բռնութենէն և ալեաց բախումէն՝ նաւն ընկդմելու վտանգի մէջ էր. ներսն ալ ժանտախտը սոսկալի կոտորած կ'ընէր նաւորդաց մէջ, և Միսիթար իրեններով կը տառապէր այդ երկու ահաւոր վտանգներուն մէջ, Քանի մ'օրէն, Աստուծոյ խնամօք, Հերակլիոյ<sup>1</sup> նաւահանդիսաթը հասնելով անվտանգ, Միսիթար և իրեններն փութացին ցամաք ելնել: Քանի մ'օր ծովափին վրայ սպասելէն վերջ, նաւակ մը տեսան հոն որ Տրապիզոն պիտի երթար, և մտածելով որ այնպիսի նաւակներ եղերքէն չեն

1. Երեկոկ կամ Հերակլիու պոնտուկան, ամենէն հշանեաւոր քաղաքն է արեւելան Բիւթանիոյ, մեզարացի գաղթականութիւնն մը. Պատշաճութան հրաւանդանին մտաւ: Հոսվայեցիք այրելով Մինուտական պատերազմին մէջ, աւարեցին և կործանեցին զայն:

Հեռանար, որով մրրկի ժամանակ կրնան դիւրաւ ցամաքին մօտենալ, Մխիթար մէջը մտաւ իրեններով և ուրիշ մի քանի ուղեկիցներով, և մեկնեցան գէպ ի Տրապիզոն։ Անզգալի կերպով սկսաւ նաւակն հեռանալ ցամաքէն, հողմուռոյց առագաստներով կը կտրէր ծովուն ալիքները, կը սահէր, երբ հանդարտօրէն շնչող հովն, որ յաջողութիւն կը խոստանար նաւաստեաց և ուղեսրաց, յանակնկալս սաստկանալով, առաջինէն աւելի սարսափելի մրրկի մը փոխուեցաւ երեկոյեան գէմ, որ բոլոր զիշերը տեսց։ Այս ահաւոր ալէկոծութիւնը, որմէ զրեթէ հրազով ազատեցան, կենդանի գոյներով կը նկարազրէ ինքն իսկ Մխիթար իւր մէկ երգին մէջ, որ կը սկսի, «Վիրաւորեցայ մեղաք» և այլն, որուն բացատրութիւններով է որ կ'ուզեմ ևս ալ պատկերել գայն։ «Հեռացաւ նաւահանգիստն և ոչ տեսանի», կ'ըսէ, և նաւակն, հովերուն և ալիքներուն ձեռքը մատուռած, ասդիս անդին կը տարութերէր.

«Ալէկոծեցաւ նաւն իմ հողմովըն շարին,

ի մէջ ալեաց մրըրկեալ կայ յերեմանի».

Երկինք սև ամպերով կը ծածկուի, կ'որոտայ, կը փայլաւալէ.

«Պատեաց խաւար զիշերոյն, լոյս ոչ տեսանի...

Փայլակըն փայլատակէր հընչմամբ սոսկալի,

իրեւ ըզլոյս երեկը, բայց էր հըրով լի.

մեծագին ձայնիւ գոչէր յոյժ զարհութելի»....

Վերը՝ ամպերն կը կռւեին, կը բախին իրարու, կը փշրին. ծովուն մէջ՝ կոհակները մրմալով իրարու գէմ կը խուժեն, կը փշրին և կը փրփրան. խեղճ նաւակոծելոց սիրտն ալ կը փշրի անոնց բախումէն և մանչիւնէն.

«Հընչէր հողմըն սաստկագին՝ վարէր զամպն երկինի, մասախուզ ամպոյն ծածկեալ էր զերեսս երկրի.


ես փարրիկ նաւ նըստեալ՝ կամ ի մէջ ծովի...

առագաստը նաւին հողմով պարզատին».

ոչ մէկ կողմ ցամաք չերեխիր, ոչ մէկ սատղ, ոչ մէկ լոյս. ահաւոր վայրկեան մ'է, ամէնքն ալ յուսահաստարար մահուան կը սպասեն։ Միայն արխաօիրուն Մխիթար, նաւակին մէկ խորչին մէջ ծնրազրած, կ'աղօթէ անայլայւակ, կը քաջալերէ զամէնքն ալ՝ չվախել և Աստուծոյ

\*Hongqili





վրայ յուսակ : Նաւավարք, համարելով թէ մօտերը ցամաք կայ, կը դոչեն մեծաձայն՝ որ իմանալով մարդիկ իրենց վտանգը՝ ձայն տան կամ լոյս մը ցուցնեն, նաւակն այն կողմը ուղղելու համար .

Ա Նաւավարքն աղաղակեն ձայնիւ ողբալի .

զուցէ լուիցեն մարդիկ նաւահանգըստին ։ :

Եւ յիրաւի լոյս մ'երևացաւ հեռուն . նաւավարք սիրա առած՝ այն կողմը ուղղեցին նաւակը, և Աստուծով ամէնքն ալ աղատեցան և ցամաք ելան ուրախութեամբ .

Ա Տեսեալ բզոյսոն՝ ուղղեցին զնաւն ի ծովի .

Հնորհիւ կուսին բերկրեցաւ սիրտն իմ ցաւալի ։ :


Կեռ երկու օր տեսեց հովին, և Մխիթար հոն մնաց իրեն ուղելիցներով, խարխլած տնակի մը մէջ, տեղատարափ անձրեին ներքեւ, ուր մեծ խարոյկ մը վառելով, տաքցան և զգեստնին չօրցուցին : Երբ հանգարտեցաւ ծովը, նաւեցին զարձեալ՝ առանց հեռանալու ժովափին, և այս անգամ առանց մրրիկի հասան Սինոպի նաւակայքը, ուր Տրապիզոն զնացող նաւ չի գտնելով, և ծովն ալ տակաւին սպանեալից, փոխեց Մխիթար իրեն ուղեգիծը, և փոխանակ Տրապիզոնի՝ Սամսոն գնաց, անկէ ալ ցամաքով Մարտուն քաղաքը, ուր հասաւ 1698 տարւայն սկիզբը :

Մխիթար առաջին քարոզով իրեն ձգեց Մարտունցւոց սիրտը, որոնք իրեն երկնից պատգամաւոր մ'ընդունեցան զինըը : Նա ուր որ կոխէր, հոն կը փմթէին հոգեոր կենաց ծաղկունք, որոնց փոխարէն կը քաղէր ինքը ոէր և յարդանք : Չմեռն իրեն սաստկութեամբ փակեր էր ճանապարհները . բայց Մխիթար չէր ուզեր շեղիլ իրեն ծրագրած ուղեցուցէն, որուն համեմատ՝ հարկ էր իրեն սահմանած տեղն ըլլալ՝ նախ քան հասնիլը զարնան : Քաղաքին առաջնորդն և բոլոր հայ ընակիչք, իրենց թախանձագին ստիպումներով համողեցին զինքն՝ որ այնպէս շուտով չի թողու զիրենք . նա զի՞ւռ զոնէ ձմեռն հոն անցունել : Ամիս մը քաղաքին մէջ, և ամիս մը մօտակայ վանքին մէջ բնակեցաւ, որուն առաջնորդն վագուց ծանօթ էր իրեն : Եւ այսպէս, կը սփուր զիխաւոր կեղբոններուն մէջ կաթողիկէ կրօնից սերմանքը, որոնք յետոյ պիտի պաղաքերէին իրեն աշակերտաց անխոնջ ջանքերով : Հոս ալ իրեն քարոզներն ունեցան մի և

նոյն արդիւնքները՝ ինչ որ ի Պողիս, և իրեն համբաւն կը թռչէր իրմէտ առաջ, կը պատրաստէր մաքերը՝ յօժարութեամբ լսեյու քարոզներուն։ Մարտուանէն անցաւ յԱմափիա, — պատմական և սրբազն յիշատակներով ճօխ և մեծագործ հնութեամբք հաշակաւոր<sup>1</sup>, — ուր հնչեցնելով իրեն ազգու ձայնը, շատերը դարձուց յուղղութիւն, որոնց մէջ նշանաւոր եղաւ նոյն քաղաքէն տէր Յակովը քահանայն, որ մինչև վիրջը հաստատուն մնալով իրեն կրօնական համազմանց մէջ, առաքինութեան օրինակ հանդիսացաւ և ախոյեան մը ուղղափառ հաւատոյ։ Երբ գարունը հասաւ, Միսիթար հազիւ կրցաւ ազատիլ քաղաքացւոց ստիպութերէն, որոնք ոչ միայն իւր հոն մեալը կը փափէին, այլ և քաղաքին առաջնորդութիւնը կ'առաջարկէին իրեն։ Ինչպէս հովերն երբէք կանգ չեն առնուր, կը ստապալեն առջևնին պատահած արգելքները, կ'անցնին՝ կը սուրան, մինչև որ կատարեն իրենց շրջանը։ այսպէս ար Միսիթար կը դիմէ ուժզին, կը մղուի ներքին ուժէ մը, զոր ոչ մէկ բան կարող չէ կասեցնել ընթացքէն, մինչև որ հասնի իրեն դէմ զրած նպատակին։ Կա կ'ուղեարի յԵղոկիա, ուր չի մնար, կ'ողջունէ հեռուէն զԱերատիա, զոր այլ ևս պիտի շտեսնէ, և կ'ընկերանայ կարուանին դէպ ի կարին իրեն երկու աշակերտներով։


Գրեթէ վեցուկէս տարի առաջ (1691ի գեկտեմբերին), կ'ընէր նա այս մի և նոյն ձանագարհը, վառուած մեծամեծ յոյսերով, որոնք բոլոր ի գերեւ եղան։ Այս անզամ ևս յուսալից կ'երթայ ի կարին, ուր կը սպասեն իրեն նոյնպիսի անյաջողութիւնք. Նա կը զգայ թէ երթալով կը բարդուին դժուարութիւնը, որոնց հանդէս կարծես մօտ է բոլորովին նաւարեկելու, չի աեսնելով ո՛ւ և է նշոյ մը յուսոյ։ Զի մնաց տեղ մը, միջոց մը, անձ մը, որոնց շըդիմէր վերջին ճիզն է այս՝ զոր կ'ընէ, — մեկուսանալ

1. Ամափիա քաղաքը շինուած է երկու հանդիսակաց յերանց մէջ՝ կամ սուրբար, և միջնէն կ'անցնի խախ զետը, — Եւելլուց ու կոչուած թեուրքերէն, — որուն վրայ կը զանուին բազմաթիւ կամուրջք։ Իրեն գրից պատմուա, Միհրուա նոն բերդեր և ամրոցներ շինեց, որոնց մեսցորդը կամ մինչեւ ցարդ։ Ամափիա՝ հայրենիք եղած է Ասրաբան աշխարհուգրին և Ա. թէնդորոս զարտվարին։





Հայրենի աշխարհին մէկ անժանօթ կողմը, գործել ամփոփ շրջանակի մէջ առանձնակ ուժերով, հաւաքելով շուրջը տասնեակ մաշակերտներ, և այսպէս կաղմել կմախքը միարանութեան, որուն պիտի տային յետագայք մարմին, կեանք և բարգաւաճումն : Այս մտածութեամբ հասաւի Կարին, ուր իրեն բարեկամ Պօղոս անունով բարեպաշտ մարդուն տունը իջաւ : Խմացաւ հոն՝ թէ 0լթի զաւառին մէջ գտնուած իրեն ծանօթ քահանայն, որուն վրայ յուսադիր՝ ըրած էր այս երկար և տաժանելի ուղեւորութիւնը, չեղեր էր ուղղութեան ընթացքէն . այն ժամանակ ինքն




Կարսիր վամք .

ալ որոշեց փոխել իւր ընթացքին ուղղութիւնը և երթաւ կարմիր կամ Հնանց վանք<sup>1</sup>, Հինձք զիւղին մօտ և Կար-

1. Այդ վանքին Ա-շէր կոչուելուն պատճեան է, իրեն դմբեթաւոր եկեղեցւոյն, որ Ա-Աստուածածնի նուիրուած է, կարմիր քարերէ շինուած ՇՄալը : Այդ եկեղեցւոյ նախկին շինութիւնը՝ Ա-Նկրուէս Պարթեկ կընծայուէր . առ երբ, ըստ աւանդութեան, կաթողիկոս ձեռնու զրուած՝ կեսարիոյէն կը դառնար իւր աթոռը, հաս իրեն երկցաւ . Աստուածածին կարմրագոյն զգ հասներով, և այն յիշատուկաւ կարմիր քարերով շինուած է եկեղեցւոյն գմբեթն : Այժմու եկեղեցին կրկին մեծութիւնն ունի Առասուրկուի Ա-Առաւորիչ եկեղեցւոյն, երեք խորաններով և շորս կողմը կամարներով, որոնց վրայ կը բարձրաւոյց կարմրա-

նէն երեք ժամուան ձանապարհ հեռու, լսելով թէ անոր առաջնորդն, Մարզար եպիսկոպոս, ողջամիտ և բարեսիրտ անձ մ'էր։ Վայրկեան մի արծարծեցաւ գարձեալ իւր առ կայծ յոյժն, մտածելով՝ որ եթէ յաջողէր համոզել այդ եպիսկոպոսը, պիտի ըլլար իրեն մեծագոյն նեցուկը՝ զիւրաւ հասնելու իւր դիտած նպատակին։ Ի ոկրան, առաջնորդին մտքին մէջ ո՛ւ և է կասկած մը չարթընցնելու համար, ամեն կարելի զգուշութիւն ի գործ զրաւ։ իրեն Յովհան աշակերտը Մուսաուրկուի<sup>1</sup> վանքը զրկեց, և ինքը՝ հետն առած Յովհաննէս աշակերտը՝ Կարմիր վանք գնաց, ուր առաջնոր-




Կարմիր վանքին ներքին տեսարանը.

Դին կողմէն սիրալիր ընդունելութիւն գտաւ։ Նոյն վանքին մէջ կը բնակեին երեք արեղայք և տասնեւհինգ պա-


քար սրածոյք դմբեթը։ եկեղեցին զատ, միւս բոլոր շէնքերն ողործելի են տեսուք են (Տեղ-էր-բան+ Հ. Ներսէս Ալարդին. էջ 80. Վեհափեկ. 1864)։

1. Մուսաուրկու կամ Մուսաուրկու պիւղին վանքը կը կուտուի Ս. Լուսուրդի Հ. Ա. բարձր զիրքով և բարձր պարիսպներով։ Եկեղեցւոյ առեղքատան մէջ մարզաշափ խորութեամբ զուր մը կայ, որ ախտառակ չէ, և կըսուի թէ Ո. Լուսուրդի<sup>2</sup> Ալարդաշտու զգետկը տարուելու ժամանակ՝ դիշեր մը հաս անցուցեր է։



Արիգոր Լուսաւորիչ.

յէ 134.



տանիք, որոնք քահանայութեան կը պատրաստուէին՝ եկեղեցականի մը կարևոր ուսումներն ընելով։ Միսիթարայ երթը մեծ թեթեռութիւն պատճառեց առաջնորդին, որ տեսնելով զնա օժտուած նշմարիտ քահանայի մը հարկաւոր ամէն ձիրքերով, անոր յանձնեց պատանեաց գաստիարակութիւնը։ Նա թէ և յօժարակամ ըրատանձնեց այդ փափուկ պաշտօնը, որուն ծանրութեան դիտակ էր, բայց խոճիւ և խնամքով կատարեց զայն. իրեւ փանքին միաբաններէն մին՝ հլու և հպատակ ամէն կարգի ու կանոնի, իրեն գործերով և խօսքով զեեց և հարթեց ամենուն առջև սըրբութեան հանապարհ։ Հմուտ գաստիարակի առաջին փորձը կարմիր վանքին մէջ տուաւ. աշալուրջ և արթուն զըստնուելով իրեն պաշտաման մէջ, ժիր յամենայնի, և ըստ պարագային՝ խիստ կամ քաղցր՝ աշակերտաց հետ։ Անոնց հոգին առաքինութեան մէջ կրթած պահուն, սրտերնին ևս կ'ազնուացնէր և մտքերնին կը զարգացնէր զիտութեամբ. նա ամենուն գաստիարակ և ուսուցիչն էր, որուն առաջնորդութեան ներքեւ մտաւոր և բարոյական վերածնութեան շարժում մը սկսաւ վանքին մէջ։ Աքեղայից և իրեն Յովհաննէս աշակերտին կանոնաւոր կերպով կը դասախոսէր աստուածաբանութեան ուսումը՝ մեծին Ազրերտի զբոց վրայէն. նոյնպէս Աստուածաշնչին, և մանաւանդ նոր կտակարանին այլ և այլ զբքերը կը մեկնէր, անոնց զանազան իմաստները բացատրելով. կը պարզէր զարձեալ անոնց առջև վարդապետական այն բոլոր կէտերը, որոնց մէջ կը տարբերէր մեր ազգն արևմտեան քրիստոնեաններէն։ Այս բոլոր զբազանաց հետ, ժամանակ կը գտնէր նա իրեն առանձին ուսումներով ևս պարագելու. միշտ տժզոհ իւր անձէն, անդադար միտքը ճօխացնելու և զարգացնելու հետ էր. այս իրեն նկարազրին իսկական գծերէն մին է, որով յաջողեցաւ նա խոր կերպով հմտանալ՝ ոչ միայն սրբազան՝ այլ և արտաքին զիտութեանց, զոր յետոյ ցոյց տուաւ իրեն դասախոսութեանց և շարադրած զբքերուն մէջ։ Անգամ մը, ըստ իւր ստվորութեան, երբ բոլոր միաբանից առջև կրօնական խնդրոյ մը վրայ կը խօսէր, ներկայ գտնուեցաւ նաև Գրիգոր անունով եպիսկոպոս մը, որ հիւր եկած էր նոյն վանքը։ Աս, աղէտ

և հակուակոսէր ոմն, ընդդիմացաւ Միսիթարայ խօսքերուն, և չերմ վիճարանութիւն մը բացուեցաւ երկոքին մէջ։ Միսիթար, վարժ այդպիսի հակաձառութեանց, զինուած գորաւոր փաստերով, և մանաւանդ Ա. Գրոց և Ա. Հարց յարմար վկայութեամբք և խօսքերով, ըմբերանեց զեսպակոպոսն, որ ճարահատած ուրիշ պատասխան չփառաւ, բայց չարք մը լուսանաց, որոնք խկոյն բռնցի հարուածներու փախուեցան, տեսնելով զինքը հրապարակաւ խայտառակուած զեռահասակ արեղայէ մը։ Միսիթար, ի բնէ աղնուասիրտ և վեհոգի, թէ և զգաց իւր անձին եղած անարգանքը, այլ զոհ իրեն տարած յաղթութեան վրայ, լուռթեամբ միայն պատասխանեց անոր թշնամանաց։ Այդ լուռթիւնն էր՝ որ ոչ միայն կակզցուց վարդապետին սիրուը, այլ և ամշցուց զինքը, որ յետոյ ստրչացած ըրածին վրայ, երբ Եւրոպա անցաւ և հանչցաւ ձշմարտութիւնը, Միսիթար Արրահօր և Միարանութեանս սերտ բարեկամներէն մին եղաւ, և իրեն սիրոյն և յարգանաց ի նշան՝ ընծայեց մեծադիր նկար մը, — Տրդատ թագաւորին մկրտութիւնը ներկայացնող, — որ կը պահուի ցարդ Ա. Ղազարու վանքին մէջ, յորում Ա. Լուսաւորիչն՝ եպիսկոպոսին դէմքով նկարուած է։ Այսպէս պիտի տեսնենք պատմութեանս ընթացքին մէջ, որ Միսիթար Արրայ ունեցած չէ թշնամի մը, — ի բաց առեալ շատ սակաւները, — որ յետոյ ի բարեկամութիւն դարձած չըլլայ։ Նոյնը կրնայ վկայուիլ նաև իրեն հաստատած միարանութեան համար, որ Զիմնաղըին հոգին ծծելով՝ չանցցեր է անոր հետքէն չխոտրիլ։

Նոյն տարին (1698ին) երկու անգամ, գարնան եղանակին և ամառուան սկիզբը, տարափոխիկ՝ ծանր հիւանդութիւն մը մուտ գտաւ վանքին մէջ, որմէ ամէնքն ալ զրեթէ բանուեցան՝ բաց ի Միսիթարէն։ Աս, անզզոյչ գըտնուելու շափ անձնանուէր, կը հոգար և կը խնամէր զամէնքը, կը ծառայէր, կը սրտապնդէր, մինչև որ ինքն ալ հիւանդացաւ ծանր կերպով, երբ այլք սպաքինելու վրայ էին։ Այսպիսի սաստիկ զիլու ցաւ մ'ունեցաւ, որ կարծէր թէ աշքին բիբերը դուրս կռւ զային, և արեան առատութենէն համարելով զայն, անփորձ բժշկի մը ձեռքը

մատնուեցաւ, որ հակաբին մէկ երակը կարելով, շափազնց արիւն կորանցնուց, և մահուան գուռը հասնելու շափակարացաւ։ Վանքին մէջ բժշկի և դեղոց չքաւորութիւն ըլլալով, քաղաք զնաց իրեն բարեկամ՝ Պօղոսին տունը, ուր թէ և անպակաս էին ամէն խնամք և դարման, բայց տանուտէրն վախելով թէ կրնար մեռնիլ և ինքն ըլլալ պատասխանատու, հասարակաց իջնան մը փոխազրել տուաւ զնա։ Միսիթարայ հիւանդութեան միակ խնամողն եղաւ Յովհաննէս աշակերտը, որ իրեն վարդապետին օրինակին վրայ՝ կ'ուսանէր անտրտունչ համբերութիւն ի ցաւ, և արիութիւն՝ ձախող պատահարներու մէջ։ Աակաւ ժամանակէն բոլորովին առողջանալով Միսիթար, վանք դարձաւ և սկսաւ նորէն իւր դաստիարակութեան և ուսուցչութեան պաշտօնը և զրաւոր աշխատութիւնները։ Բայց հազիւ թէ կազդուրուած առաջին տկարութենէն, քանի ժամիս յետոյ, նոյն տարւոյ ձմբան ոկիզրը, սաստիկ հազ ժունեցաւ, որ կը տանջէր զինքը զիշէր ու ցորեկ. կոկորդը զոցուեցաւ, զրեթէ խեղդուելու շափ, և հեղուկ կերակուր անդամ հազիւ կրնար առնուլ։ Այսպէս Միսիթարայ զարար հասակին անընդհատ ցաւերու և տառապանաց մէջ սահեցաւ, մաքառելով հիւանդութեանց դէմ և միշտ մահուան եզերքէն խարխափելով։ Այս անդամ ևս ստիպուեցաւ քաղաք երթալ, ուր փոքր մի խնամք և զգուշութիւն բաւական եղան զինքը հազէն ազատելու։

Ամբողջ տարի մը և աւելի մեալով Կարսիր վանքին մէջ, իրեն փորձ դաստիարակութեամբ և ժիր դործօնէութեամբ ծաղկեցուց զայն, անոր վարկը բարձրացնելով ամենուն մտքին մէջ, կեանք՝ ոզի և եռանդն ներշնչելով վանականաց, որոնք հոգեկան մահամերձ վիճակի մէջ կը թարթափէին։ Վանքին առաջնորդն, Մարգար եպիսկոպոս, չկարենալով ուրիշ կերպ յայտնել իրեն գնահատում՝ Միսիթարայ անձնանուէր աշխատանաց, և իրեն հիւացունի անոր առողինի վարուց և իմաստութեան, 1699 տարւոյն մէջ ուզեց վարդապետական գաւազան առաջ անոր, որ պահանջուած արժանիքէն շատ աւելին ուներ. յանձն առա Միսիթար՝ առաջնորդին և այլոց բուռն յորդորներէն ստիպուած։ Եաւ փառաւոր եղաւ հանգէոն, որուն ներկայ

էին քաղաքին մեծամեծք և պատուաւորք, որոցմէ շատեւ ըստ ժամանակի և մտերիմք էին Մխիթարայ. և, ըստ սովորութեան ազգիս, նոյն ժամուն՝ բազմաթիւ հանդիսականաց առջև՝ իրեն ընդունած աստիճանին երախայրիքն ընծայեց, զեղեցիկ և իմաստներով հօծ քարոզ մը խօսելով յանպատրաստից. որուն վրայ, ամէնքն ալ հիացած, առատ ողորմութիւն առաջ վանքին՝ գնացին գոհութեամբ: Մխիթարայ վարդապետութեան լուրը տարածուելով Կարնոյ դաւառին մէջ, ժաղավորդն ամէն կողմէ կը վազէր անոր հոգերուիս քարոզները լսելու, և կը խանգարուէր վանքին անդորրութիւնը այն խուռնընթաց բազմութեան երթեւեկին. այս պատճառաւ առաջնորդը հրամայեց Մխիթար վարդապետին, որ երթայ շրջի իրեն թեմին սահմաններուն մէջ և քարոզէ: Կա, հետը առած իւր Յովհաննէս աշակերտը, որ նոյն տարւոյն մէջ սուրբ աստիճաններն ընդունած և քահանայ ձեռնադրուած էր Մարգար եպիսկոպոսէն, կ'երթար սփաելու Աստուծոյ խօսքը ծարաւի հոգիներուն, և առատ տոհմականօք վանք կը դառնար:


Մխիթար վարդապետ յաճախ կը խօսէր Մարգար եպիսկոպոսին հետ ազգին թշուառութեան և աղետից վրայ, որոնց ինքը մօտէն ականատես եղած էր հայութեան կեղբաններուն մէջ, և անհրաժեշտ կը տեսնէր դարմանել զանոնք. այս խօսքերով կը կարծէր պատրաստել նա առաջնորդին միաքը: Երկուքին մէջ զոյացած ամուր կապն՝ վստահացուց զՄխիթար յայտնել վերջապէս եպիսկոպոսին միաբանութիւն մը հիմնելու խորհուրդը, որ երթալով աւելի ևս հասունցեր էր մտքին մէջ: Պարզեց անոր իրեն ծրագիրը, մէջ բերաւ անկէ յառաջ գալիք օգուտները, զայն ի զլուխ հանելու կարևոր միջոցները, և գեռւարութեանց առաջն առնըլու հնարքները: Եւ այս մէկ կամ երկու անդամ չպատահեցաւ, այլ շատ անդամ, և Պուելի գործին առաջնորդը, ըսելով, իսկ ես դործակից մը միայն հրամաններուդ ներքե. ես պիտի ըլլամ ուսուցիչ աշակերտաց, և Աստուծով պիտի հոգամ բոլոր կարևոր պէտքերը », և այն Բայց նա զուրկ արիութենէ, և աթոռը կորսնցնելու վախէն՝ իրեն ուղղափառ կրօնքն իսկ քողարկած, չունէր այն ձեռներէց և զործոն հոգին, առանց


որոյ երբէք չեն յաջողիր ու և է մեծամեծ ձեռնարկներ, ուստի հրաժարեցաւ այդ գործին աջակցութենէն . և այնքան յամառած էր նա իւր մաքին վրայ, որ Մխիթար իշեն բոլոր պերճախօսութեամբ չի կրցաւ կիտաչափ մ'անդամ համոզել զի՞նքը : Այս վերջին փորձն էր որ ըրաւ . այնուհետև մարդիկներէ լքած և անյոյս, Աստուծոյ միայն ապաւինած, որոշեց դառնալի Պոլիս, և այն մեծ քաղաքին մէկ անքոյթ խորշին մէջ, հաւաքելով իրեն մօտ պատանիներ, — ձեռագործ արուեստ մը ուսուցանելու պատրուակով, — կրթի զանոնք ուսումնաբք և հոգեւոր կենօք, և այս կերպով իրականացնել իրեն վաղուց մտարերած ձեռնարկը : Կանչեց Մուտուրկուի վանքէն Յովհան աշակերտը, և իրմէ առաջ ուղարկեց ի Պոլիս . իսկ ինքն, իրեն միւս Յովհաննէս աշակերտին հետ, թողուց Կարմիր վանքը, Կարին գնաց և եկեղեցւոյ սենեկաց միոյն մէջ բնակեցաւ : Այդ անյաջողութեան բաժակին մէջ, սփոփանաց միակ շիթն եղաւ տեսնել՝ որ կ'անէր օրէ օր աշակերտաց թիւն. զի Կարինոյ մէջ իրեն յարեցան իրը աշակերտ՝ երկու պատանիք . մին՝ վանքի ուսանողներէն էր, Եզեկիա անուն, մտացի և բարերարոյ, որ յետոյ Միարանութեան մէջ Հ. Գարրիէլ կոչուեցաւ . իսկ երկրորդը՝ Ղազարոս անունով հոգեսէր պատանի մը, որ Մխիթար վարդապետի համբաւէն յորդորուած՝ ինքնայօժար իրեն աշակերտաց թուոյն մէջ մտաւ :

Նոյն տարին (1699) ձմեռը Կարինոյ մէջ անցուց, ժողովրդեան կաթողիկէ մասին թախանձանաց զի՞նանելով, որոնք կ'ուզէին բոնի իրենց քաղաքին առաջնորդ ընել զի՞նքը, արքունի հրովարտակ բերել տալով . բայց նա մերժեց անոնց առաջարկը, իրեն միակ դադափարին յարած, որ զի՞նքը հանգիստ շէր ձգեր : Ամէն օր եկեղեցւոյ մէջ քարոզ կը խօսէր, յաճախ կրօնական խնդիրներու վրայ, որոնցմով յուղուած և պառակտած էր ժողովուրդն, այնպիսի կորով և յստակութիւն մ'ունէր խօսքերուն մէջ, որ հակառակորդք անդամ կը վազէին ի լուր իրեն քարոզներուն : Իրմով կաթողիկէ մասն զօրացաւ, անեցաւ, մինչ յառաջն ճնշուած էր հակառակ կողման բանութեան ներքեւ . նա համարձակ կը քարոզէր ճշմարտութիւնը, կո-

բովի փաստերով զինաթափ կ'ընէր իրեն գիմախօսները, կը հաստատէր ողջամիտներն իրենց ուղիղ գաւանութեան մէջ, և այսպէս ժողովրդեան մտքին և սրտին կը տիրապետէր, կը պաշտուէր անորմէ և անվիճելի հեղինակութիւն մը կը դառնար իրեն խօսին: Քաղաքին առաջնորդն, որ էր նոյն ինքն Աւետիք<sup>1</sup> եպիսկոպոս, վաղուց արդէն զրգութեամբ լի Մխիթարաց գէմ, այժմ ևս աւելի զայրացած նախանձու և ատելութեամբ, չլացած մանաւանդ անոր ընծայուած զրուատիքէն և փառքէն, մոտածեց դատաւորին ձեռքը մատնել զինքը, իրը խռովիչ մը և ապրատամբեցնող ժողովրդեան՝ իրեն նորելուկ և ազգին մեծամասնութեան գաւանանքին հակառակ վարդապետութեամբը, և այս կերպով հեռացնել զինքը քաղաքէն: Աակայն բոլոր քաղաքին, և մանաւանդ մեծամեծաց և եկեղեցականաց յարգանքն և սէրն, զօր ունէին առ Մխիթար, ետ կեցուց զինքն այդ մտածութենէն, վախելով թէ զուցէ ժողովուրդն իրեն գէմ դառնայ, վտարէ զինքն աթոռէն, և փոխանակ իրեն՝ զՄխիթար գնէ առաջնորդ: Ժողովրդեան ուժն անդիմադրելի է. անոր առջև տեղի կու տան հանձարեղ քաղաքադէտք անդամ, և այն եղեր է միշտ բոնապետաց նաւարեկող ժայռն: Մխիթար միշտ իրեն կողմն ունեցաւ այդ ուժը, նա երրէք չհալածուեցաւ՝ բայց առաջնորդներէն միայն: Աւետիք եպիսկոպոս, իրեն հակառակասէր բարուց հետ, խորագէտ էր նաև. առանձին կանչեց զՄխիթար, կշտամբեց զինքը իրը զրգուող ժողովրդութիւն՝ իրեն համարձակ քարոզներով, և սպառնալեաք ուզեց փակել անոր բերանը: Եա կը կարծէր՝ թէ պիտի տեսնէր զիմացը նախկին Մխիթարը, որ զողահար, ինչպէս երբեմն, մի քանի կցկառուր բառեր թոթովելով, աեղիք պիտի տար իրեն խօսքերուն. մինչ Մխիթար իրաքայլափախուեր էր այժմ, արիտասիրտ, սպառնալիքն արհմարհող, որ կտրուկ պատասխանով մը ափիրերան ընելով առաջնորդը, և Աստմէն բանի պատրաստ եմ ձշմարտու-

1. Առ մեր կանխառ: յիշած Աւետիք եպիսկոպոսն է, որ յետոյ (1704ի դեկտեմբերին) Պուտոյ պատրիարք եղաւ, Նշանաւոր՝ կաթողիկեուց զէմ յարուցած հաւածանեցներով և իրեն դժբախտ աքսորական կենօք:





թեան համար, ըրէ ինչ որ կ'ուզես և, ըստու, և յարդութիւնն ընելով գուրս ելաւ սոնեկէն. և նոյն օրն իսկ անքըրդով շարունակեց իրեն քարոզներուն շարքը, աւելի քան երբէք համարձակ պաշտպանելով ճշմարտութեան դատը: Այս միջադիմուն վերջ, որ պատուարեր եղաւ Մխիթարյայ, աւելի ևս ժողովրդեան համակրելի դարձաւ. կը յարգէին զինքը՝ ոչ միայն իրեն իմաստալից քարոզներուն, այլ և իրեն առաքինի և սրբակրօն վարուց, իրեն անշուք և անփառունակ ապրելուն, և իրեն անարծաթաւուկը բարուց համար. նա, ինչպէս առաջ դիտել տուինք, զաւազանապառուզ չէր առնուր, և բարեպաշտից ողորմութեամբ կ'ապրէր: Անգամ մը հարուստ ծանօթներէն մին, զիտնալով իրեն՝ ազքատութիւնը, տասը մարչիլ<sup>1</sup> տուաւ իրը ողորմութիւն. նա շընդունեցաւ ըսելով. «Զգեստներս նոր են, փառք Աստուծոյ, կերակուրս ժողովուրդը կը հոգայ, և բանի մը պէտք չունիմ»: Իրեն բերուած կերակրով ոչ միայն ինքը կ'ապրէր, այլ և տասը ազքատ կ'ապրեցնէր. երկրորդ օրուան պահնելու սպազութիւն չունէր:

Մխիթարյա քարոզներուն մէջ՝ իմաստից զեղեցկութեան հաւասար զարմանալի էր նաև յիշողութիւնն, որով վարդապետութիւն մը հաստատելու համար մէջ կը բերէր շղթայշար անթիւ վկայութիւններ Ս. Գրոց և Ս. Հարց: Անգամ մը քարոզ խօսելու միջոցին, դէպքն այնպէս բերաւ որ հարկ եղաւ բոլոր Աստուածաշնչէն, թէ չին և թէ նոր կտակարանէն, վկայութիւններ բերէ, Ծննդոց զրքէն սկըսեալ մինչեւ Յայտնութեան զիրքը, անոնց իւրաքանչիւրին զլուիններն և համարներն ըսելով: Ունկնդիրներուն մէջ կար նաև Ս. Գրոց հմտու քահանայ մը, որ Մխիթարյա համակարծիք չէր յամենայնի. երբ լսեց զայս, ազշեցաւ անոր պերձախօսութեան և յիշողութեան վրայ, և իրը հրաշալիք մը պատմեց ամենուն. այնուհետև նա Մխիթարյա ամենէն աւելի հիացողներէն և անկեղծ բարեկամներէն մին եղաւ:


Այս ժամանակները, այն է՛ 1699 տարւոյն օգոստոսին,

1. Մ-Ռ-Ձ (marcello) վենետիկան դրամ՝ մէկ, չինուած յակուն Մարկոս Դբուն, որ ներկայ գրամի արժէքով կ'ընէ զրքէ զ/շ դահեկան:

կարին կը դանուեր նաև Խաչառուր վարդապետն, ինչ-  
պէս կը կարդանք՝ նոյն թուականին յիշեալ քաղաքին մէջ՝  
Լոյ յիսուսեան կրօնաւորէն Միհիթարայ տրուած լատի-  
ներէն վկայազրին ներբե ստորագրուած իրեն անունը,  
կոչելով ինքզինքը. «Նուիրակ Առաքելական Աթոռոյ առ  
ազգն Հայոց»: Առ. 1698-9 տարւոյն մէջ, իննովկեն-  
տիս ՓԲ քահանայապետին կողմանէ իրը նուիրակ Էջմիա-  
ծին երթալով, նամակ մը, փառազարդ աթոռ մը և որիշ  
ընծաներ տարաւ Խաչապետ կաթողիկոսին. և ի զարձին  
Էջմիածնէն՝ կարնէն անցնելով, որ իրեն հայրենիքն էր,  
քանի մամիս հոն մնաց և յետոյ Պոլիս վերադարձաւ.  
որովհետեւ 1700ին զինքը մայրաքաղաքին մէջ կը գտնենք  
զարձեալ: Աւրիշ եւրոպացի քարոզիչք ևս, կարնէն ան-  
ցնելով նոյն տարւոյն մէջ, առիթ ունեցան տեսնելու զՄիհ-  
թար, որուն համրաւն լեցուցեր էր բոլոր քաղաքը, և վր-  
կայագիր՝ մը տուին նոյնպէս լատիներէն, լի զովեստիք  
իրեն վարուց, զիտութեան և առաքելական հոգւոյն նկատ-  
մամբ: Միհիթար վարդապետ, յետ բոլոր ձմեռ և զա-  
րաւնը կարին քաղաքին մէջ մնալու, ուր չահեկան ար-  
դիւնքներ յառաջ բերաւ իրեն քարոզներով, երբ հասաւ  
ամսոն, առաւ իրեն երեք աշակերտաները, սպոյ և արտա-  
սուաց մէջ թօղով բոլոր քաղաքացիները, գնաց ի Տրա-  
պիզոն, ուր նաւ մտնելով՝ մեկնեցաւ զէպ ի Պոլիս յամին  
1700 յունիս ամսոյն:

Յետ այսպէս համառօտիւ զնելու Հիմնազրիս առան-  
ձնական կենաց աչքի զարնող կէտերը, կրած վշտերը,  
միաբանութիւն մը հիմնելու խորհրդին յդացումը, անյա-  
ջողութիւնները, և այլն. պիտի խօսիմ արդ, Բ մասին մէջ,  
անոր հրապարակական կամ գործունեայ կենաց, և զիսա-  
ւորապէս Միհաբանութեան հաստատութեան վրայ, որ ի-  
րեն հրաշակերտն եղաւ: Այս մասին մէջ պիտի խօսիմ  
նոյնպէս անոր ներքին և արտաքին նկարազրին, առաքի-  
նութեանց և ձրից վրայ:

1. Այս և ուրիշ նման վկայագիրներ կարող են գտնել փափաքոց  
զրբիս վերջը որուած Յանձնակիցն մէջ:



## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՒԹԱՐԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱՆԻՒՆ ԿՈԱՆՔՆ ,  
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄՆԱՐԿՈՒԹԵԱՆԻՆ ՄԻՆՉԵՒ ԻՐԵՆ ՄՈՀՅԻ .

(1700 – 1749)

### ԳԼՈՒԽ Ա.

Միհթար վարդապետ կը նասմի ի Պոլիս . — Իրեմ առաքելական գործօմէութիւնն . — Աշակերտաց թիւը կ'ամի ճնշող հիտէ . յորոց զոմանս քահանայ ծնումադրիլ տալով առաքելութեամ կը զրկէ զաւառմերում մէջ . — Մի քամի ճոգնոր զըքեր կը նօսատարակէ . — Թերայի մէջ տում մը կը վարձէ իրեմ և աշակերտաց բնակութեամ համար . — Եփրեմ պատրիարքին յարուցած հայածամքն . — Միհթար կ'ապաստամի Վեղարաւորաց վամքը . — Կը մոտածէ թողու Պոլիսը և երթալ քրիստոնեայ աշխարհի մը մէջ ձիմենի միաբանութիւնը .

**Ա**ւթուտասներորդ դարադլխուն՝ Առևտաֆա Բի գաւազանին ներքեւ կը տիրէր խաղաղութիւն բովանդակ Օսմանեան պետութեան մէջ , որ Եւրոպէի արհաւիրք մ'ըլլալէ դազրած , մեծաչուք հանդիսիւ կ'ընդունէր քրիստոնեայ վեհապետաց ընծայարեր գեսապանները <sup>1</sup> , և այսու


1. Այսպազովսկի , Պ - 77 . Օ - Հ - Հ - Հ - Հ - Հ - Հ . Բ . Է . 93 - 94 :

կ'ամբանային արևելքն արևմուտքի հետ կապող հաշոտարար զօդք և պայմանք։ Ի նմին ժամանակի արևմտեան մեծ ու փոքր ազգերն իրենց բարոյական և նիւթական ուժերը զարգացնելու մեծամեծ ճիշեր կ'ընէին. վերածնութեան տեսչը կ'եռար ամենուն սրտին մէջ։ Ռուսաստան, մեծին Պետրոսի հանձարով, զօրաւոր և վիթխարի պետութիւն մը կը գառնար. Գաղղիա, Լուգովիկոս ԺԴի ազդեցութեան ներքեւ, զիտութեանց և արուեստից ուկեղարուն մէջ, իրեն մեծութեան դադաթնակէտը հասած էր. Աւտրիա, շնորհիւ զինուց լեհացի Սորիեսկի դիւցազին և Եւղինէսու իշխանին, հալածելով դարաւոր թշնամին՝ իւր նախկին փառքը կը ստանար։ Նոյն ժամանակ վախճանելով իննովիկենտիս ԺԲ, Հռովմայ քահանայապետը, ականաւոր իրեն մուծած եկեղեցական բարեկարգութեամբք, կը յաջորդէր Կղեմէս ԺԱ. և զարմանալի զուգագիպութեամբ մը, սա՛ որ յետոյ Միաբանութեանս հաստատողն եղաւ, կը բարձրանար Ա. Պետրոսի գահուն վրայ ճիշդ այն տարին, յորում Միսիթար Պոլսոյ մէջ հիմք կը դնէր նոյն Միաբանութեան։

Դեռ կը հնչէր Միսիթարայ անունը Վոսփորի ծիծաղկառ ափանց վրայ, դեռ թարմ էին իրեն թողած յիշատակներն, երբ Պոլսի կը հասնէր երկրորդ անգամ 1700 տարւոյ յուլիս ամսոյն։ Մայրաքաղաքն իրեն շարժուն և ոգեւորեալ վիճակին մէջ էր. առերեսոյթ հանդարտութեան մը ներքեւ կը յուղուէին նոյն կրքերն և նոյն շփոթք, ինչպէս երեք տարի առաջ (1697ին), և հօն հայ տարրը, փոխանակ ինքզինքը զօրացնելու և զարգացնելու, ներքին կոիւներու և կրօնական վէճերու մէջ կը սպառէր իրեն ուժերը։ Ժաղացւորդը, հազիւ կը լսէ Միսիթարայ գալուստը, խնդութեան և յաղթանակի ցոյցերով կը փութայ յողջոյն իւր նախկին քարոզչին, որ յետ այդպէս չեկղարար ընելու իրեն մուտքը, երկու տարի վերջ հազիւ պիտի կարենայ փախստեամբ ազատել կեանքը, Կ'երթայ բնակելու ի Պալաթիա՝ իւր հին իջևանը, և անմիջապէս երկրորդ օրէն կը սկսի քարոզել հրամանաւ նոյն ժամանակի պատրիարքներուն, — որոնք էին, նախ Միսիթար կորդուացի, և յետոյ Մելքիութ Առաջի, երկուքն ալ խաղաղաւէր և

բարերարոյ անձինք, — Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, ուր կը խանէր հոծ բազմութիւն մը ունկնդրաց, որոնք անոր պերճախօս և խմաստալից քարոզներուն ճաշակն առեր էին արգէն: Նա լստինաց եկեղեցիներուն մէջ կը պատարագէր ամէն որ, ինչպէս յառաջն, ուր բազմութիւ ազգայիններ կը դիմէին իրեն խոստովանելու և հաղորդուելու: Անխափիր ամենէն սիրուած և յարգուած էր. Հակառակորդք անդամ, զիտնալով հանդերձ թէ նա կաթողիկէ մասին զլամաւորներէն մին էր, կը մեծարէին զինքը: Աննկարագրելի է իրեն գործօնէութիւնն այս շրջանին մէջ. մէկ կողմէն՝ անհնարին ճիղեր կ'ընէր յաջողելու իրեն մեծ ձեռնարկին մէջ, և հրաշանգելով աշակերտները առաքինութեամբք և ուսմամբք, կը պատրաստէր զանոնք այդ բանին. միւս կողմէն զրեթէ ամէն որ կը քարոզէր, կը հրաւիրուէր տաւները՝ հոգելից խրատներ խօսելու, պաշտպան կը կանգնէր աղքատաց և զրկելոց: Նա վերջ կու տար կրօնական վէճներուն, հաշտութիւն և միութիւն քարզելով աղջին երկու պատակատած մասերուն, որոնց յարաբերութիւնք այնպէս սաստիկ յարուած էին, որ ամենափոքր զրգութեան հով մը՝ կարող էր ահազին ազմուկ մը յառաջ բերել, ինչպէս որ պատահեցաւ: Կաթողիկէ հայերէն մին, կիրք ելած պահուն, անզգուչարար խախամ կոչեր էր հակառակ կողման քահանաներէն մին. հակառակորդք այս բանիս վրայ զայրացած, զիշերը խորհուրդ կ'ընեն եպարքասին ատեանը երթալ երկրորդ օրը, և իրեն մատնիչ և տէրութենէն ապատամբ ամրաստանել այն ամէնը, օրոնք դաւանանքով մի էին Հոռվիճական եկեղեցւոյ չետ: Նոյն զիշերը կ'իմանայ զայդ Մխիթար, և սաստիկ վշտացած, երկրորդ առաւտոր ազգու քարոզ մը կը խօսի խաղաղութեան և սիրոյ վրայ. սակայն զրգութիւնը ուոր կերպարանք մ'առած, անզսպելի կը մնայ, հակառակորդք չեն հանգարափիր, քարոզը արդիւնք մը շունենար, և եկեղեցիէն գուրս ելած, խմբովին դատաւորին կը սկսին երթալ մատնելու իրենց համազգի եղբարքը: Աստ մեծագոյն ճիգ մը պէտք էր. յանկարձ ներշնչում մը կ'աւնենայ Մխիթար. կ'առնու խաչը խօրանին վրայէն, կը վագէ, զիմացնին կը կանդնի. «Ո՞ւր կ'երթաբ, ի՞նչ կ'ընէք, կը գոչէ կրա-

կոտ շեշտով մը . եթէ Հասվմէական եկեղեցւոյ հետ միտ-  
րանօղները պիտի մատնէք , ևս ալ անոնցմէ եմ , զիս ալ  
մատնեցէք . այս խաչով դատաւորին առջև պիտի գամ և  
աներկիւղ պիտի խոստովանիմ ճշմարտութիւնը , որուն հա-  
մար պատրաստ եմ կրելու տանջանք և մահ : Ինչու այդ-  
պիսի չնչին բաներու համար քաղաքական դատաւորի կը  
զիմէք . չունիք միթէ ազգային պատրիարք , որ քննէ իրը  
և ըստ այնմ գնաէ : Այս և նման խօսքեր էին՝ զորս ը-  
ստ Միսիթար , որուն յուղուած ձայնը , եսանդուն հոգին ,  
այն սէրն և յարգանքը՝ զոր ունեին առ ինքն , զապեցին  
ժողովրդեան գայրոյթը , որոնք փոխելով մտքերնին՝ զնու-  
ցին պատրիարքին և խաղաղութեամբ վերջացաւ խնդիրը :  
Միսիթար այդ գէպքէն վերջ՝ այնպիսի ժողովրդականու-  
թիւն մը ստացաւ . որ առջնը կը խոնարհէին ամէն առ-  
աիճանի անձինք . նա գարձեալ հաստատեց միութեան և  
սիրոյ զոդը համազգի եղբարց մէջ , դադրեցան առժամն  
կրօնական մրրիկները , և հանգարտութեան մէջ կը մտա-  
ծէր նա իրեն կանդելիք չէնքին կազմութեան վրայ : Իրեն  
չուրջը սկսաւ տակաւ պասկ մը բոլորուիլ այնպիսի ան-  
ձանց , որոնք ոչ միայն կրօնից և զիտութեան ծարաւիք  
էին , այլ և առաքինութեան պէտքը կը զգային , որուն  
գերազանց ուսուցիչը կը զտնէին յանձին Միսիթարայ :  
Կարծես ներքին ձայնէ մը մզուած և առաջնորդող ասազի  
մը հետեւելով , մի և նոյն ժամանակին այլ և այլ կողմերէ  
Պալիս կը հասնէին զանազան անձինք՝ Միսիթարայ աշա-  
կերտելու . Այնթապցի Սարգիս անունով զոդիր մը , արդէն  
Եւղակիայէն ծանօթ իրեն , որուն խօսքերը կայծ մը ձգեր  
էին սրտին մէջ . Եղիա վարդապետ Կոստանդնուպոլսեցի ,  
կրուսազիմայ Մինաս պատրիարքին աշակերտ , ողջամիտ  
իրեն կրօնական գաւանութեան մէջ , որ յառաջազոյն տե-  
սեր էր զՄիսիթար յԵւղոկիա և բաժ անոր քարոզները .  
Պազարս Ակնեցի , բարեպաշտ և բանիրուն անձ մը , ա-  
մաւացեալ , որ ամուսնոյն մեռնելէն վերջ՝ որոշեց թո-  
զուլ զաշխարհ և կրօնաւորիլ . Սեբաստացի Յովհաննէս  
անունով զգօն պատանի մը . Բերացի զոդիր մը Աղարիս  
անունով , Միսիթարայ քարոզներէն և առաքինի վարքէն  
յորդորուած : Այսպէս , քանի մ'ամսուան մէջ , աշակեր-



Արքային (Մայուլ Գուլբյան)։



տաց թիւը մինչև ինը բարձրացաւ, որոնք ցորեկները կը հաւաքուէին Ախիթարայ սենեակը՝ լսելու իրեն խրառները, կարեւոր հրահանգներն ընդունելու, և զիշերները կ'երթային իրենց կամ ծանօթ բարեպաշտներու տուները։ Յայտնեց անոնց կրօնաւորական ընկերութիւն մը հաստատելու միտքը, խատիւ պատուիրելով ծածուկ պահել զայն, մինչև որ իրագործուի, նորանոր խոչընդակներու չի պատահելու համար։ Աշակերտաց միջէն երկուքը, Արդիս Այնթապցին և Բերացի Յովհաննը, արժանաւոր դատելով ըստ ամենայնի, քահանայ ձեռնադրել տուաւ Թէսպոսիացի Յովհաննէս ուղղափառ եպիսկոպոսին։ առաջինը կոչուեցաւ Հ. Գէորգ, իսկ երկրորդը՝ Հ. Այս կերպով Ախիթար չորս քահանայ աշակերտ ունեցաւ, որոնցին երեքը վարդապետական դաւազան ևս ընդունած ըլլալով, քարոզութեան զրկեց դաւանդներուն մէջ, մայրաքաղաքին ազմուկներէն և վտանգներէն հեռու, հոգւոց փրկութեան աշխատելու, որ իւր զլիսաւոր նպատակներէն մին էր, և միանգամայն յաշաղկուտաց լեզուէն ազատ ըլլալու համար։ Այդ անխոնջ և անձնանուէր քարոզիչք, որոնք Ախիթարեան առաքելութեան ուհիվիրայք եղան, ամէն կողմ ծաւալեցին կրօնից լոյսը, սփոնցին կեանք, երջանկութիւն և խաղաղութիւն, ամէն տեղ զտան սիրալիք հիւրընկալութիւն և յաջողութեամբ պատակուեցան իրենց եռանդուն վաստակք։ Ախիթար անհուն հրճուանաց մէջ էր, տեսնելով որ այնքան տարիներէ ի վեր մաքին մէջ յզացած խորհուրդը, յիստ ցաւերու և հալածանաց հալոցին մէջ զտուելու, մօտ էր վերջապէս իրականութեան սահմանին մէջ մասնելու։ Իրաւ, դեռ բնակարան մ'անգամ չունէր, որուն մէջ ժողովիք իրեն աշակերտները, և կանոնաւոր կերպով անոնց դաստիարակութեամբ պարապէր։ սակայն իրօք հիմնուած էր ներքին միաբանութիւնը սրտերու, թէ և զեռ կիսկատար, և հարկ էր ամբացնել և վեր բարձրացնել այդ բարոյական շէնքը, հարկ էր իրեններուն մոքին և հոգւոյն

Հ. Ասեց առաքելական գործոնէութեան մասին պիտի խռովմ յետոյ, երբ առիթ ունենամ խռուելու Ախիթարեան առաքելութեանց սկզբնաւորութեան վրայ առանձին դիխով։

անունդ հայթայթել. այս նորատակով ձեռք զարկաւ հրա-  
տարակութեան հոգևոր զրեանց, նոյն տարւոյ (1700ի)  
հոկտեմբեր ամսոյն : Եափե և առաջ տպագրել տուաւ Թովի՛.  
Գեմբացւոյ գիրքը, զոր ինքն Ռոկեմատեան կը կոչեր, որ  
իրեն կրօնաւորական կենաց առաջին քայլերուն ուղղիչն  
եղած էր. ուզեց որ իրեն աշակերտք ևս նոյն սկզբամբք  
անանին և նոյն ուղղութեան հետեւին. յետոյ հրատարակեց  
Մտածական ազօթից զրբոյկ մը, թերևս ինքը շարադրած  
կամ հաւաքած. առոնցմէ վիրջը հրատարակեց երկու մեկ-  
նութիւններ, Յովկաննու Յայտնութեան՝ զոր ըրեր էր  
Մծխիթացի կամ Տփղիսեցի Պետրոս վարդապետ, և Երգ-  
երգոց զրբին՝ զոր շարադրեր էր Խաչատուր վարդապետ:  
Այդ հրատարակութեանց համար՝ հորկ եղաւ ոչ սակաւ  
գժուարութեանց զէմ կոռուիլ, որոնց յաղթեց նա իւր ու-  
վորական տոկունութեամբ. և սակայն այդ իրեն արդիւն-  
քը, — զոր կարելի է իւր միւս մեծ զօրծերուն քոյ զե-  
տեղել, — շատ սակաւք ճանչցան և գնահատեցին, շափա-  
զանց համեստութեամբ մը ծածկելով անունն անզամ, և  
միայն և չնչին բանասէր և կոչելով ինքզինքը<sup>1</sup>:

Ըմբանած էր Մխիթար ընկերական կենաց սկուռները,  
զիտէր թէ միաբանութիւն մը, առանց սիրոյ և սրտերու  
միութեան, բանդագուշանք մ'է. հորկ էր որ իրարու շը-  
փուէին մաքերը և բարգերը՝ զիրար որբագրելու և յզկե-  
լու համար. հորկ էր որ խօսքերու և մոտածութեանց առնչու-  
թիւն մը ըլլար, որով կապուէին հոգիները: Այս բանիս  
համար Քերոյի առանձնացած թաղերէն միոյն մէջ վար-  
ձեց, յամին 1701 ապրիլ ամսոյն, մեծ, բազմասենեակ և  
վայելաշէն տուն մը, որ վանքի ձեւ ունէր և Մխիթարայ  
նորատակին շատ յարմար էր: Հոն ժողվեց աշակերտները,  
անոնց բացարեց կրկին՝ իւր զիտումը, սահմաննեց կա-  
նոններ, հոգեսրի և ուսման յատուկ ժամեր օրոշեց, յոր-  
դորեց՝ փութաջան և եռանդուն ըլլալ երկուքին մէջ ևս,  
պարզեց հնագանդութեան էութիւնը՝ որ հիմք է կրօնաւո-  
րութեան, և կանոնապահութիւնը՝ որ անոր կեանքն է:

<sup>1</sup> Իրեն ըրած հրատարակութեանց վրայ մակերածան պիտի խօսիմ  
զրբիս Գ ժամոյն մէջ, ուր զիտի նկատեմ ու Մխիթար՝ իր զբագէտ:


Այս բոլորն ըրաւէ՝ ամենախիստ զգուշութեան միջացներ ձեռք առնըլով, որ մի գուցէ տարածուի դուրսը ժողովրդ դեան մէջ, թէ ինքը միարանութիւն մը հաստատելու մը տաղիր է, որովհետև բազմաթիւ հակառակորդք կային, և ժամանակն ալ երթալով սպառնալից կերպարանք մը կ'առնուր, և ամէնքն ալ մօտալուտ փոխօրիկի մը նախազգացումն ունէին: Կը փայլին Մխիթարայ գործերուն մէջ հաւասարագէս արիութիւն և խոհեմութիւն, — երկու ամենակարևոր տառաքինութիւնը ո՛ւ և է առաջնորդի մը, — որոնք եթէ իրենց սահմանին մէջ չի մնան, կամ ի յանդընութիւն կը տանին կամ երկշռութեան մէջ կը ձգեն զմարդ: Կա միշտ աշակերտաց մէջ էր առաւտէն երեկոյ, կը հսկէր, կ'ուղղէր, կը կրթէր և կ'ուսուցանէր. զիշերները՝ աշակերտներէն միայն մի քանիսը վանատան մէջ կը պահէր, միւսները՝ մանաւանդ որոնք անդացի էին՝ իրենց տառները կը զբկէր. ինքն ոլ միայն տօն և կիւրակէ օրերը Ա. Լուսաւորչի եկեղեցին կ'երթար, և կը չարունակէր իրեն քարոզները: Որուան մէջ յանախ երթեւեկ ըլլալով, ոչ միայն բարեկամներու, այլ երբեմն անծանոթ և նոյն իսկ կասկածելի անձանց, ո՛ւ և է վստանդէ աղաստ մնալու համար, զրակազմութեան կարեար գործիներ զնեց և աշակերտաց առջևը դրաւ. Հ. Մանուէլ տեղեակի էր արգէն այդ արուեստին: Ամէն անզամ հիւր մը դալուն, զըրքերը ծածկելով, թուղթ կը ծալէին և զրակազմութեամբ կը զրադէին, և յետ մեկնելուն՝ իրենց հոգեւոր և ուսումնական աշխատութիւնները ձեռք կ'առնուին դարձեալ. և այսպէս կը յուսար, զսնէ առ ժամանակ մը, խոյս տար հակառակորդաց հալածանելին: Անդամունիլի էր աշակերտաց ուրախութիւնը, երբ կը տեսնէին իրենք զիրենք խաղաղ և երջանիկ շրջապատին մէջ, մինչդեռ իրենց բոլորը կը յուղուէր և կը ծփար արէսաստ ծով մը կրքերու, շփոթից և թշուառութեան. կը զգային իրենք զիրենք տապանին մէջ, զոր Աստուծոյ աջը կը վարէր կոհակաց վրայէն: Աակայն երկար շտեւեց այդ երջանկութիւնը. սակաւ ժամանակէն ազգային խոռվութեանց հրդեհ մը բորբոքեցաւ, ընդհանուր հալածանք մը յառաջ բերելով ընդդէմ կաթողիկէ մասին ազգիս, որմէ ազատ պիտի չմնար նոյն ինքն Մխի-

թար, որ ուղղափառ կրօնից զլխաւոր ախոյեաններէն մին էր: Եւ սակայն նախախնամական բան մը կար այդ հալածանաց մէջ, ի նպաստ Մխիթարայ ձեռնարկին, ինչպէս պիտի երեխ ապագայ դէպքերէն: Պատմութեանս կարգն անթերի պահելու համար մէջ բերենք համառօտիւ նոյն հալածանաց զլխաւոր դէպքերը:

Մխիթարայ Պոլիս հասնելէն վերջ, զրեթէ մէկ տարուան շրջանին մէջ (1700 յուլիո — 1701 սեպտ.), երեք պատրիարքներ, — Մխիթար Կորդուացի, Մելքիոր Առաքչի և Եփրեմ Պափանցի, — կունեներու և ժխորի մէջ, բանութեամբ կամ կաշառով, յաջորդաբար եղան և ինկան պատրիարքական աթոռէն: Դէմ առ դէմ որոտացող մրրկալից ամսկերու նման՝ կանգներ էին երկու հակառակ կողմանք, առելութեամբ լցուած, որոնք զրգութեան փաքրիկ կայծի մը կը սպասէին՝ իրարու դէմ խուժելու և զիրար յօշոտելու համար: Այդ կայծն եղաւ չետեւեալ դիպուածը: Աղրիանուազուայ ազգային եկեղեցւոյն մէջ ընթերցուածի մը համար մեծ խնդիր մը ծագեցաւ. երկու կղերիկոսք, որոնք երկու հակառակ կողմերուն կը պատկանէին, կը վիճէին միասին իւրաքանչիւրը պնդելով թէ իրեն իրաւունքն էր այն. խնդիրը մինչև քաղաքին առաջնորդին տուեանը ելաւ, որ էր նոյն ինքն Եփրեմ Պափանցին: Սա, հակառակամէր և փառամոլ անձ մը, իրեն պատրուակ առած այդ խնդիրը և ամէն իրաւունք ոտնակոխ ըրած, բուռն կերպով սկսաւ հալածել իւր թեմին մէջ գտնուած այն բոլոր հայերը, զօրս ժողովուրդը ֆուանի կը կաշէր՝ Հռովմէական եկեղեցւոյ չետ միաբաննենուն համար: Երեք ողջամիս և արդարախոհ քահանաց, պաշտպանելով հալածեաները ընդդէմ քմնահանոյ բանութեանց առաջնորդին, անոր բարկութեան գոհ զնացին. այլազգի Ֆեյջուլլահ դենոպետին ձեռքօվ, որ այն ժամանակ յԱղրիանուազիս կը գտնուէր թագաւորին չետ, արքունի հրովարտակ մը տալով՝ ձերբակալեց զանոնք և Պոլիս ուզարկեց ի պատիւթիւնական բանութեան: Մելքիոր պատրիարքն ալ, որ համարձակեցաւ բարձրացնել ձայնը ի պաշտպանութիւն անմեղներուն, նոյն Եփրեմ առաջնորդին քսութեամբ ամբաստանուելով արքունի ատենին առջեւ, իրքեւ թիկունք

խռովարարներուն և տէրութեան զէմ՝ ապօտումըներուն, կորսնցուց պատրիարքական աթոռը և գատապարտուեցաւ նոյնպէս ի պատիժ թիսվարութեան ։ Բարձրացաւ Եփրեմ, այս երրորդ անգամ, իրեն ոճիրներու պատուանդանին վրայ կանգնած աթոռը, զոր անկասկած պահելու և ուղածին պէս գործելու համար ուրիշ խոչընդակ չէր տեսներ զիմացը, բայց չորս ողջամիտ, դիտուն և առաքինի վարդապետները, որոնք կաթողիկէ մասին զլխաւորներն էին, — Մխիթար Ակրաստացի, Խաչատուր Կարնեցի, Պետրոս Մծխիթացի (Տփղիսեցի) և Սահաթճի Արքիս Եւղոկիացի, — զորս ժողովորդը կը սիրէր, կը մեծարէր, և զրեթէ կը պաշտէր։ Ասոնց համար արքունի հրովարտակ մը զրել տուաւ Եփրեմ, որպէս զի ձերրակալուին, աքսորուին կամ թիսվարութեան տարուին։ Այդ մրրիկը դեռ չհասած ի Պղիս, բարեկամներու ձեռքով կը կանիսէ լուրը՝ կը հասնի յիշեալ վարդապետներուն ականջը, որոնք կ'անապարեն փախչիլ կամ թափչիլ։ Մխիթար, իւր անձէն աւելի՝ աշակերտաց և գործին վրայ մտահոգ՝ որ չըլլայ թէ վեստ մը հասնի անոնց, փութով պատուիրեց իրեններուն՝ զրեթը և կահկարասին զրացեաց տուները տանիլ, փակել վանատան դռները, և իւրաքանչիւր իրենց ծնողաց կամ ծանօթ բարեկալաշտից տուները երթալ և զգուշանալ ամէն կերպավ, մինչև որ մրրիկը հանդարտի։ Խոկ ինքը Հ. Ասնուէլին հետ փութաց ի Պալաթիս՝ Յիսուսեանց մենաստանը, ուր շընդունուեցաւ՝ արքունի հրովարտակին առջև բօլորովին ապահով և վտանգէ զերծ շըլլալով հոն, և խորհուրդ տրուեցաւ՝ գնալ ի Բերա Վեղարաւորաց վանքը, որ Գաղղիոյ դեսպանատան կից և անոր հովանաւորութեան ներքեւ՝ ազատ էր ամէն վտանգէ։ Բայց ուշ էր ժամանակը, ի՞նչպէս կտրել այն երկար ձանապարհը, առանց յայտնուելու և ձերրակալուելու բոլոր փողոցաց մէջ թափառող բազմաթիւ խնդրակներէն. սապնապի վայրկեան մ'էր այն. բայց նա Աստուծոյ վրայ զրած յայսը, աշք առած ամէն վտանգ, որոշեց վերջապէս երթալ ի Բերա։ Հաղիւ ոտքը դուրս դրաւ Յիսուսեանց վանքէն, հասան ետևէն քաղաքապետին զինուորք, հայու զգեստներով ծպտած և Մխիթարայ ծանօթ ազգայինէ մը առաջ-

նորդուած, որոնք հազիւ հարիւր քայլ հեռու էին իրմէ, որ իւր սովորական դգեստները հազած, վտանգէն ազատելու ակներե խուժապով մը կը շտապէր դէպ ի Վեղարաւորաց վանքը. Զինուորք և հայ առաջնորդը կը հասնին իրեն, կ'անցնին քովէն առանց ճանչնալու զինքը, — ինչպէս պատահեցաւ երբեմն Ա. Աթանասի, երբ խոյս կուտար իրեն թշնամիներէն, — առաջ կ'անցնին և ուզդակի Միսիթարայ վարձած տունը կ'երթան, զոր փակ դտնելով և դատարկ, ետ կը դառնան յաւսահատ. անոնցմէ սակաւ մի



Վամատովն Պեղարաւորաց (ի կ. Պոլիս).

վերջ կը հասնի Միսիթար Գաղղիոյ դեռպանատռնը, և այլ ևս վասնգէն ազատ է: Այս բոլորը նա յետոյ կ'իմանայ իւր մէկ բարեկամէն, որ նոյն պահուն փողոցին մէջ ահուդողով ետևէն կ'երթար. ամէն լսողք կը հիանան այս բանիս վրայ, յարում Աստուծոյ մատը միայն կը նշմարեն, որ անվեսա պահեց իւր ծառայն այն բոլոր վտանգներուն և փորձանկներուն մէջ:

Օրէ օր կը սաստեանար հալածանքը թէ մայրաքաղաքին

և թէ զաւոններուն մէջ՝ տեսն տեղ կը փնտառէին կա-  
թողիկէ հայերը, զատարանները կը ատրուէին, կը ստիպէին  
զիրենք յուրացութիւն, և ով որ հաստատան մեար իրեն հա-  
ւատքին վրայ, իսկոյն կը բանուէր, կը ծեծուէր կամ կ'աք-  
սորուէր, և բոլոր ինչը յարգունիս կը զրաւէին։ Կրօնական



Եկեղեցի Պեղարանորաց (Ի Ֆ. Գոլիս)։

պայքարին հետ խառնուած նաև քաղաքական կամ անձ-  
նական խնդիրք, ոչ ոք ազատ մեաց այդ աղետալից ժիո-  
րէն։ շատերը վախերնէն ամիսներով տուններու մէջ վա-  
կուած մեացին, այլք ստար աշխարհներ պանդխտեցան,

բազմաթիւ ընտանիքներ կործանեցան կամ ընաշխնջ եղան . կործես ամենի փոթորիկ մ'էր որ քաղաքին վրայէն անցաւ , բերելով իւր հետ ամայութիւն , աւերած և մահ : Բազումք զոհ եղան ընչափաղց դատաւորներու , որոնք իրենց անարգ չահագիտութեան առիթ առին ժամանակին տիւուր հանգամանքները . ամենքը կը կասկածէին իրարմէ , մատնըշութիւնն ամենէն շահաւոր արուեստը գարձաւ . չմընաց խիզճ , չմաց արգարութիւն , կը զործուէին ամէն տեսակ խժդժութիւնք և անպատճիւ կը մնային չնորհիւ զրամին : Բայց վերջապէս գտաւ իրեն պատիժը այս բոլոր չարեաց սկզբնաւոիթիւը , Եփրեմ պատրիարք , որ քան զինքն աւելի բռնագունէ մը աթոռընկէց ըլլալով աքսորուեցաւ , ինչպէս պիտի պատմենք յաջորդ զլխոյն մէջ : Այս ժամանակները երկու մեծ հրդեհ պատահեցան Աղրիանուպողիս քաղաքին մէջ . յորում Հայոց եկեղեցին ալ այրեցաւ . նոյնպէս Պոլսոյ մէջ ահազին հրդեհ մը հազարաւոր տուներ մոխիր դարձուց և շատ անձանց օրհասարեր եղաւ . սակայն այս երկնառագ պատուհաններն անդամ չի կրցան հանդարտել զրգութիւնը : Բովանդակ հողածանաց ժամանակ , Միսիթար Վեղարաւորաց վանքին մէջ փակուած մնաց . բայց իւր ձայնը կը հասցնէր ամենուն , մանաւանդ վշտացեալներուն , կը քաջալերէր , կը միսիթարէր զանոնք . և այն տառապանաց օրերուն մէջ՝ ողորմած ձեռքեր կը հանէին իրեն կարսութիւնը լեցնելու :

Այս յետին փորձով բոլորովին համազուեցաւ Միսիթար , թէ միարանութիւն մը չէր կարող երկար կեանք ունենալ արևելքի մշտատատան հողին փրայ . հարկ էր թողուլ զայն , առնուլ դարձեալ պանդուխտի ցուողը , թափառիլ աշխարհէ աշխարհ , մինչև որ զտնէր խաղաղ և ապահով անկիւն մը , ուր կարենար հաստատ հիմն ձգել իրեն կանգնելիք չենքին : Նա կը գերազաէր արևմուռք անցնիլ , ուր պիտի զործէր ազատօրէն քրիստոնեայ պետութեան մը մէջ : Ամանք խորհուրդ կու տային քաշուիլ Լիրանանու լիրանց ժայրը , ուր կաթողիկէ Մարտինաք առանձին պատրիարք և իշխան մ'ունէին . սակայն կը մոտածէր Միսիթար թէ լիռները բաւական զօրաւոր ամրարտակ մը չէին սոսիաց շարամիտ հնարքներուն առջև , և իրեն դիտումը չէր՝ ճգնա-

ւորներ հասցնել ազգին, ոյլ առաքինի և գիտուն քարոզիչներ . Բնչպէս կարելի էր ամայի բարձանց վրայ ուսումնական և գրական կենաց միջոցներ ունենալ : Այս պատճառով, Հաղիւ թէ հալածանքը սակաւ մի դադար տառ Պոլսոյ մէջ, կանչեց քարոզիչ աշակերտները, միւսներն ալ իրեն մօտ ժողվեց, յայտնեց անոնց իւր միտքը, և յանձնեց ինքզինքը և իրենները Աստուծոյ և Ս. Կուսին, որ լոյս մը ծագեն զիրենք ըլքապատող մթութեան վրայ :

### ԳԼՈՒԽ Բ.

Միիթար կ'առաջարկէ աշակերտաց արևմտուր անցմելու խոր-  
մուրզը. — Ս. Առողջածածնայ շմմդեամ տօմիթ (1701իթ սեպտ.  
Տիթ) կը Յիմմէ Միաբանութիւնը և կը Ցուփրէ Ս. Կուսիթ. —  
Մոռէա (Յիթ Պեղոպոմէսը) երթալու Խորմուրզը կը Յաստա-  
տուի, և Յոն կը Պրկուի չ Գէորգ՝ երկրին վրայ տեղեկութիւն  
տալու. — Եփրհմ պատրիարքին կը յաջորդէ՝ Աւետիք. ասոր  
Եթեզաւոր Տնարքները զՄիիթար ձեռք բերելու համար. — Պե-  
ղաբաւորաց մեծաւորը կը Խարսուի Աւետիք պատրիարքի սուտ  
խոստումներէն, և կը սոփակէ զՄիիթար երթալ առ Աւետիք և  
Տաշտուիլ Ֆետը. — Միիթար կ'ելնէ Պեղաբաւորաց վամքէն, բա-  
րիկամներու առւնը կը պամուրտի. — Կը Պրկէ աշակերտամները ի  
Մոռէա, իոկ իմքն ամոնցէ զումանս Ֆետը տոած՝ վաշտականի  
զգեստով կը Փափախի ի Զմիւմնիա. — Հոն Խմբրակմեր կը Յասմին  
հոնէն, մա կ'ազատի անոնց ձեռքէն, և վեմետիկցի մաւով մը կը  
մեկմի գէպ ի Մոռէա.

**Պ**ետ շատ տարի չէր որ Վենետիկցիք, օգնութեամբ  
քրիստոնեայ դաշնակից պետութեանց, ընդարձակեր էին  
իրենց սահմանները յարելու. Փրանկիսկոս Մորոզինի ծո-  
վակալը, ամբողջ Պեղապանեսի ծովեղերեայ քաղաքաց,  
յամին 1687, Պեղոպանեսացի տիտղոսը ժառանգեր էր. և  
Կարլովիցի դաշնադրութեամբ հաստատուեր էր Վենետիկ  
իրեն տիրապետութեան մէջ, թէ և սակաւ տարիններու  
համար, որովհետեւ 1715ին դարձեալ Պեղոպանէս պիտի  
անցնէր իւր հին տերանց՝ Ոսմանցւոց ձեռքը: Վենետիկ-  
ցիք, իրենց առևտրական առնչութեամբք և կրօնքով շատ  
մերձաւորք էին քրիստոնեայ արևելիայց, մանաւանդ Հա-  
յերուն. և արդէն դարերէ ի վեր Աղրիականի ծովագրչ-  
խոյն կ'առաջնդականէր իրեն մէջ արևելքի վաճառական-  
ները, որոնց բերած զոհարներով և ազնիւ կերպասներով

կը պճնէր ինքզինքը : Երբ Մխիթար դարձուց աչքը գեղ  
ի քրիստոնեայ արևմուտք, առաջին տեսածն եղաւ Յու-  
նաստանի այն մասը, որ Հարկատու էր Վենետիկոյ հասա-  
րակագետութեան, այն է՝ Պեղապանէո, որ կը կոչուէր  
նաև Մօսէտ, արդաւանդ երկիր մը, ինչպէս տեղեկացեր  
էր Հայ վաճառականներէն, ուր առատօրէն կրնային զբա-  
նել կենաց ամէն կարեւոր եղած բաները, և որ մեծազոյն  
է՝ ազատութիւն և աւերաթեան հովանաւորութիւնը, ինչ-  
պէս իրեն յայս տուեր էր Սորանցոյ՝ Վենետիկոյ դեսպանը,  
որ չի զլացաւ ո՛ւ և է օգնութիւն՝ զոր կարող էր բնել՝ այն  
տագնապի որերուն մէջ : Ժողվեց Մխիթար աշակերտները,  
պարզեց անոնց ասէն իւր գործին ծրագիրը, զրեթէ Հե-  
տիկեալ խօսքերով . «Դուք զիաէք որ մեր ազգին վարդա-  
պետներուն օրինակին շհետևեցայ ես, որոնք բանի մը  
տարուան համար աշակերտներ կը ժողվեն, վեր ի վերոյ  
կրթութիւն և ուսում մը կու տան, Աստուածաշնչի մի  
քանի զրոց մեկնութիւններ կ'ընեն, և յետ քահանայ  
ձեռնադրելու և վարդապետական դաւագան տալու, կ'ար-  
ձակեն որ իւրաքանչիւր ոք իրեն ուզածին պէս երթայ  
քարոզէ, առանց յատուկ նպատակ մ'ունենալու, առանց  
մտսնաւոր ծրագրի մը, առանձին ուժեր, որոնք ժամանա-  
կով կամ Հանգամանքներով կը թուլանան՝ կը մաշին : Ես  
ընդհակառակն ժողվեցի զձեղ, որ Ո. Հարց և մանուանդ  
մեր սուրբ Հոր՝ Անառն Արքային կանոնաց համեմատ, աւե-  
տարանական խրատները կատարելով ճշգիւ, կարենանք  
մշտառե միարանութիւն մը կառուցանել, որուն զլխաւոր  
նպատակը պիտի ըլլայ՝ ազգերնուու հոգեւոր կարօտութեան  
պէտքը լեզնել և հոգւոց փրկութեան համար աշխատիլ . և  
այս վախճանեին Հանելու անհրաժեշտ միջոցն է՝ ուսումն բո-  
լոր կարեւոր զիտութեանց : Եւ որովհետեւ փորձը ցըցուց, թէ  
մայրաքաղաքիս և գաւառներուն մէջ, ուր չկայ անդոր-  
րութիւն և ազահովութիւն կենաց, անկարելի է միարա-  
նութիւն մը հասատել և հոգեւոր և զրաւոր կրթութեամբ  
պարապիլ, Հարկ է ուրիմն որ միարան խորհրդով որոշենք  
թէ աշխարհիս որ կողմը կրնանք երթալ՝ մեր այս մատ-  
ծութիւնն ի զլուխ Հանելու համար » :

Մխիթարայ խօսքերը խոր տպաւորութիւն ըրին բոլոր

ժողովականաց վրայ, որոնք զգալով իրենց վերահսու վը-  
տանդին մեծութիւնը, և թէ որբան մթին և անստոյդ էր  
ապագայն՝ որ կը սպասէր իրենց, և վախելով թէ մի  
զուցէ իրեն խոնճարութիւն մէջ ոչնշանար նորատունկ միա-  
բանութեան մը կեանքը, որ կը պատրաստուէր հայ աղ-  
դին մտաւոր կեանք տալ, փութաց իւրաքանչիւր ոք, ըստ  
իւր ծանօթութեան, առաջարկել այս կամ այն տեղը՝ իր-  
բու աւելի յարմարագոյն իրենց վախճանին։ Յետ երկար  
և լուրջ խորհրդակցութեան, Առաջ երթալու և հռն հաս-  
տատուելու որոշումը տեղի դաւա ամենուն մտքին մէջ,  
թէ իրը քրիստոնեայ տէրութեան չարկատու երկիր և թէ  
զիւրագին ըլլալով հռն ապրելու կարևոր միջոցք։ Ժողո-  
վը վերջանալով՝ բոլոր միարանք, ծնրադիրք Աստուածամօր  
պատկերին առնե, ջերմեանդն սիրով նուիրեցին իրենք  
զիւրենք Ա. Կուսին որդեգրութեան հետևեալ որտառուչ և  
զգայուն աղօթքով, որուն հեղինակն եղաւ նոյն ինքն Ախի-  
թար վարդապետ. «Ո՞վ ամենօր հնեալ սուրբ Կոյս Առա-  
րիամ Աստուածամօրին, աշաւասիկ մենք անարժան ծառա-  
ներդ՝ կը նուիրենք զմեզ քոլոր սրտով քու որդեգրու-  
թեանդ. և աներկմիտ վատահութեամբ ապաւինած քու  
մայրական առատազեղ զթութեանդ, կը յուսանք մինչեւ  
տարւոյս վերջը ելնել այս երկրէս, և երթալ պատսպա-  
րուիլ այն տեղ՝ զոր զու պատրաստեր ես մեզ ընակու-  
թեան համար։ Կը խոստանանք քեզ՝ ամէն տարի այս  
օրս պատուել քու մեծ բարերարութեանդ յիշատակը, մե-  
ծահանդէս կատարելով հրաշալի Ծննդեանդ տօնը հան-  
դերձ ութօրէիւք, և մեր Ախարանութեան բոլոր եկեղե-  
ցեաց մէջ խորան մը կանգնել ի պատիւ ծննդեան Տիրա-  
մօրդ, և ի փառս Ախամօրին Որդւոյդ»։

Ախիթարեան միարանութեան կենաց առաջին օրն եղաւ  
այն. ամենուն դիմաց վրայ կը փայլէր զօւարթութիւն մը,  
առհաւատշեայ առագայ յաջողութեանց. եղբայրական կապ  
մը միացուց սրտերը. անհետացան յանկարծ անոնց վրայէն,  
— եթէ երբէք կային, — բնաւորութեանց և տեսութեանց զա-  
նազանութիւնք, մի միայն դիմումն, ձկտումն և նովատակ  
ունենալով ամէնքն ալ։ Համաշունչք, համամիաք, յօժարք  
իրենք զիւրենք նուիրելու ու և է աշխատութեան և վատան-

զի, պատրաստք կրելու ամէն զիշտ՝ զոր պիտի պահանձէր իրենց վիճակն։ Ընդունեցան և Հաստատեցին միարան իր հիմնադիր, զլուխ և առաջնորդ Միարանութեան՝ ըզ-Միթար վարդապետ, խոստանալով իրեն հզու հայատակութիւն և յարգանք։ Այսուհետեւ սկսան զործածել իրը կնիք Միարանութեան հետևեալ մակագիրը, Ա. Կ. Վ. Ա. (Որդեգիր Կուտին, Վարդապետ Ապաշխարութեան), որ կը բացատրէ միանգամայն իրենց որդիսկան պարագը առ Ա. Կոյսն և բարձր վախճանը՝ որուն պիտի դիմեն։

Միթար, իրեններուն մաքէն ամէն կատկած փարատելու համար, զՀ. Գէորգ դրկեց ի Մոռէա, երկրին հանգամանքը, օդը, ջուրը քննելու և իրեն տեղեկութիւն տալու, և միանգամայն՝ երր հարկ ըլլար՝ հոն իրենց բնակութեան յարմար տեղ մը գտնելու Յաջող նաւարկութեամբ հասաւ ի Նաւոյիա կամ Նէալորիս, երկրին իշխանանիստ, ամուր և վաճառաշահ քաղաքը, ուր երեք ամիս մեաց՝ կարեոր տեղեկութիւնները ստանալու համար. տեսուս որ արդաւանդ երկիր մ'էր, լի ամէն տեսակ բերքերով, և ամենայն ինչ դիւրագին. միայն օդը և ջուրն այնշափ առաջնարար չէին. այս բոլոր տեղեկութիւնները զրեց առ Միթար վարդապետ։ Այդ լուրը մասամբ տիրեցուց միարանները, որոնք որոշած ըլլալով խիստ ճգնութիւններ ընել, — այն է՝ սովորական օրերը բանջար և ընդեղէն ուտել և պարզ ջուր խմել, և միայն կիւրակէ և տօն օրերը միս ուտել և զինի ըմպել, եթէ ներէր իրենց դրամական վիճակը, — կը մտածէին՝ թէ պիտի շկարենային իրենց փափաքած ճգնութիւնները կոտարել, և այս՝ մեծ մտատանջութիւն պատճառեց իրենց։ Սակայն Միթար մեաց անդրդուելի իւր հաւատքին վրայ քաջալերեց, զուարթացուց զամէնքը, և զրեց առ Հ. Գէորգ հոն մնալ և իրենց սպասել։ Սակաւ մի մեղմացած ըլլալով հալած անաց խստութիւնը, շնորհիւ նոյն ժամանակի գաղղիացի դեսպանին, — որ էր նոյն ինքն Ֆէրիոլ, տագղլուխ, յանդուզն, ձեռներէց մէկը, չերմ պաշտպան կաթողիկէ կրօնից շահերուն<sup>1</sup>, — Միթար հարկ կը տեսնէր աճապարել և առիթը

1. Աս, իւր մէկ համակին մէլ ուր կը դրէ առ Լուսովիկոս Ժ՛Ե.

չիտիցնել . իրմէ առաջ դրկեց աշակերտները մաս մաս , այլոց կասկածը շարթնցնելու համար , որոնց մէջ էր նաև իրեն վաղեմի ծանօթ Յովեան եպիսկոպոսն , որ Եւղոկիայէն նոր հասած էր ի Պոլիս , և խնդրեր էր Միսիթար վարդապետէն իրենց հետ բնակիլ . ոչ իրքեւ անձն միաբանութեան , այլ պարզապէս իրքեւ հիւր և ձեռնադրիչ եւ պիտօպոս : Այս հետը բերած էր Եւղոկիացի Յովհաննէս անունով սարկաւագ մը , որ փափազելով միարանութեան անդամ ըլլալ , ընդունուեցաւ իրք աշխատաւոր եղբայր , զրեթէ քառասնամեայ ըլլալով , և սեղանադրի պաշտօն կը փարէր : Միսիթար , իրքեւ քաջ գորավար մը , յետ ապահովելու աշակերտաց կեանքը , անոնցմէ մի քանին միայն քովը պահելով , մեաց ինքը վասնգներու և կրակներու մէջ . և երբ ամէն բան պատրաստած՝ ճանապարհ ելնելու վրայ էր , յանակնկալս ընդ առաջ ելան այնպիսի արգելք և անյաջողութիւնք , որոնք ոչ միայն յամեցուցին իրեն երթը , այլ և կը սպառնային զրեթէ հիմնովին տապալել իւր բովանդակ գործը , եթէ վերին ամենակարսղ անը չի հարթէր խոչընդակները և չի փշէր հակառակորդաց լարած թակարդները :

Այն պահուն երբ Միսիթար , փակուած Վեղարաւորաց վանքին մէջ , կ'աշխատէր ապահովել միարանութեան կեանքը , քաղաքին մէջ հալածանքը կը զայրանար կամ կը հանդարտէր՝ պարագայից համեմատ . և նոյն իսկ երկու հակառակ կողմանց զիսաւորներուն համերաշխութեամբ , և նախաձեռնութեամբ գաղղիացի գեսպանին և Հ . Յակինթոսի՝ Վեղարաւորաց մեծաւորին , պայմանագիր մը կը

1701ի սեպտ . 3ին , Շետեալ տեղեկութիւնները կու առյ նոյն ժաման նոյնի կրօնական շխոթից մասին . և Այն հալածանքը՝ թուրք ունեցեած զորքն է , որ երգուեալ թշնամին է Փոսէկաց և ամենակարսղ է իւր ազգեցութիւնը թագաւորին մատքին վրայ . . իս մատուցի (հալածեալ) . Հոյսց այն ամէն ժառայութիւնները՝ դորս կարող էի ընել . անոնց գրեթաւորներուն ապահովածի տեղ տուի , և կրօնամ ըսել թէ լ . Պոլսոյ քաղաքապետը՝ իմ ըրտք գիտազութեան վրայ՝ շատ մեղմացուց իրեն ըրտքաները : . Այս կրօնը սասարիկ բռւն է , և համոզուած եմ որ աղետուիր համեանքներ պիսի ունենայ + + և այլն . Mélanges Asiatiques , Bulletin XIX , N° . 2 . Le prétendu masque de fer armén . par M . Brosset . t . 243 St . Pétersbourg 1874 .

պատրաստուելը հալածանքը բոլորովին դադրեցնելու և խառնազութիւն հաստատելու համար հայ ազգին մէջ։ Այդ պայմանագիրը, որ հայերէն լեզուով շարադրուեցաւ և Խաչատուր վարդապետին ձեռքով լատիներէն թարգմանուեցաւ, հետեւեալն է.

« Յանուն Տետոն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ամենասուրբ Կուսին Մարեմայ, և սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ի մեծ փաս Աստուծոյ և հայ ազգին հանդարտութեան և յաւիտեանական փրկութեան համար, հատասուի խաղաղութիւն յաւիտեանս և ցմիշտ՝ այն Հայերուն մէջ որոնք լատինաց եկեղեցին կ'երթան և այն Հայերուն՝ որոնք ազգային հայ եկեղեցին կ'երթան, հետեւեալ յօդուածներուն մէջ բովանդակուած դաշնաց և պայմաններուն համեմատ։

Այդ պէտք է զիտնալ՝ որ ազգային եկեղեցին զնացող Հայերէն կը պահանջուին հետեւեալները։

ա. Վերոյիշեալ Հայք՝ հաւատոյ նոր դաւանութիւն պիտի չի պահանջեն այն Հայերէն՝ որոնք լատինաց եկեղեցին կ'երթան։

բ. Վերոյիշեալ Հայք պիտի չպահանջեն լատինաց եկեղեցին զնացող Հայերէն՝ որ նզովեն Պապը, Հռովմէական սուրբ եկեղեցին, Առօն քահանայապետը և Քաղկեդոնի ժողովը։ Նզովուած ըլլան անոնք՝ որ այսպիսի նըզովքներ կը պահանջեն։

շ. Այսու հետեւ Հայոց եկեղեցեաց մէջ պիտի չնզովուին Ա. Առօն և Քաղկեդոնի ժողովը, տարւայն քանի մը որեւրուն մէջ, ինչպէս կ'ըլլար առաջ։

դ. Մինչդեռ լատին եկեղեցին կը հաստատէ հայկական եկեղեցւոյ ծէոը և կ'ուզէ որ ամէն Հայք պահեն զայն, կ'ուզէ միանգամայն որ հայ քահանայք ըստ հայկական ծիսի՛ և ոչ ըստ լատինականին՝ կատարեն աստուածային պաշտամունքը և մատուցանեն պատարազը։ կ'ուզէ նոյնպէս, որ յետ միաւթիւն ըլլալու, աշխարհականք Հայոց եկեղեցին երթան և հռն բնոդունին Եկեղեցւոյ սուրբ խորհուրդները։ Գարձեալ, վերոյիշեալ Հայք հանչնալով զՀռովմէական եկեղեցին՝ սուրբ և զիսուսոր եկեղեցի, և անոր որդիքը՝ իրր իրեն երիցադոյն եղբարք, իրենց եկեղե-

ցեաց մէջ չի գործեն և չի վարդապետեն Հռովմէական եկեղեցւոյ հակառակ բան մը :

իսկ այն Հայերէն՝ որոնք լատինաց եկեղեցին կ'երթան՝ կը պահանջուին հետեւաբը .

ա. Պէտք է որ ասոնք Հայոց եկեղեցին երթան :

բ. Այն վերոյիշեալ Հայք (այն է՝ կաթողիկեաբը) պէտք է որ կիրակէ օրեր և մանաւանդ մեծ տօներուն՝ Հայոց (ազգային) եկեղեցին երթան, և խստառքանին հօն որ քահանային որ կ'ուզեն, և հաղորդուին միւսներուն հետ, ըստ Հայկական ծիսի, և ինչպէս տռաջ ըսինք, պահեն հայկական ծէսը և արարողութիւնները, և անոնց համեմատ կատարեն պատուիրեալ ծուները և պահքերը :

Ուստի, հետեւալները կը պահանջուին երկու համաձայնող մասերէն ալ .

ա. Այդ երկու կողմերէն ով որ հերետիկոս կոչէ իրեն եղբայրը, պիտի պատժուի և պիտի յանձնուի Գաղղիոյ բարձրապատիւ դեսպանին ձեռքը, որ իրեն իշխանութեամբ պիտի մասնէ քաղաքապետին ձեռքը՝ պատժելու զնա ըստ օրինի. և այսպէս, առանձնականի մը յանցանքը ընդհանուրին վրայ պիտի շժանրանայ, որով միայն յանցաւորը պիտի պատժուի, և պիտի չամբաստանուին անմեղները :

բ. Գարձեալ ով որ յիշեալ զաշանց և պայմաններուն գէմ զանցառու գտնուի, պիտի յանձնուի յիշեալ դեսպանին ձեռքը, և ինքն ալ քաղաքապետին պիտի մասնէ՝ պատժելու համար այնպիսին, իրու խանդարիչ խաղաղութեան և հայ ազգին հանդարտութեան :

գ. Երկու կողմերն ալ այս միաբանութեան և համաձայնութեան պայմանագրին մէկ մէկ կնքուած օրինակ պիտի դրին առ Հաւատասփիւո Ա. Ժողովն (Հռովմայ) և առ Ընդհանրական պատրիարքն (Կաթողիկոսն) էջմիածնի, որ պէս զի երկու կողմերն ալ տան իրենց հաստատութիւնը և հաճութիւնը, և այնու անփոփոխ և յարաւե մնայ պայմանագիրը՝ Գաղղիոյ բարձրապատիւ դեսպանին պաշտպանութեան ներքեւ, որուն տրուի նոյնպէս սոյն պայմանագրին կնքուած օրինակ մը. ինչպէս տրուի նաև ուրիշ կընքուած օրինակ մը՝ Բերայի Ա. Կուգովիկոս վանքին Վեղարաւորաց, որպէս զի պահուի անոնց դիւաններուն մէջ, իրու արձանագիր մը ներկայ հաշտութեան :

Կրուած ի Բերա կ. Պոլսոյ, ի 26 Հոկտ. 1701 ապր-  
ւոյն<sup>1</sup> ա.

Կը յաջորդեն հոս ստորագրութիւնք, Պոլսոյ նոյն ժա-  
մանակի Առաքելական փոխանորդին, ուրիշ լատին կրօնա-  
ւոր մեծաւորաց, Խաչատուր վարդապետին, և ամենէն  
վերջ՝ Վեղարաւորաց մեծաւորին՝ Հ. Յակինթոսի:

Սոյն պայմանագիրն եթէ ունենար յուսացուած ար-  
դիւնքը, այն է՝ հաստատուէր միութիւն և համաձայնու-  
թիւն երկու կողմանց մէջ, անտարակոյս շատ վէճերու և  
հակառակութեանց առջներ պիտի առնուէր, որոնք նոյն ժա-  
մանակները և յետոյ այնչափ աղիստից և արիւնչեղու-  
թեանց պատճառ եղան: Գրեթէ ամբողջ դար մը հալա-  
ծուցան կաթողիկէ Հայք, պարզապէս ազգային եկեղե-  
ցիէն զատուելուն և ի հոգևորս անոնց հետ չի հաջորդե-  
լուն համար, որուն պատճառն էր մասամբ մը՝ հակառակ  
կողման շափազանց պահանջը, որով չի յարգելով իւրաքան-  
չիւր անհատին խոճի ազատութիւնը, կը ստիպէին զկաթո-  
ղիկէ Հայս՝ նզովել այնպիսի անձինք և վարդապետու-  
թիւններ, զորս անանք իրրե ուորը և նշմարիտ կ'ընդունէին:

Ֆէրիոլի պաշտօնական թուղթերուն մէջ կը կարդանք,  
թէ իրեն ստիպելով Ղալաթիոյ հայ եսպիսկոպոսն և ուրիշ  
եպիսկոպոս մը, ինչպէս նաև Պոլսոյ պատրիարքական փո-  
խանորդը, — որովհետեւ Եփրեմ իւր պատրիարքութեան  
բոլոր ժամանակը յԱղքիանուագոլիս մնաց, — ստորագրեր  
են յիշեալ պայմանագիրը. և նոյն խոկ գեսպանին յանձ-  
նարարութեամբ Աղքիանուագոլիս գնացեր էր Հ. Յակինթոս,  
Եփրեմ պատրիարքին հետ տեսակցելու՝ հայ ազգին երկու  
պառակտած կողմանց միութեան խնդիրը կարգադրելու  
համար: Այն միջոցներուն, այն է՝ 1701ի գեկտեմբեր ամ-  
սոյն, և այս տեղէն (այն է Պոլսէն) անցաւ Աւետիք անու-  
նով հայ արքեպիսկոպոս մը, — կը զրէ Ֆէրիոլ իւր նա-  
մակին մէջ առ. Լուգովիկոս ԺԴ<sup>2</sup>, — զոր թրքաց դեն-

1. Սոյն պայմանագիրը թարգմանեցինք լուսինիրենէ, «Ո կը գոհուի  
Բրուէի հրատարակուծ» «Le prétendu masque de fer arménien»  
տետրակին մէջ, էջ 244—6:

2. 1701 զհկու 51. Le prétendu masque de fer armén. etc.  
par M. Brossset. էջ 249. St. Petersbourg, 1874.

պետն (Ֆէլզուլահ) կանչած էր՝ Պոլսոյ պատրիարք ընեւլու համար. նա, կը շարունակէ նոյն դեսպանը, առանց արբունի հրամանազբերն ունենալու, հս պատրիարքական պաշտօնները կատարելու յանդգնութիւնն անդամ ունեցաւ»: Աւետիք եղիսկուսու, յետ նենգամիւ հնարքներով խոռվաթիան սերմը ձգելու Պոլսոյ մէջ և զրգուելու հոգիները ընդդէմ Եփրեմ պատրիարքին, զնաց յԱղրիանուպոյիս, զտաւ իրեն վաղեմի ազդեցիկ բարեկամը, որուն միջնորդութեամբ նախ պատրիարքական փոխանորդ անուանուեցաւ, մինչև որ իրեն կուսակիցներուն թիւը անցնելով և սուս զրաբարտութեամբք անուանարկ ընելով զԵփրեմ, ահազին ազմուկ մը յարայ Աղրիանուպոյ մէջ ընդդէմ պատրիարքին: «Կիւրակէ որ մը, 1702 տարւոյն փետրուար 12ին, — կը զրէ Հ. Յակինթոս առ Ֆէրիոլ<sup>1</sup>, — Աւետիքի կուսակիցք գաւաղրութիւն մը կազմելով հայ եկեղեցւոյն մէջ, զուրս վարքեցին զԵփրեմ Աղրիանուպոյսէն, քարի հարուածներով հալածեցին անոր փոխանորդը՝ որ մօտակայ մզկթին մէջ ազատանեցաւ, և ծանր կերպով վիրաւորեցին նոյն փոխանորդին եղրօր զլուխը: Հինգ օր տևեց այդ զրգութիւնը, և Աւետիք անդամ ստիպուեցաւ թաքչիլ. խոռվարաբներէն վեց հոգի բանուեցան եպարքոսին հրամանաւ, և Եփրեմ հաստատուեցաւ գարձեալ իւր պատրիարքութիւնն մէջ զենքետին ձեռքով, որ պատուիրեց իրեն արգելու Հայոց՝ որ լատին ձէսը շընդունին.... իսկ Աւետիք ամէն հնարք ի գործ կը դնէ պատրիարքութիւնը ձեռք բերելու համար. կ'ամբաստանէ զԵփրեմ և անոր փոխանորդը՝ իրը թէ կաշտոք ընդուներ են լատին եկեղեցիները յաճախելու համար»: Աւետիք, ի ընէ փառասէր, հնարագէտ, նենգամիւ անձ մը, չի յօդնեցաւ չի լքաւ այնշափ գժուարութիւններէն, և վերջապէս յաջորդցաւ ձեռք բերել իրեն անձկացած աթոռը. 1702 տարւոյ մարտ 7ին, հազարէն աւելի անձանց ընկերակցութեամբ և մեծ շքով տարուեցաւ եպարքոսին ատեանը, ուր ընդունեցաւ պատրիարքական իշխանութիւնը: Իրեն առաջին գործն եղաւ հեռացնել զԵփրեմ Աղրիանուպոյսէն և աք-

1. Այս թուղթին թուականն է 1702 մարտ 7. անգ. էջ 252-3:

սորել յէջմիտին . յետոյ , մասամբ մը այլոց զրգառ-  
թեամբ և մասամբ ալ իւր խիստ և բուռն բնաւօրու-  
թեամբ , արծարծեց նորէն հալածանքը կաթողիկէ Հայոց  
դէմ , աքսորելով , բանտելով , ի մետաղու և ի թիավարու-  
թիւն զրկելով շատերը , յորոց ոմանք կը մեռնէին այդ  
տանչանքներուն մէջ . և անոնք միտյն կ'աղատէին , որոնք  
զրամով կը զնէին իրենց կեանքը : Բայց նա , զրամէն զատ  
ուրիշ ոչինչ շահելով իւր խիստ վարմունքէն , փոխեց զայն ,  
կամ լաւ ևս , քաղցրութեան դիմակին ներքեւ ձածկեց .  
սիրոյ և որչնութեան թուղթեր զրեց ամէն տեղ , մանա-  
ւանդ ի Պոլիս աղզին մեծերուն , և պատուիրեց որ գա-  
ւանանքով բաժնուած Հայերը հանդարառութեամբ և սիրով  
ապրին միասին : Վայրիկեան մը ամէնքն ալ յուսացին . թէ  
յիրաւի Աւետիքի պատրիարքութեան որով հայ աղզին մէջ  
պիտի հաստատուէր խաղաղութիւն . նոյն իսկ ձարտարու-  
թեամբ կրցաւ նա իւր ամենէն սիսերիմ հակառակորդին  
Ֆէրիոլի սիրուը շահիլ , որ իւր Մայիս 11ին (1702ին) զը-  
րած նամակին մէջ այսպէս կ'ըսէ . «Աւետիք , որուն աք-  
սորը կը խնդրէի ես , մնաց իւր պատրիարքութեան մէջ ,  
շնորհիւ գենոցետին . բայց այժմ շատ խոհսմութեամբ կը  
վարուի , և ինձ կը հասկցընէ՝ թէ այնպիսի կերպով պիտի  
վարէ իւր պաշտօնը , որ գանգատելու նորանոր առիթ-  
ներ պիտի չի տայ <sup>1</sup> » . նոյն զեսպանը կ'ըսէ , ուրիշ թուղթի  
մը մէջ (յունիս 9ին գրուած) , թէ « բոլորովին գաղրեցաւ  
կաթողիկէ Հայոց հալածանքը և երեք քահանաներն ա-  
զատեցան բանտէն <sup>2</sup> » : Այս ժամանակ էր անշուշտ որ  
կ'աշխատէր նա . ինչպէս կը կորդանք մեր Ժամանակա-  
զրութեան մէջ , հակառակ իւր բուռն բնաւօրութեան , խոս-  
տումներով և փաղաքչիչ խօսքերով և կերպերով իրեն ձգել  
կաթողիկէ Հայոց զիխաւորները , որոնց մէջ առաջինն էր  
Մասիթար վարդապետ : Նա արտաքուստ համաձայն կ'երե-  
ցնէր ինքինքը Հռովմէական եկեղեցւոյ վարդապետութեան ,  
և մեծ սէր և ընտանութիւն կը ցուցնէր Վեդարաւորաց մե-

1. Le prétendu masque de fer armén. etc. par Brosset.  
էլ 258.

2. Աւետիք էլ 258 :


ժաւորին, ուղելով զրաւել բոլորովին անոր վատահութիւնը : Ամէն առթի մէջ կը մեծարէր զվանահայրը, մեծահաց խնջոյից կը հրաւիրէր զինքը, ամէն մեղենայութիւն ի զործ կը դնէր, բաւական է որ հասնէր իւր շարաշուք նպաստակին, այն է՝ ձեռք բերել Աղրիանուպօլսեցի երեք ուղղափառ քահանայըը, — որոնք բանտէն տպատելով՝ Վեղարաւորաց վանքը ապաստաներ էին, կրկին անգամ վրտանգին մէջ չինկնալու համար, — և մանաւանդ զՄիթթար վարդապետ, գիտնալով թէ նա մեծ ազգեցութիւն ու նէր ժողովրդեան վրայ : Նա իրեն պատիր խոստումներով կ'որորէր բարեսիրա վանահօր միավը, որ այլ ևս իրականացած կը տեսնէր պատրիարքին յուսացուցած միութիւնը հայ ազգին ընդ Հոռվմէական եկեղեցւոյ, վատահելով անոր խօսքերուն և երգմանց վրայ, և այդ միութիւնը որ մ'առաջ իրագործուած տեսնելու անձկանօք, կը ճարէր այն մեծագումար զրամը, զոր իրմէ կը պահանջէր պատրիարքը՝ ի նպաստ յաջողութեան զործին : Նոյն նպաստակով Աւետիք կը խնդրէր նաև վանահօրէն, որ իրեն յանձնէ զՄիթթար վարդապետ և միւս երեք քահանայըը, որպէս զի իրենց քարտզներով և ազգեցութեամբ դիւրացնեն զործը, առանց անոնց ձեռնուութեան երկրայական ցուցնելով անոր յաջողութիւնը : Միամիտ վանահայրն և իրեն կրօնաւորք՝ այնպէս հաստատ կերպով համոզուած էին Աւետիք պատրիարքին խոստումներուն անկեղծութեան վրայ, որ ըստ ամենայնի ողջամիտ և ուղղափառ անձ մը կը համարէին զինքը, և չէին կարող՝ առանց զայրանալու՝ իրենց համոզման հակառակ ո՛ւ և է զիմանդրութիւն մը լսել : Գիտէր Միթթար այդ բոլորը, և իրեն հեաւտես մտքով կ'ըմբը ըլոնէր թէ պատրիարքին բոլոր ըածներն և ըրածներն առ երեսս էին . բայց կը տեսնէր միանգամայն թէ անկարելի էր վար առնուլ անոր կեղծ զիմակը, քանի որ վանահայրը բարեսուութեամբ խարսւած էր և անզրդուելի էր իւր համոզման մէջ : Խոկ ինքն, առանց կասկած մ'ունենալու պատրիարքին կողմէն իւր անձին զէմ լարուած դաւաճանութեան, որուով՝ ուղեկից աշակերտներուն և յառած ուշը իւր միակ զործին ապազային, իրեն և աշակերտաց հանապարհորդութեան կարևոր պէտքերը և զը-

բամը հռուալու և պատրաստելու ետևէ էր, և Պոլոչն մեկնելու համար յաջող առթի մը կը սպասէր։ Այդ պահուն վանահայրը, հայ ազգին կրօնական միութեան դործին միայն մտադիր և բոլոր որտուք անօր յաջողութեան ցանկացող, վագեց Մխիթարայ մօս՝ իրը մեծ աւետիս մը տալու և յորդորելու զինքը որ փութով ելնէ պատրիարքին երթայ։ Փալտեցաւ Մխիթար վանահայր միամտութեան վրայ, և հակառակ անոր թախանձադին յորդորներուն, երբէք չզիջաւ յանձն առնուլ և պատրիարքին երթալ, յայտնելով իրեն հիմնաւոր կասկածները Աւետիքի դործին անկեղծութեան մասին. վանահայրը ափշեցաւ մեաց, զիտնալով թէ Մխիթար այդ դործին ամենէն եռանդուն փափազողներէն և աշխատողներէն մին էր։ Նայն պահուն պատրիարքին կողմանէ ևս թուղթ մը հասաւ, ուղղուած առ Մխիթար, իի շողոմիչ խօսքերով և յուսացուցիչ խոսառւմներով, յորում այսպէս կը զրէր. «Եատ ժամանակէ ի վեր ճանչնալով զքեզ, սիրելի որդեակ իմ, կ'ուզէի որ քովս զայիր, որպէս զի փառաւոր պատիւներու բարձրացնէի զքեզ. բայց դու մինչեւ այսօր չեկար։ Եթէ սկիզբէն եկած ըլլայիր, զքեզ իմ աջ բազուկս պիտի ընէի, և միւս վարդապետներուն նման պիտի պատուէի և փառաւորէի ըլլքեզ, և երբէք վեսա մը պիտի չհսանէր քեզ. բայց դու չեկար իմ մօս։ Սակայն ես կը ներեմ քեզ՝ եթէ հիմակ յանձն առնուս գալ. ուստի մի ուշանար, նամակս ընդունելուդ պէս փութա իմ քովս գալու, և կը խոստանամ մեծամեծ պատիւներու հասցնել և իմ պատրիարքութեան կարեսը զործերուն վրայ գնել զքեզ։ Ողջ լիր<sup>1</sup>։ Մխիթարայ թափանցող միավը ըմբռանելով այդ խօսքերուն ներքեւ ծածկուած հոգին, իւր մորքին վրայ անդրդուելի մեաց. այն ժամանակ վանահայրը, որ խօստացեր էր պատրիարքին՝ անպատճառ իրեն զրկել զՄխիթար, փոխեց լեզուն, յորդորը՝ սաստի և սպառնալեաց դարձուց, հասկցնելով թէ հակառակ պարագայի մէջ՝ չէր կարող այլ ևս վանքին մէջ մեալ։ Մխիթար փութաց Գաղղիոյ դեսպանին երթալ

և իրեն պարտուագատչած յարդանքը և շնորհակալութիւնն ընել, փոխանուկ իրեն ցուցած հիւրընկալութեան և պաշտպանութեան, և զիւեր ժամանակ եղնելով Աղօրաւորաց վանքէն, իրեն ծանօթ բարեկատչո գաղղիացի զինեվաճառի մը տունը զնաց թափշելու։ Խոկ երեք պարզամիտ քաշանայք, փանահօր խօսքին վրայ վատահացած, զնացին առ Աւետիք պատարիառք, որ նախ պատուեց զիրենք ու երես, և քանի մ'որ վերջը մատնեց զիրենք իւ պատիմ թիավարութեան, այս եղաւ ահա բարեմիտ վանահօր այն, շափ աշխատութեանց պառուղը։

Միսիթար, քանի մ'օր կենալէն վերջ գաղղիացւոյն տունը վարձրավ, ելաւ իրեն ծանօթ հաւատարիմ աղզայնայ մը տունը զնաց, ուր օրուան մէջ յանտիս երթևեկելերով ամէն տեսակ անձինք, ստիպուեցաւ տանըշհինդ օր առաստազին մէջ բանտուիլ իրեն աշակերտներով, անձայն, անշշուկ, փառն զի փաքքիկ անզգուշութիւն մը, ստնաձայն մը կամ հազար մը կարող էր զիրենք ակնյայտնի վտանգի մէջ ձեր։ Այն տաղնապի օրերուն, յարմար առիթ մը զտնելով, Մոռէա զրկեց զամանս իւր քով մնացած աշակերտներէն, և միայն երեք հոգի քովը պահեց։ Սաստիկ ահուգողի մէջ անցուցին Միսիթար և իւր երեք աշակերտք այն տասնըշինդ օրը, որովհետեւ իմացաւած էր քաղաքին մէջ իրեն անյայտանալը, և ամէն կազմ կը մտնէին և կ'եւնէին մատնիչք և լրտեսք, մեծ զումար մը խոստացուած ըլլուլով անոր՝ որ զինքը զտնէր և ձերբակալէր։ Տարակոյս շկայ թէ Միսարանութեանն և անոր Զիմեադրին անփոխարինելի բարիք մ'ըրու այդ աղզայինը, որուն անունը գերախոսարար անծանօթ մնաց, նու անձտմը կը ծառայէր իւր հիւրերուն, չի վստահելով իրեն ծառայից անզամ այնպիսի կեռներեր, որոնց վրայ կը զուրգուրար իրենին շափ։ Միսիթար, փակուած անձուկ և մթին առաստազին մէջ, կ'իմանար ամէն անցած ու դարձածը քաղաքին մէջ, և զաղուուկ վերաբերութեան մէջ էր իրեն մաերիմներուն հետ, շնորհիւ իւր հաւատարիմ ասպնջականին։ Լոելով թէ Զմիւնիա զնացող պատրաստ նաւ մը կար, աճապարեց այլափոխուիլ, և վաճառականի կերպարանքի և տարազի մէջ, զիւեր ժամանակ, նաւ մուաւ իւր երեք աշակերտնե-

2 d h u n D h w .





րով, որոնք նոյնպէս կերպարանափոխ եղած էին. Հ. Մանուկը վրդ՝ վաճառական ձեւացեր էր, իրը ընկեր Միսիթարայ. իրենց սեննեկապես եղած էր՝ Միքայէլ անունով նորեկ Աերաստացի պատանի մը, որ ընդունուած էր աշակերտաց թռույն մէջ. իսկ Եթոկիացի Յափչաննէս սարկաւագը՝ կը հանապարհորդէր Հետերնին՝ իրը իրենց խոհարարը: 1702 տարւոյ սեպտեմբերին, մեկնեցաւ Միսիթար Պոլսէն գէպ ի Զմիւռնիա, քովը ուրիշ դրամ չունենալով, իրեն և աշակերտաց բոլոր ծախուց և պէտքերուն համար, բայց միայն 400 դաշեկան, և կ'երթար հեռու աշխարհ մը, օտարներուն մէջ, վանք շինելու և իր նորահաստատ Միաբանութիւնը ապահովելու, մարդկորէն առանց ու և է յայս մ'ունենալու սգնութեան կամ յաջողութեան: Նա որչափ մտախոհ կ'երևէր եղածներուն վրայ, նոյնչափ ևս անկասկած էր ապագային նկատմամբ, մեծահաւասար և քաջայոյս, Նախախնամութեան ձեռքը յանձնելով ինքզինքը և իրենները. զոհ էր նա՝ որ կը թողուր վերջապէս այն քաղաքը, ուր ամէն քայլափիխին վտանդներով պաշարուած էր, և զոր այլ ևս պիտի չտեսնէր: Նաւը կը կարէր երագորէն Մարմարայի ալիքները, որոնք իրենց հանդարտութեամբ՝ յաջող նաւարկութիւն մը կը խստանային մինչև Զմիւռնիա. և յիրաւի, բարեշունչ հողմով սակաւ օրերու մէջ հասան ի Զմիւռնիա, ուր ելնելով նաւէն և քաղաք երթալով, զանդովի մը մէջ քանի մի սենեակ գարձեցին իրեն վաճառականներ: Միսիթար, որ հոգեւորէ գուրս ուրիշ բանի վրայ խօսելու սովոր չէր, ստիպուած էր այն օրերուն մէջ հսկել լեզուին վրայ՝ ինք զինքը շի մատնելու համար. միայն քանի մը հաւատարիմ ուղղափառներու յայտնեց ինքզինքը, որոնք տեսութեան կու գային իրեն և հոգեշտի խրառներէն օգտուելով ետ կը գառնային: Գրեթէ երեք շարաթ ստիպուեցան մնալ հոն, Առուէս զնացող նաւ չի գտնուելով նոյն օրերուն մէջ: Օր մը բարեկամ ապացիններէն մին իմացուց իրեն, թէ Պոլսէն արքունի հրովարտակ մը հասեր և կարգացուեր էր ատենին մէջ, յորում կ'ըսուէր, թէ ֆրանկացած հայ գարդապետ մը Պոլսէն փախեր և Զմիւռնիա եկեր է, ուստի թող փնտուուի, և անմիջապէս Պոլսի

զրկուի՝ եթէ գտնուի, զայս բաելով Մխիթար՝ շատաղեց Յիսուսեանց վանքը ապաստոնիլ, ուր շատ սիրով ընդունուեցաւ, և այսպէս կրցաւ ազատի խնդրակներու ձեռքէն։ Քանի մ'օր մերջ, երբ գեռ զինքը փնտաելու հետ էին, նաւ մը հասաւ Պոլուէն դէոյ ի վենետիկ ուղղուած։ այդ նաւը, թէ և ուզզակի Մոռէա պիտի չերթար, բայց Զանթա կղզին պիտի հանդիպէր, ուսկից զիւրին էր Մոռէա անցնիլ։ ուստի հոկտեմբեր ամսայն մէջ մեծ զզուչութեամբ նաւ մոռաւ իրեններով։ Եղանակը թէ և աշուն էր, յօրում ծովին ընդհանրապէս ալէկոծութենէ և հովերէ ազատ չէ, բայց Մխիթար հոդ չըրբաւ, աւելի վասնգաւոր փոթորիկներէ խոյս տալով։ Կաւնի ի սկզբան հանդարտօրէն կ'երթար, Արշիպեղազոսի կղզիններուն միջէն անցնելով, որոնք վիթշխարի ժարաերու նման գուրու ցցուած ծովուն երեսը, սարսափ կ'ազգէին նաւորդաց, ամէն բոզէ սպառնալով բախել և նաւարեկել։ Այս երկրորդ անզամ է որ ալէկոծութիւնն կը կը Մխիթար, զոր կը նկարազրէ իւր տաղերէն միոյն մէջ, որ կը սկսի ո Ընարեալ ի մէջ հովեղինաց։ ծովը զարհուրելի դայններով կը նկարուի այնուհետեւ Մխիթարայ մաքին մէջ։ ալէկոծութիւնը կ'ըլլայ իրեն համար հշդրիս պատկերը հոգեկան ճգնածամին, և յաճախ իւր զըրութեանց մէջ՝ ալէկոծելոյ մը կը նմանցնէ մեղաւորը, որ կը տարուրերուի իւր ներքին կրքերէն և կը տանջուի խոճի խայթէն։ Արշափ կը յառաջէր նաւն, այնքան ևս ալիքներէն տարուրերուելով, ճանապարհին ուզզութիւնը կը կորսնցնէր։ ամայի, անընակ կղզիններու կը հանդիպին, որոնց անունն անզամ շնէն գիտեր. նաւազեան և նաւաստիք իւրարու շնէն համաձայնիր, և շփոթ մը կը տիրէ նաւուն մէջ։ Գիշերները, վտանգի շհանդիպելու համար, խարիսխ կը ձգեն և կը սպասեն մինչև առաւուս, կոհակներու մոնշիւնին, հովերու սոյլերուն և նաւորդաց ճիշուկոծին մէջ։ գիշեր մ'ալ յանեկարծ յուսահաս աղազակ մը կը հնչէ նաւուն մէջ, բոլոր ճանապարհորդք իւրար կ'անցնին. կը տեսնեն որ ահազին յերան մը սարասր հասեր են, ուժ զին հով մը կը քշէր, և նաւը ժայռերուն զարնուելու վտանգի մէջ էր. բարերախասարար հովը զաղբեցաւ և վտանգէն ազատեցան, առաւոտր տեսան որ անձանօթ կղզի մ'էր, ու

մանք Կրետէ կը կարծէին, ուրիշները՝ Զերիկոյ, այլք՝ Աթիա: Եւ մինչ այսպէս կը վիճէին նաւաստիք, հոգը դարձեալ սաստկանալով՝ խորտակեց առագաստակալ մեծ կայմը.

« Ինդ միմեանց մինչ վիճէին,

յանկարծ հընչեաց հողմն ինչ ուժգին:

բեկեաց զմեծ փայտն առագաստին:

Ալէ կոծումըն սաստկացաւ,

ի մէջ ծովուն տաեալ տարաւ,

նաւապետն անըզզայ դարձաւ »:

չեն դիտեր ուր ուղղել նաւը.

« Ոմանք զնաւն ի հիւսիս ուղղեն,

այլք ի հարաւ դարձուցանեն,

ոմանք ի յարեւուսս ասեն »:

Երկու աշխարհացոյց քարտէներ ունին, բայց անոնք ալ իրենց լոյս մը չեն տար.

« Զաշխարհացոյցը գերկոսին՝

միշտ հայելով քայլայեցին,

նորօք ևս ոչ շաւիդ գըտին.

միայն յոյս մեր, Սըրբուհի կոյս, ի քեզ մեաց »:

Յետ այսպէս տասնեւեօթն օր ծովուն վրայ տանջուելու, յուսով և ահիւ երերուելու կենաց և մահու մէջ, հասան վերջապէս անմիաս Զանթա կղզին, ուր ցամաք ելան:

Զանթա կղզին, շուրջանակի ծովով և ամրացներով պատրապարուած, աւելի սպահով քան Մոռէա, տատա ամէն բերքերով և վաճառքներով, ողը և ջուրը բաւական մաքուր, շատ հաճոյ անցաւ Միսիթարայ աշբին, ուր տաաջին անգամ ոսք կօխելով ազատ և քրիստոնեայ երկրի վրայ, որտի թեթևութիւն մը զգաց և անբացատրելի ուրախութեան մէջ էր, և հան կ'ուղէր մեալ և շինել վանքը: Փութաց իսկոյն ծանուցանել թղթով իրեններուն, որոնք Նաւողիա քաղաքը կը գտնուէին, իւր ողջամբ հասնիլը ի Զանթա, և իմացնելով կղզույն բարերեր ըլլալը և ուրիշ առաւելութիւնները, անոնցմէ դարձեալ անդեկութիւն ուղեց Մոռէայի վրայ, որպէս զի բաղդատելով ընտրութիւն ընէ՝ թէ երկուքէն ո՛րը յարմարագոյն էր իրենց բնակութեան: Միսիթարայ նամակը ընդունելով աշակերտք՝ շատ ուրախացան, որոնք տեղեկութիւն չունենալով ընաւ իրեն

մասին, մտայոյզք կը ծփային կառկածներով իրենց սիրելի առաջնորդին և հօրը կենաց նկատմամբ, և փոխանակ նաւմակի, իրենցմէ Պաղար Ակնեցին զրկեցին ի Զանթա, որ երթայ պատմէ բերանացի՝ թէ բնչպէս տեղոյն իշխանք յօժար են ձրիաբար գիւղեր և երկիրներ տալու իրենց, որպէս զի անոնց եկամուտով ապրին. այսպէս կ'ընէին անոնք ուրիշներուն ալ, որպէս զի շեննայ և մշակուի՝ ամայի և անապատ դարձած երկիրը. Զայս լսելով Միթթար և մտածելով իրենց չքաւորութիւնը ապրուստի մտսին, առանց այլ ևս տասամանելու՝ որոշեց անցնիլ ի Մոռուէա, և մեկնեցաւ գէոդ ի Նաւողիա յամին 4703 փետրուար ամսոյն:

## ԳԼՈՒԽ Գ.

Միահիթար Նաւպլիա Յասմելով, միաբանութեամ բնակոթեամ համար կ'ըմտռէ Մեթոն բերդաքաջարը — Երկրին իշխանութերէն կը ստանայ բնակարան, զիող մը և ազարակմեր ինչ ինչ պայմաններով! — Նկարագիր միաբանակամ կենաց. — Իոր քահանայ աշակերտներէն երկուքը չուովմ կ'ուղարկէ, Ս. Աթոռոյն հաւածութիւնն ընդումելու միաբանութեամ համար. — Հուովմ կ'երթամ զենետիկ քաղաքէն անցնելով. — Հոն, առաջմորդութեամբ զենետիկ գեսպանին, կը միրկայանամ նղեժէս ԺԱ. քահանայապիտին, որ սիրով կ'ըմունի զիրեմք. — Կը սկսի միաբանութեամ գործոյն քննութիւնը, բայց այլևայլ դժուարութեամց պատճառա երկարելով, և նդիա վարդապետ կը գառնայ ի Մեթոն:

**Ե**րկար տարիներ աքսորի կամ նժդեհութեան մէջ գեղեցերող մը այնչափ չուրախանար, երբ կը դառնայ ի Հայրենին և կը տեսնէ իւր սիրելիները, որչափ ուրախացաւ Միթթար՝ ի տես աշակերտներուն, որոնք այնքան վտանգներուն և մրրիկներու միջէն նողոպրած և Նաւպլիա քաղաքին մէջ ապաստանած, իրեն կը սպասէին անձուկ կարօտով: Արտասուախառն հրճուանօք ողջագուրեց անոնցմէ իւրաքանչիւրը, որոնք իրենց արիսւթեան և անդրդառութեանց ցոյցը տուեր էին այն փորձութեանց և աղետից օրերուն մէջ: Նաւպլիա քաղաքը, որ կ'ըստի ևս Անապոլի կամ Նէտապոլիս Պատմանիոյ, ժայռոտ թերակղզւոյ մը վրայ կառուցուած, Պալամիդ միջնարերդին! — որ 216 մետր բարձրութիւն ունի — հարաւ, արևելեան կողմը, Արդուի դաշտավայրին գիմաց, շրջապատուած ամսուր պարսպով և աշ-

1. Դրեկիս Ճայրը ելնելու համար՝ կողին վրայ շինուած է հաղորդատիւններով սանդուղ մը:

տարակներով, Յունաստանի ամենէն զօրաւոր, գեղեցիկ  
և վաճառաշահ քաղաքներէն մին էր. քաղաքէն սակաւ մի  
չեռու կը գտնուի նաւահանգիստը, համանուն կամ Արդոսի  
կոչուած ծոցին վրայ. Միսիթարայ և իւր աշակերտաց հոն



Հայոց պատմության մասին ազգային պատմություն

ապաստանելու ժամանակ, մի քանի հայ վաճառական ըն-  
տանիքներ կային, նոյն քաղաքին մէջ հաստատուած, ո-  
րոնց մէջ նշանաւոր էր Երևանցի Յովհանն անունով վա-  
ճառական մը, որ իւր տան մէջ առաջնականեց զՄիսիթար

և իրենները, որչափ ժամանակ որ ՚Նաւպլիոյ մէջ մնացին։ Մխիթար, տհոնելով թէ ամենայն ինչ յաջողութիւն կը խստանայ, ժողովոց աշակերտաները՝ որոշելու համար թէ ո՞ր տեղը յարմարագոյն էր իրենց բնակութեան և վանք շինելու, որպէս զի միաբանական կենօք սկսէին փութով իրենց հոգեոր և զրական վաստակները։ Յետ լուրջ և հասուն քննութեան, հաստատեցին Մոռէայի մէջ մնալ, նկատելով միաբանութեան զրամական նեղ զինակը և միանգամայն երկրին մերձաւորութիւնը արևելքին, որ պիտի ըլլար իրենց գործօնէութեան զլխաւոր ասպարէզը։ իսկ երրու բնակութեան տեղ՝ յարմար դատուեցաւ Մեթոն բերդաբաղաքը, զոր արդէն Մխիթար տեսած էր, Զանթայէն ի ՚Նաւպլիա անցնելով ժամանակ, ուր նոյն իսկ շաբաթի մը շափ բնակելով, իրեն ընդել և ախորժելի բընաւորութեամբ, ծանօթներ և բարեկամներ ստացած էր։ Մեթոն բերդաբաղաքը կառուցուած է Մոռէայի արևմտեան ծայրը, սարաւանդի մը վրայ, Մեսոփիա գաւառին մէջ, աշտարակաւոր պարագով շրջապատուած, երեք կողմէն՝ ծովով, իսկ ցամաքի կողմէն՝ կրկին խրամներով ամրացած և ապահովուած։ սակաւ մի հեռաւն, վեր կը բարձրանայ ծովուն մէջ ութանկիւնի ժայռ մը, որուն վրայ կանգնած է քառասուն կանգնաչափ բարձր աշտարակ մը, քարաշէն ամբարտակով կցոււած քաղաքին հետ<sup>1</sup>։ Տեղոյն բնակիչք մեծաւ մասսամբ յոյն էին, որոնց մէկ մուը՝ Քիոս (Պաղպղ) կղզիէն գաղթած էին, և իրենց դաւանութեամբ Հռովմէական եկեղեցւոյ կը պատկանէին։ ասոնք թրքերէն ալ զիտնալով, կրնային օգտակար ըլլալ արևելքէն զաղթող միանձանց՝ կարեռ պարագայից մէջ։ կային նաև իտալացի ընտանիքներ, և Վենետիկցիք էին երկրին կառավարիչք։ Մխիթար Արրայ իւր մէկ նամակին մէջ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Մեթոնի նկատմամբ։ ո Զի թէպէտ ոչ է այնքան շէն տեղ, որ առեսուը և վաստակ աւելի լիցի, սակայն կարի աժանութիւն է, և սակաւ խարճով բարեպէս կարէ ապրիլ ամենայն օք։ զի աւելի աժանութիւն է քան զՍտամպոլ։ . . . իսկ ի կողմանէ

քաղաքիս ծանիր, զի սրտարաց տեղ է, և ունի դրազգում բուրսատանն, և եթէ տառ լինիցի որ բնակիչնք՝ տարին ժի կամ և դուռուշ տարով, կարեք ահազին մեծ պահճայ մի վարձել ծառերավ և այզով... նա և օդն՝ պատրաստ կեցողացն է բարի, ևս է ընդարձակ և ոչ նեղուածք<sup>1</sup>» :

Յետ հաստատելու միտրան հաւանութեամբ Մեթոն երթալու և հան բնակելու խորհուրդը, Միսիթար ազերաազիր մը պատրաստել տուաւ՝ երլիտին ՔԱՆԻՀԱՅ<sup>2</sup> կոչուած իշխաններուն ներկայացնելու համար, որպէս զի Մեթոնի մէջ բնակութեան տեղ մը և ազարակներ տան իրենց, անոնց եկամուտով ապրելու համար, նոյն իշխաններուն ներկայացուց Միսիթար նաև այն վկայագիրը, զոր իրեն տուեր էր կ. Պոլոյ ՎԵՆԵԿՈՏԻԿԻ գեսպանը, և. Սորանցոյ: Ընդունելի եղաւ իրեն խնդիրը, և հաւանեցան Մեթոնի մէջ չնորհել ընդարձակ տեղ մը՝ վանք և եկեղեցի շինելու, Գալազոն զիւզը՝ Արկադիոյ մէջ, և Մամրամաթ կոչուած զիւզին մեծ մասը, անոնց եկամուտներով իրենց ամենօրեայ ապրուաաը ձարելու համար. այս պայմանով սակայն, որ եթէ երեք տարուան մէջ չսկսին վանքին և եկեղեցւոյն շինութիւնը, պիտի զրկուին թէ տեղէն և թէ կալուածներէն: Քննիչը արքանի մուրհակ մը զրելով և կնքելով՝ Միսիթարայ ձեռքը տուին, ինչպէս նաև որիշ յանձնարարազիր մը՝ առ գաւառապետն ուզզուած, որ Կաւարին քաղաքը կը նատէր, որպէս զի մեր հարց առյ Մեթոնի մէջ գտնուած արքունի տուներէն մին՝ երեք տա-

1. Քառազբ առ Պ. Կորուսունկ, իւ Ա. հնեաոիկ, 1712 յուլիս 5: — Խակ Աւետիք պատրիարք իւր նամակին մէջ, զոր զրեր է Միսիթայէ 1706ի մայիսի 7ին. Ակարազգելով իրեն ուղեառութիւնը, կ'ըսէ. «Ազրիլ 25ին երեքաթիթի որ... հասանք Ա. հնեաոիկ Հասարակուուպետութեան հպատակ քաղաք մը, ուր կար մեծ եկեղեցի մը, որուն զանգակները չարժմոն մէջ էին. փառնկ լեզուով Մ-ուն կը կոչուէր այց քաղաքը: Զրյան (Ճողովնե) եղերքը կոյ դդեակ մը, տարսափախիկ հիւնեղներու արդելորսն մը. զոր կը սրանեն պարեկապանը, և բազմաթիւ ձիթենիները: (Լօ պրենուածք de fer armén, etc. par Brosset. էջ 316):

2. ՔԱՆԻՀԱՅՆ պաշտօն էր քննել, թէ որոնց արքունի կալուածներն, անոնց հասոյթները յարգունիս գրաւելու համար. առանց իշխաննեին ունէին նոյնազն այն եկամուտներէն կամ երկիրներէն շնորհելու անոնց որոնց պատշաճ կը անանէին:

բուռն բնակութեան համար, և միւս վերօյիշեալ կալուածները։ Այն երկու հրավարտակները առած, մատուցին իշխանաց իրենց չնորհակալութիւնը և յարգանքները, և լի ուրախութեամբ թողուցին՝ Նաւապլիա քաղաքը և զնացին Մեթոն բերդաբաղաքը, ուր քաղաքապետն՝ բար յանձնարարութեան գաւառապետին՝ տուաւ իրենց ընդարձակ տուն մը, բաղմաթիւ սենեակներով, զոր Միսիթար վանքի յարմարցներով հոն հաւաքեց աշակերտները։

Միսիթար, իրրու ճարտար զեկագար մը, յետ հասցնելու իւր արէտանչ նաւը խաղաղ նաւակայքին մէջ, ի Մեթոն, Վենեակոյ թեաւոր առիւծուն պաշտպանութեան ներքեւ, աղատ այնուշեան և է կասկածէ կամ ճնշումէ, թեթեցած սակաւ մի արտաքին հազերէ, — բաց իւ չքառութեան մտածութենէն՝ որ գեռ կը տագնապէր զինքը, — կանոնաւոր ընթացքով սկսաւ փարել միարանութիւնը, որ աճելու վրայ էր օրէ օր, հակառակ անոր դէմ յարձըկած այնչափ մրրիկներուն։ Այն ժամանակ միարանք տան և վեց անձինք էին. նախ՝ ինքը Միսիթար փարտապետ, որ զլուխն էր միարանութեան, և կը կռչուէր Վերատեսչ կամ Վեհապոյն հայր, նախ քան կրելն Արքանայր տիտղոսը, զոր ընդունեցաւ Ա. Աթուէն յամին 1712. յետոյ շրս փարդապետք, Հ. Եղիա, Հ. Յովհաննէս, Հ. Գէորգ և Հ. Մանուէլ. իսկ մեացածները, — որոնք տակաւին սուրբ աստիճանները ընդունած չըլլալով, եղայր կը կոչուէին, ինչպէս սովորութիւն է կրօնաւորաց մէջ ընդ հանրապէտ, — հետեւելքն էին. Պատոր, Յովհաննէս, Ալարիա, Պողոս, Գետրոս, Գարրիկէ, Միքայէլ, Յակոբ, Գրիգոր և Տիրացու եղայրը. կար նաև Մարտիրոս անունով պատանի մը, որ գեռ միարանից կարգը չէր մտած։ Միսիթար յատակ կարգեր և կանոններ սովորնեց, որոնց համեմատ պիտի ուզզէր իւրաքանչիւր ոք իւր վարքը և զործերը. նա ինքզինքը բոլոր նուիրեց իրեններուն հազեր և զրաւոր կը թթութեան, որովհետեւ ճշնաւորներ հացնել չէր իրեն միուքը, — ինչպէս զիտիկ տուինք կոնխաւ, — անուս, անհրահան վանականներ, որոնց պէտք չկար. իրեն զիտումն էր առաքելական հոգւով անձինքներ հանիլ, « միարաններուն վարքն և կացը կրօնաւորական կոնոններով կար-

զաւորել, ուսմանց և գիտութեանց մէջ կըթել իրենները, և անոնցմէ ուղղափառ հաւատոյ քարոզիչներ զրկել հայ աղղին<sup>1</sup> ։ Մեր ժամանակադիրը<sup>2</sup> չետևեալ կերպով կը նկարագրէ այն բարեկարգութիւնը՝ զօր մտուց Մխիթար առաջին օրէն միաբանութեան մէջ. «Սկսաւ կարգաւորել, կ'ըսէ, ամէն բան կանոնաւոր վարուց պատշաճեցներով. սահմանեց զգեստներուն և բնակարանաց որպիսութիւնը, կերակուրներուն և ըմպելեաց քանակը և որակութիւնը, բնոյ և հանգստեան ժամանակը և շափը, հասարակաց և առանձնական ազօթից կարգը և ժամերը. Հոգեւոր ընթերցման և ուսումնական աշխատութեանց, բութեան և ուրիշ այսպիսեաց շափ և ժամանակ որոշեց, և իւրաքանչիւրին համար հրամաններ և արգելվներ տուաւ համառօտ խօսքերով. և այս բոլորին ժամանակը կ'ադրդարուէր զանգակի ձայնով. և այսպէս իւրաքանչիւր բան իրեն կարգին և ժամանակին կը կատարուէր, ինչպէս որ սահմանեց<sup>3</sup> ։

1. Ժամանակադր. Մխիթ. Ուխտին Ա. Հա. Դ. տարի. 1705, թ. 6. էջ 69:

2. Անդ, էջ 69:

3. Հանձեռու հաշուոս բովանդակութիւնը կանոններու, — որ կընայ զագախոր ուշաւ Մեթոնի վանքին մէջ պահուած կանոննադրութեան, — մեր դիւնչին թուղթերուն մէջ զանուցաց, խոալերէն լեզուով զրուած յիշեալ վանքին մէջ յամին 1715, թիրեալ անգույն եկեղեցական իշխանութեան ներկայացնելու նպատակաւում.

» Բովանդակութիւն կանոնաց Ս. Անդան Աքրայի, որ անգույն կերպով կը պահուի Մեթոնի մէջ ընակու հայ վանականներէն.

» Ունչին Աղքատութեան, Ողջախոնութեան և Հանգանցութեան երեր ուխտերը. ասանցմէ զատ ունին նաև չորրորդ ուխտ մը, երջարու և քարոշելու կաթաղիկէ ուղղափառ հաւատը, երբ իրենց Աքրայէն յառաքելութիւն կը ցրկուին առ Հայու։

» Քուէից բազմութեամբ կ'ընթրեն Աքրայն ցկեսնու։

» Եւ հազորին սկսաւոյն բուրդ և կը կազեն մաշկեղէն դասի։

» Բայց ի Եկեղեցւոյ հրամայած օրերէն, պահը կը պահեն նաև չորրորդի, ուրբաթ և շաբաթ օրերը։

» Ինն որ պահը կը պահէն՝ վրիստոսի կ'ընդենէն առաջ, և հային որ տարր Կոյս Աստուածամօր վերափոխութէն առաջ։

» Անձին մէջ իւրաքանչիւր որ կը բնակի իւր խցիկին մէջ, յորում ուրիշ բան չկրեար ունենալ, բայց աղքատին անկողին մը, մերկ զրամական որ, հասարակաց զրբերը զործածելով, և ոչ մէկը չկարենալով իրեն սեփական բան մ'ունենալ։

Տանը սենեակներէն մին աղօթատեղի ըրաւ, ուր կը ժողվէին զանգակի ձայնով միարան կատարելու ժամերգութիւնները, օրուան մէջ կէս ժամ մտաւորական աղօթք կ'ընէին, և ամէն երեկոյ՝ ննջելու երթալէն առաջ՝ խոճի քննութիւն։ Օրուան մեծապոյն մտար ուսմանց կը պարապէին, և անոնց միակ ուսուցիչն էր ինքը Մխիթար, որ իւր վրայ ստանձնած էր արդէն բոլոր միարանութեան հոգը։

Մխիթարայ վրայ կը փայլի, հաւասար իրեն ուրիշ ձիրքերուն, նաև կրթական կամ առաջնորդական կարողութիւնը, Դիւրին է մարդուս, երբ իրեն հետեւող մը շունի

Ե. Չեն կրնար ուսեալ կամ խմել վանքէն դուրս, բայց միայն չանապարհութեան ժամանակ։

Չ. Չեն կրնար իրենց խցիկին մէջ պահել ոչ մէկ անսակ անտելիք կամ ընկերիք կամ ողջակ բաց ի անկէ՛ որո՞վ վանքին կը կրեն, որ հաւատակաց է։

Ի. Ամենը միտուին ժամերգութիւն կ'ընեն զամփն մէջ, առաջմանեալ ժամերգութիւն։

Հ. Երկու անդամ մտածական աղօթք կ'ընեն օրուան մէջ։

Ի. Ոչ ոք կրնայ վանքէն դուրս ենել առանց թոյլառութեան Արքային։

Է. Չեն կրնար արտաքին մտածակարարութիւններ ընդունիլ, վկայութիւն տալ, զամ բանալ կամ երթալ զատարանները։

Ֆ. Չեն կրնար երգելու առանց թոյլառութեան մեծաւորին։

Հ. Չեն կրնար զրկել կամ ընդունիլ ոչ մէկ անսակ նաւակ, առանց թոյլառութեան մեծաւորին, որ պարաւոր է նույն կարգու անոնց բավականականութիւնը։

Խ. ԱՇէ սարի նորբնծայութիւն կ'ընեն և յետոյ կ'ամփանեն առան և զեց տարեկան։

Ժ. Չեն կրնար անհրաժան դնել կամ վաճառել ո՛չ է բան։

Ի. Չեն կրնար ոչ մէկ կերպ ընտանեաթիւն բնել կանոնց ներ։

Խ. Տարածու մէջ ո՛չ անդամ հազարական կրթութիւն կ'ընեն և բացարձակ լուսթիւն կը պահնեն։

Է. Արար որ քանինայ չեն, կը հաղորդուին առէն կիրակի և առէն տօնի սրբը։

Ի. ԱՇէ սասան հինգ որ մի անգամ իրենցէ մին կը քարոզէ, և զայս ընդհանրապէս Արքայն կ'ընէ կամ նա՛ սրան որ կը հրամայէ։

Խ. Երեկոց ոչ ոք կրնայ ուրիշին սենեակը շնորհի, առանց մեծաւորին թոյլառութեան։

Է. Բայորը միասին կը հաշին սեղանատան մէջ, և անոնցէ մին փոխակի կը կարւայ հազեռ զիբը մը ։

և ոչ մէկուն պատասխանատու չէ, միսիր դժուարին կռիւ-  
ներու մէջ, խութերու և ժայռերու մէջ հորդել իրեն ուղի-  
մը, անձնատուր ըլլալ վտանգներու, ուր յանդուզն քայ-  
լով մը՝ եթէ երբէք առնու՛ ինքզինքը միայն պիտի պատ-  
ճէ: Բայց երբ զործն այլօց առաջնորդելու վրայ է, ուր  
շատերը պիտի հետեւին իրեն զծած ուղղութեան, այն տեղ  
միայն կուրօրէն խորխափելով յառաջնէն՝ յանդգնութեանց  
մեծագոյնն է և աններելին: Հոն առաջնորդին մեծ լոյս  
մը, մեծ արիութիւն մը և մեծ փորձառութիւն մը հար-  
կաւոր է: Նա՛ միայն հոգին չէ որ պիտի բուժէ, այլ նուև  
սիրու, որ այնքան փափուկ է, և յանախ թեթև բախու-  
մայվ մը կ'արիւնոտի: Արշափ զանազան ցաւերով և հի-  
ւանդութեամբք կը տառապին հոգիք, և ամէն աշք կարող  
չէ նշմարել անոնց աղքիւրը և գարմանել: Մերթ խրզ-  
մտանքի ջինջ և յատակ երեսէն սահող այլընդայլոյ մտա-  
ծութեան մը ստուերն է՝ որ կը տաղնապէ հոգի մը, որ  
երերուն քայլերով կը յառաջէ առաքինութեան ճանապար-  
հին մէջ: ուրիշ մը, սիրոյ կամ ուրախութեան յեղակարծ  
ուսումնով մը կը զլորի տիրեցուցիչ վհատութեան կամ  
ցամաքութեան մէջ՝ որ կը ջլատէ զինքը: այլք, անձնա-  
տուրք տարապայման եռանդեան մը կամ եզական երեւ-  
լու տենդով վարակուած, կը ձկտին ցնորական և ինք-  
նաստեղծ կատարելութեան մը ետևէ, որ կը հեռացնէ զի-  
րենք ստոյգ կատարելութենէն: Այս բոլոր և ուրիշ հի-  
ւանդ հոգիներուն՝ հարկ է իրենց լեզուներով խօսիլ, իւ-  
րաքանչիւրին պիտոյից համեմատ՝ հարկ է յանդիմանել,  
միսիթարել, յորդորել կամ աջ կարկառել կանգնելու հա-  
մար: Այդ ծանր զործը, որ յայտնի է թէ ինչ մեծ ճար-  
տարութիւն և շրջահայեցութիւն, որբան ընդարձակ և  
լուսաւոր միաք կը պահանջէ, իւր վրայ առաւ Միսիթար,  
երբ գեռ հազիւ քսանուվեց տարեկան երիտասարդ մէկը,  
և ելքը ըլլուց մեզ, թէ որշափ հիանալի կերպով յաջողե-  
ցաւ նա, և ինչպիսի պայմաններու մէջ: Այն ժամանակ  
տակուին հայ աշխարհին սահմաններուն մէջ կրթական  
կամ մանկավարժական զիտութեան լոյսը թափանցած չէր,  
և ինքը Միսիթար, որ ծանօթ չէր երազացի լեզուաց՝ ա-  
նոնցմէ զատուելու համար, մեր վանքերուն մէջ ընդունած

էր նախնական կրթութիւնը, ուր այնպիսի դաստիարակներ ունեցաւ իւր դալար հասակին, որոնք իրր կրթութեան պայմաններ գործածելով գտնուածանը, յիշոցները և ուրիշ նման միջոցներ, փոխանակ ազնուացնելու սիրութելի կը ստորնացնէին դայն : Ազա հիացման արժանի է Մխիթար՝ իրր գաստիարակ, երբ նկատենք այն բարեկարգ և կանոնաւոր կացն ու զրութիւնը, որով կազմակերպեց իւր միարանութիւնը, հասուց այնպիսի աշակերտներ՝ որոնք իրենց կարգին եղան դաստիարակներ ազգին պատանեաց : Երբէք տեսնուած չէր մեր մէջ այնպիսի միաձոյլ ընկերութիւն մը, որպիսի եղաւ Մխիթարայ հաստատութիւնը . ամէնքն ալ մէկ կազմակարի մըրայ թափուած, մէկ ձայնի հպատակը, մի և նոյն ոկրտանց ծառայելով, սերտ սիրով կազմուած իրարու հետ, զիմելով նոյն ճանապարհով ի նոյն վախճան . այդ միութիւնն էր՝ որ ամուր և տեսական գործեց զայն բոլոր արտաքին բռնութեանց դէմ : Մինչեւ այդ կէտը հասնելու համար՝ որչափ ճգանց պէտք եղու . եթէ աշակերտք բոլորն ալ թարմ, դալար մօքեր ըլլային, դիւրին պիտի ըլլար ձկել և կրթել . այլ շատերն արդէն հասունացած, մեծահասակ մարդիկ էին, որոնց գմաւարին է ուղուած ձեւը տալ՝ առանց կոտրելու, որոնք կամքերնին ձկելու, զոհոգութիւն ընելու, և հլու հպատակութեան գաղափարը զրեթէ չունէին . և այդ անձինքներով է որ բարձրացուց նա իւր չէնքը, անոր զոյութեան սպառնացող վասանգներուն գէմ կռուեցաւ, զիսութեան և կրթութեան լոյսը ծաւալից ազգին մէջ :

Անժխտելի է թէ Մխիթարայ ամբողջ գործ անէութեան մէջ նախակարգ տեղը կը զրաւէր կրօնականը . զայդ ինքնին բացատրած է իւր մէկ նամակին մէջ, թէ ո հասարակութիւն մեր ու այս վախճան շարակարգի, զի գձըշմարտութիւն կաթողիկէ հաւատոյ բացատրիցէ այլոց <sup>1</sup> . նա սիրով յանձն կ'առնու ո և է նախատինք, բայց կրօնից մասին նախանձախնդիր է . ո եթէ այսոքիկ եղբարք մեր՝ միայն անխոչեմ և աղէտ դոլ հոգուկիցին զմեկ

և առ ոչինչ համարելիք... կամ շուրջ զգիտութեամբ և զփառաք, կարէ աք ասել “մեք յիմարք վասն Փրխառուի և դուք իմաստունք...” իսկ յամբաստանելն զօրքոյ հաւատոյս մերսէ... ըստ այսմ մասին ոչ լոիցեմք. այլ ասեմք համարձակ, թէ ի զուր ամբաստանեն զմեզ. լուս լինելն և խոնարհիլն յայսպիսիս, ոչ է զործ առաքինական՝ այլ զայթակզութիւն աշխարհի և խափանումն մերոյս վախճանի<sup>1</sup>։ Միսիթար, որ ամէն բանէ առաջ խիստ կրօնաւոր և քահանայ մ'էր, ըմբանած ճշդիւ իւր կոչման մեծաթիւնը, զիտցաւ իրեն լայն մտքին թևերոց վանական նեղ շրջանակին գուրս խոյանալ արծուօրէն, և զիտութիւնը — արտաքին կոչուած զիտութիւնը՝ որ արհամարհուած էր եկեղեցականներէն — իրը զիտաւոր օժանդակ առնուլ կրօնից։ Մեթոնի վանքէն սկսաւ դասախոսել նո, Ակունացւոյ Աստուածարանութեան և Մեծին Ալքրեափ իմաստասիրութեան հետ, նաև ասազարաշխութիւն<sup>2</sup>, հոետորութիւն և որիշ բնական զիտելիքներ, տաժանելի ճզանց և երկանց տարիներ եղան անոնք, որոնք եթէ յուսացուած արդիւնքը չունեցան, պարզապէս ժամանակին տիտուր հանգամանքներն էին պատճառոր։ Ուրիշ մեծագոյն արդիւնք մ'ալ ունեցաւ Միսիթար. վասն զի թէ և իրմէ գարեր առաջ գոյութիւն ունէր հայութեան մէջ կաթողիկէ կրօնքը, սակայն զազափարներու խանգարում մը և շփոթութիւն մը կը տիրեր ազգին մէջ. հարկ էր որ լուսամիտ անձ մը օրինակով ցուցնէր թէ կարելի էր միանգամայն հայ ըլլալ և կաթողիկէ. այդ օրինակը տուաւ ինքը Միսիթար, զեղեցիկ կերպով միացնելով յանձին կրօնք և ազգութիւն, — երկու բարոյական զերազանց ուժեր, — որով անմահացաւ հաւատարապէս կրօնից և ազգին պատմութեան մէջ։ Կա, դաւանանքով ազգին մեծամասնութիւնէն տարբերած պա-

## 1. Անշ.

2. Ասազարաշխութեան ուսուցը սկսու նո զասախոսէ (711) տար-  
ումն. ինչպէս կը հետեցնելիք իւր խոզերէն՝ որ կ'ըսէ լոջ զվարյն մէջ, «Յաղոզը թէ զի՞ւ իցէ ամե» և այլն, էջ 308. «Որդոն ան յոյսը  
ամի», որ է թիւն Փրխառուի (711). բաժանի շորից և աւելանոյ 3.  
ուրիմն 3 ամ անցեալ է ի հանունք ամէն, և ամե որ դալոց է (712)  
զատելի նահանել։

հուն, սրտով և զգացումներով մեաց այն՝ ինչ օր էր, բնիկ հայ մը, ազգասէր մը, հայրենի աւանդութեանց, ծխից, զրականութեան, և այլն, սիրող և յարգող մը. և միւս կողմէն՝ իւր ազգը այդշափ խանդակաթ սիրած ժամանակ, չկապուեցաւ անոր նախապաշտմանց հետ, չփայփայեց անոր թերութիւնները, չքաշուեցաւ մատնանիշ ընել անոր ողբալի կացութիւնը, և աշխատեցաւ բնաջինջ ընել այն թիւր կարծիքները, որոնք կազմուած էին արևմտեան քրիստոնէից մասին, և այդու վերուց այն միջնորմը, որով ոչ միայն կրօնական՝ այլ և զիտական և ընկերուական կապերը խզուեր էին: Եւ այսպէս Մխիթար նոր ձանապահ մը հորդեց, նոր հոգի մը շնչեց, նոր գաղափարներու հոսանք մը ծաւալեց հայութեան մթնոլորտին մէջ. և ինչոքս սովորաբար ինչ օր նոր է՝ կը հալածուի, կը ճնշուի, ընդդիմութիւն կը կրէ ի սկզբան մինչև օր յաղթանակէ. այսպէս ալ Մխիթար և իրեն զործն երկոր հալածանաց առարկայ դարձան, կրօնական դաւանանքով պառակտուած երկու մասերէն ալ, կոծուելով երկուուտեք իրր Քարիրդայի և Ակիւլայի մէջ: Մէկ մասը կը հալածէր զինքը՝ իրրեւ ստարացած զաւակ մը ազգին, քսանէ մը և հայ եկեղեցոյն իրաւանց դաւանանող մը. միւս կողմը կը հալածէր՝ իրր կեղծ և առ երկու կաթողիկէ մը, և վեստակար իրենց զատին. և այդ երկուքն ալ մեծապէս սխալեցան և անիրաւեցան, չըմրանելով Մխիթարայ զործին նպատակը և էռթիւնը: Քանից արևու պէս փայլեցաւ ձմարտութիւնը, արգարացան Մխիթար և իրենները, և սակայն շաբարասեցաւ իրենց շուրջը խսացուած թիւր կարծիքներու մուալլը, շդազբեցաւ հալածանքը:

Այդ հալածանքները չկրցան վեստել Մխիթարայ զործին, որ օրէ օր երթալով կ'ընդարձակուէր, միարաններուն թիւն արգէն քսանի հասեր էր 1704 տարւոյն վերջը. հոգեսրն և ուսումը ձեռք ձեռքի տուած՝ մեծ շարժում մը առաջ բերեր էին վանքին մէջ, որ զեղեցիկ ապագայ մը զուշակել կու տար. կը մեար ներքին բարոյական ամրութիւն մը տալ անոր, որով ո և է արտաքին բռնութեանց առջև, քայլայուելու վտանգէն ապահովուած ըլլար ցմիշտ: Հառվելական եկեղեցին, ամէն տեսակ զեղծումներու ա-

առջն առնըլու համար, որէնք մը հաստատած էր, որուն  
համեմատ՝ ոչ ոք կարող է, կրօնաւորական նոր ընկերու-  
թիւն մը հիմնել, առանց իրեն զիտութեան և հաւանու-  
թեան։ Միսիթար, հպատակելով այդ որէնքին, ուզեց ներ-  
կայացնել Ա. Աթոռին իւր հիմնած միաբանութեան նպա-  
տակը և կանոնադրութիւնը, և անոր գորաւոր հովանաւո-  
րութեան ներքեւ բանալ քարոզչութեան առարկէզը, ուս-  
տի, ժողովոյն միաբան խորհրդով ընտրեց Հ. Եղիա և Հ.  
Յովհաննէս վարդապետները, որնք առաքինի և խոհական  
անձինք էին, ուստι անոնց ձեռքը համառօտ Աահմանադրու-  
թիւնը՝ զոր յօրիներ էր քաղելով Ա. Անառն Արքայի վար-  
քէն և կանոններէն և ուրիշ չողեւոր հարց խրատներէն,  
ինչպէս նաև Կորնթոսի և Զանթայի եպիսկոպոսաց վկա-  
յազրերը, և աեղույն իշխանաց յանձնարարական թուղ-  
թերը, — որոնք մինչեւ երկինք կը բարձրացնէին զՄիսի-  
թար և միաբանութիւնը, — և ուզարկեց զանոնք ի Հասկմ  
1705 տարւոյն։ Եւսն ժամանակները կը բազմէր Ա. Պետ-  
րոսի աթոռին վրայ կղմէնո ԺԱ, մեծ և առաքինի քա-  
հանայապետներէն մին, որ կը հասցնէր իրեն աղդեցիկ  
ձայնը յԵզիդոսոս, Թաթարաց աշխարհը, և մինչեւ Պարո-  
կաստանի և Զինաստանի խորերը, կը վառէր քարոզիչ-  
ները՝ ծաւալելու իրոնից և զիտութեան լոյսը այն մութ և  
փայրենի աշխարհներուն մէջ, արձագանդ կը զտնէր անոր  
խօսքը մինչև կոնդոյի մէջ, որուն թադաւորն և թագուհին  
կը դառնային ի քրիստոնէութիւն. կ'օգնէր զէնքով և դրամով  
Աստրիոյ և Վենետիկոյ՝ Եւրոպիոյ և քաղաքակրթութեան  
սպանացող վտանգին առջևն առնըլու. ձեռք կը կարկառէր  
մնչուած ազգերու, պաշտպան կ'ըլլար բռնարարուած իրա-  
ւանց, սովու և ժանտամահի աւերածին մէջ տառապող  
Մարսիլիոյ զրամ և օգնութիւն կը հասցնէր, և ի նմին  
ժամանակի խմասուն կոնդակներով կը շանթահարէր Ե-  
կեղեցւոյ մէջ աղբած զեղծումները և մոլորութիւնները։  
Իրեն բարձր հովանաւորութեան ներքեւ կը ծագէին ա-  
րուեսաք և զիտութիւնը, Մեկենաս կը հանդիսանար ներ-  
քիչներուն և քանդակազործներուն և կը խրախուսէր բա-  
նասաեղծները. ինքն իսկ կը մշակէր զեղեցիկ գպրութիւն-  
ները, հմառութեամբ և կարովով լի ճառեր հրատարակե-

լով. Ժամանակին ականաւոր աստղաբաշխները իւր չորջը կը հաւաքէր՝ Գրիգորեան տօմարը վերանորոգելու և միջօրէական մը հաստատելու համար Հռովմայ մէջ։ Քանից կ'ազատէր նա իւր աթոռանիստ քաղաքը թշնամի զէնքերէ, կը կանգնէր զայն երկրաշարժի աղետալից կործանումէն, կը գեղեցկացնէր նորանոր շէնքերով, կը ճոխացնէր դրասունները հազուազիւտ ձեռադիրներով, կը հիմնէր եւ-



Կղեմէս ԺԱ

1700

Ժամանակապհո

1721



կեղեցիներ, վարժարաններ, թանգարաններ, կընդարձակէր փողոցները, Ա. Պետրոսի հրապարակին երկար սինեարը անդրիազարդ կը պանէր, թումրերով կը սանձէր Տիրերի կատաղութիւնը, կը հաշտեցնէր իրարու դէմ սիստով իշխանները և վեհապետները, և այս բոլոր մեծամեծ ձեռնարկներուն և արքայավայել շքեղութեանց մէջ, ճգնասուն կրօնաւորի մը չափ խստակեաց և սակաւագէտ էր,

առաքինի և ներանձնասէր։ Այս մեծ և լուսամիտ քահանայապետին էր, որ կը զրկէր Միսիթար իրեն ոչակերտները, յանձնելով անսոց հաւատոյ դաւանութեան գիր մը, ուղղուած առ նոյն ինքն Կղեմէս Ժ.Ա. Այդ գաւանապիրն այնպիսի տեղեկութիւններ կը բովանդակէ Միսիթարայ վարուց պատմութեան ինչ ինչ պարագայից մասին, որոնք չեն գտնուիր ոչ մեր ընդարձակ ժամանակազրութեան, և ոչ Հ. Մատթէոս Եւղինիացւոյ և Ազնոցի դրած վարքերուն մէջ, որով կրնան շահեկան և հետաքրքրական ըլլալ ընթերցողաց։ Ա.Ա. մեք նուաստացեալլքա, կ'ըսէ, որք զգաւանութիւնս արարաք, եմք ի կրօնաւորացն Հայոց, ձեռք և զգեստիւք նոցին եղեալլք ի մանկութենէ. և կրօնաւորքն Հայոց զձեւ զգեստուցն ի մեծէն Անոնէ եղիստացոյ աւանդեալ ունին, ըստ որում վկայեն պատմիչքն իւրեանց. վասն որոյ մեք ևս ի ներքոյ նոյնոյ անուանն պահեմք զձեն Հայոց մինչև ցարդ ուղղափառապէս, հանդերձ երիք սրբովք ուխտիւքն. և եմք թուով իրրեւ քանք, որոց ութ քահանայք են՝ միարանեալք ի մի կամս, և եղեալք ի մոի քարոզել զնշմարտութիւն կաթողիկէ հաւատոյն ի Հայու։ Եւ յետ ամաց ինչ քարոզութեան՝ տեսեալ զի անկար էր ի մէջ Հայոց ստանալ մեզ զվանս, ուր կարիցէաք բազմանալ ուսուցանելով զաշակերտեալսն, վասն որոյ խորհեցաք զի ի մի ի քաղաքաց քրիստոնէից ստանայցեմք մեզ զտեղի բնակութեան. և երեք ամաւ յառաջ քան զայս գոյր հալածումն մեծ ի վերայ մեր և ամենայն ուղղափառաց ի Կոստանդնուպոլիսի, և չնորհակալ եմք ի Սրբութենէ Վեհիդ, զի յանձնեալ էիր զամենայն հալածեցեալսն ի ներքոյ նախարինամութեան պաշաթօրացն<sup>1</sup>. որոյ վասն և պաշաթօր Վէնէցիոյ բարձրագունեղ Լորէնցո Սրբանցօն, որ այժմ է բարկուրաթօր Ամարզոյի<sup>2</sup>, վասն

#### 1. Ambasciatore. Պետական։

2. Procuratore di San Marco. Հոգաբարձու կոմ Գործակալ Ա. Մարկոսի, որ ամենէն բարձր առափնանն էր յետ զոժին կոմ զբանայս իշխանութիւնը կոմ պաշտօնը կը տրուէր ամենէն տեսի արշինաւոր անձնեց, որոնց կը պահէին զայն մինչեւ իրենց մահը։ Գործակալը Ա. Մարկոսի թուով առանեկուր էին, որոնք կը բնակէին Ա. Մարկոսի հրազարակին վրայ շինուած հայուկաց և մեծաշէն պայտաներուն մէջ, որոնք Procuratie կըսուէին։

բանի Սրբութեանդ զթացու առ նուստութիւն մեր, և  
փրկեաց զմեղ յամենայնից նեղչաց մերոց, և ժողովեալ  
զմեղ ի պալատն իւր պահեաց զաւուրս բազումս, հոգալով  
զամենայն պիտոյս մեր. և յետ այլոց բազմաց բարերա-  
րութեանց՝ յաւել ևս զայս, զի առաքեաց զրնաւքս զրով  
իւրով ի Մոռա, որով և ետ մեղ պայծառագունեղ ըրին-  
շիրէն զտեղիս ուր չինելոց եմք զվանք և զեկեղեցի, և  
բնակելոց եմք, և ինթրաթ<sup>1</sup> ևս հաստատեաց, որ ընդ մե-  
րոյ ունեցելոյն բաւականք են մեղ, և այս երկրորդ ամ է  
յորմէ հետէ եկեալ եմք առօտ, և տակաւին չեմք չինեալ  
զվանս մեր, մինչև ծանուցուք զդիտաւորութիւնն նուառ-  
ուութեան մերոյ զերամբարձի Գլխոյդ, և ապա հաւանու-  
թեամբ Սրբութեանդ ամենայն ինչ մեր կայտացի: Եւ այ-  
սօքիկ են զիտաւորութիւնք կացութեանց նուստացելոցս,  
կեալ միշտ ձեռով կրօնաւորացն Հայոց՝ հանդերձ երիւք  
որբովք ուխտիւքն, ասել զժամս նոցին... և պահել զա-  
րարողութիւնս եկեղեցւոյն Հայոց, նա և զոմանս պահու-  
որք պատշաճին կրօնաւորութեան մերոյ՝ ըստ սովորու-  
թեան կրօնաւորացն Հայոց, որպէս զի սոքօք կարիցեմք  
թարց արգելմանց քարոզել ի մէջ նոցին ըստ շափոյ տկա-  
րութեան մերոյ<sup>2</sup>». և այլն: Երկու վարդապետք, վենե-  
տիկցի նաւով, հասան յաջողութեամբ դոժերու մայրաքա-  
ղաքը, որուն հզօր պաշտպանութիւնը և առաս չնորհները  
վաղ իսկ վայելած էին Միխիթար և իւր միարանք, ոչ  
միայն Մոռէայի հողին վրայ, այլ նոյն իսկ Թուրքիոյ մայ-  
րաքաղաքին մէջ, ինչպէս իմացանք վերոյիշեալ թուղթէն,  
և որուն զրօշը վերջապէս կը խոստանար ապագային ա-  
մուր և ապահով ապաէն մը ըլլալ իրենց: Այժմ ևս ոչ  
նուազ բարեսէր հիւրընկալութիւն մը ցոյց տուաւ՝ իրեն  
զիմող հայ վարդապետաց՝ այդ հրաշակերտ, վաճառաշահ,  
ձոխ և իւր յազթանակաց վառքով պաակաւոր քաղաքը,  
որ ճիշդ տասը տարի վերջ (1715ին) զրկարաց պիտի ըն-  
դունէր՝ անորոգ մարտին ազէտներէն փախստեայ հայ նըժ-  
դեհներու խումբը, որուն իրը երկրորդ հայրէնիք մը պիտի

1. Entrata. Եկամուռ:

2. Այս զաւուրութեան թուղթը գրուած է 1705ի յունիսի 16ին:

նկատուէր այնուչեւու, և իրեն փառաւորութեան վերջաւուսին՝ հայ ազգին գրականութեան խանձարուրքը պիտի ըլլար։ Մեր երկու ուղևորք, իրենց կարեւոր նուիրակութեան յաջող ելքին միայն ակնկառոյցք և անձկալիցք, փութով թողաւցին Վենետիկը, առանց մատրերելու անտարակոյս, թէ որ մը անոր մեայուն հիւրերը պիտի ըլլային. Նոր յանձնարարականներ և վկայագիրներ ձեռք բերելով, մեկնեցան ցամաքէն դէպ ի Հռովմ, քրիստոնէութեան կեղրոնը, ախեղերակալ և հռչակաւոր քաղաքը, որ հիմանոս մեծութեան աւերակաց վրայ բարձրացած և քան զհինն աւելի տարածած իւր բազուկները, սիրոյ և կրօնից ազագատանքով մը կ'ուզէր զրկել գոզցես բոլոր մարդկութիւնը։ Եսոյն տարւոյ (1705ին) սեպտեմբերին վերջը կամ հոկտեմբերին սկիզբը մտան անոնք ի Հռովմ, որ իրեն հոյակապ եւեղեցիներով և պալատներով, ընդարձակ հրապարակներով, մեծագործ յուշարձաններով, հսկայ շքեղութեամբք շլացուց զիրենք. աակայն, իրենց զործին միայն դարձուցած բոլոր ուսերնին, շնայելով երկար ճանապարհին խոնջութեան, փութացին յաղջոյն և յայցելութիւն նոյն ժամանակի Վենետիկյ գենապանին, որ ամենայն ազնուութիւն ցայց տուաւ՝ ձեռնոտու և առաջնորդ ըլլալով իրենց ամեն տաթի մէջ, որչափ ժամանակ որ մեացին քաղաքին մէջ։ Տարաւ ներկայացուց զիրենք Հաւատասիւռ Ժողովոյն Նախագահ ծիրանաւորին, որուն յանձնեցին իրենց թուղթերը և վկայագիրները. յետոյ, յարմար ժամանակին, շնորհիւ նոյն դեսպանին անձամբ իսկ ներկայացան Քահանայագետին, իրենց յարգութիւններն ընելու և խնդիրքնին պարզելու առջևը, որ շատ սիրով ընդունեցաւ զիրենք, մանուանդ երր գեռպանը լիուլի գովեստներ խօսեցաւ միարանութեան և Հիմնադրին վրայ։ Կղեմէս ՓԱ, ստովիւ զօրովաէր հայր մը, չերցաւ արտաստոքը բանել, երբ լուց համառաւ բայց սրտայոյզ պատմութիւնը միաբանութեան կրած վշտերուն և հաբածանաց, և իմացաւ ընդհանուր քրիստոնէից՝ մանաւանդ կաթողիկեայց աղետալի վիճակը արևելքի մէջ։ Եա քաջալերեց զիրենք և խոստացաւ փութով և յօժարութեամբ կատարել իրենց խնդիրը, և տաւով իւր առաքելական օրհնութիւնը համօրէն միաբանից և

մանաւանդ իրենց յարգելի Գլխոյն, սիրով արձակեց զանգնք, և յիրաւի, ըստ իւր խոստման, անյապաղ Ծիրանաւորաց ժողովոյն յանձնեց միաբանութեան գործը, ինչպէս սովորութիւն է, որպէս զի քննուի և ըստ այնմ տրուի Ա. Աթոռոյն հաւանութիւնը<sup>1</sup>: Աակայն վեց ամիս անցաւ և գեր գործը հաղիւ սկսաւած էր, որտես ուրիշ պատճառ չկար՝ բայց այն ամէն տեսակ քստմենելի չարախօսութիւնք, որ անդադար կը հասնէին արևելքէն, որոնցմով հակառակորդք կ'աշխատէին աղարսել Մխիթարայ և միաբանութեան համբաւը, և այսպէս կործանել այնշափ տառապանքով բարձրացած չէնքը: Այդ զրպարտութիւնք եթէ ուրիշ հետևանք ալ չանեցան, բայց յապաղեցին միաբանութեան գործը, զանազան կաոկածներով շփոթելով ժողովականներէն ոմանց միտքը, և միւս կողմէն՝ Մխիթարայ որտին նորանոր կոկիծներ և տագնապներ պատճառեցին: Հաղիւ կը հերքուէին նախկին չարախօսութիւնք, ուրիշներ կը յաջորդէին, որով խնդիրն երթալով կնճռոտ դրութեան մէջ կը մտնէր, և սոէսպ թղթակցութիւնք կ'ըլլային ընդմէջ Մխիթարայ և Ա. Ժաղավոյն, ոչ սակաւ տարակոյսներ ծագելով համառօտ Աահմանաղբաւթեան ինչ ինչ միին կէտերու նկատմամբ, որոնք բացարութեան կարօտ էին. և այսպէս շատ դանդաղաբայլ կը յառաջէր գործն, և կրնար զուշակուիլ թէ որչափ երկար պիտի տևէր քննութիւնն և վերջնական որոշումն. ուստի աւելորդ համարելով իրենց երկուքին միանգամայն հօն մեալը, Հ. Եղիա վարդապետ հաճութեամբ ժաղովոյն դարձաւ ի Մեթոն 1706 տարւոյն: Միաբանք, լսելով գործին յապաղումը և

1. Հոռմաց մէջ ուժ սրբազն ժողով (Congregationes) կան, ժիրանուորներէ և հմառ եկեղեցականներէ կազմուած, որոց գործն է քննութեան առնուց ո՛ւ և է կրօնական կամ եկեղեցական, հաւատոյ կամ բարոյից վերաբերեալ խնդիրները, վէհէր, տարակոյսներ, և այլն, և ըստ այնմ որոշել և սահմանել: Անոնց մէջ զիւռաւորներէն մին է՝ Համարելու (de Propaganda fide) կոչուածն, երկու զիւռաւոր մասներէ կազմուած՝ արեւելու և արեմաւելու, որ կը նակէ և կ'ուղղէ աշխարհին վրայ եղած բոլոր կամբողիկէ առաքելութիւնները, և յատկապէս իրեն կը պատկանի՝ որոշէլ, սահմանել արեւելուն եկեղեցեաց նկատմամբ ժաղած ամենայն խնդիրները: Եւերկայ պատմուած գլուքերուն ժամանեակ, այդ ժաղովոյն նախագահն էր՝ Յովանի Սակրիպտակ ժիրանուորն:

առժամեայ անյաջողութիւնը, լքեալ և տիսուր վիճակի մէջ էին. միարանութեան գոյութիւնը կախուած էր ժողովոյն տալիք վճռէն, ուստի սրտատրով կը սպասէին՝ թէ ինչ կերպարանք պիտի առնուր խնդիրը. հասնելով Հ. Եղիա վարդապետ և պատմելով Քահանայապետին իրենց տուած սիրալիր ունկնդրութիւնը և ցուցած հայրական գորովը, զամէնքն ալ գուարթացուց և ոգևորեց. Մխիթար Աբրայ իմանալով, թէ Հ. Յովհաննէս ստիպուած էր տարիներով Հռովմ մեալ, զրեց իրեն որ փոյթ ընէ կատարեալ կերպով ուսանելու իտալերէն և լատիներէն լեզուները, որոնք այնքան կարևոր էին միարանութեան. ինքն ալ, որ վերիվերոյ միայն տեղեկութիւն մ' ունէր յիշեալ լեզուց, իւր այնքան զբաղանաց մէջ ժամանակ գտաւ, իրեն սովորական տոկունութեամբ և մեծ ընդունակութեամբ, այնչափ հիմնովին հմտանալու անոնց, որ յետոյ նոյն լեզուներէն զանազան զրքեր հայերէն թարգմանեց:

## ԳԼՈՒԽ Դ.

Միաբանութեամ մէջ մուտ կը գտնիմ առաջիմ անզամ հիւանդութիւնը և մամ. — յամը կերպով կը հիւանդամայ Միիթար և կ'առողջամայ յուրախութիւն ամենում. — չ. Մամուէլ վարդապետ առաջիւթեամ կը զրկուի յևգոկիա. — Կարգէ դուրս չըքաւրութիւնը Միաբանութիւն և տմտնակամ անյաշողութիւնը. — Միիթար, պարտքերու ներքն մնչուած, ծեաք կը զարմէ վաճառամ շինութեամ և յաջողութեամը կ'աւարտէ:

**Կ**եանքը՝ յարատեւ պայքար մ'է երկու ներհակ ուժերու. մին՝ ներքին բնազգումն է մարդուս, որով կը ձգնի ոգուով չափ պահպանել իւր գոյութիւնը, և միւսը՝ մահն է, որ իւր հազարումէկ թակարդներով կը գարանի մեր գոյութիւնն: Ո՞րքան վաւնդներով շրջապատռուած ենք մեր առաջին ոտնփոխէն. ո՞րքան դառնութիւնք խառնուած են մեր կենաց բաժակին մէջ. ո՞րքան փուշեր մեր ճանապարհին վրայ. «Ո՞չ ապաքէն իրրեւ գիործութիւնն են կեանք մարդոյ ի վերայ երկրի»: կը զոշէ Յովը, այդ դառնութեանց և հարուածներուն ամենէն փորձառուն: Կենաց այդ խիստ օրէնքին կը հապատակին, ոչ միայն անհատները, այլ նոյն խոկ ընտանիքներ, ընկերութիւններ և ազգեր: Միսիթարայ հիմնած միաբանութիւնն ալ իւր խանձարուրքէն սկսաւ այդ կոփեւ. հալածանաց մէջ բացաւ աշքը, փոթորիկներու միջէն անցաւ, և նաւահանգստին մէջ անզամ շդազրեցաւ յահախ ալէկածուելէ. սոսխաց աշքերէն հեռու, շազատեցաւ անոնց խայթող լեզուներէն և զրչէն. սակաւ տարիներու մէջ որպիսի ճգնաժամներ անցուց չմնաց աղետից և հարուածներու տեսակ մը՝ զոր շի կրեց. միախուռն յարձակեցան վրան հիւանդութիւնք, մահ, շքաւորութիւն, շարախօսութիւն, ներքին և արտաքին տաղնապք, հալածանք, հուր և սուր, զերութիւն, և վերջապէս աւեր և քոնդումն պատերազմի. — ահա միաբա-

նութեանս Մեթոնի մէջ անցուցած տարիներուն նկարագիրը : Տարակոյս չկայ թէ այս բոլոր արկածներուն մէջ մերթ ընդ մերթ ունեցաւ նաև յաջողութիւններ , որոնք շատ սակաւատե եղան , և հազիւ աղօտ չող մ' արձակեցին համատարած տիսուր պատկերին վրայ , նման այն վայրկենական լուսոյն , զոր կ'արձակեն փայլակները փոթորկալից ամպերու միջէն :

Հազիւ գետեղուած Մեթոնի մէջ՝ փռքրիկ , նորատունեկ միաբանութիւնը , երբ մտադիր էր Միսիթար կարգաւորել իրենց տնտեսական կացութիւնը , և բանալ իրեններուն առջև ընդարձակ ասպարէզ մը գործելու և յառաջադիմելու առաջինութեան և ուսմանց մէջ , զիրար գերազանցելու մրցանքը վառելով աշակերտաց սրտին մէջ , և ահա յանկարծահաս հիւանդութիւն մը , — հետեւանք անսովոր կլիմային , ջրոյն և օդափոխութեան , և որմէ ոչ ոք ազատ մնաց , բաց ի Միսիթարէն և մի քանիներէն , որոնց առողջութիւնն հարկաւոր էր հիւանդաց ծառայելու համար , — մեծամեծ վշտեր պատճառեց ամենուն և կասեցուց առժամն միաբանական կենաց կանոնաւոր ընթացքը : Արքան ծախիքեր բժշկի և դեղորէից այն յետին շքաւորութեան ժամանակ . որքան բազմածուփ հոգեր պաշարեցին զՄիսիթար , երբ իրեն շուրջը տեսաւ մառախլապատ , ոչ մէկ կողմէ դրամական օգնութեան յոյս մը չերեւելով . և սակայն շղեգեեցաւ նա իւր մեծ հաւատքին մէջ , պինդ բռնած միաբանութեան զեկը , կ'ուղղէր և յառաջ կը վարէր զայն , մինչև որ ամենքն ալ կատարեալ կերպով առողջացան : Միայն նորընծայ ոլատանիներէն մին , Յովհաննէս անունով , որ յետոյ Հ . Թովմաս կոչուեցաւ , շազատեցաւ հիւանդութենէն . մահամերձ և յուսահատ վիճակի մէջ , բժշկին խորհրդով՝ հոգացուեցան իրեն բոլոր հոգեսոր պատրաստութիւնք : Դեռ նոր հիմնուած և սակաւաթիւ միաբանութեան մէջ առաջին անգամ մուտ պիտի զտնէր մահը , և պիտի խլէր Միսիթարայ սանիկներէն մին՝ ծաղիկ հասակի մէջ . ո՛հ , որշափ ծանր էր իրեն՝ այդ զոհը . նա , որմէ մրրիկներն անգամ ակնածեր էին , փորձեց մահուան առջևն առնուլ և յաջողեցաւ : Հիւանդը վերջին բողէներուն հասեր էր . բժիշկը , յայտնելով անոր անյոյս

վիճակը, ձեռքը քաշեր էր. Միսիթար և բոլոր միարանք հուանդագին աղօթեցին, և հիւանդը նոյն ժամէն բարւոքում մը զգաց, վտանգը անցուցեր էր: Երկրորդ օրը եկաւ բժիշկը, իրը մեռելոյն յուղարկաւորութեան համար կարեւոր հրահանգները տալու. որչափ մեծ եղաւ իւր զարմանքը, երբ ոտքի վրայ դտաւ հիւանդը: Աւրիշ անգամ մ'ալ դարձեալ վարակեցաւ հոն հիւանդութիւնը. այս անգամ այնշափ անողոք էր, զօր Միսիթարայ աղօթքն և արտասուր շկրցան ամրաել. հարկ էր վերջապէս խոնարհիլ օրհասին առջեւ, որ այնպիսի երազութեամբ յափշտակեց նորընծայ աշակերտներէն մին, Ստեփանոս անունով, որ հազիւ կրցաւ կրտսնաւորական ուխտերով ինվոյնքը Աստուծոյ նուիրել, նախ քան խամրիլը՝ գեռափթիթ ծաղկի նըման՝ մահուան հարուածին ներքեւ: Այդ զոհն անհրաժեշտ էր կարծես, մահուան յագուրդ մը տալու և բաւական տարի հեռի բանելու համար դայն:

Արտաքին ցաւերուն յաջորդեց ներքինը, որ շատ աւելի ծանր էր Միսիթարայ որտին: Իրեն խնամու աջոյն ներքեւ մինչ կը տիրէր երջանկութիւնը, ամենուն դիմաց վրայ փայլելով զուարթութիւնը, իրը ցոլացում մը ներքին խաղաղութեան և գոհութեան, և կը փթթէր կը ծաղկէր միարանութիւնն իրեւ բուրաստան մը, և ահա կը բուսնէր հոն որոմը, հակառակ այնշափ քրտանց մշակին, և փուշ կ'ըլլար անոր զորովոտ որտին: Հասարակութեան արդինաւոր անձինքներէն մին, Հ. Գեորգ Այնթապցին, իւր անզուսազ լեզուով պղտորելով ոմանց՝ մասնաւնդ մանկագունից միաքը, կը խանգարէր շատերուն խաղաղութիւնը. հարկ եղաւ հեռացնել զինքը միարաններէն, նախակին անգորրութիւնը և բարեկարգութիւնը նորէն հաստատելու համար: Անբաժելի վերք մ'եղաւ այդ՝ միարանութեան Գլխոյն, որուն վրայ ծանրանալով ուրիշ ներքին և արտաքին վշտեր, հրատապ վերմախտավ — թուրքիրէն հիմնես կոչուած — հիւանդացաւ մահացու կերպով: Աննկարազրելի է աշակերտաց տագնապը. հիւանդութիւնն այնպիսի ծանր կերպարանք մ'առաւ, որ վայրկեան մը ամէնքն ալ վախցան, թէ միարանութիւնն ալ հոգեվարքի նզնաժամամին մէջ էր, և անոր օրերը համբաւած

էին. բայց երկար շտեեց այդ ճղնաժամը, երկնից զթալիր ակնարկ մը բաւական եղաւ սրբել անոնց արտասուքը, և չնորհել իրենց այն կեանքը, որուն պահուած էր մեծամեծ գործերով բեղմաւոր ապագայ մը: Միիթար Հազիւթողած մահինք, ձեռք առաւ վարչութիւնը, և իսկոյն սկսաւ շարժիլ վանական կենաց կազմածն իւր բոլոր ուժով. դասախոսութիւնք, հոգեւոր խրամաք, զրական և կրթական վարժութիւնք, տնտեսական գործք և մատակարարութիւնք, բոլորն ալ իրենց շրջանին մէջ մտան: ՅԵւզոկիա առաքելութեան զրկեց Հ. Մանուէլ վարդապետը, զուարթ, եռանդուն և գործունեայ անձ մը, որ զնաց ժողովրդեան ցաւերը բռնիւթեաւ, ոչ միայն իրրե հոգեւոր դաստիարակ մը, այլ յաճախ նաև իրրե մարմաւոր բժիշկ մը, աղքատ հիւանդներուն ձրիաբար գեղ ու գարման ընելով, որուն փոխարէն կ'ընդունէր ժողովրդեան անկեղծ ոէրը և երախտագիտական զգացումները. Մեծ էր գործոնէւթիւնը վանքին մէջ. մէկ կողմէն կ'առաւելուր երթենեկը Պոլսէն ի Մեթոն և փոխադարձարար. ուսանող պատանիներէն ուրանք օր կազմում չունէին կրօնաւորական կենաց, ետ կը դարձուէին, և անոնց տեղ ուրիշներ կը հասնէին արևելքէն. միւս կազմէն՝ որոնց օր տարիքը զարգացեր և արժանաւորք էին, կ'ուժատէին և սրբազն աստիճանները կ'ընդունէին. ձեռնազրիչն էր Յովիսան եպիսկոպոսը, որ այն ժամանակ Մեթոն կը գտնուէր և միաբանութեան մէջ կ'ապրէր:

Այդ ժամանակաւոր յաջողութիւնք շկրցան վարատել այն մթութիւնը, որ չէր թողուր Միիթարայ տեսնել իւր գործին ապագայն. նա զժուարութիւններէ զատ ուրիշ բան չէր տեսներ զիմացը, և կը խորհրդածէր — ոչ առանց տիրութեան — թէ ու է ձախող ելք մը, ոչ միայն յազմանակ մը պիտի ըլլար իրեն սոսխաց, այլ և մեծապէս վնասակար պիտի ըլլար ազգին բարոյական շահերուն: Նա զրեթէ ապահով էր, թէ Հոռվմ իւր գործին նպաստաւոր վճիռ պիտի տար. նա չէր վախեր յայտնի հարածանքէն, որ մինչև այն օր միշտ շահեկան եղած էր իրեն. բայց կը վախէր նա զաղանի հալածանքէն, ծածուկ թըշնամութենէն, քառ լեզուներէն, որոնք կը ձկոտէին մեռցնել

բարոյապէս, քանդել հիմովին միաբանութիւնը. կը սոսկար նա պարտքէն, զոր ստիպուած էր ընել իրենց կեանքը պահելու համար. այդ երկուքին ալ փորձը առաւ Անթոնի մէջ հաստատուելուն առաջին տարիներուն, ինչպէս պիտի պատմենք հիմայ:

Երկրին իշխանաց պայմանեալ երեք տարիներն երագործն կ' անցնէին, հարկ էր որ մ' առաջ ակսիլ զոնէ վանքին չի նութիւնը, իրենց իրաւոնքներէն բոլորովին շղթկուելու համար. բայց ի՞նչզգէս ճարել դրամը այն յետին շքաւորութեան մէջ, մինչ կալուածոց եկամուտները հաղիւ կը բաւէին իրենց ամէնօրեայ պէտքերուն, յանախ կարևորն իսկ զլացուելով, մանաւանդ որ անձանց թիւն ալ օրէ որ անելու հետ էր. ուրիշ հնարք չկար, բայց միայն փոխ առնուլ և պարտուց տակ մնչուիլ: Անթոնի մէջ հարուստ վաճառական մը կար հայազգի, որ Եւգոկիա պիտի երթար. Ախիթթար փոխ առաւ անորմէ հինգ հորիւր դահեկան, մուրհակ մը տալով ձեռքը՝ որ Հ. Աննուէլ վարդապետին տանի և անկէ առնու իւր դրամը. զրեց վերջնոյս ալ, որ Եւգոկիացի բարեպաշտներուն հաւաքած պատարագի ողարմութիւններէն, որոնց գումարը զրեթէ հազար դահեկանին, հինգհարիւր դահեկան հատուցանէ յիշեալ վաճառականին, և մնացածն ալ փութով իրեն զրկէ: Անձ յաւով թէ քանի մ' ամսէն ձեռքը պիտի հասնէր այն դրամը, շինութեան կարևոր նիւթերը զնեց, կանչեց որմնադիրներ և հիւսեր, սակարկութիւն ըրաւ անոնց հետ, և վանքին հիմը ձգեց Անթոն զգեկին մէջ, 1706 տարւոյ մարտ ամսոյն, դաշնադրելով զործաւորաց հետ, որ երր վանատան այն մասն աւարտին, որ իրենց ընտկութեան պիտի ծառայէր, չէնքին բանալին իրեն յանձնեն, և շինութեան դրամն ընդունին: Ինքն անձամբ չինողաց վրայ կեցած, կ'առաջնորդէր անոնց, կը փութացընէր գործը, որ անկարծելի երագութեամբ կը յառաջէր. կը մտածէր նա՛ թէ յետ աւարտելու վանքին և եկեղեցւոյն շինութիւնը, մեծ բեռէ մը թեթևնալով, այնուհետեւ ազատորէն պիտի նուիրէր ինքզինքը միաբանութեան ներքին կացութիւնը բարւոփելու և ուսումնական վիճակը զարգացնելու: Երբ դեռ չէնքին կէսն աւարտած

շէր, սպառելով Մխիթարայ ունեցած դրամը, միաբանութեան կալուածներուն երկու տարուան բերքը ստիպուեցաւ հինգ հարիւր գահեկանի վաճառել. և այն ալ չբաւելով ամբողջ շէնքին համար, բանադատուեցաւ ուրիշ դրամ ևս փոխ առնուլ հարուստ Քիացիէ մը և նոյն իսկ տեղացի հրէայէ մը ժանր տոկոսով. և այսպէս, պարտքերու տակ ձնչուեցաւ, մինչև որ վանքին շինութիւնը վերջացաւ նոյն տարին (1706) հոկտեմբեր ամսոյն Վանքին ձեն երկայն քառակիուսի էր, որուն երկայնութիւնն էր զրեթէ հ2 մետր, իսկ լայնութիւնը՝ 3/4 մետր. բնակութեան յատկացուած մասն ունէր երկու սրահ և տասնեւեօթն սենեակ. գետնայարկէն վերին սրահը երնելու համար երկու քարոշէն սանդուղք կային. պատերը՝ կրով իրարու մածուցած անտաշ քարերէ շինուած էին. պատուհաններու և դրանց սեմերը փայտաշէնք էին, բայց վայելուչք, ինչպէս ամբողջ շէնքն ալ բարեշափ և ձևաւոր, գեղեցիկ տեսարանով, ծովահայեաց և բարձրադիր, ինչպէս կը կարդանք Մխիթար Աբրահամ խրատուց մէջ, թէ սա եզերը նաւահանգըտին էր սահման մենաստանիս մերոյ<sup>1</sup>»։ Մեթոնի մէջ անոր նման գեղեցիկ շէնք չկար, այնպէս որ բոլոր տեսողք կը զմայլէին, և ճարտարապետն էր նոյն ինքն Մխիթար, որ առանց ճարտարապետուկան արուեստը ուսանելու, բնաւուը հանճար և ճաշակ մ' ունէր, զոր յետոյ զերազանց կերպով փայլեցուց ։ Պազարու վանքին շինութեան մէջ, որ մինչև ցարդ բոլոր այցելուաց հիացումը կը յափշտակէ։

Երբ պատրաստ էր նորաշէն բնակարանը, թողուց Մխիթար այն տունը՝ որ երեք տարուան համար արուած էր իրենց, և ձմրան սկիզբը (1706ի նոյեմբերին) տարաւ բնակեցուց իրենները վանատան մէջ։ Անգատմելի էր առնոց ուրախութիւնը, երբ կը տեսնէին իրենք զիրենք՝ իրենց յատուկ վանատան մէջ, համարելով թէ մեծագոյն վտանգը անցուցած էին, առանց մտածելու անշուշտ թէ պարտքերն ալ երթալով կը դիզուէին, այնպէս որ 1707 տարին կը սկսէին՝ մօտ 4000 գահեկանի պարտքով, որ շատ բան ըսել էր այն ժամանակներուն համար, և քիչ

անդամ՝ պատահած չէ՝ որ միարանութեանց քայլայուելու պատճառ եղած են պարզապէս զրամական ձախողութիւնք Ախիթար, որ ճարտար տնօտեսագէտ և մտակարար մ' էր, ինչպէս պիտի երեխ այլևայլ առթից մէջ, ամէն հնարք և խնայողութիւն ի զործ կը դնէր, նորանոր փոխառութեանց հարկին մէջ շինկնալու և պարտուց բնաը թեթեցնելու համար, ապա թէ ոչ՝ զիմացը այնպիսի վիճ մը պիտի բացուէր, զոր անկարելի պիտի ըլլար լեցնել։ Տեղոյն բընակիչք այնչափ աղքատ էին, որ տակաւին պատարագաց սպարմաթիւն տալու ոսվորութիւնը հաստատուած չէր հոն. որով ամենեմին զրամական նորաստ մը չէր ըլլար միարանութեան, թէ և տասը քահանայք կային՝ որոնք ամէն որ կը պատարագէին. հետեւարար բանադատուեցաւ Ախիթար զրաւի զնել նոյն իսկ եկեղեցւոյ զգեստները և սպաները, և այնպէս փոխառութիւն ընել ծանր տոկոսով, որ գոնէ ապրելու շափ աղքատիկ կերակուր մը և զգեստ ունենային։ Այս տագնապին մէջ, արևելք դարձած կը սպասէր անձկագին ու է օգնութեան մը, երբ փոխանակ զրամի կը հասնէր ախուր լուրը, թէ հակառակորդաց շարութեամբ կորուսեր է եւդոկիացի բարեպաշտներուն հաւաքած զրամը, և նոյն իսկ Հ. Մանուէլ վարդապետ պարտագիտ տակ ինկեր էր։ Այդ լուրը կայծակի հարուած մ'եղաւ Ախիթարայ, մասածելով թէ ինքն այսափ կը տառապէր ազգին համար, և ազգայինք ուրիշ փոխարէն չէին ըներ իրեն, բայց խոչընդակներ հանել զիմացը, զըդուել ոգիները, և եթէ կարելի էր, կործանել իւր զործը. վասն զի գիտէին հակառակորդք թէ ինչպիսի շքաւորութեամբ կը տուայտէին Ախիթար և իրենները ստարութեան մէջ, զիտէին Մոռէայի իշխանաց պայմանագրութիւնը, հետեւրար անոր զործը ոչընչացնելու ուրիշ միջոց չկար, բայց զրկել զինքը զրամական նպաստներէ, որով շկարենալով սկսիլ վանքին շինութիւնը առհմաննեալ ժամանակին, պիտի զրկուէին իրենց կալուածներէն և իրաւունքներէն, և զործն ինքնիրեն պիտի քայլայուէր. այս էր հակառակորդաց լարած սրուայթը, և իրը իրազործուած սկսան ծաւալել ամէն տեղ, թէ ցիրուցան եղաւ Ախիթարայ միարանութիւնը, աւելորդ է այլ ևս տղայ և զրամ՝ զրկել։

Յիշենք հոս համառօտիւ թէ ինչ պարագաներով պատահեցաւ զրամի այդ կորուստն, և ինչպիսի ծայրայեղութեանց ոգին:

Եւգոկիոյ մէջ երկու ընդդիմակ կուսակցութիւնք կային, որոնք հակառակ զաղափարներ և զգացումներ ունեին Միսիթարայ միաբանութեան նկատմամբ. մին՝ սէր և յարգանք կը տաճէր առ նո, միւսը՝ սասաթիկ ատելութիւն մը կը սնուցանէր սրտին մէջ անոր հակառակ. երկուքն ալ հաւասար ուժերով կը գործէին ընդդէմ կամ ի նպաստ՝ իրենց զգացումներէն մղուած: Առաջնոյն զլուխ էր Թորոս անունով առաքինի, ողորմած և բարեսէր անձ մը, ծանօթ Միսիթարայ և հիացող անոր առաքինութեանց վրայ. սա, իրեն ողորմութեամբք ամենէն սիրուած և յարգուած, ինքնակամ իրեն վրայ ստունձնելով միաբանութեան գործակալի պաշտոնը, իրեն մօտ հաւաքեր էր եւգոկիացի բարեպաշտներուն տուած ողորմութիւնները, և այն զրամը շահեցներու համար՝ կտու զներ և ներկարարաց տուեր էր: Հակառակորդք, նախանձու վասուած, սկսան շարախօսելի իրը թէ Թորոս իրեն յանձնուած զրամը վատներ էր, կամ իրեն յատկացուցեր էր, արգէն խակ կործանած ըլլարով Միսիթարեան միաբանութիւնը. և կը ստիպէին նուիրատունները, որ ես պահանջեն իրենց տուած զրամը: Ի զուր ջանաց Հ. Մանուէլ վարդապետ հերթել հակառակորդաց զրագարտութիւնը. ոչ ոք ուշ գարձուց իրեն, շափազանց զրգուած ըլլարով ոգիններն. ևս աւելի մեծ եղաւ Թորոսի տաղնապը, երբ տեսաւ որ ամէն կողմէ վրան յարձակեցան և ետ կը պահանջէին զրամնին. նա բանադատուած՝ դիւրագնի վաճառեց կտուը և հատոյց իրաքանչիւրին զրամը: Այս տազնապալից օրերուն մէջ էր՝ որ Եւգոկիա կը հանէր հայ վաճառականը, որմէ Միսիթար հինգ հարիւր գահեկան փոխ առած էր. տարաւ Հ. Մանուէլ վարդապետին և Թորոսին տուաւ մուրհակը, որ հատուցանեն իրեն հինգհարիւր գահեկանը. վաճառականին ձեռքով հասան նաև Միսիթար Արքայի նամակները՝ զըրուած այլեւայլ եւգոկիացի նշանաւոր անձանց, որոնց մէջ կը պատմէր թէ միաբանութիւնն օրէ որ աճելու հետ էր, վանքին շինութիւնը սկսեր էր արգէն և կը յաւսար յա-

ջողութեամբ աւարտել, և այսու թէ և հակառակորդաց զրագրտութիւնք ի գերեւ կ'ելնէին, բայց ոչ մէկուն սիրու շարժեցաւ՝ վաճառականին պարտքին դոնէ մէկ մասը հատուցանելու:

Ամէն տեղ դիմեցին Հ. Մանուէլ վարդապետ և Թօրոս, մինչեւ որ կրցան հազիւ պարտքին կէսը հատուցանել, իսկ մեացածը՝ միարանութեան վրայ ծանրացաւ: Այս աըխուր դէպքը ծանր հետեւանքներ ունեցաւ: Թօրոսին կեսանքը մաշնեցաւ հոգերէն և տաղնապէն, մտածերով որ միարանութեան այնքան վեասուց պատճառ եղաւ, և վերջապէս մեռաւ քիչ օրերէն: Հ. Մանուէլ վարդապետ ևս սասատիկ հիւսնագացաւ սրտի ցաւէն, և Թօրոսին կատարածը շունենալու համար, ստիպուեցաւ թողուլ Եւգոկիան և Պողիս երթալ, հետը մի քանի պատանիներ առնըսք՝ Մեթոն դրկելու համար: Ասխանձու կամ գրգռութեան ոգին անդամ մի որ արիէ մէկուն սրտին, կը մղէ զայն գահավիժարար վախերու մէջ, և կանդ շառնուր՝ մինչեւ որ անդունդին յատակը չհասցունէ: Եւգոկիացիք ոչ միայն կ'արդելուին պատանիները՝ որ չերթան աշակերտելու Միսիթարայ, այլ ուզերով հզօր նախանձորդ մը յարուցանել Մեթոնի վաեքին, քսանենութ տարեկան Սերասացի ուշիմ և ընդունակ սարկաւագ մը Հոռվմ զրկեցին, որ երթայ բարձրագոյն ուսումն առնու Ուրբանեան վարժարանին մէջ, քահանայ ձեռնազրուի և գառնալով միարանութիւն մը հատատէ Եւգոկիոյ մէջ: Գնաց նա, յաջողութեամբ աւարտեց ուսումները, քահանայ և վարդապետ եղաւ և հայրենիք դարձաւ: բայց Սօլոսը՝ փախուած Պօղոս եղած էր, և փօխանակ նախանձորդ և հակառակորդ մ'ըլլալու Միսիթարեանց, եղաւ անոնց սերտ բարեկամ մը:

Մինչ մայր աշխարհին մէջ, նոյն իսկ Միսիթարայ խանձարուրք եղած տեղույն շուրջը, այսպիսի մեքենայութիւնք ի զործ կը դրուէին միարանութեան հակառակ: Մեթոնի մէջ ալ աներեւակայելի նեղութեան և տառապանաց տարիներ կ'անցընէր նոյն միարանութիւնը: Մինչեւ այն ժամանակ կրցեր էին դռնէ իրենց օրապահիկը հարել, և ամէն օր անպակաս էր սեղանին վրայ հաց կամ տեսակ մը

բանջարեղեն կերակուր . իսկ այժմ այն աստիճան հասաւ աղքատութիւննին, որ օրական ուտելու հաց անզամ չունէին, և զգեստնին չափազանց չնացած և մաշած էին : Մխիթար, այս բոլոր հոգերուն և տագնապներուն մէջ, այն էր՝ ինչ որ էր լիութեան կամ յաջողութեան ժամանակ . զուարթ, զոհ, հանդարտ, առանց երբէք դէմքին վրայ նշան մը ցուցնելու, որ յայտնէր օրաին տագնապը, առանց երբէք վհատութեան կամ տրտունջի խօսք մը բիրնէն հանելու : Եատ որեր արտասովի գնով ձարեց նա միարանութեան որագահիլը . և նու, որ բոլոր կենաց մէջ երբէք ապրուստի համար ձեռք շէր երկնցուցած, զայն ալ ըրաւ իրեններուն սիրոյն համար : Նոյն օրերը երկրին ընդհանուր իշխանն Անձերյ Լյոյ, որ Վենետիկոյ երևելի և բարեպաշտ սեպուհներէն մին էր, կը զտնուէր իրենց մօտիկ Մխիթարա կամ Մխատրաս կոչուած փարբիկ գիւղին մէջ, որ հին Սպարտայի աւերակաց վրայ շինուած է . Մխիթար հասկցուց անոր զրով մը՝ միարանութեան յիտին չբաւորութիւնը . իւր զրոյն իրը պատասխան ընդու . նեցաւ պաշտօնական հրամանազիր մը, որով յարքունուս պիտի տրուէր ցորեն և պաքախմատ՝ որչափ որ հարկաւոր էր իրենց : Իսկ զգեստուց մօսին, որչափ որ բեհեղեղէն կամ ազնիւ կերպասներ բերեր էին հետերնին Պոլսէն, զորս բարեպաշտք տուեր էին, բոլորն ալ առաւ Մխիթար և անձամբ Նաւազինա քաղաքը տարաւ, ուր վաճառելով կամ փոխանակելով զանոնը, ասուեայ սկազայն թանձր ձունձ (ապայ) զնեց, և մէկմէկ կապայ ձեռել տուաւ ամենուն, որ դիմացկուն նիւթ ըլլալով, զրեթէ երեք տարւոյ չափ գործածեցին զայն : Ստկայն այն նիւթը առ հարկի միայն գործածեցին, աղքատութեան պատճառաւ, այնպէս որ երբ վանքին եկամուռներն անեցան, սկսան այն ժամանակ ցփոխ գործածել և հազնիլ :

Նեղութեան տարիներուն յաջորդեցին յանկարծ յաջութեան և լիութեան տարիներ : Երբ Մխիթար դարձու Նաւազիայէն, վերոյիշեալ Լյոյ իշխանն ուրիշ սգնութիւն մ' ալ ըրաւ միարանութեան . անոր պէտքերուն համար չնորհեց հարիւր յիսուն դահնեկան, որ յանցաւորի մը տուդանքն էր : Նոյն երկրին իշխաններուն սովորութիւնն էր

այս . ու եւ է յանցանքի մը համար դրուած տուգանքը՝ աղքատ վանորեկից կը շնորհուէք իրը ողորմութիւն : Այն բարեացագարս իշխանիս անունն անձուէլ կերպով կապուած է միաբանութեանս պատմութեան հետ , որ իրեն բոլոր կենաց մէջ նշմարիտ բարեկամ մ' եղաւ , և ամէն առթի մէջ չի զլացաւ նիւթական և բարոյական ձեռնտութիւն . նա կը զգար անկեղծ սէր մը և յարգանք առ հայազգի վտարանդի կրօնաւորները , ոչ միայն անոնց թշուառ կացութիւնը նկատելով , այլ մանաւանդ այն ձիրքերը և բարուց աղնուութիւնը , որք ընդհանրապէս հաղուազիւտ են արևելեայց վրայ : Միաբանութեանս բարերարաց կարգին մէջ ոչ փորբ տեղ մը կը զրաւէ նաև Սերբաստիանու Մոշենիգոյ իշխանը , որ այն ժամանակները (1707-1711) Վենետիկեան պետութեան բոլոր կղզեաց և նաւերու ընդհանուր հրամանատար և սպարապետն էր , և մտերիմ բարեկամ Միսիթարայ : Այս ևս՝ միաբանութեան ամէն կարեսր պիտոյից մէջ հզօր թեւարկու և ձեռնառու եղաւ . և զիտելով անոր դրամական տագնապալից դիրքը , յանցաւորի մը հարիւր յիսուն դաշեկանի տուգանքին վրայ աւելցնելով իւր կողմանէ ուրիշ յիսուն դաշեկան ալ , ողորմութիւն տուաւ միաբանութեան : Այն Մոշենիգոյ իշխանը , հարուստ և ազնուական տոհմէ սերեալ , իւր պատանի հասակէն Վենետիկոյ հանրապետութեան ամենէն աւելի կարեսր և պատուաւոր պաշտօնները վարելով զարմանալի յաջողաւթեամբ , աստիճանաբար բարձրացաւ իրեն արժանիքը մինչև զքսական գահը , յամին 1722 օգոստոսի 24ին , զոր այլևայլ անգամ պանծալի ըրեր էին իրեն մեծ նախնիքը : Վեհանձն և արդարակորով եղաւ նա իւր բոլոր պաշտօններուն մէջ . ոչ միայն ի նապաստ իւր անձին կամ ընտանեաց շշահազործեց բնաւ պետական զանձարանը , այլ նաև առատօրէն կը բաշխէր կարօտելոց իւր անձնական զանձնն : Այս քաջ և իմաստուն գոտին ժամանակ , Վենետիկ ունեցաւ իրեն փառաց վերջին փայլը , որ սկսեր էր արդէն տարուէ տարի աղօտանալ . 1715 ին Օսմանեան ուժոյն առջև տեղի տալով և ձեռքէ հանելով արգաւանդ Մոռէան , կ' ամրացնէր բերդերով իւր արևելքի կը զիները , Զանտա , Կեֆալոնիա , Կորֆու , և այլն , աշա-

լուրջ ծովակալներ և ճարտարապետներ զբկելով հռն, մեծանուն Շուլէմբուրգ սպարապետին խոհական տռաշնորդութեան ներքեւ:

Տեսնելով Մխիթար թէ իրաց հանգամանքները փոխուեցան, բախար սկսաւ ժպատիլ իրեն, պարտքերը թեթևան համեմատութեամբ, և կալուածներու եկամուտէն վեց հարիւր դահնեկան ժողվեց, եկեղեցւոյ շինութիւնն ալ ուզեց սկսիլ, երկրին իշխանաց պայմանադրութեան համեմատ, մանաւանդ որ վերոյիշեալ Լյմոյ իշխանն յանձն առաւ ձրիարար տալ շինութեան համար պէտք եղած քարը և կիրը: Յետ պատրաստելու կարևոր նիւթերը, հրաման խընդուց կորնթոսի կարիքնի արքեպիսկոպոսէն, որուն իրաւասութեան ներքեւ էր Մեթոն, որպէս զի ինքն անձամբ կատարէ եկեղեցւոյ հիմնարկէքի հանդէսը:

Յունաստանի գարնային անոյշ օրերէն մին էր՝ Մարտի առաջին օրը 1708 տարւոյն. խուռն բազմութիւն մը առաւտէն բանած էր բոլոր հրապարակը, ուր պիտի զրուէր եկեղեցւոյ հիմը: Հանդիսին զլխաւոր զարդը կը կազմէր՝ իմոյ իշխանը, իւր պաշտօնական շքեղ զգեստներով և շքանչաններով զարդարուած, որուն շուրջը պսակ կը կազմէին մեծամեծք, տեղւոյն նշանաւոր անձինք, բազմաթիւ պաշտօնեայք և զօրապետը. իսկ զինուորաց բազմութիւնը՝ իրենց հրազէն անօթներով, և փողահարք իրենց շեփորներով՝ կեցեր էին պարիսպներուն վրայ: Մխիթար զգեստաւորուած և շորս կողմը ունենալով իւր միարաններուն խումբը, յետ կատարելու հիմնարկէքի պատշաճ ազօթքները և արարողութիւնները, մօտեցաւ իշխանին և հրաւիրեց որ բոնէ անկիւնակալ քարին մէկ ծայրը. և երբ հայ վարդապետը և վենետիկցի իշխանը, իրենց յատուկ շքեղ տարագներու մէջ, միասին փոսը կ'իշնէին զետեղելու հիմնարարը, նշան տրուեցաւ և իսկ և իսկ հնչեցին հրազէններու որութնդաստ բոմբիւնք և շեփորներու ցնծալից զուշիւնները, որոնք նոյն վայրկենին մոռցնել տուին Մխիթարայ մինչև այն օր կրած բոլոր տառապանքները, և ուրախութեան արտասուաց շիթ մը փայլեցաւ դէմքին վրայ: Եկեղեցին պիտի կանգնէր յանուն Նախահօր Աւխտիս՝ Ա. Անոնն Արքայի: Այսպիսի շքեղ հանդիսիւ հիմնարկէքը



ALVISE SEBASTIANO

1448 - 1488


Alvise Sebastiano  
CXII Doge

MOCENIGO

1448-1488

Mocenigo  
di Venezia





97-112

կատարելէն վերջ, Ախիթար զնաց իրեններով շնորհակաւութիւն յայտնելու իշխանին, որ քառասառն վենետիկեան սոկի. զնելով Արբահօր ձեռքը, իրը նպաստ մը եկեղեցւոյ շինութեան, գոհութեամբ պալատը դարձաւ: Ախրինները մինչև այն ժամանակ եկեղեցի շունենալով, տան սենեկաներէն մին աղօթարանի վերածեր էին, ինչպէս ըսինք, և հոն կը կատարէին իրենց ժամերգութիւնները, մտածականները և ուրիշ հասարակաց աղօթքները. ուստի, տեղւոյն փոքրկութեան պատճառաւ, անշուք կերպով կը կատարուէր ամէն բան, ոչ թափօր, ոչ ձայնաւոր պատարագ և ոչ ուրիշ հանգէսներ կ'ընէին, որով զուրկ էին մասամբ մը հոգևոր միիթարութենէ. իսկ քահանայք ամէն օր Լատինաց եկեղեցւոյն մէջ կը պատարագէին: Եկեղեցւոյ որմերը վեր կը բարձրանային փութեկու աճապարանքով մը, Ախիթարայ հոկողութեան ներքեւ և բոլոր միաբաններուն ոգելից խանդավառութեան մէջ. այնպէս որ քանի մ'ամսուան մէջ զրիթէ բոլորովին աւարտեցաւ եկեղեցին, աւագ խորանը կառուցուեցաւ և ամէն բան ի կարգի էր: Սակայն զրամը շրաւեց եկեղեցւոյ ծածքին համար, և վախնալով դարձեալ պարագերու տակ ձնշուելէն, առ ժամեն փայտեայ առաստաղով ծածկեց եկեղեցին, և նոյն տարւոյ (1708) հոկտեմբերի կիսուն, ոչ նուազ զօրովալիր հանգիսիւ կատարուեցաւ օծութիւնը, և սկսան այնուհետեւ հոն պատարագել և ժամերգել ամէն օր: Շատ սրաւյոյդ եղած է անշուշտ, երբ առաջին անգամ հնշեցին, նոր կոմորներուն ներքեւ, մեր նախնեաց գեղեցիկ և զրաւիշ եղանակները, զորս հայրենեաց ծոցէն՝ իրը սիրուն աւանդ մը՝ բերած էին հետերնին: Երեք տարի եկեղեցին մեաց այնպէս, մինչև օր շատ կողմերէ յաձախելով ողորմութիւնք և նուէրք, — ոչ միայն զրամ, այլ նաև եկեղեցական սպասք, սկիհէք, մասնաւուփք, չուրջառք, ևն, — հատոյց Ախիթար բոլոր պարագերը, շինեց եկեղեցւոյ ծածքը, յամին 1711, և սպիտակ բառվ վայելլացուց ներքին կողմը. նոյնպէս վանքին մի քանի թերի մեացած մասերը ամբողջացուց, վայելուշ սեղանատուն մը և հասարակաց համախմբութեան համար ընդարձակ սենեակ մը շինեց. զնեց վանասան կից երկու տուները, և կործանելով զանոնք, փողոցի վեր-

ածեց, որով վանքը չորս կողմէն զատուեցաւ աշխարհաւ կանաց տուններէն, և կղզիացած ամիսի զիրք մ' տռաւ: Գիրդերուն մէջ ժաղկեցուց տնկագործութիւնը, որթի և ձիթենւոյ մշակութիւնը, տուներ շինել տռաւ: և այդ բոլորը յատուկ զօրծակալի մը հսկողութեան յանձնեց, որով տարուէ տարի միաբանութեան եկամուտք կ' աճէին: Այնուհետեւ բոլոր ուշը դարձուց միաբանութեան ներքին և արտաքին բարեկարգութեան: ուսանող պատանիքը երկու դասարանի բաժնեց, մեծերուն՝ բարձրագոյն ուսումները, հոնութութիւն, իմաստափրութիւն և աստուածաբանութիւն կը դասախոսէր. իսկ փաքրիկներուն՝ նախնական ուսումները, քերականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուարանութիւն, և այլն: Ամէն երկու շարաթ կամ զոնէ ամիսն անդամ մը կը համախմբէր զանոնք և այլնայլ ուսումնական հակածառութիւններ և բանախօսութիւններ ընել տալով, կը կրթէր անոնց միաքը: Միսիթար, անձին օրինակովը, կ' ուսուցանէր հաւասար քայլով զարգանալ առաքինութեան և զիտութեան մէջ, որով ընդհանուր համակրութեան և յարգանաց առարկայ կը դառնային, ինչպէս կ' իմանանք այն բոլոր վկայագիրներէն՝ զորս իրենց տուին Մոռէայի իշխանք և հրամանատարք, 'Եանի' յամին 1705, Էմոյ՝ յամին 1708, Լորեդան՝ յամին 1711, Դոլֆին՝ յամին 1715, և այլք, որոնք միաբերան կը գովին Միսիթարայ բարեպաշտութիւնը և խոշական առաջնորդութիւնը, ինչպէս նաև միաբանութեան օրինակելի և բարեկարգ ընթացքը: Փողովուրդն աւելի մեր եկեղեցին կը յաճախէր քան Լատինաց, ոչ միայն շէնքին վայելչութեան և մէջը փայլող մաքրութեան համար, ոչ նաև մինչև կէսօր զրեթէ անապակաս ըլլալուն հոն պատարագը, և միանգամայն մեր հարց երկիւզածութիւնը զրաւիչ բան մ' ունենալուն համար: Ինչպէս նաև երկրին իշխանները, ամէն անդամ որ Մեթոն կ' երթային այցելութեան, շէին մեկներ այն տեղէն՝ առանց ողջունելու զՄիսիթար և հայ վանականները, որոնց քաղցր և ազնուական կենակցութիւնը զարմանքով և հիացմամբ կը լնուր զիրենք:

Կ. Պոլսոյ մեր ազգայիններում կացութիւնը, յիտ մեկնելում Մխիթարայ. — Աւետիքի կոխու և աքսորուիլը Գաղղիոյ գեսպամին ստիպմամբ, և յիտոյ դարձեալ պատրիարք ըլլալը. — Երկրորդ անգամ կ'աքսորուի և կը տարուի ի Գաղղիա. կը բամտարկուի, և կաթողիկէ կրօնքն ընդումելով կը մեռմի ի Պարիզ. — Յովհաննէս Զմիւռնացոյ Շալածամբքն ընդդէմ կաթողիկեայ ճայ ճասարակութիւնը. — Եր. Կոմիտաս քանաճային ճերբակալումը, դատաստամբ և Յանատակութիւնը:

**Փ**ողով պահ մը Մոռէան, անցնինք դարձեալ ականատես ըլլալու Վասփորի ափանց վրայ կատարուող ոճիրներուն և եղայրասպան կոխւներուն, որոնց մէջ երկար տարիներէ ի վեր զերակչիո զեր կը խաղային յեղյեղուկ բախտը, վայրագ քմահաճութիւնք և առաջնորդաց ժայրայեղ փառաօիրութիւնը:

Երբ Մխիթար կը թողուր Պողիսը, կռուի առպարիզին վրայ դէմ առ դէմ ճակատեր կեցեր էին երկու ախոյեանք, Ֆէրիոլ և Աւետիք, զրեթէ հաւասար ուժերով և հաւասար բախտով, մինչև որ Հայ պատրիարքին հզօր պաշտպանը, Ֆէյզուլլահ դենպետը, որ շատ տարիներ շարաշար կերպով զործածեր էր իւր իշխանութիւնը, զոհ երթալով պալատական գաւակցութեան մը և կտասամահ ըլլալով, Աւետիք առանձին կը մեայ դաշտին վրայ, և շկարենալով դիմադրել իւր սոսիմին ուժոյն և ազատիլ անոր լարած թակարդէն, Ճերբակալուելով Սկիւտարի մէջ, ուր ապաստաներ էր, կը բանտարկուի նախ Ետիզուլէի մէջ, և յետոյ կ'աքսորուի 1703 թռւականին Սիւրիոյ բերդի մը մէջ, ինչպէս կը զրէ Ֆէրիոլ<sup>1</sup>, կամ աւելի ճիշդ, Ավրատ կզգւոյն վրայ,

1. « Le prétendu masque de fer armén. » etc. Brosset, էջ 261.

ինչպէս կ'ըսէ նոյն ինքն Աւետիք իւր Կենազրութեան մէջ՝։ Գաղղիոյ գեսպանին միջամտութեամբ կ'ազափի թիարանէն Մելքիոէթ Սուպհի, որ դարձեալ հետամուռ կ'ըլլայ պատրիարքութեան, ուսկայն արդէն աթոռը զրաւած էր կայժակ Գաղուստ վարդապետն, որուն համար կը զիայէ Ֆերիոլ իւր նամակին մէջ, թէ «մեղմ մարդ մը կ'երկի<sup>2</sup>»։ Սա հազիւ տասը ամիս կրնայ աթոռին վրայ մեալ. Աւետիքի համախօսներէն մին, Եերսէս վարդապետ, դրամի ուժով աթոռէն կը ձգէ զԳալուստ, և ինքը տեղը կ'անցնի. Աւետիքիանք կը զայրանոն, չմեար ոճիր և յանցանք՝ որ չթափեն Եերսիոնի զլխուն, և չորս ամիս շանցած՝ կը ստիպուի քաշուիլ, ասպարէզը դարձեալ Աւետիքին թողով։ Սա այս անգամ ուեկի խրոխտ քան երբէք, ձեռք կը ձգէ դաւով նաև Երուսաղեմայ պատրիարքութիւնը, և կը սկսի գործադրել իւր բռնական միջոցները, կեղեքել ժողովուրդը, թիարանները և զնդանները լեցնել անմեղներով, և անհետացնել զանոնք՝ որոնք կասկածելի կ'երևէին իրեն. և նոյն իսկ Ֆերիոլի հետ կը զժուուի, անոր բարեկամ և թարգման կաթողիկէ հայ մը ձերբակալել և տուղանել տալով։ Թեսպանը, արդէն շարուչար զրգուուած պատրիարքին մէկ անպատեհ արարքին վրայ, որ ունակոս ըրած համազգային իրաւունքներէն ամենէն սրբազնը, — եթէ հաւատանք Ֆերիոլի յուշագիրներուն<sup>3</sup>, — բացեր և կարդացեր էր Գաղղիոյ թագաւորին առ զեսպանն ուղղած մէկ թուղթը, առթի մը կը սպասէր պրիժառութեան. կը դիմէ որ Մեհէմմէտ Պալթաճի, նոյն ժամանակի եպիսքոպուլ, և կը ստիպէ որ աքսորէ զԱւետիք։ Սա, իրեն ուրիշ թիկունք չունենալով բաց ի ժողովրդէն, որ հովէն ուեկի յեղյեղուկ, այսօրուան պաշտածը՝ վաղը առաթուր կը կոսէ, կը մեայ ոնզէն և անպատսպար, և ամէնքն ոլ իրեն դէմ գառնալով այն յետին թշուառու-

1. «Զիստ ոժեանկըն իսկիւսարու ապրայն, զոր իմ մակավո եմ սատցիր, կոխեցիւ, կոզոպտեցին, և զիս տուրեալ ի յշտիզուէն հէփս արարին... և զիս ուղարկեցին Բ շառուց ի Ավատա տասուին. անզ մացի Ա տորի» (Մատու. 1874. թ. 1496).

2. «Le préteur masque» etc. Brosset. էջ. 262.

3. Անդ. էջ 266.

թեան պահուն, կը մատնեն զինքը քաղաքական իշխանութեան ձեռքը, իր խանգարիչ հասարակաց խաղաղութեան, և կ'աքսորուի Տենեղոս կղզին<sup>1</sup>, 1706 թուականին փետրուար Չին, ուսկից կը տարուի յետոյ ի Մարսիլիա, դադղիացի վաճառականի մը նաւով, Ֆերիոլի յառաջագոյն պատրաստած գաւաղրութեամբ։ Դեսպանը հետեւու կերպով կը պատմէ, իւր նամակաց մէջ առ Լուդովիկոս ՖՊ, Աւետիքի ձերրակալումը և անոր զինուն խաղցուած դաւը.

«Մայիս 6. — Աւետիք, այս հերեափեկոս պատրիարքը, որ մեզի այնչափ չարիք ըրաւ, վերջապէս ձեռքս ինկաւ։ Պիտի տարուի նա ի Մարսիլիա։ կը խնդրեմ խոնարհաբար Չեր վեհափառութենէն որ բանտարկուի նա, մինչև որ տեղեկազրեմ Չեղ անոր գործած բոլոր նենդութիւնները և ոճիրները, զոր պիտի ընեմ անյապազ Խովմասին անունով նաւապետին ձեռքով։

«Յունիս 1. — Աւետիք, Լատինաց բանաւորը, որ կը հալածէր և կ'ատէր հռովմէական կրօնքը աւելի քան ուրիշ ու և է զեն, և անխօճաբար կը գործէր ամէն եղեան և չարութիւն, յետ աթոռընկեց ըլլալու և աքսորուելու։ վերջապէս ձեռքս ինկաւ։ ես զինքը Գաղղիա տանել տուի, որպէս զի ընդունի այդ տեղ իրեն յանցանաց պատիճը։ Այս նկատմամբ տուի ես յառաջազգոյն իմ հրահանգներս Քիոսի փոխհիւպատասին, որ ամենայն կարելի փութով և ճարապարութեամբ ի գործ դրաւ։ Հարկ եղաւ կաշառել Աւետիքին ընկերող պահապանները և ուրիշ դարաններ գործել, որոնք յաջողեցան, և Աւետիք քիչ օրերէն Մարսիլիա պիտի հասնի, եթէ զինքը տանող նաւապետը յեւլուզակներէն շրանուի<sup>2</sup>։»

Ֆերիոլ իւր այդ թզթին մէջ այնպէս կը հասկըցնէ, իրը թէ անձնական կրքէ կամ լիքժինդրութենէ չարժած չզործեց այդ ձերրակալումը, այլ պարզապէս յօդուտ կրօնից և մանաւանդ կաթողիկէ Հայոց, վերցնելով մէջտեղէն անոնց դատին վնասողը և անողոք հալածողը։ Իսկ Աւետիք

1. Պահանջման կոչուած թուքերէն։

2. «Le prétendu masque de fer arménien» etc. Brosset, t<sup>e</sup> 267-8.

ընդհակառակն, իւր ինքնակենսագրութեան մէջ, այդ բոլոր աղետից պատճառ կը համարի՝ իրեն շափադանց նպաստաւոր ըլլալը կաթողիկեայց, և իրը ֆասնկ մը նկատուիլին յաշու իւր հակառակօրդաց<sup>1</sup>. և կը ներկայանայ բոլորովին անպարտ մը, որ անիրաւ հալածանաց և տաելի բանութեան մը զոհ կ'ըլլայ: Աակայն բոլոր նախորդ անցքերը և դիպուածք՝ հակառակը կը հաստատեն մեղ, թէ երրէք համակիր և նպաստաւոր եղած չէ առ կաթողիկեայց, և պարագայից կամ անձնական շահուն պահանջին համեմատ՝ զիտէր քողարկել իրեն զգացումները:

Այն նաւն՝ որ կը տանէր զԱւետիք ի Մարտիլիտ, կը հանդիպի ի Մեթոն, 1706ի ապրիլի 23ին, ուր այն ժամանակ կը գտնուէր Միսիթար իրեններով: Մի քանի տարիներ առաջ, մինչ լիազօր իշխանութեան գագաթը բարձրացած, կը դարանէր միւսոյն կենաց, որ հազիւ կ'ազատէր՝ պանդուխոփ արկածալիր կեաննըը ընտրելով իրեն զործօնէութեան ասպարէզ. իսկ հիմայ Աւետիք, շղթաներով կազուած, կը տարուէր յաքոր և յօտարութիւն, տառապանաց մէջ մաշտուելու և մոռացութեան մէջ թաղուելու. մինչ Միսիթար վստահ քայլերով կը յառաջէր յաջոզութեան շաշդին մէջ, թէ և ոչ առանց մեծամեծ դժուարութեանց, որով պիտի անմահացնէր իւր անունը: Ի՞նչ տարօրինակ զուզազիպութիւն. այդ երկութքը, որոնք կարծես սահմանուած էին իրարմէ հեռու ապրելու և գործելու, դարձնեալ կը մօտենային իրարու անցողաբար և յանգէտո, մշտապէս իրարմէ հեռանալու համար: Արդէն ժանոթ են ամենուն տարարախտ պատրիարքին աքսորական կենաց արկածները, զորս ինքնին զրի առեր է պարզ և սրտաշարժ ոճով և աղաւազ հայերէնով մը<sup>2</sup>, և որոնք մնշող ազգեցութիւն մը կ'ընեն ընթերցողին վրայ: Նաւը Մեթոնին կ'ուզզուի դէպ ի Մեսսինա, ուր ցամաք հանելով զինքը արգելաբանին մէջ կը փակեն. ամէնքն ալ կը

1. «Երու ավեաք զնացին արգուհաւ ամին թուրքին մեծին իմ զերայ, թէ էրմէնի միւլէմն իմայտ կ'անէ, իրը թէ ֆառնկ կ'անէ, շենք ուզեր զնայ» (Մասիս, 1874. թ. 1498):

2. Աւետիքի ինքնակենսագրութիւնը հրատարակուած է Մայիս սրբարթին մէջ լոյ. Դիւլորիէի աշխատաթեատր (1874. թիւ 1489):

խորչին, կը փախչին իրմէ՝ իրը տարափոխիկ հիւանդութենէ գարակուածէ մը, մութ և խոնաւ սենեկի մը մէջ կը զնեն զինքը, զիշերները շղթայելով ոտքերը, և հազիւ ապրելու շափ ուտելիք մը տալով. քառասուն օր այս տաժանագին կեանքը կ'անցընէ: Հինգ ամիս Մեսափինա կենալէն վերջ՝ կը տարուի ի Մարտիլիա, ուր մօրուքն ածիլելով, չարագործներու բանտին մէջ կը փակեն և բանի աշխատութեանց կը դատապարտեն զինքը. հոս ևս քառասուն օր բանտարկուելէն յետոյ, կը տարուի Ա-Միքայէլ վանքին մէջ, ուր չարաճնի եղբայր մը, ձուլէն անունով. կը միքաւորէր հէք բանտարկելոյն սիրու, «Հրէտիկ, հզմաթիք<sup>1</sup>» կանչելով զինքը: Վերջապէս կը տեղափոխուի նա Բառտիյի ամուր և բարձր պարիսպներով շրջապատուած բանտը, ուր ընդունելով կաթողիկէ կրօնքը՝ կ'ազգատի խիստ հսկողութենէն, և տարիէ մը կը կնքէ իւր որկածալիք կեանքը, 1711 յուլիսի 11ին: Կենաց վերջին տարին աւելի հանգիստ անցուց, ազատելով բանտին ձնչող մթնոլորտէն և հայերէն ձեռագիրներ օրինակելով, որնց վերջը կ'ընթեռնաւնք իրեն զրած յիշատակարանները, որոնք այլ այլ տեղեկութիւններ կու տան մեզ իւր այն ժամանուկի անցուցած որերուն վրայ<sup>2</sup>: Աւելիք ըստ ինքեան գործելու մեծ կարողութեամբ օժտուած անձ մ'էր, և շատ մեծ դեր կրնար խաղալ յագուտ իւր ազգին, եթէ շափազանց հակառակարութեան և փառափրութեան ոգուով կուրացած՝ իրեն և այլոց աղետից փոր պեղած շրպար:

Աւետիք անհետացաւ տեսարանին վրայէն, բայց չմարեցաւ հալածանաց և խոռվաթեան կրակը . կրկին ձարակեցաւ իրեն բոլոր սաստկութեամբ, երբ անոր կուսակիցք մի և նոյն ոգւսպ և ատելութեամբ վառուած, յառաջ կը տանէին կաթողիկեայ Հայոց գէմ սկսուած կոիւր։ Պատրիարքական աթոռը նորէն խաղալիկ դարձաւ փառասէր վարդապետներու ձեռքը, մանաւանդ թէ ժողովը դեան ձեռքը, որ ոսկիներով լի քսակն առած պարատ կ'երթար և կ'օրուէր պատրիարքներուն բախար։ «Աս-

t. Hérétique, schismatique. *Chpharaplynn*, *Chpharaplynn*:

2. Այս յիշութեան պահը ըստ առաջիկ է և բառավանդները բա-  
շխատ պարզի են. առ Բ. պարզ Բ. էլ. 114-6:

տիկ կառաղութիւն մը կայ Հայոց մէջ, կը զրէր Գաղղիոյ զեսպանը Ա707ի նոյեմբ . 4ին, ուրիշ բան չեն ըներ՝ բայց փափոխել իրենց պատրիարքները . ամսէ մ'ի վեր քառասուն քսակ ոսկի տուին Դիտան, իրենց կամքը կատարել տալու համար . . . վաթունէն աւելի հայ կաթողիկէներ ձերբակալելով բանտարկեցին <sup>1</sup> » . Այն ժամանակի պատրիարքներուն մէջ ամենէն աւելի ախրահոչակն եղաւ Յովհաննէս Զմիւռնացին . բուռն և փառասէր, որուն համար կ'ըսէ յիշեալ զեսպանը իւր մէկ նամակին մէջ, թէ աներկայ պատրիարքը, Յովհաննէս կոչուած . Աւետիքի դժոխային Հոգին ունի <sup>2</sup> » . զանիկայ Աւետիքի կուսակիցները խնդրեր էին Էջմիածնի Աղեքանդր կաթողիկոսէն : Անզատրուակ սկսաւ նա հալածել կաթողիկէները, շխզձելով ամենէն աւելի անիրաւ միջոցները ի զործ դնելու . կը տեղային զրադարաւութիւնք և քսութիւնք, բռնութիւնք և հարստահարութիւնք անմեղներուն և տկարներուն դէմ, և այնչափ սովորական բան դարձեր էին, որ այլ ևս սոսկում չէին աղդեր ժօղովրդեան աչքին . ատենական ձեւակերպութիւնք իսկ, եթէ երբէք ըլլային, ուրիշ նպատակ չունէին՝ բայց քողարկել կամ զեղերեսել անիրաւութիւնը : Աւզափառը, որք մինչև այն ժամանակ խոչեմութեան համար ծածուկ պահելով իրենց կրօնական համոզումները, ազգային եկեղեցիները կ'երթային, արդ բարձրաձայն բոզքեցին եղածներուն դէմ, և զատաւելով ազգէն, սկսան Լատինաց եկեղեցիները յաճախել . այսու պատրիարքն աւելի ևս զրգուած, սաստկացուց հալածանքը, զիխաւուրագէս քահանայից դէմ, յորոց օմանք աբորուեցան, այլք թիւավրութեան աբորուեցան, շատերն ալ տանջանկներու մատնուեցան և զլխատուեցան, որոնց մէջ նշանաւոր եղաւ տէր Կոմիտաս իրեն փառաւոր նահատակութեամբ :

Աս ծննդեամբ Կաստանդնուպոլսեցի էր, Քէօմիւրձեան ազգատոհմէն, Երեմիա Զէլէպիի կրտսեր եղբայրը, որդի բարեպաշտ ծնողաց, Տէր Մարտիրոս քահանայի և Յու-

4. «Le prétendu masque de fer arménien» etc. Brosset. էջ 270-ի :

2. Աւտ. էջ 271 :

զիտայի: Արրութեամբ և գիտութեամբ հռչակուած էր աղ-  
զին բոլոր վարդապետաց մէջ, սիրուած և մեծարուած ա-  
մենէն, և նոյն իսկ օտարազդիներէն: Ասմաթիոյ Ա. Գէորգ  
եկեղեցւոյ քահանաներէն էր, ուր կը վագէր բոլոր ժողո-  
վուրդը՝ երր լսէր թէ տէր Կոմիտաս քարոզ պիտի տար-  
անար քարոզները հիւթեղ և ախորժելի էին, ձայնը՝ հըն-  
չուն, և խօսելու ժամանակ կը յուզէր լսողները: Այս զե-  
ղեցիկ ձիբքերուն համար էր, որ ամէն տարի աւագ ուրբա-  
թուն, քրիստոնէի մը ամենէն աւելի նուիրական օրը, ի-  
րեն իրաւունքն էր — բոլոր ժողովրդէն շնորհուած — լաց  
քարոզը խօսիլ և կտակին աւետարանը կարդալ . այն օրը  
ով որ Ա. Գէորգ եկեղեցին մոնէր, ինչ դաւանութեան  
պատկանէր և որչափ քարասիրտ ըլլար, ստիպուած էր զոնէ  
շիթ մը արտասուք կաթեցնել աշքէն: Այդ յաջողութեամբ  
դիւթած էր նոր բոլոր ժողովրդեան սիրոց, և զրեթէ պաշ-  
տելու աստիճանի կը հասնէր անար յարդանքը. մինչ անդին  
քահանայք, իրենց տղիտութեամբ և անկարդ վարուք ժո-  
ղովրդեան արհամարհանաց միայն արժանացած, չար նա-  
խանձով կուրացած, ատելութիւն միայն կը զգային տէր  
Կոմիտասին դէմ: Այդ հակառակասէր քահանայից զըլ-  
խաւորք, — որոնց մէջ կար նաև տէր Մարկոս ուն, որ երա-  
նելոյն ձեռասուն աշակերտն եղած էր, — ամբաստա-  
նելու յանցանք մը չգտնելով տէր Կոմիտասին վրայ, յա-  
մենայնի անստղիւս ըլլալով, ուզեցին իրենց չարութեան  
առիթ առնուէ անոր կրօնական դաւանութիւնը, և մատնել  
զինքը այլազդի դատաւորին ձեռքը, իրը ապստամբ տէ-  
րութենէն և խոսիի ժողովրդեան: Երանելոյն ականջը  
հաօնելով իրեն դէմ լարուած դաւանութեան լուրը,  
ամբողջ տարի մը իւր մտերիմներէն միայն տան մէջ պա-  
հութեցաւ, մինչեւ որ անցաւ այդ փոթորիկը. հոն, իրեն  
պարագ ժամերուն մէջ, ամբողջ դորժը առաքեցը ստանա-  
ւորի դարձուց<sup>1</sup>, զոր տպել տալով ժանօթ և բարեկամ ազ-

1. Այս ժամանակաց սովորութիւնն էր այդ, աղօթք, պատմութիւն,  
գտառազիրք, խրատներ, նաւակներ, մինչև իսկ անեական հաշիվներ՝ ստա-  
նաւոր գրել. այսպէս Աթիթար Արքոյ՝ իւր աշէկոծութիւնները, յաւե-  
րը, կրօնական հրանտեղները ստանուոր կը զրէր. Խալատուր կարեցի  
նոյնպէս ստանուոր կը զրէր Աստուածաբանութիւնը. և նոյն իսկ

գայնոց ձեռնտուութեամբ , կը վաճառէր և եկած դրամով և ուրիշ ողորմութեամբք կ'ապրեր և կ'ապրեցնէր ընտանիքը : Թշնամիք իմանալով անոր թաքստի տեղը , և տեսնելով թէ զուրացելու որ կարանաւորեն , արքունի հրավարտակ մ'առին եղարքունին , և շորո յանգուգն երիտասարդներ վարձեցին . որոնք ծպտած և հետերնին զինուորներ առած , զիշեր մը յանկարծ երանեւոյն բնակած տան վրայ յարձակեցան , զաները փշրեցին . կապեցին քահանան և քաշկուտելով բանս տարին . ձերակալելու պահուն , երիտասարդներէն մին՝ Վատինա անուամբ , միւսներէն տեղի յանդուզն , ապտակեց անոր երեսը . իսկոյն երիտասարդին երկու աչքը կուրացան ի պատիժ յանդզնութեան : Երկրորդ որը Կոմիտաս քահանային շորո նախանձոտ կարգակիցները . զլուխ ոնցած ուրիշ աշխարհիկ մարդոց , եպարքոսին տաեանը զնացին և կաշառոյ համոզեցին զինքը , որ դատարան բերել առաջ և իրենց առջև հարցուվորձ ընէ : Հայազգի թշուառ քահանային աղետը փոխանակ զիրենք ի զութ շարժելու , աւելի ևս զայրացուց , և սկրան շարախօսել թէ սատ ֆաանի է և ուրիշներն ալ ֆաանի կ'ընէ : Եպարքուր , որ էր Պորուու Ալի փաշան , աւելի արդար գտնուելով քան հայ եկեղեցականները , և տեսնելով թէ պարզապէս կրօնական խնդիր մ'էր այն , ուզեց արձակել ամրաստանեալը . բայց տեսնելով միւսները թէ որոք ձեռքէ պիտի փախցընէին , միաձայն կանչեցին . թէ ապտամբ է տէրութենէն : Զայդ լսելով եպարքոսն հարցուց աէր Կոմիտասին , թէ ինչ կ'ըսես . — « Ես ազգաւ հայ եմ , պատասխանեց նա , և իմ հարցո հաւատքը ունիմ . տէրութեան ալ հպատակ եմ , և աշաւասիկ հարկաթուղթերս » : Եպարքոսն համոզուեցաւ ըսածներուն , և հակառակորդք կորազլուխ զուրս ելան տաեանէն . իսկ տէր Կոմիտաս , մի քանի օր ևս բանալին մէջ մեալով , ազգայիններէն ումանց խնդրանոք եղարքոսն ազատեց զինքը բանտէն , և արքունի հրամանով զնաց դարձեալ իւր առաջին կարգը և պաշտօնը ընդունեցաւ . քահանայիք տեղի

ընտեղան և հաշորագական պիտութիւնները . ժողովուրդը՝ զրութեանց մէջ իշխառներէն տւելի արտաքին ձերին ուշ կը դարձունէր :

Հայութ առ Տղին շև  
Տըղող կի մին:

Ու լու յա տու աղջ շշմարտան  
անս արտահետ այ Տղին շշմարտան  
ինչ արդիս մարտացը աղջ առան  
տամաս պատ ըլ Տղին շշմարտան:  
Ի գունդին լու առ աղջ երան բուն  
ի դրատի զին զինս աս աղջ աղջ աղջ:  
Տիւ առ աղջ ի մ արդիս նոր պատագըն  
զի է մ դուռ և մաս աղջ շշմարտան:  
Ընդ առ առ աղջ ի աղջ աղջ աղջ աղջ:  
Լաւ աղջ ի աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
զի պատագըն աղջ աղջ աղջ աղջ:  
ու լու ի օք աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
Ընդ առ առ աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
արագ բան դ առ առ աղջ աղջ աղջ:  
անդաս աղջ աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
անդաս աղջ աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
ի առ աղջ ի աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
անս արտահետ ըլ Տղին շշմարտան  
անդաս աղջ աղջ աղջ աղջ աղջ աղջ:  
անդաս աղջ աղջ աղջ աղջ աղջ աղջ:

ՀԱՅ

հակատիպ իմք մագիր իղձը  
եր տէր զոմիտասի 1.

1. Այս կրծոյ իր նմոյշ մը ճառացի կրծնելով դրութեան. առաջ արտահետին. և մաս աղջ պատ արտին իղձերուն:



տալով բարձրագոյն հրամանին առջև, հաշտուեցան առ երես երանելույն հետ և առժամն ի բաց դրին իրենց հակառակութիւնը: Տէր Կոմիտասին ազատութեան լուրն ընդհանուր ուրախութիւն պատճառեց: Քիչ օրէն հասնելով Զատկին տօնը, բոլոր ժողովուրդն եկեղեցի վագեց լսելու գարձեալ իրենց սիրելի քահանային ձայնը. բայց միւս քահանայք, որք սովոր էին իրարու ձեռքէ խլել աւետարանը, տէր Կոմիտասին կարգ չէին տար: Ժողովուրդը, նկատելով այդ բանին մէջ եկեղեցականաց կրթերուն և ատելութեան վերստին յաւզումը տէր Կոմիտասին հակառակ, միաբերան բողոքեց եղածին դէմ, և վերջապէս կարգ տրուեցաւ անոր աւետարան կարգալու: Իրեն խաղուն ձայնին և անուշ եղանակին հետ խառնուելով նաև կրածներուն և ազատութեան յաղթանակին յիշատակը, այնպիսի խոր ապաւորութիւն մ' բրաւ ունկնդրաց վրայ, որ վերջին անգամ մի ևս լացաւց զիրենք. ընդհակառակն քահանայք, ոչ միայն անդրայ մեացին, այլ աւելի ևս յամառեցան իրենց կոյր ատելութեան մէջ, և շնայելով օրուան սուրբ յիշատակին, անոր սպանութեան վնիսը տուրին սրտերնուն մէջ. սուկայն արտաքսապէս հանդարտեցան հինգ ամսոյ չափ, իրենց նպատակին հասնելու յարմար միջոցները մտածելով:

Տէր Կոմիտաս այս ժամանակներս անգամ մը Պուրաս քաղաքը զնաց. տեղոյն առաջնորդը, Առւբիսս հայիսկոպս, ուղղախոհ և լուսամիտ անձ մ' էր, խաղաղասէր, բաւական հմուտ եկեղեցական ուսմանց և քաջ քարոզիչ, և իրեն ալ մեծ բարեկամ: Որ մը առաջնորդը Կոչունք մ' ըրաւ, ուր հրաւիրուած էին բոլոր քահանայք, որոնց հետ նաև տէր Կոմիտաս, և քաղաքին աշխարհիկ անձինքներէն նշանաւորները: Ճաշին միջոց, ըստ սովորութեան ազգիս, ի պատիւ իւրաքանչիւր հրաւիրելոց՝ իրենց անուանց պատշաճ հոգեւոր տաղեր կամ շարականներ երգուեցան. երգի կարգը գալով տէր Կոմիտասին, ամէնքը միաբան — առանց նախնարար խորհրդակցելու իրարու հետ — մարտիրոսաց շարականներէն մին երգեցին: Եպիսկոպոսը մեռնելով թէ ամենքն ալ զարմացած իրարու կը նայէին, բացարեց անոնց՝ թէ պատահմամբ շեղաւ այդ բանը, այլ խորհրդաւոր ազգեցութեամբ մը. և այնպէս ամէնքն ալ լուցին: Քիչ օրէն Պոլիս դարձաւ տէր Կոմիտաս:

Պոլսոյ մէջ տապքինի և բաւական ուսեալ քահանայ մը կար, ծերունի, տէր կարապետ անունով, որ զրեթէ երեսուն տարի հալածուելով հակառակորդներէն, իւր քարոզած վարդապետութեանց համար, իրեն տան մէջ տատնձնացած կ'անցունէր օրերը։ Այս քահանային չետ շատ մտերիմ էր տէր կոմիտաս, և յաճախ անոր տունը կ'երթար և հոգեոր զրոյցներով կը միսիթարէին զիրար։ Անդամ մ'ալ դարձեալ երր անոր տունը գնացեր էր, զիշերը հան մեաց. երազին մէջ մարդ մը տեսաւ՝ որ երկու պատկ ունէր ձեռքը, մին՝ կարմրագոյն, և միւսը՝ սպիտակ. կարմիրը՝ իրեն զլուխը դրաւ, իսկ ձերմակը՝ տէր կարապետին զլուխը։ Առաւտուն պատմեց տեսած երազը. նա մեկնեց, թէ կարմիր պատկը կը նշանակէր մարտիրոսութիւն։ Ուրիշ անդամ մ'ալ նոյնագէս երազ տեսաւ, որ ինքն՝ իւր զլուխը ձեռքին մէջ բռնած՝ կ'անցնէր մայրաքաղաքին փողոցներէն. զայս ալ պատմելով յիշեալ քահանային, նա ևս աւելի հաստատուեցաւ իւր մտքին վրայ, թէ յիրաւի մարտիրոսական պատկ կը պատրաստուի տէր կոմիտասին։

Եսյն ժամանակի պատրիարքը, Յովհաննէս Զմիւնացին, և տէր կոմիտաս արդէն իրարու ծանօթք էին. վերջինս՝ վեց տարի առաջ ուխտի գնացած ըլլալով յըրուսաղէմ, ճանչցած էր հոն Յովհաննէս վարդապետը, և այդ ծանօթութիւնն իրեն աղիտարեր եղաւ։ Այն օրէն որ տէր կոմիտասին անունը սկսաւ զովութեամբ հռչակուիլ Երուսաղեմայ մէջ, իրեն տապքինի վարուց և պերճախօս քարոզներուն համար, ապագայ պատրիարքին սրտին մէջ տաելութեան կրակ մը վառեցաւ անոր դէմ, որ օրէ օր աւելի ևս արծարծեցաւ։ Վեց տարիէ ի վեր յարմար առիթը կը փնտուէր. և հիմայ որ ամէն միջոց և իշխանութիւն ունէր, զլուխ կեցած իրեն նմաններուն, կը սկսի ի գործ գնել իւր որոնած խորամանկ հնարքները։ Կ'երթայ եպարքոսին, անոր առջև ուզած զոյներով կը ներկայացնէ զանոնք, որոնք կրնային խռչնդակ մ'ըլլալ իրեն անյադ ձկտումներուն կամ ստուեր մը ձգել իրեն վրայ։ Ենորհի սոկիններու՝ զիւրաւ հրովարտակ մը ձեռք կը բերէ, և կը սկսի անմիջապէս ձերբակալել տալ այն խեղճերը, որոնց անոււնք նշանակուած էին իւր մահացուցակին վրայ։ Այդ

ահարեկիչ արարքը կը սկսի նախ աշխարհականներէն, և կը կալանաւորեն մէկը հրապարակին վրայ, ուրիշ մը տան մէջ, երրորդ մը կրագակին մէջ, և այսպէս կարգաւ, զրեթէ քառասուն հոգւոյ շափ, և կը փակեն բանտերուն մէջ: Իրարանցում մը կը տիրէ քաղաքին մէջ. ամէն մարդ տուներուն մէջ կը բանտուին. բայց ամէնէն աւելի կը կասկածի տէր Կոմիտաս, զիսնալով թէ ինչպիսի ոստին հետ է իւր զործը, և կը զուշակէ թէ զերջապէս իրեն զիսուն պիտի ճայթի սպասնալից փոթորիկը. սակայն պատրաստ է նա քաջարար դիմազրաւելու ամէն բանի՝ որ դիմացն ելնէ:

Այն երեկոյ, յորում պիտի ձերբակալուէր, սովորականէն աւելի երկարեց աղօթքները. կարծես կը սպասէր, անխոռվ, իրեն կալանաւորութեան ժամուն: Նա կը զգարթէ հալածանաց ամպրոպը հանդարտելու համար զոհ մը հարկաւոր էր, և այդ զոհն ինքը պիտի ըլլար. նոյն իսկ զաղանի աշդարարութիւն մը ընդունած էր, որ զգուշութիւն ընէ. և եթէ ուզէր նա փախչիլ, կարող էր փաղլիս զեսպանատունն երթալ զիշեր ժամանակ և ազատիլ, բայց չըրաւ: Երեքարթի զիշերուան ժամը երեքն էր, երբ յանկարծ տան դուռը բախեցին. տէր Կոմիտաս հարցուց, թէ ո՞վ էր և ինչ կ'ուզէր. թշնամիք ճանշնալով ճայնէն թէ ինքն էր, շը սպասեցին դուռը բանալուն, խորտակեցին զայն և ներս խուժեցին դատաւորին զինուորներով, որոնց զլուխ կեցեր էին քահանացք և նոյն իսկ պատրիարքը, որ չճանշուելու համար այլազգի զինուորի զգեստներու մէջ ծպտած էր, ինչպէս յետոյ վկայեր են ականատեսք: Տէր Կոմիտաս ոչ մէկ զիմազրութիւն չըրաւ. ուստի վրան զրոհ տալլը, ձեռքերը կապել և քաշկատելով դուրս տանիլը մէկ ըրին, այնպէս որ վերարկուն անզամ առնըլու ժամանակ շունեցաւ: Ճանապարհին մէջ շխնայռեցաւ անոր՝ ո՛ւ և է նախատինք և վիշտ, զոր կարող էր հնարել ատելութեան ոգին. նոյն զիշերը տարին զինքը Մարկոս անունով քահանայի մը տունը, որ երբեմն տէր Կոմիտասին աշակերտ եղած էր, ինչպէս ըսինք, և անոր ամէն զութը և խնամքը վայելեր էր: Առաւօտեան դէմ կանուխ՝ դատաւորին պալատը տարին զինքը և հոն բանտ-

արկեցին, ուր ուրիշներ ալ կային, որոնք ժամէ ժամ  
սպանութեան վճռոյն կը սպասէին. առոնց մէջ կը զըտ-  
նուէին ինը նշանաւոր անձինք և Մատթէոս Արքի, եր-  
բեմն կաթողիկոս Ալսոյ և Նախկին պատրիարք Պոլոյ,  
որոնք տանջանաց և մահաւան սարսափին առջև թուլացան  
և ուրացան հաւատքնին. բայց յետոյ ժախչելով քրիստո-  
նեայ աշխարհներ՝ սպասչարեցին, որոնց մէջ նշանաւոր  
եղաւ Մատթէոս Արքին, որ Հոռվմ դնաց, և հոն սպաս-  
խարութեամբ և բարի մահուամբ կնքեց կեսնքը, ինչոքս  
կը զրէ մեր ժամանակագիրը, ականաւես վկաներէ լսե-  
լով<sup>1</sup>:

Նոյն օրը, չորեքշարթի, պատրիարքն՝ իրեններուն հետ  
սպատրաստած զրպարոսութեանց ծրադիրը առնըլով եպար-  
քոսին ատեանը դնաց, ամրաստանեց տէր Կոմիտասը, իրը  
լուսես և մատնիչ տէրութեան և վիսասակար հայ հաստրա-  
կութեան, և ստայօդ խօսքերով ուզեց զրդուի եպարքոսին  
զայրոյթը. բայց սա, որ աւելի գութ ունէր և իրաւոնք  
կը ճանշար, անձամբ հարձուփորձ ընելով, հիացաւ տէր  
Կոմիտասին համարձակ և զգոն պատասխաններուն վրայ,  
որ ընտկան պերճախօսութեան հետ՝ ունէր նաև թուրք  
լեզուի և քաղաքական օրէնքներուն հմտութիւն: Ատեա-  
նին մէջ շգտնուեցաւ անոր ուրիշ պաշտպան՝ բաց ի ճըշ-  
մարտութենէն, որով զինուած հերքեց սուս ամրաստանու-  
թիւնները, և ցըցուց թէ ինըն և իւր դաւանակիցք ըստ  
ամենայնի հաւատարիմ հպատակներ էին տէրութեան,  
ուստի միայն կրօնքին համար՝ մահուան դատապարտելու  
պատճառ մը չկար, թէ և ինքը պատրաստ էր անոր հա-  
մար քաջարար մեռնելու: Այլոզդի եպարքոսը ճաշցու  
արդարութիւնը և վախցաւ անմեղի մը արիւնը թափերէն.  
իսկ պատրիարքը և քահանացք շուզելով իրենց որու ձեռքէ  
ժախչելու, միջամտելով՝ անոր արեան պատուամիանուառու-  
թիւնը վրանին առին և այդու պատճառ եղան այն անմեղ  
արեան թափուելուն, որ այնպիսի արատ մը բերաւ հա-  
յութեան անուան, որ երկու հարիւր տարիներ բաւական  
չեղան զայն չնչելու. նախանձն այդշափ անզզաց և խե-

րայեղ կ' ընէ զմարդ : Երբ եպարքոսը ճարահատած՝ դարձեալ կրօնից խնդիրը մէջ բերաւ, ուրիշ պատճառ շղթանելով զինքը դատապարտելու, տէր Կոմիտաս հարցուց եպարքոսին .


— Տէր իմ, այս երկու կրօնքէն ո՞րը ճշմարիտ կը համարիս, հայունն թէ ֆուանկին .

— Երկուքն ալ հաւասարապէս խոսելի են ինձ, պատասխանեց եպարքոսը .


— Եթէ այդպէս է, ըստ տէր Կոմիտաս, ապա ի՞նչ փոյթք՝ թէ ես կրօնքով հայ եմ կամ ֆուանկ :

Բոլոր ատենականք ապչեցան անոր համարձակ և իրաւացի պատասխանին վրայ, և եպարքոսը չկարենալով մահուան դատավճիռ տալ, երկրորդ օրը քաջ օրէնսդէտ մը կանչեց, հարցնելու համար՝ թէ կրնայ արդեօք մէկն ըստ օրինի մահուան դատապարտուիլ այդպիսի խնդրոյ մը համար : Նա, և ուրիշ շատ թուրք իրաւագէտք, օրէնքէն աւելի իրենց խղճին մտիկ ընելով, — Ոչ, պատասխանեցին եպարքոսին . բայց սա, բոլորովին հանդարտեցնելու համար խիղճը, իրենց կրօնից զլաւաւոր պաշտօնեաներէն մէկուն դրկեց, որ քննէ և ըստ այնմ վճիռ տայ : Նա ևս, լսելով երանելոյն պատասխանները, անմեղ վճաեց զինքը, մինչև որ ուրիշ նորանոր զրպարտութիւնք, և մանաւանդ լիաբուռն կաշառք, որ միակ պայմանն էր յաջողութեան, ժանրացընելով անիրաւութեան կշիռքին թաթը, հակառակ ակնյայտնի անմեղութեան ամբաստանելոյն, զրեց և կնքեց անոր մահուան վճիռը, զոր հակառակորդք ուրախութեամբ եպարքոսին տարին . սա վերջին անգամ մ' ալ ուզելով հարցուփորձ ընել, քննութիւնը դեռ չվերջացած, կանչուեցաւ թագաւորէն : Տէր Կոմիտաս բանտարկուեցաւ դարձեալ, և ամբողջ օրը — որ ուրբաթ էր, հոկտեմբեր 24 — ազօթքով անցուց . ընդունեցաւ ուրբ խորհուրդները, Աստուծոյ նուիրեց ինքզինքը, և վայրկենէ վայրկեան կը սպասէր սրոյ հարուածին, որ երկինք պիտի թոցընէր զինքը, զլուխը կարմիր պատկ դրած, ինչպէս տեսեր էր երազին մէջ : Երկրորդ օրը, շաբաթ առաւօտ՝ հոկտեմբեր 25ին, դարձեալ եպարքոսին ատեանը տարին զինքը, ուր կը կնուեցան մի և նոյն զրոգարտութիւնք, որոնց շպատասխա-

նեց անդամ տէր Կոմիտաս։ Բայց երբ եպարքուը մահուան վճիռն արտասանեց, որով պիտի զլիատուէր ինքը, այն ժամանակ դարձաւ և զօրաւոր ձայնով մ'ըսաւ անոր։ Ա Դու, որ անիրաւ զրպարտութեանց ուշ գնելով դատապարտեցիր զիս որ զլիատուիմ, Աստուծոյ ահեղ դատապարտանին օրը քեզմէ պիտի պահանջեմ արիւնս։ Սարսուռ մ'անցաւ ամենուն վրայէն, այդ խօսքերը լսելով, բաց ի պատրիարքէն և քաջանաներէն, որոնց դէմքը կը փայլէր վայրագ ծիծաղով մը, և չվախցան ըսելու եպարքուին, թէ «Մեր վրայ ադոր արիւնը, իսկ քեզի՝ վարձքը»։ Վճիռը ուրուելուն պէս՝ կապեցին զանիկայ դահիճք, հետը ուրիշ երկու աշխարհականներ ալ, Յարութիւն և Զաքարիա, և տարին զլիատոման հրապարակը։ Ալլազգիներէն երեւելի անձինք և նոյն իսկ դահիճներն ի գութ շարժելով անոնց աղետից վրայ, կը յորդորէին որ հաւատքնին ուրանան և ազատին մահուընէն։ բայց տէր Կոմիտաս, որ խոր մտածութեանց մէջ ընկդմած, սաղմոս և ուրիշ աղօթքներ մրժեցելով կ'երթար, ուշ դնելու կամ պատասխանելու արժանի չհամարեցաւ այնպիսի խօսքեր։ Անհամար բազմութիւն մը ամէն ազգէ և կրօնքէ, ամէնքն ալ սգաւոր և զլիակոր, կ'երթային խեղճերուն ետևէն, իրը թէ յուղարկաւորութեան հանդէս մ'ըլլար։ միայն մեր եկեղեցականներն էին, որոնք իրենց ուրախութիւնը չէին կրնար զսպել այդ աղետալից տեսարանին առջև։ կարծես սիրտ չունէին այդ մարդիկը։ Այն խոր ընդհանուր լուռութեան մէջ, յանկարծերկու կանացի ձայներ լսուեցան։ մին՝ տէր Կոմիտասին բարեպաշտ և քաջամիրտ ամուսինն էր, Մարիամ անունով, որ կը յորդորէր զինքը, — ինչպէս երբեմն Անատոլա՝ զսուրբն Աղրիանոս, — հաստատուն մնալ հաւատքին վրայ և չհռգալ ամենեւին զինքը կամ որդիքը։ որուն պատասխանն եղաւ քաղցր ժպիտ մը։ իսկ միւսը՝ քոյրն էր, որ բնական զթով զգացուած, մեղկ շեշտով մը կը յորդորէր եղբայրը ուրանալ առժամն հաւատքը, աղատիլ մահուընէ և յետոյ ապաշխարել։ տէր Կոմիտաս խիստ ակնարկ մը ձգեց քրոջ վրայ, և շարունակեց յառաջ տանիլ Յովհաննու աւետարանին առաջին զլուխը և երթալ դէպի ի զլիատոման տեղը։ Վերջին խօսքերն ըսելու ժամանակ,




ԵՐ. ՄԷՐ ԿՈՎԻԼԱՍ.





և Եւ բանն մարմին եղեւ և այլն, հասաւ արդէն սահմանաւած հրապարակը, ուր յետ քաջալերելու իւր երկու ընկերները, խաչակնփեց մարմնով տեղը, — ձեռքերը կապուած ըլլալով, — գարձու դէպ ի արևելք, ժնրազրեց, և զլուխը խոնարհեցնելով՝ երկընցուց դահճին, որ կը ըսէր իրեն, « Թէպ ի հարսւ դարձիր ». — « Այս է իմ հարաւը », պատասխանելով տէր կոմիտաս, լոիկ և մտամիով կը սպասէր հարսւածին : Այս պահուն վերջին փորձ մ'ալ եղաւ անոր միսքը փոխել տալու . իսկ նա՝ անտեղիտալի ու և է սպասնալեաց կամ հրապոյրի առջև, ինչպէս ժայռ մը կոհակներուն գէմ, բարձրաձայն իրեն հաւատոյ դաւանութիւնն ըրաւ, թէ և Ես Քրիստոսի ծառայ եմ, և պատրաստ եմ ոչ թէ մի՛ այլ րիւր անգամ մեռնիլ, քան թէ ուրանալ իմ Աստուածու : Վերջին խօսքերը գեռ բերանն էին, չողաց սուրը զիմուն վրայ, և վարդագոյն արիւնը ներկեց երկիրը : Կատարուեցաւ այս՝ 1707 տարւոյն հոկտեմբերի 25ին, շարաթ օր : Երանելոյն նահատակութեան ներկայ էր նաև մեր Հ. Եղիա վարդապետը, որ նոյն տարւոյն սկիզբը Պոլիս զրկուեր էր առաքելութեան համար : Անթիւ բազմութիւն մը, ամէն ազգէ և կրօնքէ, որ լոիկ և սրտատրիփ ներկայ եղած էր այդ արիւնու տեսարանին, կը հեռանար արտասուաթոր աչօք տիսուր վայրէն, անէծք թափելով այդ զոհը պատրաստողներուն զիմուն . մինչ այլք անոր սուրբ արեան մէջ կը թաթաւէին իրենց մափուր թուշկինակները, և ոմանք կը զնէին դահճիներէն անոր զգեստները՝ իրեւ անզին գանձեր : Երկինք ևս ոչ նուազ գորովեցաւ այդ տեսարանէն . երեք ամսէ ի վեր ամուլ էր, չէր անձնեած . անոր նահատակութեան պահուն սկսաւ ցողել մեղմով և երեք օր շարունակեց : Նահատակին մարմինն երեք որ անթաղ մնաց հրապարակին վրայ, և սակայն ոչ վիասուեցաւ և ոչ տժգունեցաւ անձրևին ներքեւ, այլ մնաց ձեան պէս փայլուն, անուշահոտութիւնն մը բուրելով իւր շուրջը, և զիշերը լոյս ծագելով վրան, ինչպէս երգմամբ կը հաստատէին արժանահաւատ տեսմողները : Նահատակին արիւնը թափուեցաւ, բայց նախանձոտաց զայրոյթը չհանդարտեցաւ . զնացին խնդրելու եպարփռուէն, որ թոյլ շոայ թաղել սպանելոյն մարմինը, որպէս զի իրեւ մարտիրոսի

մարմին պատիւ և մեծարանք շընդունի ժողովրդէն , այլ  
ծով նետուի իրրե շարադրժի մը դիմկ : Հոս ևս ցըցուց  
հայ եկեղեցականութիւնն , թէ ինչպիսի զզուելի և վայրա-  
քարշ կրքեր բոյն դրեր էին իրեն օրտին մէջ , որ միենէ  
անդամ՝ օտարները քան զինքն աւելի ապնիւ գտնուեցան՝  
իրենց բնական դորովէն մղուած : Եպարքոսը մերժեց ա-  
նոնց ինդիրը , և հրաման տուաւ երանելոյն ընտանեաց՝



Ապարան կտէր կունականի \*

որ ըստ օրինի թաղեն իրենց մեռելոյն մարմինը : Այդ  
թաղման հանդիսին , որ շատ շքեղ և գորովաշարժ եղաւ ,  
շգտնուեցաւ հոյազգի քահանաներէն ոչ ոք , պատրիարքին  
խիստ հրամաններէն վախճառով . մինչ ընդհակառակն յոյն

կղերն եղաւ, որ իւր բարձրաստիճան եկեղեցականներու և  
եպիսկոպոսներու խմբով, իրենց պատրիարքին հրամանով,  
կատարեց յուղարկաւորութեան հանդէսը, և շտեսնուած  
շքով և փառաւորութեամբ տարին թաղեցին երանելի նա-  
հատակին մարմինը Հայոց գերեզմանատունը՝ իրեն ոեփա-  
կան տոհմին մէջ<sup>1</sup>: Գաղղիոյ դեսպանը, շատ գանձ և

1. Տէր կոմիտասին գերեզմանագարն ի սկզբան շատ անշուշ ըլլաւով,  
յետոյ փառաւոր մը զրին, ոտանաւոր տապանագիր ո՞չ քանդակելով  
գրան, յորում անոր նահատակութեան թուականը կը յիշուի հետեւալ  
տողերով.

«Թիմ Հայոց էր Ճ-ԵՒ:

Քւառան և հինգ Հոկտեմբերից :

Ճ-ԵՒ բառը կը բավանդակէ իրեն մէջ հայ թուականը ՌՃՇՋ. այն է  
Ռ. Ճ. Ե. և Ի (50+20=70, Ա), Ա. և Ե (4+5=9, Զ): Այդ տա-  
պանագիրն է հետեւալը, որուն Հեղինակն անձանօթ է, և կ'որէի թէ  
բառական ընտիր տաղաւախոյ մ'եղեր է, և կ'ատելով մանաւանդ այն ժա-  
մանակին գրական անկուռը.

### ՏԱՊԱՆԱԳԻՐ

Տ Է Ր Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի

Տապան տեմլալի առօ բեմական,  
Նրիցու մեծի՞ տոմսի՞ քէօսիւրմհան.  
Քաղաքաւ բմիկ շիմիմ բիւզամդեան  
Կոմիտաս արգոյ ամում վարսամեան:  
Հասակ ուղղաբերձ՝ գիմօք զուարթում  
Լիզուս գերապանձ՝ մըտօք իմաստում  
Տաղըս յօրիմեաց տողիւ փաղփաղում  
Կոմիտաս արգոյ բամաստեղծ մերթում:  
Ամբատգիւտ վարուց մարմնով վերբերիւ  
Մըկըրտեալ ի խաչ՝ բաժակիմ աբրիւ  
Զման իւր արեամբ յառաջմմէ պատմիւ  
Կոմիտաս արգոյ ախոյշեան վամիւ:  
Վասըմ հաւատոյ մատմեցաւ պետաց  
Դատապարտեցաւ յիւր մահապարտաց  
Զարեամ իւր ծորամ ի վըմիմ խըմդրեաց  
Կոմիտաս արգոյ՝ քաւիչ լուսազգեաց:  
Ի գարմախափում առ Պայազիտաւ  
Դեմետրեայ տօմիմ զըլուիս իւր հատաւ  
Նրկուշաբաթի այս տապան եղաւ  
Կոմիտաս արգոյ՝ վրկայ մըուակաւ:  
Ցուցակը մըրաշից բազմացան թուով

դրամ տալով գերեզմանատան պահապաններուն, գաղտուկ առաւ երանելոյն մարմինը, ինչպէս նաև անոր պատռական գուխը, զոր Յոյնք առեր էին, և Գաղղիա զրկեց՝ իրեւ մեծագին զանձ մը, ուր կը պահուէր մեծ խնամքով և յարգանքով<sup>1</sup>: Մինչև ցարդ ականատես և արժանահաւասար վկաներէ կը պատմուին անթիւ հրաշքներ և բժշկութիւններ, երանելոյն գերեզմանին վրայ կատարուած ի Սամաթիա, ուր շատերը կը գիմեն հաւասարով անոր բարեխօսութեան. այդ հրաշից հաստատութիւնն է այն տեսող և մշտապէս աճեցուն չերժեռանգութիւնը, զոր ունին առ ընդհանրապէս Պոլսոյ մէջ բնակող բոլոր քրիստոնեայք առանց խարութեան ազգի և կրօնից<sup>2</sup>:

Զորոց վըկայէ ուխտաւորաց ծռվ.  
շասեալ Շամապազ ըզսրբոյթ շիրմով  
Կոմիտաս արգոյ՝ վըկայ մհծազով:  
Նղն կատարում յամիմ քրիստոսի  
շազար հօթմարիւր՝ հօթմերորդի  
Զուիստ եկացմ ըմկալ ըմդ քոյդ տաղորդի  
Կոմիտաս վըկայ լուսոյմ մախորդի:  
Թիւթ հայոց էր ձԱմենի, ի  
Քրոամ և Ֆիմմ նոկտիմթիրի:

1. Ա. Կազարու վանքին մէջ կը պահուին տէր կոմիտասին գիրանը, շուխոյ զգեստին կտրները, և երես խեկազիր երկու ձեռագիր մուտքանը. Կոմիտէ ազօնագիրը և Ա. Կ. Կերտիսի լամբրոնիցույ մէկ զիրը, զոր մեր հարեւենին բերեր են Պոլսէն:

2. Աը Եշտանեկնը հոռ տէր կոմիտասին զործած մի քանի հրաշքները, զոր կ առնենք մեր Եշտանեկոցի Հ. Մատթէոս վարդապետին պատմութենէն, զոր զիր է հրամանաւ. Միիրթար Ալբոյի յամին 1744, յսերգ ականատես և ականջարուր հաւասարին վկաներէ:

Ա. Պոլսոյ մէջ հոյ բարեպաշտ ընտանիք ուր փոքրիկ աղոյ մ'առնէր, որուն երկու աշքերը կուրոցիր էին ծաղիկ հիւանդութեանը: Մայրը, թժիշներէն յաւանատած, աղոյն ուխտի տարաւ երանելույն զիրեզմանին, որուն հոյն առերգով աղոյն աշքերուն վրայ զրաւ. և նոյն ժամանել բացուեցան աշքերը:

Բ. Լին մը, երկարատե, աներումելի հիւանդութեամբ մաշուտ, Հուկեմարը էր. ընտանիքը պատպարակի մէջ զներով զինքը տարին երանելոյն զիրեզմանը, և անոր հոյին վրայ առանձինին: Լինը, ի զարմանա ամենուն, կատարեալ կերպով տաղջացաւ, և ոչ միոյն պատպարակի պէտք շուշեցաւ զանեալու համար, այս ինքը՝ ուսոց վրայ առած՝ տարաւ զայն:

չակառակութիւնը և զրապարտութիւնը ընդդէմ Մխիթարաց և միաբարութեամ — Մխիթար թղթով կը մերը զանոնք . — Ս. թե մեղիկոսոսի կամոնը կ' ըմտրէ իրեմ միաբամութեամ ձամար . — Հ. Յովհամելէս վարդապետ կը զառնայ չուզմէմ յաջող լուրերով . — Քանի մը իմադիրք կը ծագիմ , որոնց մէջ Մխիթար յալթող կը ժամդիսամայ . — Դարձեալ Աակառակութիւնը կը սկսիմ Պոլսոյ մէջ ընդդէմ օհարամութեամ , և Հ. Եղիա վարդապետ նու կը կամ չուի . — Մխիթար Ս. Թովմայի Ակուհմացոյ գրքիմ թարգմանութիւնը կը սկսի և ամոր վրայէմ կը դասախոսէ :

**S**եսանք խոր զզուանքով մը , թէ բնչպէս ուզգի մը հոգեօր և քաղաքական վարիչը , կրօնական ատելութեամբ զինուած իրեններուն մէկ փաքքիկ մասին դէմ , որ կ'ուզէր թօթափել իրեն իրաւասութեան լուծը , այնպիսի ժայրայեղութեան կը հասցնէ անոր գէմ յարուցած հալածանքը , որ վերջապէս արիւնչեղութեամբ կը լնենայ զործը . և երանի թէ այդու փակուէր այն արիւնուտ տեսարաններուն շարքը : Այդ եղբայրասպան կախւը պիտի շարունակէ այդպէս յամառ և զայրագին ամրողջ գարէ մ'աւելի , հազիւ թէ մերթ ընդ մերթ սակաւիկ մի մեղմանալով , մինչև որ երկու կողմանց մէջ եղած խրամատն այնչափ լայննայ . որ այլ ևս իրարմէ անկախ և որիշ հասարակութիւնք կազմուին : Եւ այդ բոլոր կախւներուն , դաւադրութեանց , արիւնչե-

Դ. Շատ տարիներէ ի վեր Պալութիոյ մէջ կը ընտկէր զաւոսոցի հոյ մը Յովհաննէս Ժամանչեան + Աս սրբի մ'աւելի ի ձևէ համբ . այլը մարդկային հնարքներէ յուսահատութ , ազդեցութիւն մ'աւելիցու ուշը կոմիտասին զերեզ անը առնելու իւր որդին . երբ տարաւ և դերեց հոյքուց . իսկոյն բայց եկան լեզուն և խռովի սկսու:

Կը պատմուին առանց նունե ուրիշ շատ սրբանչելի բժշկութիւնց . որոնց համբաւը կ'անեցնէ որէ որ ուխտաւորաց երթևեկութիւնը :

դութեանց և ուրիշ ամէն տեսակ նողկալի արարքներուն կեղրոնը կամ թատերաբեմն էր Պոլիս, ուր կը խուժէին գաւառներէն այն ամէնքը, որոնք փառասիրութենէ կամ չահամոլութենէ զրդուած, կու գային իրականացնել Հոն մոքերուն մէջ յղացած ծրագիրը և յազուրդ տալ իրենց կրքերուն, ուր ճարպիկ մարդու մը համար չէին պակսեր միջոցներ և նպաստաւոր պայմաններ։ Այսպէս կարծես աղեաից և երերմանց մէջ ապրելու սահմանուած էր այդ քաղաքը, որուն մէջ ծնունդ առաւ Մխիթարայ միարանութիւնը, և ուր սակայն ամենէն աւելի իւր զոյսւթեան սպառնացող արգելներուն հանդիպեցաւ։ Միարանութեանս երկհարիւրամեայ կենաց պատմութիւնը կը հաւաստէ, թէ կրած չէ հակառակութիւն մը, յարձակում մը, հալածանք մը, որ այդ քաղաքին սկսած շըլլան. բայց անժխտելի է նաև, թէ միարանութեանս աստղները, մեծագոյն մըտքերը, այդ քաղաքին ծնունդը են մեծաւ մասամբ։

Մինչ Մխիթար, յետ միարանութեան բնակարանը ապահովցնելու, պարտքերէն թեթենալու, և անոր զրամական վիճակը բարւոքելու, կը յուսար վանական ներքին կենաց մղում մը տալ, և աչքը դէպ ի Հռովմ դարձուցած, որտատրոփ կը սպասէր անոր տալիք վճռոյն, որպէս զի աւելի եռանգուն և ժիր զործօնէութիւն մը սկսի զրական և քարոզչական. և ահա անդին, Պոլսոյ Հորիզոնին վրայ, կը դիզուէին սևաթոյր խիտ ամպեր, որոնք սպանակից որուստամբ կ'ուղղուէին դէպ ի Մռուէ, Մեթոնի վրայ թափելու իրենց փոթորիկը։

Ի՞նչ էին այդ ամպերն և ի՞նչ այդ փոթորիկը, եթէ ոչ սովորական զրագարտութիւնք, — թիւրիմացութեան, տղիտութեան կամ նախանձու արդիւնք, — մի քանի տղէտ անձինքներէ հնարուած, և Պոլսոյ եկեղեցեական իշխանութեան ականջը հասուցած, որոնք ուրիշ նպաստակ շունէին՝ բայց նսեմացնել Մխիթարայ հետզհետէ փայլող աստղը, խոչընդուներ հանել դէպ ի լոյս և դէպ ի յառաջադիմութիւն ընթացող միարանութեան հանդէպ, և վերջապէս կործանել զայն, անոր զոյսւթիւնը կաթողիկէ կրօնքին վեասակար ցուցնելով։ Ամոռոյն առջև, Եւ չէին յիշեր այդ պալարտողք այն խօսքը, զոր թերեւ շատ անդամ կար-

դացեր էին, և զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ  
կամ գործդ, քակտեցի. ապա թէ յԱստուծոյ է, ոչ կա-  
րեք քակտել զդոսա<sup>1</sup>։ Եւ յիրաւի, որչափ առիթներ շը-  
պատահեցան, որոնց մէջ կարծուեցաւ Մխիթարայ միաբա-  
նութիւնը խորանդունդ վիշտ մը եղերքը հասած ըլլալ, ձա-  
խող պատահարներէ կամ մարդկային կրից հօսանքէն մը-  
զուած, և սակայն աներևոյթ աջ մը բռնեց զայն։ Այդ  
զրպարտութիւնք, որոնց մէջ ոչ սակաւ մասն ունեցան  
նաև Հռովմ զանուող ազգայիններէն ոմանք, հետեւանքներն  
էին արևելքէն և Մոռէայէն ստէպ հասնող զովեստներուն՝  
Մխիթարայ և իրեն միաբանութեան նմատմամբ, և այն  
բոլոր յաջողութեանց, զորս կը սկսէր երկինք թափել ա-  
ստորէն Մեթոնի մէջ ապաստանող հայ միանձանց վրայ։  
Կ' ափշի մարդ, թէ ի՞նչպէս կարող էին զրպարտիչք այն-  
պիսի բաներ ըսել, որոնց գէմ կը բողոքէին մեծաձայն ոչ  
միայն արժանահաւատո վկայք, այլ նոյն իոկ իրողութիւնք.  
Երբ կը կուրանայ մարդ ո և է կրթով, այնուհետեւ բա-  
նավարութեան չափուն և սահմանին մէջ չմնար. կը խօսի,  
կը գործէ յախուան, ինչպէս որ կը թելադրէ իրեն անձ-  
նական կիրքը։ Հակառակորդաց գէնքը զըմաւորապէս Մխի-  
թարայ գէմ ուղղուած էր. եթէ նա վիրաւորուէր կամ  
ինկնար, պիտի տապալէր արդէն բոլոր շէնքը. հետեւարար  
շնորհեցին բարդել անոր վրայ ամենէն աւելի յանդուզն և  
ստայօդ զրպարտութիւնները. ինչպէս, օրինակ իմն, իրը  
թէ ըսած ըլլայ՝ թէ ինքն իշխանութիւն ունի կրօնաւո-  
րական միաբանութիւն հաստատելու, առանց հարցնելու  
Ս. Աթոռոյն։ Եթէ այդպէս ըսած ըլլար Մխիթար, ինչու  
ապա այնչափ փոյթ և հօգ՝ Հռովմ զրկելու իւր երկու ա-  
շակերտները, և Ո. Ժողովոյն ներկայացնելու իրեն սահ-  
մանազրութիւնը. ինչու այշափ վիշտք և տագնապք, երբ  
կը ձգձգուէր գործը։ Երկրորդ զրպարտութիւնն էր, իրը  
թէ Մխիթար իրեն աշակերտաց փոքր աստիճանները կու-  
տար, պնդելով թէ ինքն ունէր այդ իշխանութիւնը։ Զըր-  
պարտութիւն մը, զոր հերքելու անգամ պէտք չկար,  
քանի որ Մեթոնի վանքին մէջ կը բնակէր Յովնան և

պիսկոպոսը, միայն այս նպատակով՝ որ ազգային արարուցութեամբ կատարէր ձեռնադրութիւնները, թէ և մեծ ծախուց գուռ մ' էր անոր բնակութիւնը, մանաւանդ շրջառութեան տարիններուն մէջ։ Կը շարախօսէին դարձեալ՝ իրը թէ ըստ քիմն կը փոփոխէ հասարակաց աղօթից կարզը, և նորանոր կարգադրութիւններ կ'ընէ եկեղեցական իրոց մէջ, և այն. և զայս կ'ըսէին անոնք, որոնք բոլորովին տգէտք էին ազգային ծիսից և արարուցութեանց, և իրենք էին որ նորամոյժ սովորութիւններով վերիվայր կը շրջէին ամէն եկեղեցական բարեկարգութիւն, կը խանգարէին եկեղեցական մատեանները, կը խեղաթիւրէին անոնց իմաստները, կ'աղաւաղէին լեզուն, և որոնք որ իրենց չէին հետեւեր կամ չերժ պաշտպան կը հանգիստանային ազգային արարութեանց և ուզիղ կարգաց և սովորութեանց, ինչպէս էր Մխիթար, այնպիսիք կ'ամրաստանուէին իրրեւ մոլարք և սերմանողք ստարութիւն վարդապետութեանց։ Եւ որ մեծազոյնն է, Հակառակորդք ամէն տեղ իրը տգէտք կը համբաւէին զՄխիթար և իրեն աշակերտները, բոլորովին զուրկ աստուածարանական և եկեղեցական ուսումներէ, որով և անկարողք առաքելութեան և հոգեւոր ասաշնորդութեան, ուստի և վեսաակար պիտի ըլլայ ժողովրդեան, կ'ըսէին, լոկ անոնց ներկայութիւնն իսկ, եթէ յանկարծ Ա. Աթոռն հաստատէ անոնց միարանութիւնը։ Եւ այս մօքերը պղտորող քառութիւնները կը ծաւալէին Պոլսոյ և գաւառներուն մէջ, կը հասցընէին ամենուն ականչը, կը մտնէին ընտանեաց մէջ, և ամէն տեղ կը սերմանէին ատելութեան հօգին ընդդէմ Մխիթարայ և իրեններուն, ոչ մէկ կամ երկու անգամ, այլ տարիններով անընդհատ, կարծես կազմակերպուած պատերազմ մ' էր՝ որ կը մղէին մերիններուն դէմ խումբ մը հայեր, որոնք համարէն քաշուելու պահուն՝ կը գտնէին իրենց արժանաւոր յաջորդները, մի և նոյն ողբույ յառաջ վարելու այդ զըզուելի պայքարը։ Եւ սակայն այդպիսիք յանզէտս կը նըսպաստէին մեր գատին, և ոչ միայն իրրեւ անքաւն պահապաններ հսկելով մեր հասարակութեան ամբոցին վրայ, ինչպէս կը զբէր Մխիթար, որ ըլլայ թէ մեր վրայ յարձակի ստանան. կամ իրրեւ համեմիչ աղ, որ թէ և սա-

կաւ մի կը կոկծեցնէ , բայց կը պահէ նեխութենէ<sup>1</sup> » , այլ նաև իրենց թուոյն տասնապատիկ պաշտպաններ և ջատագովներ յարուցանելով մեզի : Այդ պաշտպաններուն մէջ առաջին տեղը կը զրաւէ Կօրնթոսի մեծիմասու արքեպիսկոպոսն Կարղինի , որուն իրաւասութեան ներքեւ կը գտնուէր բովանդակ Մոռէան , և շատ մօտէն կը ճանչնար դՄխիթար և միարանութիւնը , ուստի և գերակշխա արժէք ուներ իւր վկայութիւնը սրբազն Ժաղովոյն առջև , և մէկ զրով կը բթացնէր հակառակորդաց զէնքերը : Այդ զրպարտութիւնը , յետ քանի մը տարի մոխրին ներքեւ ծածկուելու , դարձեալ պիտի արծարծուէին այնպիսի ժամանակ , երբ Մեթոնի վանատունն աւերակ և աճիւն դարձած բարբարոս կրակին տակ , միարաններէն ունանք զերի ինկած և այլք Վենետիկ ապաստաններ էին անտուն և անպատճապար : Այս անգամ անոնց գէմ ախոյեան պիտի կանգնէր ուրիշ զարաւոր և հմուտ զրիչ մը , նոյն ինքն Կարնեցի Խաչատուր վարդապետը , որ կը զրէր առ Հայազգի ուզդափառ Պոլոսոյ<sup>2</sup> , մեղադրելով զանոնք թէ ինչպէս առջևը չեն առած այդպիսի անխիղօ զրպարտութեանց . « Որովհետեւ դուք , կ'ըսէ , շատ լաւ կը ճանչնաք անոնց (Մխիթարայ և իրեն աշակերտներուն) բարի վախճանը և ջանքերը , և զիտէր թէ ինչպէս տասնեւեօթն տարիներէ ի վեր կ'աշխատին սուրբ Հաւատքը տարածելու , և իրենք զիրենք վատնգներու մէջ դնելով , ամէն օգուտ և բարիք կ'ըսնեն , ոչ միայն այդտեղ , այլ նաև ուրիշ քաղաքաց մէջ . կը զարմանամ թէ ինչպէս շկրցաք խափանել այդ ստայօդ կարծիքները այսպիսի միարանութեան մը նկատմամբ ... : Լաեցի նաև թէ հակառակորդք յանդգներ են միարանութեան Գլուխն ալ իրեւ տգէտ համբաւել ազգին մէջ ... մինչդեռ սա թէ զրութեան և թէ խօսքերուն մէջ կը ցուցնէ , թէ որշափ իմաստուն և հանձարեղ է . վասն զի թէ և դպրատան (Հռովմայ Աւրանեան վարժարանին) մէջ ուսած չէ , — ինչպէս կ'ըսնեն հակառակորդք , — այլ պէտք է զիտնալ , որ սովորական մոքերն են՝ որոնք առանց դպրոց երթալու

1. Թուղթ առ բարեկամ ոմն ի կ. Պոլիս . 1717 յունիս 6 :

2. Թուղթ առ Հաճի Յարութիւն և Տիրացու Պետրոս ի կ. Պոլիս . 1717 յունիսար 6 :

շեն կրնար գիտուն և ուսումնական անձինք ըլլալ . մինչդեռ մեծ կարողութեան տէր մոռքերը , առանց վարժապետներու , պարզ զրբերու ընթերցմամբ՝ երևելի գիտնականներ եղած են . ինչպէս Ա . Օգոստինոս , որ երբ դեռ անհաւատ և պատանի էր , առանց վարժապետի համեցաւ և ուսաւ Արիստոտելի տասն ստորագութիւնները . և այս զերբնական չնորհք մը չէր , որովհետեւ այն ժամանակ տակաւին չէր դարձած ի քրիստոնէութիւն : Պէտք է ըսել այդպիսիներուն , թէ գուք առանց տեսնելու և խօսելու անոնց մեծաւորին հետ , ինչպէս համակցաք իրեն տգիտութիւնը , և առանց խղճելու կը տարածէք այդ սուս և յանդուգն լուրը . նա որ քաններկու տարիէ ի վեր վարդապետէ , և մանկութենէն սկսեալ անյազ ընթերցող մ' եղած է զրբերու , ինչո՞ւ պիտի չկարենար փիլիսոփայական և առաւածաբանական գիտութիւնները ուսանիլ այնշափ կարդացած զրբերէն : Բաց ասկէ , եթէ այդ մարդիկը առանց տեսնելու և փորձելու , կը համարձակին տղէտ համրաւել անոնց մեծաւորը<sup>1</sup> , ապա ես որ քաններկու տարիներէ հետէ կը ձանշնամ զինքը , և չինդ՝ վեց տարի իրեն կենակից եղեր եմ , և հոս (ի Վենետիկ) ամէն որ կը տեսնեմ զինքը , կը խօսիմ հետը , ո՞րչափ աւելի պէտք եմ

1. Զարժմանալի է որ Մխիթար , իրեն առարինութեամբ և մեծամեծ զորերով , ի նմին ժամանակի երկու հակոռակ զդացութեր ներշնչեր է ազդացիներուն , կամ շափազանց առելութիւն , հայածանք . և կամ շափազանց համարելութիւն և հիացութե : Յնչ լսելու թէ հակառակ և թէ ի նպաստ կարծիքներ , աւելի ես կը հաստատեն մեր զիտողութիւնը՝ հետեւու քանի մը տողերը , որոնց անտարակոյ շափազանց վառ երեակայացութեան արդիւնք են , և այն սե զրպարտութեանց առջեւ պիտի երեխն ինչպէս լոյսը խռարի : Ճով : Ուշ գեւու է փառաւոր մակրիքներու հնիսութեան , զոր արեհեւան չուցյ զրիչ մը միայն կարող էր որտագրել . «Գերազարին և մեծարդոյ , պերհամփառ և ջնորհազար , հրաշազան , առառուստամեծար , մեծաւորութու և ամենաերազոյ , կորովարոն և քաջանշան և ամենայն զրովութեանց արժանացել , և ընարութեամբ Տեսուն մեծարեալ , և եղեալ վերատեսուչ սրբոյ Միաբանութեանն . . . Ո՞ւ հառազայթ արեզակուն , լուսառու և լուսառութիւն տիեզերաց . ո՞վ արուսեակոյ և պայծառ առաջդր պատուական . ո՞վ ազրիւրդ դիսութեան . . . ինսուսութեան ազրիւր , ուշիդ զնուցը ընդ հնացցն Աստուծոյ : Ամենաբար առառածային զիտութեամբ զարդարեալ մահուկդ տիսք , ձերացեալ մասք : Եղեալ ջնորհար Հոգացյն սրբոյ » . . . (1711 Մայիս 2):

լաւ ճանչցած ըլլալ զի՞նքը . ուստի պարագ կը համարիմ վկայել, թէ զիտուն է անոնց մեծաւորը (Մխիթար), և արեգակ է, և ոչ թէ՝ ինչպէս իրենք կը բաջազեն։ Կը զարմանամ, թէ գեռ այդ զրաբարտողներուն շհասան այս արեգական ճառագայթները, մինչդեռ հոս քարերն ալ ճանչցան իրեն լուսափայլութիւնը։ Խաչատուր վարդապետի այս անկեղծ վկայութեան կը համաձայնին այն ամէնքը, որոնք զՄխիթար մօտէն ճանչնալու բախտն ունցեցր են։

**Մինչ Պողոս մէջ սակաւ մի կը հանդարտէին խռովայայդ ոգիները, և կը դադրէին նորանոր խոչեր և խութեր յարուցանելէ ընդգէմ միաբանութեան, Հռովմայ մէջ ևս կ'աւարտէր տարիներով առաջ ոկտուած գործոյն քննութիւնը և ընդհուպ պիտի տրուէր հաստատութեան վճիռը։ Կը մեար սակայն որոշել ուրիշ խնդիր մ'ալ . Հռովմէական եկեղեցին երեք կանոն միայն կը ճանչնար կրօնաւորական կենաց, Ա. Բարսղին, Ա. Օգոստինոսին և Ա. Բենեդիկտոսին. հարկ էր որ Մխիթար այդ երեքէն մին ընտրէր և բատ այնմ յարմարցնէր իւր Սահմանադրութեան կարգերը։ Մխիթար, խորհրդակցելով երիցագոյն վարդապետաց հետ, միաբանութեան նպատակին յարմարագոյն գտնելով Ա. Բենեդիկտոսի կանոնը՝ զայն ընտրեց. վասն զի թէ մեր ազգին ծանօթ էր և նախնեացմէ թարգմանուած, և թէ թոյլ կու տար տղայոց կրթութեամբ պարապիլ, որ իրեն ծրագրին հիմնական կէտերէն մին էր։ Այսպէս, ամէն կոզմէ հարթուելով գժուարութիւնք, Ա. Աթոռ հաստատեց Մխիթարայ Սահմանադրութիւնը, պատշաճ սրբազրութիւններն և յաւելուածներն ընկերով. և խռոտացաւ<sup>8</sup> անպակաս ընել իւր բարձր հովանաւորութիւնը այն միաբանութեան վրայէն, որ օրինաւոր վանական ընկերութեանց կարգն անցաւ, որպէս զի իրեն առջև ելած արգելներուն դէմ մարտնչի քաջօրէն և ծագկեցնէ իրեն գործը, որով հայ ազգին լուսաւորութեան զարագլուխը պիտի բանար : Այս առթիւ Արքահայր տիտղոսը շնորհուեցաւ միաբանութեանս Գլխոյն, թէ և նա իրեն շափազանհացմեսութեամբ, իւր արժանիքէն վեր համարելով այնպիսի պատուանուն մը, միշտ կոչեցիալ Արքահայր կը ստորագէր ինքզինքը։**

Հ. Յովհաննէս վարդապետ հազիւ ձեռք բերած Ժողովյան վճիռը, որ միարանութեան յաղթանակի գրօշն էր և միանգամայն զէնք մը իրեն դէմ մղաւելիք ապագայ կոիւներուն համար, անյապաղ դարձաւ ի Մեթոն 1742 տարւոյն . այդ օրը՝ երբ ոտք կոխեց նա Մեթոնի վանքին մէջ, ողեարութեան և ցնծալից հանդիսի օր մ'եղաւ բոլոր վանականներուն : Արբահայրն առնըլով Հռովմէն բերուած Սահմանադրութիւնը՝ բացատրեց գայն ամենուն, և հպատակելով ժողովոյն որոշողութեան, որով կը պատուիրէր նորողել ուխտերնին այս նոր Սահմանադրութեան վրայ, ինքնին օրինակ տալով ամենուն՝ փութաց Նաւպլիա քաղաքը, և հոն ուխտեց Կորնթոսի արքեպիսկոպոսին առջև, և այս եղաւ զրեթէ երկրորդ հաստատութիւն մը միարանութեան, որ պատահեցաւ 1742 տարւոյ սեպտեմբեր ամսոյն մէջ : Փութաց Արբահայրն իրեն և միարանութեան երախտագիտական զգացումները, ինչպէս նաև խոնարհ հպատակութիւնը և յարգանքները, յայտնել թղթով Ս. Ա. թոռոյն, փոխարէն անոր ցուցած հայրական գորովոյն և նորհաց : Ահաւասիկ Արբահօր ուղղած թուղթը . և Վահամափառ Տեարք . — Ընդունելով Կորնթոսի արքեպիսկոպոսին ձեռքով այն Սահմանադրութիւնը, զոր Դիուք հաստատեր էք իրը յառաջնորդութիւն և ի բարեկարգութիւն մեր կրօնաւորական կենաց, կը յայտնենք մեր հլու հպատակութիւնը և յարգանքը, և հաստատապէս կը խոստանանք ամենայն ձշութեամբ պահել զանոնք : Միայն թէ մեր ազատութեան թողուած ըլլալով՝ ընտրել կամ Ա. Բարպի, կամ Ա. Օդոստինոսի և կամ Ա. Բենեդիկտոսի կանոնը, մենք միարան ընտրեցինք վերջինը, արգէն ժանօթ ըլլալով այն մեր ազգին : Երթարով առ վերոյիշեալ արքեպիսկոպոսն, ես, Հ. Յովհաննէս և Հ. Գէորգ վարդապետները, անոր առջև հրապարակաւ ըրինք ուխտերնիս, ինչպէս օր սահմանուած էր . այսպէս պիտի ընեն նաև միւսները անոր առջև, զոր Դիուք պիտի որոշէք, որովհետեւ չեն կրնար ամէնքն ալ յիշեալ արքեպիսկոպոսին երթալ, տեղւոյն հեռաւորութեան և նաևնապարհին վտանգներուն պատճառաւ : Խնդրելով Զեզմէ շարունակել Զեր հզօր պաշտպանութիւնը լքեալ ազգի մը, համբուրելով, և այլն : — Մեթոն, 18 նոյեմբեր

1742» : Այս թղթոյս պատասխանեց Հաւատափիւռ Ժողովյն գահերէց ծիրանաւորը, Սակրիպանաէ, հետևեալ զրոյ . «Հաւատափիւռ Ժողովը շատ շինուեցաւ այն հպատակութեան և պատրաստականութեան վրայ , որով ընդուներ էք ձեզի տրուած կանոնները և Սահմանադրութիւնը , և կը խոստանաք ճշգութեամբ պահել զանոնք ձեր հպատակ կրօնաւորներով . . . Ծիրանաւոր ժողովական հարք շատ դրուատեցին ձեր եռանդը և բարեպաշտութիւնը , որով կ'աշխատիք մուծանել և վերանորոգել ձեր աղջին մէջ կրօնաւորական կեանքը և բարեկարգութիւնը , և միանգամայն կը ծաւալէք կաթողիկէ կրօնքը . և այլն : — Հռովմ , 5 յունիս 1743» :

Միսիթարայ ճակատագիրն էր՝ կրել և գործել , ոչ երբէք հանգիստ կամ դադար առնուլ : Կորանոր խնդիրներ յուզուեցան , որով դարձեալ կրկիսին մէջ նետուեցաւ : Եա չզիտէր յուել՝ տեղի տալ , բայց ուր որ հարկը կամ պատշաճ կը պահանջէր : Պէտք չէ երբէք չփոթել խոնարհութիւնը՝ նուաստութեան հետ : Մեծ սուրբերը՝ մեծամեծ տիպարներ եղած են արիութեան և վսեմութեան . անոնք , իրաւունքի մը պաշտպանութեան համար . կը զոհէին իրենց կեանքը , և ի տես հարստահարուած անմեղութեան , արդար զայրոյթ մը կը վառէր անոնց հեզ սիրտը : Այդ հոգին ունէր և Միսիթար : Եա , որ չափազանց ներոզամիտ էր անձին գէմ եղած հակառակութեանց և թշնամանաց . ինչպէս յայտնի է իւր վարուց պատմութենէն , չէր կրնար հանգուրժել Աստուծոյ կամ կրօնքին դէմ եղած անարդանաց , ինչպէս նաև միարանութեան հասուցած բարոյական կամ նիւթական վնասուց : Եւ Միսիթար ամէն ժամանակ և ամենուն հետ նոյն կերպով չէր վարուեր . զիտէր նա , իրեն մանկական պարզութեան և անկեղծութեան հետ , ըլլալ նաև խորագէտ և ձեռներէց , որքան թոյլ կու տայ քրիստոնէական հոգին , մանաւանդ երբ գործը խորամաններու հետ էր , անոնց ծուզակին մէջ շինկնալու և իրեն զիմաց ելած արգելները վերցնելու համար . զայս պիտի տեսնենք հետեւալ միջադեպին մէջ :

Մեթոնի մէջ շորս եկեղեցիք կային . առաջինն էր Լատինաց , որ Փրանհիսկեան կրօնաւորաց ձեռքն էր . եր-

կրորդ՝ Քիացւոց (Առղջոցոց), որոնք յօյն էին աղղով, բայց կրօնքով՝ կաթողիկէ . երրորդ՝ մերը, և չորրորդ՝ Յոյներուն, որոնք առանձին եպիսկոպոս ալ ունեին : Տարւոյն քանի մ' օրերուն մէջ, լատին եկեղեցւոյ ոռվորութեան համեմատ, քաղաքին բոլոր քրիստոնեալք՝ ինչ դաւանութեան ևս պատկանէին՝ միասին հանդիսաւոր թափօրի կ' ելնէին . յորում առաջին տեղը կը բռնէին Լատինք կամ իտալացիք, որոնց ձեռքն էր երկրին իշխանութիւնը . յետոյ կարգաւ Քիացիք, Հայք, աշխարհական եղրայրութիւնք, և ամենէն վերջ Յոյներն իրենց եպիսկոպոսով. տարիներէ ի վեր այս կարգը կը պահուէր թափօրներուն մէջ : Յոյները, միւս ազգերէն աւելի բազմաթիւ և բնիկ տեղացիներն ըլլալով, և իրենց յատուկ եպիսկոպոս ևս ունենալով, շէին հանդուրժեր, երբ կը տեսնէին քան՝ երեսուն պանդուխտ հայեր նախապատիւ համարուած քան զիրենք, իրենց հողին վրայ, և այս՝ սաստիկ կը վիրաւորէր անոնց անձնասիրութիւնը : Աւտոի յօյնը, խորագէտ հնարիմացութեամբ, ուղեց դարան մը լարել հայուն, բայց չյաջողեցաւ . վասնզի հայն, ոչ նուազ հնարագէտ քան իւր մրցակիցը, անոր զրաւիը գարձուց այդ պատրաստուած մեքենայութիւնը : Յոյն եպիսկոպոսը քաղաքապետին գիմեց փոխել տալու համար այն կարգը, որ պատուարեր շէր իրենց ազգին . և տեսնելով թէ պարզ խօսքն արդիւնք մը պիտի շունենայ, զրամին օգնութեամբ համողեց քաղաքապետը, որ իսկ և իսկ զրեց անոր խնդիրը երկրին կուսակալ իշխանին, որ էր նոյն ինքն մեղի ծանօթ Անբաստիանոս Առշենիդոյ : Առ իրեն կարեոր դործերով զրադած և անտեղեակ եղածին, հաւանեցաւ քաղաքապետին առաջարկին, որ այնուհետեւ հանդիսաւոր թափօրներու մէջ անմիջապէս Լատիններէն վերջ Յունաց եպիսկոպոսն երթայ իւր կղերով, և յետոյ այլք իրենց կարգին համեմատ, Քաղաքապետն և յոյն եպիսկոպոսն, իրենց յաղթանակին վրայ պահով, ծածուկ պահեցին հրովարտակը մինչև թափօրին օրը : որ ըլլայ թէ Ախիթթարայ կողմէն — որուն ճարտար և ազգեցիկ կարողութենէն կը վախէին — արգելք մը հանուի : Բայց այդ ամէնը իմանալով իշխանին բժիշկը, Դոմինիկոս անունով, որ Աքրահօր սերտ բարեկամն էր, պատ-

շահ համարեցաւ խնդիրը ծանուցանել Միսիթարայ, որպէս  
զի եթէ կարեռ գատի՝ այլազգ կարգազրութիւն մ' ընէ :  
Արբահայրը զրեց մէկէն բժշկին, ցուցնելով անկէ յառաջ  
գալիք անպատճութիւնները, և որ մեծագոյնն է, այսու  
կաթողիկէ կրօնքին նուաստանուր և ժողովրդեան մէջ ձնաւ  
նելիք զայթակղութիւնը, և խնդրեց իրմէ որ այս բաները  
ժանուցանէ իշխանին : Եա, իմանալով գործին եղելութիւ-  
նը, անմիջապէս նոր հրովարտակ մը զրեց, բացարեցավ  
մէջը, թէ ինքը բատին ըսելով կ' իմանար բոլոր կաթողիկէ  
դաւանութիւն ունեցողները, որոնց թուոյն մէջ են նաև  
հայ կրօնաւորները . որով պիտի պահուէր ճիշդ թափօրին  
նախկին կարզը, միայն աշխարհական եղրայրութիւնք յայն  
կղերէն վերջ պիտի երթային : Բժիշկն աճապարեց Արքա-  
հօր ձեռքը հասցունել այս հրովարտակը թափօրէն առաջ,  
զոր նա ևս ծածուկ պահչեց : Թափօրէն օր մ' առաջ քաղա-  
քապետն կանչեց Արբահայրը և կարդաց իշխանին հրո-  
վարտակը, որուն մէջ զրուած էր որ Յայները թափօրին  
մէջ անմիջապէս Լատիններէն վերջ պիտի երթային . երբ  
նա վերջացուց ընթերցումը, Միսիթար գուրս հանեց իշ-  
խանին միւս հրովարտակը, որով առաջինը կ' ոչընչանար :  
Ակչեցաւ քաղաքապետը, զայրացաւ այդ շըսպասած ան-  
յանողութեան վրայ, բայց սահառուեցաւ խոնարհիլ բար-  
ձրագոյն հրամանին առնե : Երկրորդ օրուան թափօրը  
յաղթանակի հանգէս մ' եղաւ Միսիթարայ և իրեններուն  
համար, և ամենուն զարմանք ազգեց, թէ Միսիթար ինչպէս  
իմացաւ քաղաքապետին և յոյն եղիսկապոսին մէջ եղած  
ծածուկ մեքենայութիւնը և կարճ ժամանակի մէջ կրցաւ  
յաջողիլ և առանձին հրովարտակ մը բերել հակառակ ա-  
ռաջնոյն : Այսու յայտնի եղաւ Միսիթարայ աշալուրջ, հե-  
ռատես և զործոն անձ ըլլալը, և միանդամայն անոր մեծ  
ազգեցութիւնն իշխանին վրայ :

Սակաւ ժամանակէն ուրիշ առիթ մ' ալ ներկայացաւ,  
յորում Միսիթարայ ինչպիսի տոկուն կամաց և շվիատոց  
ողույ տէր ըլլալը յայտնուեցաւ : Ի սկզբան երբ Մուէայի  
մէջ ձրիաբար երկիրներ չնորհուեցան միաբանութեան,  
Գաղաղոն և Մավրամաթ գիւղերը, երկրաշափ խարդա-  
խութեամբ շորթեր էին այն գիւղերուն ամենէն աւելի

բերրի կտորները և յոյնի մը վաճառեր էին, այն պայմանով  
որ տարրի ութուուն դաշեկան հատուցաներ ողեւ-  
տութեան գանձարանին: Արրահայրը, — անսեղեակ եղած  
խարդախութեան, — չուզերավ որ տարրք մեր սահմաննե-  
րուն մէջ մտնեն, զնեց այն չողերը, որով ամէն տարի տէրու-  
թեան ութուուն դաշեկան հատուցանելու պարտքը ստանձ-  
նեց վրան: յետոյ երբ իմացաւ եղած խարդախութիւնը,  
բողոքեց՝ ուր որ հարկ էր, բայց ոչ ոք ուշադրութիւն  
դարձուց բողոքին: հարկահաւաքներուն անիրաւ պահան-  
ջէն ազատելու ուրիշ միջոց չկար, բայց դիմել բարձրա-  
զոյն ատենի: Այս նպատակով Վենետիկ զրկեց իրեններէն  
մին' Յակովը Բուզայեանը, որ գեռ բահանայ չէր, հմուտ  
իսակերէն լեզուի և բանիրուն, որպէս զի միաբանութեան  
սերտ բարեկամ Անտոն Նանի սեպուհին ձեռքով, որ երբեմն  
Մոռէայի իշխան եղած էր, ազերսազիր մը պատրաստէ  
ծերակուտին ներկայացնելու համար: Ազերսազիրը պա-  
տրաստուեցաւ և ծերակուտին ներկայացուեցաւ, որ քննել  
տալով խնդիրը և ըստ ամենայնի արդար և իրաւացի գըտ-  
նելով Միհթարայ բողոքը, ոչ միայն ազատ ըրաւ պարտ-  
քերէն, այլ նաև այն բոլոր կալուածները միաբանութեան  
չնորհեց: Բուզայեան, ծերակուտին հրովարտակը առած,  
ինչպէս նաև Վենետիկ բնակող ազգայնոց այլեայլ նուէր-  
ները, դարձաւ յաջողութեամբ ի Միթոն, յուրախութիւն  
Արրահօր և բոլոր միաբանից:

Մինչ այսպէս Միթոնի մէջ շարք մը յաջողութեանց և  
յազմանակներու անցած աղէտները մոռցնել կու տային  
և գեղեցիկ ազագայի մը արշալոյն ըլլալ կը թուէին,  
Պոլսոյ մէջ դարձեալ թշնամական խլրումը կը սկսէր,  
այլեայլ շլուկներ կը պարտէին ոգիները զրդուելու և զի-  
նելու փոքրաթիւ հասարակութեան մը գէմ, որ իրեն հաս-  
տատութեան օրէն ի վեր միջտ տառապանաց մէջ, զեր-  
մարդկային ջանքեր ընելով միայն պահպաներ էր իրեն  
դոյտութիւնը, և հազիւ կը սկսէր սակաւ մի հանգիստ շունչ  
տանոււ: Միաբանութեան՝ Ա. Աթոռէն հաստատուելուն  
յուրը հասեր էր ի Պոլիս, և այդ էր հակառակորդաց ողին  
զայրացնողը, որոնք ձեռք կ' առնուին դարձեալ զրսարտու-  
թիւնները, և տունէ տուն ըրջելով անուանարկ կ' ընէին

Միմիթարայ աշակերտները մանաւանդ, Հ. Եղիան, որուն հոգելից քարոզութիւնը մեծամեծ օգուտներ ըրեր էին մայրաքաղաքին և գաւառներուն մէջ, և ամէն կողմ՝ զովութեամբ կը լսուեր անունը, և առհասարակ ժողովրդեան սէրը և յարգանքը իրեն զրաւեր էր. և այսպիսի եռանդուն և ողջամիտ անձ մը կ'ամբաստանուէր՝ իրը թէ ուղղափառ վարդապետութեան հակառակ բաներ կը քարոզէր և ներօգութիւնները կը մերմէր : Մեծ աղմուկ մը յառաջեկաւ այդ զրապարտութիւններէն, որոնց արձագանդը հասաւ մինչև Հռովմ. դարձեալ պղտորեցան հազիւ շինուած մաքերը, դարձեալ քննութիւնք և թղթակցութիւնք Ա. Ժողովոյն և Միմիթարայ մէջ, նորանոր հայածանք և արգելներ, որոնք թէ և անկարող պիտի ըլլային տապալելու այն շէնքը, որ հաստատուն ժայռի վրայ հիմնուած էր, այլ առժամանակեայ պիտի փակէին միաբանութեան առջև քարզութեան գռները : Ա. Ժողովը, ընդհանրութեան օգուտը զիտելով, պատշաճ դատեց հեռացնել առ ժամն Պոլսէն Հ. Եղիա վարդապետը, որուն ներկայութիւնը՝ կայծ մ'էր ամանց աշքին, և կրնար նորանոր հրդեհներու առիթ ըւլալ. Արրահայրը ստիպուեցաւ ընել այդ մեծ զոհն ալ, և զրեց Հ. Եղիային՝ որ իւր թուղթն առնըլուն պէս, փութայ թողուլ Պոլսիը և գառնալ ի Մեթոն: Նա, թէ և կարեվէր խոցուած իրեն դէմ ուղղուած անիրաւ ամբաստանութիւններէն, վշտացած՝ որ այնչափ քրտամբք ուռոգած և խնամած պարտէզը պիտի թողուր այլոց յաւեր և ի կոխումն, և մտածելով մանաւանդ որ այնչափ տարիներու նպանց և աշխատութեանց պտուղը պիտի ըլլար հայածանք և զըրպարտութիւն, խոր թախիծով մը համակուած . Արրահօր թուղթը ստանալուն պէս ձանապարհ կ'եղնէր դէս ի Մեթոն, սպոյ և կակիծի մէջ թողլով իւր սիրելի հօտը: Իսկ հակառակորդք, իրը յաղթանակ մը կանգնած, ամէն կողմ կը հռչակէին իրենց յաջողութիւնը, և կ'ուրախանային որ վերջապէս իրենց կը մնար քարոզութեան ասպարէզը, որ շահու և պատիւներու դուռը պիտի բանար դիմացնին: Այդ եռանդուն կրօնաւորը, որ տարիներով կաթողիկէ կրօնից ժիր քարոզիչ մ'եղեր էր, ձշմարտութեան և գիտութեան լոյսը ըրջեցնելով իրեն հետ հայարնակ միզապատ

գաւառներուն մէջ, ոէր և խաղաղութիւն հաստատելով ի-  
րեն կոխած տեղերը, քարացած օրտերը կակզցնելով և  
տառապեալները սփոփելով հոգեշունչ խրատներով, ցաւերը  
և հիւանդութիւնները բուժելով զոր անկարող եղած էր  
դարմանել թժկական արուեստը, և զրեթէ սքանչելիքներ  
գործելով բոլոր ժողովրդէն պաշտուած էր իրեւ կենդանի  
սուրբ մը, այդ անձը կը վտարուէր իւր հայրենիքէն, իր-  
ու մոլար և կասկածաւոր վարդապետութեանց քարոզող  
մը. ո՞հ, որպիսի մահացու հարուած մ' էր, զոր անոր կու  
տային հակառակորդք: Վիրաւոր օրտով հասաւ ի Մեթոն,  
յամին 1713, զոր Արքահայրն իրեն օծեալ խօսքերով միի-  
թարեց, և իսկ և իսկ ծանոյց Ա. Ժողովոյն անոր գա-  
լուստը, արդարացնելով զինքը այն բոլոր զրադարտութիւն-  
ներէն, որոնց սուռթիւնն այնքան ակներեւ էր, որ ապա-  
ցուցանելու անգամ հարկ չկար: Այդպիսի տարապարտ  
զրադարտութեանց առջև անտարբեր շնաց նաև Կորնթոսի  
արքեպիսկոպոսը, որ իւր զօրաւոր ձայնը մինչեւ Հոռվմ  
հասուց՝ ջատազովելու համար անմեղին դատը, անոր ա-  
ռաքինի վարուց և կրօնից ուղղափառութեան մեծամեծ  
զրուատիք տալով: Այդ հակառակութիւնք ոչ փաքր վէրք  
մ' եղան ևս Միսիթարաց օրտին, նկատելով որ ինքն ուղ-  
զափառ կրօնից համար միայն հալածուած հայրենին եր-  
կրէն, այնչափ տառապանքներ կրեր էր ստարութեան մէջ,  
և անոր ծաւալբան համար խնայած չէր այնչափ հսկայա-  
կան ճիգեր, և հիմայ այդ միակ պարծանքն իսկ կը խլեին  
ձեռքէն, անիրաւ կասկածներու ենթարկելով իրեն և իրեն-  
ներուն ուղղափառ հաւատքը: Եւ սակայն շընկճեցաւ նա  
այդ ծանր բեռին տակ. շատ տեսեր էր այդպիսի ալէ-  
կոծութիւններ, որոնցմէ միշտ անվնաս զերծած էր. եր-  
բէք վայրկեան մ' իսկ շղեգեցաւ նա, Աքաւ, շքաշուե-  
ցաւ պատերազմի գաշտէն, և վիրաւոր զինուորը կռուէն  
դուրս հանելու ժամուն, ուրիշ մը կը հասցնէր անոր տեղ:  
Եւ այսպէս, երբ նախանձուաք վերիփայր կ'ընէին և կը  
պղտորէին ամենուն միտքը իրենց ստայօդ զրոյցներով, թէ  
կործանելու մօտ էր Մեթոնի վանքը, արևելքի դռները  
փակուած էին անոր առջև, նոյն ժամանակ Պոլիս կը հաս-  
նէր Մեթոնի միարաններէն մին, Հ. Պողոս վարդապետ,

և կ' իմանային սոսիք, թէ իրենց բթացած զէնքերը շէին կրնար մեռցնել Ախիթարայ դործը, որ կարծես աւելի ևս կ' ամրանար անոնց հարուածներուն ներքեւ։

Այդ հեռաւոր ժխորք և չփոթք երրեք արձագանգ շէին զտներ վանքին մէջ, ուր ամէն րան կը յառաջեր բարեկարգ ընթացքով, և իւրաքանչիւր ոք իրեն յանձնուած դործին մտաղիր, ժիր և եռանդուն աշխուժիւ կը դիմէին իրենց նպատակին, ազգին ապագային համար անխօնի և լուսաւոր դործիչներ ըլլալու։ Գիտութիւնք կը զարգանային աստիճանաբար - բարձրագոյն աշակերտք աւարտելով փիլսոփայութեան ընթացքը, աստուածաբանութեան ուսումը պիտի սկսէին, որուն կանոնաւոր դասագիրք կը պակսէին։ Այդ գժուարութեան առջև չվարանեցաւ Ախիթար, ինքը, Դպրոցական դրութեան օգուտն և առաւելութիւնները ըմբըռնած, իրեններուն՝ աստուածաբանական ուսմանց իրը առաջնորդ ընտրեց զԱ. Թովմաս Ակուինացին, միջին դարու ամենէն մեծ և զօրաւոր միտքը, որուն լոյսը դարերով առաջ հասեր էր մինչեւ իսկ մեր մայր աշխարհին խորերը<sup>1</sup>, և որուն հրաշալի մատեանը — Բովհանդակուրիւն աստուածաբանական կոչուած — Հ. Յովհաննէս վարդապետ Հառվմէն բերած էր ուրիշ պիտանի դրեանց հետ։ Հարկ էր նախ ընտանենալ անոր սեղմ և ամփոփ ոճին, ըմբըռնել բոլոր նրբութիւնները, թափանցել անոր խորութեանց, որոնցմավ կը ճառէ կրօնից ամենէն աւելի բարձր ինդիրներուն վրայ. Ակուինացւոյ զրութիւնը թարգմանելու համար՝ հարկ էր կարծես նոր լեզու մը ձուլել, նորանոր բացատրութիւններ և բառեր ստեղծել։ Այս բոլոր գժուարութիւնք կանգնեցան Ախիթարայ մաքին առջև, երբ առաջին անգամ յղացաւ այդ զեղեցիկ դադափարը. կը ուց նա գործին մեծութիւնը, որուն ձեռք զարնելէն առաջ թողուց արտաքին զրազումները, և առանձնանալով՝ ինքզինք լատին լեզուին ուսման տուաւ։ Այդ գործին մէջ անոր զլխաւոր աջակից եղաւ Հ. Յովհաննէս վարդապետ, որ վեց տարի Հառվմ մեալով՝ հիմնովին հմտացած էր լատին լեզուին, և սկսաւ թարգմանել Ա. մասը, զոր Այրա-

1. Պատմ. Հին Հոյկ. Դպրութեան, Ա. Հա. 1886, Էջ 736։


հայրը սրբազրելով, կը յդկէր ըստ կարի լեղուին անհար-  
թութիւնները և դիւրիմաց կ' ընէր: Երբ բաւական թուռզ  
թարգմանուեցան աստուածաբանական խնդիրք, անոնց այլ-  
եալ օրինակներ քաղաքաբուեցան, որոնց վրայէն Միթ-  
թար կը դասախոսէր երիցագոյն աշակերտաց, բարձրաց-  
նելով արծուօրէն անոնց միտքը՝ Ակուինացւոյն թերթով  
երկնային գաւառներուն մէջ, ուր կը ճառագայթէ միայն  
կրօնից պայծառ լոյսոր: Մի և նոյն ժամանակ կը զրագացնէր  
կրտսերաց միտքը՝ զիտութեան զանազան մասնաճիւղերով,  
կը կրթէր անոնց սիրտը բարոյական հրահանգներով, կը  
սրէր՝ կը ճախացնէր անոնց իմացական կարողութիւնը՝ պատ-  
մական, չափարերական և իմաստասիրական ուսմամբք,  
աղնիւ, ճկուն և ամսուր կամքի և բնաւորութեան տէր ան-  
ձինքներ կը հասցունէր. միով բանիւ, ամէն կարեոր զի-  
տութեամբ ճոխացած, կ'ենթազրուի, այն ժամանակաց  
պահանջներուն համեմատ, կարող և անձնանուուէր զործիշ-  
ներ կը պատրաստէր ազգին: Եւ այս մեծ և կարեոր զործը  
ինքն անձամբ կ'ընէր, միայնակ, իւր այնչափ զրազանաց  
և սրտմաշուկ հոգերուն մէջ, այնպէս որ կ'ափչի մարդ, թէ  
ի՞նչպէս կը հանէր, ինչպէս ժամանակ գտնէր այդ բոլորը  
կատարելու: Ամէն որ երեք՝ շորս դասախոսութիւնք զա-  
նազան նիւթերու, առանձին կոմ հրապարակաւ խրատք,  
աշալուրջ հսկողութիւն իւրաքանչիւրին զնացքին և զործե-  
րուն, պատրաստութիւն դասազրեանց, միաբանութեան  
նիւթական պէտքերուն հոգը, ամէն բանի դարման, խր-  
նամք, մատակարարութիւն, և այլն. այս բոլորն իրեն վրայ  
բեռնաւորուած էին. և ի նմին ժամանակի կը հսկէր շի-  
նութեանց վրայ, առաքելութեան կը պատրաստէր քահա-  
նաները, կը թղթակցէր ի Հառվմ, ի Պորխ և այլուր՝ կա-  
րեոր զործերու համար. ամէն ցաւ, զրկանք, շարախօսու-  
թիւն, հալածանք, միաբանութեան ու է անձին դէմ  
ուզգուած, վերջ ի վերջոյ իրեն կը դաշէր, ինքն էր որ կը  
կրէր, կը մաշուէր, կը տառապէր, որ որշափ արի և զի-  
մացկուն հոգի մուռնէր, նոյնչափ ևս զգայուն սիրտ մը  
կը կրէր: Եւ սակայն կը գտնուին թերեւս անձինք որոնք կը  
պահանջեն, թէ Միթթար ի՞նչ զրական զործ արտազրեց ի  
Մեթոն, ազգին ի՞նչ օգուտ ըրաւ իրեն հաստատած միա-

րանութիւնն այնչափ տարիներուն մէջ։ Այդ հարցման պատասխանելէն առաջ՝ Հարկ է նկատել այն հանդամանքները, որոնց մէջ հիմնուեցաւ և ապրեցաւ Մխիթարայ միաբանութիւնն ի Մեթոն։

Կաւաբեկութեան միջոց, կենաց սպառնացող վտանգին առջև, մարդ տառին հանդիպած ժայսին կը զիմէ՝ ինք-զինքը ազատելու համար։ Ասպէս և Մխիթար, փախչելով մրրկէն, իրեն և միաբանութեան զոյսութիւնն ապահովելու համար գտաւ Մեթոն բերդաբաղաբը, որ աւելի զգեակ մ'էր քան քաղաք մը, Մոռէայի մէկ ծայրը նետուած, զրեթէ մեկուսացած աշխարհէն, ծովով շրջապատուած, մերթ Վենետիկցոց տիրապետութեան ներքեւ և մերթ Տաճ-կաց, դարերով կործանելու և շինուելու փոփօխակի հարկին մէջ, ամայի և անմարդի լքուած, և հազիւ թէ տասնեակ մը տարիներէ հետէ սկսած շէննալ և բնակիչներով բազմունալ, ուր շկային կարգաւորեալ զրատուն մը, վարժարան մը, տպարան մը, որոնք զրական զարդացման անհրաժեշտ պայմաններ են, և ինչպէս կարելի է այսպիսի տեղույ մէջ հաստատուած միաբանութենէ մը զրական գործերու սպա-սել, և այն ևս սակաւ տարիներու մէջ։ Մխիթար՝ այդ բերդաբաղապը ուրիշ քանի համար շընարեց, բայց աւելի ապահով ըլլալուն համար մերձաւոր թշնամիներէն՝ քան Մոռէայի միւս քաղաքները, և միանգամայն հոն ապրուսոր դիւրագին ըլլալուն, մանաւանդ որ զրամական նեղ զրու-թեան մէջ էր, և որ մեծագոյնն է, արևելքի մերձաւորու-թեան համար։ Այն տասներկու տարիներուն մէջ որ մնաց ի Մեթոն, չունեցաւ և ոչ ամբողջ տարի մը, որ ազատ ըլլար հոգերէ և տագնասպներէ, և անդորրութիւնը՝ տա-ջին պայմանն է զրականութեան ծազկելուն։ Հազիւ թէ 1714 տարւոյն Կ'աւարտէր ամբողջական շինութիւնը, պարտ-քերէ կը թեթենար, նիւթական հոգերէ և զմբաղներէ կ'ազատէր, և Ա. Աթոռոյն հաւանութիւնը կ'ընդունէր ի հաստատութիւն միաբանութեան, — և այս յաշազութիւն-ները ձեռք բերելու համար՝ քանի կուիներ հարկ եղաւ մղել ամէն տեսակ արգելից, զժուարաւթեանց, մարդկային կրից գէմ, ինչ ճգնաժամեր անցուց, — և ահա չորս տարի յետոյ (1715), դարձեալ պիտի մատնուէր նոյն տառապա-

նաց, ստարութեան և շքաւորութեան ձեռքը. և կարելի՞ էր  
միթէ այնպիսի պայմաններու մէջ, երբ կենաց և մահու-  
խնդիր է, մտածել ուսումը, զրական զարգացումը, և այլն:  
Փոթորիկներու մէջ չի պատղաբերեր զիտութեան ժառը:

Նկատելու է գարձեալ, որ Միսիթարայ առաջին աշա-  
կերտք, որոնք պիտի ըլլային զիխաւոր աջակիցք իրեն զրա-  
կան աշխատութեանց, արդէն մեծահասակ կրօնաւորած  
ըլլալով. չկրցան կանոնաւոր ուսումնական ընթացք մ' ը-  
նել. և այդպիսիներէն զրական մեծ արդիւնք մը չեր  
սպասուեր: Եթէ բնութիւնը ուստումներ չգործեր, նոյնպէս  
միտքը, ու իւր սովորական զիճակին մէջ. նա աստիճանաւ-  
րար կը մեծնայ, կը զարգանայ զիտական ասպարիդին  
մէջ. յանդուզն թոփիչներ ընող մաքերը՝ հազուազիւտ երե-  
ւոյթներ են. փիւնիկներ՝ որոնք մեր մթնոլորտէն դուրս  
կ'ապրին: Մեթօնի մէջ շխնայուեցան տաժանազին աշխա-  
տութիւնք՝ մշակելու համար թարմ մաքերը և դնելու ա-  
նոնց մէջ զիտութեան սերմերը. բայց պառզ տալու և  
հասուննալու համար պէտք կար ժամանակի, չերմութեան  
և ուրիշ պոյմաններու. որոնցմէ զուրկ էր անոնց միջա-  
վայրը. զրական երկանց և յղութեան տարիներ եղան ա-  
նոնք. որոնց արդիւնքները լոյս աեսան յետոյ ի վենետիկ,  
չնորհիւ մամաւին և խաղաղաւէտ օրերուն Ա. Պազարու-  
կղղեկին մէջ:



## ԳԼՈՒԽ Ե.

Մինիթար կը լոէ Օսմանցոց պատերազմի պատրաստութիւնը բնդ դէմ զեմենկոյ . — իւր աշակերտներէն անոնք որ սուրբ առտիժամները չէին ըմումած , Կորմթօսի արքապիսկոպոսին ժեռաւդրել կու տայ . — Կ'որոշէ փոխազրել միարանութիւնն ի զեմենիկ . — Աշակերտներէն զոմանս Միթոնի մէջ Խողով , միւսներուն ժիտ կը մնկմի Յունով դէպ ի զեմենիկ . — Նկարագիր Վեմետիկ քաղաքին , և պատմական ակնարկ էը տեղոյն ժայ գաղթականութեամ . — Մինիթար տում մը կը գարձէ Ս . Մարտիրի հեղինակոյն կից . — Իրեմ ծանօթից շնորհիւ միարանութեան ապրուսի միջոցները կ'ապահովցնէ . — Կը ոկսի իւր գրական աշխատութիւնները , և իրեմ առաջին ճրատարակութիւնն ի զեմետիկ :

**Պ**արուն էր , Ժաղկանց և Ժպիտներու եղանակը , 1715 տարւոյն , երր վենետիկցի վաճառական նաւ մը , գանգաղ և տաժանելի զնացքով կը կորէր Աղրիականին խաղաղ ջրերը . Այդ նաւը զրեթէ դար մը ապրած , մրրիկներու դէմ կռուած , անդադար ծեծուած աշխներէ , մաշտած , ծերացած էր , այնպէս որ թեթե հով մը բաւական էր կռչակներուն ձեռքը մատնել և ծովակուր ընել զայն . Հայ ազգին բախտէն՝ շիշեց այդ հովը : Նաւուն խելքին վրայ կանգնած էր վայելուշ հասակով , լուրջ դէմքով , վառվառւն աշքով վարդապետ մը , իրր քառանամեայ , արևելեան տարազի մէջ , որ կը դիտէր ծռվը , կը նայէր դէպ ի հեռուն , կարծես հորիզոնին վրայ բան մը կ'ուզէր նէմարել . մտածկոտ , տագնապալից խոհերու մէջ ընկղմած , ինքն իրեն կը խօսէր , կը հակածառէր , նորանոր ծրագիրներ որոնալու հետ էր : Նաւուն ուրիշ կողմ մը , իրեն նման հազուած արեղաներու խումբ մը կար , որոնք նոյնոպէս մտածկոտ կ'երեւէին , — անոր օտարութեան ընկերներն էին : Այդ շրջմոլիկ կենաց գատապարտուած վարդապետը , որ սուհալի աղետի մ' երեսէն վախչողի տպաւորութիւնը կ'ընէր

մարդու վրայ, վաղուց արդէն հրաժեշտ տռւած պիտի ըլլար իրեն փշոտ ասպարիզին, եթէ չգիտնար՝ թէ ամբողջ ազգի մ'ապագայն և յոյսը իրեն հետ կը ըջեցնէր. այս մտածութիւնն էր՝ որ կ'ամրապնդէր իւր ուժերը, արիարար զիմազրելու բախտին հարուածներուն: — Եւալը, որ մօտ էր իւր ընթացքին ծայրը հասնելու, դժերու մայրաբազաքն ողջունելու և խարսխելու Ա. Մարկոսի ծովախորչին մէջ, կը տանէր հայ ազգին զրականութեան լուսաւորիչը: — Միսիթար Աերաստացին էր այդ վարդապետը, և արեգաներու խումբը՝ իրեն աշակերտներն էին:

Բայց ի՞նչ էր՝ որ կը ստիպէր զիրենք թողուլ այն ասպընձականող հողը, որ երկրորդ հայրենիք մ'եղած էր իրենց, — այն չէնքերը՝ որոնք այնքան դառն վշտեր և արտասուբ որժուծ էին, — այնչափ խնամով մշակուած դաշտերը, որոնք իրենց արգաւանդութեամբ լիութեան տարիներ կը խոստանային, — և որ մեծն է, ցիրուցան կ'ըլլար այն սերտ, միածոյլ և բարեկարգ միարանութիւնը, որուն երկնակամուրին վրայ հետզհետէ աւելի կը փայլէր և կը բարձրանար յաջողութեանց աստղը, ամէն կողմէ կը յորդէին բարիք և անդորրութիւն, հարածանկները դադած, ամէն բան գոհացուցիչ և բարգաւաճ վիճակի մէջ, և կտատարեալ երջանկութեան համար ուրիշ բան չէր պակասէր՝ բայց յարատուումն այն լուսաւոր և ծազկեալ կացութեան: Այդ բոլոր ձախողութեանց պատճառն էր՝ արևելքէն փշող հողմ մը, որ կը տապալէր այն երջանկութեան չէնքը: Պատմենք համառօտիւ թէ ի՞նչ էր այդ կործանիչ հովը, որ Աերթոնէն տարաւ քչեց Միսիթարույ խաղաղիկ լաստը մինչև Վենետիկոյ լճակը:

Մինչ յաջողութեամբք և յոյսերով կը հրճուէր Միսիթար, այլ ևս անկասկած նորանոր փորձանքներէ և բոլորին ապահոված կարծելով միարանութեան ապագայն, յանկարծ արևելքէն տիսուր լուրիք կը հասնէին և վերիվայր կ'ընէին ամենայն ինչ: 1714 տարւայն, Օսմանցիք բանտելով Պոլոսյ վենետիկեան գեսպանը, պատերազմի կը պատրաստուէին Վենետիկցոց դէմ, ուղելով անոնց ձեռքէն ետ առնուլ Մոռէան. այդ գումբը կը լսէր երկրին մեծ իշխանը, Ազեքսանդր Բոն սեպուհը, երբ Նիշի կոչուած

փոքրիկ աւանին մէջ կը դանուէր , և խկոյն կը ծանուցա .  
Նէր զայն Արքահօր , երբ սու իրեն այցելութեան զնացեր  
էր : Մտահոգութիւն և վարանք կը պաշարեն զՄիթար .  
իւր հեռատես մոքով կը դուչակէ ըլլալիքը , և բնաւ շտա-  
րակուսիր՝ թէ Վենեստկայ նման փոքր և անզօր պետութիւն  
մը՝ անկարող պիտի ըլլար դիմաղրելու . Տաճկաց զօրաւոր  
և բազմաթիւ բանակներուն . ուստի անոր վաս երեակայու-  
թեան մէջ կը պատկերուի պատերազմը իւր բոլոր աղէտ-  
ներով , — Մեթոնը տիրապետուած , տաճիկ զօրաց կատա-  
զութեան և աւարառութեան մատնուած , իրենները կէս մը  
սրախողխող և կէս մը գերի տարուած , վանքին կալուած-  
ները՝ զինուորաց և ձիերուն ոտնակոխ եղած , վանասունն  
և եկեղեցին՝ աւարի տրուած , աւերակաց գերբուկ մը և  
մոխրակոյտ մը դարձած . իսկ ինքը , իրեն մի քանի միա-  
րաններով , գարձեալ թափառայած և աստանդական օտա-  
րութեան մէջ , օրուան հացին կարօտ , անտուն , անտէ-  
րունչ , ձախողաւթեանց ձեռքը խազալիկ , մարդիկներէ թո-  
զուած : — Այս և ուրիշ նման սև պատկերներ անոր  
շուրջը կը խացնէին միութիւնը և յուսահատութիւնը .  
որոնց մէջ ծագելով յանկարծ լուսատու աստղի նման՝ եր-  
կնից Գչխոյին իրեն ըրած խոստումն , կը քաջալերուէր  
յառաջ վարել անապայթաք իւր ընթացքը : Կը շտապէ վանք  
դառնալ և հաղորդել իրեններուն այդ լուրը , որ ամենուն  
վրայ սաստիկ ցնցում մը կը գործէ . կը ժողվէ իրեն խոր-  
հըրդականները , և միաբան կ'որոշեն թօղուլ Մեթոնը և  
երթալ Վենեստիկ , ծովապատուար , անտոիկ , բարեպաշտ ,  
բազմամորդ և հարուստ քաղաքը , ուր միաբանութիւնն  
ունէր բաւական թուով սերտ բարեկամներ՝ Վենեստկայ նը-  
շանաւոր և ազգեցիկ սեպուհներուն մէջ , ուր կար փոք-  
րիկ հայ զաղութ մը՝ յորոց շատերը ծանօթ էին Միի-  
թարայ , ուր կը գտնուէին առատօրէն զրեանք , տպա-  
րանք , վարժարանք , վանորայք , և այլն , որոնք իրեն ծրա-  
զրին և նպատակին հասնելու շատ դիւրութիւններ և յար-  
մարութիւններ պիտի բնձեռէին : Սակայն որչափ դժուա-  
րութիւնք և խոշընդակներ կային , զորս հարկ էր հարթել :  
Երկրին ընդհանուր կառավարիչ իշխանը հրաման հաներ  
էր , որ բնակիչներն ազատ են զաղթելու ուր որ կ'ուզեն ,

մանաւանդ որոնք որ պատերազմի ժամանակ ոչ միայն պիտի չկարենային օգնութիւն մ' ընել , այլ ծանրութիւն պիտի ըլլային և պարենի նուազութեան պատճառ . բայց այդ հրամանը քահանայից և կրօնաւորաց համար չէր , որոնք իրենց աղոթքով և պատարագներով պիտի գորացնեին պատերազմողաց բազուկները , և հուր և քաջութիւն պիտի շնչէին լքելոց՝ իրենց անձնանուէր օրինակով և խօսքերով : Ակայն Արբահայրը , խոհական , և աշալուրջ յամենայնի , այդ գժուարութեան առջև կանդ շառաւ . մտածելով թէ տակաւին միարանութիւնը սակաւաթիւ էր և մէկ վանք միայն ունէր , և եթէ յանկարծ պատերազմը ձախող ելք մ'աւնենար , ինչպէս կը գուշակէր , տպառապուռ պիտի կործանէր այն , կը փութար՝ համաջինչ աւերածէն առաջ՝ ապահովցնել իրեններուն կեանքը , եթէ ոչ բոլորին՝ զոնեա մեծամանութեան , և յետոյ հոն մեացողներն ալ ազատեալ հնարք մը հարել : Աւստի աշակերտներէն ամենէն արդիւնաւորը և իրեն աշակիցը , Հ . Յովհաննէս վարդապետը , Նաւալլիա քաղաքը զրկեց , որ երթայ իշխաննէն հրամանագիր մ'առնու , որպէս զի կարենայ Արբահայրը տառնըմէկ անձինքներով թողուլ Մեթոնը և Վենետիկ տեղափոխուի . այս առթիւ անոր յանձնեց իրեն ինը աշակերտները , որոնք աւարտեր էին ուսումնական ընթացքնին և քահանայ ձեռնադրուելու պահանջած տարիքը ունէին , որպէս զի Կորնթոսի արքեպիսկոպոսին տանի զիրենք ուուրը աստիճանները ընդունելու համար : Նա 1714 տարւոյ դեկտեմբերին հասաւ Նաւալլիա քաղաքը ինը դպիրներով , որոնք յետ կարեւոր պատրաստութեանց՝ ընդունեցան արքեպիսկոպոսէն քահանայական սուրբ օծութիւնը . իշխանն ալ առանց զժուարութեան տուաւ իրմէ խնդրուած հրամանագիրը , որով յետագայ (1715) տարւոյն սկիզբները փութացին Մեթոն գառնալ , բոլոր միարանից ոգեսրեալ և ցնծալից ազաղակներու մէջ ընելով իրենց մուտքը : Ամ որչափ գաղանցուկ էր այդ ուրախութիւնը . սակաւ որերէն պիտի թողուին այն մենաստանը , որ իրենց հայրենի յարկին շափ սիրելի եղած էր , և որուն ամէն մէկ անկիւնը՝ իրենց մասներութեան մէկ մէկ քնքոյչ յիշատակներ կը պահէր իւր մէջ . և որ մեծն է , հազիւ սկսած վայե-

լիլ միարանակոն կենաց քաղցրութիւնները, պիտի սովորուէին բաժնուիլ իրարմէ, մթին՝ անծանօթ ազագային ձեռքը տալով իրենք զիրենք:

Որչափ որ մերձաւոր վտանգ մը չկար տակաւին, որովհետեւ Նաւազիա քաղաքը, որ Վենետիկոյ տէրութեան նախամարտիկ դուռն էր, ամուր բերդերով և մարտկոցներով պատապարուած, զբեթէ անառիկ էր. ինչպէս նաև Մեթոն, ցամաքի կողմէն՝ հաստ և ամուր պարիսպներով և ժայռերով շրջապատուած, խորափիտ խրամներով պաշտպանուած, որուն համար ևս դդեակ կամ բերդաբաղաց կը կոչուէր. սակայն հետզհետէ կը սաստկանար պատերազմի շուկը, և ամենուն սիրոս կը տրոփէր ահաւդողով, այնչափ սարսափ ազգեր էին սամանցի զէնքերը խեղճ բնակչաց վրայ. հարկ էր որ Մխիթար և իրեններն ալ փռմային, ուր որ պիտի տանէր զիրենք բախուը, մանաւանդ թէ ուր որ պատրաստեր էր իրենց նախախնամական աջը, որ երբէք պիտի չթողուր զիրենք: Աւստի հաւաքեց իրեն շուրջը այն ժամանակ Մեթօնի վանքին մէջ գտնուած անձինքը<sup>1</sup>, և խոր լոռւթեան մէջ ծանոյց մատալուտ սարսափելի վրանգը, և անոր երեսէն վաղընդփոյթ խոյս տալու անհրաժեշտ հարկը. ծանոյց նաև երկրին խիստ՝ անողոք որբէնքը, որ թոյլ չէր տար իրենց որ ամէնքը միարան հեռանան այն հողէն, որ կարծես զես անյազ իրենց այնչափ թափած քրտինքէն և արտասուքէն, կ'ուղէր որ հայ պահդուխտին արիւնն ալ թափուէր հոն, հայութեան յիշատակը նուիրագործելու և յաւերժացնելու համար: Հարկ

1. Այս ժամանեակ Մեթօնի վանքին մէջ կը գտնուէին նշանակ անձինք. 2. Եշիս Մարտիրոսուան. 3. Յովհաննէս Սբուժեան. 4. Պատար Ակնեցի, 5. Մանուէլ Խուսկեարեան. 6. Պետրոս Նուրումեան. 7. Բագրատ թէնզորոսուան, որուց ընկուներ էին վարդապետական զաւազան, և ինը նոր ձեռնադրուած քահանայք. 8. Գարբիէլ կարեցի, 9. Միքայէլ Վարդերեսուան. 10. Յոկոմի Բուզայեան, 11. Գրիգոր Վահան, 12. Յովհանք Պրոռացի, 13. Փէլլապոս Մարտիրոսուան, 14. Ասեղ Պատոս Պետրոսուան, 15. Մատթէոս Գարազաշեան, և 16. Յովհան Կոստանդնուպոլացի. երեք ալ աշխատաւոր եղբարք, եղ. Տիրաց, եղ. Մարգիս, եղ. Մկրտիչ: Խոկ 2. Գէորգ Այնթապղի և 3. Պաղոս Միմինան վարդապետ առարկութեան զնացած էին ուշելք և դեռ շէն զարձած:


էր ուստի իրենցմէ ումանք մեային հռն , պաշտպանելու իրենց մենաստանը և եկեղեցին թշնամոյն սուրերէն և կրակէն , իրենց կեանքը զոհելով միաբանութեան համար , եթէ երկինք այնպէս կ'ուզէր , և պիտի ըլլային հնագանգութեան և եղբայրսիրութեան մարտիրուններ : Զգիտեմ եղաւ արդեօք ունկնդիրներէն մէկը , որուն սիրտը չվառուէր այն զորովալիր հօր խօսքերէն , չփառուէր , կ'ըսեմ , մարտիրութեան եռանգով , բոլորանուէր ողջակիզելու իւր անձը եղբարց և միաբանութեան սիրոյն համար : Հուսկ ապա Արրահայրը միաձայն հաւանութեամբ որոշեց Մեթոն թողուլ Ակնեցի Հ . Պաղար վարդապետը , որ իրեն պաշտօնին պատճառով Հայր զորժակալ կը կոչուէր , անձնանուէր , աշակուրջ և բանիրուն անձ մը , զոր իրեն փախանորդ կարգեց , առժամանակեայ փոխարքայ տիտղոսը տալով անոր , որուն ընկեր տուաւ Հ . Մանուէլ , Հ . Թռովմաս և Հ . Յակովը վարդապետները , և երեք աշխատաւոր եղբայրները :

Յետ այսպէս կարեւոր օրոշումներն ընելու , սկսան ճանապարհի պատրաստութիւնները տեսնել : Փետրուարի 20ին Մեթոնի նաւապահների մտան երկու վաճառական նաւեր , որոնք արևելքէն զալով՝ Վենետիկ պիտի երթային : Արրահայրն աճապարեց յարմար առիթը չփախցնելու , և զնաց անոնց միոյն նաւապետին հետ խօսելու և գաշնազրելու , որ տաններկու անձինք Վենետիկ տանի՝ քսանուչորս վենետիկեան ակի վարձք տալով նաւուն , պայմանով՝ որ իւրաքանչիւր անձ կարենայ իրեն հետ մէկ մէկ սնսուկ և անկողին առնուլ : Նաւապետն հաւանեցաւ պայմաններուն և դաշնադրութեան . Արրահայրը վանք դառնալով հրամայեց բերել հաւաքել ինչ որ հետերնին պիտի տանէին , ամենէն աւելի կարեւոր իրերը , ինչպէս էին զգեստեղէնք , զրեանք , ձեռագիրներ . եկեղեցական զգեստներէն և սպասներէն՝ երկու զեղեցական չուրջառական կանոններէն և սպասներէն՝ իսկ առաջարկեցաւ որէաք պիտի ունենային : Իսկ ճանապարհին որը առաջարկեցաւ որչափ պիտի ունենային :

բիկներու պատճառաւ երկարէք ճանապարհորդութիւնը . ուստի առին երկու ամսուան բաւելու շափ պաքսիմատ, ոլիք, զինի, ձեթ և ուրիշ Հարկաւոր նիւթեր: Իսկ ամենէն կարեւոր բանը՝ դրամը, այնչափ միայն առաւ Միսիթար, որշափ որ կրցաւ գտնել իւր աղքատիկ քառկին մէջ, այն է՝ 250 դահեկան, որ տասներկու անձանց պիտոյից համար հազիւթէ մի քանի որ պիտի բաւէք օտարութեան մէջ, ուր որ մոնաւանդ ապրուստը և բնակարանը թանկ էր, ինչպէս էր Վենետիկ քաղաքը . և այդ 250 դահեկանով պիտի հոգար Միսիթար իրենց բոլոր պէտքերը, բնակութիւն, զգեստ, կերակուր, կահեարասի, և այն . զրեթէ հրաշք ընելու պէս բան մը: Եւ Միսիթար զործեց այդ հրաշքը իրեն մեծ հաւատքով, որ մեծամեծ վանդներու և գժուարութեանց մէջ անհամեմատ կերպով կը մեծնար. նա հեռատես և կանխատես էր, ուր որ մարդկային միջոցները կը զօրէին. իսկ ինչ որ իւր ուժերէն վեր էր, զայն կը թողուր վերին ամենախնամ Աջոյն, որ կը սահմանէ մարդու ապագայն և վաղիւը՝ պատուիրելով: «Մի հոգայք վան վաղուի»:

Եթի ամէն բան պատրաստ էր և կը մատենար նաւուն մեկնելու օրը, Արքահայրը ժողվեց դարձեալ բոլոր միաբանները. և իրեն հրավառ որտին կայծերով արծարծեց, քաջալիրեց, միսիթարեց, մանաւանդ զանոնք՝ որոնք յօժարակամ սիրով և արիութեամբ յանձն առեր էին զոհուիլ հնագանդութեան և եղբայրսիրութեան խարսկին վրայ. լացաւ և լացուց զամէնքը, և տեսնելով իւր աղամանդիկ սիրու կակղած՝ փշրած այնպիսի գան վայրկեաններու տպաւութեան ներքեւ, վաղեց եկեղեցին, ձերագիր ազօթեց երկուր, և զօրացած գուրս ելու, արտասուաց և հեծեծանաց մէջ տալու հրաժեշտի ողջոյնը իրեն սիրասուն որդւոց՝ զորս պիտի թողուր. և Յիսուսի և Տիրամօր խնամոց յանձնելով զանոնք, բաժնուեցաւ վանքէն և եկեղեցիէն, և փետրուար 25ին իրեններով նաւ մուաւ, որ զես քանի մ'օր սպասեց նաւահանգստին մէջ, նախ քան մեկնիլը գէպ ի Վենետիկ: Այսպիսի օրտաճմլիկ բաժանում երբէք ունեցած չէր Միսիթար, ինչպէս կըսէր յետոյ իրեններուն, և զես շմեկնած Միթոնէն, յետին բռպէին, վերջին գորովալիր


ակնարկ մի ևս ուղղեց իրեններուն, օրհնութեան մրմունջ մը, որ անոնց աղասարար հրեշտակն եղաւ բարրարոս դէնքերու հարուածներուն դէմ, գերութեան երկաթներուն




Վերսալի.

և անթիւ արկածներուն մէջ, և դարձեալ բերու միացուց զանոնք միւնոյն հօր խնամուտ թևերուն ներքեւ։

Մարտ ամսոյն առաջին օրը, 1715ին, անոյշ և յաջող հով մը կը փշէր հարաւէն. նաւազետին հրամանին վրայ՝ խա-



Ս. Մարկոս.




րիսխը վեր կ'առնուի , առագաստները կը պարզուին , և նաւը կը սուբրայ երազարար մեղմ ալիքներու վրայէն , առանց ծովափառնքը աշքէ կորսնցներու : Եսուը համեմատարար փոքր էր և չնացած , այնպէս որ անխուսափելի էր նաւարեկութիւնն , եթէ Հովերն և կոշակներ շզսպէին իրենց կատաղութիւնը . խնայելով նաւորդներուն կենաց : Միթար , որ փոթորիկներու և ալէկոծութեանց փորձառու էր , իրեն կորած միւս ծովերէն աւելի հանդարտ զտաւ Աղրիականը , զոր կարելի է թերեւս Հայաժով կոչել , երկու դարուց մէջ այնչափ խումբ խումբ հայեր տանելով և բերելով իրեն մշտատան քամակին վրայ , և երբէք — որչափ կը յիշուի — անօնց մէկուն մազին անդամ չվեռասելով : Յետ ամսօրեայ հանդարտ նաւարկութեան , ապրիլին սկիզբը մոտան Վենետիկ : — Կ'արժէ որ սակաւ մի ուշադրութիւննիս դարձունենք այս եզական , ճոխ , գեղադիտակ և աշխարհակալ քաղաքիս , որուն առատ և բարեսէր ասպնջականութեան շատ բան կը պարտի , ոչ միայն Միթիթարայ միարանութիւնը , այլ և ամբողջ հայ ազգը :


Վենետիկ , բանաստեղծներու և նկարիչներու պաշտամ քաղաքը , նշանաւոր զրիչներէ երգուած և հռչակուած , որ 1300 տարիներէ աւելի ապրեր , զործեր , կռուեր և իշխանէ , կ'ափշեցնէ զմարդ՝ երբ համեմատէ անոր անշուք ծագումը՝ այն շքեղ փառաւորութեան և ճոխութեան հետ , զոր ունեցաւ ժամանակաւ իրեն վաճառականներով , արուեստագէտներով , զօրագորներով , հայրենասէր զիւցազուններով և մեծ անուն զոժերով : Հռովմէական հսկայ պետութեան ձգնաժամին , երբ Ռազադասներ , Ալարիկոններ և Ատտիզաններ , զլուխ անցած բարբարոս խառնազանն հրոսակներու , աւել<sup>թ</sup> և անապատ կը գարձունէին ամրողի իտալիան , և ամէն տեղ արեամբ և ամիւնով կը զծէին իրենց անցըը , չին Վենետաց սերունդք , մղուած այդ վայրագներու սարսափէն , Պատաւիսն և Ակուիլէա քաղաքներէն զաղթելով , Աղրիականի ծովախորշին ամայի կղզեկաց վրայ կը գտնէին իրենց ապաստանարանը , ուր տեղացի աղքատ ձկնորսներուն հետ խառնուելով , փռքրիկ հասարակութիւն մը կը կազմէին , և 421ին Ռիալտոյ (Բարձրագին) կոչուած կղզւոյն վրայ տասնեակ մը շէնքեր բար-

ծրացնելով, հանդերձ եկեղեցւով մը՝ Ա. Յակովի առաքելոյն նուիրուած, որ մինչև այսօր կանգուն կայ, զիւթական քաղաքին հիմք կը ձգէին. — այս է ահա Վենետիկոյ սկզբնաւորութեան պատմութիւնը: Օրէ որ կ'աճի բնակչաց թիւը, շէնքերը կը բազմանան, մերձակայ կղզիք իրարու հետ կը կապուին կամուրջներով, և անոնց օրինակէն զըրգուած, կու գան, կը հասնին ուրիշ փախատականներ ևս, Ազրիականի խաղաղ ջրերուն մէջ պաշտպանուելու բարբարոս սուրերուն դէմ. և այսպէս Վենետիկայ չուրջը կը կանզնին նորանոր շէնքեր, աւաններ, որոնք փոխադարձ սիրով և առնչութեամբք դաշնակցելով իրարու հետ, կը կազմեն միաձոյլ քաղաքական մարմին՝ մը, տեսակ մը հանրապետութիւն, որուն վարիչ կեղբանը կ'ըլլայ Վենետիկ, ուր իրաքանչիւր աւան կամ քաղաք կ'ունենայ իրեն ներկայացուցիչները և ատենակալները: Զկնորսութեան արուեստը բաւական շըլլար յազեցնելու այդ բազմակոյտ ամբոխը. կարօտութիւնը կը մղէ զիրենք երկնցընել իրենց բազուկները ծովու և ցամաքի վրայ, և այսպէս կը սկսին վաճառականութեան առաջին փորձերը դրացի քաղաքներուն և ծովեզերեայց հետ, և մերթ ծանր կամ թեթև ընդհարութենք, ուր որ իրենց շահուց կամ տիրապետող ռազմոյն խափանիչ տարերք կը հանդիպէին: Աակաւ ժամանակի մէջ այնչափ կը զարգանայ Վենետիկ ուժով և նոխութեամբ, որ Զ դարու կիսուն Բիւզանդիոնի ֆուստինիանոս կայսեր երկու քաջ սպարապետք, Բելիսարիոս և Ներսէս հայկացն, հարկ կը տեսնեն Վենետիկոյ օգնութեան զիմել՝ իտալիան նոււանելու համար արեւելեան կայսերութեան գաւազանին ներքեւ:

Գոթացւոց Տասիզաս թագաւորը կ'ասպատակէր յոյն կայսերութեան սահմանները հհշին. այդ բարբարոսին արշաւանքը սանձելու միակ յարմար անձն էր Ներսէս հայազն զօրավարը, որ յիտալիա ուղղուելով և բոլոր ճանապարհները բռնուած դանելով, Վենետիկ կու գայ և անոր նաւերուն օգնութիւնը կը խնդրէ: Ներսէս կը ջախջախէ Գոթացւոց ուժը, կը հալածէ զանոնք յոյն սահմաններէն, և երախտապարտ Վենետիկոյ նաւական զօրութեան, երկու եկեղեցի կը կանզնէ այն յիշատակաւ, մին՝ յանուն Ա. Թէոդորոս




Digitized by srujanika@gmail.com



զօրավարի, որուն վրայ կը բարձրանայ յետոյ Ա. Մարկոսի հոյակապ եկեղեցին, և միւսը՝ յանուն Ա. Գեմինիանոսի, ձիչդ առաջնոյն գիմաց, որ անցած գարուն (1800ին) սկիզբը կործանուելով՝ արքունի պարատան հետ կը կցուի: Այդ ժամանակէն կը սկսին հայուն առնութիւնք Վենետիկյ հետ: Այնուհետև քաղաքին պաշտպանը կ'ըլլայ Ա. Թիւղուրու իրեն կոկորդիլոսով, որուն վրայ կ'աւելնայ յետոյ նաև Ա. Մարկոս իւր թեատր առիւծով. և այդ երկուքին հովանոյն ներքեւ կը մեծնայ, կը զօրանայ Վենետիկ, կ'ընդարձակէ իւր տիրապետութիւնը Ազրիականի և Միջերկրականի ծովափանց վրայ, և մինչեւ Աև ծովուն եղերքները և Ասիոյ խորերը իրեն վաճառականութեան ցանցին մէջ կ'առնու: Յամին 697 ներքին երկարաւակութիւնք կը սպառնան քայքայել այդ ամուր հանրապետութիւնը. կղղեաց բնակիչներուն զլխաւորք ժաղվելով Հերակլիա քաղաքին մէջ, բոլոր հասարակութեան զերագոյն զլուխս մը կը դնեն, Պատրի կամ Պատ անունը տալով. և միաձայն ընտրութեամբ այդ իշխանութեան կը բարձրանայ առաջին անգամ՝ Պաւլուկիոս Անապինոս Հերակլիացին, որ նշանաւոր էր թէ տոհմին ազնուականութեամբ և թէ անձնական զեղեցիկ ձիբերով: Ութերորդ դարուն այնչափ կը մեծնայ Վենետ. կոյ ծովային զօրութիւնը, որ բոլոր Ազրիականը և Յոնիական ծովը կը մաքրէ ելուզակներէն, կղզիները կը լեցնէ իրեն զաղթականներով, և զրեթէ Եւրոպիոյ նախապատիւտէրութեանց կարգը կը մտնէ, Յիւզանդիանի կայսերաց հետ սիրոյ և բարեկամութեան գաշն կը զնէ, կը յաղթէ Լամբարդացւոց, Արակինոսաց, և ուրիշ շահատակութեամբք ամենուն հիացումը և նախանձը կը շարժէ: Այս ժամանակներս փառատենչ ձկուումներով իրարու հետ մրցելով Հերակլիա և Եկուիլիոն քաղաքները, յետ շատ նախճիրներու և արիւնչերութեանց, զքսական աթոռը Հերակլիայէն կը փոխադրուի (742ին) Աւլամով կոչուած քաղաքին մէջ, որ կը գտնուի Վենետիկոյ գիմաց, և նոյն ժամանակ ամենէն աւելի ծաղկած և բազմամարդն էր միւս բոլոր կըղղեաց մէջ: Դիսական աթոռը զրեթէ եօթանասուն տարի Աւլամովի մէջ կը մնայ, մինչեւ որ Պետրինոսի արշաւանքը (յամս 808-810) կը ստիպէ ցոխազրել զայն ի Վենետիկ,

ուր աւելի ապահով էր, բնակին ճախճախուտներուն անելանելի բաւղին մէջ: Այնուհետև պատերազմաց մէջ անհրաժեշտ կը դառնայ վենետիկիան նաւատորմզին ներկայութիւնը: Առանց անոր Խաչակիրք ապահով չեն իրենց յաղթութեանց վրայ. Եւրոպէ, իրեն ճգնաժամերուն, դէպի ի վենետիկ կ'ուղղէ իրեն աղերսաւոր հայեացքը: Ժի՞ դարուն վերջին քառորդին, Խարիսյ դիմոց, Փրեգերիկոս Ակայսեր նաւերը կը յաղթուեին Վենետիկոյ նաւատորմզէն, կայսրորդին Ոթոն՝ զերի կը բռնուի, և 1477ին կը ստիպուի կայսրը դոժական քաղաքին մէջ հաշտութեան գաշն կնքել: Ժի՞ դարուն մէջ աւելի ես կը քաջանան Վենետիկցիք, անոնց նաւական զօրութեան առջև կը խոնարհին, ոչ միայն ապատամբ Զառան, Կրետէն և Միջերկրականի ուրիշ կղզիք, այլ նոյն խել Բիւզանդիոն, որուն պարսպաց վրայ կը ծածանի վենետիկիան զրոշը, ութանամեայ կոյր Հենրիկ Պանդորոյ դոժին ձեռքով կանգնուած 1204 տարւոյն: Այս բոլոր քառակերն իրեն հզօր մրցակից մը կը հանեն ուրիշ երեսի ծովային քաղաք մը, ձենովա, իրեն ազգակից, որ վաճառականութեամբ թերես իրմէ աւելի ճարտար, բայց քան զինքն աւելի ստոր՝ զինքով և աշխարհակալութեամբ: յետ շատ արիւնչեղութեանց, երբ նահասած Վենետիկոյ դիմաց իրեն նաւատորմզ, կը սպառնար սանձել Ա. Մարկոսի պղնձէ ձիերը, այնպիսի սպատիկ և ջախճախիչ հարուած մը կ'ընդունի Քիոճճիս քաղաքին մօս (յամին 1380), որ այնուհետև կը ստիպուի քաշուիլ մրցանքի ասպարհովէն: Քան ուրիշ ամէն տեղ, Վենետիկոյ ուժոյն և փառաց փայլը իւր բոլոր պայծառութեամբ կը շողայ Լեպանտոյի ահազին ծովամարտին մէջ, 1571ին, ուր յաղթութեան ամենէն չփեղ դափնիները կը տանին վենետիկեցի ճարտար նաւամարտիկըն: բայց այնուհետեւ կը սկսի ազօտանալ, ամիստուիլ կամաց կամաց, մինչեւ որ յետին ցոլք մ'ալ կ'ունենայ չնորհիւ Փրանկիսկոս Մարզուկինի (1684-85), որ կը արիէ բոլոր Մոռէայի, և ապա կը սկսի իրեն դանդաղ վերջալոյսը, և 1797ին վերջապէս կը մարի բոլորովին Շատ սակաւ տէրութիւնք եղած են՝ որ Վենետիկոյ շափ երկարատե կեանք ունեցած ըլլան: և զայս կը պարտի նա այն խիստ հսկողութեան, օրէնքներուն և պատիժնե-

U.S. Library of Congress





բուն, որոնցմով կը զսպէր իսկոյն ո և է ապօտամբական խլրտում։ Անհամար լրտեսներ կը վիստային պաշատներուն և փողոցներուն մէջ, որոնց առջև չկար բնաւ գաղտնիք, կ'իմանային ամենէն աւելի ծածռւկ ոճիրները և դաւադրութիւնները, և կառավարութիւնն անզթօրէն կը պատուհասէր զանոնք ի սարսափ և ի խրատ ամենուն։ Բաւական է յիշել միայն Տասանց ատեսնը, որ կ'ըսուէր նաև Գերագոյն Ժադով, և ունէր մահու և կենաց իշխանութիւն, որուն պաշտօնն էր քննել և պատժել ապօտամբութիւնները, խոռոչութիւնները, և պետութեան դէմ եղած ո և է յանցանքները։ — Երից ատեսնը, որոնք կ'ըսուէին նաև Քննիչը պետութեան, որոնց իշխանութիւնը կը տարածուէր պատրիկներուն, իշխանաւոր անձանց և նոյն իսկ գոտին վրայ, և անոնց տուած վճիռն անբողբելի էր։ Աակայն վարչական իշխանութիւնն այնպէս բաժնուած և կարգադրուած էր, որ ոչ ոք անկախ և բացարձակ տէր կամ իշխան էր, ամէնքն ալ, որչափ բարձր տոտինանի կամ ողդեցութեան տէր ըլլային, կը վախէին և կ'ակնածէին իրարմէ, որով ոչ ոք կը համարձակէր զեղծանիլ իրեն իշխանութեամբ։ Այդ վաճառական, պատերազմիկ և աշխարհակալ քաղաքն՝ էր միանգամայն վայելից տեղ մը, զրոսավայր մը, արուեստի նրբութեանց և ճոխութեանց թանգարան մը, նկարներու՝ մուսիսնազարդ զրուազներու, և զունագոյն մարմարներու ցուցահանդէս մը, ուր կեանքը կը ժպտէր մարդուու, և երջանիկ ըլլալու համար ոչինչ կը պակսէր, և ուր երեւակայութիւնը՝ շակնելալու հրաշակերտներու հանդիպելով՝ ողապար թռիչ մը կ'առնուր։ Եւ ինչ ուելի անակնեկալ հրաշակերտ, քան տեսնել մեղդի քաղաք մը՝ ջրերու և երկնքի կապոյտին մէջ կախուած, ուր կ'երեին հարիւրաւոր զմբեթաւոր եկեղեցիք, որոնց մէջ կը նազի զշխոյօրէն Ո. Մարկոս, իւր չքեն զմբեթներով, հինգհարիւրէն աւելի պորփիւրեայ սիւնաշարքի մը վրայ բարձրացած հոխ հակատով, մուսիսնակերտ՝ նկարազարդ ձեղունով և որմերով, երփն երփն զրուազեալ յատակով, իրեն օձաբար, երկնազոյն, արիւներանդ, թափանցիկ, ոլորուն և քանդակազարդ սիւներով, ուկի և արծաթ սպասուց և զարդարանքներու փաղփիւններով, որուն կամարաց ներքեւ

ծածանող ստուերուտ լոյսը, խնկարոյր ողը, խորհրդաւոր երգերուն արձագանգը՝ որ միշտ կը հնչէ հոն, և ինչ որ կը շրջապատէ, մոոցնել կու տան իրական աշխարհը և երեւակայական աշխարհի մը մէջ կը փոխադրեն զքեզ, ուր գերերկրեայ իրեր կը խօսին մտքիդ հետ, և կրօնից ըզ-զացումով կը բարախէ սիրոտ. — Ա. Մարկոսի ընկեր և մրցող, նրարառւեստ՝ դոթացի կամարներով, զրասանցաւոր, բրզանե զարդիկներով, դղեկանե կանգնածէ Դքսական հոկայ պալատը, որ ծովահայեաց՝ կարծես կը սպասէ անձկագին այն թագապսակ հիւրերուն կամ ընծայարեր գեսպաններուն, որոնք ժամանակաւ կ'այցելէին իրեն, և որոնց կը շռայլէր արքայօրէն իւր ոսկիները, իրեն հանդէսները, մեծահաց խնճոյքները, լուսավառութիւնները, և որուն ձեզունները և որմերը կը պատմեն զեռ պարծանքով այցելուաց՝ իրեն տարած յաղթութիւնները և նըկարչական արուեստի հրաշալիքները. — մեծ Զբանցքը, իրեն երկշար հարիւրաւոր պալատներով, որոնք ամէն տեսակ ճարտարապետութեանց և մարմարներու տարօրինակ խառնուրդ մ'են, պալատներ՝ որոնցմէ իւրաբանչիւրը մի քանի դոժեր, և բազմաթիւ պատրիկներ և իշխանաւորներ ընծայեր են հասարակապետութեան: — Շատ են Վենետիոյ պարծանքները, զորս չեմ ուզեր մի առ մի յիշել հոս, ինչպէս են, իրեն ճոխ Գրաստունը, ուր կը գտնուին հին ամենայարդի տպագրութիւններ, անթիւ թանկագին ձեռապիններ, որոնց մէկ մասը նուիրած է Բնեսսարիոն ծիրանաւորը յամին 1469, իւր հարուստ մատենագարանը — 30,000 վենետիկեան ոսկւոյ արժէքով — կատակելով Հասարակայիետութեան. — իրեն Նաւարանը կամ Զինարանը, ուր շինուած են այն բալոր վաճառանաւերը, ցոկանաւերը և հրադէնները, որոնցմով կը տարածէր իւր առևտուրի և աշխարհակալութեան սահմանները, — իրեն շուրջը խըմբուած կղզեակները, որոնք իրենց թարմ բռւսականութեամբ և շքնաղ տեսարաններով, հեռուէն ովասիսներու երեւյթը ունին ջրեղէն մակերեսութիւն վրայ: Բայց Վենետիոյ մեծագոյն պարծանքն՝ այն եղաւ, որ Գուտիմբերդի զիւտը լոյս տեսնելէն հազիւ քսան տարի վերջ (1469ին), իրեն մէջ կը հիւրընկալէր զայն, և ուր՝ յետ սակաւ տարիներու:

Հարիւրէն աւելի տպարաններ կը հաստատուին և տենգուազործութեամբ կը սկսին մեծահատոր զրեանց հրատարակութիւնք . այնպիսի խնամուա բազգատութեամբ բնագիրներու , որ կրնան պատուարեր ըլլալ նոյն իսկ դարուառաջնակարգ հրատարակուաց :

Բայց ինչ որ աւելի սիրելի և շահագրգիռ կ'ընէ մեզ Վենետիկը , այն է՝ որ Եւրոպիոյ ուրիշ քաղաքներէն աւելի անձուկ կապերով միացած է Հայերուս հետ , և ոչ փոքր ազդեցութիւն ունեցած է մեր մտաւոր մերածնութեան վրայ : Թողով մասնական դէպքերը , որոնք կարօւեն պատմուկան ստուգութեան , կը տեսնենք որ Հայոց և Վենետիկոյ մէջ առևտրական և զիւանազիտական առնչութիւնք կը սկսին կանոնաւոր կերպով Ուուրինեան հարցուութեան ժամանակ , ինչպէս յայտնի է Հայ-Վենետիկ կոչուած հմուտ զրքէն : Շատ բաներու մէջ Վենետիկ է որ կը խլէ առաջնութեան մրցանակը . Հայք՝ Խոտալիոյ մէջ իրենց առաջին բնակարանը կ'ունենան ի Վենետիկ , յամին 1253<sup>1</sup> — իրենց անդրանիկ հրատարակութիւնը կ'ունենան ի Վենետիկ , յամին 1512 , տպագրութեան զիւտէն — որ եղած է յամին 1450 — զրեթէ վաթուն տարի վերջ : Այսպէս ուրեմն , Միսիթարայ Վենետիկ հասնելէն դարերով առաջ , արդէն հայն՝ ստար մը չէր Աղրիականի զշխոյին համար . ունէր հոն իւր յատուկ տունը , իրեն ազգային եկեղեցին , իրեն փողոցը և կամուրջը , և վերջապէս ունէր իւր վերջին հանգստարանը : Գրեթէ հինգ դարուց շրջանին մէջ (1235-1715) , փարքիկ հայ զազութը բազմացած , վաճառականներու երթեւելին աճած էր , այնպէս որ կը յի-

1. Վենետիկոյ յաղթանակաց և ոչխարհական առևտնութեան առևտնութեան փոյլուն ըրչանին մէջ , նիւանի դրական նշանաւոր բնաւորքին անզամներէն մին՝ Մարկոս , որդի Պիուրոս ուուժին . 1255 տարույ յուլիո 5ին , կտուով Հայոց բնուկութեան համար կը ձգեր իւր տուներէն մին . որ Ս. Յուլիուս մարտվագապետութեան մէջ կը զանուեր : Անորմէ քիլ յառաջ , Անբառային նշանի գուցը , Մարկոսին նորդուայրը , իրեն մի քանի կտուածոց և տուներու տարեկան հասոյթը շնորհնեց վենետորքին պահպահուած Հայերուս : Այդ տունը՝ եղաւ կեցրանը փոքրիկ հայ զազմական թեան , որ ընէ հանրապէս վահառական երէ կը կազմուեր . և առն սենետակիներէն մին իրք ազգմատեղի կը զործածուեր . Ա . Խոչ եկեղեցու չիւնութեան առաջ :

շուրին Վենետիկոյ մէջ հայազգի նաւատէրք, մեքենագործք, արուեստաւորք, ապազողք, միջնորդք կամ սահսկրք, քաղաքական և Հոգեոր դեսպանք և նուիրակք<sup>1</sup>: Կը հանդիպինք շարք մը եկեղեցականներու, եպիսկոպոսներու, և նոյն իսկ կաթողիկոսներու<sup>2</sup>, որոնք Եւրոպէ գալով ինչ ինչ քաղաքական կամ կրօնական խնդիրներ կարդագրելու համար, կ'անցնէին Վենետիկէն և մերթ ամիսներով ևո կը մեային, և ոմանք ի քահանայից նոյն իսկ կը հաստատուէին չոն, տեղւոյն հայ գաղութին Հոգեոր առաջնորդութիւն ընելու համար: Այս համառօտ տեղեկութեանց ժամանաւով, — ընդարձակ տեղեկութեանց փափաքողներուն ցոյց տալով վերոյիշեալ հմատլից զրութիւնը, — գառնանք առ Միիթար և իրենները, որոնք Վենետիկ հասնելով ապրիլին սկիզբը, քաղաք մասնելէն առաջ՝ ստիպուեցան քառասուն օր արգելարանին մէջ մնալ, ի զգուշութիւն տարափախիկ հիւանդութեանց, ինչորէս օրենք էր այս բոլոր արևելքէն եկողներուն համար: Քաղաքին մէջ բնակող հայազգիք, մանաւանդ օրոնք Միիթարայ ծանօթ էին, լոկով անոր զարուար՝ իրեն այցելութեան կ'երթային, և կարեար տեղեկութիւններ կու տային քաղաքին և ժողովրդեան նիստուկացի մասին, ինչպէս նաև տեղական սովորութեանց, ապրուստի և բնակութեան հանգամանքներու նկատմամբ: Այդ հայազգիներուն մէջ նշանաւոր էր, անձուկ և ընտանի սիրով առ Արքահայրը և իրեն մատուցած ծառայութեամբք, Գէորգ անսւնավ մէկը, որ ամէն օր զրեթէ կ'այցելէր, և իրեւ միարանութեան անձ մը, ամէն կողմէ կը ժագէր անոր զործերուն համար, ամէն տաժանելի աշխատութիւն յանձն կ'առնուր: Նոյն ժամանակները Վենետիկ կը զտնուէր նաև կարնեցի Խաչատուր փարզապետ, Արքահօր սերու բարեկամ և ծանօթ, որ քաղաքին հայազգիներուն առաջնորդն էր, Ո. Աթոռէն հաստատուած, և

1. Միրտու կամ Միրաք հոյ դեսպան ի Վենետիկ (1470ին). — Տէր Յոկովը Մարգարետն Ամզեցի, նուիրակ կաթողիկոսի և դեսպան (յամին 1595):

2. Կաթողիկոսանքն Ատեփանոս և Առամասոցի (1550). Թաղ Էսո Բ (1575), թագմաս պատրիարք և Պոլոսյ կ վերէ ԺԶ դարու, Մարտիրոս եպիսկոպոս Եղիշեցի (յամին 1491-7). և այլն:



Մինչը արայ քնակած տունը (ի Ս. Մարտիրոս) .



մատրանապետ Ա. Խաչ եկեղեցւոյն։ Երբ արդելարանէն եղելու օրերը կը մօտենային, Մխիթար յանձնեց Գէորգին, որ իրենց յարմար տուն մը վարձէ քաղաքին մէջ։ Նա եռայրել տուն մը գտաւ, Ա. Մարտինի եկեղեցւոյն կից, որ միաբանաբար ապրելու շատ յարմարութիւններ ունէր. վերնայարկին մէջ կային չորս մեծ սենեակներ, նոյնպէս միջին յարկին մէջ՝ երեք ընդարձակ սենեակ և խոհանոց մը, այդ եօթը սենեակներն ալ բնտկելի էին. իսկ զետնայարկին մէջ կը գտնուէին բաւական մեծկակ երեք սենեակներ, որ կրնային գործածութիլ իրեւ փայտանոց, մառան, լուսացարան, և այլն. գաւթին մէջ ալ ջրհոր մը կար։ Տան զրացիները բարեպաշտ ընտանիքներ էին. տարեկան վարձքն ալ շատ չափաւոր էր համեմատութեամբ, 73 դահեկան։ Մայիսի 12ին ելնելով արգելաբանէն, զնացին վարձուած տան մէջ ընակելու։ Հարկ եղաւ տունը կահաւորել կարեոր կարասիներով, ինչպէս նաև զգեստներու, կօշիկներու և զլխարկներու նիւթը և ձեզ փոխել, քաղաքին քահանայից և կրօնաւորաց յարմարելու համար. այս կարեոր ծախքերն ընելով՝ Արբահօր ունեցած զրամը սպառեցաւ, և ստիպուեցաւ իւր ծանօթներէն պարագ առնուլ 450 դուկատ։ Այդ փախառութիւնը, որ անհրաժեշտ էր այն ժամուն՝ սրովհետեւ հազիւ ուստելու հաց կը ձարէին, կարծես նորանոր տառապանաց դուռ պիտի բանար, և Մեթոնի մէջ անցուցած տարիները պիտի նորոգուէին. բայց Մխիթար շտապեց ձեռք առնուլ իւր զործնէութիւնը, որով վտանգը հեռացուց։ Բաւական եղաւ որ անզամ մի այցելութեան երթայ իրեն ծանօթ մի քանի մեծամեծ սեպուհներուն և հասկցընէ իրենց կացութիւնը. իսկ և իսկ քաղաքին հինգ եկեղեցեաց դռները կը բացուին — շնորհիւ անոնց ազդեցիկ միջամտութեան — Մխիթարայ միաբաններուն առջև, ուր ամէն օր պատարազելու կ'երթային, այնպէս որ չմնաց քահանայիցմէ և ոչ մին առանց պատարազի ողորմութեան։ Այդ ողորմութեանց զրամը կը բաւէր միաբանութեան բռնոր պէտքերը և ապրուստը հայթայթելու համար։ Իսկ Արբահայրը, կիրակէ և տօնական օրերուն, Ա. Մարտինի


1. Դիուկատը, այժմու զրամի արժեքով, հաւատար է իրը 6 ֆունիքաց։

եկեղեցւոյն մէջ կը պատարագէր, և սովորական օրերուն՝ ժաղարդապետին տան մէջ զտնուած փոքրիկ մատուռի մը մէջ, որուն խորանիկը կը պահուի ցարդ՝ իրը նուիրական յիշատակ մը Հիմնադրիս : Այդ մատուռիկը փոքրիկ պատուհան մ'ունի, որ ճիշդ եկեղեցւոյն մէջ կը նայի . կ'աւանդուի, թէ Մխիթար ամէն օր պատարագ կը տեսնէր այն պատուհանէն, և անկէ կ'ուզգէր առ Աստուած և Տիրամայրն իւր եռանդուն ազօթքները :

Վենետիկ բնակող ազգայիններուն մէջ կար Նորատունկ անունով պոլոսցի վաճառական մը, բարեկաչտ, հարուստ, մաերիմ և թղթակից Արքահօր, որ այլևայլ անգամ նուէրներ ըրած էր միարանութեան : Սա վախճանած էր արդէն, երբ Մխիթար Վենետիկ կը հասնէր, և ի նպաստ իւր հոգւոյն ամէն տարի մշտնջնենապէս 36 պատարագ մատուցուելու համար՝ 100 գուկատ կտակեր էր միարանութեան . այն նեղ օրերուն մէջ ոչ փոքր թեթեռնիւն մ'եւզւ այդ դրամը : Այնուհետեւ զրեթէ ապահովուած էր միարանութեան տնտեսական վիճակը, և պիտի չկրէր այլ ևս շքաւորութեան հոգերը, այնպէս որ յաճախ պիտի ստիպուէր Մխիթար զրել և պատուիրել իրեն քարոզիչներուն, որ բացարձակապէս նուէր և զրամ չընդունին ժողովրդէն, որովհետեւ անոնց կարօտութիւն չունէին, — պիտի ստիպուէր չընդունիլ իւր կրօնին մէջ այնպիսիները, որոնք զրամի սաստիկ յարում մը կը ցուցնէին, և կառկածելով թէ դժուարութիւնք պիտի եղնէին զիմացնին, զրամ առած հետերնին կու դային, և նոյն զրամով ետ կը դառնային : Զայս պիտի տեսնենք պատմութեանս ընթացքին մէջ :

Երբ ամէն բան իւր սովորական շրջանին մէջ մտաւ, հոգեոր և ուսումնական կրթութիւնք, դասախոսութիւնք, և այլն, Մխիթար զրական ասպարիզին ձեռք զարկաւ, չյիշելով բնաւ այնչափ կրած դառնութիւնները, և Վենետիկ հասնելէն հազիւ երկու ամիս անցած, յուլիսին մէջ, մեծին Ալբերտի Աստուածաբարանութեան համառօտութեան թարգմանութիւնը սկսաւ սրբազրել և մթին կտորները լուսաբանել, բաղդատելով լատին բնագրին հետ, և հրատարակեց զայն, սպառած ըլլալով առաջին տպագրութիւնը : Հրա-

Ա + Մարտիրոս եկեղեցին.





տարակութեան ծախուց մեծապէս ձեռնտու եղաւ հարուստ  
հայազգի մը, Ասրդիս անունով, Միսիթար Աքրահօր ծա-



նորամիկ՝ որում վրայ կը պատարագէր Միսիթար-

նօթ և բարեկամ Գէորգին որդին: — Այս եղաւ առաջին  
հրատարակութիւնը Միսիթարայ՝ յետ Պոլոէն ելնելու:

## ԳԼՈՒԽ Բ.

Աը սկսիմ Օսմանցիք պատերազմը զեմետիկցւոց դէմ. — Կորսօնս և նաւալիա քաղաքներում կը տիրեմ. — Հ. Մամուչի և Հ. Թովմաս վարդապետը կը թողում Մեթոնը և Վենետիկ կ'երթամ. — Մեթոն կը պաշտոնի ծովէմ և ցամաքէմ Օսմանցւոց զօրքիքէմ. — Սաստիկ պատերազմ մը տեղի կ'ունեմայ երեք օր ամբողջաւ. — Վենետիկցիք կը գաղրին պատերազմել և հաշտութիւն կը խնդրեմ. — Օսմանցիք կը տիրեմ Մեթոնի , կը կողոպսեմ և կ'այրեմ. — Զինուորմերը կը յարձակիմ մեր վաճառամ վրայ. կը ծերբակալեմ միջի ամժինքը և կը վաճառեմ զանոնք հայերում. — Արևելք կը տարուիմ և փրկամքով կ'ազատիմ շնորհի չ. զօղոս և Հ. Գէորգ վարդապետաց . — Ողջամք կը հասնիմ Վենետիկ. — Միաբանութեամ մերքիմ կացութիւնը.

**Ա**խիթար կը թողուր Մոռէան, և երկու ամիս չանցած կը սկսէր պատերազմը, որ այնքան աղիտարեր եղաւ Վենետիկ հասարակապետութեան: Այն ժամանակ Օսմանցւոց կը գահակալէր Ահմէտ Փ., և Վենետիկոյ՝ Յօվհաննէս կունարոյ գոժը: Պատերազմը հրատարակուեր էր արդէն նախորդ տարին, 1714ի գեկտեմբեր 3ին, երբ եպարքուը — Տամատ Ալի փաշա — Արիւղոս բերդաքաղաքին մէջ փակել տուեր էր Անդրէա Մեմոյ, Վենետիկոյ բայլը կամ գետպանը: 1715ի մայիսին Դարդանէլի նեղուցէն գուրս կ'եղնէր օսմաննեան նաւատորմիզը, երեսուներկու մեծ ուղմիկ նաւերէ կազմուած, ձանըմ Խոճա ծովակալ փաշային հրամանատարութեան ներքեւ, իսկ ցամաքի կողմէն կը յառաջէր դէպ ի Մոռէա ահազին զօրաբանակը հարիւր քառն հազար մարտիկներէ կազմուած, երեք զիսաւոր զօրապետներու հրամանատարութեան ներքեւ, և պատերազմի ընդհանուր կարգադիր և սպարապետն էր նոյն ինքն եպարքուը՝ Ալի փաշան, որ բոլոր բանակին զլուխ կեցած՝ ուղիղ Կորնթոսի վրայ գնաց և պաշարեց զայն: Երեք ամիս քա-

գագացիք դիմադրեցին քաջութեամբ, բայց վերջապէս պաշտոնին սպառելով, երբ վերջին անգամ պիտի փորձեին ստմանցի զօրքերը քաղաքին վրայ յարձակիւ, վենետիկցի Յակոբ Մինոտառյ զօրավարը հրամայեց քաղաքին դռները բանալ, այն պայմանով որ քաղաքացիք անվեսա պիտի եղնէին երթային: Բայց երբ յանկարծ կրակի ինկնալով վառողի համբարանոցն ոդ ելաւ, Օսմանցիք իրենց դէմ դաւակցութիւն մը կարծելով քաղաքացւոց կողմէն, կատազարար յարձակեցան քաղաքին մէջ, աւարեցին, յափչտակեցին ինչ որ գտան, անխնայ ջարդեցին բնակիչները և հիմնայտակ ըրին քաղաքը: Այս լուրը սարսափեցոց Եզինէ և Արգոս քաղաքները, որոնք բացին դռները թշնամոյն առջև և անձնատուր եղան: Կը մնար տիրել Կապիկիա քաղաքին, որ իրեն թիկունք ունենալով ժայռու ամայր Պալամիդ գղեակը, անվախ և անկառած կը սպառէր թշնամոյն գալուտեան, և պատրաստուած էր բոլոր ուժով դիմադրել մինչև վերջ: Օսմանցոց ահագին բանակին գէմ միայն հազար եօթն հարիւր վենետիկցի զինուորք կային ամրոցին մէջ, որոնք ութ որ դիւցազնորէն դիմադրեցին պաշարողներուն, և թերեւս շատ երկար աւեէր պաշարումը, և վերջ ի վերջոյ յաւանհատէր թշնամին և ետ քաշուէր, եթէ քաղաքին յայն բնակիչք մոտնութիւն շընէին, ինչպէս կ'աւանդեն ամանք, և կամ, ինչպէս կը պատմեն ուրիշները, ամրոցին մէկ կողմը շկործանէր՝ դիւրավառ նիւթոց յանկարծ բորբոքելով և պայթելով, ուսկից թշնամիք կրցան ներս խուժել: Ահաւոր ջարդ մը և աւերած մը տեղի ունեցաւ քաղաքին մէջ, զինուորները ամրաւ հարստութիւն գտան ներսը, զէնքեր, թնդանօթներ, ռումբ, վառոդ, և այլն:

Կապիկիայ առումը վհատեցուց բոլոր շրջակայ քաղաքաց բնակիչները, և ամէնքը իրենց կարեսոր կանկարասին առած՝ կ'աճապարէին փախչիլ: Վենետիկցի իշխանը նոր հրաման մ' ալ հանեց, որ ընտանիքները փախչին՝ զեռ Օսմանցոց զօրքերը չեկած, թոյլ տալով նաև որ Մեթոնի մէջ մեացող հայ կրօնաւորներէն երկու հոգի ևս կարենան երթալ՝ ուր որ կ'ուզեն: Անոնք որոշեցին որ Հ. Մանուկ և Հ. Թռվմաս վարդապետք վենետիկ երթան, վան-

քին կահկարասիներէն ամենէն աւելի կարեօրները հետերնին տանելով, բայց նաւապետը, ամսնելով թէ շատ բազմաթիւ են ճանապարհորդք և վախնալով որ ծանրութենէն նաւը շընկդմի, միայն երկու սնտուկ առնըլու թոյլ տուաւ, որով հազիւ քանի մը ամենակարևոր իրերը կրցան հետերնին տանուլի, Յիշեալ երկու վարդապետք սեպտեմբեր ամսոյն Վենետիկ հասնելով, պատմեցին Արքահօր՝ Նաւպիա քաղաքին առումը, Մեթոնի մօտայուտ վտանգը, և Եղ. Տիրացուին երջանիկ մահը, որ յետ ամէն հոգեւոր պատրաստութիւններն ընելու, աւանդեր էր հոգին նոյն տարւոյ (1715) մարտ ամսոյն մէջ: Երբ այդ լուրերն արդէն բոլոր միարանները տիրեցուցեր էին, քիչ վերջը՝ զուժ մը կը հասնէր Մեթոնէն, թէ Յամանցիք տիրեցին բերդաքաղաքին, կործանեցին՝ այրեցին տուները, վանքերը և եկեղեցիները, բնակիչները սրէ անցուցին և մաս մ'ալ զերի տարին: Մինչ Միթար և իրենները ցաւադին կտսկածներու մատնուած՝ կը մտածէին իրենց ընկերներուն վիճակը, ուրիշ զուժկան մ'ալ կը հասնէր, թէ երկու հայ քահանայք զինուորներէն սպանուեր էին իրենց եկեղեցւոյն մէջ: Այդ լուրը թէ և յետոյ սուտ հանուեցաւ, բայց նոյն ժամուն սաստիկ ազգեցութիւն ընելով Արքահօր վրայ, — որուն վրայ աւելնարավ նաև Վենետիկ մառախլապատ և խոնաւ օդը<sup>1</sup>, — 1716 տարւոյ յունուարին ծանր հիւանդութիւն մը կրեց, և ամսէ մ'առղջացաւ: — Հետեւելով մենք պատմութեանս կարգին, համառաջրենք Մեթոնի առումը, զոր մանրամասն կը պատմէ մեր ժամանակադիրը, նոյն իսկ ականատեսներէն լսելով:

Յամանցւոց բանակը, հարուստ աւարով ճոխացած և յաղթութեամբ խրախուսուած, սկսաւ կատաղարար շարունակել իւր արշաւանքը, հանդիսած զիւղերը և աւանները քանդելով, հրդեհելով, և զրեթէ առանց պատերազմի և զիմադրութեան զրաւեց Կորոն և Նաւարին քաղաքները, որոնք զոները բացին դիմացնին, և ուղղեց իրեն ընթացքը զէու ի Մեթոն, ուր ամրացած էր Վենետիկցւոց բոլոր զօր-

1. 1716ին սաստիկ ձմեռ մ'եղաւ, այնպէս որ բոլոր լշակը սառեցաւ, և ցամաքի բնակիւթ հետիւն Վենետիկ կու զային (Fr. Zanotto. *Palazzo ducale* և այն. Էջ 380. Վենետիկ. 1861).

բը։ Յուլիս ամսոյն վերջերը, Ամի փաշան հրաման տուաւ իրեն ծռվակալին, որ նաւատօրմիդն առած երթայ պաշարէ Մեթոնը ծռվուն կողմանէ։ իսկ Վենետիկցւոց ծռվակալը Դելֆին, տեսնելով թշնամոյն նաւերուն բազմութիւնը, որոնց պիտի չկարենար դիմադրել իրեն սակաւաթիւ նաւերով, աճապարեց փախչիլ և դուրս ելնել նաւահանգստէն։ որով Օսմանցիք անարդել ներս մտան և ծռվու կողմէն պաշարեցին բերդաքաղաքը։ ցամաբային զօրքն ալ հասեր և բանակեր էր Մեթոնի առջև գտնուած ընդարձակ դաշտին վրայ, և կը սպասէր եպարքոսին գալստեան՝ յարձակումը սկսելու համար։ Երբ Ամի փաշան հասաւ Մեթոնի առջև, երկրորդ օրը պատգամաւոր զրկեց քաղաքին իշխաններուն, որ առանց պատերազմի գռները բանեան և անձնատուր ըլլան, խոստանայրով անմիաս և ողջանդամ արձակել զիրենք բոլոր ստացուածներով, դէնքերը և պատերազմիկ գործիները միայն իրենց թողլով։ Հակառակ պարագային՝ կը սպասնար յանձնն չառնուլ այնուհետև ո և է հաշտութեան պայման, չիմնայատակ ընել քաղաքը և անխայ կոտորել զիրենք։ Քաղաքին իշխանք, և մանաւանդ վենետիկցի զօրագլուխը Պատուա, յանձնն չառին այդպիսի պայմանադրութիւն մը, և աւելի ընտրեցին քաջարար կը-ռուիլ և մեռնիլ՝ քան վատութեամբ անձնատուր ըլլալ և քաղաքը թշնամոյն ձեռքը մատնել։ ուստի արձակեցին պատգամաւորները՝ մերժելով եպարքոսին առաջարկութիւնը։ Այդ՝ հրաւէր մ' էր արդէն պատերազմի, որ անշաւշտ սաստիկ պիտի զրգուէր թշնամին։ ուստի սկսան ներսէն ամէն կարեսր պատրաստութիւնները տեսնել և ամբացնել բերդը և պարիսպները։ Վառեցին կողմեցին զօրականը, այլևայլ վաշտերու բաժնելով, անոնց յանձնելով մարտկոցներուն պաշտպանութիւն ընել։ պարիսպներուն վրայ շարեցին թնդանօթները, և իւրաքանչիւր զօրտապետք քաջալերեցին և իւրախուսեցին իրենց զինուորները՝ արիութեամբ կոռւելու։

Երբ Ամի փաշան իմացաւ թէ Վենետիկցւոց զօրագլուխը մերժեր էր իրեն առաջարկութիւնը, զայրացած՝ հրամայեց զօրապետներուն որ ամէն կողմէն պաշարեն Մեթոնը։ սկսաւ յարձակումը օդոսառոսի Զին։ Պատերազմին նա-

խորդ զիշերը, երբ մութը պատեր էր, թշնամիք գետինը փորելով՝ զաշտին վրայ պատնէշներ, թումրեր և հողարլուրներ կանգնեցին, անոնց ետև պատսպարուելու համար վենետիկցոց զնդակներէն և հարուածներէն։ Գիշերուան լոռութեան և մթութեան մէջ, մուրճերուն, րրիշներուն և թիերուն շառաշը, որ բոլոր օդը կը թնդացնէր, սարսափ կ'ազգէր լսողներուն վրայ. Վենետիկցիք իմանալով թըշնամոյն պատրաստութիւնը, թնդանօթի և հրազինուց հարուածներ ուղղելով աշխատողներուն վրայ, օսմանցի զինուորներէն շատերը սպաննեցին և դիակներով լեցուցին փոսերը և խրամները։ Առաւտուն տեսնելով թշնամիք իրենց կողման դիակներու բազմութիւնը, կատղած զաղաններու նման՝ դուրս ելան իրենց փոսերէն և ծակերէն, ուր պահուըտած էին զիշերը, և սկսան ոմբակոծել բերդը և կարկուտի նման վիրզեր և հրազինուց զնդակներ տեղալ քաղաքին վրայ. ներսէն ալ բերդապահ զօրքը, պարիսպներուն վրայ կանգնած, թնդանօթներով կը պատասխանէր անոնց հարուածներուն, և հազարներով դիտապատ գետին կը տարածէր։ Աննկարապրելի է քաղաքացւոց սրտադողը և իրարանցումը, երբ կը լսէին պաշարողներուն խառնագոշ և կատաղի ձայները, որմնք թնդանօթներուն և հրազիններու բոմբիւններուն հետ խառնուած, աւելի սարսափելի կը դառնային. բայց ինչ որ ամենէն աւելի կը զարհուրեցնէր զանոնք, այն մոտածութիւնն էր՝ որ վերջապէս թշնամոյն անհամար բազմութեան առնել տեղի պիտի տար բերդապահ զօրաց քաջութիւնը, որով իրենց ինչքը, պատիւը և կեանքը յաղթողաց մոլեգնութեան պիտի մատնուէր։ Այն օրէն որ սկսան թշնամիք ոմբակոծել քաղաքը, քահանայք դաղրեցուցին իրենց պատարագները, սուրբ Խորհրդոյն վտանգ մը չպատահելու համար, Երեք օր անընդհատ տևեց կատաղի կախւը. չորրորդ օրը մեղմացուցին վենետիկցիք իրենց դիմադրութիւնը, աւելի ևս շզրգուելու համար թշնամին, որ չէր դադրեր ոմբակոծելէ։ Երեկոյեան զէմ վենետիկցւոց Պաստա զօրապետը պատուիրեց, որ ինչան հաշտութեան սպիտակ զրոշ կանգնեն բերդին վրայ. օսմանցի զինուորք տեսնելով զայն, մեծագոշ աղաղակներով դուրս թափեցան իրենց պատնէշներէն։ Երկուստեք

զգուշութեան պատանդք տրուեցան, և վենետիկցի պատ-  
դամաւորք Յօմանցւոց ճամբարը զնացին՝ հաշտութեան  
պայմաններուն վրայ խօսելու անոնց դժբաղլիին հետ, և  
յաջողութեամբ կնքուեցաւ խնդիրը: Մութը վրայ հասնե-  
լով, վենետիկցի պատգամաւորք ստիպուեցան Յօմանցւոց  
բանակին մէջ անցունել այն զիշերը, և պատերազմը դա-  
դրեցաւ բոլորովին: Երկրորդ օրը եպարքուն իմանալով  
հաշտութեան պայմանները, շընդունեցաւ զանոնք և պատ-  
գամաւորները գերի պահելով բանակին մէջ, հրամայեց զի-  
նուորաց որ շարունակեն պատերազմիլ բերդականներուն  
հետ: Վենետիկցւոց իշխանը, տեսնելով թէ քաղաքին պա-  
շարը սպառելու մօտ էր, զինուորները լքած և յոզնած էին,  
և զիխաւոր բերդն ալ վտանգեր էր, յաւսահատած՝ հրա-  
մայեց որ զէնքերը ձգեն և ամէնքն ալ, զինուորք և քա-  
ղաքացիք, իրենք զիրենք ազատել նային: Այն ժամանակ  
ամէն մարդ աճապարեց փախչիլ և պահուըտիլ, ոմանք  
զոմերու մէջ, այլք՝ շտեմարաններու, գուրերու, իրհորնե-  
րու, առաստաղներու, գետնափոր նկուղներու մէջ, աշաւ-  
րակներու ծայրը, և ինչ թաքսաց որ կրցան զանել այն  
տագնապալից ժամուն: Մերիններն որոշեցին վանքի սե-  
ղանատան առաստաղին մէջ թաքչիլ, մինչեւ որ զինուորաց  
կատաղութիւնը հանդարտի. վասն զի այն առաջին յար-  
ձակման՝ զիմացնին ելածը կը խոզխոզէին անխնայ: Իսկ  
Պաստա զօրապետը և ուրիշ զօրավարք՝ ծովու կողմէն վար  
իշան բերգէն, և մակոյկ մը մտնելով՝ զնացին Յօմանցւոց  
ծովակալին՝ ձանըմ Խոհային նաւը, որ ազատեց զիրենք  
զերեվարներու ձեռքէն և ամենայն մարդասիրութիւն ցոյց  
տուաւ իրենց: Տեսնելով թշնամիք թէ բերդին և պարիսպ-  
ներուն վրայ մարդ չեր երևեր, և իրենց ոմբակոծութեանց  
պատասխանող չկար, խրախուսուած՝ խրամներուն մէջ նե-  
տուեցան, սանդուղներով պարսպին վրայ ելան, և բերդին  
մէջ մտնելով՝ դաները բացին: Տաճիկ զինուորաց ահազին  
բազմութիւնը ներս խուժեց հեղեղաբար, սուրերը բացած  
կը սպաննէին զիմացնին ելածը, ծեր, պառաւ, հիւանդ և  
տղայ, շխնայելով ոչ մէկուն, կը մոռնէին տուներուն մէջ,  
կը կողուպտէին, կը կոտրէին, կը քանդէին, կ'այրէին,  
գուրս կը հանէին թաքստոցներէն սարսափահար մարդիկը,

անոնց ձեռքերը կապկապած՝ կը տանէին և կը փողոտէին անգթօրէն եպարքոսին առջև, որ վրանին մէջ նստած կը դիտէր անկարեկիր այն քստմելի և մօրմոքիչ տեսարանը, և իւրաքանչիւր զլիսու փոխարէն քսան կամ երեսուն դաշեկան կու տար անոնց։ Քաղաքացիք յառաջադոյն ամենայն ինչ փախուցած և թաքուցած ըլլալով, կողոպտելու շատ բան չգտան զինուորք. այսու աւելի ևս զրգուուած անոնց ընշաքաղց ծարաւը, մարդիկներէն կ'առնուուին վրէժնին։ Մեր հարք ևս եկեղեցւոյ ոսկի և արծաթ սպասները գետնին տակ թաղեցին, իսկ պատկերները և փայտեայ ուրիշ գիւրավառ նիւթերը այրեցին, որպէս զի զինուուրաց ձեռքը շինկնան։ Աւարի և կողոպուուի կարգը մեր վանատան եկաւ. ներս թափուեցան տասնէն աւելի տւարառուք, սկսան պրպտել ամէն խորչերը, զանձ կամ մարդիկ գտնելու յուսով. մէկը՝ մառանը մտաւ, ուրիշ մը՝ սեղանատուն զնաց, ոմանք՝ եկեղեցին վազեցին, այլք՝ սենեակները կ'որոնէին, ոմանք ալ տանիքին վրայ ելան. այդ ամէնը կ'իմանային մերինները. ինչպիսի տագնապի վայրեկեաններ էին անոնք. Վերջապէս զինուորներէն մին սեղանադան առաստաղը ելաւ, և տեսու որ չորս կրօնաւորներ կծկած կեցեր էին անկիւն մը, անձայն և սարսափահան. զնաց ուրիշ ընկեր մ'ալ առաւ, և երկուքը միասին եկան և կապեցին զանոնք, բայց ամեննեին վեսաս մը շըրին։ Երբ դրամ պահանջեցին, Հ. Պազար վարդապետ զրամով լի քսակ մը զրաւ ձեռքերնին. կ'երեխ զոհ շեղան անով, կապած կը տանէին զիրենք՝ եպարքոսին առջև փողոտէլու, յուսալով մեծագոյն վարձք մ'ընդունիլ անկէ։ Ճանապարհին վրայ ուրիշ զինուորներ հանդիպելով, որոնք որս մը շէին զտած, յարձակեցան ասոնց վրայ և ձեռքերնէն յափշտակեցին երկուքը, որով չորս միարաններն ալ մէկ մէկ զինուորի ձեռքը զերի մեացին։ Օսմաննեան բանակին մէջ զերեհան հայ վաճառականներ կային, որոնք առատ փրկանք տալով զինուորաց՝ քրիստոնեայ զերիները կ'ազատէին մահուընէ. զինուորներն իմանալով թէ իրենց կալանաւորները հայ քահանաներ են, աւելի շահաւոր համարեցան՝ բանակը տանիլ և վաճառել զանոնք հայերուն. այս կերպով Հ. Պազար և Հ. Յոկովը վար-

*Уѣмнѣа пануа (ѣ. Уанда).*

СИТИ САПИЕНЦА  
ДИ МАРЕ



СИТИ ДИ МОДОНЕ



դասպետք՝ հայ վաճառականներու ձեռքը անցան, որոնք անմիջապէս աշխարհիկ զգեստ հաղցուցին իրենց՝ չճանչցուելու համար, և իրրեւ սպասաւոր կը ծառայէին բանակին մէջ<sup>1</sup>:

Երբ պատերազմը վերջացաւ, և տաճիկ բանակը հարուստ աւարով և զերեաց բազմութեամբ ետ կը քաշուէր, վիրաւոր զինուորները առանձին նաւու մը մէջ զրուեցան՝ Պոլիս փոխազրուելու համար. այդ նաւուն մէջ էին Հ. Ղազար և Հ. Յակովը, անոնց ծառայելու համար, այն գարշահատութեան և ցաւոց սաստկութենէն դուրս ժայթքած յիշոցներուն և կանչութառուքին մէջ. և սակայն, հիանալի համակամութեամբ մը, ամէն հոգ և խնամք կը տանէին, անոնց վերքերը կը պատէին, կը մեղմէին ցաւերը այլեւայլ սպեզանեօք և զեղերով, կը մխիթարէին զիրենք, որով ամենուն ալ սիրելի և յարգելի կ'ըլլային: Երբ նաւը Պոլիս հասաւ, տարածուեցաւ լուրը՝ թէ Մեթոնի հայ վարդապետներէն երկու հոգի զերի ինկեր էին և հայ վաճառականները գներ էին զիրենք. զայս լսելով Հ. Գէորգ և Հ. Պօղոս վարդապետները, որոնք այն ժամանակ Պոլիս կը գտնուէին, հօն զահեկան փրկանք տալով՝ ազատեցին զանոնց: Մինչ այսպէս Միսիթար իրեն զրական և կրթական գործերով կը զրագէր ի Վենետիկ, անդին Մեթոնի մէջ, ինչպէս տեսանք, իրեն մի քանի անձնանուեր որդիքն արեան և կրակի հեղեղներով շրջապատուած, օրհատարեր տազնապներ կը կրէին. այդ էր որ կը տառապեցնէր զինքը, և մաքով միշտ այն վայրերուն մէջ կը դեգերէր, հոգերով պաշարուած, մինչև որ կը հիւանդանար վիրշապէս սրտի ցաւէն: Ի՞նչ զգաց արգեօք այն բազմազօրով սիրոր, երբ հազիւ կաղզուրուած հիւանդանութենէն, 1716 թուականին մարտ ամ-

1. Կ'աւանշտիք թէ, եպարքան Ամի Փաշան երբ զես Պոլիս կը շըտեւէր և կը պատրաստուէր արշաւել ի Մոռէս. Պոլույ առջայիններէն ուստիք իմացուցիր են անոր, թէ Մեթոնի մէջ հայ կրթաւորներ կը զանուին, որոնք ակըսութենէն ապաստամերելով փախուր և Վենետիկ ցուց հարկատու և հպատակ եղեր են. խնդիր են անորնէ որ բնեկ զանուիք և հետը Պոլիս բերէ: Երբ Ամի Փաշան Մոռէս եկաւ և արբեց կատաղինց, համարելով թէ Հոն կը պանուին հայ կրթաւորները, փշտուէ տաւու զանոնք: Բայց Հոն չպահելով և լսելով թէ Վենետիկ փախուր են, այնուհետև ոյլ են չորսնեց զանոնք:

սոյն, տեսաւ յանկարծ իրեն մօս, իրեն բազկաց մէջ, իւր երկու սիրելի որդիքը՝ Հ. Պաղար և Հ. Յակովը վարդապետները, զորս աւերակաց տակ թաղուած կամ գերութեան շղթաներուն մէջ կապուած կը կարծէր, և լսեց անոնց բերնէն սրտամմիկ գէպֆերուն պատմութիւնը, թէ ինչպէս ազատեր էին մարդախոշոչ սուրերէ, հրայրեաց բօցերէ և երկաթներէ. Միսիթար լսեց այդ ամէնը և գոհութիւն մատոյց երկնախնամ Աղոյն, որ շթողուր երբէք իւր սիրելիները վշաաց և տառապանաց մէջ: Կատարեալ եղաւ բոլոր միարանութեան ուրախութիւնը, երբ քանի մ'ամիս յետոյ ողջանդամ Վենետիկ կը հասնէին նաև երկու աշխատաւոր եղրարք, որոնցմէ մին, եղ. Մկրտիչ, Աղբիանուալոյիս տարուելով զինուորներէն, նոյն քաղաքին մէջ գտնուող հայ կաթողիկեայք փրկանաւորեր էին զիները և Վենետիկ ուղարկեր. իսկ եղ. Մարկոս, յետ արքունի նաւերուն մէջ ծառայելու քանի մ'ամիս, Պոլիս տարուեցաւ և Հ. Գէորգ վարդապետ զրամով ազատեց զինքը գերողաց ձեռքէն: Արբահայրը այս բոլոր անցքերը տեղնիսեղը ծանոյց Հաւատասիփիւռ Փաղովոյն, ինչպէս նաև միարանութեան փոխազրուիլն ի Վենետիկ և հոն հաստատուելու դիտաւորութիւննին: Եախագահ ծիրանաւորը զեղեցիկ պատասխանով մը յայտնեց իւր ցաւակցութիւնը, սփոփիչ խօսերով քաջալերեց բոլոր միարանները, խոստանալով ամէն կերպով ձեռնոտու ըլլալ և դիւրութիւններ ընձեռել իրենց դիտաւորութիւնը յաջողութեամբ ի զլուխ հանելու. ուստի զրեց Վենետիկ պատրիարքին<sup>1</sup> և ուրիշ բարեպաշտ իշխանաւոր անձանց, որպէս զի ամենայն կարելի զրամական օգնութիւն և աջակցութիւն ընեն Մեթոնի ազէտներէն փախչող հայ կրօնաւորներուն, որոնք ամէն տեսակ զոհողութիւն և վշտակրութիւն յանձն առեր էին պարզապէս կրօնքը և զիտութիւնը ծաւալելու համար իրենց թշուառ ազգին մէջ: Եւ յիրաւի այդ յանձնաբարութիւնն ունեցաւ իւր արդիւնքը. շը ստիպուեցաւ Միսիթար զիմումներ ընել կամ հարուստներուն դռները բախել ապրուստի համար. որովհետեւ քաղաքին պատրիարքը և շատ երեւլի սեպուհք, ինչպէս

1. Ար էր՝ Պետրոս Բարբարիկոս (յամա 1706-1723):

նաև տեղւոյն փարթամ՝ ազգայիններէն ոմանք, առառ  
նուէրներով և ողորմութեամբը կը յայտնէին իրենց սէրը  
և յարգանքը, զոր առաջին օրէն ունեցան առ Մխիթար  
և առ միարանութիւնը, և ո՛ւ և է առթի մէջ չէին զլանար  
երբէք իրենց աջակցութիւնը։ Յիրաւի որշափ զարմանա-  
լի էր տեսնել խումբ մը արեւելցիներ, որոնք ոչ մէկ բանի  
մէջ ետ չէին մեար եւրոպացի կրօնաւորներէ, և սոսկական  
տան մը մէջ բնակելով հանդերձ, որ վանքի ամէն յարմա-  
կութիւնները չունէր, կը պահէին ճշդիւ վանական ամէն  
կարգերը և կանոնները։ Ամէն որ անփրէպ կը կատարուէին  
հոն հասարակաց ժամերգութիւնք, մտածական աղօթք և  
ուրիշ հոգևոր կրթութիւնք։ Հոս ալ, ինչպէս Մեթոնի վա-  
նատան մէջ, զանգակի ձայնն էր՝ որ կը սահմանէր և կը  
կարգադրէր ամէն բան ըստ ժամու և ըստ չափու։ Գրեթէ  
բոլոր քահանայք ամէն օր եկեղեցիները կ'երթային պատա-  
րագելու, բայց ոչ ամէնքն ի միասին, ոմանք կանուխ և  
ոմանք ուշ՝ որոնք որ կ'աւարտէին պատարագնին, ամփո-  
փածութեամբ տուն կը դառնային, իրենց հոգևոր ընթեր-  
ցումը կ'ընէին և անմիջապէս ուսմանց կը պարապէին։ Իսկ  
որոնք որ ուշ ժամանակ պիտի երթային պատարագելու,  
նախ ուսմանց կը պարապէին տան մէջ, և յետոյ կ'եր-  
թային պատարագելու։ Զափուած էին անոնց ժամերը, և  
վայրկեան մ'իսկ անդործ չէին կենար։ Երբէք քաղաքին  
մէջ դատարկ չէին շրջեր, երբէք հրապարակներուն մէջ  
կամ զրոսանաց տեղերը և կամ խուն բազմութեան մէջ  
չէին երեսր, այլ միայն եկեղեցիները կ'երթային հոգևոր  
հանդէսներու, քարոզներու, զոյդ զոյդ քալելով փողոցնե-  
րուն մէջ, ամփոփ, պարկելու, առանց աստ անդ յածե-  
ցնելու աշխերնին հետաքրքրաբար, որով բոլոր տեսազաց  
զարմանալի և պատկառելի կ'ըլլային։ Իսկ ներքին բարե-  
կարգութիւնը, համաշռունչ և համասիրտ սէրը և միութիւ-  
նը և իւրաքանչիւր անձին ի դործ դրած ջանքերն՝ առա-  
քիութեանց և զիտութեանց մէջ զարգանալու համար,  
աննկարազրելի են։ Եւ սակայն Մխիթար զոհ չէր իրենց  
կացութենէն, իրեն զիտած նպատակին շատ յարմար շը-  
դանելով զայն։ Նա կ'ուզէր առանձին վանատուն մը և եկե-  
ղեցի մ'ունենալ, որպէս զի կարենար ըստ ամենայնի իրա-  
կացնել իրեն ծրագիրը։

## ԳԼՈՒԽ թ.

Մինիթար քաղաքիմ մէջ վաժատեղի մը կը խնդրէ ծերակուտէմ. — Իմդիրմ ըմզումելի չըլլար, օրինաց հակառակ ըլլալով. — Աշազար կզգիմ կը խնդրէ և կը չմորհուի իրեն, ուր կ'ըմէ իւր մուտքը բոլոր միարամմերով 1717ին սեպահմբերի 8ին. — Առժամմ կազնոր նորոգութիւնները կ'ըմէ, սեմեակներ կը շիմէ և նոմ կը փոխազբուիմ բոլոր միարամմ 1718ին ապրիլին վերջը. — Պոլսոյ մէջ այլեայլ կրօնական խնդիրը կը յուզուին, և նորամոր ամբաստամութիւնը կ'ըլլամ միարամութեամ դէմ:

**Ս**ռուէան կ'ելնէ մշտապէս Հասարակապետութեան ձեռքէն, Ալեքսոն կ'աճիւնանայ, և այլ ևս յոյս չկայ վերակենդանանալու. Հարկ է ուրեմն նոր մենաստան մը կառուցանել Վենետիկոյ մէջ, — ուր յուսալի էր գոնէ երկարատեւ կեանք մ'ունենալ, — զի շատ փոքր էր քաղաքին մէջ վարձուած տունը, ուր հազիւ կրնային տասնըհինգ անձինք բնակել, այն ալ մեծ նեղութեամբ: Երբոր Ալեքսոնի և առաքելութեան մէջ գտնուած անձինք վենետիկ հասան, յատուկ վանատուն մ'ունենալու պէտքն աւելի ևս զգացուեցաւ. մանաւանդ որ Միխիթարայ ծրազրին էական կէտերէն մին էր, արևելքէն գեռահասակ մանուկներ բերել, կրթել գանոնք, և միարանութեան տպագայ սերունդը պատրաստել, և այդ գեղեցիկ գաղափարը պէտք էր փութով գործադրել սկսիլ. բայց ուր պիտի զետեղէր գանոնք: Հարկ էր ապա որ իրենց յատուկ մենաստան մ'ունենային, ուր գտնուէին վանական կենաց պահանջած ամէն յարմարութիւնք, առանձին խցիկներ միարաններուն համար, մասնաւոր կրթարան և գառարան՝ աշակերտաց համար, հասարակաց խմբավայրք. — ունենային իրենց յատուկ եկեղեցին, միարան ժամերգելու, ազօթելու, և եկեղեցական հանդէսները կատարելու ազգային արարագութեան համեմատ, — ունենային իրենց յատուկ պարտէզ մը, ուր կա-


թենային սակաւ մի շարժում ընել, որ կարենոր էր առողջութեան համար, և իրենց պէտք եղած բանջարեղէնը մշակել: Միսիթար այս բոլորը նկատողութեան առնըլով, որոշեց իրեն խորհրդականներուն հետ՝ աղերսագիր մը պատրաստել ծերակուտին ներկայացնելու համար, որպէս զի իրենց բնակութեան յարմար տեղ մը չնորհէ: Այս գործին յաջողութեան համար ամբողջ 1746 տարին աշխատեցաւ, շխնայելով ու և է ջանք և նեղութիւն, դիմելով իրեն ծանօթ բարեկամներուն, Նանի, Էմոյ և Սերաստիանոս Մոշենիգոյ սեպուհներուն, անոնց միջոցով ծանօթանալով ուրիշ պաշտօնական ազգեցիկ անձանց հետ, և Մոռէայի իշխանաց տուած վկայագիրները ձեռքը առած՝ երթեւեկելով անդադար մեծամեծաց պալատները, և յաճախ նոյն իսկ դոժական ապարանքը, առանց կասելու երբէք արգելներուն առջև: Եւ սակայն ամբողջ տարւոյ մը անխոնչ ջանքերն արդիւնք մը չունեցան բնաւ. որովհետեւ այնպիսի խոշընդուներ ընդ առաջ կ'ենէին, որ նոյն իսկ ծերակոյտը — յօժարամիս ըլլալով հանդերձ անոր խնդիրքը կատարելու — կը վարանէր այն գժուարութեանց հանդէպ: Պետական դիււնին արձանագիրներուն մէջ վճիռ մը կար, որ կ'արգելուր Վենետիկ քաղաքին մէջ կրօնաւորական ու է նոր կարգի մը հաստատութիւնը. և այդ վճիռն այնքան բացայացած էր, որ ամենեւին մեկնութեան կամ բացառութեան տեղի չէր թողուր: Ծերակոյտն ուղելով միանգամայն թէ օրէնքը յարգել և թէ Միսիթարայ խնդիրքը չմերժել, հետեւեալ առաջարկութիւնն ըրաւ անոր. կամ քաղաքէն դուրս կառուցանել վանքը և մշանջենաւոր կերպով ժառանգել զայն, և կամ քաղաքին մէջ չինել, բայց այն պայմանով՝ որ նոյն ժամանակի միարանութեան անձանց ողջութեան տաեն միայն իրաւունք ունենան անոր վրայ, և իրենց մահուընէն վերջ՝ տէրութեան ձեռքը անցնի: Միսիթար անյարմար դաւա այդ երկուքն ալ. առաջնը, որովհետեւ քաղաքէն դուրս դժուար էր պատարագներու ողորմութիւն գտնել, և այն պարագային մէջ՝ Բնշագէս պիտի ապրէին, քանի որ դեռ հաստատուն եկամուտ մը չունէին. երկրորդը, որովհետեւ իրեն նպատակն էր՝ մեայուն և տեսող հիմնարկութիւն մ'ընել, որ իրմով և իրեններով շվերջա-

նայ, այլ յաջորդութիւն ունենայ և գարերով շարունակուի: Անցելոյն մէջ այնքան մեծամեծ դժուարութիւններէն չընկառողը, Աքաւ՝ չփշատեցաւ այս առաջին անյաջողութեամբ. յամառ տոկունութեամբ մը շարունակեց իրեն ջանքերը և երթևեկը մեծամեծաց տուները, և կը յուսար զոնէ լճակին մէջ ցանուած կղզեակներէն մին ձեռք բերել իրը մշտնջնաւոր բնակավայր միաբանութեան: Յետ անգամ մը յդանալու մտքին մէջ այդ գեղեցիկ մտածութիւնը, այցելեց բոլոր կղզեկաց և դիտող աշխավ զննեց թէ որը յարմարագոյն էր իրենց: Զոմանս՝ շատ հեռու գտաւ քաղաքէն, որով դժուարին էին յարաբերութիւնք և պիտի չկարենային իրենց ամենօրեայ պէտքերը հոգալ. ուրիշներն ալ շատ մօտ էին, ուր դիւրաւ մուտ պիտի գտնէր քաղաքին աղմուկը և շառաչը, և պիտի խանդարուէր վանական լուսութիւնը և անդորրութիւնը. այլք՝ քաղաքին կռնակը կը գտնուէին, մոռացութեան և ամայութեան ձեռքը մատնուած, քաղաքին շարժումէն և կեանքէն բոլորովին զուրկ. ամանք ալ՝ անմիջապէս դիմացը, հազիւ շրանցքով մը զատուած քաղաքին կեղրունէն, անոր ամէն շարժմանց. հանգէսներուն և զուարձութեանց մասնակից, որով ցրումն պիտի պատճառէր վանականներուն ամիտի մտքերուն: Միսիթար այնպիսի կղզի մը կ'որանէր, որ շափաւոր հեռաւորութիւն և մեծութիւն ունենար, օգաւէտ, բարեշունչ, լրառութեան և հանդարտութեան հետ ունենար ամէն կորեւոր դիւրութիւնները և յարմարութիւնները, որով կարելի ըլլար մասնակցիլ շարժման, զործոնէութեան և կենդանութեան այն քաղաքին, որ իրեն աշխարհակալութեամբք, վաճառականութեամբք և ճոխութեամբ՝ արևելեան նկարագիր մունէր: Այդ բոլոր պահանջուած յատկութիւնները փոքրի շատէ ունենալ կը թուէր կղզեակներէն մին, Ա. Ղազար կոչուած, շափաւոր մեծութեամբ, ոչ այնշափ հեռու քաղաքէն, որ ունէր հինցած եկեղեցի մը, փոքրիկ պարտէզ մը, — ուր կրնային տարեկան բանջարը տնկել, — երկու ջրհոր և մի քանի խարխուլ սենեակներ: Այդ կղզին, որ առաջին վայրկենէն գրաւեց Միսիթարայ ուշը, և յետ տասնեակ մը տարիներու ըրջանին, անոր մեծագործ հանճարին շնորհիւ, պիտի դառնար հրաշակերտ մը ճարտարապետա-

կան արուեստի, գրախտ մը՝ իրեն զեղեցիկ բուսականութեամբ, սրբավայր մը, ուխտատեղի մը զիտնականներու և ազգայիններու, այցելափայր մը թագաւորաց և իշխանազանց, զիսաւոր կեզրանը և շարժիչը հայ ազգին զրական զործոնեւութեան, կ'արժէ որ ծանօթացնենք մեր ընթերցողներուն, համառուս ակնարկ մը տալով իրեն նախկին սկզբնաւորութեան և այն դեպքերուն, որ հան տեղի ունեցան նախ քան հաստատութիւնը Միսիթարայ Ուխտին:

Եսա հին է Ա. Ղազար կոչուած կղզին. ի սկզբան այն շաբ աննշան և ամայի, որ առանձին անուն մ'իսկ ունեցած չէ, նախ քան 810 թուականը, և ուրիշ բնակիչ շրջուիր հան, բայց պարտիզապան մը՝ որ այն կտոր մը հողը մշակելով կ'ապրէր, և ձկնորս մը՝ որ մօտիկ ֆրերուն մէջ իւր արուեստն ի գործ կը գնէր: Մինչև Միսիթարայ ձեռքը անցնիլն, ու ճակատազիր մ'ունեցած է այդ կղզին, պատաստարան մ'եղած մարդկութեան ամենէն աւելի թշուառներուն, — ուրուկներուն, հիւանդներուն և մուրացիկ աղքատներուն: — Յամին 810, ծերակուտին վճռով, Յաւղինայի Ա. Հիւլտիրին վանքին Բենեդիկտեանց կը յանձնուի այդ կղզին. և ասկայն այն անխոռնչ կրօնաւորներն իսկ անկարող կ'ըլլան շենցնելու կղզին, և կը մեայ նոյնու ամայի, մինչև որ հարկ կ'ըլլայ վերջապէս — թէ փաքրկութեան և թէ քաղաքէն հեռաւորութեան պատճառաւ — թողուլ զայն, իրը անյարմար կրօնաւորական կենաց: 1482 թուականին, վենետիկցի հարուստ ազնուական մը, Լեռն Պալլինի, բենեդիկտեան Հուրերտ արքայէն նուէր ընդունելով այդ կղզին, մէջը եկեղեցի մը շինել կու տայ յանուն Ա. Լեռն քահանայապետին, և քովն ալ հիւանդանց մը, հան փախազրելու համար այն բազմաթիւ ուրուկները, որոնց չէր բաւեր քաղաքին մէջ գտնուածը՝ շատ փոքր ըլլալով: Այն դարերուն՝ որոնք որ ուխտի կամ առուտուրի համար արեւելք և ի մասնաւորի Պաղեստին կ'երթային, իրենց հետ այն զզուելի և տարափոխիկ հիւանդութիւնը կը բերէին, որ բարոտութիւն կ'ըստէր: Ժողովուրդը, շփթելով Աւետարանի մէջ գտնուած աղքատ Ղազարոսը՝ Քրիստոնի բարեկամ Ղազարոսին հետ, բոլոր հիւանդանցներու և ուրկանոցներու եկեղեցիները Ա. Ղազար կը

կոչէր : Այն ժամանակէն սկսաւ թէ կղզին և թէ եկեղեցին Ս. Ղաղար անունը կրել , և Ս. Պետրոսի պատրիարքական եկեղեցւոյն իրաւասութեան ներքեւ , ունէր իրեն յատուկ մեծաւորը և պատարագիչ քահանան : ԺԶ դարու






Ս. Ղաղարու թափկից վիճակը .

կիսուն , երբ այնչափ նուազեցաւ բորսոներուն թիւը , որ հազիւ քանի մը հոգի կը դանուէին , ձերակոյաը վճաեց որ հռն բնակին , կղզւոյն եկամուռներով , քաղաքին մէջ շրջող մուրացիկները , օրոնք տաղտուկ կը պատճառէին քա-

ج ٢٩٧.

ج ٢٩٧





դաքացեաց՝ փողոցներուն և եկեղեցեաց մէջ։ Այդ բարի որոշողութեան զործադրութիւնը երկար ժամանակ չանեց։ այլեայլ դժուարութիւնք և արգելք, քաղաքին հեռաւորութիւնը, ճանապարհին վտանգները՝ մանաւանդ մրրկալից սղերուն, ցըցուցին թէ անկարելի էր շարունակել այդ զործը. ուստի, 1601 թուականին, կղզույն հիւանդները և բոլոր կահկարասին փոխադրուեցան քաղաքին մեծ հիւանդանոցին մէջ, որուն եկեղեցին նոյնպէս ։ Ղազար կը կոչուի, Ա. Յովհաննես և Պատոյ եկեղեցւոյն կից, և որուն վրայ յետոյ աւելցաւ նաև Դամինիկեանց վանքը։ Դարձեալ կղզին ամայի և անրնակ մնաց, իրեն խարխուլ եկեղեցւով, հին՝ կարկատուն շէնքերով<sup>1</sup>, կիսաւեր պարիսպներով և փոքրիկ բանջարանոցով։ 1660ին ժամանակները, Դամինիկեան հարք փախչելով Կրետէ կղզիէն, Վենետիկ եկան և Ա. Ղազար կղզին անոնց տրուեցաւ բնակութեան համար<sup>2</sup>.

Ա. Այդ հին շնորհեն այժմ զրեթէ ուշնչ Թաղեր է. եկեղեցին բոլորովին կերպարանափոխ եղած, մեծած, բարձրացած, զեղեցկացած է. թէ Աթութար Աքրանոր և թէ Յանորդներուն ժամանակ. ինչպէս պիտի անեւենք յետոյ, երբ Ա. Ղազարու վանքին շինութեանց վրայ Խոսինք։ Աը Թայ միայն, իրրե. Շնորհեան նշանը մը, մարմարէ զեղեցիկ շիշեմ մը, եկեղեցւոյ զամբին աշոկադմ., որ թէ և թուական չունի, բայց մի՞ պար երկրորդ կիսուն զործ կը համարուի. որովհետեւ շիրմին մէջ թագուած անձը, կոստանպէն նուուրուս — յիշատակուած ապօպանոզրին մէջ — կապէէր նոյն պարուն, և 1554ին ձեռնովացոց զէմ եղած պատերազմին մէջ իրեն ժախացով ցոկանաւ մը ապօպանունք էր, ինչպէս կը կարդացուի Աննեուկոյ տարեգիրներուն մէջ։ Այդ վեհետիկցի ազնուականին մեռեւէն շատ ժամանակ վերջ, ուստանին կտփարչին, մէկ ժայրը կուրելով, ինչպէս կը պատմէ կորոնելլի, անուի են որ մարմինը անարատ Թաղեր է, ինչպէս նաև քրանկիսկեան կրտսեւորի զգեստը և չունոն գուսին, որոնց մով թագուած էր։ Ասկայն անցած զարու կիսուն, առթիւ մը բանալով ապօպանին կտփարիչը, մէշը ուրիշ բան անուած չեն, բայց սկսուերու կոյս ու, ինչպէս կը պատմէ Կառուկեստի (Coronelli. Isolario dell' Atlante veneto, 1696, էջ 47. — Cappelletti, Storia dell'Isola di S. Lazzaro, էջ 10-11)։ — Ցիշեալ շիրմին ապօպանոզրին է.

Hoc probus et sapiens ortus de prole Zuchola  
Clauditur in tumulo, cui Constantinus in Urbe  
Nomen erat, Lazari curator, amator et almi  
Compatiens inopum, Domini sub honore superni.

2. Fr. Sansovino, Venetia città nobilissima, etc. con aggiunta da Giustiniano Martinoni. էջ 252. Վենետիկ. 1683.

բայց այդ կրօնաւորներն ալ երկար ժամանակ չմնացին հան . կարծես Մխիթարայ պահուած էր այդ թշուառ կըզ- զեկին բախտը բարեփոխել և հաշակաւոր ընել՝ քան լճակին միւս կզզիները : Այդ պայմաններուն մէջ էր Ս . Ղաղար , երբ այցելեց Մխիթար 1716ին , և յուսալով թէ պիտի կա- րենար ծառայեցնել զայն իւր գործին , աշխատեցաւ ձեռք բերել , իւր բարեկամ իշխանաւոր անձանց ձեռքով առա- ջարկելով ձերակուածին : Խոկ ձերակոյատը , ուզելով եկեղե- ցական տեսակետավ քննել այդ խնդիրը , յանձնեց տէրու- թեան երկու քաջ առտուածաբան իրաւագէտներուն , որոնք Աստուածամօր ժամայը կոչուած կարգէն էին , որպէս զի քննեն և իրենց կարծիքն ըսնեն : Անոնք քննելով խնդիրը , ինչպէս նաև միարանութեան Աահմանադրութիւնը և նր- պատակը , վճռեցին որ կրնար ձերակոյատը քաղաքին մէջ վանք մը տալ հայ կրօնաւորներուն իրր մշտնչենաւոր բնա- կութիւն : Ուստի ձերակոյատը , 1717ի օգոստոս 26ին վճռով , Ս . Ղաղարու կզզին կը չնորհէր Մխիթարայ և միարանու- թեան իրր մշտնչենաւոր բնակութիւն , որուն փոխարէն պարտաւոր պիտի ըլլար միարանութիւնն ալ մշտնչենապէս ամէն օր մէկ մէկ պատարագ մատուցանել ըստ զիտաւո- րութեան կզզւոյն նախկին բնակիչներուն , այն է՝ Մուրա- ցիկ կոչուած կրօնաւորներուն . երկրորդ , ամէն տարի Ս . Ղաղարու տօնին օրը պարտական պիտի ըլլար ութ լիտր մանեղէն տալ նոյն կրօնաւորներուն , իւրաքանչիւր քանի տարին աւրիշ չորս լիտր մամ ևս վրան աւելցնելով : Բայց որովհետեւ վարձութ անուամբ տրուեցաւ կզզին , որպէս զի միշեալ կրօնաւորք չկարենան ետ պահանջել զայն , դաշնա- զրին մէջ չառ անզամ դրուեցաւ մշտնչենաւոր բնակութիւնն բացարութիւնը , բացայացաւ կերպով ըսելով մէջը , որ եթէ յանկարծ ժամանակով խնդիր մը ծագի և ուզեն ետ պա- հանջել վանքը , պարտական ըլլան հատուցանել միարանու- թեան ըրած շինութեանց ծախքը , այն է՝ իրր տասը հա- զար մարշիլ , այն ժամանակի զրամով : Աակայն ժամանա- կաց և դիպաց յեղաշրջութեամբ , Անեսեկոյ հասարակա-

1 . Կերպակուաթին վճռոյն մէջ դրուած է « in afflittanza » բացարա- բեկը :




GOV. CORNER  
1520 - 1523


Giovanni  
ext. Doge

GOV. CORNER  
1523 - 1526

Corner  
di Venezia

page 2





պետութիւնը կործանելով, և յետադայ կառավարութիւնք կրօնաւորաց վանքերուն հետ զրաւելով նաև անոնց իրաւունքները, միաբանութիւնն անցած դարսւ առաջին կիսուն (1833ին), երբ դեռ Աւտորիան կ'իշխաէր Վենետիկոյ վրայ, գնեց անորմէ Ս. Ղազարու հողը, որով իրեն սեփական կալուածը դարձաւ և ունեցած պարտականութիւններէն աշատեցաւ:

Միսիթար ընդունելով ժերակուտին վճիռը<sup>1</sup> սեպտեմբերին սկիզբը, առած բոլոր միաբանները, Աստուածածնայ Ծնընդեան տօնին օրը (1717 սեպտ. 8ին), ըրաւ հանդիսապէս իրեն մուտքը Ս. Ղազարու կղզույն մէջ<sup>2</sup>: Ինչպիսի հրանուանաց օր մ'եղաւ, յորում կոխնեցին այն հօղին վրայ, որ իրենց սեփականութիւնն էր այնուհետեւ, և պիտի ըլլար օտարութեան մէջ իրենց երջանիկ և խաղաղ դադարը, հակառակ այնչափ փոթորկալից դէպքերու, որոնք մերթ ընդ մերթ պիտի կոծէին զիրենք, ինչպէս ճակին կոհակները կը բախեն երբեմն վանքին պատերը: Անկարելի է բացատրել՝ ինչ որ զգացին անոնք այն օրը, այն պահուն, երբ մանելով Ս. Ղազարու խարխուլ եկեղեցւոյ մէջ, դորովագին և ցնծալիր նուագներով մատուցին իրենց գոհութիւնը Աստուծոյ և Ս. Կուսին, մեծահանդէս կատարելով նոյն սրուան տօնախմբութիւնը, որ արգէն միաբանութեան քաղցր և նուիրական օրերէն մին էր՝ անցելոյն մէջ ընդունած այլևայլ չնորհներուն պատճառաւ: Այդ օրէն իրը դար մը յետոյ, 1810ի սեպտեմբերին մէջ, Միսիթարայ միաբանութիւնը ուրիշ մեծ չնորհք մ'ալ կ'ընդունէր, Ագոնցի արրայութեան ժամանակ. երբ բոլոր Եւրոպէ կը խոնարհէր մեծ Աշխարհակալին գաւազանին ներքեւ, պետութիւնք և արքունի գահեր կը տապալէին անոր ահազին բանակներուն առջև, և անողոք հրամանով մը բնաշինչ կ'ըլլային կրօնաւորական կարգերը և անոնց ստացուածները յարգունիս կը զբաւէին, Միսիթարայ խօնարհ կզգեակը — չնորհիւ իւր

1. Փափաքողք կընան գոնել այդ վճիռը դրբխ վերը դրուած Յան-Հան-Հին մէջ:

2. Տ. Ս. Ղազար կղզույն ընդունիւը, ինչպէս նաև Միսիթարայ իրեներով Անհարիկ ապառանակիւը պատուիցու Յովհաննէս կունարոյ դուքին ժամանակ (1709-1722):


երկնաւոր Այօր և վայելած զիտական համբաւոյն — ոչ  
միայն զերծ կը մնար այդ համայնացինջ աւերածէն , այլ  
և կայսերական վճռով Հայկական Ճեմարան պատուաւոր  
տիտղոսը կ'ընդունէր : Մեծն Նապոլէոն այդ կայսերական  
վճիռը կը զբկէր Եւզինէս փոխարքային , որ նոյն օրերը  
Վենետիկ կը գտնուէր . և սա կը յանձնէր զայն իւր հա-  
ւատարիմ սենեկապանին՝ Հայազգի պարոն Պետրոսին , որ  
Դարարադ դաւառին Վորորակ զիւղէն էր , և սեպտեմբերի  
3ին վանք կը բերէր այդ աւետաւոր վճիռը յուրախութիւն  
բոլոր միարանութեան . այս կերպով աւելի մեծաշուք հան-  
դիսիւ կը կատարուէր Աստուածամօր Յննդեան տօնը , որ  
այս առթիւ ևս ցոյց տուաւ իւր մայրական խնամքը Միի-  
թարայ Ռւստին վրայ :

Ս . Ղազարու կղզեկին պարտէզը վարձու տրուած էր  
պարտիզապանի մը , որ մշակելով և տարուէ տարի նորանոր  
պտղատու ծառեր տնկելով , բարւոքեր էր երկիրը և օդը  
մաքրուեր էր . Միսիթար հատոյց պարտիզապանին ըրած  
ծախքերը , ըստ դաշնազրին , չորս հարիւր դահեկան տա-  
րով , որով բոլոր կղզին միարանութեան ձեռքը մեաց : Յե-  
տոյ իսկ և իսկ ձեռնարկեց նորոգութեանց , բոլոր շէնքը  
խարխած ըլլալով , տանիքը խախտած , ուսկից անձրեւ կը  
կաթկթէր , և պատուհանները բոլորովին բաց էին առանց  
փեղկերու և ապակիներու , որով անբնակելի էր : Նախ և  
առաջ սենեկաց տանիքը և պատերը նորոգել տուաւ , յե-  
տոյ պատուհանները , սրահն և սանդուղը , որքան կարելի  
էր , եօթանասուն երկու մարշիլ ծափք ընելով . այնուհետեւ  
միարաններուն մէկ մասը փոխարքեց ի Ս . Ղազար , գեռ  
ամենուն համար բաւական սենեկալք շգտնուելով : Նոյն  
տարւոյ (1717) նոյեմբերին պատերով բաժնելով վերնայար-  
կին երեք մեծ սենեկակները , մէջտեղ սրահ մը շինել տուաւ  
և երկու կողմերը երեք երեք սենեկակ . յետոյ դռներով և  
բանալիով փակեց միարանութեան բնակած կողմը և պար-  
տէզը , որպէս զի աշխարհականք երբ վանք գան պատարադ  
տեսնելու , այն կողմը շանցնին՝ այլ ուղղակի եկեղեցին եր-  
թան : Յաջորդ տարին (1718) մարտ ամսոյն սկիզբը , առա-  
ջիններուն հանդէս չորս մեծ սենեկակներն ալ պատով բաժ-  
նելով , ութ խցիկներու վերածեց և երկու փոքր սրահներու .



զաշտպամութիւն Տիրամօբ -

յէ 302.



և հիւսիսային կողմը՝ սանդուղ մը շինել տուաւ որձաքարէ վերնայարկը ելնելու համար։ Ապրիլին վերջը շենքը բոլորովին աւարտելով, մացածներն ալ հանեց քաղաքին մէջ վարձած տունէն և բերաւ վանքին մէջ բնակեցուց. — այնուհետեւ ուրիշ շինութեանց շնեռնարկեց, թէ դրամական վիճակը չներելով և թէ ստիպուած ըլլալով Հռովմ երթալ Բայց թէ Բ'նչ էր՝ որ կը ստիպէր զինքը այն ուղևորութիւնն ընելու այնպիսի դժուարին պարագաներու մէջ, պատմենք հոս համաօտիւ։

Մինչ Միխթար տաժանելի ճիզերով կ'աշխատէր ձեռք բերել Ա. Պազարու կղզին և հոն տեղաւորել իրենները, արևելքի մէջ կ'արծ արծէր դարձեալ մոխրի տակ առժամն թաղուած հակառակութեան հուրը, որուն դրզութեան պատճառ եղաւ հետեւալ դիպուածը։ Տարիներ առաջ, իրը 1714-15ին, Պոլսոյ հայ կաթողիկէ մասին առաջնորդք և զիմանարք, որոնց մէջ կային նուև մի քանի եպիսկոպոսունք, յորս նշանաւոր էր Մամոսոյ եպիսկոպոսը, ժողվելով խորհուրդ ըրին զատել բոլորովին կաթողիկէ մասը միւս ազգայիններէն, իրենց յատուել եկեղեցիները և առանձին պատրիարք մ'ունենալով։ Այդ ժողովին և ձեռնարկին շմասնակցեցան Միխթարայ երկու աշակերտները, Հ. Գէորգ և Հ. Պոլսո, որոնք Պոլիս կը գտնուէին այն ժամանակ, Աքրահօր հրահանգներուն համեմատ, որ խիստ հրամաններ տուեր էր իրենց շմիջամտել այնպիսի խնդրոց մէջ, որովհետեւ Միխթար իրեն հեռաւեսութեամբ կը գուշակէր անոր գառնաղէտ հետևանքը, ինչպէս որ արդիւնքն ալ ցըցուց, Վասն զի երր վերոյիշեալ անձինք գումարուած զաղղիացւոյ մը տունը՝ խորհուրդ կ'ընէին զործին յաջողութեան և միջացներուն վրայ, հայ սպասաւորի մը մատնութեամբ ինդիբը կ'իմանայ պատրիարքը, թերևս Յովհաննէս Բաղիշեցին<sup>1</sup>, որ անմիջապէս կ'երթայ արքունի դուռը և կ'ամբաստանէ զանոնք, իրը գաղտուեկ գաւադիրներ և պատամբներ։ Կառավարութիւնը կը ձերբակալէ զըլիսաւորները, կը բանտէ, կը խոշտանգէ ամէն տեսակ տանջանկներով, ուսկից կ'ազատին ումանք հաւատքնին

1. Ազգութագոր կոլոս կոչուած, պատրիարք յամա 1715-1741։

ուրանալով՝ ի գայթակղութիւն ամենուն, այլք մեծագումար զբամով կը գնեն ազատութիւննին, ոմանք ալ — ինչպէս Մամոսյ եպիսկոպոսը, Յովսէփ վարդապետ և տէր Առառաջածառուր — հաստատուն մեալով հաւատքնուն վրայ, խօստովանողաբար կը կնքեն կեանքերնին։

Հասկցաւ կաթողիկէ մասը, թէպէտ շատ ուշ, թէ որշափի խախուս հիման վրայ ուզեր էին բարձրացնել շենքերնին, զոր թեթև հով մը զետին տապալեց, և անշուշտ զարմացան նաև Միսիթարայ հեռատես և խոհական վարժունքին վրայ, որ զգուշացուցեր էր իրենները միջամտիս ըլլայէ այնպիսի գործի մը մէջ, որ շահեկան շըլլայէ զատ՝ մեծապէս մշասակար եղաւ իրենց։ Բայց շմուցան այն կէտը, թէ Միսիթար և անոր միարանները ծայրիւ մատին խոկ շմօտեցան այդ խնդրոյն և չնպաստեցին։ ուստի տարիներ վերջը, երբ եկաւ առիթը, տարապարա կասկածներէ շարժած՝ նորոգեցին հին զրպարտութիւնները, մանաւանդ երբ լոեցին որ Մեթոնի վանքը կործաներ էր և Վենետիկ փախեր էին միարանները և հետամուտ էին նոր վանք մը ստանալու հոն։ Այդ ժամանակ (1716-7) արևելք քարոզութեան գնացեր էին Հ. Գէորգ և Հ. Յովսէփ Պրուսացի, երկուքն ալ ողջամիտք բատ ամենայնի իրենց կրօնական վարդապետութեանց մէջ, ինչպէս կը հաստատեն այնշափ նամականիք և վկայագիրք, որոնք կը հասնէին ի նմին ժամանակի ի վանս կամ ի Հոռվիմ, այն բոլոր քաղաքներէն, ուր որ քարոզեր էին անոնք. և սակայն զրպարտութեանց մեծագոյն մասը այդ երկու քարոզիչ վարդապետաց վրայ կը ծանրանար, իրը թէ կ'արհամարհէն ուրբագան պատկերները, ներողութիւնները չեն ընդունիր, անհրաման և ինքնազլուխ կը քարոզեն, կը խօստովանցընեն, տգէտ են, և այլն։ Այդ ստայօդ զրոյցք և շարախօսութիւնը այնշափ շառաչ և աղմուկ հանեցին, որ վերջապէս Պոլսոյ Փախանորդը տեղի տալով և համոզուելով անոնց, կը զրէ Հոռվիմ որ ժութավ դարման տարուի։ Ա. Փողովը թէ և շատ կարևորութիւն շտար այն զրուածներուն, սակայն զրգուութեան հոգին մարելու համար, կը զրէ որ Միսիթար որ ետ կանչէ երկու քարոզիչները և առժամն ոք արևելք զրկէ քարոզութեան, մինչև որ ինքն անձամբ

Հառվմ երթալով՝ արդարացնէ միաբանութիւնը այդ եղած ամբաստանութիւններէն և կարկէ հակառակորդաց բերանը։ Միիթար կ'ընդունէր Ժողովոյն զիրը 1717ին սկիզբները, երբ իրենց ապագան պատող մթութիւնք փարատելու վրայ էին, և այն ինչ թեթևացած վշտերէն՝ նորանոր տագնապներ կը սկսէին։ Այսու հանդերձ, հսաղանդ՝ բարձրագոյն հրամաններուն, ետ կը կանչէր արևելքէն երկու քարոզիչները, և իսկոյն կը ծանուցանէր Ժողովոյն, թէ յետ դարձի քարոզիչներուն և միաբանութեան գործերը կարգադրելուն և կացութիւնը ապահովելուն, անյապազ Հառվմ պիտի երթար։ Ա. Ժողովը, վատահ բոլորովին միաբանութեան անմեղութեան վրայ, երբ կը լսէր Միիթարայ վանք ստանալը ի վենետիկ, զեղեցիկ թղթով մը կը յայտնէր իրեն խնդակցութիւնը և ազնուական կերպով մը կը յիշեցնէր Հառվմ երթալու խոստումը։ Չեմ կրնար մէջ չըերել հսու նոյն թուղթին թարդմանութիւնը, որ տեսնեն ընթերցողք թէ ինչպիսի՛ էին Ժողովոյն և Միիթարայ մէջ եղած առնութիւնք։

Ա Վերապատուեալ Հայր, Ժողովս մեծ հաճոյքով լսեց թէ ձեր հայրութիւնը ընդուներ է Հասարակապետութեան առատաձեան զթութենէն մենաստան մը, իրը բնակարան Չեղ և ձեր հսկատակ կրօնաւորներուն։ Անտարակոյս Դուք, ձեր կրօնաւորներով, պիտի համապատասխանէք լսու պատշաճի այդպիսի մեծ շնորհքի մը, ջանարով կատարել այն բոլոր առաքինութիւնները, որոնք վայել և յատուկ են միանձնական կենաց։ Անհաճոյ պիտի շըլլայ դարձեալ Ա. Ժողովոյս ձեր գալուստը, այս սրբատեղեաց այցելութեամբ զոհացնելու համար ձեր բարեպաշտութիւնը։ Յանձնելով զիս ձեր ազօթից, և այլն. — Եթիրան. Ամերիկանուէ նախագահ։ ի Հառվմ, 20 սեպտ. 1717։

Այն տառապանաց օրերուն մէջ ոչ փոքր նեցուկ և սփռվանք եղաւ այդ թուղթը Միիթարայ վշտացած սրտին։

Այն անուեղի հակառակութեանց և զրպարտութեանց առջև լուս չկեցաւ Խաչատուր վարդապետ, որ կորովի զրով մը ջատագովեց զՄիիթար և միաբանութիւնը՝ ծիրանաւորաց Ժողովոյն առջե. զրեց ևս Պոլսոյ Փոխանորդին և հայ ուղղափառաց, կրկնելով յաճախ հետևեալ բացատրութիւնը. «Միիթար պայծառ արեգակ մէ մեր ազգին մէջ».

զօրաւոր ջատագով մը ճշմարտութեան , և վահան՝ ուղղափառ հաւատաքին ։ դարձեալ , և Մխիթար վարդապետ՝ գերազանց փիլիսոփայ և աստուածաբարան է , ոչ միայն կրնայ ընտիր թարգմանութիւններ ընել , այլ և ինքնազիր իմաստասիրական և աստուածաբարանական գրքեր յօրինել . . . Ես այս կարծիքը ունիմ , թէ ով որ անոր դէմ կը կռուի , Հոգւոյն Արքոյ դէմ կը մեզանչէ , և ով որ կ'աշխատի կործանել անոր գործը , որուն հաստատութիւնը Աստուծմէ է , ոչ միայն պիտի շյաջողի , այլ և աստուածամարտ պիտի գտնուի<sup>1</sup> ։ Անկեղծ և պերճախօս էին այդ վկայութիւնք , բայց Մխիթարայ մեծագոյն ջատագույններն էին իւր խիզճը և զործերը . այնպիսի հարուածներուն դէմ անոր սովորական զէնքերն էին , ընդարօյս արիութեան և մեծ անձնութեան հետ մեծ հաւատքը և առ Աստուծած ապաւինութիւնը : Այս պարագայից մէջ էր որ չինեց իրեն երգը առ սուրբ Անտոն ճըգնաւոր , միաբանութեանու նախահայրը և մեծ պաշտպանը , որ կը սկսի «Զքեզ» , սուրբ հայր Անտոնիէ» բառերով , և իւրաքանչիւր տունը կը վերջանայ , և Յղնեա մեզ , սուրբ Անտոնիէ , օրհնեա զմեզ , սուրբ Անտոնիէ . Պահեա զմեզ , սուրբ Անտոնիէ , ի թշնամեաց պատերազմէ<sup>2</sup> ։ Կարծես սուրբ եռանդով մը կ'ուզէ այդ երդին մէջ յիշեցնել իրեն զրպարտիչներուն , — սրոնք կ'ըսէին թէ Մխիթար և անոր աշակերտները տգէտ են , Հռավմայ համալսարանին մէջ ուսած շրլալով . — թէ գիտութեան ազդիւր՝ ինքն Աստուծէ , որ կարող է իմաստնացնել ով որ կ'ուզէ . և Թէպէտ զըրովք վարժեալ չեղեր , սակայն զհսուանս Հոգւոյն արքեր . Արքայութեան զըսպիր եղեր , և քան զզիտունս զեր ի վեր» : Այս զեղեցիկ և զզայուն երգը , յաւզիչ եղանակով մը , ամէն տարի նոյն Արքոյն տօնին կ'երգենք Մխիթարայ որդիքս , երախտազէտ սրտով յիշելով Հիմնադրիս անհամեմատ արդիւնքները և կրածները , արծարծելով ի մեզ անոր հոգին կենդանացնելու փափաքը :


1. Թուղթ Խոշատուր վարդապետի առ Տիրացու Գետրու , Հաճի Ապուռլան , հ. 1717 սկսուած 25:

2. Մխիթար Արքայոր աշակերտ յետոյ աւելցուցեր են այդ երդին վրայ հետեւաց առցերը . «Ողնեան մեզ , սուրբ Անտոն արք , աշակերտոց մեծ Արքոյի . Մխիթարայ վարդապետի . լինել հնագունի վեհապահի» :



Հէջ 502.

Ա. Ղազար մողոգիսլ և Միհթամբուլույ.



Երբ Հ. Գէորգ և Հ. Յովոէլի կը հասնէին Վենետիկ, առաջինը՝ 1717ին վերջը, իսկ երկրորդը՝ 1718ի փետրուարին, — շինութեանց էական մասն աւարտած և բոլոր միարանք վանքին մէջ զետեղուած ըլլալով ապրիլին, — Արքահայրը անոնց իւրաքանչիւրին պաշտօնները և դորձերը որոշելով, մէկ տարուան ապրուածի դրամը ապահովցնելով, և զամէնքն ալ յորդորելով որ եռանդուն և հաւատարիմ ըլլան իրենց պարտքերուն և կարգերուն, կու տար հրաժեշտի ողջոյնը իրեն սիրելի զաւակաց, և առնըլով հետը Հ. Յովուանէս և Հ. Գէորգ վարդապետները, ճանապարհ կ'եւները դէպ ի Հռովմ 1718 թուականի. մայիսին սկիզբը:

## ԳԼՈՒԽ Ժ.

Մինիթար կը մեկմի իւ չոռվմ. — Նկարագիր իրեն ուղևորութեամ. — Ապենիմեամ լիրաց վրայ փոթորկի կը մամդիսկի. — Լիվոռնոյ քաղաքը կ'երթայ ազգայիմները տիսմելու. — չոռվմ հասմելով, մախ տուժ մը կը վարձէ իրենց բակութեամ, և յետոյ Ս. Պամտաւէոմի վանքին կրօնաւորաց մօտ կ'երթայ բնակելու. — Վեմենուոյ դեսպանմին շնորհի ուրբամաւորաց և Սրբ. Քահանայապիտիմ կը մերկայամայ. — Սիրա մեծար ըմդումելութիւն մը կ'ումեմայ. — Իրեն կը յամձմուին բոլոր ամրաստամազիքը, զորս մի առ մի կը մերքէ. — Կը տապազրէ իրեն չատագոլութիւնը. — Սիրամաւորաց ժողով կը գումարուի ի քննութիւն իննորոց միարամութեամ. — Միիթար և իւր միարամք կ'արդարամատ. — Արբաթայրը՝ Ս. Յակովը Մծրացւոյ ըմծայուած Զատէ զիրքը կ'ըմծայէ Սրբ. Քահանայապիտիմ. — Կ'ընդումի այլեւայլ մուէրներ Սրբազնէն և յաղթակաւ կը զառմայ ի զեմենորիկ:

**Մ**իարանութեան հիմնարկութենէն վերջ այս տռաջին անդամն է որ կը ստիպուի Մինիթար զատուիլ իւր սիրելիներէն, միակ ուղևորութիւնն է՝ որ պիտի ընէ իւր իրը յիսնամեայ արբայութեան շրջանին մէջ. և եթէ ամենածանր և հարկեցուցիչ պատճառ մը շրլլար, նա երրէք պիտի շարժէր տեղէն, այնչափ կազուած էր սրտով իւր գործին: Եւ սակայն անհրաժեշտ էր այդ ուղևորութիւնը, ոչ միայն իրը շահնեկան միարանութեան, այլ և Մինիթարայ հռչակին մեծնալուն նպաստող: Վանքի լոիկ շրջապատին մէջ՝ համեստութեան քօղով ծածկուած՝ իրը ամուգերու ներքեւ, քիչերը կը ճանշնային անոր եզական ձիրքերը, իմաստութիւնը և սրբութիւնը. Հարկ էր որ անմեղութիւնը փայլէր աշխարհամուտ մայրաքաղաքին մէջ, ճնշէր զրուատեօք անոր անունը, ուսկից զիւրաւ պիտի սփաէր և արձագանգ գտնէր մինչև արևելքին խորերը Եւ մինչ կ'երթար ծանր ամրաստանութեամբք բեռնաւորուած, պիտի զառնար անտի յաջո-

զութեամբք և փառքերով պսակուած, բարձրութեան զա-  
գաթնակէտը հասած, և նոյն իսկ յաչս իրեն զրպարտիշ-  
ներուն յարգելի եղած. այշապի ապիկար է մարդոց շարու-  
թիւնը արդարութեան առջև:

Միսիթար, նամակաց մէջ, այնքան մանրամասնօրէն կը  
նկարազրէ իւր այս ուղևորութիւնը, որ ինձ ուրիշ բան  
չմնար ընել՝ բայց քայլ առ քայլ իրեն հետեւիլ թռւական-  
ներուն կարգով:

Այսիսի 7ին 1718 թռւականին, կը մեկնի նա Վենետիկէն  
դէպ ի Հառվմ, իւր երկու աշակերտաներով. զրեթէ երեք օր  
կը գնին, կէս մը նաւակով և կէս մալ կառքով, մինչև  
Բոլոնեա քաղաքը, ուր կը մնան օր մը և զիշեր մը՝ հան-  
գիստ առնըլու համար, որովհետեւ Վենետիկէն ելնելէն ի վեր  
զրեթէ անքուն անցուցեր էին զիշերները: Անկէ երկու ո-  
րուան ճանապարհ կար մինչև Փլորենտիա, և հարկ էր անց-  
նիլ Ապենինեան լեռներէն. կալէս կոշուած բացխիկի եր-  
կու կառք կը փարձէ հինգ սուկիով, որպէս զի փոթորկի  
կամ անձրևի ժամանակ անոր մէջ պատապարուին, որովհետեւ  
և սաստիկ դառնաշունչ հողմոտ լեռներ են», կը զրէ Միսի-  
թար, և յիրաւի յերանց ժայրը տեղատարափ անձրւ և  
սաստիկ փոթորկի մաւնեցեր են և սարսուցուցիչ ցուրտ  
մը մայիսին մէջ, և այնպիսի ամպերու և մառախուզներու  
հանդիպեր են, որ ցորեկը զիշերուան պէս մթնցեր է<sup>1</sup>: Վեր-  
ջապէս երկու որէն, մարիսի 12ին, ողջամբ կը հանին ի  
Փլորենտիա, ուր մայր եկեղեցւոյն մօս պանդոկ մը կ'իջևա-  
նին: Հան Հոփարտոս անունով բարեպաշտ և փարթամ  
մարքէ զի մը հետ այնքան անձուկ սիրով կը կապուի և կը  
ժանօթանայ, չնորհի յանձնարարական զրերու՝ զորս ըն-  
գուներ էր իրեն մուերիմ վենետիկցի սեպահներէն, որ մեծ  
ընդունելութիւն կը գտնէ անոր պալատին մէջ, և որշափ  
ժամանակ որ այն քաղաքին մէջ կը մնայ՝ անոր հիւր կ'ը-  
լայ: Այս ժամանակ ի հիմունոյի հայ զազութիւն առաջնորդն էր  
Բարթողիմէոս վարդապետ, Հառվմայ Արքանեան վարժա-  
րանին աշակերտ, զիտնական անձ մը և նախանձայոյզ ջա-  
տագով մը ուղղափառ կրօնից, և մի և նոյն ժամանակ ան-


1. Առ Հ. Եղիս վարդապետ, 1718 մայիս 15 (Փլորենտիայէ զրուած):

կեղծ բարեկամ՝ և թղթակից Ախիթարայ։ Աքրահայրը, աւելի ևս ամրապնդելու համար բարեկամական կապերը այդպիսի անձի մը չետ, որ կրնար ու և է առթի և խնդրոյ մէջ օգտակար ըլլալ միաբանութեան, գետի Լիվունոյ կ'ուղ- զէ իրեն ընթացքը, մայիսի 14ին։ Եարաթէ մաւելի կը մեայ հոն, բալոր տեղացի ազգայիններուն խանդավառ և սիրայիր ցոյցերուն առարկայ դառնարով, ամէն տեսակ պա- տիւ, մեծաբանք և հրաւէր կ'ընդունի հարուստ ընտանիք- ներէն։ բայց քան զամենքն աւելի առաջնորդն էր, որ կը գուրզուրար Աքրահօր վրայ, և իմանալով անոր ուղերու- թեան պատճառը և եղած զրպարտութիւնները, այնպիսի զայրոյթ մը կը զգայ ընդդէմ հակառակորդաց միաբանու- թեան և կոկիծ մը սրտի, որ կրակուս ոճով մը երկու՝ ե- րեք չատագովական թուղթեր կը զրէ առ Ա. Ժողովը, ո- րոնց շափազանց եռանդը և սուր հոգին՝ կը ստիպուի մեղ- մել Աքրահայր։ Իրեւ իրեն յատուկ տան մէջ՝ այնպէս կ'անցնէ Ախիթար իւր օրերը Լիվունոյի մէջ։ միասին կը կատարեն եկեղեցւոյն մէջ ժամերգութիւնները և որիշ եկեղեցական հանդէնները, ինքը կ'ըսէ մազթանքները, և հրաւէր կ'ընդունի քարոզ խօսելու կիւրակէ օրը։ Ամոյն 27ին կը մեկնի Լիվունոյէն, անմոռանալի յիշտատակներ թող- լով հոն, կը դանայ ի Փլորենափա և երկու օրէն ձանա- պարհ կ'ելնէ գետի ի Հռովմ, ուր կը հասնի ողջութեամբ յունիսի 2ին, սաստիկ նեղուած ճանապարհին տաքութենէն։ Ժամանակին Քահանայապեան էր Կղեմէն ԺՈՒ. նա՛ որ հաս- տատած էր միաբանութեան Սահմանադրութիւնը և շնորհած Ախիթարայ Աքրահայր տիտղոսը։

Առաջին օրէն որ Ախիթար սաք կը կոփէ Հառվմայ մէջ կը սկսի բախտը ժպտիլ իրեն, և կը թուէր թէ յաջողութիւնը կը վաղէ անոր ետևէն։ Ճանապարհին յողնածութիւնը զեռ շանցուցած, անմիջապէս երկրորդ օրը կը սկսի իւր այ- ցելութիւնները. կ'երթայ նախ Վենետիկյ Նիկ. Դիեգոյ գեո- պանին, որուն յանձնաբարական թուղթեր ունէր ձերակու-

1. «Առ ալ, կը զրէր Ախիթար Լիվունոյէն, Խաչատուր վարդապետին նման անձնանուէր և բայց սրուվ կ'աշխատի յազուս մեր և միաբանու- թիւնը զարժերուն» (Առ Հ. Եղիա. 1718 ժամկէ 20):


տին կողմէն, նա սիրով կ'ընդունի զինքը, կը խռատանայ ամէն նպաստ և աջակցութիւն ընել՝ իրեն զարծին յաջողութեան համար, և կը տանի առ Ասկրիպտանտէ ծիրանաւորը, Հաւատատափիւռ ժողովոյն նախագահ և միանգամայն հայ ազգին խնամակալ, որ մեծ սիրով կ'ընդունի զինքը և կը միսիթարէ զԱթրահայրը որ հոգ չընէ ամբաստանու-




Ա. Պետրոսի հկեղիցին և Ծրապութելը (իշող) .

թեանց մասին, յոյս տուրք թէ դիւրաւ և յաջողութեամբ կը վերջանայ ամէն բան. մի և նոյն ընդունելութիւնը և յուսուլից խռատութերը կ'անննայ նաև ուրիշ ծիրանաւորներէ: Ամէն բանէ զոհ կ'երեք Միսիթար իւր յունիս 4ի նամակին մէջ, բաց ի տաքութենէն՝ որ կ'այրէր զինքը: Յունիս 10ին Քահանայապետը հանդիսաւ որ ունկնդրութիւն

կը շնորհէ վենետիկեան գեսաբանին Կուիրինալի պալատին մէջ. Միսիթար ևս կ'ընկերանայ անոր, և կը ներկայանայ Քահանայապետին իւր երկու աշակերտներով, որ քաղցրութեամբ, ընտաներար և զուարթ դիմօք կը խօսի Արքահօր չետ կէս ժամու չափ, ինչպէս կը զրէ նաև, այլեալլ տեղեկութիւններ հարցնելով միարանութեան կացութեան վրայ, թէ քանի անձինք են, ինչ կ'ընեն, և այլն, խոստանալով յօժարութեամբ հռզալ և կատարել իրեն բոլոր խնդիրները. և այսպէս քաջալերուած և ուրախացած Միսիթար այն սիրամեծար ընդունելութեան վրայ, դեսպանին հետ գուրս կ'ենէ: Շարաթ մը վերջը գարձեալ Քահանայապետին կը ներկայանայ. Սակրիպտուաէ ծիրանաւորին ընկերակցութեամբ, և մանրամասնօրէն կը պատմէ միարանութեան վրայ եղած զրպարտութիւնները, և մանաւանդ Պոլսոյ Փոխանորդին զրածները առ Ա. Փաղալը, որուն պատճառաւ արգելուած էր իրենց արևելք քարոզութեան երթալ, և այլ նման բաններ: Քահանայապետը շատ կը վշտանայ այդ բաները լսելով, և հայրաբար կը քաջալերէ զՄիսիթար՝ հռզ չընել ամեննեին, խոստանալով փութեալ քննել տալ այն խնդիրները, ինքն իսկ անձամբ հսկելով վրան, որպէս զի արդարութիւնը և ձշմարտութիւնը յաղթանակեն: Հրամայեց Փողովայն ատենադպրին, որ հոն ներկայ էր, դիւանէն դուրս հանել միարանութեան գէմ զրուած բոլոր ամբաստանադիրները և Արքահօր յանձնել, որ կարգալով տեղեկանայ և առանձին տեսրի մը մէջ նշանակելով մի առ մի այն բոլոր ամբաստանութիւնները, անոնց իւրաքանչիւրին առջև դնէ արդարացուցիչ պատասխանները, և տաղազրելով մի մի օրինակ բաժնէ այն ծիրանաւորաց, որոնք նոյն դատին քննիչ պիտի ըլլային. օրինակ մալ իրեն ուզեց: Այսպիսի հայրական խորհուրդներով և քաջալերիչ խօսքերով հանդարտեցուց Արքահօր տաղնապած սիրոք. վճռատուն՝ իրեն պաշտպանն էր, և այլ ևս տարակոյս չեր մնար դատին յաջող ելքին վրայ: Միսիթար երկրորդ օրը կ'երթայ Ա. Փողովայն ատենադպրին, որ կը բանայ առջև դիւանին գոները, ուր ատենական թուղթերուն մէջ կը զտնէ այն բոլոր ամբաս-



T. B. GREGORY AND J. R. MURRAY



տանեղիբները, որոնք աւզպաւած էին ընդհանուր միարա-  
նութեան կամ մասնական անձանց դէմ։ Կախ և առաջ  
կը գտնել Հ. Եղիայի դէմ եղած ամբաստանութիւնները,  
որոնց ներքեւ նշանակուած էր ։ Այսպարացաւ Հ. Եղիա,  
սուտ ցուցուեցան ամբաստանութիւնք, ըստ մկայութեան  
Կորնթօսի կառինի արքեպիսկոպոսին և այլց չառագովա-  
կան զրութեանց, և այլն։ Խոկ Հ. Գէորգին և Հ. Յովե-  
փին կամ ընդհանուր հասարակութեան դէմ եղած զրաբր-  
առութիւնք ճիշգ այնպէս զրուած էին, ինչպէս առիթ ունե-  
ցանք յիշերու յառաջն. միայն երկու կէտեր կային այդ ամ-  
բաստանութեանց մէջ, որոնց ծանօթ չէր Միսիթար. առա-  
ջն թէ Մեթօնի<sup>1</sup> հայ կրօնաւորներուն փախանքը չէ Հոգի-  
ները շահիլ, այլ զրամ հաւաքել ժողովրդէն, և այս նպա-  
տակով միայն առաքելութեան կ'երթան. երկրորդ. Միսի-  
թար Արքայի աշակերտները կ'ըսեն՝ թէ իրենք գերբնական  
զիտութիւն ունին, որովհեաւ Հոգին սուրբ այնշափ առաւո-  
րէն պարզեցի է Արքահօր իրեն չնորհները, և ի մասնա-  
ւորի հեղական զիտութիւն և իմաստաթիւն, որ նա փշելով  
կրնայ նոյնը հարրոցել նոսե իրեն աշակերտաց։ — Երբ  
Միսիթար կը զարմանար՝ թէ ինչպէս կորելի էր այդոցիս  
անհիմն և անտեղի զրպարտութիւններ յօդել և անոնց հա-  
ւատք ընծայել. Ատերիստանու ժիրանաւորը ժպակելով կը  
յիշեցնէ աւետարանին խօսքը, թէ «Ազգ քո և քահանայա-  
պետք մատնեցին զքեզ», և կ'առելցնէ՝ որ եթէ ստարագ-  
զիք ըԱրային ամբաստանողք, այնշափ հաւատք չէր ընծայուեր  
անոնց։

Մինչ Միսիթար իրեն առաքինի վարքով, խոհական ըն-  
թացքով և հմտութեամբ, ամենուն՝ մահաւանդ սատրնե-  
րուն՝ սէրը և յարգանքը կը զրաւէր, կը հոչակուէր,  
շլրցաւ Հոգիմ բնակող ազգայիններէն ոմանց թերանը փա-  
կել, որոնք կը շարունակէին տարածել զանազան բարու-  
րանք Արքահօր մասին, իբր թէ ինքնազլուխ նորանոր եկե-  
զեցական կարգաւորութիւններ կ'ընէ, կը փոփօխէ արարա-  
զութիւնները, և այլն։ Այդ բարուրանքը կը հասնին մինչև

1. Այդ ամբաստանութեանց մէկ մասը պառած էր ի Հոգի այն ժո-  
մանակ, երբ միաբանութիւնը զետ Մեթօնի մէջ կը քնակէր։

Քահանայապետին ականջը . ուստի անգամ մը , երբ Մխիթար գարձեալ իրեն յարգութիւններն ընելու զնացեր էր , խօսք կը բանայ այդ ինդրոյն վրայ . Արքահայրը պատշաճ պատասխաններով կ'ապացուցանէ անոնց ստայօդ ըլլալը . և Քահանայապետը զոհ կը մնայ . Հարկէ է ըսել թէ այդ բոլոր հակառակութիւնք բնաւ չնսեմացուցին այն լուսաւոր պատկր , որ կազմուած էր Մխիթարայ անուան շուրջը . Նա իրրու ամբաստաննեալ մը կը նկատուէր , և սակայն իրեն դատախազներէն աւելի համարձակ , աւելի յարգուած և փառաւորուած էր . գես չը սկսած օրինական քննութիւնք , նա արգէն արդարացած էր ամենուն մոտին մէջ . իրեն ամենէն աւելի սերտ բարեկամներն էին անոնք , որոնք գատաւոր պիտի նստէին իւր դատին մէջ : Նա յականէ յանուանէ կը ճանչնար թէ ո՛յք են՝ որ կը սիրեն մութին մէջ զործել , երեսնիմիք գովելով՝ որտկելով , և ետևէն մուր քսելով . և սակայն , քրիստոնէավայել անօխակալութեամբ և վաեմութեամբ , բնաւ չէր նուազեցներ առ նոսա սիրոյ և մեծարանաց ցոյցերը , և ինչպէս յանախ կը զբէր և կ'ըսէր իրեններուն , այնպիսեաց հետ աւելի քաղցրութեամբ կը գարուէր՝ գանոնք շահելու համար : Հետևեալ դիպուածը կը հաւաստէ թէ որշափ մեծ էր Մխիթարայ վարկը , ոչ միայն սոսկական անձանց մօտ , այլ նոյն իսկ Քահանայապետին առջև : Օր մը Մխիթար իրեն երկու ընկերներով այցելութեան զնացեր էր Հայոց եկեղեցին . նոյն պահուն Քահանայապետը պատահձմամբ այն տեղէն անցնելով , կանգ կ'առնու , վար կ'իջնէ կառքէն և եկեղեցին կը մտնէ տեսնելու թէ ինչպէս եղած էր իրեն պատուիրած նորոգութիւնը : Երբ հոն գանուող հայազդի եպիսկոպոսք և քահանայք ծնրադիր իրենց յարգութիւնները կ'ընէին , Քահանայապե-

1. Այդ ժամանակ բաւական թուով հայագիր եղիսկապոսանք կը զանուէին Հոռմմայ մէջ , որոնցմէ ուշնեց արեւելքն վախեր և հոն պատասխաներ էին . Գրիգոր Առաջեցի , որ ձեռնազրից եղիսկապոսն էր . Մատթէոս Սարի՝ երեւան Կաթողիկոս Աըստ . — զոր տեսնելու զնացեր է տեհամբ Մխիթար , — մեզի ժամոթ Յովան Սերոստացին . Սէֆէր , և Սահմէ եղիսկապոսանք , Բասիլ Շէրիման , Վենետիկոյ մէջ քնակաղ Շէրիմաննան ողուանական ընտանիքն , որ կարծեմ պարզապէս բորբոխուած էր , և այլք :

տը տեսնելով զԱրքահայրը՝ իրեն մօտ կը կանչէ և կը սկսի ընտաներար խօսիլ այլ և այլ խնդրոց մասին, կը հարցնէ թէ աւարտեց արդեօք զրութիւնը, և այլն, որուն զրայ կ'ապշին բոլոր տեսողք։ Այդ գեղքէն վերջ՝ աւելի ևս կը հոշակուի Մխիթարայ անունը, և հակառակորդք զինաթափ կ'ըլլան, տեսնելով թէ իրենց զրպարտութիւնք փոխանակ վնասելու՝ աւելի ևս կը նպաստեն անոր մեծնալուն։

Մխիթար ի սկզբան առանձին տան մը մէջ կը բնակէր վարձքով. աժիս մը վերջը թողլով զայն, կ'երթայ բնակելու. Ա. Պանդակոնի վանքին մէջ, ուր կրօնաւորաց հետ ճշդիւ կը պահէր վանական բոլոր կարգերը. լսենք թէ ինչպէս կը նկարազրէ իրենց բնակութիւնը, ապրելու կերպը, և այլն. «Խուզս շատ փոքր է, մեր վանքին ամենէն աւելի փոքրագոյններուն չափ. պատուհանիս դիմաց կայ մեծ մարագ մը, և արեւուն սաստիկ տաքութիւնը օրն ի բուն խուցիս վրայ զարնելով, զրեթէ կ'եփէ զիս. ամեննեին հով չի փշեր, բաց ի լոտոսէն՝ որ վնասակար է ինձի. Կերակուրնիս միջակ է, յաճախ սոխով համեմուած, զոր շտանիր ստամբսս. իսկ երեկոյին՝ շատ անգամ կը բերեն վարունգէ և հում սոխէ շինուած աղցան մը, զոր ես շկարենալով ուտել, ջրոտ հացաթան կը բերեն։ Բայց այսու ամենայնիւ դոհ եմ, վասնզի բարի և շատ առաքինի անձինք են. ամէն երեկոյ իրենց հետ միաբան մտածական աղօթք կ'ընենք, և շաբաթը երեք անգամ կը ձադիենք զմեզ. ո՛չ, ո՛րչափ անուշ կը հնչէ ականջիս՝ ձադիանքին ձայնը, որուն հետ չեմ փոխեր տաւզի և քնարի նուազները<sup>2</sup>։ Ամառուան խողուկ տաքը, զրաւոր սաստիկ աշխատանքը, որով ստիպուած էր շաբաթով տնէն դուրս չելնել և զիշերները զրեթէ անքուն անցնել, և կերակուրները՝ որոնք սննդարար չըլլալէ զատ՝ ստամբսը կը ծանրացնէին, ակարացուցին զինքը, բոլորովին ուժապատ ըրին. և սակայն զրիշը ձեռքէ չէր թողուր, որովհետեւ միաբանութեան զործին փութով կատարումն և յաջողութիւնն իրեն զրութենէն կախումն ունէր, ուստի ամէն ջանք կը թափէր որ իւր զրելիք չառա-

1. Ospizio di S. Pantaleone կոչուած, Santa Maria di monte հեղեղցւոյն մօս։

2. Թուղթ առ Հ. Եղիս, (718 յուլիս 50).

զավական գուետրը կատարեալ ըլլոյ թէ բառ ոճյն և թէ  
բառ բովանդակութեան։ Այդ հատողավական զբայիլը կազ-  
մուած է երկու զիխաւոր մասերէ, առաջինը կը սկսի հա-  
մառօս յառաջարանով, յորում կը բացատրուի զրութեան  
պատճառը և նպատակը, և ունի շորս զլուխներ. առաջ-  
նոյն մէջ կը պատմուի հակիրճ խօսքերով Մխիթարայ վար-  
քը և միարանութեան հիմնարկութիւնը. երկրորդին մէջ՝ թէ  
յիշեալ միարանութիւնն ինչ արդիւնքներ ունեցեր է ող-  
դափառ կրօնից նկատմամբ իրեն քարոզութեամբք. երրորդ  
և չորրորդ զլուխներուն մէջ դրաւած են այն բոլոր զրապարտու-  
թիւնք, որոնք եղած են առ Ս. Ժողովը՝ ընդհանուր հա-  
սարակութեան կամ մասնական անձանց դէմ, և մի առ  
մի կը չերքուին անոնք վկայագիրներով և փաստերով։ Եր-  
կրորդ մասին մէջ գետեղուած են այն բոլոր վկայագիրք և  
նամականիք, քառանեւեց թաւով, որոնք կը հաստատեն և  
լիուլի դովիճաններով կը դրոււատեն Մխիթարայ և միարա-  
նութեան անձանց առաքինի զնացքը և կրօնական վարդո-  
պետութեանց մէջ ողջմուռ թիւնը։ Անդմ ոճով մը ամփափե-  
լով այս զիխաւոր կէտերը, Հ. Յովհաննէս վարդապետին  
սպնութեամբ խոալերէն թարգմանեց, և յանձնելով զայն  
քաջ լեզուագէտ և պերճախօս մարդու մը, յղկել և վայել-  
շացնել տուառ անոր լեզուն և ոճը, որչափ կը պահանջուի  
այդ տեսակ զրութեանց համար<sup>1</sup>։ Յետոյ տպագրել տալով  
Շաւալոցի տպարանին մէջ, մէկ մէկ օրինակ բաշխեց այն  
բոլոր ծիրանաւորաց, որոնք մեր զօրծին քննութեամբ ողի-  
տի պարապէին, որպէս զի նախնաբարոր տեղեակ ըլլան խըն-  
զրոյն էւթեան, փառակազմ օրինակ մ'ալ տարաւ ընծա-  
յեց Քահանայապետին, անձամբ ներկայանալով այս եր-  
րորդ անդամ, որ շատ զոհ եղաւ և առնըլուն պէս սկսաւ  
հետաքրքրութեամբ կարդալ։ Եսոյն պահուն ներկայ էր Պաւ-  
լուչի ծիրանաւորը, առաջին պաշտօնեան Քահանայապե-  
տին, որուն կը յանձնաբարէ զՄխիթար և անոր գատը, որ-  
պէս զի ինքն ալ ներկայ գտնուի ժողովոյն։ Աելքտեմբեր  
26ին զումարեցաւ ժողովը, և շորս ժամ՝ տեսեց. Արքահայ-

1. Զայս կը յիշէ Արքահայը իւր մէկ նամակին մէջ ոտ Հ. Եղիս, հետեւալ բացատրութեամբ. «Եկը դրութիւնը Յայսմաւուրական լեզուէն՝ նարեկեան լեզուի փոխեցից» (1748 օգոստոս 20):

ըլ, իւր երկու վարդապետ աշակերտներով, զնացեր կեցեր էր արտաքին սրահին մէջ, անձկանօք սպասելով ժողովոյն նպաստաւոր որոշողութեան։ Յանկարծ կը բացուին խորհրդարանին գռները, ծիրանաւորք գուրս կ'ելնեն զուարթ և զոհ դէմքերով, և կ'ուղղուին դէպ ի Մխիթար աւետելու, թէ իրաւունքը և ճշմարտութիւնը յազմանակած էին, և ստութիւնը հալածական եղած էր ստուերի նման։ Յնծալից տուն կը դառնայ Մխիթար, Ա. Պանդալէոնի բոլոր վանականք կը մասնակցին իրեն ուրախութեան, իրը թէ իրենք տարած ըլլային յազմութիւնը, ամէն կոզմէ կը հասնին խնդակցութեան թզեր, ծանօթք և անծանօթք, բարեկամք և հակառակորդք անոր յազմանակին չքախումը ը կը կազմեն։ Կը փութայ Արքահայրն առ Քահանայապետը՝ իրեն երախտապարտ սրտին չնորհակալիքը և յարգանքները զեղուլ անոր առջև, որ իրը ճշմարիտ հայր մը և արդար իրաւարար մը՝ չէր զլացած ընել ինչ որ հարկ և պատշաճ էր, Քանի մ'օր վերջը կ'ընդունէր Ժողովոյն վճռագիրը, որով իշխանութիւն կը տրուէր իրեն՝ քարողիչներ զրկելու արևելք՝ ուր որ պատշաճ կը տեսնէր։ Ակայն ապազային մէջ դարձեալ նոյնպիսի անախորժ խնդիրներ չծագելու համար, կը խնդրէ նա Ժողովէն՝ որ պարտականութիւն զնէ իրենց վրայ, որ նախ քան քարոզութեան երթալը՝ քննուին Առաքելական Նուիրակին առջև միաբանութեան անձինք աստուծաբանական գիտութեանց մէջ, և անոր վկայագրով զրկուին առաքելութեան, որպէս զի ոչ ոք համարձակի իրը տգէտ կամ մոլորամիտ ամբաստանել զիրենք։ Այն առաջարկը շատ հաճոյ կ'անցնի Ա. Ժողովոյն, և անոր համեմատ կը զրէ իրեն վճիռը։ Երբ այսպէս ամէն բան յաջողութեամբ ի զուրի կ'ելնէ, Մխիթար կը ծանուցանէ Հ. Եղիային և բոլոր միաբաններուն, որոնք ուրախական լրոց կը սպասէին անձկանօք՝ իրենց որտուութիւնը և կասկածները փարատելու համար։ Կը զրէր նաև թէ փութով պիտի մեկնէր Հռովմէն և Վենետիկ գառնար, շուզելով այլ ևս երկարել իրեն պանդխտութեան օրերը։ Ակայն գէպքերը թոյլ շտուին այդ իրեն փոփաքը փութով կատարելու. Հռովմայ զիտուական և աւագ դասակարգին մէջ հաշակուած ըլլալով նու իրը սրբակեաց և արևելքի ա-

մէն խնդրոց տեղնիտեղը հմուտ վարդապետ մը , Դանարա ծիրանաւորը — որ մեր գործին զլխաւոր խնամարկուն եղած էր — յանձնեց իրեն որ զբքոյկ մը շարազրէ այն կարևոր խնդրոյն նկատմամբ , որ այն ժամանակ հայ կաթողիկեայց մէջ տաք վիճարանութեան տաւրկայ դարձեր էր . այսինքն թէ՝ կրնան արդեօք կաթողիկեայք ազգային եկեղեցիները երթալ և ի չոգեարս անոնց հետ մասնակցիլ . Ա . Ժողովը այդ խնդրոյն նկատմամբ իրեն վճիռը տալէն առաջ , ուզեց զիտնալ նաև Մխիթարյայ կարծիքը : Կնճռուա՝ զժուարին խնդիր մ'էր , զոր կ'ըմբռնեն անոնք՝ որ այն ժամանակի ազգերնեւու հանդամանքներուն տեղեալ են . այն պատճառով չէր ուզեր Մխիթար միջամուխ ըլլալ այդպիսի խնդիրներու մէջ , բայց ստիպուեցաւ համաձայնիլ Ա . Ժողովոյն փափաքին , և համառօտ զրութիւն մը շարադրեց , որ մինչև 1879 թուականը հրատարակուած չէր , և այդ տարւոյն՝ Պուկաս վ . Տէրտէրեանի ձեռքով լոյս տեսաւ առջին անդամ Զմիւանիոյ Տէտէեան տպարանէն , հետեւեալ խորազրով .<sup>1</sup> «Արքայ Մխիթարյայ վարդապետի արարեալ պատճառք որք առերին ընդդէմ նոցին , որք ասեն թէ ոչ երթէք պարտ է զնալ ուղղափառաց ի ժամն Հայոց» : Դա՝ 1/էջերով համառօտ զրութիւն մ'է , տասներկու հատածներու բաժնուած , որոնց մէջ զրուած և բացատրուած են մի առ մի այն բազոր պատճառները , որոնց համար ստիպուած են հայ կաթողիկեայք — մի քանի զիստուածներու մէջ — երթալ Հայոց (Խմիւանականաց) եկեղեցիները , իրենց յասուկ եկեղեցիներ չունենալնուն համար : Յիշեալ խնդրոյն նկատմամբ հարցուեցաւ նաև Առաքելեան խաչատուր վարդապետին կարծիքը , որ ըստ ամենայնի համաձայն գտնուեցաւ Մխիթարյայ յայտնած կարծիքին : Յետ երկար և հասուն բննութեան , որոշուեցաւ այդ խնդիրն յաջորդ (1749) տարւոյ յունուարի 12ին Հաւատագնութեան ժամանակոյն մէջ , յարում Քահանայապետն (Աղեմէս

1 . Հրատարակիչն ընդարձակ յառաջարտուն մ'ունի , յորում կը լուսաբանէ այդ խնդրոյն վերաբերեալ քանի մի մութ կէսար . զրած է նաև ժամանակիներ Մխիթարյայ զրութիւնն զրքե . թիւրիմացութեանց առջեն առերլու համար :

մլլ.), — որ ներկայ էր և դահազլուխ բազմեր էր, — կտրուկ և հակիրճ պատասխան մը տուաւ եղած առաջարկութեան. այն է, Ըստ մտաց, զոր կը բացատրէ նոյն Ժողովայն վճառ գիրք, թէ «Խորհուրդ Հարցնեն այն վարդապետներուն, առաքինի և հմաւու եկեղեցականներուն, որոնք երկար ժամանակ այն առաքելութեանց մէջ գտնուեր են, զգուշանալով ուուտ աղանդի յայտարար գործ երէ, և դայթակղութեան և հաւատքէ խօսութեկու առիթներէ»:

Ժողովայն վճառյն մէջ նշանակուած ըլլալով Մխիթարայ անունը, նա կը գուշակէր արդէն, թէ այդու պիտի զըրդուէին հակառակորդք և նորանոր փոթորիկներ պիտի յարուցանէին դարձեալ իրեն և միաբանութեան գէմ, ինչպէս որ արդիւնքն ալ ցըցուց: Խնքը, որ ամենայն կարելի նախազգուշութիւններ կ'ընէր, որպէս զի թիւրիմացութեանց տեղի շարուի, և ամէն անգամ արևելք քարոզիչ զրկելուն, անոնց ձեռքը կու տար վճառյն պատճէնը, որ անոր համեմատ առնուն իրենց բոլոր քայլերը և ամենայն խոչեմութիւնն ցոյց տան իրենց խօսից և գործերուն մէջ, այնու հանդերձ ազատ չմեաց քառ լեզուներէ և զրիներէ, որոնք անմիջապէս տարածեցին՝ թէ Մխիթար խարեր է ուուրբ Ժողովը: Արբահայրը լսելով զայն՝ Ընդարձակ զրով մը, 1721 փետրուար 22 թուականով, հերքեց համոզիչ և զօրաւոր փառակրով եղած աղածին և տուած բացատրութիւններէն, վասն զի այնուհետեւ այզպիսի խնդիրք տեղի շունեցան: բացուեցան միաբանութեան առջև յարևելու և յարևմուսս քարոզութեան զոները, և հաստատուն կերպով կը սկսի Մխիթարիան առողջութեանց չըջանը, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ զիսոյն մէջ:

Երբ տակաւին Հռովմ կը գտնուեր Արբահայրը, մի քանի զիտնական ձիրանաւորք, որոնք արևելեան Ս. Հարց զրուածոց ուսումնասիրութեամբ կը պարապէին, Հարցուցին իրեն թէ արդեօք կը զտնուէին հայերէն Ս. Հարց զրութիւնք: Մխիթար տեղեկութիւն տուաւ Զօտն կոչուած զրբին վրայ, իրու Ս. Յակովը Մծրնացւոյ գործ, ինչպէս

կը Համարուեր մինչեւ վերջին ժամանակներս, և հայերէն զբուած : Արևմտեայք շունչին անոր թարգմանութիւնը , սկզբնագիրն ալ — ասորերէն լեզուով — կորսուած կը կարծուէր, և հազիւ թէ երեսուն՝ երեսուներկու տարի կայ որ գտնուեցաւ և հրատարակուեցաւ Բայթ անդղիացւայն ձեռքով<sup>1</sup> : Երբ իմացաւ Արրահայրը թէ Քահանայապետն այնպիսի զրգերը շատ կը զնահատէր, և մեծ հաճոյք պիտի պատճառէր՝ եթէ զայն օրինակել տար վայելլագիր և անոր ընծայէր, իսկ և իսկ անապարեց զրել առ Հ. Եղիա, որ փութով զազափարել տայ զայն, անսխալ և զեղեցիկ զրշութեամբ, և շքեղ և վայելուչ կերպով կազմելով՝ ուկեզօծ տուփի մէջ դնելով, իրեն դրկէ : Կատարուեցաւ ճշգիւյնձնարարութիւնը, և Արրահայրն անձամբ տարաւ և ընծայեց Քահանայապետին, որ սիրով ընդունելով զայն, որհնեց Միսիթար և համօրէն միաբանութիւնը : Հռովմ զտնուած ժամանակ ուրիշ շատ զիտնական և նշանաւոր անձանց հետ մտերմացաւ, որոնց մէջ երևելի էր մեծանուն արևելագէտ Աստեմանին, որ իւր Այսեկեան մատենադարանին մէջ խօսելով սուրբ Պատարու զրատան մէջ զանուած Ա. Յակովը Մծրնացւոյ ձեռագիր հառերուն վրայ, որուն օրինուել խնդրեր էր Միսիթար Արրայէն, կ'ըսէ . «Գրով իւրն զրեցի (զայն) Պետրոսեան Միսիթար Արրահայրէն, որ թէ բարեզագաւութեամբ և թէ զիտութեամբ երեսելի անձ մ'է, և ինձի մտերիմ բարեկամ<sup>2</sup>» :

Նախ քան մեկնիլը Հռովմէն, զնաց վերջին անգամ մ'ալ Քահանայապետին օրհնութիւնն առնըլու, և իրեն յարդութիւնները և չնօրհակալութիւնները մատնեցանելու անոր ցուցած այնշափ հայրագութ խնամոց փոխարէն : Քահանայապետը զրուգալիր սիրով ողջագուրեց զՄիսիթար և անոր ընկերները, և ոչ միայն օրհնեց և քաջալերեց զինքը՝ արիարար յառաջ տանիլ Աստուծոյ զործը, որ միանգամայն շահեկան պիտի ըլլար իւր աղզին, այլ և շատ ընծաներ տուաւ, արծաթ մեղալներ, խաչեր, սրբոց նշխարք-

1. W. Wright. *The homilies of Aphraates, the persian Sage.* London, 1869. 4to. II. Էջ 19-57 :

2. Assemani. *Bibliotheca orient.* I. 537 :

ներ և մաս մ'ալ խաչափայտէն։ Միսիթար գնաց յետոյ հրաժեշտի ողջոյնները տալու այն բոլոր ծիրանաւորաց, որոնք նպաստեր էին իւր դորժին, և գեկտեմբերի նին մեկնեցաւ Հռովմէն։ Իւր գարձը ուրիշ ճանապարհով ըրաւնախ գնաց ի Ասրետոյ՝ Ա. Աստուածածնայ տանը այցելութեան, ինչպէս կ'իմանանք իւր մէկ նամակէն<sup>1</sup>. յետոյ անկէ ցամաքով Բոլոնիա քաղաքէն անցնելով՝ Պաղուա եկաւ, ուր գնաց ողջունելու և շնորհակալ ըլլալու Գէորգ Կոսնարոյ ծիրանաւորին՝ որ քաղաքին առաջնօրդն էր, և շատ գեղեցիկ վկայագիր մը տուեր էր իրեն, զէոյ ի Հռովմ ուղեւորելու ժամանակ։ Կեկտեմբեր 20ին կը հանգէս մը կ'ըլլար իրեն մուտքն ի Ա. Պազար, բոլոր միարաններուն հրճուանաց ցոյցերուն մէջ, յետ ութամուեայ պանդիստաւթեան։

1. Թռուղթ առ Հ. Եղիոս. 1718 գեկտեմբեր 5:

## ԳԼՈՒԽ ԺԱ.

Ազգին ընդհանուր կոչմանական խեղճ վիճակը . — Միիթարայ միաբանութիւն հաստատելու գլխաւոր նպատակներէն մին էր աւարելութիւն . — Ի՞նչ կերպով էր պատրաստ, թարողիւթերը և կ'ուղարկէր զանոնք . — Ի՞նչ պատուէրներ և նրանանցներ կու տար ամոնց խօսքով կամ զրով . — Հիմնարկութիւն Միիթարեան առաջելութեամց . — Սահմանը և զինաւոր կեղքոնք այդ առաջելութեամց . — Համառոտ ակնարկ մը ամսոնց վրայ,

**Ս**իիթարայ ժամանակները հայ ազգին ընդհանրութիւնն ողբալի կացութեան մէջ էր կրօնական մասամբ . խաթարուած էր մաքերուն մէջ կրօնից գաղափարը, չէր ներշնչեր այլ ևս այն վեհ և բարձր զգացումները, չէր ազգեր այն կորովը և ոգևորումը, որով մարդո մռացած ինքդինքը, լքած նիւթական աշխարհը, զգուած փառքէն և հաճոյքէն՝ որոնք տիղմ կ'երեխն իւր աշքին, բարձրաթռիչ կը ճախրէ հոգեղէն ողորտից մէջ, կ'ուտնու վճերու վրայէն, կ'ընդունէ խութերը՝ տանջանքները և նոյն իսկ մահը, կը նահատակուի հմարտութեան համար : Ընդ հակառակն, շարք մը նախառաջարմանց և աւելորդապաշտութեանց անոր հաւատոյ դաւանանքին մասը կը կազմէին . և հմարտութեան լոյսը, որ պիտի ցրուէր այդ կանխակալ կարծիքներու խառնակոյտը, հոն չէր թափանցեր, զիմացը կանգնած ըլլալով տղիտութիւնը՝ իրը անթափանց պատուար մը : Ու ոք կը զգար իրեն մէջ այդ պատուարը տապակելու ուժը և քաջութիւնը, և անոնք իսկ, որոնց խղճի պարտականութիւն մ'էր այդ, մի և նոյն խաւարին և տղիտութեան մէջ կը թարթափէին, և փոխանակ լոյս ըլլալու, ինչպէս կը պատուիրէ Աւետարանը, մթութեան մէջ խորասուզուած՝ կը հմարտէին իրենց վրայ Քրիստոսի այն խօսքը, թէ

ս Կոյր կուրի յորժամ՝ առաջնորդէ, երկոքեան ի խօրխորաս  
անկանին ։ Չեմ ուզեր պատկերել հոս այն ուն և տիսուր  
աւերածոյ տեսարանը, զոր ամեն մարդ կարող է երես-  
կայել, երբ մտածէ թէ շատ զիւզերու և քաղաքներու մէջ  
եկեղեցիները փակուած էին, նոյն իսկ եպիսկոպոսաց հրա-  
մանով, ոչ Խորհուրդները կը մատակարարուէին, ոչ պա-  
տարագք կամ ժամերգութիւնը, և ոչ ուրիշ ո՛ և է եկե-  
ղեցական հանդէսք կամ պաշտամունք կը կատարուէին.  
սրբութիւնք անդամ արհամարհուած, փարտեայ մասնատու-  
փերու մէջ պահելով ամենասուրբ Խորհուրդը. քարոզները  
լուած, խստավանութիւնք դադրած, շատերը երեսուն՝ քա-  
ռասուն տարի եկեղեցւայ սեմը չէին կոխած, աղանդասար  
կախարդութեանց տուած իրենք զիրենք, սաստիկ սխու-  
թեամբ թշնամացած ընտանիք ընտանեաց հետ, և յաճախ  
նոյն իսկ մի և նոյն ընտանեաց անդամներն իրարու հետ  
գժտած. և կրօնական ատելութիւնն այնչափ տիրած և ար-  
մատացած սրտերուն մէջ, որ օտարը և այլադենը գերադաս  
կը համարէին քան իրենց համարիւն քրիստոնեայ եղբայրը.  
չէր խղճուեր առաթուր կոխել՝ անարզել խաչը, սրբազն  
պատկերները և ուրիշ սրբութիւններ, և փռանկի կամ հեր-  
ձուածողի խաչ և պատկեր բացատրութեան ներքեւ պա-  
տրուակելով և անմեղադիր ընելով այդպիսի անլուր ոճիր-  
ները և ուրիշ քրիստոնէական հոգւոյ անվայել իրողու-  
թիւնները, զորս զրիշն անդամ կը սոսկայ արտադրել :

Այդ անկարգութեանց առաջն առնըլու միակ միջոցն էր  
քարոզութիւն. նա պիտի տար կրօնից վսեմ գաղափարը,  
պիտի ներշնչէր կրօնից մաքւուր հոդին, պիտի վերցնէր աշ-  
քերէն այն քողը՝ որ կը ծածկէր ճշմարտութիւնը, պիտի  
տիրանար ըմբռաստ մաքերուն, պիտի կակզէր քարացած  
սրտերը, ընտանեաց և ընկերութեանց մէջ պիտի հաստատէր  
սէր և խոզազութիւն, կրքերը և մալութիւնները պիտի սան-  
ձէր, թշուառները և ցաւագարները պիտի սփոփէր, հարբ-  
տահարեալ անմեղութեան պաշտպան պիտի հանդիսանար,  
միով բանիւ, մարգկային սրտին վէրքերը պիտի բռւժէր:  
Աչա այն բարձր գաղափարականը՝ որուն կ'ուզէր հասնիլ  
Միսիթար առաքելութեան ձեռքով. այս պատճառու իւր  
հաստատած միաբանութեան իրը կհնառական պարտակա-

նութիւն մը, չորրորդ ուխտ մը դրաւ առաքելութիւնը : Ինքն արդէն, իւր քահանայութեան առաջին օրէն ընարեր էր այդ քարազշական ասպարէղը, անձնանուէր ջանքերով հարթելով անոր գժուարուտ ուղին : Պոլիս եղած ժամանակ, գեռ հիմը շրած միարանութեան, առօքելութեան կը զրկէր զաւառներուն մէջ իրեն առաջին աշակերաները . նոյնպէս Մեթոնի մէջ, գեռ հազիւ ափ մը հող ստացած, որուն վրայ պիտի կանգնէր մենաստանը, կ'երթային Մխիթարայ որդիքը սփակելու Աւետարանին լոյսը, զիտնուլով հանդերձ թէ ինչպիսի վշտեր և հարածանքներ կը սպասէին իրենց . նոյն ոճով կը շարունակէր նաև Վենետիկ ապաստանելէն վերջը, մինչև որ այլեալլ զրաբարտութեանց վրայ՝ Ս. Ժաղովոյն բացայաց հրամանը կ'արգելուր զայն : Այդ՝ մեծագոյն տագնասպն եղաւ Մխիթարայ սրտին, որուն միակ ձկտումն էր ազգին լուսաւորութիւնը : Կա փութաց Հոռվմ զնալ, վերցնելու այդ արգելը, բանալու գարձեալ առաքելութեան ու զիները, և յաջողութեամբ ետ կը զառնար 1718 տարւոյն վերջը, Ո. Ժաղովոյն վճիռն առած, որով ընդարձակ իշխանութիւնն էր տրուէր իրեն քարոզիչներ զրկելու ուր որ հարկ կը աենանէր : Յաջորդ տարւով հաստատապէս հիմն կը զրուէր Մխիթարան առաքելութեամբ, որ անընդհատ տեսեց և կը շարունակէ տեսել մինչև մեր օրերը, հակառակ այնշափ մեծամեծ դժուարութեանց և փոթորիկներու, որոնք չկրցան տապալել մեծ Աերաստացւոյն ձեռ քով կանգնած այդ կոթողը : Բայց առաքելութիւն ըսելով, չեմ հասկնար հաս սեղմ, անձուի մտքով, զուտ կրօնական ըմբը նումով . այդ՝ անոր արմատը կը կազմէր, բայց երկու զիխաւոր սատերն էին՝ զիտութիւն և կրթութիւն, ինչպէս կը տեսնուի անանց գործանէւութեան պատկերէն . Մխիթար և Մխիթարեանք՝ իրարմէ անբաժան ըմբռներ են միշտ՝ եկեղեցի և գպրոց :

Հազիւ թէ կը լսուէր Մխիթարայ հիմնարկութեան հաշակը հայրենի հողին վրայ, ամէն կողմերէ կը հասնէին դանդատանաց ձայներ, յուսահատ հառաջանքներ, տառապանաց և թշուառութեան արձագանքներ, խաւարի և վտանգներու մէջ դանդաշող ոգիներու թախանձներ, որոնք ի մի ձուլուելով՝ կը կազմէին բոլոր ազգին ամեն տեսակ ցաւերուն

մարմացումը, զիբալից և սպաւը հայրենեաց աղերսոց սառւերը, որ երևելով ատէս Միսիթարայ՝ կ'ըսէր. «Անցեալ ի Հայս՝ սպասցես մեղ»։ Այդ ձայներէն մի քանին լսենք մենք ալ, նոյն ժամանակի ողորմելի կացութեան աղօտ գործ զափար մ'ունենալու համար։

Տրապիզոնի քահանաք միաբան կը զրեն առ Միսիթար. «Զունինք բարի հովիւ մը, որ խրատէ զմեզ իրեն խռանկան խօսքերով և քարոզներով... անոր համար միացած մէնքս ալ, եկեղեցականք և իշխանք, կը խնդրենք որ զրելք մեղի ձեր վարդապետներէն մին, որ խոչեմ քարոզի՛ և խոստովանահայր ըլլայ» (1713 սեպտեմբեր 9)։ Եոյները ուրիշ անգամ կը զրէին գարձեալ առ Միսիթար. «Կը ժանուարնենք գերապատութեանդ մեր քաղաքին որպիսաւթիւնը, որովհետեւ մեծ խեղճաւթեան մէջ ենք հոգեսրի մասմբ. շաւնինք այնպիսի վարդապետ մը, որ մեր բոլոր հոգեսր պէտքերը հոգայ, իւր անձը ոչխարներուն վրայ դնէ, անոր համար շատ ժամանակ առանց խոստովանութեան մեացեր ենք, և օրէ օր կը սպասի մեր ջերմութիւնը և խօսպանացած երկիր մը կը զառնանք... ուստի, զիտնալով թէ ինչ մեծ ուշիս մեր ազգին վրայ, կը խնդրենք որ միաբաններէդ մէկը զրկես, որ մեր քաղաքը զայ քարոզէ և ոռոգանէ բարի և ձմարիտ քարոզութեամբ» (1726 յուլիո 3)։ Գաղատացի կաթողիկեայք հետեւեալ կերպով կը նկարագրեն իրենց վիճակը. «Վեր ներկայ կացութիւնն այսէ. շունինք առաջնորդ մը, չկայ մեր մէջ ուղղափառ քահանայ մը, որով զուրկ ենք ամէն հոգեսր մխիթարութենէ։ Հազիւ թէ երկու կամ երեք տարին անգամ կը պատահի, որ ուրիշ քաղաքներէն մի քանի ուղղափառ քարոզիշ կամ խոստովանահարք կու զան, տասնընհինգ կամ քան օր կը մնան, մեր հոգեսր պէտքերը կը լիցնեն, և յետոյ կ'երթան։ Եթէ կ'ուզէք մեր թիւը զիտնալ, զրեթէ երեք՝ շորս հարիւր անձինք ենք, ազնուական և պամիկ միասին առած։ Հինգ տարիէ ի վեր ուղղափառ քահանայի երես տեսած շենք, բայց զրով կամ խօսքով իմացանք, թէ պէտք չէ Հայոց (Լիճմիածնականաց) եկեղեցիները երթալ։ Հոս, քողաքիս մէջ, կաթոլիկ եկեղեցի շկայ. արդ ինչպէս և ո՛վ պիտի ընէ մեր պատկը և մկրտութիւնը, եթէ անոնց եկե-

զեցին չերթանք . պատարագ պիտի շահանենք կիրակէ և  
տօն օրերը , եթէ արդելուած է անոնց եկեղեցին երթաւ :  
Հակառակորդք զայրացեր են , ամէն առթի մէջ կը նախա-  
տեն և կը բամբասեն զմեզ , մեր երեսն ի վեր կանչելով ,  
թէ Հրեայք իրենց ժողովարտնը ունին , Տաճիկները՝ իրենց  
մզկիթները , Հայերը , Հոռոմները և Ֆռանկները՝ իրենց ե-  
կեղեցիները , բայց գուք ինչ ազգ էք և ինչ կրոնք , որ  
եկեղեցի մ'անգամ չունիք : Այսպէս խեղճութեան մէջ կը  
տուայտինք . ամէն կողմէ մահ , տանջանք , սպառնալիք ո  
(1717 յունիս 30) : Մի և նոյն տարին՝ այդ բողոքը և Հա-  
ռաչանքը կը լսենք նաև Պարսացիներէն . « Չունինք մխի-  
թարութիւն , չունինք ամենեւին սրտի հանդարտութիւն . ոչ  
պատարագ կը տեսնենք , ոչ խրատ կամ քարոզ կը լսենք ,  
և որ մանաւանդ ցաւալին է , տարիներէ ի վեր և ոչ կը  
խոստվանինք . շատերը քաղաքէ քաղաք կը թափառին խոս-  
տովանահայր մը գանելու , շատերն ալ զերեզման կը մտնեն  
մեղքերով ժանրարեւուած և խղճի խայթերով տանջուած :

Մերթ հինգ կամ վեց տարին անգամ մը , մերթ ևս աւելի  
ուշ , մէկ կամ երկու ուղղափառ քահանայք զիազուածով  
քաղաքս կու զան և կը խօստվանցնեն զմեզ . . . . Ժանտա-  
մանն ալ պակաս չէ մեր միջէն . կրնաք երեսակայել թէ  
ինչպիսի անմխիթար կետնք մը կը վարենք . Հակառակորդք  
կը յարձակին մեր վրայ , կը նեղեն , կը սոխպեն սպառնա-  
լեօք որ իրենց եկեղեցին երթանք , ապա թէ ոչ՝ դատաւո-  
րին ձեռքը կը մատնեն զմեզ . . . . Արդ , քիչ շատ տեղե-  
կութիւն մ'ունենալով մեր աւազելի վիճակին վրայ , կը  
ինըրենք արտասաւազին՝ որ մեզի քարոզիչներ եւ խօսու-  
վանահայրեր զրկէք » (1717 սեպտեմբեր 20) : Մի և նոյն  
ողբոց և ազերսի արձագանքները Վենետիկ կը հասնեին  
Կարնէն , Բերիայէն , Փարք Ասիօյ քաղաքներէն , Կոմիասու  
կողմերէն , և Եւրոպէի մէջ բնակող հայ գաղութներէն , ո-  
րոնց ուրիշ պատասխան չուներ Մխիթար՝ բայց զոյզ  
քարոզիչներ զրկել , անխօնչ և անձնանուէր մշակներ , ո-  
րոնք ամէն վտանգ ացք առած՝ կրօնից տարածման և ազգին  
լուսաւորութեան համար , առագաստաւոր նաւերով կը մեղ-  
քէին մրրկալից ժովեր , կը կորէին հետիւոտն լեռներ ու  
ձորեր , կ'անցնէին յորձանապայտ գետերէ և ուղղակառ

հանտպարհներէ, հալածանաց և պատերազմի հրաճայթ բացերու մէջ կը նետուէին, տարափոխիկ հիւանդութեանց, խոշտանգանաց և բանտարկութեանց կ'ենթարկէին իրենք զիրենք. և այդ բոլորը կ'ընէին՝ ազգին հոգեոր և մատոր վերածնութիւնը միայն նպատակ ունենալով: Այդ քարոզիչները կը պատրաստէր նոյն ինքն Միսիթար, իւր անձին կաղապարին վրայ ձուլելով, իրեն հոգւոյն կրակով վառելով և աննկուն սրտին արութեամբ ոգեսրելով զանոնք: Մերժամանակազրին հիւանելով, լսենք թէ ինչպէս կը պատրաստէր նոյն քարոզիչները: Օրերով առաջ սակայ սենեակը կը կանչէր զանոնք, կը խրատէր թէ ինչպէս պիտի վարուին աշխարհի մէջ ամէն աստիճանի և կարգի անձանց հետ, ինչ զգուշութիւններ պիտի ընեն աշխարհի վտանգներէն և ստանային խորամանկութիւններէն չխարուելու համար: Ռշափ փոյթ և հոգ պիտի ընեն՝ եռանգեամբ, արթնութեամբ և լու կատարելու իրենց պաշտօնը, Ասոււծոյ փառքը միայն և հոգւոց փրկութիւնը զիտելով: Կու տար դարձեալ զործնական հրահանգներ և կանոններ, անոնց համեմատ շարժելու իւրաքանչիւր պարագայից մէջ, զգաստութեամբ և զգուշութեամբ վարուելու աշխարհիկ մարդոց և մանաւանդ տարասեռ անձանց հետ, ձրիարար քարոզելու Ասոււծոյ խօսքը, օտարներու զործին մէջ չխանուելու, մանաւանդինչ սր ուղղակի կազ չունի իրենց առաքելական պաշտօնին հետ. կ'ուսուցանէր անոնց միջացները՝ անուղղաները գարձի բիրելու, խօսչելի ընելու մեջքը և մոլութիւնները, սիրելի ընելու առաքինութիւնը. կը յորդորէր՝ սիրով տանելու վշտաց, նեղութեանց, կարօսութեան, հալածանաց, և այլն: Կու տար իւրաքանչիւրին՝ իրեն առաքելութեան պաշտօնագիրը, յորում նշանակուած էր՝ յատուկ պատուէրներէ զուրս՝ անոնց քարոզչութեան սահմանը, թէ ինչ զաւանելու, քաղաքներու և զիւղերու մէջ պիտի երթան քարոզելու, մ՛րշափ ժամանակ պիտի մեան իւրաքանչիւր տեղեաց մէջ, և երբ վանք պիտի դանան: Անոր հետ կու տար նաև վարդապետական իշխանութեան վկայականը և Ա. Փաղովայն վճառյն պատճէնը, զոր Պոլսոյ Առաքելական Փօխոնորդին պիտի յուցնէին, երբոր արևելք կ'երթային: Այն օրը՝ սր վանքէն պիտի մեկնէին, բոլոր միարանք եկեղեցին

կը ժողվէին, և քարոզչաց ուղեորոթեան և գործոց յա-  
ջողութեան համար աղօթք կ'ընէին Համարակաց («Տէր ուղ-  
ղեա»), և այլն). երբ կ'աւարտէր աղօթքը, քարոզիչը ձունը  
կը դնէին Արբահօր տոջե, որ Համառաօս՝ բայց աղդու յար-  
դորակ մը կը խօսէր, կ'օրհնէր զանոնք՝ յանձնելով Աս-  
տաւայ և Ա. Կուսին խնամոց. յետոյ բոլոր միարանք կար-  
գաւ ուսահամրոյր կ'ընէին, և ուղարկելով զանոնք մինչեւ  
վանքին դուռը՝ հրաժեշտի ողջոյնը կու տային<sup>1</sup>: Խնկ երբ  
քարոզութենէ կը դառնային, բոլոր վանականք եկեղեցին  
կը հաւաքուէին, և զաս առ դաս գոհարանական երգը  
(«Զքեզ Աստուած»), և այլն) կ'երգէին, և Արբահայրը  
բոլոր միարանից ուրախութեան հանդէս մը կ'ընէր<sup>2</sup>:

Զատանալով Միսիթար այդ արուած ընդհանուր հրա-  
հանդներով, առանձին նամակներով ևս կը խրատէր, կը  
յարդորէր և կը սրտապնդէր զանոնք, նոյն խնկ կառւի գաշ-  
տին վրայ, նեղութեանց և ձախողութեանց առիթներուն  
մէջ. «Բոլոր տիեզերո շրջապատուած է նեղութեամբ և  
խաչերով, կը զրէր նաև, և ասոնք՝ ուկեհանք մ'են, ուսկից  
խոնարհ և աստուածատէր քրիստոնեան՝ առատ ուկի կը  
հոնէ Համբերութեամբ և բարի գործերով, և անով կը զնէ  
երինից արքայութիւնը: Գիրկնք ուրեմն, սիրելի, խոնար-  
հութեան փայտը, որուն ներքեւ զնելով Աստուածոյ սիրոյն  
կայծը, վառենք զայն Համբերութեան շնչով, և այսպէս  
պիտի հային և մաշուին նեղութիւնք, և մենք պիտի ժող-  
վենք մեր առաքինութեանց արդիւնքը... ուստի հոգ շը-  
նենք ամենեին՝ եթէ նախատուինք հակառակորդներէն կամ  
արհամարհուինք ծանօթներէն, եթէ մեզմէ աւելի փայրները  
կամ մեծերը դատեն կամ մերժեն զմեղ, հոգ շընենք՝ եթէ  
այսօր պարաւաեն զմեղ և զալլ բամբասեն, որովհետեւ ա-  
սոնք նոր կամ զարմանալու բաներ չեն, և մեզի յաւիսե-  
նական փարձուց առիթ պիտի ըլլան: Զանա Համբերու-  
թեամբ յաղթել հակառակորդաց, և երբէք մի վհասիր,  
երբ տեսնես զբեղ ձախողութեանց կամ նեղութեանց մէջ<sup>3</sup>:

1. Ժամանակագր. Միսիթ. ուխտին. Հռ. Ա. էջ 249-250, 410-1:

2. Այդ սովորութիւնք մեծաւ մասսամբ կը սրանուին մինչեւ զարդ:

3. Առ Հ. Պաւլոս Աթոնեան. 1721 շաբաթ 20:

Ոսկերերանի մը սրտին արժանաւոր խմասաներ, որոնք այն պիտի անձի մը զբչին տակ, — որուն ամբողջ կետնքն անընդհատ շատ շարք մ'եղած էր վշտակրութեանց, — ամենամեծ ուժ և ազգեցութիւն մը կ'առնենային։ Տեսնենք թէ ինչ հոգի էր՝ զոր կը տպաւորէր նա իւր քարոզիչներուն սրտին մէջ, ինչ ազգութիւն էր՝ զոր կու տար անոնց, այն ժամանակ միայն պիտի ըմբանենք թէ որչափ կ'անիբաւէին հոկաւակրութ, երբ կը զրաբարտէին զՄխիթար և անոր աշակերտները, իր արծաթաւէր, խոռվայոյզ և վետակար անձինք, «Զանա», կը զրէ, ամէն կերպով սիրով և համբերութեամբ վարուիլ ամեն չհաւ, մանաւանդ որբերուն, այրիներուն և ազգատներուն ամէն նեղութեանց մէջ օգնական եղիր։ Աթէ մէկն ուզէ ողորմութիւն տալ քեզի, յորդորէ զինքը որ աղքատներուն տայ, մի մտածեր՝ թէ վանքն այ պէտք ունի. վասնդի եթէ մենք աղքատները հոգանք, Աստուած այ մեր պէտքը կը հոգայ լիովին. և եթէ կարելի է, ոչ քու՝ այլ օտարին ձեռ քով տրուի այդ ողորմութիւնը<sup>1</sup>։ «Ինչպէս շատ անզամ ըսած եմ, գարձեալ կը յիշեցնեմ քեզի. թէ որչափ զիւզեր և աւաններ կան, որոնք Յիսուսի անունն անզամ արտորել չեն զիստեր։ Արդ, երբ կը հալածուիք քաղաքէ մը, զնացէք այն տեղերը, որպիցուցեք անոնց Աստուածոյ անունը . . . և երբ կը ծաղկեցնէք և կը պայծառացնէք այն տեղն ալ, և Հոն ձեզի արդեքը կը հասնի՝ որ չքարոզէք, անկէ ևս ելէք, զնացէք ուրիշ տեղ և Հոն ևս ծաղկեցուցեք Քրիստոսի հաւատքը։ Լաւ համազուեցէք այս բանիս, որ մեր պարտքն է աշխատիլ և ծաղկեցնել, իսկ տիրելը և իշխելը՝ ուրիշներուն իրաւունքն է<sup>2</sup>։ » «Զանա երկայնամութեամբ և խոչեմութեամբ կառավարել ժաղսվուրդը, և միշտ մտածէ Հոգւոց փրկութեան վրայ։ Աիրով համբերէ, եթէ մէկէ մը վիշտ կրես, և երրէք չվհատիս, եթէ մէկը արհամարէէ կամ եկարէ դքեզ, վասն զի այն ժամանակ միայն Քրիստոսի հշմարիտ աշակերտ կ'ըլլաս, երբ կը նախառախիս և նեղութիւն կը կրես, և ոչ թէ՝ երբ պատիւ և մեծարանք կ'ընդունիս ամէնքէն . . . Այն որը՝ որ վիշտ

1. Առ Հ. Յակովը Բաւզանքան. 1750 Դարս 8:

2. Առ Նոյն. 1721 Դարս 8:

մը կամ զրկոնք մը չես կրեր, չկարծես թէ մեծ վաստակ  
կամ շահ մ'ըրիր, ընդհակառակն կարսնցուցիր զայն, ինչ-  
պէս որ երկուսզօրն մը կարւստ կ'ընէ այն որը՝ երբ շկրնար  
հերկել կամ սերմանել<sup>1</sup> ։ Այս ոճով Մխիթարայ զրեթէ  
բոլոր թուղթերը, մանաւանդ իրեններուն զրածները, ամ-  
բողջ հիւսուածք մ'են գեղեցիկ խրանեցով մը, որնց մէջ  
կը յեզյեզէ յահախ, միշտ նոր եռանգով մը, չամբերու-  
թեան, սիրոյ, անյիշաշարութեան և այլ առաքինութեանց  
զրաւառիքը, և զանոնք զործադրելու կերպերը կ'ուսուցունէ :  
Բայց ինչ որ Մխիթարայ բնաւորութեան աշխի զարնող  
յատկանիշը կը կազմէ, իրեն ընշատուցութիւնն է, սաստիկ  
ատելութիւնն արծաթսիրութեան տիստին զէմ, զոր թէ և  
խօր կերպով քանդակած էր իրեններուն սրտին մէջ, այնու  
հանդերձ սուեպ կը կռանէ դարձեալ իրեն ազգու խօսքե-  
րով՝ անջնջէլի ընելու համար : Ուրիշ ու և է պատռէք մը  
տալու ժամանակ, քաղցրութիւնն մը կ'երեխ խօսից մէջ,  
զի՞սդութիւնն մը՝ պարագային համեմատ . բայց երբ խօսքը  
դրամի վրայ է, անօղոք՝ խիստ հբամայող մը կը դառնայ .  
այլ ևս այն մեզմ, ձկուն զրիշը չ' որ զիսէ մերթ ներո-  
զամիս ըլլալ մարդկուրէն թերութեանց, այլ սուր մ'է՝ որ  
կը փայլակէ, կը սպաննայ, կը կորէ : « Գիտցիր . կը զրէ  
իրեններէն մէկուն, որ եթէ մէկը չուրծառ ուզէ շինել մեր  
եկեղեցւյն համար, կամ մեծազին կամ դիւրագին նիւ-  
թէ, բնաւ թոյլ չտաս, վասն զի առժամն ովէաք չունինք  
և շինողներուն ալ մեծ բեռ և ծախք կ'ըլլայ<sup>2</sup> ։ » ։ Պրեցի,  
կ'ըսէ, որ ոչ մէկէն յիշատակ չընդունի վանդին համար,  
ոչ զգեստեղէն և ոչ արծաթեղէն, և եթէ մէկը սոզամու-  
թիւն ևս տայ միարանութեան համար, ովէաք է հրաժարիլ  
և շընդունիլ բնաւ . . . կրօնաւոր մը ինչպէս անարծաթ կ'ելնէ  
մենաստանէն, նոյնպէս ովէաք է անարծաթ դառնայ<sup>3</sup> ։  
« Խոկ մեր վանքին արուած սոզամութեանց և յիշատակ-  
ներուն համար, ինչպէս որ առաջ զրեցի, շտա զգուշութիւն  
ըրէ . . . և եթէ մէկը ինքնակամ յաժարի ու և է բան մը  
նուիրել միարանութեան, զու ջանա՛ անոր միաքը փոխել

1. Առ Հ. Յակովը Կարենցի - 1726 մայիս 5.

2. Առ Հ. Յակով Բաւզայեան - 1727 դեկտ. 12:

3. Առ Հ. Եղիշ Մարտիրոսեան - 1728 փետրար 8:

տալ և արգելու, ըսելով թէ մենք պէտք չունինք, լաւա-  
զոյն է որ այդ ընծային կամ յիշատակին զինը աղքատ-  
ներուն տրուի<sup>1</sup>։ Այսպիսի սկզբունքներով սնած և տա-  
զորուած անձինք, յայտնի է թէ՝ ոչ մէկ դժուարութեան  
առջև պիտի շընկրկէին, ամէն տեղ զրկարաց պիտի ըն-  
դունուէին, և իրենց հսկայական ճիգերով այն կորդ և խո-  
պանացած երկիրը՝ բերրի և ծաղկալից բուրաստուն մը պիտի  
դարձնէին. և ժողովուրդը, յետ անգամ մի անոնց առա-  
քինութեան փորձն առնըլու, պիտի կատուէր անոնց հետ,  
և Միսիթարեանը՝ ձևարիտ քարոզչի մը մտափապարը պիտի  
ըլլար։ Եետ այսպէս ընդհանուր կերպով նկատելու թէ  
ինչ հոգւով պատրաստուեցան Միսիթարեան նախկին քա-  
րոզիչները, անցնինք թռուցիկ ակնարկ մը տալ անոնց  
առաքելական արդիւնքներուն։

Միսիթարայ աշակերտներուն առաքելական գործօնէու-  
թինը զլիստորապէս երեք կամ չորս կեղրոններու մէջ  
կ'ամփոփուէր, ա. Պոլիս, թ. Գաւառները, գ. Տաւրոնն  
կամ Պերկրատ, և յետոյ ասոր փախանակ՝ Նայոց քա-  
րաքը, դ. Եղիսարեթուպոլիս կամ Պաշտոնով Տրանի-  
րուանիոյ մէջ։

Պոլիս, արեելքի գուռը և մայրաքաղաքը, մեր արեելքի  
բոլոր քարոզութեանց կեղրոննատեղին էր։ Հոն կ'երթային  
ուղղակի այն բոլոր քարոզիչք, որոնք գաւառներուն կամ  
հայրենի երկրին ու և է խորչի մը մէջ պիտի վարէին իրենց  
առաքելական պաշտօնը։ Այսպէս նաև ի գարձին, երբ  
իւրաքանչիւրին քարոզութեան սահմանուած ժամանակը կը  
բանար, Պոլիս կու զային՝ վանքէն և կամ հրահանգներն  
ընդունելու, և ըստ այնմ կամ կը մնային և կը շարու-  
նակէին իրենց գործը, և կամ կը գաւանային ի Վենետիկ։  
Պոլսոյ մէջ — զոնեա այն ժամանակները և Միսիթարեանց  
համար — քարոզելու և գործելու մեծ առզարէղ մը չկար,  
և եթէ կար՝ խթոս և փշտո էր, շատ զգուշալի, որովհետեւ  
կը վիստային հոն զանազան ազգի և դաւանանքի պատ-  
կանող եկեղեցականներ և քարոզիչներ, մեծ վառարան  
մ'էր՝ միշտ եռման մէջ, պատրաստ ամէն բուզ շփոթից

ողայթում մը յասա՞ծ բերելու, որով ամենամեծ խոհեմութիւն կը պահանջուէր այնտեղի գործիչներէն։ Միարանութեանս զրեանց զիմաւոր վաճառատեղին հօն էր, ուր կ'ուղ զուէին վաճառելի զրբերը, զօրս տեղւոյն գործակալը կը սիուէր գաւառաներուն մէջ։ Դարձեալ արևելքի մէջ գտնուաց քարոզիչներուն ուղղուած թուղթերը հօն կը զրկէր Արքահայրը, և գործակալն իւրաբանչիւրը իրենց աէրերուն ձեռքը կը հասցնէր. որով Պողիս ամէն անսակ առնչութեանց միութեան օդակն էր կամ կապը՝ ընդ մէջ վանաց և արևելքի։ Դարձեալ Պողոս գործակալին կը պատկանէր զրով ժանուարնել Արքահօր՝ ազգին մէջ պատահած նշանաւոր դէպքերը, մանաւանդ որոնք ուղղակի կամ անուղղակի կապ մ'ունէին միաբանութեան հետ. նոյնպէս անոր պաշտօնն էր՝ հօդ և փոյթ տանել վանք զրկուելիք տղայոց ընտրութեան մասին, Արքահօրէն ընդունած հրահանգներուն համեմատ։

Խնչպէս կ'իմանանք այն ժամանակի մեր քարոզչաց առ Միիթար ուղած թուղթերէն<sup>1</sup>, զրեթէ ամէն տարի կամ զոնէ երկու տարին անդամ մը թեթև և մերթ ժանր հայւանքներ կ'ելնէին Պողոս և գաւառներուն մէջ ընդդէմ կաթողիկեայ Հայոց։ 1723 թուականին թեթև հալածանք մը կը սկսի Պողոս մէջ, որ մեծ հետևանք մը չունենար. քիչ մը ժամանակ կը դադրի, կարծես կը մարի բոլորովին, և ահա երկու տարի վերջը գարձեալ կ'արծարծի։ Այդ առթիւ Միիթար կը զրէր իրեն բարեկամներէն մէկուն. Անտ ցաւեցանք լսելով որ գեռ կը աւել հալածանքը. արդ կը խնդրենք Աստուծմէ՝ որ վերցնէ ձեզմէ հալածանքը, խաղաղաթիւն տայ... և նեղութեանց մէջ հշմարտութեան սիրով միշտ գալար պահէ գձեզ, ինչպէս վարդը՝ փուշերուն մէջ<sup>2</sup>։ Նոյնպէս 1728 տարւոյն սուրբ շարթուն մէջ յանկարծ սասափիկ խռով և հալածանք մը կ'ելնէ կաթողիկեայց զէմ, այնպէս որ յետինքս ամբողջ ընտանեօք կը ստիպուին Լատինաց եկեղեցւոյն մէջ վակուած մեալ աւագ հինգչարթիէն սկսեալ մինչև Զատկին օրը<sup>3</sup>: Քանի մը տարի յետոյ,

1. Թուղթ Հ. Պատրոսի առ Միիթար Արքայ. 1723 ժորա 15:

2. Առ Տիրոցու Գէորգ. 1725 յունիս 8:

3. Թուղթ Հ. Պատրոսի առ Միիթար Արքայ. 1728 տորիւ:

1732ին գերջերը, դարձեալ կ'արծարծի հայածանը, կը ցրուի հայ կաթողիկեայց մէկ մասը, մերօնք կը պահուըտին բարեկամի մը տունը և շաբաթներով կը փակուին ներսը<sup>1</sup>: Առկայն այդ հալածանկներն ուրիշ հետեւանք չեն ունենար, բայց աւելի ևս զրգուել զկաթողիկեայս, որոնք տաղտկացած իրենց երերեալ դիրքէն, որով մէկ կողմէն կը խղճէին աղային եկեղեցիները երթալ, միւս կողմէն՝ եթէ չերթային՝ աբորի կամ թիափարութեան ժամանդ կար դիմացնին, կ'ու զեն վերջապէս զատ՝ որիշ հասարակութիւն մը կազմել, իրենց յատուկ զլխով և եկեղեցիներով, աղասաօրէն պաշտելու համար կաթողիկէ իրանքը: Արդէն տարիներ առաջ (1714-5) փորձեր էին զայդ, և անյաջող ելք մ'ունեցեր էր. այս անգամ աւելի փորձ և աւելի պատրաստուած կը թուէին: Միսիթար կ'իմանայ զայդ, և տեղեակ՝ ազգին և ժամանակին հանդամանաց, զգուշաւոր և անձնապահ դիրք մը կը բանէ, ինչպէս առաջ, և կը զրէ իրեններուն չմինչլ այդպիսի խնդրոց մէջ, ովասն զի ևս այդ հանապարհին ելքը յաջող շեմ տեսներ, կ'ըսէ, զես այդ բանին ժամանակը հասած չէ. իմ կարծիքովս՝ այդ զործը ոչ միայն մեր կաթողիկէ եղբարց փափաքած խաղաղութիւնը պիտի շտայ, այլ մեծագոյն խառնութեանց առիթ պիտի տայ<sup>2</sup>։ Եւ իրօք, ամիս մը շանցած կը կատարուէր Միսիթարայ գուշակութիւնը. մեծ փոթորիկ մը յառաջ կու գայ, ցիրուցան կ'ընէ զործին ամենէն աւելի հանդուն շահատակները, միաբանութեանս անձինք ևս կը բանտուին դարձեալ ամիսներով տուններուն մէջ: Այդ կրակներուն և կենաց ամենօրեայ վանդներուն մէջ էր՝ որ կը զործէին Միսիթարայ աշակերտք, շունենալով ոչ մէկ երկրաւոր ակնկալիք կամ քաջալերիշ բան մը. այնու հանդերձ տարի չէր անցներ, որ Վենետիկէն յարենիս և փոխադարձարար՝ քարոզիչներու մի քանի երթենկութիւնք չըլլային: Ա. Պաղարու կզզեկին միաբաններուն մէջ վաղուց արդէն սկսեր էր զար-

1. Թեուղթ Միսիթարայ Արքայի առ Հայք Յարութիւն խողէդ. 1735 յանուար 7:

2. Առ Հ. Գևորգու. 1735 օգոստոս 6: Առ Վ. Արքայի առքեալիուուս. 1735 սեպտեմբեր 5:

գանալու մրցանքը առաքինութեան և զիտութեան մէջ, պատրաստելու իրենք զիրենք առաքելական մեծ զործին, որոնք կազմ և զօտեպինդ կեցեր էին՝ լոկ ակնարկով մը՝ ամենէն աւելի փշալից ասպարէ զներան մէջ նետուելու.

Գաւառներուն մէջ ալ քիչ շատ նոյն հալածանքները կային, թշուառութիւնն ամենուրեք կը տիրէր, բայց աշխատելու ընդարձակ ասպարէզ կար, « Հունձք բազում էին և մշակուական », հետեւաբար հոն առաքելութիւնն աւելի արդասաւոր եղաւ: Միսիթարոյ քարոզիչները, կրօնից և լուսաւորութեան առաքեալները, Պոլուն կը զատուէին իրարմէ, և որոշ ուղեգծով մը — որպէս զի մի և նոյն աւելի շերթային քարոզելու — կ'ուզզէին իրենց քայլերը զէզ ի հայաբնակ զիւզերը և քաղաքները, Բիւթանիայէն սկսեալ մինչև Միջագետաց կողմերը, և անկէ — Փոքր և Մեծ Հայք զրկելով — մինչև Կովկասու լեռնաշղթան: Հալածանաց և մատնութեանց վախէն, որոնք ընդհանրապէս կաթողիկէ քահանայից զէմ ուղղուած էին, սոմիպուած էին մեր քարոզիչներն այլակերպիլ, վաճառականի կամ ուրիշ արուեստաւորաց զգեստներուն մէջ ծպտիլ ուղեւորութեանց ժամանակ<sup>1</sup>: Քաղաք մը կամ զիւզ մը հասնելով հազիւթէ կը յայտնէին իրենք զիրենք, ահազին բազմութիւն մը կը վազէր՝ խրատ և քարոզ լսելու և Ա. Խորհուրդներն ընդունելու, որոնցմէ գուրի մնացեր էին տարիներով: Անոնց եռանգուն և հոգելից խօսքերն որչափ անզեղներ կը դարձընեն, քանիներուն միտքը կը լուսաւորեն: Հ. Եղիա վարդապետ, իւր առաջին քարոզութեան ժամանակ ի Տրաողիզն (1704ին), մեծ մեղաւորներու գարձի պատճառ կ'ըլլայ, և ժողովարդը՝ որ յառաջն չեր ուզեր զինքը քաղաքին մէջ ընդունիլ՝ յետոյ չեր ձզեր որ երթայ, անոր հազեշահ քարոզութեանց հաշակն առած ըլլալով<sup>2</sup>: Մի և նոյն արդիւնքները կ'ունենային նաև Հ. Յովհաննէս վարդապետին քարոզութիւնք Պուրատ, Մանիստա և Թիւտատիր (Ախ-Հիսար) քաղաքներուն մէջ, որ յառաջարները կը բժշկեր աղօթքով, զեղծումները և նախապաշարումները բնուջինջ կ'ընէր<sup>3</sup>:

1. Թիւդթ Միսիթարոյ առ Հ. Առեփանս Պետրոսին: 1727 մայիս 5:

2. Ժամանակագրութիւն Միսիթ: ուխտին: Հա: Ա: Էջ 29-50, 54-55:

3. Անդ: 50, 55-56:

Հ. Ամսուէլ, Եւդոկիայ մէջ, աղքատները և սկարները կը խնամէր հայրաբարար, տղաքը կը գտատիարակեր, և ամենուն՝ անուշ, սփոփիչ կամ կրթիչ խօսք մ'ունէր՝ իրենց տատիւնին և հասակին համեմատ։ Խակ Հ. Ստեփանոս՝ աղօթքով հիւանդները կ'առողջացնէր, իւր կենաց և անմեղութեան գէմ լարուած թակարդներէն անվիսա կը մեար, և խաչակընքելով զետակուր ըլլալէ կ'աղատէր<sup>1</sup>։ Հ. Յակովը Կարնեցի, տաւաջին քարոզով կը կակդէր քարացած սրտերը, բանոլ կու տար հարուստներուն գանձը՝ աղքատներուն առջև, և անգամալոյց մը կ'առողջացնէր Ո. Խորհրդոյն զօրութեամբ. այնուհետեւ հիւանդները խուռնընթաց անոր կը վաղէին բժշկուելու համար, և յոյսերնին ունայն շէր ելներ. աղօթքէն զատ՝ զիտէր նա բնական գեղերով ևս բուժել սովորական հիւանդութիւնները<sup>2</sup>.

Այնչափ հմուտ էին անոնք աստուածաբանական գիտութեանց, որ քաղմամթիւ հանդիսականներու առջև կը ճառէին կրօնական ամենափափուկ խնդրոց վրայ, կը վիճաբանէին բարձրագոյն վարժարաններու մէջ ուսած նշանաւոր աստուածաբաններուն հետ, և երբէք ամօթով շէին մեար, Միսիթարեայ երիտասարդ միաբաններէն մին, Հ. Գարրիէլ Լարնեցի, եռանդուն անձ մը և հմուտ կրօնական խնդրոց, Պոլիս գտնուած ժամանակ վիճաբաննութեան կը բռնուի Զահկեցի Հ. Գաւիթ անունով քահանայի մը հետ, որ կը պնդէր թէ Հայոց պատարազը՝ ձմարիս պատարագ շէ, անոնց տուած մկրտութիւնը վաւերական շէ, և այլն։ Հ. Գարրիէլ՝ անոր մօլար կարծիքը հերքելու համար՝ այնպիսի զօրաւոր փաստեր և վկայութիւններ մէջ կը բերէ, որ հակառակորդն<sup>3</sup> ափիրերան կ'ըլլայ և հանդիսակիցք կը ծափահարեն Միսիթարեան վարդապետին տարած յաղթութիւնը։ Եւ սակայն այսպիսի անձնանուելը, եռանդուն, բարերար և ուսեալ քարողիչներ ամէն ահղ սիրալիք ընդունելութիւն չէին գտներ, երբեմբ զուրս կը վատարուէին, երբեմ

1. Ժամանակագր. 331-2. 337-8.

2. Անդ. Էջ 340-2.

3. Անդ. Հ. Գաւիթ Հանկեցին, տարիներ յետոյ վախէլով բոլորովին իւր չէին կարծիքներ և պազափառները. Եւրոպէ կ'անցելի. և նոյն իսկ վիճակից զալով կը ծառաթանոյ Արքանոր և միաբանութեան բարեկամ կ'ըլլայ։

ալ անսոււաղ և անայցելու կը մնային ժողովրդէն՝ որպէս զի թողուն երթան։ Հ. Թովմաս, Տրապիզոն քաղաքին մէջ հոչակուելով իրեն սրբութեամբ և քարոզներով, բոլոր ժողովը դեռան սիրու իրեն զրաւեց։ Տեղույն առաջնորդը նախանձելով անոր վրայ, սպասնալեած արգիլեց ժողովրդեան՝ որ վարդապետին կերակուր շտանին, տուներնին շընդունին զինքը, որպէս զի ստիպուի երթալ<sup>1</sup>։ Անոնց ճանապարհներուն վրայ, տուներուն մէջ, ամէն կողմ կը դարանէին թշնամիք։ Հ. Գարրիել հակառակորդաց ձեռքէն ազատելու համար, ստիպուեցաւ երկար ժամանակ նեղ, մթին և խոնաւ աեղեաց մէջ պահուըտիլ<sup>2</sup>։ Խոկ Հ. Փիլիպպոս, զրեթէ հրաշքով մը, հազիւ ազատեցաւ իրեն խնդրակներուն ձեռքէն։ Երբ զիշեր ժամանակ կը փախչէր Եւգորիայէն դէպ ի Սերաստիա, մթութենէն առաջնորդը սիսալելով փոխանակ արահետ ճանապարհին՝ անհարթ և զժուարագնաց ուղիէ մը կը տանէր զինքը։ Ճիշդ նոյն ժամուն խնդրակները կը փնտուէին զինքը արահետ ճանապարհին վրայ, և չգտնելով ետ կը դառնային<sup>3</sup>։ Բայց քան զամէնն աւելի, վիշտ, նեղութիւն և հալածանք կրեց վերսիշեալ Հ. Թովմաս վարդապետը։ Տէրէնտէ քաղաքին մէջ ազգայինք մատնեցին զինքը այլազգի դատաւորին ձեռքը, որ բանտել և շղթայիլ տուաւ անոր ոտքերը և պարանոցը, և օրերով անօթի և ծարաւ մնաց զնդանին մէջ։ և երբ ոչ մէկ տեղէ ազատութեան յօյս մը չունէր, դատաւորին օգնականին գութը շարժելով, դրամ պահանջեց վարդապետէն, և երկու սոկի ստանալով ազատեց զանիկայ<sup>4</sup>։ Այլք իրենց շտփազունց անձնանութիւութեան զոհ կ'երթային, ինչպէս Հ. Գարրիել, որ կարնոյ մէջ զտնուած ժամանակ ժանտափատ հիւանդութիւնը ճարակելով, կը վազէր հիւանդաց քով, կը միսիթարէր, Ո. Խորհուրդները կը մատակարէր անոնց, և վերջապէս ինքն ալ բոնուելով նոյն հիւանդութենէն, քաջութեամբ կը կնքէր իւր կեանքը, և այնքան զեղեցիկ յօյսեր կը տանէր իւր հետ զերեզմանին մէջ<sup>5</sup>։ Չեմ ուղեր յիշել հսու այդպիսի առաքինի անձանց

1. Ժառանիսկադր. էլ 267։

2. Անդ. էլ 323-4։

3. Անդ. էլ 238-261։

4. Անդ. էլ 272-3։

5. Անդ. էլ 326-7։

դէմ եղած անհիմն և անտեղի զրպարտութիւնները, որոնք կրցան երբեմն նոյն իսկ մահացու հարուածներ տալ, բայց ընդհանրապէս անոնց անունը և արդիւնքները աւելի ևս պայծառացնելու կը ծառայէին. վասն զի մէկ կամ երկու աննշան անձանց զրպարտութեան փոխարէն՝ հարիւրաւորներ և հազարաւորներ, նոյն իսկ եպիսկոպոսներ և հեղինակաւոր անձինք, կը բարձրացնէին իրենց ձայնը՝ պաշտպան հանդիսանալու անոնց անմեղութեան և հռչակելու այնշափ արդիւնքները: Չուզելով տաղառուկ պատճառել ընթերցողներու՝ այնչափ բարի վկայութեանց և զրուատեաց տարափով, անոնցմէ մի քանին միայն՝ մէջ կը բերեմ, պարզապէս ցուցնելու համար՝ թէ ինչ համարում կար անոնց վրայ:

Պոլսոյ կաթողիկեայց զիխաւորք կը զրեն առ Խաչատուր վարդապետ, թէ «Հ. Եղիա և Հ. Գէորգ վարդապետները ընտիր անձինք են, բաւական զիտուն, հմուտաստուածաբանք, ջատագովք ուզգափառ և նշմարիտ կրօնից, ըմբերանողք մոլորեալներուն, ուզզիշք խենէշ և անկարգ վարք ունեցողներուն. ժիրք սուրբ գործերուն և հոգիները շահելուն մէջ. ասոնց հասարակութեան անձինքը ուր որ գնացեր են, միշտ օգտակար եղած են և ամենէն ալ միշտ բարի վկայութիւն լսած ենք<sup>1</sup>»: Առյնպէս Եւղոկիացի ուզգափառք, որոնք Մխիթարայ և անոր աշակերտաց արդիւնքները վայելեր են, կը վկայեն թէ «Աստուած այցելեց մեր ազգին սոյն հասարակութեան ձեռքով, և իւրաքանչիւր քաղաքներէն ընտրեց այսպիսի բարեսէր անձինքներ և միացուց, որպէսզի միաշունչ և միակամ աշխատին մեր ազգին հոգևոր պայծառութեան համար. որոնք ոչ միայն քարոզութեամբ, այլ և իրենց աստուածահաճոյ վարքով արեւու պէս փայլեցան մեր մէջ... կը վկայենք դարձեալ, որ երր Հ. Գէորգ, Հ. Եղիա, Հ. Յովհաննէս և Հ. Մանուկ վարդապետները մեր քաղաքին մէջ կը քարոզէին, որէ օր կը նուազէր հակառակութիւնը և կ'աճէր եղբայրական սէրը<sup>2</sup>», և այլն: Քազդէացւոց պատրիարքը Յովսէփ Բ կը զբէր առ Մխիթար Աբբայ, թէ «Ասկաւ առզերով»

1. Գրուած ի կ. Պոլիս. 1717 Հոկտ. 20ին:

2. Գրուած Եւղոկիացն. 1717 Հունիս 1ին:

կը յայտնեմ այն մեծ համարումը և յարգութիւնը՝ զոր ունիմ առ ձեզ։ Չեր զրկած քարոզիչն եկաւ այս կողմերը, և շատ մեծ պառզներ առաջ բերաւ Քրիստոսի այցւոյն մէջ։ ուստի, կ'աղաչեմ, շմոռնաք քարոզիչներ զրկեր այս կողմերը նման առաջնոյն, որ Աստուծոյ շնորհքով շատերը լուսաւուրեց, որոնք մեղաց խաւարին մէջ կը ննջէին... ևս աւելի ուրախ եմ որ հոգինոր ուսումնարան մը հիմներ էք, ուսկից կը յուսամ թէ մեծամեծ և սուրբ անձինքներ պիտի ելնեն<sup>1</sup>», և այն։ Մի և նոյն հոգւով կը զրէր նաև Մերտէնի ստաքելական քարոզիչ Թասրաս վարդապետը, որ յետ պատմելու Հ. Գէորգին քարոզութիւնը և արդիւնքները յիշեալ քաղաքին մէջ, կ'աւելցնէ. « Յատ ուրախացայ բնելով թէ այդ կողմերը (ի Մոռէա) փոխազրուեր էք՝ միարանութիւն մը և ուսումնարան մը հիմնելու համար, որպէս զի կրթէք և ուսուցանէք և ընտիր անձինքներ հասցնէք ազգերնուս, կաթողիկէ հաւատքը սարածելու և քարոզելու համար<sup>2</sup>», և այն։ Յետ այսպէս թուուցիկ տեսութիւն մընելու արևելքի ստաքելութեանց վրայ, արդ զառնանք յարևմուտու տեսնելու թէ Միսիթարոյ միարանութիւնը հօն ևս ի՞նչ արդիւնքներ ունեցաւ։

Մինչդեռ արեւելքի մէջ, ստաքելութեան յատուկ տեղ մը շունենալով, Միսիթարեան քարոզիչները ստիպուած էին չրջիլ քաղաքէ քաղաք՝ ուր որ պէտքը կը պահանջէր, և ամեն տեղ կ'երթային քարոզելու, սերմաննելու, ուրիշներուն թողարկ հնձել անոնց արդիւնքը, յարևմուտու բոլորովին տարրեր էր զրութիւնը։ Հաս՝ բուն իսկ Ուխտիս յանձնուեցան երկու երեք քաղաքներ, որոնք քրիստոնեայ պետութեան հպատակ ըլլալով, խոռվից և հալածանաց ասիթ շեար, ուստի և հանդարտորէն զործեցին յաջորդարար մեր քարոզիչները։ Այդ քաղաքներն էին Տաւրոնան, որ այժմ Պելրաս կը կոչուի, Աերբիոյ մայրաքաղաքը. յետոյ Նայսոց՝ Հունգարիոյ մէջ, և երրորդ՝ Պաշտալով կամ Եղիսաբեթուպոլիս ի Տրանսիլվանիա։

Տաւրոնան կամ Պելրաս, երկու դրացի և իրարու սիերիմ պետութեանց սոհմանածայրին վրայ շինուած, անդադար

1. Առ Միսիթար Աբբայ. 1706 մարտ 22:

2. Առ Միսիթ. Աբբայ. 1706 յունիսը 24:

յարձակումներու և աւարառութեանց ենթակայ , 1718ին Աւարիացոց ձեռքը անցաւ՝ շնորհիւ Ատվոյացի Եւզինէսու իշխանին քաջութեան : Նոյն քողաքին մէջ բաւական թուով հայեր կային . Ա . Աթոռն անոնց առաջնորդ զրկեց երկու հայ վարդապետներ , Ատեփանոս և Բարիթուղիմէսու անունով , որոնցմէ զօհ Հըլլալով ժողովուրդը , Ա . Աթոռը ստիպուեցաւ փախել զանոնք , և զիմեց առ Կարնեցի Խաչատուր վարդապետ , հարցնելով թէ Միսիթար Արքայ ուներ արդեօք առաքելութեան յարմար անձ մը : Միսիթար առաջարկեց Հ . Եղիան , որ երկարամենայ փորձով՝ վարժ էր առաքելութեան . Ա . Աթոռը կոնդակով մը՝ Պեղկրատի Հայոց առաքելական քարոզիչ անուանեց Հ . Եղիան , Նշանակելով անոր իշխանութեան իրաւունքները և սահմանները : Մեկնեցաւ Հ . Եղիա գէպ ի Պեղկրատ , 1732ին , և անելոյն փոքրաթիւ հայ հաստրակութիւնը սիրով ընդունեցաւ իրեն նոր առաջնորդը : Ազգայինք փոքր եկեղեցի մ'ունէին , հնացած , կէս աւերակ , և անոր կից նոյնպէս փոքր և խարխուլ տուն մը՝ առաջնորդին ընակութեան համար : Հ . Եղիա վարդապետ հսու ալ մի և նոյն առաքելական հազին և հայրական սիրոտը ցըցուց ժողովրդեան , ինչպէս ուրիշ տեղեր . ինքն էր իրաւարար անոնց մէջ ծագած վէճերուն և կորուներուն , և ամէն մարդ զլուխ կը ծաէր վարդապետին տուած վճառյն , այնպէս որ դատաւորներուն ընելիք զործ չէր մնար : Ոչ միայն անոնց հոգեարը կը հոգար , այլ և կենցաղավարութեան կանոնները կ'ուսուցանէր , որով ազգայինք աւելի բարեկիրթ կ'երևէին քան օտարները : Կիւրակէ և առն օրերուն կանոնաւոր կերպով կը կատարուէին ժամական հանգէստ , այնպէս որ օտարազգի քրիստոնեայք անզամ Հայոց եկեղեցին կը վագէին : Առաջնորդին մասնաւոր ուշազրութեան և զթոյ առարկայ էին աղքատները , որոնց միշտ մաս մը կը հանէր իւր աղքատիկ կերակուրէն և զզեստներէն : Ամէն մարդ անոր կը տանէր իրեն հիւանդները , անոր աղօթքներէն և կարդացած աւետարաններէն աւելի օգուտ տեսնելով քան բժշկաց զեղերէն : Տեղոյն հարուստները առատ նուէրներ կու տային եկեղեցւոյ և աղքատներուն պիտոյից համար , որոնցմէ կը՝ հոգար զանոնք : Արեք տարիէն աւելի մնաց հոն , և հասակին ժանրութիւնը ստի-


պելով զինքը վանք դառնալ, անոր տեղ զրկուեցաւ Հ. Յակովը Բուզայեան, 1736ին, որ իւր արդիւնալիր առաքելութեան երկրորդ տարին չլրացուցած, անրուժելի հիւանդութեամբ մը բռնուիլով, մեռաւ Պելիկրատի մէջ ամենայն հոգերով պատրաստութեամբ, և տեղույն ազգային եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ<sup>1</sup>: Անոր յաջորդեց Հ. Միքայէլ, որ հազիւ տարի մը մեալով, հիւանդութեան պատճառաւ ստիպուեցաւ գառնալ ի Վենետիկ, և Ո. Աթոռոյն հրամանաւ Պելիկրատ զրկուեցաւ Հ. Յակոր Կարնեցին, 1739ի յունիսին: Այս ժամանակներս Սամանցոց և Աւտորիացոց մէջ պատերազմ կար. Պելիկրատ ցամաքէն պաշտուած էր սամանցի գորքերէն, և միայն գետին կողմէն կարելի էր մտնել քաղաքին մէջ<sup>2</sup>: Հ. Յակովը, կենաց յայտնի վտանգ տեսնելով հանդերձ, — որովհետեւ Սամանցիք չարունակ կը սամրակոծէին քաղաքը, — սիրա ըրաւ ներս մտնել և սկսիլ իւր պաշտօնը: Աւտորիացիք յաղթուելով հաշտութիւն խօսեցան, և Պելիկրատ անձնատուր եղաւ թշնամւոյն ձեռքը: Քրիստոնեայ բնակիչք մեծաւ մասամբ ուրիշ տեղեր զաղթեցին, որոնց հետ նաև հայ բնակիչք իրենց առաջնորդով, և զնացին Մաճասաց Նայուց<sup>3</sup> քաղաքին մէջ հաստատուեցան: Հ. Յակովը հինգ տարի առաջնորդութիւն ըրաւ, ըստ ամենայնի ծաղկեցնելով նորահաստատ առափելութիւնը, Ո. Լուսուարչի անուամբ եկեղեցի մը, տղայոց դպրոց մը և առաջնորդարան մը շինելով: Ազգատ ժողովրդեան վրայ շծանրանալու համար, ստիպուեցաւ անձամբ Վիեննա երթալ և Մարիամ-Թերեզա կայուրուհւոյն առատաձեռնութեան դիմեց շինութեանց ծախուց համար: Այդ առաքելութիւնը, որ տարուէ տարի ծաղկեցաւ իրեն անխոնջ առաջնորդաց հաներավ, մինչև անցած դարուն կէսերը միարանութեանս ձեռքն էր: բայց 18/48ին կործ անելով վանատունը և

1. Ժամանեակադր. էջ 367-9, 394:

2. Պելիկրատ քաղաքը շինուած է Աւայիք և Գանուրի գետախառնութերին վրայ:

3. Նայուց (Neusatz) գերհաներէն կը նշանակէ Նորուանի, Նորվիյա (քաղաք), և մասնակի կը կուլուք Ույլուկու: Դանուը գետին հիւառակողմը շինուած, Պելիկրատամբ կամ Աւայիքին կուլուած անտրիկ ամբոցին դիմաց:

Կամացու Միջնարեալ (կ պաշտոն)։





եկեղեցին, Արամասաց սպառամբութեան ժամանակ, և զրեթէ չմարտի ազգային ընտանիք, միաբանութիւնս ստիպուեցաւ թողուլ այդ առաքելութիւնը:

Տրանսիլվանիայ<sup>1</sup> հայ զաղթականութեան երկու զիխաւոր կեղաններն էին, Կեռլա<sup>2</sup>, որ Հայացաղաց կը կոչուէր, և Պաշֆալով (Էպէշֆոլզ) կամ Եղիսարեթուալովիս<sup>3</sup>: Յամին 1719, Ս. Ամոռը իր այցելու զրկելով այն կողմերը Կարնեցի Խաչատուր վարդապետը, Կեռլայի հայ իշխանաց առջև շատ գովեստիւք խօսեցաւ Միսիթար Արքայի նորահաստատմիարանութեան վրայ: Նոյն տարւոյն մէջ, 1719 սեպտեմբեր 28ին, քաղաքին քահանուք և իշխանք, հանդերձ քաղաքապետով, աղաւոնաց թռչթ մը զրեցին առ Արքահայրը, խնդրելով երկու քարօնիչ զրկել իրենց: Յետազայտարին (1720ին) Եղուկիհացի Յովեան եպիսկոպոսը, որ իրեն հիւր՝ Ս. Պատրու վանքին մէջ կը բնակէր, այն կողմերը զնաց: Միսիթար անոր ընկեր տուաւ Հ. Մանուէլ վարդապետը, որ երեք տարի հան մնաց, հոգևորին հաւատար զարգացնելով անոնց մէջ նաև Հայերէն լեզուին ուսումը: Մինչև 1742 տարին ծաղկեցուցին այն առաքելութիւնը փոփոխակի Հ. Մանուէլ, Հ. Թէոդորոս և ուրիշ վարդապետք: Գրեթէ նոյն ժամանակները, 1743ին, հարուստ և ազնուական Պաշֆալովցի հայ մը, Աղաւոյ Պետ-

1. Մահաց Էւրել կը կունեալ այս նահանջը՝ որ կը նշանակէ բարեկարգութեանը:

2. Այս քաղաքը շինեցին Հայք 1705 տարւոյն Շամուշ զետին քաջ. մեծամասնութեան հայ ևն քաղիկը, որոնց վահանականութեամբ կը պարտապին: Քաղաքին կառավարութիւնը հայ իշխանաց ձեռքն է: Քանի երեսուն տարի կայ որ հայութեան նորին արծաթեցաւ անոնց մէջ, մինչդեռ յառաջին բոլորովին շարած էր. Ներկայիս՝ նոն թիրթ մ'ալ կը հրատարակուի Արշակունյաց անուանը, մահաներէն լեզուով, բայց ներթին բավանցակութիւնը զրեթէ տառեց բացառաթիւն ազգային նիւթերու վրայ է: Թիրթին խմբապիրն է՝ Պ. Առանաւասուր Խաչատրեան:

3. Պահանա զետին քաջ չինուած, զուարձաւի նովար մը մէջ և դարձագեց բրութերով ցընազառուած: Քաղաքին կառավարութիւնը նոյնպէս Հայերուն ձեռքն է: Բնակչուց մեծամասնութիւնը հայ է, արուեստով վահանականը ընկանուազէն: Հինգ հեկդացի ունին, որոնցմէ մէկն է մերինը: Ս. Անուան Անապատականին նուիրուած: Միաբանութիւնը նոն զանուառու մ'ալ ունի, ուր միշտ երկու՝ երեք վարչապետ կը բնակէին, աշխատելով ազգայիններուն նոգեր և ուսումնական զարգացման համար:


բռու Գորոցեան, որ նոյն տարին քաղաքին Պիհրովն (իշխան) էր, առևտրական գործերով վենետիկ դալով. Ա. Ղազար այցելութեան եկաւ Արբահօր, որուն արգէն ժանօթ և սերտ բարեկամ էր: Երբ հայրենիք պիտի դառնար, խնդրեց Արբահօրէն որ իրեն հետ Պաշֆալով քարոզութեան տանի չ. Ղազարոսը<sup>1</sup>, որ իրենց բնիկ քաղաքացին էր: Զիջաւ Միսիթար անոր խնդրանաց, և չ. Ղազարոսը քարոզութեան եկան զրկեց իւր ծննդեան քաղաքը, որ բացառութեամբ մը Աւտորանի խօսքին, իրեն հայրենի գտւառին մէջ մեծ պատիւ և ընդունելութիւն գտաւ. ինքն ալ, չնայելով իւր երիտասարդ հասակին, հայրարար կը հոգար ժողովրդեան ամէն պէտքը, և կը վառէր ամենուն սրախն մէջ առարինութեան և զիտութեան ուշըը<sup>2</sup>: Յիշեալ Աղաջայ Պետրոսը, որ Աւտորիս մեծ բարերարներէն մին եղած է, ուրիշ շատ ողորմութիւններէ և նուէրներէ զտաւ, մեռներէն առաջ միտրոնու թեանս կտակեց իւր մեծ տունը, որ քաղաքին հրապարակին միայ կը գտնուէր, որպէս զի գտնափուն և եկեղեցի շինուի, ինչպէս որ կտառարուեցաւ յետոյ կտակողին կտմքին համեմատ: Այդ առաքելութիւնը կը չարունեկուի մինչև այսօրս, ուր կը գտնուի ներկայապէս միարանութեան անձինքներէն մին, և յառաջ կը վարէ իրեն նուխորդաց սկսած դորձը:

Այ կնքենք այսու Միսիթարեան առաքելութեանց զլուխը, այլոց թողարկութիւնը մասնաւոկ անբռնեհի և մասնացու հիւանդաննեամբ մը բռնուելով. երբ բոլոր բժիշկները յաւառնատեր էին, միայն Ա. Ղազարդութեան ակնյայտնի հրաշբով մը՝ ակնթարթի մէջ կտառարեալ կերպով առաջնացաւ, և այնուհետեւ երբէք նոյն հիւանդանները չկրկն ահցաւ:

2. Անդ - Էջ 422-5:

1. Առաջինու կոչուած նախ քան իւր կրօնառոքէլը, պատահ նեկութեան մամանուկ անբռնեհի և մասնացու հիւանդաննեամբ մը բռնուելով. երբ բոլոր բժիշկները յաւառնատեր էին, միայն Ա. Ղազարդութեան ակնյայտնի հրաշբով մը՝ ակնթարթի մէջ կտառարեալ կերպով առաջնացաւ, և այնուհետեւ երբէք նոյն հիւանդանները չկրկն ահցաւ (Ժամանակը՝ Էջ 560-565):

• 4) گلستانهای ایرانی - علی‌الله علی‌الله





## ԳԼՈՒԽ ԺԲ.

զենքեակոյ Հայոց Ս. Խաչ եկեղեցւոյ սկզբանաւորութիւնը. — Ամոր ընդարձակում և վերջակամ շիմութիւնը. — Միմէն Միհթարայ ժամանակ յիշուած Աշամաւոր մատրամապետք կամ առաջ- մորդք. — Խաչատոր վարդապետին կեմաց ուրուազիծը. — Ամոր առաքելակամ և գրակամ զործօմէութիւնը. — Ի՞նչ ար- դիքներ ունեցած է առ միաբանութիւնը. — Խաչատոր վարդա- պետի մամբ. — Ս. Խաչի ժատրանապետութեամ պաշտօնը միա- բանութեամս ծեռքը կ'անցմէ:

**Ս**ինչ հեռաւոր առաքելութիւնք մեր ուշադրութեան առարկայ գարձան, պատշաճ պիտի համարաւի անշուշտ քանի մը խօսք ևս ըսել մեզ ամենէն աւելի մերձաւորին վրայ: Վենետիկոյ սակաւոթիւ Հայ գաղութն, ինչպէս ըսինք յառաջն, ունէր իրեն յատուկ եկեղեցին, լ. Խաչ, որուն մերթ ընդ մերթ ստիպուած էին միաբանութեանս անձինք — երբ հարկը պահանջէր — հոգարարձու կամ ժամարար ըլլաւ, որով և ժողովրդեան հօգեսոր առաջնորդութիւն ընել: Այսու առիթ պիտի ունենամ խօսելու նաև այն անձին վրայ, ո- րուն ըստ բազում զլխաց երախտապարտ է Միհթարայ ուխտը:

**ԺԶ** գարուն սկիզբները (յամս 1513-5), բաւական ա- ճած ըլլալով Հայ գաղթականներուն թիւը, և աղքային քա- հանայ մը պահելու զիւրութիւնն ունենալով, մտածեցին փոքրիկ մատուռ մը շինել այն տան մէջ, — որ իրենց շնորհուած էր Ծիանի ընտանիքէն՝ լ. Յուլիանու թաղին մէջ, — աղքային ծիսով կատարելու համար եկեղեցական հանգէւնները և պաշտամունքը: Այդ նպատակով աղերսա- զիր մուզզեցին եկեղեցական բարձրագոյն իշխանութեան, և Առան Ժ Քահանայապետէն յատուկ կոնդակ մը ստացան, որով հրաման կը արուէր իրենց փափաքը զործադրելու: Մա- տուռը շինուեցաւ յանուն Երևման լ. Խաչի, բայց հանդէսք


չին կատարուեր, հաստատուն քահանայ կամ մատրանապետ մը չի գտնուելով։ Ժաղովրդեան եռանդը մարեցաւ, մատուռն ալ երեսի վրայ մնաց, անշքացաւ, մինչև որ 1579ին նորէն արծարծեցաւ տեղացի Հայոց եռանդը, որոնք Ասհմանադրութիւն մը հաստատեցին, Հայոց տուն կոչուածը՝ աղքատաց և անցորդաց միայն սեփականեցին իրրե հիւրանոց, և նորոգեցին հին մատուռը, ուր Էջմիածնի կաթողիկոսունք քահանայ մը կը զրկէին պատարագելու և առաջնորդութիւն ընելու, այն պայմանով որ մատուռը, աղքատները և ժամարար քահանայն տեղացի հայ վաճառականք պիտի պահէին իրենց դրամով<sup>1</sup>։ ԺԷ դարուն սկիզբները (1606ին), Ամդեցի Յակովը Մարգարեան քահանան, որ զանազան անգամ անցեր էր Վենետիկէն նուիրակութեան պաշտօնով, և ծանօթ էր տեղւոյն հայ զաղթականութեան, Ա. Խաչի մատրան հաստատուն հոգաբարձու և առաջնորդ ընտրուեցաւ, որ կոկեց, զարդարեց անշքացած մատուռը, և հինգ տարի եռանդեամբ և մեծ զործոնէութեամբ վարելով իւր պաշտօնը, վախճանեցաւ 1611ին։ Յետ Ամդեցւոյն չգիտեմ թէ ոյք եղեր են Ա. Խաչի հոգաբարձուք, մինչև 1654 թուականը, յորում կը յիշուի Տէր Յահակ Թօխիաթեցի՝ իրը առաջնորդ Հայոց, որ Փիլիպպոս կաթողիկոսին հրամանով Վենետիկ եկած, և երեքուկէս տարի վարած է իւր պաշտօնը<sup>2</sup>։ Տարուէ տարի աճելով հայ վաճառականները, — որոնց մէջ կային նաև բաւական թուով հարուստներ, որպիսիք էին Շէհրիմանեան գերգաստանը, Զուղայեցի Զամալենց Պօղոս, Գրիգոր Միհրման կերպ, և այլք, որոնք շատ ընծաներով ճոխացուցին Ա. Խաչի զանձարանը<sup>3</sup>, — 1665 տարւոյն միարան խորհրդով որոշեցին մեծ ցնել մատուռը, որ շատ փոքր կու դար այնշափ բաղ-


1. Հայ-Վենետիկ էջ 384-5։

2. 1654ին Վենետիկոյ մէջ գրուած ՋԲ Աւետարանը՝ յիշեալ Սահմակ երիցուն զբութիւնն է, և կըսէ յիշառակարանին մէջ։ «Ես նուաստ և սորուկու առենույնի Աստիկ երեցս, հրամանու երշանիկ հոյրապետին մերոյ Տեսան Փիլիպպոսի կաթողիկոսի առենոյն Հայոց, կացի ի Վենետիկ երեց ամ և վեց ամիս, առ ի քահանայագործութիւն Հայոց վաճառականց և Երեման Ա. Խաչ եկեղեցւոյս » և այլն։

3. Խելզէս կը կարդանք յիշեալ ՋԲ Աւետարանին յիշառակարանին մէջ։

Ա. քառ կեղղիցի չայց (Կ վեհանիկ) .





մաւթեան : Յայց փոխանակ պարզապէս ընդարձակերու , հիմովին նոր եկեղեցի մը կանգնելու ձեռք դարկին շափառը մեծութեամբ , և շինութիւնն աւարտեցաւ 1688 տարւոյ գելտեմբերին<sup>1</sup> : Եկեղեցին զմբեթաւոր է . իրեն փոքրկութեան մէջ՝ գեղեցիկ ճարտարապետութիւն . երեք խորան ունի և կողմեակի փոքրիկ աւանդատուն մը . աւագ խորանը՝ նուիրուած է Երևանուն Ո . Խաչի , աջակողմեանը՝ Ո . Առաւածածնի Վերափօխման , ձախակողմեանը՝ Ո . Լուսաւորչի : Պատկերները՝ նոյն ժամանակի Ալբերտ Կալվէտտի վենետիկցի նկարչին գործերն են : Դեռ եկեղեցի չմտած առնել գաւիթ մը կայ , ուր կը գտնուին մի քանի նշանաւոր հայ վաճառականներու տապանաքարերը<sup>2</sup> որոնք 1812ին , եկեղեցւոյ նորոգութեան առթիւ , դուրս փոխադրուեցան , ներսը թօղով ուկրները՝ ուր թագուած էին<sup>3</sup> :

Նպատակէս դուրս ըլլալով Ո . Խաչի ամբողջական պատմութիւնը զրել , կ'անցնիմ Խաչատուր վարդապետին՝ որ երկար տարիներ ժամարար և առաջնորդ եղած է վենետարնակ Հայոց , և անձուկ կապեր ունենալով Մխիթարայ պատմութեան հետ , կը զնեմ հոս անոր կենաց ուրուագիծը :

Սա ծնաւ ի Կարին , յամին 1666 , որդի Առաքելի : Մանուկ Համակէն զգալով ուսման ժարաւը , զնաց յԵջմիածին , որ այն ժամանակ զիտութեանց Համալսարանն էր ազգիս մէջ , ուր տասը տարի վերջ զնաց նաև Մխիթար : Այդ երկու մեծ մօքերը ուրիշ օգուտ չքաղեցին այդ ուղևորութենէն , բայց Համոզուիլ՝ թէ Հարկ էր Հայկական շրջանակներէն դուրս ելնել , եթէ կ'ուզէին մարդ մ'ըլլալ և ազգին օգտակար : Խաչատուր պատանին աւելի բարերախտքան Մխիթար , դառւ յԵջմիածին՝ Յովեանեան Վարդան վարդապետը , երբեմն աշակերտ Հոսովմայ Ուրբանեան վարժարանին , որ վարքով և զիտութեամբ չատ կը տարբերէր միւս արեղաներէն : Խաչատուրին սիրտը կապուեցաւ անոր

(1. Եցառի թէ Ո . Խաչի չինութեան նորուառզաց մէջ զընաւոր էր՝ գրիգոր Եկեղեց Միքանե հայոցի հարուստ վահառականը :

2. Տակուին հրատարակուած ըլլալով անոնց տապահագիւթ . կը ծանօթացնենք մեր ընթերցուցաց կրքին Յանելու-Ճռ մէջ :

3. Միջին և ազգայ գառակարդի մարդիկ կը թաղուէին Հայոց յատկացուած զերեղմանատան մէջ , որ Ո . Գետրդ կողույն վրայ կը շահուէր :

հետ. ինքն ալ կ'ուզէր Յօվեանեանին ճանապարհը կտրել, անոր հառնելու համար. Երբ Յօվեանեան թողլով լշմիածինը կ'ուզեսրէր դէս ի Հռովմ, 1682 թուականին, եռանգուն վեշտասանամեայ Խաչատուրը կ'ընկերէր անոր. Հօն յաջողեցաւ Արքանեան վարժարանին աշակերտ ըլլալ, ուր իրեն ընկեր մ'ալ զանելով, ուրիշ որամիտ և զգօն հայ պատանի մը, Ատեփանոս Խոչքեան, միասին զովելի ջանասիրութեամբ և փայլուն քննութեամբք աւարտեցին ուսմոնց շրջանը, և քահանայ ձեռնադրուելով՝ Խոչքեան մեկնեցաւ դէս ի Լեհաստան, և Խաչատուր՝ իրբ առաքելական քարոզիչ՝ Պոլիս զրկուեցաւ:

Քարոզչական ասպարիզին վրայ Խաչատուր վարդապետի ունեցած յաջողութիւնը բացառիկ երևոյթ մէք. քարոզչի մը ամենէն աւելի կարևոր ձիրքերը ունէր նա, վառվուն և զրաւիչ ոճ մը, անստգիւտ վարք, խոր հմտութիւն աստուածարանական խնդրոց, համարձակ էր և առանց ակնառութեան իրեն կրօնական սկզբունքները քարոզելուն մէջ. Ճիշդ այս ժամանակ էր որ Մխիթար, ձուած Խաչատուրի համբաւէն, Պոլիս կը վազէր յայտնելու իրեն մտածութիւնը: Խաչատուր՝ մեծ էր բեմին վրայ, զիտէր խօսքով իշխել սրտերուն, բայց գործի մէջ՝ չունէր այն ձեռներէց ողին, որով միայն կը յաջողին մեծամեծ ձեռնարկներ: Նա՝ Մխիթարայ մտածութիւնը այնչափ անգործազրելի գտաւ, որ ցնորք մը համարեցաւ երիասառքուկան աշխոյժ մտաց, և Մխիթար անկէ ալ կտրած յօյսը, նոյն ճանապարհով ետ կը դառնար: Այս պատուհեցաւ 1697 թուականին: Տարի մը վերջ, 1698ին, պատուարեր նուիրակութիւն մ'ըրաւ Խաչատուր, իննովկենախիս Ժիփ կողմէն ընծայատար երթարով լշմիածին առ Նահապետ կաթողիկոս, որմէ ստացաւ — զիել ընդունելութեան հետ — լիազօր իշխանութիւն՝ ամէն տեղ քարոզելու այն ոճով և իշխանութեամբ, ինչպէս ըրեր էր մինչև այն ժամանակ: Այդ առթիւ աւելի ևս մեծցաւ Խաչատուր վարդապետին անունը. Պոլիս գարձաւ այնպիսի հեղինակութեամբ, որուն առջև զլուխ կը ծոէր ամէն մարդ՝ սկսեալ ամիրաններէն և պարբիստներէն, և 1699 և 1700 թուականներուն, նոյն իսկ պատրիարքական եկեղեցւոյն մէջ համարձակ կը քարո-

գեր կաթողիկէ կրօնից վարդապետութիւնները : Բայց երբ Եւ փրեմ և Աւետիք պատրիարքները սկսան իրենց յայտնի կամ ծածուկ հալածանքները , Խաչատուր վարդապետ տեսնելով թէ անկարելի էր հոսանքին դէմ զնել , խոչեմութիւն հաւ մարեցաւ լոել առժամն : Աւդ լոռութիւնն երկար շտեց . երբ թշուառ Աւետիքը տեսարանի վրայէն անհետացաւ , դարձեալ երեցաւ հոն Խաչատուր , լուսեցաւ ձայնը քանի մը տարի ևս : 1707ին մեծ հալածանքը , որուն զոհ զնաց Տէր Կոմիտաս , ոչ միայն ի սպաս լսեցաւ աստծւաբան քարոզչին ձայնը , այլ և տարաւ ձգեց զինքը Ազրիականին մէկ խորչը , Վենետիկի քաղաքին մէջ , ուր 1708ին Ս . Աթոռոյն կողմանէ տեղացի Հայերուն առաջնորդ դրուեցաւ : Քանի մը տարիի վերջ , ուրիշ ազէտ մ'ալ կը քէր Մոռէայէն և Վենետիկի կը ձգէր զՄիսիթար և իրեն միաւ բանութիւնը , որով դարձեալ կը զանէին զիրար այդ երկու մեծ մարդիկը , — ազգերնուս այն ժամանակի երկու լոյսերը կամ աչքերը , — որոնք որոսվ միշտ անբաժանք եղած էին իրարմէ :

Յամին 1719 Խաչատուր վարդապետ Ս . Աթոռոյն կողմանէ այցելու երթալով ի Տրանսիլվանիա , Միսիթար Արքայի յանձնեց Ս . Խաչին ժամապետութիւնը : Արքահայրն առժամանակեայ հոգարարձու և առաջնորդ զրաւ զ՞ . Յովհաննէս վարդապետ , եկեղեցւոյ կից տան մէջ անոր յատուկ խղիկ մը որոշելավ որպէս զի զիշեր ցորեկ հոն բնակի՝ խոստովանութեան և ուրիշ հոգեւոր պիտոյից համար : Միսիթար , իրեն մէկ նամակին մէջ առ Խաչատուր վարդապետ , կը պատմէ թէ «Հայոց եկեղեցւոյն տօնը (մայիսի 3ին , որ է Խաչզիւտ , ըստ Լատինացւոց ) շատ հանդի-

ւ . Ճեշտ ոյց տարին , 1708ին , կը գըեր Խաչատուր վարդապետ ոռ Միսիթար Արքայ . ։ Ես հոս (Վենետիկ) Թագի . և Ս . Ժողովէն առաքելական քարոզչէ գրուեցաւ այսուեղի հայերուն , մեր սիրելի եղբար թօխաթեցի Դրիգոր վարդապետի խեղբանաց համեմատ , որ որոշեց ուրիշ տեղ երթուլ : Հայոց եկեղեցւոյն մէջ շաբաթը երեք անդամ կը քարոզիմ : Անջիւ զրադաեցներով և զործերով պաշարուած եւ , որոցմէ խոյն կու տամ երցածիս շափ , որպէս զի սկսած դրական ոչխառաւթեացու պարապիմ . . . . Եւ շատ զավեսիւք խոսեցայ ձեր վրայ ոռ Ս . Ժողովը » (1708 ուսուած է ) :

սաւոր և կարգաւորեալ կերպով կատարեցինք . և ամէն տօնական օրերուն՝ երկու կամ երեք անձինք կը դանուինք եկեղեցին , ժամասացութիւն կ'ընենք , պատարագ կը մատուցանենք , կը խոստովանցնենք և քարոզ կու տանք<sup>1</sup> » :

Քիչ ատենէն շփոթութիւն մը ծագեցաւ ժողովրդեան մէջ . կարծելով թէ Խաչատուր վարդապետ Տրանսիլուանիոյ Հայոց եպիսկոպոս պիտի ըլլայ , հաւատալով հայազգի տրանսիլուանիացի Մինաս քահանայի մը խօսքերուն , ժողովրդեան մէկ մասը մտածեց ուրիշ վարդապետ մը դնել իրենց առաջնորդ , վախնալով թէ միաբանութեանս ձեռքը կ'անցնի մշտնչնապէս այն պաշտօնը : Միսիթար տեսնելով ժողովրդեան տարածայնութիւնը , զրեց Խաչատուր վարդապետին , որ ըստ կարելույն շուտով իւր պաշտօնատեղին դարձաւ : Նոյնպէս 1725ին , Յորելեան տարւոյն առթիւ Հռովմ երթարով . Արքահօր յանձնեց իւր պաշտօնը : Նոյն ժամանակաները միաբանութեանս գէմ՝ դարձեալ ամբաստանութիւն մ'եղած ըլլալով ի Հռովմ , Խաչատուր վարդապետին յանձնեց Միսիթար՝ կարդաղրել այդ զործը և ըստ արգար իրաւանց չառագովել միաբանութիւնը : Գնաց , յրեց ամբաստանութիւնը , պաշտելի ըրաւ Միսիթարայ անոնը Հռովմայ մէջ , և դարձաւ : Այնուհեաւ ևս աւելի ամբացաւ այդ երկուքին մէջ եղած սիրոյ և միութեան կապը , որ ոչ բախտի և պարագայից զուգագիպութենէ , կամ բարուց և բնաւորութեանց հանգիտութենէ յառաջ եկած էր , այլ միայն կրօնական տեսութեանց և առարինի վարուց նմանութիւնն էր , որ անխզելի զօղիւ միացուցեր էր այդ երկու հզիները , որոնք այլուստ տարրեր նկարագիրներ ունէին : Խաչատուր վարդապետ իրեն հանդարտ բնաւորութեամբ , սիրոզ աւելի հայեցողական քան զործնական կենաց , փախչելով ժխորէ և վոտնզներէ , իրեն գէմքն այնքան զուրս չի ցատքեր՝ որքան Միսիթարայն , որ նոյնպէս լուրջ և հանգարտ , բայց աւելի եռանգուն , և խոյօ շտար աղմուկներէ՝ ուր կարեսը է իւր ներկայութիւնը զանոնք խաղաղելու . կը նետէ ինքզինքը վտանգներու և դժուարութեանց մէջ՝ ուր հարկ է զործել , կեանքն իսկ կու տայ՝ երբ ընկերին օգուտը կը

պահանջէ . բայց հրդեհին մէջ չի մնար՝ որ այրի կամ ունակոխ ըլլայ , այլ զիտէ հան խռչեմութեամբ եւս քաշուիլ : Խաչատուր վարդապետ շունի ձեռներէց Հոգի , կ'ընտրէ նեղ շրջանակի մէջ գործել , կը վախէ դժուարութեանց բախելէ , որով իրեն գործն իրմով կը վերջանայ : Մինչդեւ Միհիթար ընդարձակ ասպարէզ կը փնտաէ գործելու , հալածանքները՝ իրեն յաջողութեանց դռներ կը բանան , դժուարութեանց առջև կանգ չառնուր , որով իւր գործը կը տեէ՝ մեծ ծաւալ մը կը ստանայ : Երկուքն ալ հմուտք և զիտնականք , անխօնջ զրոյներ , բայց զանազան ճանապարհներով հասեր են նոյն նպատակին : Խաչատուր՝ Հռովմէնիրթայ ուսանելու լեզուները և զիտութիւնները , հմուտ վարժապետաց ձեռքին տակ . Միհիթար՝ առանց դպրոցի և վարժապետի՝ անհուն ճիղերով և քրտամբք հասեր է Խաչատուրին : Եւ սակայն , եթէ անոնց զրական արդիւնքները համեմատենք , Միհիթար աւելի գերազանց և բախտաւոր եղած է քան զԽաչատուր : Մինչև այսօր Միհիթարայ երկասիրութիւնք ունին իրենց յարգը , դեռ զարմանք կ'ազդէ մեզ անոր հրատարակած Աստուածաշունչն ընտիր պատկերներով , անոր Հայկազեան բառարանը՝ իրեն հմտութեամբ , և մանաւանդ Մատթէի մեկնութիւնը՝ որ հրաշակերտ մ'է իւր տեսակին մէջ , թողլով անոր միւս անտիպ զրաւթիւնները : Խոկ Խաչատուր վարդապետի զրութիւնները ո՞վ կը յիշէ արդ կամ կը զործածէ . թէ և չժխտուիր՝ թէ նա շատ աեղեակ էր Հայերէն լեզուի , որուն թերականուրիւն մ'ալ շինած է . պերճախոս էր քարոզներուն մէջ , և ունի ամբողջ տարուան համար Քարսզզիրք մը և Ճարտառանուրիան զասագիրք մը . բայց անոր հմտութիւնն ամէն բանէ աւելի կը փայլէր իմտատասիրութեան և սրբազան ուսմանց մէջ , և զրած է ոտանուոր Փիլիստիայուրիւն մը . Երգոց երգոյն մեկնութիւն մը , Բարոյական աստուածարանուրիւն մը , և Ա . Թօվմայի Հետեղողութեամբ Ընդհանուր աստուածարանուրիւն մը , և Ա . Թօվմայի Հետեղողութեամբ Ընդհանուր աստուածարանուրիւն մը . Այդ բոլորը Պայմա զտնուած ժամանակ զրած է , բաց ի վերջնոյն , զոր հոն սկսեր և Վենետիկ մէջ վերջացուցեր է . Հռովմէն եղած ժամանակ ևս այլեայլ աստուածարանական խնդիրներու վրայ զրած է լատիներէն լեզուով : Դեռ Պոլիս եղած ժամանակ հետեւոլ


նամակը ուղղեր է առ Միհթար Արքայ. յորում կը խօսի  
իրեն զրաւոր աշխատութեանց վրայ. «Այն զիրքը, զոր  
ծանուցեր էի քեզ, կ'ըսէ, մինչև աստուածարանութիւն  
հասուցի: Աւարտածներս հետևեալքն են. Ընդհանուր ա-  
րուեստները, քերթողութիւն, հսկողութիւն, բանաստեղ-  
ծութիւն, տրամարանութիւն. բոլոր բնագիտութիւնը, երկնի,  
աշխարհի և աստեղաց վրայ, ծննդեան և ապականութեան  
վրայ, տարերաց, անկատար բաղադրութեանց, բուսոց և  
կենդանեաց, մարգուս, բժիշկանութեան, բնական բարոյա-  
գիտութեան և քաղաքականութեան վրայ՝ իրեն բոլոր մա-  
սերով. վերջը կը խօսուի օրինաց և գատաստանի վրայ,  
և այսպէս կ'ամրագնանայ ֆիսիկան: Յետոյ կը սկսի մա-  
րէմատիկան, որուն մէջ կը բովանդակուին թուարանու-  
թիւն, երկրաշափութիւն, աստղաբաշխութիւն, երաժշ-  
տութիւն, ընդհայեցողութիւն, կշորդարանութիւն. Հոս կը  
վերջանայ մաթէմատիկան: Յետոյ կը սկսի մետաֆիսիկան,  
որ կը ճառէ արարածոց, Աստուծոյ, հրեշտակաց և բա-  
նական հոգուոյ վրայ. Հոս կը վերջանայ մետաֆիսիկան:  
Այս յիշուած բոլոր գիտութիւնք վերջացած են. կը մեայ  
միայն զրել եկեղեցական օրինաց և գատաստաններու վրայ.  
ինկ աստուածարանութիւնը զես նոր սկսայ<sup>1</sup>»: Խաչատուր  
վարդապետ՝ զրական այսպիսի ընդարձակ պաշար և հմտու-  
թիւն ունէր, որուն համար անոր խօսքը իրը պատզամ  
կ'ընդունուէր արեւելքին մէջ, ուր որ համբաւը լսուած էր:  
Բայց քան ուրիշ ամէն տեղ՝ մեծ էր անոր անունը և աղ-  
դեցութիւնը Հռովմայ մէջ. մեր ազգին և ընդհանուր ա-  
րևելքի քրիստոնէից վերարերեալ խնդիրներուն մէջ՝ միշտ  
Խաչատուր վարդապետին կարծիքը կը հարցուէր, ամենէն  
աւելի կարևոր և փափուկ նուիրակութիւններն անոր կը  
յանձնուէին, և շարունակ թղթակցութեան մէջ էր Ա. Աթո-  
ռոյն հետ: Այդ իրեն ազգեցութիւնը, հարկ է ըսել, միշտ  
յօդուած և ի պաշտպանութիւն Միհթարայ ուխտին զոր-  
ծածեց. ինքն եղաւ այն գժուարին պարագայից մէջ ամե-  
նէն եռանդուն ջատագովը միարանութեանս. ստոյդ և ան-  
կեղծ բարեկամ մը, հիացող և պաշտող մը Միհթարայ.

փոխագարձարար Այսիթար ևս նոյն սէրը, հիացամը և  
յարդանքը ունէր առ Խաչատուր վարդապետ<sup>1</sup>: Անոնց այդ  
սուրբ և քրիստոնէական բարեկամութեան ուրիշ օրինակ  
շեմ զտներ, բայց Ա. Բարսղի և Ա. Գրիգորի Նազիստ-  
գացւոյ մէջ եղած բարեկամական կտապը, յորում Այսիթար,  
իրեն եռանդուն բնուարութեամբ, զորդնականը միացուցած  
Հայեցողական կենաց չետ, և իրը հիմնադիր միարանական  
կենաց, աւելի Ա. Բարսղի կը մօտենայ, ինչպէս նաև Խա-  
չատուր վարդապետ՝ Նազիստագացւոյն, իրեն մեղմ բնաւո-  
րութեամբ, Հայեցողական կենաց միառւմով և առտուածա-  
րանական հմտութեամբ:


Խաչատուր վարդապետ հիւանդանալով 1740ին, խնդրեց  
Արքահօրէն՝ Ա. Խաչի ժամապետ զնել զշ. Յովհաննէս  
վարդապետ, մինչև որ ինըն առողջանայ: Սակայն հիւան-  
դութիւնը փոխանակ մեղմանալու՝ աւելի ժանրացաւ, և  
երկու ամիս վերջը՝ ամէն հոգեար պատրաստութիւնները  
տեսնելով երկինք կը թոշէր իրեն արգեանց պատկն ըն-  
դունելու, Այսիթարայ և միարանութեան կտակելով զրու-  
թիւնները և բոլոր ունեցածը, մշտնինապէս պատարագելու  
պայմանով իւր հոգւոյն համար: Աղջայինք դիմեցին քա-  
զաքին պատրիարքին՝ որ Հաստատէ զշ. Յովհաննէս իրըն  
մեայուն ժամապետ Ա. Խաչին և իրենց առաջնորդ. դի-  
մեցին նաև Արքահօր, որ յետ բազում ընդդիմութեան  
Հազիւ զիջաւ անոնց խնդրանաց տաժամանակեայ երրորդ,  
մինչև որ նոյն պաշտօնին յարմար անձ մը գտնեն, որովհե-  
տեւ ժաղովրդեան մէջ տարածայնութիւնը զեռ կը առելին:  
Բայց երբ շատ թախանձեցին Ա. Խաչին հոգարածուր, և  
աէրութենէն ևս յատուկ հրամանագիր բերին, Այսիթար զի-

1. Խաչատուր վարդապետ կը զրէ առ Այսիթար Արքայ. «Լուսի Հ.  
Յովհաննէսէն» թէ այդ պատուին եղիսկապահն թուղթը հասկը է Հառվ. և  
շատ զու եղեր են ձեզէ որբազոն Քահանայագեալը և Ա. Ժողովը-  
ուրիշներէն ու շատ զավեսներ լուսի ձեր վրայ. և շատ ուրախացայ:  
Ես ձեռքս եկածին շափ պիտի պղնիմ ձեզի. վասնդի զուր իմ փառք  
և պարժանը էր» (1708 ապրիլ 11): Դարձեալ նոյն ինքն վիճակէն  
խորհուրդ կու տար Այսիթարայ. — երբ առ զեռ Այսիթան կը զանուէր. —  
թէ ինչպէս պէտք է ուսուցանել ուշակերտաց առաջամաժարանակուն և ի-  
մաստափական ուսումները, և ինչպէս երեսն պատարագաց ուղրմանթիւն  
և ուրիշ զրամական պնդութիւն գտնել (1711 մայիս 25):

ջաւ վերջապէս և հաստատեց զՀ . Յովհաննէս իւր պաշտօնին մէջ , որ ժամապետին յատկացուած տան մէջ բնակելով , ամէն օր Հայոց եկեղեցւոյն մէջ կը պատարագէր , քարոզ կու տար կիւրակէ և տօն օրերուն , Ա . Խորհուրդները կը մատակարարէր , աղքատները կը հօգար , վէճերը կը դադրեցնէր , տղայոց կը դասախոսէր մայրենի լեզուն , և հոգեորի և կրթութեան կարեօր բաները կ'ուսուցանէր : Ժողովուրդն ալ իւր կողմէն տարեկան յիսուն դաշնկան կու տար անոր , ոչ իրր թոշակ , վասնզի ամենայն ինչ ձրիաբար կը կատարէր , այլ պարզապէս իրր ողորմութիւն՝ իրեն պաշտօնին կարեւոր ծախուց համար : Հ . Յովհաննէս վարդապետ հինգ տարի հայրաբար խնամեց ժողովուրդը . այնու հանդերձ դարձեալ տարածայնութիւնք ծագեցան և անտեղի կասկածներ , որոնց համար հրաժարեցաւ պաշտօնէն և վանք քաշուեցաւ 1746ի փետրուարին : Նոյն պաշտօնը յանձնուեցաւ Տէր Եղիա քահանայի մը , որ պատահմամբ վկնետիկ կը զտնուէր այն ժամանակ . բայց քիչ ժամանակէն նա ևս ստիպուեցաւ հրաժարիլ և Պոլիս երթալ , ինչպէս նաև անոր յաջորդը : Ժողովուրդը շատ ուշ հասկըցաւ ըրած սխալը , և խմբովին աղերսաղիր մ'ուզզեցին Արքահօր՝ որ նորէն իրենց դարձունէ զանիկայ , որ այնչափ տարի հմարիտ հայր մ'եղած էր իրենց . բայց Արքահայրը , այլ՛այլ պատճառներու և դժուարութեանց համար , յանձն շառաւ կատարել անոնց խնդիրքը : Վերջի վերջոյ , երբ ոչ մէկ աղքային քահանայ չէր զտնուեր՝ ժողովուրդեան հոգեոր պէտքերը լեցնելու , միաբանութիւնս բռնազատուած ստանձնեց այդ պաշտօնը Միսիթար Արքայի Յաջորդին ժամանակ , որ մինչև ցարդ կը շարունակուի :



• Ակնեղեցից, Նոր քամավարութիւն առաջանիցը.



## ԳԼՈՒԽ ԺԴ.

Ակեղեցոյ Յորոգութիւնն և Յիմնակամ փոփոխութիւնը . — Եհան-  
թիւն Խորաններում . — Ա՞յլ Ապաստացին պատմով Ակեղեցոյ Յի-  
մութեամբ . — Աւանդասամ մէջ կը զբուի Ս . Յո Խնիայ Խորա-  
նիկը . — Քահամայից բակութեան Պամար սեմիկաց շիմոթիւն .  
— Նորքմծայարամի և Վարժարամի շէնքիրու կառուցումն . — Սի-  
դամառում, գրատում, Ս . Բհմեղիկառու մասունք, և այլն . —  
Կառարտի վամքին ամբողջակամ շիմութիւնը 1740:5:


Ա . Ղազար կղզին, մեկուսացած բոլորովին մարդա-  
րնակ աշխարհէն, ջրերու մէջ ընկդմած և աւաղուսով մը  
լոկ զատուած մեծ ծռվէն, ոչ մէկուն անձանօթ չէ : Թա-  
գաւորներէն սկսեալ մինչեւ յիշին արուեստաւորը՝ անոր հիւր  
եղած են, կը ճանչնան զայն, և շատերուն յիշողութեանց  
զանէ մէկ էջը անոր նույիրուած է : Մարդ կը հիտաքրքրուի  
հարցնել ինքն իրեն, թէ ինչ զրաւիչ բան ունի այդ հա-  
մեսա կղզեակը, որ իրեն կը քաշէ այնչափ այցելուաց  
բազմութիւնը, և շատ տաղանդաւոր զրիշներու մի քանի  
զեղեցիկ էջերը իրմազ լեցուցեր է : Ուրիշ շատ կղզեակներ  
կան, աւելի զեղեցիկ դիրքերով, աւելի պատմական յիշա-  
տակներով ճոխ, ուր աւելի կեանք կոյ և աւելի ճարտա-  
րութիւն արուեստի . և սակայն Ա . Ղազարու հոչակը շու-  
նին :

Ա . Ղազարու կղզին փոքրիկ վանք մ'է, ուր արևելքի  
խորերէն եկած՝ ժողված խումբ մը հայեր, ներանձնական  
կենաց կարդերով կապած իրենք զիրենք, որոնք հազիւ մերթ  
ընդ մերթ վանքին պատերէն դուրս կը հանեն ոտքերնին՝  
կարեսոր գործի մը պատճառաւ, միայնութեան մէջ ընկդմած,  
և սակայն քաղաքականութեան և գիտութեան մշտաշարժ  
հոսանքին հետ կը քալեն յառաջ, Վանք մը, որ ազգի մը  
մոտաւոր զործօնեւութեան մէջ առաջնակարգ գեր խաղացեր է :

Խումբ մը արեւելցի վանականներ, որոնք ունին կոկ, մոփուր, բարեկարգ բնակավայր մը, և իրենց վայելուչ վարժունքով և զրական աշխատութեամբ՝ զիտցեր են յարդելի լնել յաշս Եւրոպէի զրեթէ մառացուած ազգ մը։ Ահաւասիկ այն կէտերը՝ որոնց վրայ հիմնուած է ստարաց յարգանքն և հիացումն. և այս՝ ոչ փար պարծանք է նաև ազգիս, որ այսպիսի մեծ ընդունակութիւններ ցոյց կու տայ՝ եւրոպական կրթութիւնը և զիտութիւնը իւրացնելուն մէջ։ Տեսնենք ուրեմն թէ Մխիթար Բնէ մեծ ճիզեր թափեր է՝ նորոգելու, շենցնելու և զրախտ մը զարձընելու համար այն ամոյի և աւերակ կղզին, որուն նախկին վիճակը համառութացնեցինք արգէն ընթերցողաց։

Մխիթար տակաւին ձեռք շդարկած վանքին շինութեան, պատշաճ տեսաւ նորոգել զարդարել նախ Աստուծոյ տունը, որ հնացած, խորխուլ և կէս աւերակ էր, բաց ի պատերէն՝ որոնք բաւական ամուր էին։ Զեղունը՝ համեմտատարար ցած էր և շիտակ, ձնչող բան մ'անելը, որ կ'արգելուր կարծես ազօթից թոփչը գէս ի վեր։ Մխիթար՝ առաջին տեսնելուն զայն՝ իւր ձաշտիկին յարմար շգտաւ, 1721 տարին՝ խաղաղ տարի մ'ըլլալով միաբանութեան, և ի նպաստ եկեղեցւոյն եկած ողորմութիւններէն բաւական գումար մը ձեւանալով, մայիս ամսոյն սկսան եկեղեցւոյ նորոգութիւնք։ Նախ պատուիրեց վար տանուլ կողմնակի տառատաղները, և պատերը վեր բարձրացուցին զրկաշափ մը, միջին խմբարանին ձեղունը կամարաձև շինել տուաւ, զօր վեր կը բանեն վեց կարսրուակ մարմար սիւներ, և կողմնակի թեւերան փոքր մի առ ի շեղ ձեղունը շտկեց. աւագ խորանին վրայ զմբեթայարկ ծածք մը բարձրացնել տուաւ, և խորանն ալ տռաջ բերուեցաւ, որուն ետև շինուեցաւ դասը, բատին եկեղեցեաց նման, տասն և հինգ բնկուզենի նատարաններով։ Աւագ խորանը հիմնավին նոր շինել տուաւ սրբատաշ քարերով և զունագոյն մարմարներով։ իսկ անոր երկու կողմերը կառոյց երկու փոքրիկ զոթացի խորաններ, աջակողմանը՝ Ա. Խաչին նուիրուած, ուր ի սկզբան պարզ խաչելութեան պատկեր մը զրուեցաւ խորանին վրայ, իսկ ձախակող-





Խորամ Ս. Աստուածածին.

յէջ 363.

մեանը՝ Ա. Վուստուրչի. աւելի վար, եկեղեցւոյ տառենին մէջ, կոզմիակի ուրիշ երկու խորաններ են, աջակողմեանը՝ Ա. Աստուածածնի, և ձախակողմեանը՝ Ա. Անտոնի նուիրուած։ Ի սկզբան այս շորս խորանները անշուր և աղքատօրէն չի-նուեցան, որքան կը ներեր միաբանութեան զրամական վիճակը. բայց ժամանակով, այլևայլ բարերարներ գտնուելով, աւելի ճախ և չփեղ նիւթերով շինուեցան, ինչպէս պիտի պատմենք։

Վենետիկ բնակող հարուստ ազգայիններէն մին, Առհրատ Շէ Հրիմանեան, ծանր հիւանդութիւն մը կրելով 1735ին, երբ բժիշկները յաւսահատած ետ քաշուեցան, ուրիշ դիմելու տեղ չգտաւ բաց ի Աստուածամօրէն. և ուխտ ըրու որ եթէ Աստուած իրեն առաջնութիւն չնորհէ. իրեն ծափքով գեղեցիկ մարմար քարերով շինել տայ մեր եկեղեցւոյն Աստուածամօր խորանը։ Աբրահայրը այցելութեան երթարով, իմացաւ անոր ըրած ուխտը, և գանք դառնալով յանձնեց միաբանից աղօթել հիւանդին համար։ Այդ այցելութենէն քիչ օր վերջը, ի գարմանո բժիշկներուն, բոլորովին առաջացաւ մահացու հիւանդը, և կատարեց ըրած ուխտը։ Արրատաշ զորշախայտ մարմարիոն քարերով շինել տուաւ Ա. Աստուածածնի խորանը, ինչպէս օր կը տեսնուի մինչեւ ցարդ։ Խորանին առջև պատրաստեց իրեն համար դամբան մը, յորում թաղուեցաւ 1745ին, և վրան զրուեցաւ հետեւել տապանագիրը։

### D. O. M.

Եղեալ եղել ի յայս ստոպան  
Ազայ Ստեբառապմ Գասպարինան  
Ճուղացեցի Շամբիմմեան  
Այր բարեպաշտ ազմուական,  
Սա շիմեաց աստ զայս սուրբ սեղան,  
Եւ բնդ մմիմ զիր զերեզման.  
Ելից զընթացս պամդխառութեան,  
Համզեաւ ի Տէր ի ծերութեան.  
Ցամլի Տեսում 1745, դեկտ. 25:

Աստուածածնի խորանին շինութենէն տարի մը վերջ՝  
արևելքի յարածուի խռովերէն խոյս կու տար, ուրիշ շա-  
տերուն հետ, Զմիւռնիոյ Մինաս արքեպիսկոպոսը, և կ'ա-  
պաստանէր ի Վենետիկ՝ իրր ապահով տեղ և հայ գաղ-  
թականներու քաղաք, Միփիթարայ համբաւը քաշեց զինքն  
ի Ա. Պաղար, որուն հետ կապուեցաւ սիրտը առաջին խոկ  
այցելութեան։ Նա կը կարծէր զանել արևելքի անկարգ  
վանքերէն մին, տղէտ անկիրթ արեգաներով. ընդհակա-  
ռակն, երբ տեսաւ վանքին զեղեցկութիւնը և մաքրութիւնը,  
տեսաւ հոգեսէր և ուսումնասէր վանականներէ կազմուած  
բարեկարգ միաբանութիւն մը, սիրտը փղձկեցաւ՝ որ ինքն  
արժանացած չէր այնպիսի երջանիկ բախտի մը. երանի  
տուաւ Արքահօր և միաբաններուն, որ այնպիսի դրախտի  
մը մէջ կը բնակէին։ Այցելելով եկեղեցին՝ տեսաւ Աս-  
տուածամօր խորանը մարմարաշէն, խոկ Ա. Անտոնինը՝  
խեղճ և անչուք, և հարցնելով պատճառը, իմացաւ որ աղ-  
քատութիւնն էր այն։ Ալբեղիսկոպոսը խռոտացաւ իրեն  
ծախփով ճիշդ Աստուածածնի խորանին նման, մի և նոյն  
ձեռով և մարմարներով, շինել Ա. Անտոնի խորանը։ Խո-  
տուամը կատարեց, և Արքահայրն անձամբ հոկեց շինութեան  
վրայ, ինչպէս ըրած էր նաև միւս շինութեանց։ Հետեւեալ  
տարին (1737ին) երր աւարտեցաւ խորանը, որնեց զայն  
արքեպիսկոպոսը և ձայնաւոր պատարագ մատոյց վրան։  
Խորանին աջակողմը՝ սեան խարսխին վրայ քանդակուած  
է հետեւեալ արձանագիրը. Յիշասակ է տարր սեղանս յար-  
գոյ — Ալմցի Փերիազեամ կոչեցելոյ — Միմասայ արքնալի-  
կոպոսի Զմիւռնոյ — 1737. Յիշեալ Մինաս արքեպիսկոպոսն  
երկար տարիներ մնալով ի Վենետիկ, մեր միաբաններուն  
ձեռնազրիչն եղած է մինչև իւր մահը, որ պատահեցաւ  
1757ին, և թաղուեցաւ իւրակերտ դամբանին մէջ Ա. Ան-  
տոնի խորանին առջև, ինչպէս կը կարդանք տապանագրին  
վրայ.

Եմեցաւ տապանս ի զիր նամզառնամ  
Միմասայ մեծի Բարունապետի,  
Որ ի Փեր ազեամց տամէ Ալմեցի  
Արմիւսպիսկոպոս Զմիւռիմ քաղաքի.





Եղորամ Ս. Աթոռամի.

յէջ 364.

Նքեալ զիսր պատիւ աստէ՛մ պանդխտի ,  
Ցուցամնէ առ մնզ բազում երախտի .  
Նև կանգնէ զայս տուրը խորամ խնկելի  
Որոյ ըմդ հովամնաւ ի Թբիլսաւ համգէլի ,  
Տամի Տեառն 1757 , դեկտեմբ . 24 :

Կարծես կը մրցէին բարերարք իրարու հետ՝ Աստուծոյ  
տունը պայծառացնելու համար : Հայութեան պանդուխտ  
որդիքը , Ա . Ղազարու կղզեկին մէջ տեսնելով մայր աշ-  
խարհին սփոփիչը , շէին խնայեր իրենց լուման՝ անոր զար-  
դարանքը և շուրջ աւելցնելու համար : Հարանդ գաւառէն  
երկու վաճառական աղջականք , Ատեփան և Նահապետ , ո-  
րոնք Վենեսուիկ կը բնակէին , ուղեցին յիշտառակ մը թողու  
Միսիթարայ դաստակերտին մէջ : Մտածեցին խորսն մը  
շինել Ա . Գրիգոր Լուսաւորչին՝ մարմար քարերով : Միսիթար  
զծեց ծրագիր մը , որուն հաւնելով յիշեալ վաճառականք ,  
անմիջապէս սկսաւ շինութիւնը , զոթացի զեղեցիկ հարստա-  
րապետութեամբ և կարմրագոյն մարմարներով . խորսնին  
առջևն ալ շինուեցաւ երկու եղբարց հանգստեան տապանը :  
Անոնց ժախտով նկարուեցաւ նաև Ա . Լուսաւորչի մեծադիր  
իւղանկար պատկերը , որ կը ներկայացնէ Տրդատայ մկրտու-  
թիւնը : Այս պատկերս ամենէն յարգի և թանկագինն է  
մեր եկեղեցւոյ պատկերներուն մէջ , զոր նկարած է Փրան-  
կիսկոս Շունեոյ՝ վենետիկցի Տիեզողոյ մեծանուն նկարչին  
աշակերտը : Խորանին շինութիւնն աւարտելով , օրհնեց զայն  
Արքահայրը և վրան ձայնաւոր պատարագ մատոյց : Խորանին  
առջև եղած դամբրաբանին մէջ թաղուեցան երկու վաճառա-  
կանք , և վրանին քանդակուեցաւ հետեւեալ արձանագիրը .

Նախանեցիր Շահումնամց տամ  
Պարոն Զարքար որ է Դաւթեամ ,  
Պարոն Ստեփան Վարդաննէսեամ .  
Պարոն Նահապետն Պօդունամ ,  
Ետում շիմել զայս զամբարամ ,  
Եւ ըմդ մոմին զայս զամբարամ ,  
Ե յիշառակ և ի կայսան  
Բնաւից որք եմ միւզք մոյմոյ տամ .  
Տամի Տեառն 1737 . յուլիս 30 :

Ակեղեցին ամբողջանալու համար՝ կը մեար միայն Ա. Խաչին խորանը։ Այն ալ զառւ իւր բարերարը Շեհրիմաննեան ընտանիքէն՝ պարոն Ստեփանոս, որ ճիշդ Ա. Լուսաւորչի խորանին ճարտարապետութեամբ և աղնիւ կարմրագոյն մարմար սիւներով շինել տուաւ 1738 տարւոյն Փռխանուկ պատկերի՝ կանգնած է խորանին վրայ սպիտակ մարմարէ գեղեցեկ Խաչելութիւն մը, յուզիչ և ցաւագին արտայայտութեամբ։


Աւագ խորանին ճախակողմը կը գտնուէր աւանդատունը, յորում կը զղեսուաւորէին քահանայք, զոր Միսիթար կառոյց ի հիմանց, մէջն ալ անշաք խորանիկ մը՝ Ա. Յովսէփ առտուածահօր, որուն ջերմեռանդ պաշտօնասէր մ'եղած է իր մանուկ հասակէն։ Խոկ աջակողմը շինեց ուրիշ փոքրիկ աւանդատուն մը, և սահմանեց՝ որ նորընծայ քահանայք, երբ դեռ վարժարանի մէջ կը բնակին, հոն ընեն իրենց պատարագի պատրաստութիւնը և զգեստաւորումը։ — Անցած դարուն սկիզբները, 1817ին, երբ Աւխտիս բարեկամ և բարերար՝ պարոն Յակով տղա Սեղբառեանի ծախքով ամբողջապէս նորոգուեցաւ եկեղեցւոյ յատակը ճերմակ և կարմիր քառակուսի մարմարներով, եկեղեցւոյ մէջ գտնուած տապանաքարերը հանուելով փոխադրուեցան յիշեալ փոքր աւանդատուն մէջ, ուր կը մնան մինչև ցայսօր։ Բայց ոյդու չմուցուեցաւ այն երջանիկ հոգւոց յիշատակն, որոնք ուղեցին հոն թաղուիլ, մասնակցելու համար այն եռանդուն աղոթից, երգերուն, որ հնութեանց և խունկերուն, որոնք ամէն որ ամզորէն երկինք բարձրանալով բարդ ի բարդ։ Կ'իջեցնեն քաւութեան ցողը ի զովութիւն իրենց ցամաքած նշխարաց։ Միսիթարայ ուխտու, երախտապարտ իրեն բարերարներուն, կը կատարէ ամէն տարի անոնց հանգստեան պաշտօնը, լոյսեր վասելով դամբաններուն վրայ՝ մահուան ստուերը ցրուելու և անոնց հոգիներուն մաղթելու յաւիտենական լոյս։

Եկեղեցւոյ մէջ գտնուած մութ կարմրագոյն մարմարէ վեց սիւները, որոնք վեր կը բռնեն խմբարանին զոթացի կամարները, հնութենէն սեցած ըլլալով, Միսիթար մաքրել և յզկել տուաւ, և այնպէս փայլեցան որ իրեն նոր կ'երևէին։ Որմերը, կամարները և առաստաղը՝ մարմարի փոշով խառն



Մհծ Սամեղուիս.

յէջ 377.





սպիտակ բռով ծեփել տուաւ, այնպէս որ ամբողջովին քարե շինուած կը կարծուէին . իսկ դրաէն՝ կրով ծեփուեցան և կարմրագոյն ներկուեցան եկեղեցւոյ պատերը : Այս բոլոր շինութեանց և նորոգութեանց համար 2500 դահեկանի ծախք եղաւ, որուն նպաստեցին միարանութեանս բարեկամք . Եսնի սեպուհը 50 դահեկան նուիրեց . իսկ Շէհրիմանեան ընտանիքէն՝ պարոն Աստուածատուր՝ 250 դահեկանի շինութեան նիւթ տուաւ, և պարոն Ասհրատ՝ 500 դահեկան սղորմութիւն տուաւ : Լսնիք թէ ինչպէս կը նկարազրէ Միսիթար իւր նամակաց մէջ եկեղեցւոյ շինութիւնը . « Ետ ծանր եղաւ եկեղեցւոյ շէնքը, վասն զի փոտած ըլլալով բոլոր առաստաղը, վար ասինք զայն, և հարկ եղաւ բարձրացնել երկու կողման պատերը, որպէս զի ըստ կարզի ըլլայ ծածքը . միջին կամարը և երկու տափարակ կողմերը բանրինելայով շինուեցան, որոնց վրայ պիտի զայ յեասյ մարմորինի ծեփը . նոյնպէս պատերն ալ մարմորինով պիտի ծեփուին, և պատերուն վրայ չորս մեծ պատուհան պիտի շինուին . . . Աւագ խորանը առաջ պիտի բերուի և մարմար քարով պիտի շինուի, իսկ անոր ետև պիտի ըլլայ զայը, տառնեհինդ ընկուղենի նստարաններով, և նստարաններուն առջե աղօթարանք պիտի դրուին, ինչպէս է միւս եկեղեցեաց մէջ . . . Պիտի շինուին զարձեալ երկու խորան՝ աւագ խորանին աջ ու ձախ կողմերը, ինչպէս նաև Ա. Աստուածածնի խորանին դիմաց՝ ուրիշ խորան մը<sup>2</sup> . Եկեղեցւոյ շինութեան աւարտելէն վերջ կը զրէր . « Եկեղեցւոյ շէնքը յաջաղութեամբ աւարտեցաւ . շատ գեղեցիկ եղաւ և ամէն տեսնողները կը գովեն . Հազիւ աւարտեցաւ Հոկտեմբերին վերջը և նոյեմբերի 9ին օժման հանգէոը կատարելով, առաջին (ձայնաւոր) պատարագը մատուցինք աւագ խորանին վրայ : Մարմարէ սիւները և խորիսիները, որոնք առաջ սեցած և տգեղ կ'երեէին, մաքրել և յդիել տալով, այժմ այնպէս կը փայլին՝ որ տեսաղք կը կարծեն թէ նոր շինուած և դրուած են . և բոլոր եկեղեցին այնպէս եղաւ, իրը թէ որմերը, առաստաղը և կամարը քարաշէն են, և երգելու

1. Այս է, չերտ շերտ առխոտեներով :

2. Առ Հ. Պաղսու. 1722 սպասուս 50 :

ժամանակ այնպէս կը հնչէ և արձագանգ կռւ տայ, որ  
կարծես թէ շինուածին մէջ փայտի կտոր մ'անդամ շկայ<sup>1)</sup>:

Եկեղեցւոյ առջև կը գտնուի գաւիթը՝ շորս պատռւհան-  
ներով, և փոքր որահիկով մը, որ վանքին կամարաւոր քա-  
ռակուսի ծաղկոցին առջև կը հանէ: Գաւիթին ի սկզբան —  
Մասիթարայ ժամանակ — շատ պարզ էր, անշուք ձեզունով  
և պատերով, աղիւսէ յատակով, և անոր միակ զարդն էր՝  
հին, քանդակազարդ բիւզանդական շիրմիլ Ծուքոլայի, զոր  
յիշեցինք յառաջ: Այդ շիրմին ներքեւ՝ որմին վրայ զետե-  
ղուած է առազանաքար մը, յորում կը կարդացուի:

Ազայ Թետրոս Շամբիմանեամ Ֆուղայեցի

Ասոյ լսուորե յիւր վիմնափոր մանգչի շիւ մի

Այդ անձն ալ միաբանութեանս բարերարներէն մին եղած է,  
ընտանեկան ազնուականութեան հետ միացոցած բարե-  
պաշտութիւնը, և վախճանած անցած գարուն սկիզբները,  
1803ի յուրիս 14ին, ինչպէս կը կարդանք լսուին արձա-  
նազրութեան մէջ:

Գաւթին միւս կողմը կը տեսնուի սպիտակ կճեայ գամբան  
մը, վրան ածիւնակիր սափոր մը, դաստորկ՝ ինչպէս շիրմիլ:  
Դամբանին պատրաստողը, որուն անունը նշանակուած է  
վրան:

Աղեքսանդր Ռաֆայէլ Դարամեան  
Ելլայր Միկիթարեամ Միաբանութեամ,

կը յուսար հանգչիլ հոս, իւր սիրած անդորրաւէտ կղզեկին  
մէջ. և մահը, որ զզիսեր երրեք ժամադրութիւն, կը  
հասնի՝ կը մրանէ զանիկայ աշխարհին ամենէն աւելի ժխո-  
րուս քաղաքին մէջ, և հոն կը թաղուի: — Եկեղեցւոյ  
գիխաւոր մուտքին երկու կողմերը կանգնած են երկու զոյդ  
զաղղիւական կարմրերանդ մարմարէ յարդի սիւներ, որք յա-

1. Առ Հ. Պողոս 1722 դեկտեմբեր 10:

2. Պ. Աշերանդր Դարամեան եկեղեցեակ մը շինել առևով Լոնդոնի  
մատկայը: Իրեն վերջին փափաքին համեմատ, նոյն եկեղեցւոյն մէջ  
թաղուած է: և ոյսպէս զտարկ թաց իւր պատրաստած շիրմիլ:

առջ աւագ խորանին ճակատը կը զարդարէին։ Այդ սեանց մէջտեղ երկուստեղ կը տեսնուին որմամած երկու կճեայ տախտակներ, հայերէն և բատիներէն արձանազրութեամբ, ի յիշտատակ այն երջանիկ օրուան, յորում մայրավանքս պատուեցաւ Պիռու Լի այցելութեամբ, յամին 1800 մայիսի 9ին։ Աչաւասիկ հայերէն արձանազիրը.

Պիռս եօթմերորդ նովիս համրական  
Ընտարեալ ի Վէճէժ յաթոռ Պետրոսեամ,  
Ցացց ելեալ փառօք նորց Միփթարեամ  
Ընդ ծիրամազգեաց Ստեփանի Պորմեամ.  
Զմրանձամց գումար գթովք ընդգրկնալ  
Ցողոյց յարգանաց ոտից տեսամազքեալ,  
Սլքրոյ տաճարին ծիր առատ շնորհեալ  
Բնաւից հայկազանց պարծամս հաստատեալ.  
Հրճուի ընդ պարզն Ռարում Միփթար  
Երկմմ նորոգի կողի տուրը Հազար.  
Մեծաց երախտեացս արծամ տնվրթար  
Կանգմի ասսամօր համուրց ազլարար.  
Թուիս ՌՄԽթ — 1800 Մայիս 9։

Դեռ չհեռացած եկեղեցւոյ բակէն, — նախ քան ոկոիլ վանքին միւս շինուածոց վրայ խօսիլ, — հարկ կը համարիմ յիշել համառօտիւ, թէ այս երկդար շրջանին մէջ ինչ աչքի զարնող փոփոխութիւններ կրած է եկեղեցին, մանաւանդ վերջին տարիներուս մէջ, ի մօտոյ կատարուելիք Երկհարիւրամեկի առթիւ։

Նախ և առաջ, Միփթարայ անմիջական յաջորդին՝ Մելգոնեան Արքահօր առաջին տարիներուն, եկեղեցւոյ բեմը բարձրացուցին, անոր հետ նաև աւագ խորանը, գէոյ ի ետև տանելով. իսկ դասը՝ խորանին առջև փոխազրուեցաւ։ ըստ ազգային արարողութեան 1816 թուականին, պարոն Աղեքսանդր Ղարամեան իրեն ծախքով շինել տուաւ, աւագ սեղանին ետև, ոիւնակերտ՝ եռանկիւնաձև վերնազարդով խորանը, երեք արձաններով և Առաղիքանիի նկարած իւզաներկ Ա. Ղազարու պատկերով, որ մեաց մինչև 1899 տարին։ Եսան բարեբարին ծախքով ընդարձակուեցաւ նաև ա-

ւանդատունը, խորանը մարմար քարերով շինուեցաւ, որմերը և դարանները ընկուղի փայտով դրուադուեցան։ Այս բոլորը նշանակուած է՝ աւանդատան աւազանին վերև որմամած արձանագրութեան վրայ, որ է.


Ի վայելլութիւն փառաց տամմ Աստուծոյ — Աղեքտսմզր Ռաֆայէլ Դարամեամ — յօժարնացայ — կանայ սեամիք վերճառ զարդ յօրիմուածովք և նոր պատկերաւ — պայծառաց ուցանել զաւագ խորան եկեղեցւոյս — կամգնեալ և զիտրան աւանդատաւուն — համօրէթ զարդուք որմոցն և յատուկիմ և տապամիմ — և բացմամբ եւ կուգ կողմնակամ դրանց եկեղեցւոյս — յիշատակ ամմուաց բարևացապարտ դատոխարակին իմոյ — Բարգոյ հօր Նիկոլովսոսի վարդապետի թուզացան — ի թուլին Հայոց ՌՄԵկը. յամի Տեսառն 1816. ի մայիսի 30։

Նոյն ժամանակները նորոգուեցաւ նաև եկեղեցւոյ յատակը, փոխանակ ազիւսի՝ մարմար քարերով շինուելով։ Վաթունական թուականներուն ներկուեցան եկեղեցւոյն ձեղունը և պատերը, բայց մեաց դարձեալ մի և նոյն անշուք պարզութեան մէջ։ 1884 տարւոյն՝ վերցուեցան դասին ընկուղի թանձր նստարանք, և անոնց տեղ շինուեցան այժմութեթեւ նուրբ նստարանք և կարմրագոյն մարմարեայ զեղեցիկ վանդակասիւնը։

Բայց եկեղեցւոյ ամենէն աւելի աչքի զարնող նորութիւնք եղան վերջին տարիններոււ մէջ, Ուկատիս Արհիապատիւ Գլխոյն ջանքերով։ Ուզերով բեմը ընդարձակել, վար առնուեցաւ խորանաձև ճակատը, որուն սիւները՝ դաւթին մէջ դրուեցան, և շինուեցաւ կամարագարդ կոնքը, հինգ զոթացի նրբանձև պատուհաններով, որոնց երեքին մէջ զետեղուեցան նկարագեղ, գունագոյն ազակիներ՝ Ա. Ղազարու, Ա. Սահակոյ և Ա. Մեսրովբայ պատկերներով։ Ուկագ խորանը գեռ աւելի ետ տարուելով, բեմին վրայ ընդարձակ տեղ բացուեցաւ, որով աւելի հանգստեամբ և շքեղորէն կրնան կատարուել եկեղեցական հանդէսները։ Բեմին երկու կողմնակի որժերուն վերը՝ նկարուեցան զլխաւոր առաքեալք, ինչպէս նաև կամարաբարձ սեանց զլուխներուն վրայ կ'երեխին՝ մեր սրտին հետ՝ լեզունիս ևս հասկցող սրբոց և վկայուհեաց որմանկարք, որոնք խորհրդաւոր լուռթեան մէջ՝ կը խօսին կարծես մեղի հետ։ Կապուտակ և աստղամամուկ

լէ 370.

աղջկական յարկութեան .





ձեղունը՝ կը կազմէ սրբարանին երկինքը, ուր կը բարձրանայ աշքը՝ որմերուն և կամարաց վրայ ցանուած ուկեզոյն խաչերուն միջէն անցնելով։ Այսպէս, ամէն բան խորհրդաւոր է հօն, ուր ամէն միտք ստիպուած է խորհիլ Անհունին վրայ և պաշտել զանիկայ, և ամէն սիրո ստիպուած է սիրել անսահման գեղեցկութիւնը։ Նկարուած և մաքրուած են նոյնպէս աւանդատունը և զաւիթը. վերջնոյս ձեղունին վրայ է՝ երեկին երեք նկարներ. միջինը՝ կը ներկայացնէ Տիրամայրը, որ կը հոկէ մայրենի գուրգուրանքով Մխիթարայ մենաստանին վրայ, իսկ միւս երկուքը՝ կը ներկայացնեն Հիմնադրիս վարուց մէջ պատմուած երկու տեսիլները։ — Անցնինք արդ խօսելու վանքին միւս մասերուն վրայ, շինութեանց ժամանակի կարգով։

Մխիթար դեռ չեր սկսած իրագործել մաքին մէջ ունեցած յատակագիծը վանքին շինութեանց, ի սկզբան, 1717—1718 տարւոյն, շինեց ճաշարան մը, խոհանոց մը և փուռ մը, որոնք անհրաժեշտ էին, և տասնեակ մը սենեակներ, որոնց մէջ երեք երեք հոգի միասին կը բնակէին։ Երկու տարի վերջը, 1720ին, վանքին զիխաւոր մուտքին երկու կողմը երկու սենեակներ շինեց, մին՝ ժառայից բնակութեան համար, և միւսը՝ իրը հիւրանոց։ Նորոգեց նաև ետեղ վրայի միջնայրեկը, սեղանատան պատերը մայր փայտերով զրուագել և ներկել տուաւ, և վերին սրահին հարաւակողմը պատշգամ մը շինել տուաւ լուսանցոյց ապակափեղկերով։

Տարուէ տարի աճելով միարաններուն թիւը, սենեակները չեին բաւեր, ուստի որոշեց սկսիլ շինութիւնները 1724 տարւոյն, հիները վար առնըլով, և անոնց տեղ նորեր կանցնելով. բայց ոչ ամէնը միասին, այլ սակաւ սակաւ և կարգով, որչափ որ կը ներէին դրամը և իրեն զրադանբները։ Նախ սկսաւ հիւսիսային կողմէն. ստորին սրահին վրայ, — որ վանքին մուտքին կամ զրան ուզգութեամբ է և եկեղեցի կը տանի, — բարձրացուց յարկ մը, և անոր մէջ շինեց տասնեմէկ բաւական մեծկակ սենեակներ, որոնց դռները կը բացուին դէպ ի հիւսիս նայող սրահի՝ մը վրայ, որ


1. Այս սրահին մէջ ժամանեակաւ ընդհանրապէս ձերունի հորք քննիկելով, մինչեւ ցոյժմ Արքուն ուն կը կոշուի։


Հինգ կամորաւոր մեծ պատուհաններ ունի, և երկու ժայռերը՝ երկու պատշգամեներ, որոնք դէպ ի Վենետիկ քաղաքը կը նային<sup>1</sup>: Խրաքանչիւր սենեակ երկու պատուհան ունի, շափաւոր մեծութեամբ, որոնք վանքին ծաղկալից քառանկեան վրայ կը նային. գոներուն և պատուհաններուն սեները և բարաւորները քարաշէն ըրաւ՝ հաստատուն ըլլալու համար: Շէնքին պատերը՝ թրծած աղիւսէ շինել տուաւ, արտաքին երեսը կարմրագոյն սուրախառն կրով ծեփել տաղով, իսկ ներբուստ՝ սպիտակ կրով: Գետնայարկ սրահին առաստաղը կամրակապ շինուեցաւ, և յատակը՝ աղիւսէ. իսկ վերին սրահին և սենեկաց յատակը՝ գորշախայտ մարմարասարսա փայլուն քարերով: Այս բոլոր շինութեանց միջոց՝ օրն ի բուն Արքահայրն անձամբ կը հոկէր արուեստաւորաց վրայ, որ շըլլայ թէ չեղին իւր նշանակած ծրագրէն և գեղեցիկ ճաշակի հակառակ բան մ'ընեն: Իւր ձեռքին տակ՝ շէնքին վրայ հոգաբարձու էին Հ. Գրիգոր Քանաքեռցի և Հ. Յակովը Բուզայեան: Անենեկաց շինութիւնն աւարտելով՝ յաջորդ տարին, 1725ին սեպտեմբեր ամսոյն, քահանայք առանձին սենեկաց մէջ սկսան բնակիլ: Յամին 1738 շինեց նաև վանքին հարաւակողմը տասը սենեակներ, ոմանք՝ աւելի ընդարձակ և երկու պատուհանով, և միւսները՝ փոքր և մէկ՝ մէկ պատուհանով, որոնք դէպ ի Լիդոյ կամ Շովինգը կոչուած երկայն կղզին կը նային: Այս կերպով, քանի մը տարուան մէջ, բազմաթիւ սենեակիք շինուեցան, որոնք առաւելօքն իսկ կը բաւէին քահանայից բնակութեան: Ասկայն Արքահայր մեծագոյն զբաղութերէն մին էր՝ նորընծայ պատանեաց հոգեսոր կրթութիւնն և ուսումն, որոնց հոգը և խնամքը ինքը ստանձներ էր, մանաւանդ առաջին տարիներուն մէջ. և կը տեսնէր ցաւով սրաի թէ իրեն խրատները շէին ունենար այն մեծ արդիւնքը, որչափ յուսալի էր ըստ ինքեան. որուն պատճառն էր՝ ուղղայոց յատուկ տեղ մը շունենալը, որով ցրուած էին, և փո-

1. Յիշեալ սրահը այժմ մէկ պատշգամ միացն ունի, որ կը դանուի Աշուշ-շուշ կոչուած շէնքին մօտ. իսկ միւսը, որ արկմասեան կողմը կը դանուէր, վերցուած է, այն տեղէն նոր թէ կամ սրու մը երկնաւով դէզ ի հիւսիս կամ քաղաքին կողմը, յամին 1825, և մինչեւ հիմակ նոր շէնք կը կոչուի, որուն ներքեն կը դանուի պատճառ:

JL 371.

Urgonp quang.





իսանակ մէկ ձայնիք և ուղղութեան՝ զանագան ձայներ և ուղղութիւնք կը շփոթէին զանոնք։ Յանախ երթևեկութիւն մ'էր տղայոց, որ ոչ միայն անպտուղ կ'ընէր Աբրահամ ջանկերը, այլ և մեծ ծախուց և տագնապներու դուռ մ'էր, մանաւանդ այնպիսի ժամանակներ, երբ չկային դիւրութիւնք ճանապարհորդութեան, Դեռ նորընծայարանի չինութիւնը ըլ սկսած, հին չենքին երկու մեծ սենեակները ուսանող պատանեց յատկացուց, ուր միարան կ'ընէին իրենց դասառութիւնները, աղօթը և չանգիստը. և այսպէս բոլորովին զատեց զանոնք քաշանայից ընկերութենէն։ 1726 տարւոյ մայիս ամսոյն՝ նորընծայարանին հիմք դրաւ և հոկտեմբերին աւարտեցաւ չինութիւնը։ Եաւ վայելուշ եղաւ չենքը, որ վանքին ամենէն զեղեցիկ դիրքը ունի, հարաւարեմտեան կողմը, պատապարուած հիւսիսային ցուրտ հովերէն։ Երկու դատիկոն ունէր. վերնայարկին մէջ չինել տուաւ ութ սենեակ, որոնցմէ վեցը կը նային պարտիզին վրայ, իսկ երկուքը՝ ծովուն վրայ. առջևը՝ սրահ մը, և քովը կողմանկի սրահիկ մը՝ որ դասարան կը տանի։ Դասարանին մէջ չինեց ընկոյզ փայտէ վայելուշ նատարան մը՝ դաստիարակին և ուսուցչաց համար, առջևն ալ քառակուսի սեղան մը. իսկ երկու կողմերը՝ աշակերտաց համար՝ երկու երկայն սեղաններ և նատարաններ, հանգերձ զրադարաններով, բոլորն ալ ընկոյզ փայտէ։ Դասարանին կից կը զընուի ուրիշ քառակուսի սենեակ մ'ալ, չափաւորապէս մէծ, որ Հանդիսարան կը կոչուի, և կը ծառայէ ընդհանրապէս զրական և հոգեւոր հանգէսներու, ճառախօսութեանց և տարեկան քննութեանց, և այն։ Իսկ գետնայարկին վրայ չինուեցան երկու սենեակք, պարզ և փոքրիկ մատուս մը, առջևը սրահիկ մը, և անոր մստ երկայն քառակուսի սրահ մը։ Ինչպէս վանքին միւս մասերան չինութեանց, այսպէս ալ նորընծայարանի չինութեան ճարտարապետն եղաւ նոյն ինքն Մխիթար, որուն բոլոր չինածներուն մէջ կ'երկին ճաշակ, վայելութիւն և ամրութիւն։ Մխիթար Աբրահամ իւր նամակներէն միոյն մէջ խօսելով նորընծայարանի չենքին վրայ, կ'ըսէ. «Եէնքը բոլորովին աւարտեցաւ հոկտեմբերի 1726ին» (1726ին), և ծախքը հասաւ մինչև 2300 գուկատի. շատ զեղեցիկ և ազնուաչէն եղաւ. ուար Առ-

տուած, որ անոր բնակիչներն ալ Աստուծոյ ազնիւ ծառաներ ըլլան և ընդունակ ուսմանց<sup>1</sup>։ ուրիշ տեղ մ'ալ կ'րսէ. ահատ գեղեցիկ եղաւ նորընծայ պատանեաց դասատունք, ուր էր թէ ուսանողներն ալ առաջինութեամբ և իմաստութեամբ գարգարուէին։ Տասներկու աղայոց համար նոտարանք և գրասեղանք շինուեցան։ կը մնայ հիմուկ գարգարել խուցերը ընկոյզ սեղանով, աղօթարանով և ազնիւ պատկերներով<sup>2</sup>։ Երկու տարի վերջ, 1728ին, նաւետեղ վրայի սենեկաց գերանները փտած ըլլալով, քակել և նոր շինել տուաւ, որով հինգ սենեակներ ալ աւելցան նորընծայաւանի։


Տարիներու բնթացքին մէջ նորընծայարանն ալ ինչ ինչ փոփոխութիւններ կրած է։ Գետնայարկին վրայ կը գտնուին այժմ, ինչպէս յառաջ, երկու քառակուսի սենեակք, մին՝ աւելի փոքր, որ Ծննդեան խուզ կը կոչուի, ընդհանրապէս հոն շինուելուն համար կիննդեան մսուրը, և միւսն՝ աւելի ընդարձակ, որ իրը գասարան կը ծառայէ։ Ճիշդ դասարանին դիմաց կը գտնուի այժմ մտառուը, նախկին տեղէն հօս փախադրուած 1817ին։ Խորանը՝ նորոգուած և զարգարուած է, պատկերը՝ նոր է, ձեղունը՝ որմերը և յատակը կոկուած և պատուհանները մեծցած են։ Մատուռէն դուրս կը գտնուի փաքր սրահ մը, երկու կողմնակի դռներով, որոնցմէ մին՝ պարտէզ կը հանէ և միւսն ի քարայատակ, և սենեակ մը՝ որ իրը նախաճաշ ընելու տեղ կը ծառայէ։ Երկրորդ յարկին սրահը քիչ մ'աւելի երկնցած է 1883ի հրդեհէն վերջը։ իսկ նաւետեղ վրայի սրահիկին ծայրը քարշէն սանդուզ մը կայ, որ կրակէն առաջ երրորդ յարկը կը հանէր, ուր կային հինգ սենեակք, երեքը՝ քարայատակին վրայ և երկուքը պարտիզին վրայ կը նոյնէին։ Քովի ալ ընդարձակ ձեղուն մը։ 1883ին հրդեհը լափեց՝ որբեց այդ բոլորը, և շինուեցաւ բոլորովին նոր՝ ընդարձակ վերնայարկ մը, ճիշդ միջնայարկին մեծութեամբ, ուր կ'ելնուի լայն քարշէն սանդուզով մը, և ունի առանեկինգ սենեակներ, ողաւէտ, գեղեցիկ տեսարանով, և քառակուսի սենեակ մը՝ հանդիսարանին վրայ։


1. Առ Հ. Եղիս. 1726 սպասու 7։

2. Առ Հ. Միքայէլ. 1727 ժայիս 5։

JL 576.

Սեղմանալույ





Նորընծայ պատանիք զարգանալով թէ թռւավ և տարիքով, և թէ ուսմամբք, և միւս կողմանէ շատերը փափաքելով վանք գալ և կրօնաւորիլ, մտածեց Արքահայրն ուրիշ չենք մ'ալ կառուցանել, Վարժարան անուամբ, ուր պիտի անցնէին աշակերտք՝ յետ նորընծայարանի ընթացքն աւարտելու, և հօն քահանայութեան պիտի պատրաստուէին։ Այդ մտածութիւնը գործադրուեցաւ 1732 տարւոյն։ մարտ ամսոյն չենքին հիմնարկէքն եղաւ և նոյն տարւոյ սեպտեմբերին վերջերը աւարտեցաւ։ Երկայն քառակուսի շենք մ'էր, կրկնայարկ, որ լիերոց որահէն սկսելով՝ կ'երկըննոյ դէպ ի արևեցք, որուն ծայրը շինուեցաւ զեղեցիկ և զուարձալի հովոց մը, վեց վիմստաշ խարսխաղարդ սեանց վրայ հաստատուած առ ի շեղ ծածքով մը, երեք կողմէն բաց, որ կը նայի ծովուն և պարտիզին վրայ։ Գետնայարկին վրայ շինուեցոն վեց սենեակը, որոնք կը ծառայէին իր դասարան, նախաճաշի սենեակ, և այլն. իսկ վերնայարկին մէջ՝ եօթը սենեակը բնակութեան համար<sup>4</sup>։ Սենեկաց մուտքին սենեակը՝ քարե, և դաները՝ ընկուզէ շինեց։ Եկեղեցիէն զատուած ըլլալով փոքրիկ բացօղեայ անցքով մը, անոր վրայ ծածք մը դրաւ, և երկու կողմերը պատերով փակեց, անձրեէ և հովերէ պաշտպանուելու համար եկեղեցի երթալու և գալու ժամանուկ։

Վարժարանն ալ զանազան փախոխութիւններ կրած է։ Կախ՝ գետնայարկին սենեակները իրարու չետ միացուած են, և հիմակ երկայն զատարան մը միայն կայ և նախաճաշի սենեակ մը, յատակը և պատերը կոկուած։ Նորոգուած են, սանդուղը՝ որ առաջ սրահին մէջտեղ էր՝ կողմնակի փախազրուած է։ Եղած սենեակները շրաւելով հարկ եղաւ 1840ին ուրիշ յարկ մ'ալ բարձրացնել, ուր շինուեցան եօթը սենեակը բնակութեան համար։ Երկրորդ յարկին հովացը փախուեցաւ քառակուսի ընդարձակ և լուսաւոր սենեկի մը, 1863-4ին, և ունի վեց կամարաւոր մեծ պատուհան։

4. Միաբար վարժարանի շինութիւնը կ'ակնարկէ հետեւալ խօսքերով։ «Անցած տարի» (1732ին) եոր շենք մ'ալ շինեցիք, նորընեանորանի նման, և հիմակ հոն կը բնակին ամենէն հին և մեծանառակ աշակերտները։ (Առ Հ. Յակովը կարնեցի. 1755 նոյեմբ. 19)։ Սենեկաց թիւն ալ կը յեց, թէ սասներեց խռովեր աւելցն։

ներ և փոքրիկ պատշգամ մը, և կը կռչուի Հանդիսարան, ուր կ'ըլլան ուսումնական ճառախօսութիւնք, քննութիւնք, և այլն . նոյն թուականին վարժարանցւոց դաստիարակին համար ալ շինուեցան երկու սենեակի հանդիսարանին վրայ :

Յետ քահանայից, վարժարանեայց և նոր ընծայ տղայոց բնակարանները շինելու և յարդարելու կահկարասնօք, — այնպէս որ վանքին մէջ յիսուն անձանց բնակութեան սենեակի կային<sup>1</sup>, — սկսաւ այնուհետեւ զարդարել և վայել-չացնել անշուք մեացած մասերը :


Գետնայարկին վրայ՝ հարաւային կողմը շինեց սեղանատաւնը, տասնեւեօթը մետք երկայնութեամբ և վեցուկէս մետք լայնութեամբ, վեց մեծ պատուհաններով, որտարաց, որուն շինութիւնն աւարտեցաւ 1739 տարւոյն հոկտեմբերին, և ճիշդ նոյեմբերի 4ին սկսան ճաշել նորաշէն սեղանատան մէջ: 1741ին ընկուզի փայտով պատել և զրուագել տուաւ որմերը, դոները, սեղանները և ամպիոնը: Սեղանատան մեծ դրան ներքին բարաւորին վրայ քանդակուած է Արքայի թարայ մէկ պատուելոր, որ կը պահուի մինչև այսօրս, այն է:


Աստ լութիւն է պահելի  
Եւ սուրբ Գրոց ուշ զննիլ:

Այն ժամանակէն ի վեր շատ քիչ փոփոխութիւնք եղած են սեղանատան վրայ. յատակը՝ մարմար քարերով շինուած, առաստաղը՝ խաչաձև զարդիկներով նկարուած, և որմերը՝ իւղաններկ նկարներով զարդարուած են, որոնց մէջ ամենէն յարդին է՝ վերջին ընթրեաց պատկերը, վեցուկէս մետք երկայնութեամբ, որ կը զրաւէ սեղանատան ամբողջ ճակատը: Այդ պատկերը նկարուած է ի Հռովմ 1780ին վենետիկցի նշանաւոր նկարիչը՝ Պետրոս Նովիլի, հետևողութեամբ Ռաֆայելի և Լեռնարդոսի նկարած ընթրիքներուն<sup>2</sup>:

1. «Արք բոլոր մենաստանը յիսուն անձանց բնակութեան տեղ եղաւ. և մինչեւ դարուն յիսուն անձինք կ'ըլլան միաբանը» (Առ Հ. Պազու. 1739 դեկտեմբեր 7):

2. Այդ պատկերը, վկենաբկ զրկուելէն առաջ, ի բայց պրուած է Հառվեայ մէջ, զոր աեւանելու զնացեր են մեծամեծ անձինք, որոնց մէջ Բորեկու է շշառանը, որ շատ հաճելով՝ իւր պալուատին ձեզանին պատկերները նովիլիի նկարել առաւել է:





រឿងពិភព, អាសយដ្ឋាន នៃព្រះរាជាណាចក្រកម្ពុជា


តេ 370.


Սեղանատան առջև կայ փոքրիկ զաւիթ մը, որուն կարմիր մարմարէ խորանածե աւագանը, իւր փոքրկութեան մէջ, շատ գեղեցիկ է:

Գետնայարկին վրայ, — թողով միւս փոքր և աննշան չէնքերը, ինչպէս են փուռը, խոհանոցը, զանագան շտեմարանք, ջրհորք, և այլն, — ուշազրու էր քառակուսի ծագկոցը, այժմ քասանկիւն կոչուած, չորս ածուներու բաժնուած, մշտագալար բոյսերով, տօսախներով և գունագոյն ծաղկիներով զարդարուած, որ ոչ միայն իրեն թարմ կանաչութեամբ աշքերը կը պարարէր, այլ և անուշահոտ բուրումներով կը լնուր սենեակները և սրահները: Քառանկեան ճիշդ մէջտեղ կը գտնուէր ջրհոր մը անձրեային ջրոյ. իսկ չորս բոլորը վեր կը բարձրանային կամարաբարձ՝ վիմաձոյլ սպիտակ սիւնաշարք, որոնք երկաթեայ կարմրագոյն վանդակապատերով և գոներով կը փակէին ծաղկոցը օտարաց առջև: — Այդ ծաղկալից պարտէզը, այս երկու դարուց չընանին մէջ, որքան ծնունդներ և մահեր տեսած է բռւսական աշխարհին: Գեռ երեսուն տարի շըներ, մէջ տեղի աւագանին չորս անկիւնները կային ուղղաբերձ՝ ծերացած նոճներ, որոնք տապարի հարուածին ներքեւ ինկան, և փոխանակ անոնց ծեցան, մեծցան ուրիշ ժառեր, որոնք այժմ քառանկեան զարդերը կը կազմեն: Բայց ամենուն վրայ կ'իշխեն իրենց գեղեցկութեամբ, ձիւնածաղիկ հսկայ Մագնուշիան և թեւատարուծ դիոդարան, որոնք կրնան նոյն իսկ արքունի պարտէղներու զարդեր ըլլով:

Գետնայարկէն վեր ելնելու համար՝ չինեց արևելեան կողմը ընդարձակ, լուսաւոր, գեղեցիկ նարտարապետութեամբ և որձաքար աստիճաններով սանդուղ մը, որուն շուշանածե զարդարուն երկաթ բաղրիքն, սպիտակ որմերն և ձեղունը, և չուրջանակի կախուած իւղանկար պատկերքն երևելի հեղինակաց, վայրկեան մը մոռցնել կու տան ստարականին ուր զանուիլը: Միսիթար իւր չէնքերուն մէջ չէ խնայած ոչ մի ծախք, վայելուչ, ճաշակաւոր և հաստատուն ընելու համար: Գեռ սանդուղէն վեր չելած, վայրկեան մը այցելենք նաև Ս. Յինեղիկտուի մատուաը, զոր չինեց Միսիթար 1738 տարույն, և է քառակուսի սենեակ մը, ընդ մէջ սեղանատան և եկեղեցւոյ, զով, ամիսով,

նուաղկոտ լուսով, ուր կը կատարուէր ժամանակաւ ամսու եղանակին մոտած ական ազօթքը : Կարմիր մարմարէ սիւներով պարզ և փոքր խորան մ'ունի, որուն պատկերը կը ներ- կայացնէ զլլ . Բենեգիկառու հոգեղմայլ յափշտակութեան կամ տեսլեան մէջ, զոր նկարած է Հայազգի Յովհաննէս Էմիր պատկերահաննը Հոռովմայ մէջ, 1741 կամ 1742 տա- րւոյն<sup>1</sup> : Մեծ սանդուղէն ելնելով՝ կը հասնինք վերնայտրկին մուտքը, ուր դիմացնիս կ'ելնեն երկու սրահներ, մին՝ յա- րեմուտք ուղղուած, և միւսը դէօ ի հիւսիս երկնցած, ուր կը գտնուին միաբաններուն սենեակները . իսկ ձա- խակաղմը՝ կամարաւոր մեծ դուռ մը, ուսկից մտնելով՝ դեղ- նորակ կճեայ աստիճաններով՝ կը բարձրանանք Գրատաւնը, ձիչդ սեղանատան վրայ և անոր մեծութեամբ : Յատակը զրուագուած է ու ձերմակ փայլուն մանրախիներով, որոնք աղեղներ, ծաղիկներ և թուշուններ կը ձեւացնեն : Մեծ դրան վերև՝ բարձրագանդակ մեղալիսնի մէջ նկարուած է Հաւատըլ, կիսասաւուերի մէջ, որ կը սփաէ բարձրէն իւր հովանին զիտութեանց վրայ : Չօրս պատուհաններուն վրայ՝ բոլորաձեւ զանէ քանզակներու մէջ կը բազմին շորո աւե- տարանիչք, նոյնակէս ստուերու և խորհրդաւոր : Իսկ ա- ստատաղին վրայ, բարձրագանդակ կճածեփ դրուագներու մէջ, որոնք կը ձեւացնեն ստիորներ, թոշուններ, ծաղկեայ զրասանգներ, գուրս կը ցատքեն երեք որմանկարք, Տիե- պողոյի աշակերտ Յունեոյի վրձինէն ելած, որոնցմէ եր- կուքը կը ներկայացնեն Հայ և յատին եկեղեցեաց վար- դապետները, իսկ միջինը՝ Ա . Կատարինէ կոյսը, որ կը վիճարանէ Աղեքսանդրիսյ իմաստափրաց հետ : Այն չէնքը, որ իւր ամբաղջութեան մէջ կրնայ հարտարատպետական ա- րուեստի գոհար մ'ըսուիլ, գեռ երէկ աւերտուած կը թուի, այնչափ կենդանի են նկարներուն գոյները, ոյնչափ մաքուր և խնամքով պահուած : Որմերը ժածկուած են տանձենիէ շինուած զրադարաններէ, որոնց ձեւը նոյն ինքն Միսիթար զծեր և պատրաստեր է, բոյց տեսած չէ անոնց շինու- թիւնը : Այն ժամանակէն վերջը մինչեւ այսօրս հօխացեր է զրատունը բազմալեզու յարդի և թանկազին զրբերով :





սակաւագիւտ հրատարակութիւններով, և զրեանց թիւր կը հասնի երեսուն հազարի: Անոր զարդերը կը կազմին՝ Կղեմէս ԺԳ և Գրիգոր ԺԶ Քահանայապետաց — որ միարանութեանս սերտ բարեկամներ եղած են — աղնիւ մարմարէ շինուած արձանները, պալի<sup>1</sup> կոչուած հնդիկ գուառութարրատով արձանագրութիւնն մը պատկիրի վրայ, բաւ զմբուռւած եղիպտական մուսիս մը, ազգային և օտար հինգ դրամներու հաւաքածոյ մը, և այլն: Նիւթէս դուրս ըլլալով, շեմ ուզեր հոս ծանրանալ Զեռագրատան վրայ, անցած դարուն կէսերուն շինուած, որ կը գտնուի գրատան խորը, ուր կը պահուին 1500էն աւելի հայ ձեռագիրներ, ամենայն խնամքով պահուած, — գրատան առջև գտնուած փոքրիկ թանգարանին վրայ, ուր զետեղուած են որմայեց գարաններու մէջ ամէն տեսակ հետաքրքրական առարկաներ, զանազան հնութիւններ, արևելքան արարագներ, մեղալներ, նշանաւոր հեղինակաց նկարներ, կայսերաց, թագաւորաց, իշխանազանց կենդանուգիրներ, և այլն: — Փոքր Գրատան վրայ, Լորդ Բայըրընի սենեկակ կոչուած, ուր անզդիացի մեծ բանաստեղծը կ'աւառմասիրէր հայ լեզուն, և հիմայ կը պահուին հոն Վենետիկոյ, Այեննայի, և ուրիշ քաղաքաց մէջ հրատարակուած հայերէն զրերը: Ամենէն վերջ՝ շինեց Մխիթար իրեն համար երկու սենեկակ արևմտեան կողմը, վանքին զլխաւոր մուտքին վրայ, որոնք միւս սենեկակներէն ուրիշ բանով չէին տարրերեր, բայց քիչ մ'աւելի բնդարձակ էին:


17/0ին աւարտելով շինութիւնք, առաստաղները ներկել տուաւ յարմար գոյներով, որոնք թէ ճճիններէ և փտութենէ ազատ պիտի պահէին և թէ զարդի տեղ պիտի ծառայէին: Վանքին զլխաւոր սրահից մուտքերը երկաթի գաներով փակեց, որպէս զի չկարենան ներս մանել աշխարհիկ անձինք, մանաւանդ կանայք, և ազատ թողուց միայն այն որոշը՝ որ ուզզակի եկեղեցի կը առնի: Իւրաքանչիւր վանական բանալի ունէր, որով կը բանար բակալ գաները, երբ հարկ ըլլար մանել կամ եւ և կը փակէր գաները,


1. Pali, հին ժաղավրդական շաւառարարքան մը, որ բուդդայականաց նուիրական լիզուն դարձած է:

նել։ Խոկ վանքին դիխաւոր դրան պահապան դրաւ աշխատաւոր եղբայր մը, որ հարկ եղած ժամանակ բանար և փակէր յատուկ բանալիսվ։

Չափազանց խիստ էր Արքահայրն այս կանոնին, և երբէք տնօրինումն կամ բացառութիւն չէր ըներ ո և է անձի համար։ Չանազան անդամներ իշխանուհիք և ազնուական տիկնայր եկան վանքը այցելելու, խնդրելով Արքահօրէն որ կարենան տեսնել չէնքերը։ Նա երբէք չղիջաւ անոնց թախանձանաց, այլ քաղցր և ազնուական խօսքերով ներումն խնդրելով, կանոնին ծանրութիւնը անոնց առջև կը դնէր և կ'ըսէր, որ եթէ ինքը կանոնազանցութիւն ընէր այս բանիս մէջ։ չար օրինակ մը պիտի տար իրեն հպատակաց։ Կը համոզուէին անոնք և շինուած ետ կը դառնային։ Անգամ մ'ալ վենեետիկցի գեսպան մը արևելքէն դարձած Լազարէր կոչուած արգելարանին մէջ կը սպասէր։ օր մը անոր տիկինն այցելութեան երթալով, երբ քաղաք պիտի դառնար երեկոյեան դէմ, յանկարծ օդը սպառնալից կերպարանք մ'առաւ, և գեսպանուհին վախնալով շարունակել ճանապարհը, Հայոց վանքը սպատառնեցաւ։ Արքահայրն իմանալով գայս, գնաց ընդունեցաւ զինքը և դրան մատ եղած մեծ հիւրանոցը տարաւ, ուր շրօ՛ հինգ ժամ հարկ էր սպասել, մինչև որ փոթորիկն անցնէր։ Տիկինը փափաքեցաւ օգտուիլ այն առիթէն և տեսնել չէնքերը, որք այնքան հաշակուած էին քաղաքին մէջ։ Միկիթար անկեղծօրէն ըսաւ, թէ անկարելի էր կանոնը խախտել ի շնորհս իրեն։ Տիկինը չկրկնեց խնդիրքը, շատ գոհութեամբ բաժնուեցաւ Ա. Պազարէն, և քաղաք գառնալով համբաւեց հայ վանականներուն խիստ կարգապահութիւնը։

Վանքը՝ Միհիթարայ ժամանակ երկայն քառակուսի ձեւով չէնք մ'էր, իրը 75 մետր երկայն և հ40 մետր լայն, շրջապատուած երկու կողմէն պարտիզով մը, ուր կային այլեւայլ պաղատու ծտուեր, բանջարեղէնք, և այլն. իսկ հարաւակողմը՝ խիստ առ խիստ տնկուած էին դափնիք, որոնք թէ օդը կը բարեխառնեն իրենց անուշահոտութեամբ և թէ վեսասկար հովերու բանութենէ կը պաշտպանեն։ Պարտիզին մէջ կային զանազան ճեմելիքներ, որոնց կամբառձեւ





Խորամ Ս. թեմիզիկառսի. jkz 377.

ծածքը՝ որթերուն տերևներով գոցուած՝ կը հովանաւորէ ամառ ժամանակի։ Ա. Ղազարու նախկին տարածութիւնն էր, երբ Մխիթար ստացաւ զայն, 7200 քառակուսի մետր։ 1815ին երբ Աւարիոյ Փրանկիսկոս Ա. կայսրը այցելեց կղզեկիս, ամէն բանին հաւնեցաւ՝ բաց ի փաքրկութենէն, ուստի հրամայեց ընդարձակել զայն։ և միաբանութիւնս ծովը լեցնելով հիւսիսային կողմէն, զրեթէ նոյնշափ ևս ընդարձակուեցաւ, և կղզոյն այժմու տարածութիւնն է իրը 14400 քառակուսի մետր։ Այս մասին վրայ նոր թե մ՞աւելցաւ, իրը յիսուն մետր երկայնութեամբ, որուն գետնայարկին վրայ շինուեցան տպարանը, կազմատունը և զրոց շտեմարանը։ իսկ վերնայարկին վրայ՝ ընթերցարան մը՝ որ Ճեմարան կը կոչուի, հինգ ընդարձակ սենեակներ՝ քահանայից բնակութեան համար, և նկարազարդ ոսկեձեղուն՝ չքել դահիճ մը, ուր կը գտնուի հաւաքածոյ մը բնազիտական գործեաց և բնապատմութեան առարկայից։ իսկ քովը կողմեակի վեր կը բարձրանայ աշտարակաձև դիտարան մը։ Պարտիզին ամենէն արգուանդ և զեղատեսիլ կողմը այս նոր լեցուցած մասին վրայ կը գտնուի։ Ութանկիւն մը, ուր կը կարծիս ինքզինքդ քալոզ նաւու մը ցոռոկին վրայ, որ կը կտրէ ալիքները։ ուսկից օրուան ամէն ժամերուն զանազան տեսարաններ կը վայելէ մարդ։ սոկեզօծ և գոյնզգոյն մուտքեր արեւու, մշուշապատ և մերթ հայերանման ջրերուն մէջ զլիսիվայր ցոլացած քաղաքը, և անոր ետև պարսպի նման կանգնած ձիւնապատ կամ ամպածրար Ալպեան սարերը, և այլն։ Երկայն ծառուղի մը, ուր կարմրածաղիկ դափնեավորդերը և երկայն՝ մայլ նոճիները իրարու խառնուած, մարդկային կենաց վայելից և վշտաց խորհրդանշանները կը թուին։ Թարմ կանաչութիւն մը, խիտ բուսականութիւն մը, և անոնց մէջ կորսուած կարմիր չէնքերը, որոնք կը նշանակեն ներքին ուժերուն թարմութիւնը, շարժումը և տեսականութիւնը։

Եէնքի մը զեղեցկութիւնը կայացած ըլլալով, անոր մասնց՝ իրարու և բոլորին չետ ունեցած ներդաշնակ համեմատութեան մէջ, ինչպէս կ'ըսէ Մխիթար Աբրայ<sup>1</sup>, այս

տեսութեամբ յիրաւի գեղեցիկ էր անոր կառուցած վանքը, որուն համար կու գոյին շատերը, իշխանք, գետպանք, ծիրանաւորք, նուիրակք, և այլն, և Մխիթարայ հանձարայն և կարգւթեան վրայ հիացած ետ կը դառնային: Օր մը թագակիր արքայ մը այցելութեան գալով, որ Արքահօր ծանօթ և մտարիմ էր, և խօսք բանալով վանքին շինութեան վրայ, խորհուրդ կու տար իրեն մարմարէ արձանը կանգնել՝ իրը յաւերժական կոթող մը, Մխիթար ժապելով ցոյց տուաւ իւր աշակերտները և ըստաւ. Ահա իմին կենդանի արձաններս: Եւ յիրաւի վանքին ոչ մէկ խորշին մէջ շենք գտներ արձանագիր մը կամ յիշատակութիւն մը: Աակայն իրեն աշակերտաց բուռն թախանձանքէն միայն ստիպուած, ոպարզապէս ապագայից զիտութեան համար թէ ե՛րբ, որու ժամանակ շինուեցաւ այս հոյակերտ մենաստանը, զի՞աւ քանդակել տալ սեղանատան մեծ դրան արտաքին բարաւորին վերև՝ հետեւել պարզ և անշուշ արձանագիրը.

ՄԵՆԱՍՏԱՆԾ ԱՅՍ ԸԱՏ ԲՈԼԱՐԻՆ  
ԶԻՆԵԱԼ, ԵՂԵՒ Ի ՓԱԼ-Ս ՓԲԿՁԻՆ,  
ՏԱԲԲԱՅՈՒԹԵԱՆ ՍԵԲԱՍՏԱՅԻՈՑ  
ՄԽԻԹԱՐԱԾ ՎԱՐԴԱՎԱԳԻՏԻՆ.

ՑԱՄԻՆ 1740:

Այս տողերուն մէջ կը փայլի Մխիթարայ հոգւոյն բովանդակ մեծութիւնը:

---





Մատեմադաբան գրչազրաց .

յէջ 379

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Պայմանը տղայոց բժտրութեամ. — Զգիստաւորութիւն ուսամոդ պատամեաց. — Արանձին բակութիւնը նորը թայից և վարժարանեաց, իրենց յատուկ զաստիարակմերով, ուսուցիչներով և կամոմմերով. — Նկարագիր Մխիթարաց տուած զաստիարակութեամ. — Հոգւոր և ուսումնական կրթութիւնը. — Սրիմանորութեամ և ուխտադրութեամ ճամդէսը. — Ընդունելութիւն ուսուր աստիճամմերում և վարդապետական գտարամի. — Վարչութիւն, բարեկարգութիւն և վանական սովորութիւնը. — Շատերը կը փափաքիմ կոօժաւորիլ Մխիթարաց հեռարին տակ.

**Յ**ետ դիտելու Մխիթարաց դաստակերտին արտաքին գեղեցկութիւնը, անցնինք նկատել անոր ներքին կամ՝ բարոյական կազմութիւնը և վայելութիւնը, յորում պիտի փայլի Մխիթար իրեն մեծ կարողութեամբ՝ իրը դաստիարակ և վարիչ կրօնաւորական ընկերութեան:

Ենքի մը վայելութիւնը և պատուականութիւնը կայանի նիւթոց ազնուութեան և անոնց ներդաշնակ յօրինուածութեան վրայ, այսպէս ալ բարոյական շէնքի մը գեղեցկութիւնը կը կայանայ՝ ընտիր, կիրթ և ուսեալ անձինքներէ կազմուած ըլլալուն և անոր մէջ տիրող բարեյարմար ներդաշնակութեան վրայ: Այդ՝ մասամբ մը արդիւնք է լաւ դաստիարակութեան, որ պէտք է սկսի մանուկ հասակէն: Աերմանէ, մշակէ, արիւն՝ քրտինք թափէ. եթէ ապառաժ է երկիրը, ամուլ և անպատուղ կը մեան աշխատանքդ. Իսկ եթէ արգաւանդ է, հազարներ կը հնձես: Այսպէս նաև դաստիարակութեան մէջ. հարկ է նախ ընտրել երկիրը, ճանշնալ տղուն բնաւորութիւնը, թերութիւնները, ի նկատի առնուլ անոր տրուած նախնական կրթութիւնը, և ըստ այնմ սկսիլ դաստիարակութեան դժուարին գործը:

Մխիթար իւր գործին հիմը դրաւ՝ մեծահասակ անձինքներ ժողվելով շուրջը. բայց փորձով համոզուեցաւ թէ պիտի

չհասնէր իւր դիտած նպատակին, մինչև որ փոքր մանուկներ չժաղվիր, կրթելու այն գալար մաքերը և որտերը, և իրեն հոգին զգեցնելու անսնց: Յետ որոշելու զայդ, իւր մեծա- դոյն փոյթը և ուշը այդ բանին գարձուց: Արևելք զտնուող քարոզիչներուն զրեց որ ընտրանօք փարբահասակ տղարներ դրկեն ի վենեստիկ, որոնք ըլլան ազնիւ և քաղցրաբարարոյ, հոգեսէրք, բարեպաշտ ընտանեաց զաւակներ, որամիտք, ընթերցասէրք և ընդունակք ուսմանց<sup>1</sup>: Խստիւ կը պատուի- րէր որ լաւ ընտրութիւն ընեն, քննեն անսնց կազմուածը՝ որ տկար և հիւանդոտ ըլլան, փորձեն զանոնք, բացատրեն թէ ինչ է կրօնաւորութիւնը, դժուարութիւններ զնեն առ- ջենին, որպէս զի աւելի ևս յայտնի ըլլայ անսնց կոչում ունենալը կամ ոչ<sup>2</sup>: Կը զրէր որ չընդունին ծնողաց մէկ հատիկ զաւակները, բայց միայն եթէ ուխտած ըլլան Աս- տոււծոյ նուիրելու զանոնք<sup>3</sup>: Տարիքի մասին՝ ամենէն փոքր 12ամեայ և ամենէն մեծ 16ամեայ տղայքը կ'ընդունէր<sup>4</sup>: Եատ մեծահասակ պատանիք իրենց ծախարով մինչև վենե- տիկ եկան և խնդրեցին Արբահօրէն որ նորընծայարան մտնեն և քահանայ ըլլան. բայց չընդունուեցան, կրթուելու և ուսումն ընելու արարիքն անցած ըլլալով<sup>5</sup>: Դարձեալ տղայց ընդունելութեան արգելքներ էին արտաքին պա- կասութիւնք, ինչպէս չափազանց հասակի կարճութիւնը<sup>6</sup>, չիլ և չատ խաղացող աշքերը, և այլն. շէր ընդուներ նաև ձառաղէմեները, և ուրիշ ո՛ւ և է արատաւորները, վասն զի

1. Առ Հ. Առեփանոս. 1728 գիտուուր 9:

2. Առ Հ. Աղիա. 1726 ոգոսուու 7:

3. Առ Հ. Թովման. 1751 ապրիլ 26:

4. Առ Հ. Յակովը. 1724 նոյեմբեր 12:


5. Թուրոս անունով պաշտեցի մեծ տարիքը երիտասարդ մը. քաւական հարուստ և ազնուական ընտանեաց որդի. հետը 2000 մարտիլ զրամ ա- ռած, Վենետիկ եկար և Արբահօրէն խնչըրց նորընծայարան մտնել: Միսիթար մերժեց խնչիրը. այն ժամանակ թուրոս առաջարկեց աշխա- տաւոր եղբայր ըլլալ. այդ պայշտուով ընդունուեցաւ միաբանութեան ժէլ (Ժամանակագր. էջ 567. թ. 2):

6. Զայդ կը հստատէ հետեւեալ դիսուածը. Յովհաննէս անունով պա- տանի մը կար, առարինի, աղնիս և ուշին, բայց տարօրինակ կերպով կարծահասակ: Միսիթար հաւ դրկեց զանիկոյ: Իրը քահանայութեան ան- ձարժար (Ժամանակագր. էջ 449. թ. 2):



Հ է 381.

Ս - Հանգստի արդի վեհակիութէ.



արտաքինը յաճախ ներքնոյն հայելին է, կ'ըսէր, և աղնիւ իւղերը՝ հասարակ անօթներու մէջ չեն պահուիր. մինչդեռ դիմաց շափակցութիւնը և արտաքին բարեձեռութիւնը՝ շատ անգամ հոգւոյն գեղեցկութեան նշաններ են: Միւս կողմանէ կ'ընտրէր աւելի աղքատներուն քան հարուստներուն զաւակները. «Եթէ երկու տղաք ըլլան, կը զրէր, մին՝ աղքատ և աղնիւ, իսկ միւսը՝ հարուստ և պակասաւոր, պէտք է առաջինը ընտրէք քան վերջինը<sup>1</sup>»: «Նայեցէք որ աղքատներուն որդիքը ընտրէք և զրէր, միայն թէ սրամիս և հեղարարոյ ըլլան. ընդհանրապէս աղքատները խռնարհ և հլու կ'ըլլան, մինչդեռ հարուստներուն զաւակները բարձրամիտ և համարձակ կ'ըլլան<sup>2</sup>»: Անընդունակ ընելու թերութեանց մէջ կը շեշտէր ի մասնաւորի խեռութիւնը և ստահակութիւնը, որոնցմով անսանձ և անզուսպ կ'ըլլան տղայք, — սկամաղձութիւնը, որով տրտում<sup>3</sup> կասկածաւոր և անտանելի կը դառնան ընկերութեան մէջ, — ուսմանց անընդունակութիւնը և անհագութիւնը, որով տկարամիտ և ախտաւոր կ'ըլլան: Ամէն փոյթ և ջանք կ'ընէր որ տղաք զալու և դառնալու միջոցին՝ մինակ չմնան նաւուն մէջ, և ընդհանրապէս իրեն քահանաներէն միոյն կամ ծանօթ և վատահելի անձի մը կը յանձնէր զանոնք<sup>4</sup>: Կը զրէր անզամ մը Պոլիս գտնուող իրեն միարաններէն մէկուն, որ տղայոց պիտի ընկերանար դէպ ի Վենետիկ, թէ «Նամակիս հետ յանձնեցի նաւապետին՝ երեք նորատիստ քերականութիւն, որպէս զի եկող պատանիք կարգան նաւուն մէջ և դատարկ չկենան, որով աւելի խելօք ևս կ'ըլլան<sup>5</sup>»:

Երր վանք կը հասնէին տղայք, իսկ և իսկ զգեստ չէր տրուեր անոնց, այլ մէկ երկու շարաթ աշխարհիկ տարազ կով կը մայիսն. և յետ քանի մ'անգամ զգեստ խնդրելու, Արքահայրն ի ներկայութեան բոլոր միարանից, — ընդհանրապէս նորընծայարանի մատրան մէջ, — համառօտ յորդոր մը խօսելէն վերջ՝ ու մազեղէն կապայ կը հագցը-

1. Առ Հ. Պատու. 1725 Խոյեմքեր 15:

2. Առ Հ. Յակովը. 1731 ապրիլ 20: Առ Հ. Թովման. 1747 յունիս 25:


3. Առ Հ. Պետրոս. յուլիս 5:

4. Առ Հ. Միքայէլ. 1750 յուլիս 4:

նէր անոնց, և կաշեայ գօտի և վերարկու կու տար: Բայց այս՝ բուն կրօնաւորական զգեստը չէր, որ սքիմ կամ փիլոն կ'ըսուի, այլ գանական նշանագղեստ մը՝ պարզապէս աշխարհիկ տղաքներէ որոշուելու համար<sup>1</sup>:

Վենետիկ փոխազրուելուն առաջին տարիներուն մէջ, աշակերտաց թիւը շատ փաքր ըլլալով, առանձին բնակարան և դաստիարակ չունէին, այլ քահանայից հետ խառն կը բնակէին: 1725ին, Հ. Թուվմաս դառնալով արևելքէն և հետը հինգ պատանի բերելով, Արքահայրն որոշեց զանոնք քահանայից ընկերութենէն, և դաստիարակ դրաւ Հ. Առեւ փանոս փարզապէտը, վերակացու անուամբ, իսկ ուսմանց փարժապետ՝ Հ. Մատթէոս Խոդոկիացին: առոնք, Միսիթարայ ձեռքին տակ և անոր առաջնորդութեամբ, տղայց հոգեոր և ուսումնական կրթութեան հոգ պիտի տանէին: 1726ին կառուցուեցաւ Նորընժայարանի շէնքը, որուն մէջ բնակիլ սկսան յաջորդ տարւոյն աշնան: Այդ շէնքը բանալիով փակուեցաւ, ուր ոչ ոք կրնար մտնել բաց ի վերակացուէն, ուսուցիչներէն և Արքահօրէն, որուն առջև շկային ո և է փականք և արգելք: Արտաքնոյն հետ՝ բարեկարգեց նուև ներքինը, դրաւ կանոններ, զորս վերակացուն պէտք էր սահմանական կարգալ տղայց, բացատրել և հսկել անոնց ճիշդ պահպանութեան: Աահմանեց դարձեալ որ ամէն կիւրակէ և տօն օրերուն խոստովանին և հաղորդուին, հոգեոր ընթերցմամբ անցունեն, և դաստիարանին մէջ հաւաքուած՝ քրիստոնէական վարդապետութիւն ուսանին, վերակացուին առաջնորդութեամբ և բացատրութեամբ: Անոնց պարտք դրաւ նաև խոնճի յայտնութիւնը, որ կատարելութեան մէջ զարգանալու գորաւոր միջոցներէն մին է:

Տղայց յաճախ երթեսեկը զրաւեց հակառակորդաց ուշը, հասկցան թէ Միսիթարայ գործը կը ծաղկէր, ուստի ձեռք առին դարձեալ իրենց զէնքը՝ քսութիւնը, տարածեցին ընտանիքներու մէջ սուս զրոյց մը, իրը թէ Վենետիկոյ վանքը ոչ բնակարան և ոչ ապրուստ ունի աշակերտ պահելու, պրով աւելորդ է տղայ զրկել: Աակայն խումբ մը արժանապէս վկայք, որոնք ուսուած էին գանքին հոյակապ





կերտուածը և Մխիթարայ նորաբողբոջ ուխտը, թէ ինչպիսի պատիւ և համրաւ կը վայելէր արևմուտքի մէջ, ինչ երջանիկ, անդորր և մխիթարեալ կեանք կը վարէին խաղաղիկ կզզեկին մէջ, և ինչպէս հօգեոր և մտաւոր սնընդեամբ կը պարարէին աշակերտք, և այլն, — հերքելով ստայօդ և անտեղի զրոյցը, ամէն կողմէ ընտանիքները կ'առաջարկէին վանք զրկել իրենց զաւոկները<sup>1</sup>, Մխիթար տեսնելով վանք զալ փափաքողներուն բազմութիւնը, սիստեցաւ ուրիշ բնակարան մ'ալ կառուցանել, տարիքով և ուսմամբ զարգացած աշակերտներուն համար, որ վարժարան կոչուեցաւ։ Եինութիւնն եղաւ 1732ին, և յետագայ տարին սկսաւ բնակութիւնը։ Վարժարանի առաջին վերակացուն եղաւ Հ. Մատթէոս Եւդոկիացին։ Հոս ալ կարգեր՝ կանոններ հաստատեց, ուսմանց ծրագիր մը սահմանեց, իւրաքանչիւրին գործերը և ծառայութիւնները որոշեց, կարեոր խրատներ և հրահանգներ տուաւ։


Որշափ որ առանձին դաստիարակներու խնամոց յանձնուեցաւ տղայոց կրթութիւնը, բայց Մխիթարայ հովանին միշտ անսոնց վրայ էր։ Յանախ կ'այցելէր նորընծայարան և վարժարան, ուշադիր՝ անոնց վարմունքին և կենակցութեան, կ'ուղղէր իւրաքանչիւրին թերութիւնները, կը կրթէր՝ զաղելու իրենց կրթերը, կամքերնին խորտակելու, դժուարութեանց առջև շվհատելու, վշտաց մէջ արիանալու։ Բնտանութեան հետ ունէր ծանրութիւն, խոտութեան հետ՝ քաղցրութիւն, որով սիրելի էր և պատկառելի միանգամայն։ Անոր մէկ նայուածքը բաւական էր զգաստացնելու յանցաւորը։ Չըսպասուած պահուն վրայ կը հասնէր նա։ կը գտնուէր ամէն տեղ, կը դիտէր, կը քննէր՝ գործերէն աւելի՛ անոնց զիտաւորութիւնը և վախճանը։ Երբ երկու կամ երեք հոգի միասին կը խօսէին, կը մտնէր մէջերնին, կը լոէր թէ ինչ բանի վրայ էր զրոյցնին։ եթէ բարի և սգտակար էր, կը թողուր որ շարունակեն։ իսկ եթէ անշահ կամ զատարկ, իսկոյն կ'ընդհատէր, և շահեկան խօսակցութեան մը սկիզբը կու տար։ Հանգստեան ժամերուն թոյլ կու տար որ վիճարաննեն հանդարտորէն իմաստափ-

1. Ժամանակագր. էջ 316. թ. 4.

ըութեան կամ իրենց ուսած գիտութեանց վրայ . ինքն ալ կ'ունկնդրէր , կ'առարկէր , կ'օգնէր անոր՝ որ պիտի լուծէր կամ պատասխանէր , կը լուսաբանէր խնդիրը և վերջապէս լուծումն կու տար , երբ անոնք կ'անձըրկէին . Երբեմն սե- նեակնին կ'այցելէր , թէ ի՞նչ կ'ընեն , կը կարգա՞ն , կը զրե՞ն թէ դատարկ կեցեր կամ անպէտ բանի մը զրադեր են . անոնց զրածները կը կարդար , կը սրբազրէր , կը խոր- հըրդածէր , և այլն : Այէն տեղ աշք մ'ունէր , թափանցող , որ սրտերը կը կարդար : Մի և նոյն հսկողութիւնը և արթ- նութիւնը կ'ընէր նաև քահանայից : Ձէր կընար տեսնել ո և է կահոնազանցութիւն կամ յանցանք , և առանց խրա- տելու կամ յանդիմանելու անցնիլ : Ընդհանրապէս խստ էր յանցաւորներուն չետ , բայց աւելի ներողամիտ էր տղայոց . առաջին անգամ կանոնազանց գտնուելնուն , ա- ռանձին կը խրատէր քաղցրութեամբ . եթէ կըկնուէէր յան- ցանքը , կը յանդիմանէր հրապարակաւ . իսկ երբ երրորդ ան- գամ զանցառու գտնուէին՝ կը պատժէր : Սովորական պա- տիժն էր՝ թեթև ապաշխարանք մը զնել , զրկել հստարակաց ժամերգութենէ , և ընկերութենէն զատել քիչ մը ժամանակ : Ի սկզբան խստութիւն կը գործածէր , կանոնները յարդել տալու համար : Ինքը՝ պարտուց և կանոնի մարդ , նոյնը կը պահանջնէր նաև ուրիշներէն . թուլութիւնը՝ կործանիչ է միաբանութեանց : Սաստիկ կը յանդիմանէր և կը պատ- ժէր , եթէ մէկն անհրաման կամ ինքնազլուխ գործ մ'ը- նէր . ամէն բանէ առաջ կը տոգորէր անոնց սրտին մէջ հնազանգութիւնը :

Միսիթար՝ հանգստեան ժամերը տղայոց չետ կ'անցունէր . անոնց չետ պարտէզ կ'իջնէր . անոնց խաղերով և անմեղ զուարճութեամբք կը զրօնուր , կը դիտէր թէ ինչպէս ժա- ղիկ կը անկէին , խստերը կը հանէին , և այլն , և այդ բո- լորէն խրատի նիւթ կը հանէր : Որ մը տեսնելով որ պա- տանիք բոյս կը անկէին , և անկելէն առաջ՝ անոնց ժայրերը շաղախսի մէջ կը թաթխէին՝ որպէս զի լաւ արմատ ձգեն , զայն առիթ առնըլով երեկոյեան ըստու . և Առաքինութեան բոյսերն ալ այսպէս պէտք էք անկել օրտերնուդ մէջ . նախ խոնարհութեան տղմին մէջ հարկ է թաթխել , որ լաւ ար-





Միսիթար և մորընծայ մատուկօհը . . . . . յէջ 385 .

մատանան և փորձութեանց տասպէն չի շորանան<sup>1</sup>» : Միիթար, որ այնշափ լուրջ էր ի ընէ և կարգաց ու կանոնաց խիստ, միշտ ժայխտ մ'ունէր դէմքին վրայ հանգստեան ժամերուն. անոր ներկայութիւնը կ'ողեռուէր պատանեաց զուարթութիւնը : Անոնց հարցութեանց կ'ընէր, սորվածնին կրկնել կու տար, առաքինութեանց զործնական կերպեր կ'ուսուցանէր, սրբոց վարքեր կը պատմէր :


Օր մը փոքրիկներէն մէկուն հարցուց . «Նեղութիւնը լաւ է թէ հանգիստը» : — Փոքրիկը պատասխանեց . «Եղութիւնը» : — «Կ'ուղե՞ս ուրեմն, աւելցուց Արքահայրը, որ ես միշտ նեղութիւն ու վիշտ կրեմ» : — Երբ փոքրիկը կը տատամսէր պատասխանելու, ինքն առաւ խօսքը և ըսաւ . «Նեղութիւնը օգտակար են մեղաւորներուն համար, ինչպէս լիդի դեղերը՝ հիւանդներուն . ամէն մարդ իրեն համար պիտի ուզէ նեղութիւնը և վիշտը, բայց ոչ ուրիշներուն համար» :

Անգամ մը տղայոց հետ կեցած կը դիտէր զործաւորները, որոնք ամառուան տաքին կ'աշխատէին քրտնալից . Միիթար՝ տղայոց դառնալով ըսաւ, և ինչո՞ւ ասոնք այսքան նեղութեամբ ճարեն իրենց օրապահիկը, և մենք առանց նեղութեան առատօքէն գտնենք մեր կերակուրը . մի թէ ասոնք յանցաւո՞ր են և մենք անենդ : Յիրաւի, կ'ըսեմ, դատաստանին օրը Աստուած մեզմէ խիստ հաշիւ պիտի պահանջէ, եթէ իրեն շտառայենք և չսիրենք զինքը, ինչպէս որ պէտք է» :

Ուրիշ անգամ մ'ալ, երբ երիտասարդ քահանայի կեցեր կը դիտէին Արքահօր նորակերտ սենեկին առաստաղը, ուրուն զերաններուն վրայ բազմաթիւ խաչեր կը զծէր նկարիչը . Միիթար գարձաւ հարցուց անոնց . «Գիտէք, ինչ կը նշանակեն այդ խաչերը . ոչ թէ սենեկիս զերաններուն զարդի համար են, այլ խորհրդով մը նկարել կու տամ զանոնք : Շատ յարմար է որ խաչը մեծաւորաց սենեկին մէջ զտնուի՝ քան այլուր, ցուցնելու համար թէ անոնք շատ աւելի խաչեր և վշտաց առիթներ ունին քան հպատակները : Գուք առաջ սակաւաթիւ էիք, նեղութիւններս


ալ սակաւ էին . զայդ կը նշանակէին առաջին հնացած սե-  
նեկիս սակաւաթիւ խաչերը : Հիմայ որ Աստուծոյ ողորմու-  
թեամբ անեցաւ թիւերնիդ , իմ վիշտերս ալ բազմացան .  
ասոր համար է որ բազմաթիւ խաչեր նկարել կու տամ ,  
որպէս զի գիշեր ու ցորեկ մտածեմ' թէ շատ խաչեր պէտք  
է կրեմ' Աստուծոյ փառաց և միաբանութեանս օգտին հա-  
մար :

Արրահայրն անձամբ կը դասախոսէր բարձրագոյն ու-  
սումները , հոետորութիւն , քերթողութիւն , իմաստասիրու-  
թիւն , աստուածաբանութիւն , և այլն : Այնչափ եռանդուն և  
փութաջան էր դասախոսութեանց , որ կը մոռնար նիւթական  
զրադումները , նոյն իսկ երբեմն վանական կարեոր գործերը ,  
կը վազէր դասարան , և ժամերով կը խօսէր առանց յագ-  
ներու : Անգամ մը չորս ժամ անընդհատ խօսեցաւ : Այն-  
պիսի զրաւիչ և յատակ ոճ մ'ունէր դասախոսութեան , որ  
աշակերտաց բոլոր ուշադրութիւնը իրեն կը ձգէր : Ուրիշ  
անգամ մ'ալ օտարականի մը կանչուելով , թողուց դասախո-  
սութիւնը . ժամ մը վերջ , երբ մեկնեցաւ հիւրը , գնաց շա-  
րունակեց դասախոսութիւնը , սկսելով ձիշտ այն բառէն՝  
ուր որ ձգեր էր : Ու է ուսումն որ աւարտէին աշակերտք ,  
հանդիսաւոր վիճարանութիւն կամ ատենախոսութիւն ընել  
կու տար նոյն ուսման , և յետոյ բարձրագոյն դասին կ'ան-  
ցունէր : Գրական մեծ շարժում մը կար ուսանողաց մէջ .  
բուռն աշխոյժ մը վառած էր զանոնք՝ հմտանալու սրբազն  
և արտաքին զիտութեանց . ստէպ տեղի կ'ունենային ու-  
սումնական ճառախօսութիւնք : Այդ տարապայման ուսում-  
նասիրութիւնը կասկածել տուաւ Արրահօր , որ չըլլայ թէ  
հոգեւորին եռանդը մարէ աշակերտաց սրտին մէջ : Օր մը  
դասարան ժաղվեց ուսուանողները , և աթոռին վրայ նստած՝  
մատնանիշ ըրաւ անոնց ի ձախակողմն՝ Աստուածաշունչը  
և Գեմբացւոյ Նմանութեան զիրքը , իսկ յաջակողմն՝ աս-  
տուածաբանութեան և գիլիսոփայութեան զրքերը : Ասկէ  
ասիթ առնըլով՝ յանդիմանեց անոնց շափազանց միտումը  
գէսի ի զիտութիւնները , ցուցնելով անկէ յառաջ զալիք  
հոգեւորի նուազումը : Անկեղեցականի մը առաջին ուսումն՝  
աստուածպաշտութիւնն է , ըստու , վասն զի անոր համար  
կանչուած են . միւս զիտութիւնք՝ այն զերագոյն իմա-



Jk 381.

• 8



ցուածներն հասկնալու պիտի ծառայեն»։ Ազա գրքերուն տեղը փոխելով՝ յառաջ տարաւ դասախոսութիւնը իւր սովորական փութով։

Անգամ մ'ալ բարձրադոյն դասու աշակերտք, աւարտած ըլլալով՝ տիեզերագիտութեան ուսումը, ուզեցին մեքենայով արևուն շրջանը ձևացնել։ Մանեկաւոր գունդ մը չինեցին, որ երկինքը կը ներկայացնէր, և անոր վրայ՝ տասը բոլորակ կամ մանեակ տօսախ փայտէ, գեղեցիկ յզկուած և զուգաչափ համեմատութեամբ զետեղուած, որ էին, Հասարակածը, Զողիակոսը և անոր վրայ տասներկու կենդանակերպը, Միջօրեայ շրջանակը, Ծիր արևադարձի և Ծիր գիշերահաւասարի, Հորիզոնը, Արևագարձ խեցկետնի և Արևագարձ այծեղներ, Արջային և Հակարջային շրջանակները, և մէջտոեղ՝ երկրագոգնդը, և անոր շուրջը երկու ինքնաշարժ կամարներ՝ արեւոն և լուսնի, անուաւոր ժամացուցի կազմութեամբ։ Երբ աւարտեցաւ այս ճարտարակեատ մեքենայն, վարժարան կանչեցին Արբահայրը և առջել զրին։ Կա խնամով զննեց մեքենայն, հաւնեցաւ, զովեց շինողներուն ճարտարութիւնը<sup>1</sup>, և սենեակը դարձաւ։ Քիչ վերջ վերակացուին ձեռքով իմացուց, որ եթէ կուղեն իրեն մեծապէս հաճոյական բան մ'ընել, կոտրեն մեքենայն և կրակ ձգեն։ Ի հարկէ ցաւեցան։ շատ ամիսներու աշխատութիւնը մէկ վայրկենի մէջ պիտի ոչընչանար. բայց հրամանն անյապաղ ի զործ դրուեցաւ։ Արբահայրը լսելով զայն, իսկոյն վարժարան զնաց, յայտնեց իրեն հաճութիւնը և զովեց անոնց կամակար հնազանդութիւնը։

Միդթար չէր արհամարչէր արուեստները կամ զիտութիւնները. ընդհակառակն, կը յարգէր նա այն ամէն բան, որ միաքը զարգացնելու և սիրտը կրթելու կը ծառայէր։ Յարդ կը պահուին վանքիս դիւանին մէջ իրեն յօրինած դասատետրները, որոնց վրայէն կ'ուսուցանէր բնական գիտութիւնները։ Ինքն էր որ թոյլ տուաւ Հ. Խզնատիս և Հ. Զաքարիա երիտասարդ վարդապետներուն՝ ուսանիլ պղնձի վրայ քանդակելու արուեստը՝ ճարտար փորազրողէ

1. Մերձնային գիտաւոր շինողն էր Հ. Ղուկաս Ստեփանեան (Ահաբասացի), որ ի թե՛ հարտար և հանձնարկ անձ մ'էր։

մը. և յետոյ այդ երկուքը փորագրեցին Մխիթարայ հրատարակած Աստուածաշնչին ժաղկագրերը, և ուրիշ այլեւայլ քանդակ պատկերներ։ Ուստի առանձին խորհրդով էր՝ որ կը վարժեցնէր նա իրենները այնպիսի մեծ զոհեր ընելու։

Ուստանող պատանիներէն անոնք՝ որ ըստ ամենայնի զովելի ընթացք մը կը ցուցնէին, և հաստատուն կը մնային իրենց կոչման վրայ, ներս կը մտնէին կրօնաւորութեան նախադրունէն, և այս՝ Փիլոնասուրիւն կամ Արեմաւորուրիւն կ'ըսուէր, Այդ՝ առաջին քայլն էր վանական կենաց։ Արեմ կրելու օրէն կը սկսէր ապագային վճարկան որոշողութեան մոածութիւնը։ Այն տարիին. 16—18 ամեայ, բացուած է արդէն պատանւոյ մը ինքնանանաշութեան շրջանը։ Իրօնաւորական կենաց պարտքերուն ծանրութիւնը ըմբռնելու ընդունակ է. բաւական է որ փափաքի և արժանի ընէ ինքզինքը վանական կոչման, հաւանութեամբ ամենուն կ'ընդունուի յանդամակցութիւն միաբանութեան՝ յանձնառութեամբ չորս կրօնաւորական ռխտերու, և այս հանդէսը Աշխատադրուրիւն կ'ըսուի։ Այնուչեան միաբանութեան անձ կ'ըլլայ նա, Մխիթարեան մը՝ հաւասար ամենուն, հաղորդ ամէն իրաւուներուն և շնորհներուն։ Այս փոփախութիւնք վիճակի՝ նորանոր պարտականութիւններ կը դնեն պատանւոյն վրայ, որ կը դիմէ դէպի ի քահանայութեան կարգը։ կը հմտանայ հիմնովին աստուածաբանական զիտութեանց, և կը վարժի քարոզատուութեան։ Այդ բոլորը կ'ընէր ՄԸխիթար. նախ քան սուրբ աստիճաններուն ընդունելութիւնը, կը քննէր զանոնք, կը հրահանգէր քահանայական պաշտամանց մէջ, և յետոյ կ'ընծայէր Աստուծոյ սեղանոյն։ Նոյնպէս վարդապետական գաւազան տալէն առաջ, կը քննէր աստուածաբանական խնդրոց մէջ, և տրուած պատասխաններուն համեմատ՝ կու տար զայն արժանաւորաց։

Հոգևոր և ուսումնական կրթութեանց հետ՝ Մխիթար չէր զլանար նաև կարեւոր հանգիստները և սփոփանքները կ'ընէր իւրաքանչիւր հասակին յարմար զիտութիւններ։ Ինչ ինչ առիթներու մէջ, ինչպէս քարոզաց դարձին, ուխտի և քահանայութեան հանդէսներուն և մի քանիտօններուն, հասարակաց ուրախութիւն և մեծ ճաշ կ'ընէր։ Ճաշին առա-

շին համեմթ էր՝ կրօնաւորական համեստութիւնը - հոգեռազ կը սկսէր և հոգեորդվ կը վերջանար . Արբահայրն ալ առթին և հանդիսին յարմար բարեմաղթութիւն մը կ'ընէր : Երիտասարդ հարք և պատանիք հոգեոր երդ մը կ'երդէին սեղանին վրայ . երբեմն ալ Արբահայրը , յամենայնի զիւտաւոր և հանձարեղ , առակաւոր խօսք մը կ'առաջարկէր լուծելու , և անպատճառ մրցանակ մը կ'ընդունէր լուծման մէջ քաջ հանդիսացողը :

Դարձեալ , սակաւիկ մի մտաց սթափումն և հանդիսատալու համար , տասը՝ տասնըհինգ օր փոփոխակի գիւղ կը տանէր նորընծայ և վարժարանցի աշակերտները , Պատուայի մօտ Նովենտա կոչուած աւանին մէջ : Հոն աշակերտք ամէն օր , իրենց դաստիարակին առաջնորդութեամբ , ցրջայութեան կ'երթային դաշտերու մէջ , կ'այցելէին պարտէները , պալատները և կրօնաւորաց վանքերը : Անընին մէջ գտնուած ժամանակ ալ , երբեմն քաղաք կը զբկէր տըզայթը և քահանայթը , եկեղեցեաց և վանքերու այցելութեան :

Միսիթարայ այսպիսի խոհական վարչութեամբ՝ այնչափ ծաղկեցաւ միարանութիւնը , որ ամենուն նախանձելի և փափաքելի եղաւ , ամէն տեղ լսուեցաւ համբաւը , շատերը կը խնդրէին միարանութեան անդամ ըլլալ . թէ ստարք և թէ աղգայինք , ամէն հասակէ և վիճակէ անձինք , և նոյն իսկ կրօնա : որական միարանութիւնք կ'ուզէին Միսիթարայ կառավարութեան ներքեւ մօնել , ինչպէս էր Լիբանանու Անտոնեան նորահաստատ միարանութիւնը , որուն ըրած առաջարկութեան թուղթը , ինչպէս նաև Միսիթարայ տուած պատասխանը , կրնան գտնել փափաքողք դրֆիս Յաւելուածին մէջ , կարևոր քուղրը և նաևականի տիտղոսին ներքեւ :

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Միմիթարայ նոզիմ . — Անոր քամի մը գլխաւոր առաքիմութիւմք . — Գեղեցիկ խօսքերը և խրառմիւր . — Մի քամի օրիմակմեր , որոնց մէջ կ'երևի Միմիթարայ ներքիմ կեմաց պատկերը :

**Տ**եսանք Միմիթարայ մեծութիւնը՝ իւր գործերուն մէջ , տեսնենք արդ անոր մեծութիւնը՝ հոգւոյն մէջ , որուն ուրիշ նմանութիւն չեմ գտներ , բայց բիւրեղեայ գունտ մը , յուրամ շերեկիր ամենափոքր րիծ մ'անգամ և կը ցոլացնէ իրեն մէջ լուսոյ բալոր գոյները . այսպէս ալ Միմիթարայ հոգւոյն մէջ կը ցոլանան առաքինութեան բոլոր գոյները և տեսակները :

Մարդու ի բնէ զիւրաբեկ և վայրահակ , պէտք ունի թեկերու՝ վեր բարձրանալու համար այս տղմոտ երկրէն . այդ թեկերն են՝ աղօթք և մահացուցում : Միմիթար , հազիւ միաքը բացուած , հասկցաւ զայդ . աղօթքը՝ անոր մանկական շրթներուն առաջին թօթովումն եղաւ , տասը տարեկանէն սկսու ճգնութիւններ և մահացուցումներ ընել . Երիտասարդ հասակի մէջ սովորաբար կ'ալեկոծի մարդ քիչ թէ շատ , այն հասակին՝ երբ արիւնը կ'եռայ , երեւակյութիւնն աւելի վառ է , և արտօքին հրապոյցներն աւելի բուռն են : Միմիթար շունեցաւ այդ ալէկոծութիւնը . ինքը , մեղաց շուքն անգամ վախցող , վանքերու խորշերուն մէջ անցուց երիտասարդ հասակը , և հազիւ քահանայ ձեռնադրուած , բոլորսին նուիրած ինքզինքը իւր մեծ գործին , մեծումն ձեռնարկներու հետամուտ , ապրեցաւ նա միայն կրօնից պայծառութեան և ազգին սպահն համար :

Միմիթարայ վրայ՝ քան ամէն առաքինութիւն աւելի կը փայլի խոնարհութիւնը . անոր սանդխամատերովն է որ հասաւ այն բարձրութեանց ծայրը . զրեթէ ամբողջ կեանքը՝ հիւսուած մ'է խոնարհութեանց : Ոչ մէկ տեղ , ոչ մէկ գործի

մէջ երրէք անձին փառքը փնտուած չէ : Հետևեալ յայտարարութիւնը, զոր կ'ընէ իւր հրատարակած Աստուածաշնչի յիշատակարանին մէջ, կրնայ իրը նշանաբան ժառայել իւր միւս բոլոր զրութեանց և զործերուն . « Իմ այս աշխատութեանս մէջ՝ ուրիշ բան դիտած չեմ, բայց Աստուածոյ փառքը, և ազգիս օգուտը . ուստի մասենիս ընթերցողներէն ուրիշ փոխարէն չեմ ազեր, բայց միայն որ օգտուին անկէ և իրենց ազնոթքին մէջ յիշեն զիս<sup>1</sup> » : Մենք այնչափ զզուշութեամբ շենք ծածկեր մեր թերութիւնները, որշափ նա իրեն առաքինութիւնները : Անոր ականջին այնքան զզուելի շեր օձին սոյլը, որքան գովիտափից խօսքերը . վասն զի սինչպէս որ կրակը կը հալեցնէ մոմը, կ'ըսէր նա, այսպէս ալ մարդկանց զովութիւնները կը հալեցնեն և կ'ոչընչացնեն բարի զործերը<sup>2</sup> » : Երբ մեծամեծ և իշխանական անձինք կը զովէին անոր հարտարապետական հրմտութիւնը, կ'ըսէր նա . « Այն ատեն միայն իրուացի է զովութիւն մը, երբ իւր վիճակին և պաշտօնին վերաբերեալ զործերուն համար է : Կրօնաւորի մը համար զովեստ չէ, երբ ըստի՛ թէ արագընթաց է, քաջ դերասան, աղնուական կամ զիտուն . այլ երբ ըստի՛ թէ խոնարհ կամ հնագանդ է, և այլն . այսպէս նաև ինծի զովութիւն չեմ համարիր, երբ կ'ըսեն, թէ քաջ հարտարապետ է : Մեծ յիմարութիւն պիտի ըլլար հպարտանալ այսպիսի բաներու համար<sup>3</sup> » : Կ'ափէր՝ կը մար, թէ բնչպէս կարելի է հպարտանալ կատարելութեան մը համար, զոր Աստուած տուեր է . զայնպիսին կը կոչէ՝ Աստուածոյ փառաց դոդ մը<sup>4</sup> : Ո՞վ իրմէն աւելի մեծամուելու իրաւունք ունէր, եթէ այս ներելի է, և սակայն ո՞վ իրմէն աւելի խոնարհ եղաւ : Ամբողջ ազգի մը սէրը և յարգանքը բարձրացուց զանիկայ — նոյն իսկ կենդանութեան ժամանակէն — պատուանդանի մը վրայ, որուն առջևէն անցաւ երկու հարիւր տարիներու հայութիւնը, միշտ նոյն երախտագիտութեան և նոյն հիացման զգացումով, յատկացնելով անոր և լուսանո-

1. Աստուածաշնչ, հրատ. Միւ. Արքայի. Յէւրու-Երևան, էջ. 1279:

2. Հատց ի բանից և ի զործոց Միւ. Արք. էջ 104. Վեհերիկ. 1901:

3. Խրամք Մեսիթարայ. հա. Բ. մասն բ. էջ 48-49:

4. Հատք. էջ 106:

րող» , «վերածնող» և «մեծ» տիտղոսները : Բարձրութիւն մը՝ յորում ուրիշ ու է մարդու զլուխը պիտի պըտուտքէր . և սակայն Մխիթար մեաց այն , ինչ որ էր հաւածանաց օրերուն մէջ : Անոր խոնարհ հոգին կը տեսնուի նամակներուն մէջ , ուր երբէք չենք հանդիպիր այնպիսի բացարութեան մը , որ սնափառութեան ստուերն անգամ երեցնէ : Կը պատմէ հոն պարզ սճով մը միարանութեան ծաղկիլը և յաջողութիւնները , որոնց մէջ բնաւ չերեիր ինքը , այլ միայն Աստուծոյ մատը : Տղու մը պարզութեամբ և հրձուանքով կը նկարազրէ վանքին կամ եկեղեցւոյն շինութիւնները , որոնք կարծես առանց զրամի՝ առանց նեղութեան եղեր են . և սակայն Բնչ տագնապներ և վշտեր կրած է նա : Այդ խոնարհութիւնն էր՝ որ գիրամատչելի կ'ընէր զինքը ամենուն , առանց բնաւ նուաստանալու իւր աստիճաննէն , կը զիջանէր ծառայելու մինչև իսկ փոքրիկներուն : Հարաթ օր մը նորը նծայարան երթարով , տեսաւ որ տղայը սրահները կ'աւգեն . ջուր առաւ , որոկեց յատակին վրայ , և սկսաւ աւլել անսնց հետ<sup>1</sup> : Անգամ մ'ալ 1733ի յունուարին , բոլոր քահանաքը և աշակերտք համաճարակ հիւանդութեամբ բանուեցան . միայն Մխիթար և քանի մը քահանայը տղատ մեացին : Մխիթար կը հասնէր ամենուն , մանաւանդ փոքրիկներուն , անձամբ կը ծառայէր , կը միսիթարէր , դեղերը կու տար , և այլն<sup>2</sup> : Ստէպ կ'ըսէր . «Ո՛հ , որշափ քաղցր է փոքր ըլլալ քան մեծ . ինչպէս անուշ է ծառայել՝ քան ծառայութիւն ընդունիլ ուրիշն» : Օր մը , երբ աշակերտք խօսակցութիւննին աւարտելով՝ սենեակնին կ'երթային , յանկարծ զիմացնին կ'ենէ Արքահայրը . «Ո՛ր կ'երթաք» , կը հարցնէ . — «Խօսակցութիւննիս աւարտելով՝ սենեակնին կ'երթանք» , կը պատասխանէն . — «Ափսոս որ ժամանակին շհառայ , կ'ըսէ Արքահայրը , թերեւս օգտակար բան մը լոէի և շահէի» : Աշակերտք կը կարմրին և կը ժպտին Արքահօր խօսքին վրայ , մտքերնէն ըսելով՝ թէ դու որ այդքան զիտութիւն ունիս և հեղեղօրէն կը խօսիս և կը վարդապետես , կարօտ ես մի թէ մեր աղքատ խօս-

1. Խրատք Բ. ք. էջ 57 :

2. Թուղթ Մխիթարայ առ Հ. Եղիա . 1733 յունուար 31 :

քերուն : իսկ նա , գուշակելով անոնց միտքը , կ'ըսէ . « ինչո՞ւ կը ժաղափք և կ'ամշնաք , ես միտքս դրեր եմ թէ ոչ միայն ձեր , որ այսչափ ժամանակ սրբազան և արտաքին գիտութեամբ կը վարժիք , այլ նաև ո՛ւ և է մորգու մը խօսքերէն կրնամ շահիլ և օգտութիլ » : Եւ այս ըսելով , յարմար պատմութիւն մը պատմեց անոնց <sup>1</sup> : Անզամ մը Արքահայրն իրեն շապիկը հանգերծակար եղրօր կը դրկէ՝ զայն կարելու : Եղրայրը կ'ըսէ . « Եթէ զայդ կարեմ՝ շեմ կրնար նորընծայից զգեստները ժամանակին հասցընել , ինչպէս յանձնեց ինձ Գերյարգելին <sup>2</sup> » : Լոելով զայս Արքահայրը , ես կ'ուզէ իւր շապիկը՝ ըսելով . « Եթէ այդպէս է , լաւագոյն է որ ես այս պատառուուն շապիկը հազնիմ , քան թէ այլոց զգեստներն ուշանան <sup>3</sup> » :

Միսիթար , այդ իրեն խոնարհութեամբ և պարզութեամբ , զիտցաւ զամենքն ալ շահիլ , և չունեցաւ թշնամի մը , որ յետոյ բարեկամ շըլլայ , և ամենէն աւելի սերտ բարեկամը : Անոր յանկարծերեւեաց սաստիկ փայլն էր , որ շացուց շատերը և իրեն թշնամիներ յարոյց . բայց երբ տեսան թէ կը տեէր փայլը և երթալով կ'առաւելուր , ամէնքն ալ ստիպուեցան խոնարհիլ առջեւր : Անոնք որ հակառակութեամբ շկրցան վեսաել , բարեկամութեամբ ուզեցին շահիլ զինքը : Եթէ անոր մեծութիւնն և յաջողութիւնք՝ նախանձու և հակառակութեան ամպրոպներ յարուցին , իսկ հնզութիւնն և խոնարհութիւնը՝ հանդարտութիւն և սէր սփռեցին շուրջը : Կա՝ հակառակորդաց գէմ ուրիշ գէնք շէր գործածեր , բայց համբերութիւն և լուսութիւն , համոզուած՝ թէ անմեղ գարուց լուսութիւնը շատ աւելի զօրաւոր և խօսուն է՝ քան ամէն արդարացնող շատախօս պատասխանները <sup>4</sup> : Տեսէք թէ ինչպիսի հոգի էր որ կը շարժէր Միսիթարայ գրիչը , երբ կը զրէր առ իշխանս կարնոյ . « Կատ կ'աղաչեմ և կը պազատիմ , սիրելիներ , որ եթէ քաղաքիդ մէջ զանուին մէկ կամ երկու աշխարհական կամ եկեղեցական անձինք , որոնք արհամարհեն զմեզ և մեր քարոզիչները , անոնց հետ

1. Խրառը . Բ. բ. էլ. 46-48 :

2. Այդ տիտղոսը կու տային Միսիթար Արքանոր :

3. Խրառը . Բ. բ. էլ. 55 :

4. Հառը . էլ. 78 :

այնպէս վարուիք՝ ինչպէս որ մենք։ Եթէ կ'ուզէք զիսոնալ, թէ մենք ինչպէս կը վարուինք, ահաւասիկ։ զձեզ կը սիրենք, վասնղի մեր բարեկամներն էք, բայց զանոնք դեռ աւելի կը սիրենք, վասն զի մեր թշնամիներն են. ձեզի կը ծառայենք, անոնց՝ ևս աւելի. ձեզի համար կ'աղօթենք, Այս կերպով կ'աճի և կը զարդանայ ուղղափառ կրօնքը, և ստուգիւ այսպէս կ'ըլլայ սիրոյ պատուիրանին կատարումը։ Դուք ալ ուրեմն այսպէս ըրէք, և ըլլայ թէ զմեզ գովելու համար՝ անոնց պարաւաղիր ըլլաք կամ հետերնին կոռւիք, այլ որքան կարելի է՝ քաղցրութեամբ վարուեցէք, բոլոր սրտով սիրենքէք և բարիք ըրէք անոնց<sup>1</sup>։ Հետևեալ տողերը կ'ուզդէր իրեն միարաններէն մէկուն. «Գրած էիր մեր դէմ շար խօսողներուն համար. ահաւասիկ ըսելիքս. թող որ անոնք շար խօսին մեր վրայ՝ որչափ որ կ'ուզեն և կրնան, որպէս զի Աստուած ալ անոնց նայելով՝ ողորմի մեզի. Միարանութիւննիս տակաւին փոքրիկ և գեռաբոյս ըլլալով՝ շատ ողորմութեան և զթութեան կարօտ է. անոնց բերանները՝ որոնք մեր վրայ շար կը խօսին՝ խողովակներ են, որոնցմէ Աստուծոյ զթութեան վտակները մեր վրայ կը թափին։ Աւստի աղօթենք անոնց համար, որպէս զի Աստուած անոնց մեղք չհամարի զայն, որ մեզի այսչափ բաշիք կ'ընեն<sup>2</sup>։

Հայազգի մը, որ յարեւելս և այլուր շատ հակառակութիւններ ըրած էր միարանութեան և ի մասնաւորի Միիթարայ զէմ, դէպին այնպէս բերաւ՝ որ Վենեսիկ եկաւ և Լազարէր կոչուած արգելարանին մէջ դրուեցաւ։ Երբ Արքահայրը լոեց, շյիշելով անոր ըրած այնշափ շարիքը, փութաց անոր անկողին, վերմակ, բարձ և ուրիշ պէտք եղածները զրկել։ Աւրիշ անգամներ ալ, դանազան միրգեր և ընտիր կերակուրներ առած՝ անոր այցելութեան կ'երթար կամ իրեններուն ձեռքով կը զրկէր, և սիրոյ ամէն նշանները կը ցուցնէր։ Մարդը, հիացած Միիթարայ այսչափ վեհանձնութեան վրայ, մտնաւանդ որ զիտէր՝ թէ կը

1. Թուղթ Միւ. Աքրայի առ էշխանս Կաբեոյ. 1726 ապրիլ։

2. Առ Հ. Պետրոս. 1726 սպասուս 5։

հանչնար զինքը և տեղեակ էր իրեն հասուցուծ վնասներ, բուն, թողուց հակառակութիւնը, և միարանութեան ամենէն աւելի նախանձաւոր ջատագովներէն մին եղաւ:

Միխիթարայ հեղութեան և անյիշաշարութեան պատկին դոհարներէն մին է հետեւեալ դիպուածը: Վենետիկ քաղաքին մէջ կը բնակէր հայազդի եպիսկոպոս մը, Արքիս Սարաֆեան, արևելքէն փախած հալածանաց պատճառուաւ: Աս ամէն անգամ որ վանք կու գար, Արքահայրը մեծ պատիւ և ընդունելութիւն կ'ընէր իրեն: Տեսնելով թէ Միխիթար ամէն տեղ կը հոչակուէր իրեն զրբերով և հրատարակութեամբք, ուզեց ինքն ալ իրեն անուն մը շինել: այս նպատակով լուր տարածեց, թէ դպրոց պիտի բանայ՝ հայ տղաբը կրթելու, և տպարան մը պիտի բանայ՝ հայերէն զրբեր հրատարակելու համար: Աւատի, 1748 տարւոյն, վենետիկցի տպագրողի մը միջոցով, ձեռք բերաւ նարտարութեամբ: Արքահօր նոր շինել տուած տառերուն մայրերը, և բաւական քանակութեամբ զրբեր ձուլել տալով, գաղտուկ տպագրել տուած իրեն թարգմանած մէկ դիրքը: Եսոյն տարին Միխիթար փոքրադիր Աղմաս տպել տուած էր պատկերով և զարդարագիրներով: Արքիս եպիսկոպոսն ալ, ճիշդ նման պատկերներ և ծաղկագրեր շինել տալով, նոյն ձեռք ուզեց Աղմասը տպել տալ: Ազգայիններէն ոմանք լսելով՝ մեղադրեցին զինքը: Նա ալ Արքահօր դիմեց իրը հրաման խնդրելու, Հետեւեալ կարճ զրութեամբ: «Հայր արքայ, եթէ կը հաճիս՝ սաղմասարան մը պիտի տպագրեմ, եթէ ոչ՝ կամքդ ըլլայ»: Միխիթար պատասխանեց: «Եթէ կ'ուզես տպել տալ, զու զիտես: բայց այդ բանը ոչ միայն մեզի կը վնասէ, որ այնչափ փոյթս չէ, այլ նաև քեզի, որով պիտի մեղադրուիս շատերէն և անունդ պիտի կոտրի»: Եպիսկոպոսը թոյլուութիւն համարելով զայս, տպագրեց զայն, յար և նման Միխիթարայ հրատարակածին: Միարանք իմանալով եղած՝ այնչափ վշտացան, որ խնդրեցին Արքահօրէն տէրութեան ձեռքով դադրեցնել զայն: Միխիթար, փոխանակ անոնց խոսքերէն շարժելու, յանդիմանեց զանոնք՝ հեղութեան և անյիշաշարութեան մէջ պակսելուն համար, և ըստաւ: «Քաւ լիցի, շեմ կրնար չնչին շահու մը համար աւրել բարեկամութիւննիս. շեմ զզար

այնչափ բարիքներուն վրայ՝ որ իրեն բրած եմ, մա-  
նաւանդ թէ կ'ուրախանամ։ Նոյն իսկ առկէ վերջն ալ  
ձեռքէն եկածին շափ իրեն բարիք պիտի ընեմ, իբր թէ  
մեզի դէմ բան մը գործած շըլլար։ Քրիստոս կը պա-  
տուիրէ բուն այսպիսիներուն սէր ցուցնել և բարիք ը-  
նել։ Ես ինչ մաքի վրայ որ էի՛ տպագրութեան ձեռք  
զարնելուս միջոց, նոյն մաքին վրայ եմ մինչև այս օրս,  
բաւական է որ ազգս օգտուի, լուսաւորուի հոգեւոր զբեանց  
բազմութեամբ։ Գիրք զրելու կամ հրատարակելու մէջ  
թնաւ առանձնական շահ չեմ փնտուեր, ծախքին չեմ  
նայիր, ուստի եթէ անոր տպագրութեամբ փակուին դի-  
մացնիս շահու դաները, և նոյն իսկ վեաս ընէ միաբա-  
նութիւնս, գարձեալ պիտի սիրեմ զինքը։ Ի՞նչ փոյթ  
եթէ վեասուինք նիւթապէս, քանի որ ազգերնիս պիտի  
շահի հոգեւորապէս, ծաւալելով իրեն մէջ այսպիսի հո-  
գեւոր զրեանք։ Գուք ալ զիտէք, թէ մինչև ցարդ տպուած  
զրբերէն որչափ վեաս ըրբնք, և սակայն՝ Աստուծոյ տուա-  
ծէն մինչև հիմակ կարեւոր բաներու կարտութիւն չկրե-  
ցինք։ Աւելորդ է ուրեմն հոգ ընել և նեղուիլ այսպիսի  
նիւթական վեասուց համար, այլ միայն յուսուլ աներկ-  
միտ Աստուծոյ նախախնամութեան վրայ, որ երբէք ձեռքէ  
շթողուր իրեն ժառաները», և այլն։ Միսիթարայ մեծ  
հոգւոյն և լայն սրտին արժանաւոր խօսքեր, որոնք ափ-  
իրերան ըրբն աշակերտները։

« Խոհեմութիւնը, որ մարդկային գործերուն աշքը կը  
համարուի, միշտ և ամէն տեղ փայլեցաւ Միսիթարայ  
վրայ, կ'ըսէ անոր կենազգիրը<sup>1</sup>, վախճանին յարմար մի-  
ջոցները գտնելուն մէջ՝ ճարտար և աջողակ, անոնց ըն-  
տրութեան մէջ՝ ոչ վաղվաղկոս էր և ոչ դանդաղ։ Ան-  
յոզդողդ և հաստատամիտ՝ իւր որոշողութեանց մէջ, երազ  
և զգուշաւոր՝ անոնց գործադրութեան ժամանակ, և այնչափ  
հետատես՝ որ առաջաւց կը գուշակէր զործին ելքը։ Միջին  
շաւիզը կը բանէր ամեն բանի մէջ։ վեհանձնութեան  
չետ՝ խոնարհամիտ էր, հրամայելու ժամանակ՝ համեստ  
և բարեշնորհ, խիստ էր՝ բայց քաղցրահամբոյր։ Խորա-

1. Առեփ. Աղոնց Պատմութեան Միջին-Հայ, և այլն. էջ 286.

զէտ էր՝ այլ ոչ խորամանել. պարզ և անելեղծ, այլ ոչ անդգոյշ և անդադտնապահ. կիրթ և աղնիւ՝ բայց ոչ մարդահաճոյ կամ կերծաւոր. բարեօէր և բարեմիտ, այլ ոչ բնաւ նուաստախտ և ծառայամիտ։ Խօսից մէջ ձօփ և տառատ, բայց ոչ սնոտիբարան. երբէք անոր բերնէն անսպուտ խօսք մը շառուեցաւ. նոյն իսկ օտարներուն հետ տեսակցելու ժամանակ, թէ ոչ հոգեսրի՝ գէթ օգտակար և պիտանի բանի մը կը փախէր խօսակցութիւնը. աշխարհական զրոյցներն այնչափ կը նեղէին զինքը, որ վայրկեաններն իսկ երկար ժամեր կը թուէին իրեն։ Համեստութեան քողին ներքև ծածկած իրեն մեծամեծ զործերը, անձնագովութեան ստուերէն անդամ խօրչելով, նախանձուններուն սիրտը կը շահէր։ Որքան խիստ էր իւր անձին վրայ, այնքան կարեկցող ուրիշներուն տկարութեանց, Ժիր և փութաջան իրենները ինտամելու մէջ, կը մոռնար իւր անձը և հանգիստը, ուրիշները հոգալու և երջանիկ ընելու համար։ Անդուշ և անխօնջ բարի զործերու մէջ, անընկանիկ՝ ծանր բաներու մէջ, արի և հնարագէտ՝ դժուարութեանց առջև, յաջողութեանց և ձախողութեանց մէջ՝ միակերպ, աննկուն, անայլայլակ, համբերող ցաւոց և տառապանաց մէջ։ Տրբմական բաներու մէջ՝ անդրդուք, հակառակութեանց մէջ՝ անդրդուելի, կարևոր և մեծամեծ իրաց ձեռնամուխ, ոչ անձին փառաց կամ շահուն համար, այլ առ հարկի և հասարակաց օգտին համար միայն։ Այս բառերով կը դրուատէ զՄիիթար՝ իրեն վարուց պատմիչը, թափանցած ըլլարով անոր հոգւոյն մէջ։

Ո՞վ կարող է նկարագրել անոր հոգեկան ձիրքերը, անոր ներքին գեղեցկութիւնը, եթէ ոչ նա միայն՝ որ անոր սիրտը և հոգին կը կրէ։ Որչափ մեծ, կենդանի և յուսաւոր էր անոր հաւասարը, որ տակաւին պատանեակ, կրօնից պաշտօնէի նախանձն ունէր որտին մէջ՝ նշմարտութիւնը քարոզելու, և մարտիրոսի մը եռանդը՝ որ կ'անցնի աներկիւդ տանջանարանաց միջէն, և ուրախութեամբ խարսկին վրայ կ'ելնէ։ Միիթարայ բոլոր զործերուն ուղղիչն էր այդ հաւասարը, որուն խորհրդական մթութեանց առջև՝ կանգ կ'առնուր պատկառանքով այն հարցասէր միաքը, զիտնալով թէ սաւետարանին խօսքերն են որ հանգիստ կու տան՝

իմուսաստիրտկան խնդիրներու մէջ տատանող մաքերտւն<sup>1)</sup> : Անզամ մը Արրահայրը հարցուց փոքրիկ նորընծայի մը . «Ո՞րն է առաքինութեանց հիմը» . — «Չեմ գիտեր» , պատասխանեց մանուկը . — «Հաւատքն է , ըստ Արրահայրը , որուն վրայ կը բարձրանան միւսները , և առանց ասոր չկրնար ոչ մէկ առաքինութիւն հաստատուն մնալ<sup>2)</sup> » : — Ուրիշ անզամ մ'ալ՝ Վենեստիկ բնակող ազգային եպիսկոպոս մը , որ վանքը ճաշի հրաւիրուած էր , խօսք բանալով կրօնական խնդիրներու վրայ , անկրօնից առարկութիւնները մէջ բերաւ և լուծումն կը խնդրէր Արրահօրէն . Միսիթար՝ համոզիչ փաստերով և վկայութեամբք լուծեց առարկութիւնները . Եպիսկոպոսը գոհ չեղաւ տրուած պատասխաններէն , և կը պահանջէր որ բանիւ մտաց ևս ապացուցանէ հաւատոյ ճշմարտութիւնները : Այս ատեն Արրահայրը մէջ բերաւ Ս . Թովմայի ապացոյցներն ալ , և տեսնելով թէ եպիսկոպոսը տակաւին կը պնդէր և գոհ չէր ըլլար , զայրացած՝ գոչեց մեծաձայն . «Գերեմք զամենայն միտս ի հնագանդութիւն աւետարանին Քրիստոսի<sup>3)</sup> : Այս եղաւ վիճարանութեան փակումը :

Միսիթար ամէն խօսքի , ամէն զրութեան , ամէն գէպքի մէջ , ամէն ժամանակ սէր կը քարոզէր և կը շնչէր . և ինքն՝ ըստածին և զրածին օրինակը կու տար : «Բոլոր սրտէ զԱստուած սիրելուն կերպն է , կը զրէր , առանց չափու սիրել զԱստուած . այսինքն , սիրել և սիրել , ամէն բանէ աւելի և ամէն ժամ սիրել , թէ յաջողութեան և թէ ձախողութեան մէջ , ամէն առթի և պարագայի մէջ սիրել<sup>4)</sup> : Միսիթար այս կերպով սիրեց զԱստուած , և բավանդակ կեանքը՝ ճենճերում մ'եղաւ , ողջակէզ մը աստուածային և եղբայրական սիրոյն :

Անոր բառարանին մէջ չկային «յուսահատիլ , վհատիլ , ընկճուիլ» բառերը . ալէկոծութեանց մէջ անոր խարիսխն էր քրիստոնէական յոյսը , որ ժայռի նման անշարժ կը բռնէր : Որոշ և վճռական էր զործերուն և մտածութեանց

1. Հատք . էջ 46 .

2. Խրառք . Բ . Բ . էջ 48 .

3. Անդ . էջ 74-5 :

4. Հատք . էջ 10-11 :

մէջ, որովհետեւ սինչպէս գետը՝ որ կը զարտուղի ընթացքէն՝ կը վնասէ, կ'ըսէր, այսպէս նաև ո և է դործ՝ թէ և բարի ըլլայ՝ երբ այս կամ այն կողմը կ'երերի<sup>1</sup>»։ Ոչ մէկ ցաւ, վիշտ, տառապանք, հալածաննք, ձախողութիւնք կամ հիւանդութիւնք, չկրցան երբէք զինքը լքուցանել, համոզուած՝ թէ և ամէն ցաւ և զուարճութիւն վայրկենական են. վասն զի անցեալը չի դառնար, ապագան՝ գալիք է, և կը մնայ միայն մէկ կէտ, որ է ներկայն, և մէկ կետի ցաւը՝ ցաւ չէ, և հանգիստը՝ հանգիստ չէ<sup>2</sup>։ Յոյսը՝ իրրե ջահմը՝ ձեռքը բռնած, քալեց անսայթաք մթութեանց և խութից մէջ, և չկասեցաւ՝ մինչև որ շհասաւ նպատակին։ Կարելի՞ է ուրիշ կերպ մեկնել անոր այնքան յաջողութիւնները, եթէ ոչ ընծայելով աներեւայթ Աջոյ մը, որ մերթ կը թուէր ամփոփուիլ, աւելի ևս ցուցնելու համար իւր անդիմակալուժը։ Կրնայ աւելի մեծագոյն վստահութիւն մը երեւակայուիլ՝ քան ինչ որ ունեցաւ Մխիթար Աստուծոյ վրայ։ Անոր հեռատեսութիւնը տարիներու ամրողը շարք մը կ'ընդգրբէր, և իրրե այսօր մը կը արամադրէր զայն. և սակայն այդ անձն օրուան կերակուրով, զզեսառվ և բնակարանով կը զոհանար, չէր հոգար՝ չէր մտածեր վաղուեանը, զիտնալով թէ նա՝ որ կը զգեցնէ վայրի շուշանը և կը կերակրէ մննդուէկը, ևս աւելի կը հոգայ իրեն ծառայից պէսքը<sup>3</sup>։ Այսպէս կ'ըսէր յաձախ իրեններուն, և խստիւ կը պատուիրէր՝ դրամի հետամուտ ըլլալ կամ շափազանց մտահոգ՝ ապրուստի և նիւթական պէտքերու։ Լսենք թէ ինչ կը մտածէր նա այս մասին և ինչպէս կը վարուէր այլեայլ պարագայից մէջ. այս երբէք ոզորմութիւն չընդունեցայ, երբ չկար մէկը՝ որուն պէտքը լեցնէի. նախ միաբանութեանս անձինքները ժողվեցի, և յետոյ անոնց պէտքերը հոգացի։ Անոր համար ոչ մէկ բանի այնչափ վրէժինդիր և նախանձաւոր չեմ, ինչպէս կրօնաւորաց դրամ ժողվելուն՝ երբ պէտք շունին, վասն զի մեծամեծ վնասներ կը ծնանին անտի. Ուստի որոնք որ մեռնելէս վերջ այս կրօնքին մէջ պիտի մտնեն, և կ'ուզեն զիտնալ թէ ինչ է

1. Հատուց. էջ 78.

2. Անդ. էջ 57.

3. Առ Հ. Եղիշե. 1727 յունիս 23:

ինծի ամենէն աւելի հաճոյական կամ ամենէն աւելի կամքիս հակառակ բանը, ահաւասիկ . Ամէն բանէ աւելի աւտելի է ինծի՝ դրամ ժողվել առանց պէտքի, և չկայ այնշափ ախորժելի բան՝ ինչպէս զգուշանալ դրամ ժողվելէն: Արդ որոնք որ կ'ուզեն ետևէս գալ և ինծի հաճոյական բան մ'ընել, պահեն ըստածու. վասն զի դրամ ժողվելը շատ կրօնքներ թուլութեան մէջ ձգեց և վերջապէս կործանեց: Այդ ըստածը նախ ինքը գործով կատարեց:

Օր մը նշանաւոր խոալացի մը Արքահօր այցելութեան եկած ըլլալով, և տեսնելով միարանութեան սղբատին վիճակը, հարցուց թէ կ'ընդունէր արդեօք, եթէ մէկը երեսուն հազար դաշեկան տար իրեն. — «Ոչ», պատասխանեց Արքահայրը. — «Իսկ թէ որ հինգ կամ վեց հազար տայ»: — «Կ'ընդունէի զայդ, կրկնեց Մխիթար, որովհետև հիմայ երեսուն հազարի պէտք չունիմ, այլ միայն հինգ հազարի»:

Հարուսա պատանի մը շատ դրամ առած հետը՝ վանք եկաւ և խնդրեց Արքահօրէն որ զինքը ընդունի: Մխիթար՝ Քրիստոսի խօսքը ըստա անոր, թէ զնա ունեցածներդ և դրամդ աղքատներուն բաշխէ, և վերջը եկ և կ'ընդունիմ զքեզ: Պատանին զարմացաւ այս խօսքին վրայ, զիտնալով թէ միարանութիւնն աղքատ էր և դրամի պէտք ունէր, անոր համար ըստա. «Հայր, եթէ կ'ուզես, պահենք դրամը մեր պէտքին համար»: — «Որդեակ, պատասխանեց Մխիթար, ես միայն Աստուծոյ վրայ դրած եմ յոյս, որ կրնայ առանց դրամի պահել և կերակրել միարանութիւնը, ամեն վշտերէ և նեղութիւններէ ազատել՝ եթէ իրեն ձեռքէն ընդունինք զանոնք»: Տեսնելով Մխիթար թէ պատանոյն սիրուը կապուած էր դրամին հետ, չընդունեցաւ՝ հակառակ անոր բուռն թախանձանաց:

Նման գէպք մ'ալ պատահեցաւ. ուրիշ անգամ, Մեծ տարիքով պատանի մը, բաւական հարստութեան տէր, փափաքելով աշակերտիլ Մխիթարայ, շատ անզսմ յոյտնեց անոր՝ իրեն փափաքը: Արքահայրն այդպիսիները գիւրաւ չէր ընդուներ, անոնց հաստատամտութիւնը փորձելու համար: Ժամանակ մը վերջը, երբ պատանին ամէն հնարք բանեցուց ընդունուելու համար, և տակաւին վճռական պա-

տառիսան մը շառաւ, տհաճած՝ բարեկամներէն մէկուն ըստաւ. «Կը զարմանամ, ինչու Ալբրահայրն այսչափ կը դժուարի զիս ընդունելու. մի թէ կը կարծէ՞ որ ես իրեն ծանրութիւն պիտի ըլլամ. Հետո այնչափ դրամ ունիմ, որ մինչև մեռնիմ՝ կը բաւէ ինձի» . և յանձնեց որ ծանուցանէ զայս Ալբրահօր, կարծելով թէ այսու պիտի դիրանար իրեն ընդունելութիւնը. Մխիթար լսելով զայն, մերժեց բոլորավին անոր խնդիրը, որ փոխանակ Աստուծոյ վրայ ապաւինելու՝ իրեն դրամին և ստացուածոց վրայ վասահացած էր: Այսքան կը խորչէր Մխիթար դրամէն և արծաթասէրներէն, և բնաւ շեր փափաքեր որ միարանութիւնը հարստանայ կամ ճռիսանայ, անոր կործանելուն պատճառ համարելով. ընդհակառակն, աղքատութիւնը՝ անոր մեծագոյն զարդը կը համարէր, անով կը պարծէր, կը զրէր և կը պատմէր ամենուն:

Օր մը Մխիթարայ աշակերտները զնացին տեսնելու անոր նորաշէն սենեակը, ուր կային քանի մը աղքատիկ աթոռներ, և քանի մ'ալ սովորական պատկերներ ու շըրջանակներու մէջ՝ պատէն կախուած: Երբ տեսաւ զանոնք Ալբրահայրը՝ ըստ. «Զըլլայ թէ զայթակղիք սենեկիս մեծաւթեան և պատկերաց բազմութեան վրայ, որոնք ոչ թէ ինձի, այլ եկող՝ զնացող հիւրերուն համար են: Ըստ ինքեան պատշաճ էր որ մեծաւորները աղքատ խցիկներու մէջ բնակէին, և ոչ թէ մեծաշէն սենեկաց մէջ, վասն զի առաջնորդը պէտք է բարի օրինակ տայ հպատակներուն: ՈՌշափ զոհ պիտի ըլլայի, եթէ աղքատ խցիկ մը, աթոռ մը և ջերմեանդութեան համար մէկ փողի արժէքով պատկեր մ'ունենայի. վասն զի առկէ աւելի բան պէտք չէ որ զտնուի կրօնաւորին սենեկին մէջ<sup>1</sup>» :

Անզամ մը մեծ տէրութեան մը գեսպանը վանք եկաւ այցելութեան. Մխիթար զնաց ընդունեցաւ զինքը և պըտցուց: Գեսպանը, յետ ոյլեայլ տեղեկութիւններ ուզելու վանքին կացութեան, կարգերուն վրայ, և այլն, կը հարցնէ Մխիթարայ. «Քանի՞ տարի կ'ընէ որ Ա. Ղազարու կղզեկին մէջ կը բնակիք» . — «Քառնըշորս տարի կ'ընէ» , կը պա-

տասխանեց, Արքահայրը. — «Քանի՞ հոգի մեռան ձեզմէ», կը հարցնէ դեսպանը. — «Եւ ոչ մէկ հոգի, կը պատասխանէ Միսիթար, և զերեղմաննիս գեռ կոյսէ, ի բաց առեալ մի քանին՝ որոնք առաքելութեան մէջ մեռան»։ — Դեսպանը զարմացած կը հարցնէ. «Ի՞նչ ծածուկ զեղ մ'ունիք որ չէք մեռնիր»։ — Արքահայրը ժպտելով կը պատասխանէ. «Մենք ուրիշ դեղ շունինք, բայց այս միայն, որ քիչով կը զոհանանք, և ամէն բաներնիս շափաւոր և կանոնաւոր է»։ և կը պատմէ թէ Բնչ կ'ուտեն, Բնչ կը հագնին, և այլն։ Պիհապանը զարմացած և շինուած տուն կը դառնայ։

Մասնաւոր ոէր և զութ մ'ունէր առ աղքատս, որոնց երանի կու տար, Փրկուտոսի կերպարանքը տեսնելով անոնց վրայ։ Բոլոր կենաց մէջ երբէք աղքատ մը ունայնաձեռն արձեկած չէ։ Երբ քաղաք կ'երթար զործի համար, առաջին մտածութիւնը կը զրաւէին իրեն աղքատները. «իմ աղքատներս» կը կոչէր զանոնք. զրամ կ'առնուր հետը, և կը փնտաէր զանոնք՝ ողորմութիւն տալու։ Քանի մ'անգամ պատահմամբ մոռնալով հետը զրամ առնուլ, հարկ եղաւ որ կէս ճանապարհէն ետ դառնայ կամ ուրիշ մը զրկէ զրամ բրեկու։ Գիւղին մէջ ամէն անգամ տնէն դուրս ելնելուն, քսակը լեցուն կ'առնուր. յաճախ կը պատահէր որ օրուան մէջ երկու՝ երեք անգամ մի և նոյն աղքատները կու զային ողորմութիւն խնզրելու, կը ձանձրացնէին զինքը, բայց նա երբէք տհաճութիւն կամ նեղուիլ չէր ցուցներ, չէր զլանար ոչ մէկուն, և տալու ատեն դէմքին վրայ կը փայլէր սրտին գոհութիւնը և ուրախութիւնը։ Վարժեր էին աղքատները, որոնք առաւստէն երեկոյ կը պատահէին զրամ առջև, և Արքահօր զուրս ելնելուն պէս՝ թափօր մը կը կաղմէին չուրջը. Երբ զիւղէն կը դառնար, ստէպ կ'ըսէր. «Ի՞նչ կ'ընեն արդեօք աղքատներս, ո՞վ կը հոգայ զիրենք»։ Պատուիրեր էր վանքի դռնապանին, որ երբ աղքատ մը զայ, չը սպասեցնէ զրան առջև, խըստութեամբ շփարուի հետը, այլ չուտով տայ ինչ որ պէտք է և զոհութեամբ արձակէ։

Որ մը վանքին դուռը զարնուեցաւ . Արրահայրը շուտով  
մէկը զրկեց՝ որ նայի թէ ո՛վ է : Քահանան քիչ մը ուշ  
դառնալով , աճապարեց Մխիթար դէպ ի դուռը երթալ : —  
«Գերյարգելի , բան չկայ , ըստ քահանան , աղքատ մ'է՝  
ողորմութիւն կ'ուղէ» : — Արրահայրը վշտացած , և Այդ-  
պիսիններուն մանաւանդ պէտք է աւելի փութով և սիրով  
բանալ դռները , ըստ , որոնք Քրիստոսի կերպարանքով  
մեզի կու զան» . և առատ ողորմութիւն տալով , արձակեց  
աղքատը :

Անդամ մ'ալ , սաստիկ փոթորկի ժամանակ , երեկոյեան  
գէմ , խուլ ու համբ աղքատ մը , որ նաւակով կղզիները  
կը պտըտէր ողորմութիւն ժողվելու , վախնալով այնպիսի  
օդով վենեստիկ զառնալու , եկաւ վանքին զրան առջև  
նաւակը կապեց և քարերուն վրայ նատաւ : Դիպուածով  
քահանայիցմէ մէկը տեսաւ , և զնաց պատմեց Արրահօր՝  
Երր լսեց նա , սաստիկ այլայլեցաւ՝ թէ ինչպէս խեղճ աղ-  
քատը ներս չեն տառձ , և աճապարեց երթալ դուռը բա-  
նալ : Միարաններէն մին տեսնելով , վազեց՝ դուռը բացաւ ,  
և ներս ընդունելով աղքատը , կերակուր և զդեստ տուաւ .  
և երր օդը բոլորպին հանդարտեցաւ՝ արձակեց զինքը :

Ուրիշ օր մ'ալ զարձեալ աղքատ ձկնորս մը ողորմութիւն  
ուզեց : Ճաշի ժամանակ էր . դռնապանը քովը բան մը  
չունէր տալու : Խեղճ աղքատը հոն ըլապասեցնելու համար ,  
ինչպէս յանձնած էր . Արրահայրը , զնաց խմացուց անոր :  
Արրահայրը լսածին պէս՝ հրամայեց որ առատ հաց տան ,  
և իրեն կերակուրը աղքատին դրկելով , ինքը հաց ու պանիր  
միայն կերաւ :

Այս զդացումը կը դրաչմէր նաև իրեններուն սրտին  
խորը , զրեթէ ամէն նամակներուն մէջ պատուիրելով աղ-  
քատուիրութիւնը , և յանձնարարելով՝ հօգալ խեղճերը , աղ-  
քատները , ցաւազարները : Հոգեար զրքեր կը զրկէր իրեն  
քարոզիչներուն , ճրիարար բաշխելու համար աղքատաց :

Եատ երկայն պիտի ըլլար յիշել հստ մի առ մի Մխի-  
թարայ բոլոր առաքինութիւնները : «Եա՛ մեծ ըլլալու սահ-  
մանուած էր . մեծ՝ իրեն որութեամբ և առաքինի վարքով ,  
մեծ՝ զրական աշխատութեամբ , և մեծ՝ իրեն նկարագիրով  
և զործօնէութեամբ : Եա կարու շէ մեր զովեստներուն .

իւր գործերն՝ իրեն մեծութեան յաւերժական կոթողներ են, և ինքն իսկ՝ իրեն անձին զրուատիքն է : Կենդանութեան ժամանակէն իսկ այնչափ հաշակուած էր, որ ամէնքն ալ բարեկամք և սասիք՝ պատկառանքով և հիացմամբ կը յիշէին անունը : Անոր ժամանակակից պատրիարքը Յովհաննէս կողու կը զրէր . «Մեր զերյարգելի Արքահօր համբաւը սփաած և ծաւալած է Յունաց և Հայոց աշխարհներուն մէջ, և իմաստութիւնը յայտնի է անոր տպազրուած զրքերէն, որոնք ամէն տեղ տարածուած են» : Հռովմայ մէջ ևս այնպիսի հաշակ մը ստացաւ իւր խահական վարմունքով, որըութեամբ և իմաստութեամբ, որ ծիրանաւորներէն ումանք մինչև իսկ լլ . Պետրոսի աթոռոյն գահակալութեան արժանահաւատ եկեղեցական մը :

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Մինիթարայ վերջին միւամդութիւնը . — Կտակը . — Մաճը և թաղումը . — Անոր արտօնքին միարագիրը . — Տապամին բացումը և նշխարաց փոխադրութիւնը 1899ին . — Մինիթարայ երկու մրաշք-մերը .

**Ս**իրուն է վերջալոյսը, բայց մեղմ, տկար, զուրկ միջօրէի շողչող պերճութենէ : Այն որչափ խոնարհի ի մուտս, այնչափ կը նուազի անոր պայծառութիւնը և չերմաւթիւնը . կը զգա՞ թէ խոնջ է և դադարի պէտք ունի : Իսկ Մինիթար իրեն վերջալուսին, — կենաց յետին հնգամեկին մէջ, — ժիր էր տակաւին, շունէր խոնջութեան ոչ մի նշան, կը գործէր ինչպէս երեսուն տարի առաջ, նոյն կորպով և նոյն եռանդով, հակառակ այնչափ խօթութեանց :

Ինչպէս կ'իմանանք Մինիթարայ թուղթերէն, թուի թէ կիսպրոսի մէջ կրած դեղնացաւ կամ դալուկ հիւանդութիւնը ձգեր էր իրեն սերմը, որ մերթ ընդ մերթ կ'ընձիւզէր վերջին տարիներուն մէջ: 1739 տարւոյ հոկտեմբերին սաստիկ հիւանդացաւ, ամբողջ ձմեռը տկարութեամբ անցուց, և հազիւ 1740ի զարնան առողջացաւ, բայց շըստացաւ նախկին ուժը: Քանի մը տարի վերջ, 1746ին, դարձաւ դալուկը, սաստիկ չերմազ և թանչ հիւանդութեամբ. դեղերն օգուտ չէին ըներ, հազիւ քիչ մը կը մեզմէին ցաւերը և դարձեալ կը սկսէին: Եսոյոր միաբանութիւնը տագնապալից, չերմեռանդն աղօթքով դիմեց առ Աստուած՝ իրեն Գլխոյն առողջութեան համար: Վաստառուն օր անընդհատ ցաւերու մէջ անցուց, անքուն և անսուաղ, միայն սակաւ մի արգանակ կ'առնուր: Երկու՝ երեք քահանայք միշտ կը հոկէին քավը, կը ծառայէին, և կ'ընթեռնուին զանազան հոգեոր զրբեր. այս ընթերցումն էր միայն որ փոքր մի կը սփոփէր և կը մեզմէր անոր ցաւերը: Ատէակ կարդալ կու

տար իրեն սիրած Պեմբացւոյ Նմանութեան զրոց հետեւալ խօսքերը . և Տէր ... միայն թէ իմ կամքս ուղիղ և միարան ըլլայ քու կամացդ հետ , ըրէ ինծի ինչպէս որ հաճոյ է քեզի ... եթէ կ'ուզես որ նեղուիմ և տանջուիմ; նոյնպէս որչնեալ ըլլաս ամէն բանի մէջ: Քառասուն օրէն թանշը նուռ զեցաւ քիչ մը , և ելաւ պատարագ ուլ մատոյց . բայց նոյն օրը դարձեալ սաստկանալով ցաւը , բժիշկը պատուիրեց որ անկօղին երթայ և նոյնպէս քառասուն օր առանց կերակուրի անցունէ , պարզ մոի արգանակով : Գրեթէ բոլոր տարին անդադար ցաւերու և տառապանաց մէջ անցուց . չազիւ քանի մը շարաթ միայն ցաւերէն ազատ մնալով : Երեք տարի այսպէս անցուց , մերթ հիւանդ և մերթ առողջ տառանց պակսելու բնաւ իւր պաշտաման գործերէն : 1749ին բանուեցաւ դարձեալ սովորական հիւանդութեամբ , տառ ջին անգամմերէն աւելի սաստիկ , որուն հիրաններէն այլ ևս պիտի շազատէր : Անոր վրայ աւելցան նաև լերդի պնդութիւն , սաստիկ հազ , և թռերու մշտատե բարախումն , որոնք յուսահատցուցին ամենէն աւելի ճարտար բժիշկները : Աննկարազրելի է միարաններուն ցաւը և տառ նապը , որոնք աղօթքէ զատ ուրիշ սկնութիւն չէին կրնար ընել իրենց հօր : Արբահայրը հասկնալով թէ այն ընթացքով դէպ ի մահ կ'երթար , փութաց հոգւոյն մերձաւոր պատրաստութիւնները տեսնել : Կանչեց առանձին իւր սասենադպիրը : Հ . Մատթէոս Եւղոլիսացին , և զրել տուաւ առաջ պատրաստած հոգւոր կտակը , պատուիրելով թէ ինչ պիտի ընեն մեռնելէն վերջ իրեն մարմինը , և հրահանգներ տալով առժամանակեայ Փոխանորդին և Արքային ընտրութեան համար : Տուաւ նաև ուրիշ շատ խրատներ և յօրդորներ . սիրով և միարանարար ապրելու , համբերելու և խռնարհելու իրարու փոփօխակի և կամակար հնապանդելու երիցագունից : Այս կտակը զրել տալէն վերջը , բարձին տակ դրաւ պահեց , պատուիրելով ոչ մէկուն շյայտնել զայն :

Աւագ ուրբաթ օր , ազգրիլի հին , երբ միարանք Վրիստոսի թաղման հանդէուը կը կատարէին . թափօր ընելով վանքին սրահներուն մէջ , և թափօրը դէպ ի Արքահօր սենեակը կ'ուզզուէր , ծանուցին իրեն , թէ Վրիստոս կը մստենայ սե-

նեկիդ : Նոյն ժամուն այնպիսի սաստիկ հազ մը և սրտի բարախում մ'ունեցաւ , որ քիչ մեաց՝ խեղդամահ կ'րլլար : Յետոյ մեծածայն աղաղակեց . «Ով քաղցր և սիրելի Փրկիչ իմ , նոյնէ տառապեալ և վշտացած անձինս , և ողորմէ ինձի» :

Հազիւ աւարտեց խօսքը , իսկ և իսկ դադրեցան ցաւերը , հանդարտեցաւ , և երկրպագութիւն ընելով Յիսուսի , հետեւալ գեղեցիկ աղօթքը ըրաւ . «Յիսուս Քրիստոս , թագաւոր փառաց և որդի Աստուծոյ , դու որ այսօր հոգիդ երկնաւոր Հօր ձեռքը աւանդելով մանկութենէդ ի վեր ինձի համար կրած վշտերէն և տառապանքներէն աղատեցար , կ'աղաշեմ , եթէ կը հոճիս , թող որ աւանդեմ հոգիս քու ձեռքդ , որպէս զի ես ալ աղատիմ այս անտանելի ցաւերէս և վշտերէս . ապա թէ ոչ՝ սիրով կ'ըմպեմ այս բաժակը , որպէս զի կամքդ ըլլայ : Կ'աղաշեմ , տուր ինձի քու ոուրը օրհնութիւնդ և զօրացուր տառապեալս , որպէս զի համբերեմ ցաւերուս : Օրհնէ միաբանութիւնս , և պահէ զանիկայ սիրոյդ և շնորհացդ մէջ . տուր անոր խաղաղութիւն և կառավարէ քու ոուրը և բարերար կամքովդ . վասն զի այլ ևս շեմ կրնար ես կառավարել : Քու ամենազօր աջայդ հովանին միշտ անոր վրայ ըլլայ , և ամենօրհնեալ Մայր՝ օգնական և պաշտպան ըլլայ : Վարձատրէ անոր բարերարները և դարձ տուր հակառակորդներուն : Պահէ միաբանութեանս անձինքը ստատանային պատրանքներէն , որպէս զի անսասան մնալով իրենց կոչման վրայ , սրբութեամբ կնքեն իրենց կեանքը և արքայութեանդ փառաց արժանի ըլլան :

Աղօթքը վերջացնելով խաղաղ և անուշ քուն եղաւ :

Ապրիլի նին մեղմացան ցաւերը , և սակաւ մի հոգի առաւ : Երկրորդ օրը դարձեալ սաստկանալով հիւանդութիւնը , խօստովանեցաւ և ընդունեցաւ Ա . Խորհուրդը՝ իրը վերջին թոշակ , ինչպէս ուրիշ անգամներ ևս ըրած էր : Որչափ որ անընդհատ կը տանջուէր ցաւերէն , բայց միշտ միօքք վրան էր և ստէալ ոլաքական աղօթքներով ինքզինքը Աստուծոյ կը նուիրէր . հոգեռոր մտածութեանց և Աստուծոյ սիրոյն քաղցրութեամբ կ'անուշցընէր ցաւերուն դառնութիւնը : Երկու օր վերջը դարձեալ սակաւ մի հանդարտեցաւ ցաւերէն . խօստովանահայրը , որ միշտ քովն էր , զննելով երակը՝ քաջալերեց որ չվախէ . Արբահայրը պատախանեց .

« Ինչո՞ւ պիտի վախեմ մահուընէ , եթէ Աստուած ուզէ ,  
այս վայրկենիս իսկ պատրաստ եմ յօժաբութեամբ մեռ-  
նելու : Մանկութենէս ի վեր կը սպասէի այս ցաւալից կեն-  
ցաղէս ելնելու օրուան , և ուրախ եմ՝ որ ահա հասեր է : Կը  
փափաքիմ մեռնիլ , որպէս զի տեսնեմ Յիսոս Փրկիշս  
իրեն փառաց մէջ , և անձինս լուսատու և միաբանութեանս  
պաշտպան Տիրամայրը՝ փառաց աթոռին վրայ բազմած :  
Ուր էր թէ շուտով թաղուի արտասուաց հովհուը և թռչէի  
երկնաւոր հայրենիքը , ուր պիտի տեսնեմ ամենասուրը Եր-  
րորդութիւնը , պիտի որհնեմ և փառարանեմ զինքը հրեշ-  
տակաց հետ , և պիտի վայելեմ երկնից անձառ և անփախ-  
ճան երանաւթիւնը » : Երբ մատ եղող հարք զանտպան հոգեար  
զրոյցներով կը քաջալերէին զինքը , « Հանդարտ թաղուցէք  
զիս և մի շփոթէք , ըստ , ես բաւական նիւթ ունիմ մատ-  
ծելու » : Տեսնելով որ տրտում տխուր կեցեր էին շորջը ,  
ըստ . « Ինչո՞ւ տխրած էք ինծի համար , չէիք զիտեր թէ  
պիտի մեռնիմ » : Քետոյ աւելցուց . « Երբ մեկնիմ աշխար-  
էս , ցաւերով կաշկոնուած մարմինս զրէք այն տապանին  
մէջ , որ վաղուց պատրաստեցի ինծի համար : Կուրծքիս  
վրայ զրէք ներռողութեան խաչը և մեղալը՝ զորս նուիրեց  
Հառվմայ սրբազան Վահանայտպետը : Իսկ Տիրամայր պատ-  
կերը , զոր նկարել տռուի ժաղկեայ պատմումանով ինչպէս  
երեցաւ ինծի տեսլիան մէջ , ոչ մէկուն առանձին սեփա-  
կանութիւն ըլլայ այլ հասարակաց » : Երբ խօսուվանահայրը  
խորհրդածեց , թէ « Գերյարգելի , գերեզմաննիդ ըստ պատ-  
շանի շեղաւ » , պատասխանեց . « Այսպիսի ցաւերով փաստ  
մարմնոյս՝ այն գերեզմանը բաւական է , և շատ ալ է » : Եւ  
այսպէս ամէն բան արթուն և զգաստ մտքով կարգադրելէն  
վերջը՝ լուեց :

Աղրիլի Զին , տեսնելով բժիշկը թէ շատ տկարացած  
էր և կրնար յանկարծ մեռնիլ , պատուիրեց որ Վերջին  
Օծումը տան : Արրահայրն երբ լսեց՝ ուրախացած ըստ .  
« Այս օրը ծննդեանս օրէն աւելի մեծ է , բերէք որ ըն-  
դունիմ սուրբ Խորհուրդը » . և ընդունեցաւ կենդանի հա-  
ւառաբով և ջերմեանդն սիրով : Նոյն պահուն թեթեցան  
քիչ մը ցաւերը , և օրուան մեացած մասը հանգիստ ան-  
ցուց : Երեկոյեան գէմ կանչեց ծերագոյնները , տուաւ

Հրամեցածի ողջոյնը և հայրական օրհնութիւնը, և հոգեսոր խոռքերով և խրատներով վառեց՝ խրախուսեց զանոնք յառաջ տանելու արիարար իրեն սկսած զործը։ Տուաւ նոյն պէս կարևոր հրահանգները՝ թէ ինչ պիտի ընէին իրեն վախճանելէն վերջը, որպէս զի միարանութեան մէջ ո և է շփոթութիւն շժագի. յանձնեց անոնց իրեն կտակը, և յուզուած ձայնով օրհնելով զանոնք և աղօթքնին խնդրելով՝ արձակեց, որոնք ցաւազին և արտօասուաթոր աչօք համբուրելով իրենց սիրելի հօր աջը, դուրս ելան սենեկէն։ Յետոյ կանչելով մեացած միարանները, յանձնեց անոնց՝ Աստուծոյ և եղրայրական սէրը, կրօնաւորական կենաց կարեսոր պատուէրներ տուաւ, օրհնեց զիրենք, անոնց աղօթքին յանձնեց ինքզինքը, և սրտամմիկ հառաջանաց մէջ տալով աջը համրուրելու, զանոնք ևս արձակեց։

Ապրիլի 25ին ընդունեցաւ եռանդուն և ջերմ սրտով ամենասուրբ Խորհուրդը, և ձեռքը բռնած ներողութեան խաչը, խանդակաթ սիրով կը համբուրէր, և իւր սիրելի Յիսուսին ձեռքը յանձնելով հոգին՝ կ'ըսէր. «Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, քու ձեռքդ կ'աւանդեմ հոգիս, ողորմէ ինձի և ներէ բոլոր յանցանքներուն. մաքրէ հոգիս ամէն մեղաց արատէ՝ պատուական և սուրբ արեամբդ, վասն զի քուկդ եմ, Տէր հոգեսէր»։ Յետոյ առնըլով Տիրամօր ծաղկենկար պատկերը, որուն յատկապէս ջերմեռանդ էր, համբուրելով կ'ըսէր. «Օգնէ ինձի, Տիրամայր, այս վտանգաւոր ժամուս, և ինչպէս մինչև ցարդ միշտ օգնեցիր ամէն վշտերուս մէջ և զիս լուսաւորեցիր. նոյն պէս հիմայ զիս ձեռքէ մի թողուր, այլ միջնորդ և բարեխօս եղիր ինձի համար առ Միածին որդիդ, որպէս զի թշնամոյն որոգայթներէն ազատիմ»։ Զայս ըսելով, պատկերը և խաչը կուրծքին վրայ զրաւ, և փոփօխակի համբուրելով՝ կ'ըսէր. «Յիսուս, Մարիամ, սիրոս և հոգիս ձեզի կու տամ»։ Երբեմն ալ, երբ երկար ժամեր լուռ կը կենար, մօտը եղալները կը յորդարէին զինքը՝ հաւատոյ, յուսոյ և սիրոյ ներգործութիւններ ընել, և նա յօժարութեամբ կ'ընէր։

Յաւերը զեռ աւելի զայրացան ապրիլի 26ին, և սակայն անոր բերնէն շլուեցաւ երբէք տրտունչ մը։ Բժիշկը բոլո-

բովին կտրած յօյոը՝ ըստւ, թէ այս զիշեր առ Աստուած կը փոխուի, անոր համար միաբանք ոկտան հոգեվարքի աշոթքները ընել: Նոյն ժամուն ուղեց նստիլ բայց չկրցաւ այն դիրքով կենալ, բոլորովին ուժապան եղած, և դարձեալ ընկողմնեցաւ՝ ըսելով. «Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտուց եղիցի ուրախութիւն»: Միաբանք քնանալէն առաջ եկեղեցի ժողվելով՝ եռանդազին աղօթեցին առ Ա. Կոյսն, անոր խնամոց յանձնելով իրենց հայրը: Գրեթէ բոլոր զիշերը հսկելով և աղօթելով անցուցին. զի ո՞վ կրնար քուն ըլլալ, այնպիսի մեծ կորուստ մ'ընելու թախիծով համակուսած:

Արշալոյուը ծագելու մօտ էր. վանքին սրահներուն մէջ լոիկ մեջիկ կ'երթային՝ կու զային տխուր դէմքեր, աղօթելով անշշուկ, սրբելով արտօսրալիր աշքերնին: Մխիթար՝ հանդարտիկ տարածուած էր անկողնին վրայ, ոտքոյն՝ բայց խաղաղ, յատակ դէմքով, կիսարաց աշքով, դողդոջ չրթներով, ձեռնամած, խաչը՝ մեղալը և Տիրամօր պատկերը կուրծքին վրայ, չուրջը բոլորած պեսոր՝ պատկառելի դէմքեր: Հանդիսաւոր վայրկեան մ'էր. համակ լուութիւն: Հոգեվարքին երեսին վրայ չէր նշմարուեր տագնապի ու և է նշան մը. ողասելու դիրքի մէջ էր, իրը թէ մէկը պիտի ձայներ կամ ակնարկեր վերէն, և նոյնչետայն մահկանացութեան կապերը խզուած, թեթևակի պիտի թռչեր իրեն անձկարւոյն զիրկը: Կը մօտենար վերջապէս հոգին աւանդելու երջանիկ բռով: Քովը կեցողները մօտեցան համբուրելու անոր աջը, ջերմաջերմ արտասուաց կաթիլներ թողով անոր ձեռաց վրայ: Նա ոչինչ զգաց. զմայլման մէջ էր, աւելի երկնքի պատկանելով քան երկրի: Խոստովանահայրը ականջէն վար շշնջեց. «Յիսուս, Մարիամ», ինքն ալ կրկնեց, «Յիսուս, Մարիամ»: Խոստովանահայրը հարցաց, թէ կ'ուղէր վերջին արձակում մ'ալ. նա մեղմով զլուխը ցնցեց՝ իրը հաւանութեան նշան, այն ժամանակ վերջին արձակումը տրուեցաւ, յետոյ ներողութեան խաչը և Տիրամօր պատկերը չրթունքին մօտեցուցին, զորս համբուրեց նա: Այն պահուն քահանուներէն մին դնաց պատարագելու, որպէս զի խաղաղութեամբ աւանդէ հոգին: Երբ պատարագն աւարտելու վրայ

էր, ի ներկայութեան բոլոր միարան հարց, ննջեց ԱՄինիթոր արդարոց քունը, աւանդելով մաքրափայլ հսգին Աստուծոյ ձեռքը, 1749ին ապրիլի 27ին, եօթանասուն և շորս տարեկան հասակին մէջ: Անմիջապէս անոր հոգւոյն համար պատարագներ մաստուցուեցան: Աւելի դիւրին է մաքով երևակայել քան զրչով նկարազրել՝ ԱՄինիթարայ սիրատոն որդեկաց ոուզն ու կոծը, արտասուքը և հառաշանքը, զըրկուելով այնպիսի սիրելի, բազմավաստակ և աստուածարեալ հօրէ մը, որուն խնամոց և առաջնորդութեան դեռ պէտք կը զգային:

Յետ հոգին աւանդելուն, երկար և դժուարակիր հիւանդութենէն բոլորովին ծիւրած և տժունած երեսները՝ յանկործ կարմրափայլ վարդագոյն պայծառութեան փոխուցան, զոր տեսնելով ամէնքը կը սքանչանային: Դէմքին այդ գեղեցկութիւնը տեսեց երկու օր, մինչև օր զերեզմանին մէջ ծածկուեցաւ մարմինը: Իրեն յատուկ զերսուները հազցնելով, արտաքին սենեակը փոխադրեցին մարմինը. ի դիւրութիւն անոնց՝ որ կը փափաքէին տեսնել դինքը և ազօթել հոգւոյն համար:

1749ի ապրիլի 27ին, երեկոյեան դէմ, Ս. Ղազարու սրաշներու միջն կ'անցնէր թափօր մը սգաւոր՝ տիրադէմ արեղաներու, վառուած մոմեր ձեռքերնին: Աղձուկ, հատկը կալեալ ձայներ բախելով կամսորներուն, սարսուն զանգիւններով կ'երերէին ոցը: Խունկին ծուխը, լալկանի մը հազարումէկ գալարումները կ'առնուր, սպակիր դէմքերուն զարնուելով: Թափօրին եռեկն կ'երթար յամրաքայլ դաշգաղ մը սեապատ, յորում կը հանգչէր այն Մեծը, որ դոչէր էր կեանքը աշխարհիս ամենէն մեծ և սուրբ գաղափարին, այն է՛ կրօնից և Գիտութեան սեղանին վրայ: Այդ մեծը՝ ՄինիթԱՄ ՍեբԱՍՏԱՑին էր: Հասնելով եկեղեցի, բարձր գահաւորակի մը վրայ զրին դադաղը: Երկրորդ առաւոաը դարձեալ պատարագներ մաստուցուեցան, և թաղման կարգին մէկ մասը կատարեցին: Երեկոյին, լրացնելով թաղման կարգը, բազմութեամբ ճրագներու, անուշահոս խնկոց բուրմամբ, ողբաձայն երգերով և արտասուօք հանգուցին այն պարկեցաւ, սրբասուն և մշտամեռ մարմինը, եկեղեցւոյ դասին մէջտեղ՝ տարիներով առաջ իրեն պատ-

բաստած տապանին մէջ։ Թաղման ներկայ գտնութցան երկու ազգային եպիսկոպոսունք, — Զմիւռնիոյ՝ Ամենաս և Կեսարիոյ՝ Սարդին արքեպիսկոպոսները, — անոնց հետ բոլոր ազգայինք և հայ քահանայք, որոնք քաղաքին մէջ կը դանուէին, ինչպէս նաև բազմաթիւ իտալացիք, եկեղեցական և աշխարհական կարգէ, և բոլոր ժանօթք և բարեկամք։ Աւթ օր անընդհատ Հանգստեան պաշտօն կատարեցին տապանին վրայ, և ութերորդ օրը՝ բոլոր միաբանութեան առջև՝ Հ. Մատթէոս Եւդոկիացին։ Միսիթարայ ատենադպիրը, իմաստալից և զգայուն դամբանական մը խօսեցաւ ի պատիւ լուսահողի Արքահօր։

Միսիթարայ կենսադիրը հետևեալ կերպով կը նկարագրեն մեզ անոր արտաքին տեօիլը։ Միջահասակ էր, ոչ շատ զեր և ոչ շատ նիշար, անձնազեզ և վայելուչ։ Կազմուածքով զօրաւոր էր։ Խառնուածով՝ արիւնային էր, սակաւ մ'ալ մազգային։ զէմքը՝ փոքր մի երկայներես, բայց մեծարոյ և պատկառելի։ Նայուածքը՝ անուշակ և խիստ միանգամայն։ ունջ՝ կանոնաւոր և վայելուչ, և զրեթէ արծուեռունզն։ յօները՝ բարեձև, ոչ թաւ և ոչ նօսր, զոյնը՝ ընդ մէջ թուխին և շառագունին։ կերպարանքը՝ զուարթ, յակնթի զայնով մանրաթել երակներ ունենալով զէմքին վրայ, բայց առթին համեմատ՝ քաղցր կամ խիստ։ Չայնը՝ զօրաւոր, խօսուածքը՝ ազդու և զրաւիչ։ քալուածքը՝ ծանր և վսեմ։ կենակցութիւնը՝ ախորժելի և յանկուցիչ։ Ավ որ անոր խոչական և անուշ ընկերութեան ճաշակը կ'առնուր, կը սիրէր և կը կապուէր հետը, որով շատ մեծամեծ և նշանաւոր անձինք մէկ անգամ միայն տեսակցելով հետը, ընտանի և սերտ բարեկամներ եղան։

Տարի մը յետոյ, երբ եկեղեցւոյ բեմը բարձրացաւ և աւագ խորանը ետև տարուեցաւ, ինչպէս ըսինք յառաջ, Միսիթարայ երախտապարտ զաւակունք՝ նոր, վիմակերտ, շքեղ տապան մը շինեցին բեմին վրայ, ճիշդ աւագ խորանին առջև, և հան փոխազդեցին անոր մարմինը, որ անեղդ և անապական մնացեր էր։ Տապանին վրայ զրուեցաւ երկնազոյն մարմարէ զեղեցիկ կափարիչ մը, քանդակելով վրան հետևեալ արձանադրութիւնը։

ՔԵԱՐ ՔԵՐՈՒԲ ՀԱԳԵՑԱԼԻԴԻ,  
 ՆԵՐԿԱԽՈՌ ՄԱՏՏԻ ԱՄՄՈՒԱԾԱՃԻԴ,  
 ԱԶԴԵԱԼ, ՍԵԲԱՍՏ ՄԱՐԶԻՆ ԽԱԼԻԴ,  
 ԹԱԿԵՐՏ ԱՅԲԱՑ ԼՈՒՍԱՇԱԼԻԴ,  
 ՔԱՏԱԿ ՄԱՐՄՆՈՑ ԿԱՅՏԱՌ ՈՒՎԻԴ,  
 ԱՆՁԱՌ ԱՆՁԱՌ ԽՈՐՈՑ ԲՈՒԻԴ,  
 ԴԱՄԲԱՐՔ ՇՆՈՐՀԱՑ ԳԵՐԵԱՄԱԼԻԴ,  
 ՑԱՅՏԻՑ ԼՈՒՍՈՑ ՇԲԼԱՑ ՇԱԼԻԴ,  
 ԸԱՅՏԱՆ ԳԻՏՆՈՑ ԻՄԱՍՏ ԱՆՆԻՆ  
 ԱԶԴՈՒ ՈՒՍԱՌ ԽԵՔՆԻՆ ԱՆՁԻՆ  
 ԻՄԲԻՑ ՈՒՍՈՑՑ ՅԻՒՐՈՒՑ ԱՄԻՆ  
 ՕՃԱՌ ՈԳԻՈՑ ՄԵՏԱՑ ԵՐԺԻՆ  
 ՍՈՓԵՐԻ ԳՐԵԱՑ ՅԱԽՏէ ՈՉԻՆ  
 ԱՄԲԱՆԱԶԵԱՆ ՏՈՀՄԻՆ ՍԱՏՐԻՆ  
 ՍԱՅԹԱՔ ՀԱՐԻՆ ԳՈՈՒՑ ԿՅՈՒՆ  
 ՏԱՐՈՒ ԱՆԵՑՈՒ ԻԵՐԵՒ ԶԵՐԻՆ  
 ՈՐՈՎ ՀԱՍՏԱՑ ԿԱՐԴ ՀԱՄԱՇՈՒՆ  
 ԻՖՈՒԱԼ, ՏԵՐԱՄԵ ԻՐ ՈՍԿԵՓՈՒՆ  
 ԱԿՈՒՄԵ ԿԱՅՈՑՑ ԴՊՐԱՑ ՄՐՄՈՒՆ  
 ԽԱՂՅԻ ՎԱՐՈՒՑ ՔԱՐՈՑ ԱՆԵՑՈՒՆ  
 ԱՐՓԻՈՅՆ ՄԱՐԶէ ՄԵՏԻՑՆ Ի ՔՈՒՆ  
 ՅԴԿԵԱԼ, ԴԱՐԱՍ ՏԵԿԵԱՑ Ի ՅՈՒՆ  
 ԻՒՐԱՑՈՐԻՆ ՆԱԱ ՎԱԽԸ ԶՈՒՆ  
 ՆԻՒԹԵԱՑ ՆԱՐՈՑ ԿԱՐԴԻՌ Ի ՓՈՒՆ  
 ՀԱԳԱԴ ՀԱՎԱԽԻՌ ԱԽՏԻՑ ՅԵՐՈՒ  
 ՈՒՈՐՏ ՀՆԶԵՐ ՄԵՊԿԻՑ ԿՅՐՈՒ  
 ԳՈՒՀԱՐ ՄՏԱՑ ԽՈՒԱՐԸ ՍԻԳԻՆ  
 ԻԿԻՆԵԱԼ, ՈՒՒՈՑ ԳԵՐ ԼԻԲԱՆ  
 ՈՂՋԳ ՅԱԽՏԻՆ ԳԱՂԹԷՐ ՊԱՇՏՈՒ  
 ՑԱՍՊԻՄՆ ՀԱՑՈՑ ԱՐԺԱՆՆ Ի ՏՈՒ  
 ՆՈՒԱԴ ՈՍԿԻ ԸՆԴԱՑ Ի ՀՈՒ

1749 Ապրիլ, 27.

Միսիթարայ դամբանը ուխտատեղի մը դարձած է. Վե-  
 նետկոյ և շրջակայ քաղաքաց և զիւղորէից մէջ շատ լսուած  
 և յարգուած է անոր անունը, մանաւանդ Քիոճճիս քա-  
 ղաքին մէջ. Եարաթ շանցնիր որ մի քանի Քիոճճիսցի

ընտանիքներ ուխտի շի գան անոր շիրմին, չնայելով չորս՝  
հինգ ժամուան ճանապարհի հեռաւորութեան, յաճախ ևս  
անձրեսու և մրրկալից օդերուն։ Շատ տարիներէ ի վեր կը  
տեսէ անընդհատ այս ուխտադնացութիւնը, որ կը նշանակէ  
թէ կ'ընդունին խնդրած չնորդնին, ինչպէս իրենք ալ կը  
հաստատեն։ Կ'ուղեմ հոս գնել այն պանչելի բժշկութիւն-  
ներէն երկուքը, որոնք կատարուեցան երանաշնորհ Հիմ-  
նադրիս բարեխօսութեամբ, երկուքն ալ ականատես և ար-  
ժանահաւատ վկաներէ արձանագրուած, և որոնք երբէք  
երկրայութեան առարկայ եղած չեն։ Առաջինը պատահե-  
ցաւ Մխիթարայ Յաջորդին՝ Մելգոննեանին արբայութեան  
ժամանակ։

Վենետիոյ մէջ տասներկու տարեկան պատանի մը, աղ-  
նուական ընտանեաց որդի, սաստիկ հիւանդացաւ, այնպէս  
որ յուսահատեցան բժիշկները։ Հայողզի պարոն Խոշիկ  
Զուղայեցի, որ շատ մտերիմ էր պատանւոյն ծնողաց,  
ցաւակցութեան երթալով անոնց տունը, Մխիթար Ար-  
քահօր փաքրադիր պատկերը տուաւ անոնց, և ըստաւ։ «Դի-  
մեցէք հաւատքով զօրաւոր բարեխօսութեան այս Աստու-  
ծոյ ծառայիս, որ Հայոց Ս. Ղազար վանքին մէջ թա-  
ղուած է»։ Բարեպաշտ ծնողքը երեկոյին հոգեվարք պա-  
տանւոյն բարձին տակ զրին պատկերը։ Որշափ մեծ ե-  
ղաւ ծնողաց զարմանքը և ուրախութիւնը, երբ երկրորդ  
առաւօտը բոլորովին առողջացած գտան իրենց զաւակը, որ  
նոյն օր իսկ ելնելով անկողնէն, քալեց, կերաւ ախոր-  
ժով, հիացնելով բոլոր տեսողները և լսողները, և նոյն իսկ  
բժիշկը, Երրորդ օրը ծնողքը վանք բերին իրենց տղան,  
և երախտազէտ սրտով համբուրելով Մխիթար Արքահօր  
դամբանը, ուխտական պատարագ մը մատուցանել տուին<sup>1</sup>։

Երկրորդն է՝ Տիկին Նելիկի բժշկութիւնը, որ կատա-  
րուեցաւ նոյն իսկ Մխիթարայ դամբանին վրայ, որը կը  
պատճէ Տիկին Աւգ. Կրավին իւր գեղեցիկ զբքերէն միոյն  
մէջ<sup>2</sup>.

1. Աղասի. Պատմ. Հայոց Արքան. էջ 294-5.

2. Mme Augustus Craven, «La soeur Natalie Narischkin» etc. էջ 183-185. Paris, Perrin et Cie. etc.

Աւնետիկ, Հինգշաբթի, ապրիլ 1847.

«.... Երկու շաբթէ ի վեր զուր տեղ վայրկեան մը փնտռեցի՝ քեզի զրելու համար. սուրբ շաբթուն տօնական աւուրց զբաղումներն ինձի ժամանակ շթողուցին, և սակայն շատ կարեւոր լուր մ'ունէի քեզի հաղորդելիք՝ իմ սիրելի հիւանդիս նկատմամբ, որուն վիճակը երթալով գէշցեր էր յետ իմ վերջին նամակիս : «Քեզի զրելէս վերջը՝ թէ երթալով կ'աղէկնայ, երկրորդ օրը ընդհակառակն այնչափ գէշցաւ, որ մեծ տագնապի մէջ ձգեց զմեզ, և այն օրէն սկսեալ այնչափ հսկայագայլ երագեց հիւծիչ հիւանդութիւնը, որ բժիշկը յայտարարեց թէ այլ ևս ոչ մէկ գեղ օգուտ պիտի շընէր անոր: Երկակայէ անոր բարեկամներուն տագնապը: Եւ յիրաւի զդալի կերպով կը հալէր ու կը մաշէր, և այդ ակնյայտնի ծիւրումը բոլորովին կը յուստացնէր զմեզ: Սակայն մեր վշտացած որտերը տակաւին հրաշքի մը յուսով կ'օրորուէին: Նախորդ օրը, երեկոյեան ժամը ուշ, Մարգարիտա-Մարիամ Ալակաքի միջնորդութեամբ ընդունուած երեք ոյսպիսի մեծ չնորհքներու պատմութիւնը կարդացած էի: Մաքէս ըսի, եթէ աւելի կենդանի հաւատք մ'ունենայի, իննորեայ ջերմեռանդութիւն պիտի ընէի. բայց այլ ևս ժամանակն անցեր էր, հիւանդութիւնը շափադանց առաջ զնացած էր: Տարակոյս շկայթէ բոլորովին սպառեր են ուժերը, և կարող չէ ու է կերակուր առնուլ, և վերջապէս (ամսոյս) 23ին երեկոյեան ժանոյց բժշկը՝ թէ այլ ևս յոյս չկայ, և յանձն շառաւ շարունակել իւր զեղերը և դարմանները....»

«Հեին, առաւտօնեան ժամը 9ին, դեռ սենեակս էի: Գոնդուայ մը կանգ կ'առնու մեր դրան առջև.... Ստեփանիս նիս Նեվիլ, շունչը կարած, յանկարծ սենեակս կը մանէ, և կը խնդրէ որ շուտով վար իշնեմ. վասն զի բան մը պիտի ցուցնէ ինձ, ոքան մը, կ'ըսէ, զոր չկրնար վեր բերել, այսշափ բարձր»:

«Վար կ'իշնեմ իրեն հետ, կը մօտենամ գոնդուային: Գուշակէ թէ ինչ կը գտնեմ մէջը... իմ սիրելի մայրիկս, հրաշքով բժշկուած, որ յուզումէն զեռ բարախուն՝ եկած էր իմացնել իւր թռոնիկին: Այս չնորհքս ընդունուած էր

սուրբ Միսիթարայ դամբանին վրայ՝ Ա. Ղազարու վանքին  
մէջ, ուր տանել տուած էր ինվագինը: Մնացած մանրա-  
մանութիւնները պիտի զիտնաս ի Վենետիկ, և ուրիշ  
բանի համար չեմ զրեր այս քանի մը տողերը, բայց գալու  
և զմեզ տեսնելու փափաքդ վասելու համար»....

Ա. Ա. Ա.

Երանաշնորհ Հիմնադրիս մահուընէն հարիւր յիսուն տա-  
րի վերջ, 1899ի գեկտեմբ. հին, եկեղեցւոյ նորոգութեանց  
առթիւ, բնմին յատակը բըելով՝ նոր մարմար քարերով սալ-  
արկելու համար, ստիպուեցանք բանալ նուե Միսիթարայ  
տապանին կնեայ կափարիշը: Տեսնելով թէ փայտեայ արկղը,  
որով թաղուած էր, փտած և քայլայուած էր, ամենայն  
խնամով զատելով Միսիթարայ նշխարները, ընկաւզի նոր  
կապարապատ տապանակի մէջ զետեղուեցան, իսկ ցփսէից  
փշրանք և միւս մանր մասոնք սափորի մը մէջ ամիտուե-  
լով, յիշեալ արկեղ կամ տապանակին քով դրուեցան:  
Բնմին աւագ սեղանը դէպ ի ետև փոխազրուելով, հարկ  
եղաւ Միսիթարայ տապանաքարն ալ տեղափոխել սակաւ մի  
ետև դէպ ի խորանը: Եւ այս նշխարաց ամփոփման և տե-  
ղափոխութեան համառօտ՝ բայց մանրամասն նկարագիրը,  
հանդերձ ամէն պարագաներով, զրեց Վ. Հ. Կոնդ Ա-  
լիշան՝ Ուխտիս Աթոռակալը, որ և զաղափարուելով մա-  
զադաթեայ թերթի վրայ, հանդերձ ձեռազիր ստորագրու-  
թեամբ Ուխտիս Աթհիապատի Գլխայն և նոյն ժամանակ  
վանքին մէջ գտնուող բոլոր միարանից, ապակեայ անօթի  
մէջ դրուեցաւ նշխարաց արկեղ մօտ՝ ի զիտութիւն ապա-  
գայից: Անաւասիկ յիշեալ արձանազրութեան պատճէնը.

Եղանակ էր բազմաց ի միաբանիցս և առաւել գերազատիւ Ար-  
քանուր մերոյ Տեսան իգնատիոսի Ափուելեան արքեպիսկոպոսի  
Տրայանուպուլոյ, որ էր վեցերորդ ի Հեղինակէ ուխտիս ձա-  
ռայէ Տեսան Միսիթարայ, միանգամայն և առ յիշատակէ մեր-  
ձեցեալ երկերիւրամեկի հաստատութեան սորին (1704-1904),  
ընդարձակել զրեմ աւագ խորանի տաճարից առ զիւրազոյն  
և զայելազոյն ևս կտառել զհանդէսա տօնական պատրա-  
զաց և ձեռնազրութեանց. վասն որոյ յայտմ ամի որ է 1899  
մարդեռութեան Փրկչին, քակեցաւ շրջապատ որմն ի թիկոնց

սեղանոյն, և արկաւ բացակայն իրքի հինգ ընտաշափ (mètre) նոր հիմք, որին և յատակ է Եւ սեղանն առապահական հանդերձ և անդրեաք ընթերակայ հրեշտակացն՝ վարեցաւ յառաջ կոյս ընդ նորակառոյց հայակազ զմբեթաւն: Եւ յարժամ սկսան սալարկել զյատակն, ի բրելն՝ երեկցաւ բացաւ ի սնարա տապանի նախահօրս: և կողք վայտեղէն արկեղն փառեալ և սորասորեալ ի ներքս ի վերայ զիականն: զոր ծանր համարեցաք թողուտ այնպէս խառնիսուան, այլ վայելուչ՝ մաքրել և յարդարել, բայց առ խզնելոյ զի մի արդեաք հակառակ ինչ եկեղեցական հրահանգաց իցէ ձեռնմուռթիւն և տեղափոխութիւն նշխարացն, և այսու խեթ ինչ և խամբան լիցի խնդրոյ փափագելի երանացուցման ճառային Տեռուն, պատշաճ դատեցաւ. Աեհա հարցանել զպատրիարդ քաղաքին՝ ծիրանաւոր Յովանի Սարդոյ. և առաքեաց առ նա յերկրորդում առուր զեկուեմբեր ամսոյ՝ զբարտուղար իւր Հ. Բարսեղ Ա. Սարդինեան և զեկեղեցականն Հ. Յովհաննէս Ա. Թորոսեան: Կարպինալն վատահացոյց զնոսա առնել անկառած զոր կամ էր մեր, խրատ ևս տուլով ի վայտեղէն առապանակի հանդուցանել զնշխարսն, որ լաւ ևս պահէ յապականութենէ քան զբարեղէնն: և արարաւ այնպէս: Յես երկուց առուրց (Դ. զեկուեմբ.) յառաջ քան զմիջօրէն ի բաց առաւ արձանագրեալ կնեայ կափարիչն: և տեսաք և զտաք յետ երից յիսնեակ ամսոց թաղմանն (1749-1899) զպատուական սակերան՝ Լուծեալս ի յադից և ծանձկեալս փատաճակ փայտիցն և զզեսաւոց. զանկն կայր ի տեղուած իւրաւոմ, այլ ստորին ճնուն ստամեսիստն: անջանեալ ի նմանէ, մասունք ինչ փիւնին և կապային բրդդղեալք ի վերայ և ի ներքոյ զիսկանն: Յամկերացն յայտնեցան՝ սրունիցն, բարձից և բազկաց: մասն ինչ կողից և ողնայարին: և այլ մանր մասունք մասանց և թամից:

Զայտ տմենայն՝ մատեալ ի առապան զորժակալ Ուխտիս Հ. Յուսիկ Ա. Մէհրապեան՝ մի ըստ միջնէ հանեալ տայլը տա Գիր. Արքահայրա, որ և նովին խոնմազ զետեղէր ի կապարապատ փայտեղէն տապանակի: Գոտոն ոչ սակաւ մեծահաս, փայտեայ համբիչք վարդարանին, է որ ցըռեալ և է որ տակամին յեռեալ, հանդերձ պղնձեայ մեզալիւր, փաքրիկ պղնձեայ խաչ լանջացն, և թզաչափ խաչ փայտեղէն՝ պղնձեայ խաչեցելովն, եղեալ յաշակերտացն ի վերայ կրծոց կամ ի միջի ձեռաց հօր իւրեանց, անփառ կային և ներբանն հաջամափիցն: բայց զատի մաշկեղէն ոչ երեկցաւ և ոչ մասանի, այլ միայն երիդք ինչ, թերեւ փիւնին: Ես սոցունց մասն ինչ

ի բաց տասն ի պահեստ, ի յիշտառեկ և յարդահատութիւն սիրողաց նորին և յարդաղաց իսկ այլ ամենայն պատառք ցիսէիցն և մանր մանր մասունք կոմ փշրանք, հանդերձ ամենայն նիւթով ամփոփեցան ի ատփոր մի և եղան առ երի արկեղ նշխարացն ի նմին յառաջնորմ տապանին, զոր այսու առթիւ և ըստ վայելչութեան զրից ընդարձակեալ ըեմին՝ յառաջ վարեցաք ի աեղանն կոյս և յառայսպա ձանօթութիւն այսմ ամենայնին եղաք յապակեաց ամանին զայս գիր վասն այնոցիկ՝ որոց դեռ լիցի բանալ վիակեալ և զկնքեալ ի ներկայիցս սրտառուց որդես և թուանց հազելոյս հօրս մերոյ և Լուսաւորչի նուազեալ ազգիս Հայոց ։ վափագելով անձկան ոչ յամել վերաբացմանն, ի վասն Փառաւորչին վառաբանուցաց իւրաց և սրբոց և ի մեր քաջալերութիւն ։ Գրեցաւ ի մայրավանքս Մառայի Աստուծոյ Մխիթարաց, ի Ս. Պատար կղզեկես Վենետիկոյ. յամի Աենարարին մերոյ 1899, ի և ամսեան դեկտեմբերի. և ի Հայոց թուականիս ՌՅԹԹ (349), ի իթ ամի Քահանայապետութեան Լեռնի ժդ, և ի Խում ամի առաջնորդութեան Աբրահամու որ և ստորագրէ և կնքէ և հաստատէ զգբեկալք։

Ես Խօնատիոս վ. Կիւրեղեան  
Արքեպիսկոպոս Տրայանուպոյոց  
եւ ընդի. Աբր.


Մխիթ. Միաբանութեան, հաստա-  
տեմ զիերոյգբեսպարս.

Ես Հ. Պետոնդ Ալիշան, ընդի. Ա-  
թուակալ Շիշտիս, հաստատեմ  
զիերոյգբեսպարս. և այսն.

Այսպէս կարգաւ ստորագրեցին վանքին մէջ գտնուող միաբանք Ուխտիս, ընդ ամենը քսաներեք անձինք.

Իսկ նշխարաց փոխադրութեան հանդէսը կատարուեցաւ զեկոտեմբերի 5ին. Այդ օրուան վերջալոյսն էք. Ուխտիս Արհիապատիւ Գլուխը՝ եպիսկոպոսական զգեստներով և երկու ընթերակայ սարկաւագներով դասին մէջտեղ կանգ. նած, չուրջը խմբուած քահանայից դասը, վառուած մոմեր ի ձեռին, և բեմին վրայ՝ ուխտեալ և նորընծայ պատա- նիք, նոյնպէս ճրագաւորք, բոլորն ալ աշքերնին սևեռած

այն փոքրիկ արկղին, յորում ամփոփուած էին Արանաշնորհ Հօրս նշխարք, սաղմոսաց և շարականաց նուազներով . լոյսերով և անուշ խնկոց բուրումներով, զետեղեցինք նշխարակիր արկղը նոյն տապանին մէջ: Այն պահուն իւրաքանչիւրին միտքը գրաւուած էր զանազան խոկումներով և զգացումներով, որոնք ինձ անթափանցելի մնացին. բայց ինչ որ կրցայ կարդալ այն մոտածկոտ դէմքերուն վրայ և յուզուած ձայներուն մէջ, այն էր, ըլլալ մի մի Մէսիթարներ :





## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

Միմիթաշայ Ֆոգնոր աաղերը, քերթուածմերը և շարակամմերը. — Միմիթար կը մրատարակէ ի Պոլիս և ի Վեհատիկ այլոց շարադրած կամ թարգմանած զբքերը. — Իրեմ թարգմանութիւնները և իմքթագիր մամր երկասիրութիւնները. — Հրատարակութիւն Աստուածաշումչ զբոց:

**Յ**ետ տեսնելու թէ ինչպիսի բազմազրադ և մրրկայոյզ կեանք մ'ունեցաւ Ալիսիթար, կ'ափչի մարդ թէ ինչպէս ժամանակ գտաւ զրականութեամբ ևս պարապելու, ոչ երկրորդաբար՝ քանի մի աննշան հատորիկներ մամուլէն դուրս հանելով, այլ իրը թէ նախնաբար և յատկապէս զիտութեան նուիրած ինքզինքը, այնպիսի զրքեր ի լոյս ընծայեց, որոնք կրնան մէկ մէկ զլուխ գործոց համարուիլ: Ալիայն Ալսուածաշունչին հրատարակութիւնը, այնքան խնամուի եղած և այնպիսի գեղեցիկ պատկերներով, կրնար բանասիրի մը անունը յաւերժացնել: Ալյապէս նաև Ամատթէի մեկնութիւնը կամ Հայկապեան բառարանը, ուրոյն նկատելով, կրնային մի մի անմահ կօթողներ ըլլալ: Ա՛յ թօղունը անոր այնշափ մանր զրութիւնները կամ հրատարակութիւնները, որոնք բոլորը միասին առած, հազիւ մէկ մարդու կեանք պիտի բաւէր — ժամանակին տպագրական գլուարութիւնները ի նկատի առնըլով — զանօնք ի լոյս ընծայելու:

Միսիթար՝ ստեղծող միաք մ'է, որ իւրովին կ'ուռանանայ, կը ծաւոլիի, հոկոյ կը դառնայ, երբ իրեն յարմար միջավայրը կը գտնէ: «Բորձը բաները հասկնալու մէջ՝ երազ, նուրբ խնդիրները հետազօտելու մէջ՝ խորունկ և սրատես, ճշմարտութեան խօսից խելամտութեան մէջ՝ կորովամիտ, իմաստները միաքը պահելուն մէջ՝ մեծ յիշողութեամբ ոժտուած»: Այս է Միսիթարայ ծանօթից և ժամանակակցաց դատաստանը անոր իմացական կարողութեան մասին:

Զարմանալի կարգ մ'ունէր աշխատութեան, որով կը հասնէր ամէն բանի: Ի նմին ժամանակի երկու՝ երեք զործի ձեռք կը զարնէր, ինչպէս կ'իմանանք իւր թուղթերէն, առանց շփոթելու, առանց մին միւսոյն արգելք ըլլալու: Յանախ զիշերուան ժամերը զրական աշխատութեանց կը նուիրէր, յետ բոլոր որը նիւթական կամ վարչական գործ երով զբաղելու: Միսիթար, դեռ հազիւ տասնըհինգ տարեկան, զգոց ինքզինքը հօգենոր բանաստեղծ և երդիչ, զիւրութեամբ կը շինէր տաղեր, ոսանաւորներ, և անոնց կը յարմարցնէր արեւելեան տիրանոյց եղանակներ, որոնցմէ մի քանին բերաւ հետը ի Վենետիկ, և մինչև այսօր կը պահին աւանդաբար մեր մէջ: Անոր պատանի հասակին երախայրիքն է Ալղաշեմբ գքեզ, Աստուածածին» երգը, այրուբենի զրերուն վրայ յարմարուած, որուն առաջին վեց տանց վերջին առջերուն սկզբնատառք «Միսիթար» անունը կը կազմին: Գօվհուաներու փունջ մ'է, հիւսուածք մը ամէն քրիստոնէի հարկաւոր խնդիրներուն, զոր կ'ընծայէ Տիրամօր. Հոն կը լսենք Միսիթարայ անմեղ և տաք սրտին թրթուածները: Աստուածածնայ տօներուն կ'երզուի այն մեր մէջ, ինչպէս նաև արեւելքի խորը: Ունի ուրիշ ճարտար, երկայն ոտանաւոր երգ մը, իրը 1500 տող, — իրեն կուրութեան որերուն արտադրութիւն, — այրուբենի զրերով շարակարգուած, որ կը սկսի «Ամենօրհնեալ սուրբ Կոյս», զըթա՞ց, որուն առաջին տաղին երկրորդական տողերուն սկզբնատառք կը կազին հետևեալ խօսքը: «Մինչ կոյրն էի՝ ուխտեցի. Զի ի Կուսէդ լոյս տացի»: Զգայան տաղ մ'է, ճարտար յօրինուածով, և յաճախ իրարու յաջորդող տողերուն մէջ այնպիսի բաներ գործածուած, որոնք եթէ դուրս հանուին, չայլայլիր բնաւ ոտանաւորին իմաս-

տը, և Հանուած բառերը քովից քով դրսւելով՝ Հայր մեր կամ ուրիշ աղօթք մը կը կազմեն։ Հօն՝ «լոյսն» է ամենէն անոյշ բառը, սահսր կրկնուած, որուն կը ձկոփ բալոր ուժով, և կը բացատրէ Հազարումէկ դարձուածներով։ Այսպիսի յորդութեամբ կը զեղուն իմաստները մաքին մէջ, որ բաւական թուղթ չի գտներ զանոնք, զրի առնըլու։ \*  
«Փրրելոյ՝ թուղթք չեն բաւական»։ Կըսէ։ Անշուշտ իւր կենաց այդ զիշեր օրերուն մէջ չինած է «Անձառին խորան» երգը, յորում հառաջաներով կը զոչէ, «Յաւեցաւ ակն իմ, փարատեալ զցաւ իմ», Մարիամն, և քերականական զարտուղաւթեամբ մը, որ ներկիլի է ցաւած սրտի մը, կ'ըսէ։ «Լոյս տուր իմ ակին»։ Իրեն միւս ոտանաւոր երգն ալ, որ կը սկսի «Երանելի մայր անարատ» բառերով, ուր չկայ տող մը՝ յորում կրկնուած շըլլայ «լոյս» բառը, մի և նոյն պարագայից մէջ չիներ է։ Բարձր, ազնուական սիրոս մը, որմէ չի լսուիր բնաւ տրտունջ մը ամենէն աւելի դառն ցաւերուն մէջ։ ընդհակառակն, լոյսերու, ծաղկանց, զոհարներու մէջ կը պարտի մաքով, որոնցմէ կը հիւսէ իւր զովեստները։ Բոլոր ոտանաւորները հոգեւոր երգեր կամ աղօթքներ չեն, մերթ բարոյական խրառոներ են, ինչպէս։

«Զքոյոց իրաց միմէ առ բարիմ տարածաննել սկըսանիս,  
Ցայթամամ բամիսք բազմօք լլցեալ Արխտոտէլ երեխա,  
Խակ ըզբարեացն այլոց խօսել՝ Սակ զայրբէմ անզիտես»...  
...

և մերթ նկարագիրներ իրեն կրած ալէկոծութեանց, զորս յիշեցինք պատմութեանս մէջ։ Գեղեցիկ ոտանաւորներէն մին է նաև «Յրօրքուը», ի զիմաց Ա. Կուսին առ մանուկն Յիսուս, որ կը սկսի «Ննջեամ, որդեակ, քաղցր և անոյշ» բառերով։

Միսիթար դեռ սարկաւագ, Աերաստիոյ մէջ, անդամ մը տիրացուին շարականներու տետր մը յանձնեց, չորս աւագ տօներուն վրայ չինուած, եկեղեցւոյ մէջ երգելու համար։ Շարականաց բառերը և եղանակները նոր էին. աիրացուն ոլորուն ձայնով երգեց ճիշդ այն եղանակով, ինչպէս ուսուցեր էր Միսիթար։ Ժողովուրդը շատ զգացուեցաւ, և

ամէնքն ալ կարծեցին թէ նախնեաց նորագիւտ չարականներ էին. բայց քննելով յետոյ իմացան թէ Միսիթար շինած էր զանոնք: Շինած է նաև ուրիշ երեք չարականներ, ի պատիւ Յիսուսի և Աստուածամօր անուանց տոներուն և Ս. Յավուածի աստուածահօր, առանձին տեմրով տապագրուած, զորս կ'երգէինք վանքին մէջ մինչև վերջին տարիններս:

Ուսանաւորներու և չարականաց մէջ ընդհանրապէս պարզ լեզու մը կը գործածէ, մերթ չափաղոնց զարառուղելով քերականական և տաղաչափական կանոններէ: Ենորհարւոյ հետեւող մ'է տաղաչափութեան և յանգերու մասին, որուն Յիսուս որդի քերթուածը մանուկ հստակէն բերան ուսած էր: Յանգերը՝ ամենամեծ կապեր են երգչին, որ կարող չէ ազատորէն խոյանալ իւր զգացմանց թեերով: Այդ կապերը խզող սուրը պիտի ըլլար՝ Միսիթարայ դաւակներէն միոյն բազրութանուոյն խիզուխ զրիշը:

Միսիթար, գես հիմեազիր չեղած, եղաւ հրատարակիշ զրբերու: Խնքը, առնշուած զրբի ծարաւէն, չուզեց որ այլք ևս նոյն առնջանքը կրեն: Գես կը յիշէր կակիծով այն օրը, երբ Միքայէլ եպիսկոպոսը ձեռքէն խլեց զիրքը. և գես աշքին առջևն էր, թէ ինչպէս Գեմբացոյ մատենին մի միոյն օրինակ ունենալով, կէսը կտրեր և աշակերտին տուած էր:

Անոր հրատարակչական զործանէ ութիւնը կը սկսի կ. Պոլսոյ մէջ 1700 տարւոյ հոկտեմբերին, այլոց զրածները և թարգմանածները տպագրել տալով, և իրեն վրայ տանըլով տպագրութեան ծախքը և որբազրութիւնները: Մակայն անունը կը ծածկէ, յիշատակարանաց մէջ յայտարարելով միայն, «որբազրութեամբ ումեմն չնշին բանասիրին»: Այնպիսի զժուարին և ազմկալից ժամանակի մէջ, յախողեցաւ հրատարակել շրոս զիրք, — Գեմբացոյ Քրիստոսի Կմանութեան մատեանը, Մատական ազօթից զրբոյկ մը, և երկու մեկնութիւններ՝ Յայտնութեան և Երգոց երգոյն, — Ասկան վարզապետի տպարանին մէջ, որ Փէ դարուն վերջերը Պոլիս փախազրուելով, և Եղմիածնի և Ս. Արշուս անունը կը կրէր: Մեթոնի խախուտ և զրականութեան

1. «Պատմութիւն Հայկական տպագրութեան»: Հ. Գորեգին Վ. Զարբչականներ. էջ 155. Վեհափել, 1895:

աննպաստ դիրքը՝ շրնծայեց Ախիթարայ այդ գործը շարունակելու միջոցները. բայց երբ անցաւ ի վենետիկ, հայկան տպագրութեան խանձարուրքը, ուր կը գտնուէին արդէն ձուլուած հայերէն տառեր, անոր գործօնէութիւնը մեծ ծաւալ մ'առաւ: Յամին 1745, հազիւ ոտք կոխած գոժերու քաղաքին մէջ, ձեռք զարկաւ բաղդատելու մեծին Ալբերտի և Աստուածաբանութեան» հայ թարգմանութիւնը «լատին բնագրին հետ, և սրբագրելով և յղկելով լեզուն, որքան կարելի էր, Բորտոլիի տպարանին մէջ անոր երկրորդ տպագրութիւն մ'ըրաւ, առաջինը սպառած ըլլալով: Քանի մը տարի վերջ, 1749ին, երկու հոգևոր գրքոյներ ևս հրատարակեց, «Պարտէզ հոգեւոր» և «Խոկումն քրիստոնէական», ի վայելումն և ի կրթութիւն ջերմեռանդ անձանց: 1722 թուականին, Թէոդոսիանց Պետմատրի տպարանին մէջ հրատարակեց երկու բաւական սուռար հատորներ, «Գիրք առաքինութեանց» և «Գիրք մոլութեանց», — զորս թարգմաներ էր Յակովը ոմն Նախուանցի 1339ին, — սրբագրելով լեզուական յայտնի վրիուակները: Նոյն տարւոյն մէջ հրատարակեց նաև «Աղբիւր բարի» կոչուած գիրք մը, թարգմանուած Տփղիսեցի Պետրոս վարդապետէ: Յամին 1731 տպագրեց նոյն վարդապետին ուրիշ թարգմանութիւն մ'ալ, «Յարացոյց ապաշխարողաց» կոչուած:

Ախիթար, զրքեր հրատարակելուն մէջ, ուրիշ զիտում չունէր՝ բայց ազգին շահը և յառաջադիմութիւնը. և ինքը, իր կրօնաւոր և եկեղեցական անձն, ի հարկէ ամէն բանէ տեսլի վեր կը դնէր հոգեւոր և կրօնական կրթութիւնը. և այս է պատճառը՝ որ անոր զրած, թարգմանած և հրատարակած զրքերը մեծաւ մասսամբ կրօնական նիւթոց վրայ կը նառէին: Եաւ տարիներէ ի վեր կ'ուզէր նա «Քրիստոնէական» մը շինել աշխարհաբար լեզուով, անոնց համար՝ որոնք զրաբար լեզուն շեն հասկնար. բայց կասկածելով թէ զուցէ մեղագրուի սմանցմէ, իր նորամուտ սովորութիւն մը, զրաբար լեզուով զրեց և տպագրեց 1725ին հանդերձ այրբենարանով: Տարի մը վերջ աշխարհաբար լեզուի քերականութիւն մը շինելով և անոր առաջին մասը տպագրելով, այնուհետեւ մէկդի թօղուցի մեղագրուելու կասկածանքը, կ'ըսէ աշխարհաբար Քրիստոնէականի յառաջարա-

նին մէջ, և շարադրեցի աշխարհաբար լեզուով այս համառօտ Փրիստոնէական վարդապետութիւնը. և եթէ մէկ գոեհիկ միայն օգտուի, և իւր կարևոր մասերը ուսանի, արժան էր որ ես ձեռք զարնէի այս աշխատութեան»<sup>1</sup>: Կարծես Միհիթարայ վերտպահուած էր ամէն բանի մէջ առաջնութիւնը. Նա եղաւ առաջին մզիչը աշխարհաբար լեզուին զործածութեան և զարգացման, և որպէս զի ամէն զրողի քմահաճոյքին շմատնուի այն, կանոններու առաջրաւ, դրութեան մը վերածեց, և յիշեալ Փրիստոնէականի յառաջարանին մէջ ջատագով կը հանդիսանայ անոր օգտակարութեան. «Ազգիւ անտէրունչ ըլլալուն համար է՝ որ զրութեանց մէջ անզործած ական եղած է աշխարհաբարը... ուստի եթէ ընթերցողք ի սկզբան կրած գեռւարութիւններէն չնեղուին և շեպերեն զայն, մանաւանդ թէ ամէն չանք և փոյթ ընեն լաւ կերպով ուսանելու, շուտով պիտի համոզուին թէ որչափ օգտակար է անոր զործածութիւնը զրութեանց մէջ<sup>2</sup>»: Աշխարհաբար Փրիստոնէականին ետեր կցեց իրեն «Տաղարանը», իրը «ի զուարճութիւն մտնկանց ուսանողաց զքրիստոնէական վարդապետութիւն»: Իւր շինած աշխարհաբար քերականութիւնը, որուն վրայ առանձին պիտի խսխիմ յաջորդ զլիսոյն մէջ, տաճկերէն թարգմանեց և տապազրեց, եաւն ալ փափրիկ բառարան մը հայերէն և տաճկերէն բառերու, մասնաւորապէս Գաղատացւոց համար, որպէս զի հայերէն լեզուն ուսանին:

Միհիթար այնշտի հաշակուեցաւ ազգին մէջ իրը հրատարակիչ, որ շատ նշանաւոր անձինք, ինչպէս շատ անգամ յիշուած Պետրոս վարդապետ Տփղիսեցին, Ստեփանոս վարդապետ Ռոշեան, և այլք, անոր կը դիմէին իրենց ինքնազիրասիրութիւնները կամ թարգմանութիւնները հրատարակելու համար: Յաճախ կը զրէր նու իրենց քարոզիչ միարաններուն, որոնք ի Պալմ կամ զաւառներուն մէջ կը զտուեէին, որպէս զի նախնեաց զրչագիրներ որոնեն, և զտածնին վանք դրէին հրատարակելու համար: Անոր զրոգէտ և ուսումնասէր հոգին կ'երեւի հետեւալ խօսքերուն մէջ,

1. «Դիրք Փրիստոնէական վարդապետութեան, աշխարհաբար լեզուաւ, և այլն. Բայ առ ընթերցողք»: Էջ 4. Եղինակիկ. 1727:

2. Անց. Էջ 4:

զորս կ'ուզգէ առ Տիրացու Մազաքիս ձեվահիրնեան, նոյն ժամանակի ազգիս նշանաւոր զրագէտներէն և բանասէրներէն մին. «Այն բոլոր պիտանի զրբերէն, զորս նշանակեր էիր նամակիդ մէջ, չունինք մենք այս եօթը. Դիոնեսիս (Արիս-պագացի), թարգմանուած լեհացի Ստեփանոս վարդապետէ, Գիրք հոգւոց՝ թարգմանութիւն նոյն վարդապետին, Սաղմուամեկնիշ Լամբրոնացւոյն, Մեկնութիւն Ժի մարդարէից՝ նոյնպէս Լամբրոնացւոյն, Մեկնութիւն Գործոց առաքելոց՝ Յովհաննու Ուկերերանի, թարգմանուած Գրիգոր կաթողիկոսէ, մեկնութիւն Ժի թղթոցն Պօղոսի՝ Ուկերերանին, և Վեցորէից զիրք որրոյն Բարսղի: Եթէ այս զրբերը ունենայինք ձեռքերնիս, թերեւս յարմար առթիւ մը տպագրէինք, ըստ կարի որրագրելով որինակողաց անհօգութեամբ սպրդած վրիպակները և խանգարումները: Գալով ըրած հարցմանդ, թէ մենք ի՞նչ զրբեր ունինք կամ ի՞նչ նոր բան թարգմանեցնք, կը պատասխանեմ, թէ Համեմատաբար շատ սակաւաթիւ են մեր ունեցած զրբերը, և ցարդ շատ քիչ բան թարգմանած ենք. որովհետեւ մեր աեղափախութիւնը Մոռէայէն ի Վենետիկ՝ զրեթէ տասը տարի խափանեց զմեզ զրական աշխատութենէ, ինչպէս նաև մեր չքաւորութիւնը և մենաստանիս բնակարանաց շինութիւնը և ուրիշ ձախողութիւնք՝ շթողուցին որ ացերնիս բանանք, զրութեանց և դասախոսութեանց պարապելու համար: Հազիւ եօթը տարի կայ որ քիչ մը շունչ առինք և սկսանք զարգացնել ուսումները և հետամուտ ըլլալ թարգմանութեան և զրութեան»:

Այն ժամանակները զանգին մէջ յատուկ տպարան շունենալով, քաղաքին մէջ կը տպուէին բոլոր գրեանք, և զիխուոր տպագրապետք էին Անտոն Բորտոլի, Դեմետր Թէոդոսիանց և Մկրտիչ Ալբրիցցի, որոնց անունները կը կարդանք Միհիթարայ տպած զրբերուն ճակատը: Յիրաւի շատ տաժանելի աշխատութիւն էր զրբի մը տպագրութիւնը, հեռաւորութեան և շարողաց բոլորովին մեր լեզուին անգէտ ըլլալուն պատճառաւ, տառերն ալ հինցած և մաշած: Ասոր համար Արքահայրը, գեռ շըսկսած իրեն մեծ

1. Թուղթ Միւ. Արքայի առ ոիրացու Մազաքիս. (732 յուլիս 28: — Այն թուղթին մէջ կը յիշատակէ հայերէն ընդարձակ բառարանին յարինումը և Ասուտածաշանչին մերձաւոր հրատարակութիւնը, և ոյլի:

գործերուն տպագրութիւնը, Հայերէն մաքուր տառերու Հաւաքում մը ձեռք բերելու ետևէ էր: Իրեն բարեկամներէն մին, Յարութիւն անունով Հայ վաճառական մը, երբ Ամբուտերդամ պիտի երթար, յանձնեց անոր հարցփորձ ընել՝ թէ ինչ եղեր է Ոսկան վարդապետի տպարանը, և որուքով կը գտնուին անոր գործածած տառերը և անոնց պողագատէ կաղապարները: Վննեց՝ տեղեկացաւ վաճառականը, թէ նոյն քաղաքէն տեղացի մը պարտուց փոխարէն դրաւեր էր: Անոնց զինը հարցնելով իմացուց Մխիթարայ. սա ևս զրեց՝ որ զնէ զանոնք և չետը Վենետիկ բերէ: 1729ին Ահնետիկ գառնարով վաճառականը, բերաւ հետը տպագրական տառերու պղնձի կաղապարները և անոնց իւրաքանչիւրին պողովատէ նշանագիծերը: Այս տառերն, ըստ շափու և մեծութեան, երեք տեսակի կը բաժնուէին, մեծ, միջակ և փոքր: Խրաքանչիւր տեսակն ունէր իրեն զիմապերը, ինչպէս նաև կէտերու, չեշտերու և ուրիշ նշանակիցներու կաղապարները, որոնք անհրաժեշտ են կատարեալ տպագրութեան մը համար: Միջակ և մանր տառերն ունէին իրենց յարմար և համեմատական նօտրագրերը, իսկ մեծ տառերը չունէին: Կային նաև շարականի խաղերու նշանագիծեր, ամրող և կատարեալ, բոլորն այ պողովատէ: Այս տառերով է որ Մխիթար տպագրեց յետոյ իրեն ամենէն աւելի կարևոր երկասիրաւթիւնները, Մատթէի Մեկնութիւնը, Հայկագեան բառարանը, և այլն, որոնց վրայ պիտի խօսինք յաջորդ զիմոյն մէջ, և անոնցմէ յառաջ. յամին 1733, ըստ ամբողջ Աստուածաշունչին տպագրութիւնը, որ իրեն հրատարակութեանց մէջ առաջին տեղը կը դրաւէ:

Տեսնելով Մխիթար թէ օրէ որ կը սպառէր Ոսկան վարդապետի հրատարակած Աստուածաշունչը, և շատերը կը փափաքէին և չէին գտներ, մանաւանդ որ այն սակաւաթիւ օրինակներն ալ թանկ կը վաճառուէին, և միւս կողմանէ՝ Պորոյ մէջ հրատարակուածը լի էր անթիւ վրիպակներով, որոշեց յարմար առթիւ մը տպագրել զայն, ուղղելով օրինակողաց անհոգութեամբ մուտ գաած վրիպակները: Չուշացաւ առիթը: 1732ին վաճառուելով Վենետիոյ մէջ եօթնեղուեան<sup>1</sup> Աստուածաշունչ մը, զնեց զայն,

1. Երբայցի, սամարացի, ասորի, քաղկեցի, աբորացի, յոյն և լատին լեզուներով, տպագրուած ի Պարբեզ արքունի ժամկութ, յամին 1645:

շինայելով բնաւ դրամի . և այն օրէն սկսաւ այդ մեծ զոր-  
ձը : Ինպէն իսկ Մխիթար մանրամասն կը պատմէ զայս Յի-  
շատակարանին մէջ . ո թէ պէտք չատ տարիներէ ի վեր կը  
փափաքէի տաղագրել մեր Աստուածաշունչը ի փառս Աստու-  
աց և յօգուտ ազգիս , բայց զանց կ'ընէի ձեռնամօւխ  
ըլլալ , չունենալով կարեսոր միջոցները . արդ ինչ որ վաղուց  
կ'որոնէի և չէի զաներ , յանկարծ Աստուածոյ ողօրմութեամբ  
հանգիպեցայ անոր՝ անակընկալ տեղույ մէջ , եօթնկեզուեան  
Աստուածաշունչը բաել կ'ուզեմ : Եթր ձեռք բերի զայն , ծան-  
րագոյն աշխատութեան տակ զրի զիս , մեր աշակերտնե-  
րէն զոմանս ընկեր առնելով ինձ . և սկսայ Ծննդոց գրքէն  
տուն առ տուն կարդալ տալ անոնց՝ իւրաքանչիւր լեզուի  
թարգմանութիւնները և մանաւանդ յոյնը և ասորին . և ես  
ուշ դնելով անոնց , կը նայէի մեր Աստուածաշունչին , հա-  
մեմատելով ամէն մէկ բառը և սրարբերութիւնը : Տեսայ որ  
մեծաւ մասամբ մեր թարգմանութիւնը բառ առ բառ կը  
զուգընթանար յոյն և ասորի թարգմանութեանց , և շատ  
սակաւ էին զրչագրի վրիպակները . իսկ ուր որ մերը կը  
տարբերէր յոյն և ասորի թարգմանութիւններէն , յաճախ  
զրողաց անհոգութենէն էր այն<sup>41</sup> : Այս մեծ աշխատութիւ-  
նը , այն է՝ բազգատութիւն Աստուածաշունչին , սկսաւ 1732  
տարւայ նոյեմբեր ամսոյն , և հազիւ 1735 տարւայ սեպտե-  
մբերին աւարտեցաւ . իսկ տպագրութիւնը սկսաւ 1733 տար-  
ւայ յունիսի 13ին , և վերջացաւ 1735ի նոյեմբերին : Իսկ  
թէ ինչպիսի մեծամեծ զժուարութեանց հարկ եղաւ յաղ-  
թել , և որքան ջանք և փոյթ ի զործ գրուեցաւ , բատ կա-  
րի զեղեցիկ , կատարեալ և անսխալ կերպով ի զյուխ հա-  
նելու այս վիթխարի և հոկայ զործը , լսենք թէ ինչպէս  
անկեղծօրէն կը պատմէ մեզ Մխիթար իւր Յիշատակարա-  
նին մէջ . ո Անկարելի է նկարագրել զրշով թէ որպիսի  
ջանք , փոյթ , հոկ և աշխատութիւն յանձն առինք կը Աս-  
տուածաշունչի տպագրութեան համար , որպէս զի վրիպակ-  
ներ չը սպազին . . . . Վանքին մէջ վեց անձինք որոշած էի ,  
անձ մ'ալ տպարանին մէջ , սրբագրութեանց ուշ դնելու  
համար , և իւրաքանչիւր տպագրուած թերթ՝ հինգ . վեց ան-

ձինք այլ և այլ անդամ աչքէ կ'անցունէին։ Խսկ թուղթին, պատկերաց, ծաղկազրերուն և զարգերուն համար՝ ծախքը զրեթէ կրկնապատիկ եղաւ։ Ծախուց մեծագոյն մասն եղաւ պղնձի պատկերներուն համար, ոչ միայն անոնց փորազրութեան, այլ և առանձին տպազրութեան համար։ Բայց ես բնաւ ծախուց ժանրութեան չնայեցայ. բաւական է որ ազնիւ և գեղեցիկ պատկերազարդ տպազրութիւն մունենանք Աստուածաշունչի, և ասով ազգիս հոգեոր օգուտ մը և բարի ծառայութիւն մ'ըրած ըլլամ<sup>11</sup>։

Դեռ այսօր ալ մարդու հիացումը կը շարժէ այդ հրատարակութիւնը, որ ամէն մասամբ կատարեալ է, մինչ տպազրական արուեստը դեռ չատ անկատար էր։ Այդ գործը զարդարուած է պղնձի վրայ քանդակուած գեղեցիկ պատկերներով. իւրաքանչիւր զրբի առաջին զլխուն սկզբնատառերը՝ զարդագիր կամ՝ ծաղկագիր են։ Միով բանիւ, ճաշակաւոր և պատուարեր տպազրութիւն մ'է, ընտիր թուղթի վրայ, խնամքով սրբազրուած, լուսանցքին վրայ նշանակուած Ա. Գրոց այն տեղերը, ուր կը գտնուին նման ասցուածք, և Ոսկան վարդապետին աւելցուցած բառերը։ Յայտնութեան զրբէն վերջը դրուած են «Ազոթք Մանասէի» և «Գիրք Եղբասայ շորբորդ»։ վերջինս՝ Ոսկան վարդապետի թարգմանութիւնն է։ Ասոնց կը յաջորդեն Հերոնիմոսի այլ և այլ տեղեկութիւնք Աստուածաշունչ զրոց մասին, «Նախադրութիւնք աւետարաններուն, ցանկ մը այն բոլոր վիկայութեանց՝ զորս Հին Կտակարանէն Վրիսառս կամ տռաքեալք գործածած են Նոր Կտակարանին մէջ։ Բայց քան զամէնն աւելի չահեկան են երկու այրուրենական ցանկերը, մին՝ «Երրայեցւոց, Քաղզէացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն», և միւսը՝ «Յանկ մատենական» կոչուած, որ Աստուածաշունչի մէջ գտնուած ամենայն նիւթոց և խնդրոց ցուցակն է։ Ամենէն վերջը դրուած է «Բան առ ընթերցողս և Յիշատակարան մատենիս», յորում նշանակուած են հրատարակութեան պատճառները, հանդերձ բոլոր պարագաներով և գժուարութեամբք նոյն զործին ձեռնարկութեան։

Յետ աւարտելու այս շքեղ հրատարակութիւնը, կազմեալով փառազարդ օրինակ մը, ընծայեց զայն՝ նոյն ժամանակի նշանաւոր աստուածաբան և իրաւագէտ Բենեդիկ-



ԹԵՄԵՊԵԼԿՈՊՈ.ԺԴ.

Քամաթայապնու-

տոս ԺԴ Քահանայապետին, որ իրեն մեծ մոքով զնահատելով սոյն աշխատութիւնը, աւղեց առ Կախահայրական գեղեցիկ թուղթը, 1742ի սեպտեմբեր 22ին.

ՍԻՐԵՑԵԱԼ, ՈՐԴԻ ՈՅԴ

ՈՂԶՈՅՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ.

Երեկ ընդունեցանք, Հաւաստասիկու Ժողովոյն գերապետութարին ձեռքով, հայերէն Աստուածաշունչը, արժամանաւոր ընծայ մը՝ որ մեզ շատ համեմի եղաւ, և որոյ համար մասնաւոր շնորհակալութիւններ կը յաբանենք. Նոյնչափ շնորհակալ ենք Ձեզ եւ մեր կրօնաւորաց՝ այն

առաքելութեանց համար՝ զօրս կ'ընեն այնքան պտղաբեր կերպով։ Եւ գրկելով զամէնքը նայրական գորովով, կու տանք Զեզ եւ ձեր բարի կրօնաւորաց՝ մեր Առաքելական օրմտութիւնը<sup>1</sup>։

